


ԱՐԾՐՈՒՆ ԳՈՎԻՆՆԵՒՄՅԱՆ

ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ



ԵՐԵՎԱՆ 2015

355/1471325/
2-85

h2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԾՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԳ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

55/2

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ ԱՇԾԵԱՆ
ՄԱՏԵՆԱԸՄ



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

124

124



ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2015

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Մ. Հարությունյան
Գրախոս՝ պ.գ.դ. Մ. Լ. Կարապետյան

Հովհաննիսյան Ա.

2 854 Բանակաշինությունը Հայաստանի երրորդ Հանրապետությունում, Երևան,
Պատմության ինստիտուտ, 2015, 355 էջ:

Աշխատությունում ներկայացված Հայաստանի երրորդ
Հանրապետության բանակաշինության, դրա կազմակերպչական ու
պատերազմական փուլերի մասին այս ուսումնասիրությունն այսօր ավելի
քան արդիական է: Ներկայումս, երբ սահմանային լարվածությունը ՀՀ և
ԼՂՀ սահմաններին կրկին վերածում է պատերազմական
գործողությունների, ճմաճ խորաչափն ուսումնասիրությունները բուհական և
մասնագիտական շրջանակների համար չափազանց կարևոր են: Այս
աշխատությունը իրենից ներկայացնում է հեղինակի ատենախոսության և
թեմայի շուրջ այլ ուսումնասիրությունների հանրագումարը: Այստեղ
ներկայացված են փաստեր ու գնահատականներ, որոնք մեզանում հնչում
են առաջին անգամ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ.....5

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ.....16

1.1. Կանոնավոր բանակ ստեղծելու պատմական
անհրաժեշտությունը և նրա կազմավորման գործընթացի
մեկնարկը.....16

1.2. Ինքնապաշտպանական ուժերի և ջոկատների
վերակազմավորումը կանոնավոր բանակի.....31

1.3. Ջորատեսակների և բաժինների կազմավորումը.....55

1.3.1. Մարտական գործողությունների ընթացքը և
ավարտը.....95

1.4. Բանակի կառուցվածքը և սպառազինությունը.....143

1.5. Բանակաշինության շարունակականությունը,
գորատեսակները և բաժինները.....162

2. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԳՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ
ԲԱՐԵՓՈՒԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵԹՅՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ.....203

2.1. Գաշտային հրամանատարների դերը սպայական
կադրերի պատրաստման գործում.....203

2.2. Խորհրդային զինվորականների ներգրավումը
բանակաշինության գործում.....205

2.3. Սպայական կադրերի պատրաստումը քարձրագույն և
միջնակարգ մասնագիտական հաստատություններում.....207

| | |
|--|-----|
| 2.4. Կադրերի պատրաստումը և որակավորումը արտերկրում..... | 215 |
| 2.5 Սպայական կազմի նշանակման և կոչումների շնորհման համակարգը..... | 220 |
| 2.6. Համագործակցությունը ԱՊՀ, ՀԱՊԿ և ՆԱՏՕ-ի հետ..... | 225 |
| 2.7. Համագործակցությունը Չինաստանի ու հարևան պետությունների հետ..... | 243 |
| 3. ԱԳՐԲԵՋԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆԱՅՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԸ..... | 245 |
| 3.1. Սպառազինման ընդհանուր քայլերը և ծրագրերը..... | 251 |
| 3.2. Ռազմաարդյունաբերության ձեռքբերումները..... | 260 |
| 3.3. Աղբյուրների և ռեսուրսների..... | 273 |
| 3.4. Հրթիռահրետանային միջոցներ..... | 294 |
| 3.5. Ջրահատիճնիկային պոտենցիալը..... | 300 |
| 3.6. Հիմնական արդյունքները..... | 304 |
| 3.7 Հայկական բանակի հիմնարար բարեփոխումները. առաջարկներ..... | 310 |
| ՎԵՐՋԱԲԱՆ..... | 318 |
| ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԿՋԲՆԱԳՐՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... | 337 |
| ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ..... | 352 |

Հայաստանի Երրորդ Հանրապետության բանակաշինության գործընթացի համալիր ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ արդիական քաղաքական կարևոր նշանակություն: Այն հնարավորություն է ընձեռում գիտականորեն ներկայացնել բանակաշինության անհրաժեշտությունը և գործընթացը, ինչպես նաև այն դերը, որ բանակը ունեցավ հայոց նոր պետականության կայացման և նրա անվտանգության ապահովման գործում:

XX դարավերջը և XXI դարասկզբը հայոց պատմության մեջ հերոսական մարտումների, բայց նաև ծանր զոհողությունների քարոզի ու հակասական շրջան էր: Հայաստանի անկախության վերականգնումը նոր իրողություն էր ստեղծել: Հայ ժողովուրդը կրկին ֆիզիկական բնաջնջման վտանգի առաջ էր կանգնած, և միանգամայն հնարավոր էր դրա կրկնությունը, եթե չլիներ կանոնավոր բանակը, որը, ստեղծվելով համաժողովրդական կամավորական սկզբունքով, ներառում էր կանոնավոր բանակի հիմնական տարրերը: Մինչև դեռ յուրե պետության ստեղծումը, ինչպես դարասկզբին էր, հարկավոր էր ինքնապաշտպանության մասին մտածել: Այդ ուժերի ինքնակազմակերպման գործընթացը տեղի ունեցավ արագ ու հիմնականում ինքնարթիվ: Կազմակերպվածության բարձր աստիճանը հնարավորություն տվեց հստակ կատարել դրված խնդիրները: Միայն դրանց հետո այն վերածվեց պետական հստակ կառույցի: Այսպիսով՝ Հայաստանի անկախացումից հետո պատմագիտության տեսադաշտը հարստացավ ևս մեկ կարևորագույն ոլորտով: Խոսքը հայոց բանակաշինության մասին է, որն այսօր առավել սակավ ուսումնասիրված կամ գրեթե չուսումնասիրված ոլորտներից է:

Մտվորաբար զինված բանակների ստեղծման, կառուցվածքային զարգացվածության, տեխնիկական հագեցվածության, սպառազինությունների համալրման գործընթացի հիմքում դրանց առջև դրված մարտական խնդիրների պատշաճ իրականացումն է: Փորձը ցույց է տվել, որ մարտական խնդիրների կատարման համար քա-

նակները կազմավորման ու, այսպես ասած, հասունացման բավական երկար ժամանակ են անցնում: Հայկական բանակի առջև մարտական խնդիր կատարելու, և ղեկու այն հաջողությամբ ավարտելու պարտականությունն ի հայտ եկավ, երբ ղեռ այն հստակ չէր կազմավորվել: Պարտադրված պատերազմը ուղղակիորեն առաջ բերեց բանակ կազմավորելու անհրաժեշտությունը: Բանակները սովորաբար գործում են քաղաքական հստակ վերահսկողության, ղեկավարման ու առաջադրանքների իրականացման պայմաններում, ստանում հստակ մատակարարում ու ապահովում: Մեր դեպքում առանց այդ էլ ինքարժույս կազմակերպման արդյունքում ձևավորված ջոկատները վատ էին զինված, երբեմն նույնիսկ կենցաղային մակարդակի չունեին անհրաժեշտ մատակարարումներ, սակայն մարտական բարդագույն խնդիր էին կատարում: Առաջին շրջանում դա ավելի շատ հանկարծահաս վտանգը կանխելու անհրաժեշտությունից բխող, բայց նաև ավելի շատ էնոցիոնալ ու էլիթորիայի մակարդակի գործընթաց էր, թեև զինվորներն ու հրամանատարներն իրենց առջև դրված խնդիրները կատարում էին գիտակցության բարձր աստիճանով, պատասխանատվությամբ: Պարտադրված պատերազմը սկսվել էր ՀՀ սահմանների վրա հարձակումով, սակայն հստակ գոտևորված չէր: Թեև մարտական բուն գործողություններն ընթանում էին սահմանային հատվածներում, սակայն գրեթե չկար մի հատված, որն անմասն մնար դրանից՝ հնարավորին չափ ներգրավված լինելով ինքնապաշտպանական ջոկատների մատակարարման ու աջակցման նրանց աշխատանքներում: Սակայն վերջիններիս գործունեությունը միայն բավարար չէր լայնածավալ պատերազմ վարելու համար: Մարտական խնդիրների իրականացման, անվտանգության գլոբալ միջոցների ապահովման անհրաժեշտությունը ստիպեց պետականորեն հստակ ձևավորված կառույցի՝ բանակի հիմքերը դնել:

Բանակաշինության ընթացքն աչքի ընկավ բացառիկ իրողություններով, որոնց կամողապառնա՞ր մենագրության տարբեր գլուխներում: Այդ տեսանկյունից այն կարող է լրացնել պետականաշինության նորագույն բաղադրիչների ուսումնասիրության ոլորտից քիչ

հետազոտված ուսումնասիրված հայոց բանակի ստեղծման, կայացման գործընթացների համակարգային վերլուծությունը: Մեր բանակաշինության ուսումնասիրությունը սոսկ պատմաճանաչողական նպատակ չունի: Այս ոլորտում կատարված կարևորագույն քայլերը վճռորոշ դարձան ոչ միայն հենց բուն պատերազմի ժամանակ մարտական խնդիրների կատարման, այլև բանակի ինստիտուցիոնալ կայացման հարցում: Համաշխարհային ռազմարվեստի էջերն ուսումնասիրելիս կարելի է հավարտությամբ առանձնացնել ռազմական գործում վճռորոշ դերակատարում ունեցած այն իրողությունները, որոնց հիմքում աշխարհի տարբեր բանակներում ծառայած ազգությամբ հայ զորավարների ու սպաների ռազմական հմտությունն ու գործադրած հմարքներն են: Ինչ վերաբերում է հայրենիքում բանակաշինության իրականացման և դրա կիրառական դրսևորման հարցերին, ապա այդ առումով ուսումնասիրման բավական մեծ տեղ կա: Մեր աշխատությունը, կարծում ենք, մեկ քայլ է հայկական ռազմազինական մտքի հարստացման, անցյալի վերաիմաստավորման ու աշխարհին համակողմանի և ամբողջական ներկայացնելու առումով: Նման մտեցումը նաև կարևոր է ՀՀ ՊՆ ռազմակրթական համակարգի զարգացման համար, թե՛ զուտ տեղեկատվության ապահովման, թե՛ հայկական ռազմագիտական մտքի զարգացման, թե՛ նոր հայեցակարգերի ձևավորման համար: Նոր սերունդի հայրենասիրական գիտակցության ռզով դաստիարակելու խնդիրը ևս կարևոր է կայացման ճանապարհ անցնող հայոց պետակազմության համար: Այս առումով բանակաշինության պատմության ցանկալիցած ժամանակաշրջանի ուսումնասիրությունը արդիական է ազգասիվաբ ու մյալոլորիչ գործառույթների ուսումնասիրության, դրանց կիրառման տեսանկյունից և չափազանց կարևոր ազգային անվտանգության բուլոր շերտերի համար: Հենց այս տեսանկյունից սույն ուսումնասիրության արդիակազմությունը թելադրված է նաև համաշխարհային արդի գործընթացներով: Ներկայումս հատկապես կարևոր են արժեքային այն համակարգն ու դաստիարակության առանձնահատկությունները, որոնք ապահովում են հասարակությունների և պետութ-

յունների ամուր կապվածությունը սեփական հողին: Արժեքային նման բացառիկ համակարգի կրող սերունդն էր, որ ստեղծեց հայոց բանակը՝ միաժամանակ հաղթելով մեզ պարտադրված պատերազմում: Աշխատության անհրաժեշտությունը թելադրված է նաև այդ դասերը հիմնավոր ուսումնասիրելու ու հայ ժողովրդի ոչ վաղ անցյալի փառահեղ պատմության օրինակը սերունդներին ներկայացնելու առումով:

Աշխատանքի տեսական ընդհանրացումներն ու եզրակացությունները թույլ են տալիս համակողմանի զննհատել այն դերը, որ բանակը կատարել է Հայաստանի սահմանների պաշտպանության, արցախահայության գոյության անվտանգության ապահովման գործում: Մյուս կողմից՝ ուսումնասիրվող հիմնահարցը մեր պատմության այն էջերից է, որը հաճախ է դառնում աղյթեջանաթուրքական, այսպես կոչված, պատմագիտության նենգափոխման թիրախ: Ժամանակն է, որ հիմնավոր և մեկընդմիջտ հակահարված տրվի «Խարևանների» այն նենգափոխումներին, որոնք ուղղակիորեն վերաբերում են ՀՀ բանակաշինության գործընթացին, նյութական ապահովման և զինման, ինչպես նաև ձեռքբերումների ու այլ հարցերի: Այդ նենգափոխումներով նրանք կառուցում են սեփական արհեստածին պատմությունը և փորձում իրենց ժողովրդին, մասնավորապես, ազգային փոքրամասնություններին քյուրիսալության մեջ գցել: Պատմական ճշմարտությունը սերունդների դաստիարակության և նրանց համար անդառնալի սթրեսների հիմք է դառնում: Այս վերջին ճանապարհին են նրանք ընտրել, իսկ դրա հետևանքները տեսանելի են հատկապես սահմանին, աղյթեջանական բանակի զինվորները, որոնցից շատերը երկրի քնակչության մաս կազմող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ են, իրենց կյանքը գոհարբում են՝ բշմամու սխալ պատկերացմամբ: Սակայն քիչ չեն դեպքերը, երբ հնարավորություն ունենալով ծանոթանալ հայ զինվորի հետ, առանց չափազանցման, հոգեկան խախտման դեպքեր են գրանցվել, քանի որ հօդս են ցնդել իրենց ներկայացված բշմամու մասին խնդարյուրված պատկերացումները:

Ֆեմայի ուսումնասիրությունը կազմում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության՝ դոկտրինի անբնականի բաղադրիչներից մեկը: Դոկտրինում հստակ նշված է, որ հայության և Հայաստանի անվտանգության ամենամեծ երաշխավորը զինված ուժերն են¹: Ազգային անվտանգության ռազմավարության մեջ, որպես արտաքին սպառնալիք, նշված է Աղյթեջանի Հանրապետության կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների հանդեպ զինված ուժի կիրառման բացահայտ սպառնալիքի խնդիրը: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ստանում աշխատանքում բանակաշինության վերջին փուլին կատարված անդրադարձը: Այնտեղ կան նաև հարցեր, որոնք վերաբերվում են բանակաշինության արդի փուլին ու գաղափարման ապագային:

Ուսումնասիրական դոկտրինում՝ որպես ռազմական անվտանգության արտաքին սպառնալիքներ, նշված են Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված դաշինքների ստեղծումը, ամրապնդումն ու ընդլայնումը, մասնավորապես՝ Թուրքիայի Հանրապետության և Աղյթեջանի Հանրապետության ռազմավարական դաշինքը, վերջինից կողմից Հայաստանի Հանրապետությունը շրջափակելու քայլերը, որոնք դիտարկվում են որպես ուժի կիրառում, Հայաստանի Հանրապետությանը սահմանակից պետություններում ներքաղաքական միջավայրի ապակայունացումը, ներքին բախումներն ու մարտական գործողությունները, ինչպես նաև էթնիկական հակամարտությունները, որոնք կարող են սպառնալ Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությանը²: Ահա, այս նոր բնույթի գործունեորով ձևավորվող աշխարհաքաղաքական իրավիճակում աշխա-

¹ ՀՀ Ռազմական դոկտրին, Բաժին 1, գլուխ 1, կետ 5.1, <http://www.mil.am/files/mil-doctrine-arm.pdf>

² Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, կետ՝ 1.3, [http://www.mil.am/files/NATIONAL SECURITY%20STRATEGYarm.pdf](http://www.mil.am/files/NATIONAL_SECURITY%20STRATEGYarm.pdf)

տության մեջ, բացի զինված ուժերի զարգացման ընդհանուր ուղղություններից, քննարկվում են նաև ռազմական ոլորտում Հայաստանի Հանրապետության արտաքին կապերը, ռազմական համագործակցության ու դաշնակցային խնդիրները:

Տեսական ու մեթոդաբանական այս հիմնադրույթները պայմանավորում են մենագրության մեջ քննության ենթարկվող հետևյալ նպատակը՝ մեկ ամբողջության մեջ բազմակողմանի ուսումնասիրել բանակաշինության գործընթացը, որն ավելի քան 20 տարի անընդմեջ ընթացող պատերազմում ապահովում է երկրի անվտանգությունը և այսօր հայ ժողովրդի պաշտպանության ամենամեծ երաշխավորն է:

Ուսումնասիրությունը ընդգրկում է 1992 թ. մինչև մեր օրերը, ու նաև դրան նախորդող որոշ իրադարձություններ, երբ դեռ ԽՍՀՄ գոյության վերջին օրերին հիմնականում գաղտնի կերպով սկիզբ էին դրվում հայոց բանակի հիմքերին: Այդուհանդերձ, շարադրանքը չի կադրապարվել ժամանակագրական այդ նեղ շրջանակներում. պատմահարցի առավել համակողմանի լուսաբանման համար առանձին դեպքերում հակիրճ անդրադարձել ենք ավելի վաղ և ուշ շրջանի իրադարձություններին, պատմական այլ շրջանների, առանց որոնց մեր շարադրանքի օրգանական ամբողջությունը կխախտվեր:

Նկատենք, որ հետազոտական աշխատանքի ընթացքում քեմային առջևդրվող բազում գրքեր, հուշագրություններ և պատմիչներ ենք ուսումնասիրել, որոնք, սակայն, հիմնականում կրում են պատմողական, գեղարվեստական բնույթ, հաճախ սուբյեկտիվ են ու մկրկված այս կամ այն անձին: Նման գործեր մեզանում չափազանց շատ են, գրեթե ամեն օր նոր գրքեր են հայտնվում գրախանութներում: Այդ իսկ պատճառով բանակաշինության գործին այս կամ այն մասնակցի հուշերին չենք անդրադարձել, այլ օգտագործել ենք միայն համակարգված աշխատանքները կամ անձամբ ենք գրուցել շատ մասնակիցների հետ: Աշխատությունը գրվել է աղբյուրագիտական հարուստ հենքի վրա: Օգտագործվել են արխիվային վավերագրեր, փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ, բանակի հրամանատա-

րական կազմի աշխատություններ, բանակաշինությանը մոտ կանգնած անհատների հուշագրություններ, պարբերական մատույլում տպագրված նյութեր, զբաղանություն և այլն: Քանի որ Պաշտպանության նախարարության (ՊՆ) փաստաթղթերը հանձնված չեն պետական արխիվ, ուստի օգտագործել ենք հիմնականում գործավարությունների փաստաթղթերը, որոնք միասնական համարակալում և կոդավորում չունեն: Նույն խնդիրն է նաև պաշտպանության բանակի դեպքում: Ուսումնասիրված նյութերը կարելի է բաժանել մի քանի խմբի:

Առաջին խմբի մեջ մտնում են արխիվային սկզբնաղբյուրները՝ փաստաթղթեր, վավերագրեր և այլն, որոնցից շատերը շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Մասնավորապես, դրանք նյութեր են, որոնք քաղել ենք ՀՀ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) պետական արխիվներից, նաև պատերազմի մասնակիցների՝ հրամկազմի անձնական արխիվներից՝ երբեմն անմշակ տեսքով: Դրանցում կան բացառիկ նյութեր, որոնք դեռ կօգտագործվին քեմայի հետագա ուսումնասիրության համար:

Երկրորդ խումբը բանակաշինության ակունքների մոտ կանգնած գիմնորակաճանցների գրգռող հուշերն ու գրքերն են: Հուշագրությունները բազմազան են: Գրքերը, ըստ էության, երբև են՝ տարբեր ժամանակներում ԼՂՀ և ՀՀ պաշտպանության նախարար եղած շրջանում Սերժ Սարգսյանի ու Սեյրան Օհանյանի հեղինակած գործերը՝ Գրանք հայոց բանակի տեղծման ու զարգացման ամբողջական ուղին ներկայացնող առաջին վավերագրություններն են, որոնք հսկայական տեղեկություններ են պարունակում խնդր առարկա հիմնահարցի ուսումնասիրման համար: Այդ գործերում հստակ ժամանակագրությամբ ներկայացվում են, մասնավորապես, պատերազմի ընթացքը և քաղաքական այն որոշումները, որոնք կայացվել

¹ Սարգսյան Ս., Հայկական բանակ-10, Եր., 2002: Օհանյան Ս., 21-րդ դարի բանակը, Եր., 2007: Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Եր., 2012:

են բանակի ստեղծման համար: Մեր ուսումնասիրության մեջ մեծապես օգտագործել ենք նաև ՊՆ նախկին նախարար Վազգեն Մարգսյանի ելույթները և հարցազրույցները, որոնք հիմնականում գետեղված են «Ոգու փորձություն» գրքում⁴: Սակայն նշված աշխատությունները, ունենալով հսկայական վավերագրական նյութ, լինելով սկզբնաղբյուր պատերազմի և բանակաշինության մասին, իրենց մեջ պարունակելով անչափ կարևոր մանրամասներ, ամբողջական և համակողմանիորեն չեն լուսաբանում խնդր առարկա հիմնահարցերը:

ՀՀ բանակաշինության մասին հարուստ և ընդգրկուն տեղեկություններ կան «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994» հանրագիտարանում⁵: Այն մանրամասներ է պարունակում մասնակիցների, ղեկավարի և իրադարձությունների մասին, որոնք շատ կարևոր են հատկապես մեծամասնությի գիտական աշխատանքների համար: Այս խմբում կարևոր տեղ է զբաղեցնում Մ. Հարությունյանի «Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.» թեկնածուական, որն իր տեսակի մեջ եզակի ու առաջին գիտական գործերից է: Այն համգամադրոնները ներկայացնում է ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորման գործընթացը, նաև Արցախում ընթացած մարտական գործողությունները: Նման նկենարանմամբ, սակայն, կարծես առանձնացվում է հայոց բանակի կազմավորման միասնականությունը, քանի որ, ըստ էության, պաշտպանության բանակը հայկական բանակի կարևորագույն, քայց միայն մի մասն է:

Օգտագործել ենք նաև գրող, հրապարակախոս Ջ. Բալայանի «Բժիշկը և դրախտ» ուշագրավ գիրքը, գեներալ Սամվել Բաբայանի մասին պատմող գիտահանրամատչելի «Հատրանակները ինչպես է-

ղել են. Ազգական 44» գրքում տեղ գտած նյութերը⁶: Դրանք հիմնականում մարտական գործողությունների վավերագրություններ են՝ որակյալ բարեկեցություն ու բացատրություններով: Այս տեսանկյունից կարևոր են նաև Ս. Հասարայանի մեծագրությունները⁷: Դրանցում կարելի է գտնել բազմաթիվ մանրամասներ մարտական գործողությունների վերաբերյալ: Բանակաշինության մասին բավական մանրամասներ ու բանակաշինության մասին հետաքրքիր գնահատականներ կան Հ. Արբահամյանի «Ճակատագրին ընդառաջ», Է. Միմասյանի «Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն» աշխատություններում, որոնք շատ լավ լրացնում են իրար: Բանակաշինության օրենսդրականակերպչական հարցերի տեսանկյունից հարուստ տեղեկություններ կան Տարոն Հակոբյանի գրքում⁸: Ակատները, սակայն, որ վերը նշված բոլոր գրքերում մասնակի անդրադարձ կա մեր աշխատանքում քննարկվող բուն հարցերին:

Երրորդ խմբի մեջ են մտնում հիմնականում ՀՀ ԶՈՒ-ի ռազմագիտական հանդես «Հայկական բանակ»-ի վերլուծական և գիտական հարուստ նյութերը, որոնք իրենց մակարդակով առանձնահատուկ տեղ ունեն: Հանդեսում տեղ գտած գիտական կարևոր նշանակություն ունեցող հոդվածներից և նյութերից կարող ենք առանձնացնել հատկապես «Հայկական բանակ» հայեցակարգային տարրեր նշանակության հոդվածները: Այս առումով հատուկ տեղ ունեն պաշտպանության նախարար Ս. Օհանյանի⁹, գլխավոր շտաբի (ԳՇ)

⁴ Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս., Հաղթանակները ինչպես եղել են, եր., 2008:

⁵ Հասարայան Ս., Ղարաբաղյան պատերազմ, եր., 2001: Հասարայան Ս., ՊԲ ՊՇ-ները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Մտեփանակերտ, 2009:

⁶ Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը 1991-1994, եր., 2011:

⁷ Օհանյան Ս. Ս., Ռազմական կրթության համակարգի զարգացումը՝ որպես ՀՀ պաշտպանական համակարգի արդյունավետության մեծացման գործոն, Հայկական բանակ, 3 (73). 2012: Օհանյան Ս. Ս., ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը որպես պաշտպանական

13

⁴ Մարգսյան Վ., Ոգու փորձություն, եր., 2000:

⁵ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, հանրագիտարան, Մարգսյան Ֆ. Տ. և այլք, եր., ԳԱԱ, 2004:

պետ Յու. Խաչատուրյովի, փոխնախարարներ Դ. Տոնոյանի, Ա. Նազարյանի և շատ այլ զեներապետների ու հրամանատարների հողվածները: ԳԵ-ի գործունեության մասին առանձնապես կարևոր է պետ, հետագայում ՀՀ ՊՆ Մ. Հարությունյանի արժեքավոր հողվածը¹⁰: Դրանք առանձնանում են բարձրակարգ վերլուծության և խնդիրների բովանդակության ու լուծման ուղիների հստակությանը:

Արցախյան պատերազմի մարտական գործողությունների փուլին անդրադառնալիս ևս օգտագործել ենք հարուստ գրականություն, որ կազմում է նյութերի չորրորդ խումբը: Դրանք հիմնականում վերաբերում են երկրամասի պատմությանը, մարտական գործողություններին, ԼՂՀ հիմնախնդրի կարգավորման քաղաքական ու իրավական հարցերին և այլն¹¹: Հատկապես հետաքրքիր են Արցախյան պատերազմում գործած գորատեսակների մասին աշխատությունները¹²: Որքան էլ զարմանալի է, դրանցում կան նաև աղբյուրանական հեղինակների գրքեր¹³:

բարեխիտմանների առաջնային խնդիր, Հայկական բանակ, 2011/3; Օհանյան Ս. Մ., Հայաստանի Հանրապետության ՁՈՒ անցած ուղին, ներկան և ապագան, Հայկական բանակ, 1-2, 25012:

¹⁰ Հարությունյան Մ., ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի դեբր ռազմական շինարարության գործում, Հայկական բանակ, 2002, հմ. 1-2:

¹¹ Աբրահամյան Հ., Դավաժանագրի ընդհանուր, Եր., Ամարաս, 2001; Աղաջանյան Մ., Մինսկյան Ս., Ասատրյան Է., Աղբյուրներ Դարարադի ժողովրդի դեմ. ազրեխայի քաղաքա-իրավական հետախնդիրներ և դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հետախնդիրների - վոա, Եր., Նոյիքի, 2006; Բալայան Ջ., Բժիշկ Մարտությանը և նրա - Պատերազմի հետք երկար է մնում, Եր., Ամարաս, 1999; Բալայան Ջ., Անդուն, Եր., Ամարաս, 2004; Բալայան Ջ., Գժիշկ և դրախտ, Մոսկվա, Academi, 1995; Իշխանյան Ե., Լեռնային Դարարադ (1917-1920), Եր., Հայաստան, 1999; Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին, 1991-1994, Եր., Ա.հ., 2001; Օհանջանյան Մ., Անկախության քայլերը, ԼՂՀ-ում անցկացված հանրաքվե և ընտրությունները, 1991-1998, Ստեփանակերտ, Սոնա, 1998:

¹² Չեղանյան Գ., Սահակյան Բ., Գրվածքներ հայ օդայունների Արցախում մղած հերոսական պայքարից, Եր., ՀՀ ԳԱԱ Պատ. ինստ. 2006; Գրիկյան Տ., Կրակն պատեն, ՀՀ ՁՈՒ գորատեսակներ, Հրրիտային գործեր և

Մույն աշխատանքում օգտագործված նյութերի հիմնգերող խումբը կազմում է օտարալեզու ռազմական գրականությունը, որն անհրաժեշտ էր այլ պատերազմների ու բանակների օրինակներով մեր տեսակետները հիմնավորելու համար¹⁴: Դրանք ևս հայկական գիտական միջավայրում քիչ հայտնի նյութեր են:

Զգալի չափով օգտագործել ենք նաև մամուլի նյութերը, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետություն», «Ազգ», «Առավոտ» և այլ թերթերի հողվածները, որոնք կազմում են վեցերորդ խումբը: Դրանք հիմնականում լրատվական բնույթի հաղորդագրություններ են, որոնք հաճախ քարոզչական բնույթ են կրում, ուստի օգտագործել ենք միայն համադրման ու ճշտմանը:

Ներկայացված գրականության, նաև տողերիս հեղինակի երկարամյա ուսումնասիրությունների արդյունքում մենագրության մեջ առաջին անգամ հանգամանորեն վերլուծվում ու ամփոփ ներկայացվում են ՀՀ բանակաշինության բոլոր շերտերն ու զարգացման հիմնական հարցերը:

հրետանի, Եր., ՀՀ ՊՆ, 2008; Հովհաննիսյան Ա., Ավիացիան Արցախյան գոյամարտում, Եր., 2006:

¹¹ Араслы Д., Армяно-азербайджанский конфликт, Военный аспект, Баку, Эргон, 1995.

¹⁴ Благовестов А. И., То, из чего стреляют в СНГ, Справочник стрелкового оружия, / под общ. ред: Тараса А. Е., Минск, Харвест, 2000; Латухин А. Н., Современная артиллерия, Москва, Воениздат, 1970; Минасан С. «Пятидневная война» августа 2008, Военно-политический анализ, Кавказ, 2008, Ер., 2010; Печуров С. Л., Англо-саксонская модель управления в военной сфере, Москва, КомКнига, 2005; Трошев Г., Моя война. Москва, Вагриус, 2001; Трошев Г. Н., Чеченский излом, Дневники и воспоминания, 2-е изд., Москва, Время, 2009; Беляев В., Ильин В., Российская современная авиация, Москва, АСТ, Астрель 2001, Гуров С. В., «Реактивные системы залпового огня», Тула, Пересвет, 2006.

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

1.1. Կանոնավոր բանակ ստեղծելու պատմական անհրաժեշտությունը և նրա կազմավորման գործընթացի մեկնարկը

1980-ական թվականների կեսերից սկսվեց հայության ազգային նոր զարթոնք, որը 1988 թ. փետրվարին բոլորովին այլ ընթացք ստացավ: Արցախյան համաժողովրդական շարժումն անմիջապես հանդիպեց միութենական իշխանությունների և Ադրբեջանի կարծր դիմակայությանը, որն ուղեկցվում էր կենտրոնի բողոքալուսյամբ և քաջահայտ աջակցությամբ իրականացվող զինված ուժնեցուցումներով: Դեռ 1988 թ. փետրվարի 22-ին, երբ երևանում իրականացվեցին օրինական ցույցեր, 8-10.000-անոց ադրբեջանական ամբոխն Աղդամից հարձակվեց Ասկերանի վրա, մտավ քաղաք, որոշ ավերածություններ արեց, սակայն ետ շարտվեց¹⁵: Փետրվարի 27-ին սկսվեցին Մուսկաչիի հայկական ջարդերը: Մարտի 10-17-ին Բաքվում, Կիրովաբադում և Ադրբեջանի հայաշատ այլ վայրերում ադրբեջանական խուժանը հայերի հանդեպ զանգվածային բռնադատքներ գործադրեց: Մեպտեմբերին Շուշիից հեռացան վերջին հայերը¹⁶: Նոյեմբերի 21-ին սկսվեցին Կիրովաբադի՝ պատմական Գանձակի և Ադրբեջանի հայաշատ վայրերի ինքնապաշտպանությունն ու տեղահանությունը, որոնք ուղեկցվեցին երեխաների, ծեղերի ու հաշմանդամների սպանություններով¹⁷: Ադրբեջանցիների զինված ուժնեցուցումներն ու ստորանքները հաճախացան Հայաստանի սահմանամերձ ու նաև

¹⁵ Հարարադյան Ազատագրական պատերազմ, 1988-1994, հանրագիտական, Մարզայան Ֆ. Տ. և այլք, եր., 2004, էջ 75:

¹⁶ Դևրիկյան Տ., Սկիզբը. Սահմանադրական պայքարից մինչև կամավորական շարժում, <http://www.hayzinvor.am/10111.html>

¹⁷ Հարարադյան Ազատագրական պատերազմ, էջ 42:

խտոր բնակչություն ունեցող շրջաններում: 1989 թ. օգոստոսի 6-ի գիշերն ադրբեջանցիները քանդեցին իրենց հսկողության ներքո գտնվող Ստեփանակերտի օդանավակայանի թռիչքուղին, փակեցին Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ավտոճանապարհը¹⁸: Մարզն արտաքին աշխարհին կապող միակ ձևը Հայաստանի Հանրապետությունից իրականացվող ուղղաթիռային թռիչքները դարձան, որոնք արգելվեցին՝ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների հետ հարաբերությունների սրման պատճառով: Հակառակորդը սկսեց «ճանապարհային պատերազմը»: Ադրբեջանը փակեց ինքնավար մարզի ներքին ճանապարհները՝ Արցախում սկսելով ոչ միայն արտաքին, այլև ներքին շրջափակում: Այսինքն՝ հայկական բնակավայրերն իբրև հետ կապ չունեցին: Արցախյան շարժման սկզբից ի վեր հսկայական աշխատանք կատարվեց ԼՂԻՄ-ի հայկական բնակավայրերը միմյանց կապող ճանապարհների կառուցման գործում: 1989 թ. սեպտեմբերի 18-ին Աղդամով անցնող ավտոճանապարհների ապաշրջանափակման ընթացքում տեղի ունեցավ առաջին խոշոր քայխումը խորհրդային զինծառայողների և ադրբեջանական խուժանի միջև: Չուղեկ երկու սպա: Հոկտեմբերի 10-ին տխրահռչակ զեներալ Վ. Սախունովի հրամանով Ստեփանակերտում կրակ բացվեց ժողովրդի վրա: Սպանվեց մեկ և վիրավորվեց տասը խաղաղ բնակիչ¹⁹: Դեկտեմբերի 20-ին հյդեղվեց Արցախի խոշոր սբազավայրերից ու պատմաճարտարապետական հուշարձաններից մեկը՝ Շուշիի Ս. Դավանյանց եկեղեցին²⁰: Դեկտեմբերի 31-ին Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում ավերվեցին հայկական պատմաճարտարապետական հուշարձաններն ու խորհրդայինական պետական

¹⁸ Դևրիկյան Տ., Սկիզբը. Սահմանադրական պայքարից մինչև կամավորական շարժում, <http://www.hayzinvor.am/10111.html>

¹⁹ Юзбашян М., Можно ли возбудить уголовное дело в отношении генерала Сафонова В. Н., Голос Армении (Коммунист), 1991-02-05. <http://www.press.karabakh.info>

²⁰ Հարարադյան Ազատագրական պատերազմ, էջ 525-531:

սահմանի հարյուրավոր կիլոմետրեր ձգվող մի հատվածի ենթակառուցվածքները:

1990 թ. հունվարի 10-ին լուծարվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի (ԼՂԻՄ) հատուկ կառավարման կոմիտեն: Փոխարենը հունվարի 12-ին, Ադրբեջանի Գերագույն խորհրդի (ԳԽ) նախագահության որոշմամբ, ստեղծվեց «ԼՂԻՄ կազմկոմիտեն», որը գլխավորեց Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի 2-րդ քարտուղար Պոլյանիչկոն: Մարզը վերաներթրվեց Ադրբեջանին: Բաքուն հայերից շուտապիտջ մարքելու և ԼՂԻՄ-ի վրա հարձակվելու պահանջով նախօրեին սկսված հանրահավաքային հիստերիան հանգեցրեց հունվարի 13-ից 19-ը տևած Բաքվի հայկական ջարդերին ու ռուսալեզու բնակչության բռնագաղթին: Գրա հետևանքով մեծ թվով խորհրդային զինվորականների ընտանիքներ հեռացան Ռուսաստան: ԽՍՀՄ պաշտպանության նախարար, մարշալ Դ. Յազովը հայտարարեց, որ Ադրբեջանի ժողովակազմը զինված էր ու մեծ վտանգ էր ներկայացնում²¹: Դա այդտեղ կազմավորված բանակ էր, որը չէր կարող հենց այնպես գայանալ, դա կազմակերպված աշխատանքի արդյունք էր: Նույն ժամանակ, երբ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները Հայաստանի ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) ենթակայության տակ ստեղծված մեկ հատուկ գնդի համար մեծ մեղադրում էին բանակ ստեղծելու ցանկության մեջ, Ադրբեջանին թույլ էին տվել 40.000-ով զինել անկառավարելի մի հրոսակախմբի: Լավ զինված բազմահազարանոց խումանի գործողություններն ուղղորդում էին ադրբեջանական իրավապահ մարմինները:

21 Այս իրադարձությունների մասին եղել են միջազգային կազմակերպությունների համապատասխան զեկույցներ, որոնք գեղեղված են՝ Корнелл С., Конфликт в Нагорном Карабахе: динамика и перспективы решения. <http://www.karabakh18.ru/conflict/karabakh/01.html>; Interim Report of the CSCE Repporteur Mission on the Situation in Nagorno-Karabagh, considered on 28 February 1992 by CSO of the CSCE; և «Мемориаи» իրավապաշտպան կազմակերպության պաշտոնական կայքում. <http://www.hrights.ru/text/bl/Chapter9.htm>.

Մկանդը, որի հետևանքով Բաքուն լրիվ հայաթափվեց, տեղե վեց օր: Իրավիճակը կտրուկ սրվեց նաև Գետաշենի ենթաշրջանում ու Շահունյանի շրջանում:

1990 թ. հունվարի 14-ին Արարատի շրջանի Քյարքի գյուղի տարածքում հայկական աշխարհագրային ջոկատներն առաջին անգամ բախվեցին թուրքերի հետ²²: Երկօրյա մարտերից հետո հունվարի 15-ին ազատագրեցին Երևան-Մեղրի ռազմավարական նշանակության ավտոճանապարհը վերահսկող Քյարքի գյուղը, որը դրբեջանցիները մարտական հեճակեղի էին վերածել: Երեք օր անց սկսվեցին Երասխավանի կռիվները: Դա Երևանից ընդամենը 40 կմ հեռու զինված ընդիարում էր, որը սպառնում էր հանրապետությունից մեկուսացնել նրա հարավային ամբողջ հատվածը: Երասխավանի կռիվներն ավարտվեցին հունվարի 21-ին՝ հակառակորդի լիակատար պարտությամբ, սակայն ցավալի կորուստ ունեցանք՝ զոհվեց հետագայում Հայաստանի ազգային հերոս Մովսես Գորգիսյանը²³: Սրանը Արցախյան պատերազմի առաջին մարտերն էին: Հետագա ընդիարումները տեղի ունեցան Տավուշում:

Փետրվարի վերջին Հյուսիսային Արցախում դժվարացավ Գետաշենի ու Մարտունաշենի պաշտպանությունը: Պատճառը Կամու և Ազատ գյուղերի հայաթափումն էր: Սահմանամերձ բնակավայրերի պաշտպանության անհրաժեշտությամբ սկսվեց ինքնապաշտպանական ու կամավորական ջոկատների կազմավորումը²⁴: Ոչտորդական հրացանների կողքին հայտնվում էին մարտական զենքեր: Հայաստանի խոշոր գործարանների մեխանիկական արտադրամասերում՝ կիսազաղտնի ընթանում էր ինքնաշեն զենքերի արտադրությունը: «Բանակ» կարելի էր համարել հայ հասարակության մտածողության

22 Արրահամյան Հ. Բ., Կամավորական ջոկատներից մինչև պաշտպանության բանակի ստեղծումը, Լրաբեր Հասարակական Գիտությունների, 2006, № 3, էջ 117-129:

23 Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 39:

24 Հասարայան Ս., Դարարադրյան պատերազմ, էջ 12-15:

մեջ այն գիտակցության հասունացումը, թե միայն սեփական ՁՈւ-ն կարող է լինել ժողովրդի ու հասարակության անվտանգության նրաշխիքը: «Քանակ» էին իրարից անկախ գործող կամավորական ջոկատները (թվով շուրջ 80), որոնք ռազմականացված հիմնարկություններից, հակակարկտային հրետանու կրակակետերից, ռազմագիտության դասարաններից ու հնարավոր բոլոր այլ վայրերից գեներալային ղեկավար, կամավոր, հայրենասիրական ու բարոյական արժեքներից դրդված, մեկնում էին սահմանի ամենաթեմ կետերը՝ անհավասար կռիվ մղելու հակառակորդի դեմ»²⁵:

Խորհրդային բանակում հայ զինծառայողների նկատմամբ ազգային խտրականության դրսևորումների պատճառով 1990 թ. գարնանը Հայաստանում ժամանակավորապես դադարեցվեց ժամկետայինների գորահավաքը, ինչը հետագայում մեծ խնդիրներ ստեղծեց հայկական նորաստեղծ ՁՈւ-ի համար: Խորհրդային Միությունն ուներ միասնական ՁՈւ, որից դուրս ցանկացած զինված կառույց համարվում էր անօրինական: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ՀԽՍՀ) նախարարների խորհուրդը 1990 թ. օգոստոսի 21-ին ընդունեց «ՀԽՍՀ ներքին գործերի նախարարությանն առընթեր հատուկ ստորաբաժանումներ ստեղծելու մասին» որոշում՝ հայկական բնակավայրերի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով ստեղծվող կամավորական ջոկատները պետական կառույցում ընդգրկելու համար, որին ղեմ էին Մոսկվայում: Այս գործընթացի շրջագծում 1990 թ. օգոստոսի 23-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց Հայաստանի անկախության հռչակագիրը, որում հստակ նշված էր, որ՝ «Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգությունը և սահմանների պաշտպանությունն ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ»: Սեպտեմբերի 20-ին ստեղծվեց

ՀՀ ներքին գործերի նախարարությանը կից հատուկ գումդր, որը հատուկ ստորաբաժանումների հետ դարձավ ՀՀ ՁՈւ-ի առաջնեկը և ապագա կանոնավոր բանակի կորիզը: Այն ուներ 26 վաշտ, որոնք կոմիցին ՀՀ և ԼՂՀ զբեթ բոլոր ռազմաճակատներում: Հայրենիքի սահմանների պաշտպանության համար մղված մարտերում գեովեց 159 մարտիկ, այդ թվում՝ գումարտակի հրամանատար, հետագայում Հայաստանի ազգային երեսու Ջիվան Աբրահամյանը²⁶:

Հանրապետությունում կամավորական ջոկատների տարերային կազմավորման և բնակչության ձեռքին մեծաքանակ գեների հայտնվելը բերեց շվեդահսկվող զինված խմբավորումների կողմից իրավիճակի ապակայունացման: Այդպիսի մի զինված անհնազանդության ժամանակ ղեկավարի հետագա սրտմն արգելելու նպատակով բանակցությունների մեկնելիս օգոստոսի 29-ին գեովեցին Վիտյա Այվազյանն ու Գեղազնիկ Միքայելյանը:

1991 թ. հունվարի 30-ին ՀՀ նախարարների խորհուրդն ընդունեց որոշում՝ «ՀՀ նախարարների խորհրդին առընթեր զինվորական վերատեսչությունների աշխատանքի կոորդինացման կոմիտե ստեղծելու մասին»²⁷: Նորաստեղծ կոմիտեն համակարգելու էր հանրապետության ջաղպաշտպանության շտաբի, զինկոմիսարիատի, բարձրագույն ուսումնական հաստատությունների (բուհ) ռազմական ամբիոնների ու ԳՕՍԱԱՖ-ի աշխատանքները: Դրանք հենց այն կառույցներն էին, որոնք այդ պահին լրացնում էին բանակի բացը: Կոմիտեի նախագահ նշանակվեց Վազգեն Մարգարյանը: Ըստ Լուրյան, սա պաշտպանության նախարարության նախնահիմքն էր, որը սկսում էր համակարգման ծանր ու ղգվարյին գործը: Փետրվարի 12-ին ՀՀ նախարարների խորհուրդն ընդունեց «ՀՀ տարածքում տեղակայված զորամասերին կից պահեստի սպաների, սերժանտների ու զինվորների պատրաստման միջոցառումների և ուսումնական հավաք-

²⁵ Մարգարյան Ա., Հայկական բանակ-10, եր., 2002, էջ 12:

²⁶ Ուլու փորձություն, Մարգարյանի Վ. կուրյանը, եր., 2000, էջ 189-192:

²⁷ Օհանյան Ա., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 40-49:

ների վերականգնման մասին»²⁸ որոշում՝ ելնելով ՀՀ անվտանգության ապահովման անհրաժեշտությունից, որակյալ զինվորական մասնագետների պատրաստման ու դրա հիման վրա ազգային բանակի ստեղծման ցանկությունից: Մրանք Հայաստանում ապագա բանակի ստեղծման ուղղությամբ կատարված իրավական և գործնական առաջին քայլերն էին:

1991 թ. առաջին երեք ամիսների ընթացքում ադրբեջանական ՕՍՄՆ-ը հրահրել էր 59 զինված սաղոսանք, որից 20-ը՝ ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի մասնակցությամբ: Իրավիճակն այն աստիճան սրվեց, որ ապրիլի 30-ի առավոտյան զավթիչների տանկերի, գրահամեքենաների ու ռազմական ուղղաթիռների աջակցությամբ, գրոհեցին Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերը: Մարտունաշենի բնակչությունն ու կամավորները կռվով մահանջեցին: Ջոնվեց Գետաշենի բնակչությանը գնդացրային կրակով պաշտպանող Սյունո Աշիկզոզյանը²⁹: Գետաշենի ինքնապաշտպանության հրամանատար Թաթուլ Կրպեյանն իր կյանքի գնով կանխեց վայրագությունները: Այդպես սկսվեց տխրահռչակ «Օղակ» գործողությունը³⁰, որը արագորեն տարածվելով՝ ընդգրկեց ամբողջ Հյուսիսային Արցախը, Հաղորտի շրջանն ու Բերդաձորի ենթաշրջանը, նաև Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերը: Հատկապես ծանր վիճակ էր Նոյեմբերյանի, Տավուշի, Կապանի ու Գորիսի շրջաններում: Հենց այս վերջին հանգամանքը վկայում էր, որ հակամարտությունն ամենևին էլ արգայալան չէր:

«Օղակ» ռազմագործողության ժամանակ՝ 1991 թ. ապրիլի 30-ից մայիսի 17-ը, ԼՂԻՄ-ում և Հայաստանի Հանրապետությունում սպանվեց 75 հայ, և հայաթափվեց 23 հայկական գյուղ³¹:

Հաղորտի սահմանամերձ գյուղերի հայաթափումը դադարեց, կեր Տողում, Էդիլուում, Հաղորտում, Խծաբերդում ու Մեծ Թաղալում զինված դիմադրություն ցուցաբերվեց: Ընդհանրապես, այնտեղ, որտեղ կազմակերպված դիմադրություն էր լինում, քուրթը մահանջում էր: Սակայն մախիկն խորհրդային 4-րդ բանակի 23-րդ դիվիզիայի վարժկան ստորաբաժանումներն ու ադրբեջանական ՕՄՕՆ-ը, զինվորական ուղղաթիռների և ինքնաթիռների աջակցությամբ, բացահայտ պատերազմ սկսեցին Շահումյանի շրջանում: Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը հայտարարեց, որ ամեն միջոց կձեռնարկվի՝ արգելելու Շահումյանի հայաթափումը: Սակայն իրականում այդ հնարավորությունները մեծ չէին: Հակառակորդը, մարդկային ուժի ու գրահատելանիկայի կորուստների գնով, հուլիսի 14-15-ը հայաթափեց Մամաշի, Բուզուխ և Էրքեց գյուղերը, շրջապատեց Վերիշենը: Չմայած գրահատելանիկայի, զինվորական ուղղաթիռների և «Су-25» ինքնաթիռների աջակցությամբ՝ թշնամին հանդիպեց բնակչության ու կամավորական ջոկատների ուժգին դիմադրությանը: Սա արդեն պատերազմ էր, որը խորհրդային ղեկավարությունը փորձում էր քողարկել:

Ծանր իրավիճակ էր նաև Մարտակերտի շրջանում: Հաթերքի անտառներում գտնվող կամավորական ջոկատները հակահարված հասցրին հայաթափման ծրագրերին: Կամավորները Արկադի Տեր-Թաղևոսյանի ընդհանուր հրամանատարությամբ օգնության էին հասնում հայկական գյուղերին: Ճշտելով օժնականների երթուղիները՝ դարանակալում էին նրանց, կանխարգելիչ հարված հասցնում: Նրանք անընդհատ թաքնվում էին անդադար իրենց որոնող զինվորական ուղղաթիռներից. «Բոլոր այս ճնշումներին դեմ հանդիման

²⁸ Սարգսյան Ա., նշվ. աշխ., էջ 13-16:

²⁹ Դարարաղյան Ազատագրական պատերազմ 1988-1994, հանրագիտարան, էջ 67:

³⁰ Агабабян А., Республика Армения № 173 (215), 14.09.1991, 101 день в аду. <http://www.press.karabakh.info/101>.

³¹ The Washington post, 2 May 1991, p-3; Los Angeles Times, 10 May 1991.

կանոնում էին հայ կամավորական ջոկատները, որոնց գործողությունները տարերային էին, շկոտողինացված և տեղի էին ունենում Հաստատմի և Արցախի պաշտպանությունը համակարգող միասնական կենտրոն-կառույցի բացակայության պայմաններում: Սակայն դրանք այն կենսունակ սաղմերն էին, որոնցից անկախության հռչակումից անմիջապես հետո պիտի ծնվեին հայոց փառապանք բանակի ստորաբաժանումները:

Կամավորականները, որոնք որոշ ժամանակ անց արդեն սահուն կերպով պետք է իրենց տեղը զիջեին կանոնավոր զորամիավորումներին, փայլում կերպով կատարեցին իրենց առջև իրենց իսկ կողմից դրված խնդիրը³²:

Նկատի առնելով ստեղծված իրավիճակը՝ ՀՀ ՆԳՆ սահմաններ ուղարկեց իր ենթակայության բոլոր կառույցները՝ Հատուկ գունդը, միլիցիայի հատուկ ջոկատը և այլն: 1991 թ. մայիսի 5-ին Հայաստանում կազմավորվեց Արտակարգ իրավիճակի հանրապետական ժամանակավոր խորհուրդ: Նույն օրը ստեղծվեց ՀՀ մախարարների խորհրդին առընթեր պաշտպանության կոմիտե, որի նախագահ նշանակվեց Վահան Շիրիսյանը, իսկ շտաբի պետ՝ գեներալ-մայոր Գուրգեն Դավիթբեկյանը: Սեղմ ժամկետներում մշակվեցին կոմիտեի կառուցվածքն ու հաստիքացուցակը, կազմավորվեց շուրջօրյա հերթապահություն: Կոմիտեի անդամները՝ Արկադի Տեր-Թադևոսյանը, Ֆելիքս Գոլոյանը, Ռուբեն Բախշյանը, Լեոնիդ Մարտիրոսովը, Ռուբերտ Առաքելյանը, Իվան Գուկասովը, Ալբերտ Մարգարյանը, Գեորգի Պետրոսյանը, Ալուտի Մյուրայանը և մյուսները, ովքեր ընդգրկվել էին ՀՀ ՋՈՒ-ի բարձրագույն հրամանատարական կազմում, մեկնեցին սահմաններ՝ տեղերում ճշտելու իրավիճակն ու առաջնահերթ խնդիրները: «Նսմանատիպ կառույց արդեն գործում էր Լեռնային Ղարաբաղում: Մրանով զգալիորեն հեշտացվեց բարդագույն պայ-

մաններում ՀՀ, Արցախի և Շահումյանի պաշտպանական գործողությունների համակարգման խնդիրը՝ միաժամանակ դառնալով այն հիմքը, որի վրա քիչ ավելի ուշ պետք է ստեղծվեր ՀՀ պաշտպանության նախարարությունը³³»: Անհրաժեշտ էին կապավորներ, սակավորներ, հրետանավորներ: 1991 թ. հունիս-օգոստոս ամիսներին զինկոմիտեի հատերում ուսումնասիրվեցին պահեստի սպաների ամօճական գործերը, որպեսզի նրանց ներգրավեն այդ գործում: Սպաներից շատերը գործուղվեցին սահմանամերձ շրջաններ: Կազմավորվեց ինքնապաշտպանական գումարտակների սպայական կազմ, որոնց հետ անցկացվեցին համապատասխան պարապլոմներ: Մասնագիտական պատրաստություն ու վերապատրաստություն իրականացվում էին տեղում: Ըստ էության, սա արդեն բանակի գործող ստորաբաժանումների, այսինքն՝ զորքերի կազմավորումն էր: Այդ ամենին զուգընթաց մշակվում էին նաև ապագա պաշտպանության նախարարության կառուցվածքը և մեծ վտանգ ներկայացնող թշնամական հեմակետերի ոչնչացման գործողությունները: Ըստ էության, այս ամենը նաև կարևոր առանձնահատկություն ուներ՝ բանակի ստեղծում՝ առանց հրամանների:

Պաշտպանության կոմիտեն ստեղծվեց ու գործեց այնպիսի ժամանակաշրջանում, երբ Հայաստանը³⁴ ենթարկվում էր Խորհրդային Միության կենտրոնական իշխանությունների ճնշումներին: Կոմիտեն իր խնդիրները կատարեց կարճ ժամանակում. Իրականացվեցին կառուցվածքային-կազմակերպական այնպիսի մեծածավալ միջոցառումներ, որոնք արմատապես փոխեցին իրավիճակը: Պաշտպանության կոմիտեն մեծ ավանդ ունեցավ հանրապետության ներքին կայունության պահպանման գործում՝ հատկապես տարբեր ջոկատների համախմբման շնորհիվ:

³² Մարգարյան Ս., Հայկական բանակ-10, էջ 13-14:

³⁴ Հայաստանը այստեղ և հետագայու ենթարկելու է նաև Արցախը, իսկ սահմանին դեպքերում, երբ իրավական առանձնահատկությունները անհրաժեշտ լինեն կնշվի ՀՀ և ԼՂՀ:

³² Մարգարյան Ս., Հայկական բանակ-10, էջ 12-13:

1991 թ. օգոստոսին Մոսկվայում տեղի ունեցած մտկայական հայտնի դեպքերից հետո՝ օգոստոսի 30-ին, Ադրբեջանը հայտարարեց խորհրդային Միության կազմից դուրս գալու մասին: Այդ նույն ժամանակ ԼՂԻՄ-ը Բաքվի կողմից ենթարկվել էր լիարժեք մեկուսացման. փակվել էին օդային և ցամաքային հաղորդակցության ուղիները, տրանսպորտը խափանված էր, անջատում էին էլեկտրական էներգիան և գազամատակարարումը³⁵: Ստեղծված իրավիճակում՝ սեպտեմբերի 2-ին, ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզային ու Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը³⁶:

«ԼՂՀ հռչակումը դեպի իրական անկախություն կատարված առաջին քայլն էր, որին այնուհետև հաջորդեցին համապատասխան իրավական, քաղաքական, ռազմական ու դիվանագիտական ջանքերը: ԼՂՀ-ն հռչակվեց արցախահայության համար դժվարին ժամանակահատվածում, ռազմաքաղաքական քարոզ պայմաններում: Այդուհանդերձ, անկախ պետականության վերականգնումը նոր յոթան հանդիսացավ հակառակորդի ագրեսիային դիմագրավելու, բնակչության անվտանգությունն ու խաղաղ աշխատանքն ապահովելու համար: Այն առավել լայն ասպարեզ բացեց Արցախի ինքնապաշտպանության ուժերի կազմավորման ու պաշտպանական գործուն համակարգի ստեղծման համար»³⁷:

Հայաստանի Հանրապետությունը 1991 թ. սեպտեմբերի 21-ին անկախություն հռչակեց: Նույն օրվականի դեկտեմբերի 8-ին ԽՍՀՄ-ը՝ որպես միջազգային սուբյեկտ, դադարեց գոյություն ունենալ: Միջազգային դրությունը դրանով բարդացավ: Արցախում ինքնապաշտպանական ուժերը նախապատրաստվում էին պատերազմին՝ կարգի

³⁵ Աբրահամյան Հ., Գակատագրին ընդառաջ, Եր., 2001, էջ 144:

³⁶ Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը, 1991-1994, Եր., 2011, էջ 20:

³⁷ Սարգսյան Ս., Հայկական բանակ-10, էջ 12-13:

էին յերում շենքերի մկուղները՝ որպես ոմբապատարաններ և սայն³⁸: ԼՂՀ-ում դեկտեմբերի 10-ին անցկացված հանրաքվեում ընտրողների 98 տոկոսը քվեարկեց հանրապետության անկախության սկզբին: Նույն օրը հակառակորդը ոմբակոծեց Ստեփանակերտը, գրոհեց ավելի քան 10 մարդ³⁹: Նրաստեղծ ԱՊՀ-ի դեկլարացիաները փորձեցին միջնորդական առաքելությանը դիմել Ադրբեջանին և Հայաստանին, սակայն Ադրբեջանի նախագահ Ալյազ Մութալիբովը հրաժարվեց՝ պահանջելով չմիջամտել անկախ Ադրբեջանի ներքին գործերին⁴⁰: Միաժամանակ բռտն էր քաղաքական իրավիճակը: ԼՂՀ պետական անկախության մասին հռչակագիրը ընդունվեց 1992 թ. նոյեմբերի 6-ին⁴¹: «Առաջացած իրավական վակուումի պայմաններում ԼՂՀ անկախության հանրաքվեն ճիշտ ժամանակին ձեռնարկված կարևոր քայլ էր, որն այսօր էլ միջազգային իրավական նորմերի տեսանկյանց որևէ առարկության կամ վիճարկման ենթակա չէ»⁴²:

Դեռ 1991 թ. դեկտեմբերի 4-ին ընդունվեց «ՀՀ կառավարության կազմի և կառուցվածքի մասին» ՀՀ օրենքը, որը ենթադրում էր պաշտպանության նախարարության ստեղծումը: Հաջորդ օրը ՀՀ Գերագույն խորհրդի պաշտպանության և ներքին գործերի համեմատողովի նախագահ Վազգեն Սարգսյանը ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով նշանակվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար⁴³: Դեկտեմբերի 10-ին նախագահի հրամանով պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ և փոխված ուժերի գլխավոր շտաբի պետ նշանակվեց խորհրդային

³⁸ Հարությունյան Վ., Արցախյան հիմնահարցի ակունքները, Ստեփանակերտ, 1998, էջ 93:

³⁹ Օհանյան Մ., Անկախության քայլերը, ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները, 1991-1998, Ստեփանակերտ, 1998, էջ 8:

⁴⁰ Աբրահամյան Հ., Գակատագրին ընդառաջ, էջ 150:

⁴¹ Հարությունյան Վ., Արցախյան հիմնահարցի ակունքները, էջ 109:

⁴² Օհանյան Ս., XXI դարի բանակը, Եր., 2007, էջ 10:

⁴³ Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 113, ց.165, գ.298, ք. 1, ՀՀ ՊՆ պաշտոնական կայք-էջ, Գրադարան բաժին, պատմություն <http://www.mil.am/arm/index.php?page=26>

բանակից եկած զեմերալ-մայր, ներկայում պահեստի զեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբաբյանը:

1992 թ. հունվարի 28-ին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց ՀՀ պաշտպանության նախարարությունը, որի ենթակայությանը հանձնվեցին երկուսն էլ արժանի կառույցներից որոշակի ստորաբաժանումներ՝ մասնավորապես, ներքին գործերի նախարարության պարեկապահակային գումղը, հատուկ նշանակության օպերատիվ գումղը, քաղաքացիական պաշտպանության գումղը և ՀՀ զինվորական կոմիսարիատը⁴⁴: Նախկին ԽՍՀՄ-ի տարբեր երկրներից հազարավոր հայ սպաներ եկան ազգային բանակի շարքերը լրացնելու⁴⁵:

1992 թ. փետրվարի 24-ին որպես Հայաստանում Պաշտպանության նախարարության ստեղծման օրգանական շարունակություն՝ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի ստեղծման մասին⁴⁶: Չհավորվեց կենտրոնական հրամանատարություն, որին ենթարկվեցին ինքնապաշտպանության ուժերի բոլոր ստորաբաժանումներն ու ջոկատները: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի ստեղծումը հայոց բանակաշինության գործընթացի կարևորագույն փուլերից էր⁴⁷: Փետրվարի 25-ին ՀՀ Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը ուղերձ հղեց աշխարհի 14 երկրների ղեկավարներին, որտեղ ներկայացնում էր Ադրբեջանի այն գործողությունները, որոնք, ըստ էության, պատերազմի սանձազերծում էին⁴⁸:

1992 թ. մարտի 10-ին ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «Պաշտպանության մասին» և «Զինվորական կոչումների մասին» ՀՀ

օրենքները, որոնք ՀՀ նախագահի կողմից մարտի 23-ին հաստատվեցին⁴⁹: Ապրիլի 7-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց, որ մինչև «ԼՂՀ քաղաքացիների համընդհանուր զինապարտության մասին» օրենքի ընդունումը, մայիս-հունիս ամիսներին զորակոչվում իրականացվի համաձայն գործող օրենսդրության⁵⁰: Ադրբեջանում նույն ժամանակ ստեղծվեցին «Ազգային ինքնապաշտպանության ուժերում ռազմադաշտային դաստարանները», որը թեպետրված էր նրանց մոտ դասավորության և հրամանատարությամբ չենթարկվելու համատարած դեպքերով: Նկատենք, որ նման բան հայկական բանակում չկար, և դա էլ չտա բան է ասում կողմերի պատերազմական դրդապատճառի մասին:

ՀՀ պաշտպանության նախարարության ստեղծման մասին հրամանագրից հետո անմիջապես սկսվեցին նրա կառուցվածքի մշակումն ու վարչությունների, ծառայությունների և առանձին բաժինների ստեղծումը: «Ճնդիչները մաշտաբային էին: Երբեմն դուրս էին գալիս և՛ ռազմավարության ու մարտավարության դասական ընթերցման, և՛ ինչպես զինված ուժերի շինարարության, այնպես էլ մարտական գործողությունների վարման մարտավարության ու ռազմավարության հիմունքների ու սկզբունքների շրջանակներից: Այդ օրերի իրականությունն էլ դերս հանեց ձևավորված բոլոր դասական կանոններն ու հասկացությունները: Մենք ինքներս էինք ձևակերպում թե՛ ռազմավարությունը, թե՛ մարտավարությունը, թե՛ ռազմական արվեստի հիմունքները, թե՛ զինված ուժերի շինարարության հիմնական սկզբունքներն ու կազմակերպատեսիլային կառուցվածքը»,- նշում է զեմերալ-զեմապետ Միքայել Հարությունյանը⁵¹:

ՀՀ պաշտպանության նախարարի առաջին հրամանով՝ 1992 թ. հունվարի 28-ին ստեղծվեց բոլոր բանակների հիմնական ուղեղ

⁴⁴ Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 113, գ. 163, գ. 406, ք. 6-9:

⁴⁵ Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Եր., 2013, էջ 120:

⁴⁶ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, գ. 1, պ. մ. 1, կ. 1, ք. 45-46:

⁴⁷ Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը, 1991-1994, էջ 51-53:

⁴⁸ Հայաստանի Հանրապետություն, 28.02.1992:

⁴⁹ ՀՀ Նախագահի հրաման՝ ՀՆ-0549-Լ, 10 մարտի, 1992թ.:

⁵⁰ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, գ. 1, պ. մ. 2, կ. 1, ք. 36-37:

⁵¹ Հարությունյան Մ., ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի դերը ռազմական շինարարության գործում, Հայկական բանակ, 2002, հմ. 1-2, էջ 28:

հանդիսացող ՀՀ ՋՌՈ գլխավոր շտաբի օպերատիվ վարչությունը: Վարչության պետ նշանակվեց փոխգնդապետ, ներկայումս գեներալ-գնդապետ Մ. Հարությունյանը⁵², ում տարեվերջին փոխարինեց ներկայիս գեներալ-լեյտենանտ Լեոնիդ Մարտիրոսովը: Երկու անձինք էլ խորհրդային համակարգում ռազմական փայլուն կրթություն էին ստացել և օպերատիվ աշխատանքի մեծ փորձ ունեին: Մարտական հիմնական փաստաթղթերի մշակումը, մարտական որոշումների ընդունման համար անհրաժեշտ օպերատիվ հաշվարկների և առաջարկությունների, հրահանգների ու հրամանների պատրաստումը իրականացվել է այս վարչությունում: Ռազմագործողությունների պլանավորմանն առնչվող բոլոր հարցերով գլխավոր շտաբի այլ վարչությունների ու բաժինների հետ համագործակցության կազմակերպումը ևս իրականացվում է այս վարչության միջոցով, վերջինս ծրագրային մեծ աշխատանք է կատարել: Վարչության անձնակազմի յուրաքանչյուր երկրորդ սպա մասնակցեց հայրենիքի պաշտպանության մարտերին⁵³:

ԳԸ օպերատիվ վարչությունից հետո սկսվեց առանցքային գորտեսակների և գորամասերի կազմավորման գործընթացը, իրականացվեցին հետևյալ քայլերը.

1. ամրագրվեց անհրաժեշտ իրավական դաշտը,
2. ձևավորվեցին ղեկավարման օղակները, առաջին հերթին՝ գլխավոր շտաբը,
3. ստեղծվեցին բիկուրնի և սպառազինության ծառայությունները,
4. հիմնադրվեցին գորտեսակներն ու մասնագիտացված գորամասերը,

⁵² 1995-2007 գլխավոր շտաբի պետ, 2007-2008, պաշտպանության միախարաբ, գեներալ-գնդապետ:

⁵³ Գեներալներ Հարությունյանի, Մարտիրոսովի, Դավթյանի հետ ունեցած գրույցների տվագրությունից:

5. մշակվեցին խմբավորումների, գորամասերի մարտական կազմերը և կառուցվածքները, դրվեց գորտեսակների և ծառայությունների ձևավորման սկիզբը, անցկացվեց առաջին գորակոչը,

6. կազմավորվեցին սահմանապահ առաջին գորամասերի՝ մոտոհրաձգայինների վերափոխման հեռանկարով,

7. ծավալվեցին գորամասերի ստորաբաժանումները՝ դասակները, վաշտերը, գումարտակները, սկսվեց անձնակազմի մարտական ներդաշնակման ու մարտական պատրաստության գործընթացը:

1.2. Ինքնապաշտպանական ուժերի և ջոկատների կերակրվածությունը կանոնավոր բանակի

1992 թ. սկզբին Արցախում գործող հայկական բոլոր ուժերը միասին ունեին մոտ 1000 ազատամարտիկ⁵⁴: Այս ժամանակ կանավորական ջոկատների կազմավորման գործում չափազանց մեծ դերակատարություն ունեին նաև Արկադի Կարապետյանը, Լեոնիդ Ազգալյանը, Աշոտ Դուլյանը, Վալերի Բալայանը, Վլադիմիր Բալայանը և այլոք, որոնց ջոկատները ամենակազմակերպվածներից էին: Այս և շատ այլ մարտիկների սխրագործություններն արդեն լեգենդ էին դարձել: Նրանք երկրամասի պաշտպանության գործը և մարտական գործողությունները իրականացրել էին ամենալավագույն պահերին, երբ ամեն ինչ ավելի շատ անձնույացությամբ էր պայանակավորված: Դեռևս մինչև վերջ չկազմավորված բանակը իրականացրեց հայ ժողովրդի պատմության նշանակալից և բարդագույն ռազմական գործողություններից մեկը: Խոսքը Շուշիի ազատագրական ռազմագործողության մասին է: Այն իր տեսակի մեջ աննախադեպ է:

1992 թ. սկզբներին թջնամին, ուժեր ու միջոցներ կենտրոնացնելով Խոջալու, Ջանհասան, Ղայախլիչեն, Քոսալար, Նարիխար գյուղերում և Շուշի քաղաքում, փորձում էր վերջնականապես ոչնչացնել

⁵⁴ Հասարայան Ս., Գոյամարտ, Ստեփանակերտ, 1998 թ., էջ 6:

Ստեփանակերտում և հարակից բնակավայրերում պատասպարված հայությանը: Պաշտպանելով զբաղեցրած բնագծերն ու բնակավայրերը՝ մահացու շրջափակումից դուրս գալու նպատակով 1992 թ. փետրվարի սկզբից հայկական ինքնապաշտպանական ուժերը մի շարք ուղղություններով անցան հակահարձակման: Փետրվարի 9-11-ը հակառակորդը հետ շարժվեց Մայիքեյի, Ներքին և Վերին Ղուշուլար գյուղերից, որի շնորհիվ բացվեց Ստեփանակերտը Մարտունու շրջանի հետ կապող ճանապարհը: Փետրվարի 18-ին վնասագերծվեց Ղարաղաղուն, փետրվարի 22-ին էլ՝ Վերին Վեյսալուն, այնուհետև փետրվարի 26-ին ազատագրվեցին Ստեփանակերտի օդանավակայանն ու Խոջալու գյուղը, իսկ փետրվարի 29-ին՝ նաև Ռումուղլուն⁵⁵:

1992 թ. մարտին թշնամին մի քանի ուղղություններով վերսկսեց կատաղի հարձակումներ, սակայն բոլոր հատվածներով հետ մղվեց, ավելին՝ մարտի 11-ին հայ մարտիկներն Ասկերանի մատույցներում ջախջախեցին հակառակորդին: Նույն օրն ազատագրվեց նաև Արկավենդը:

ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համար 1992 թ. մարտի 26-ին ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր ստեղծվեց պաշտպանության կոմիտե՝ Սերժ Սարգսյանի նախագահությամբ: Կոմիտեն միավորեց ինքնապաշտպանական ջոկատները, հստակեցրեց ինքնապաշտպանական ուժերի կառուցվածքը, կառավարման համակարգը և կարգավորեց զորքերի ապահովման, մատակարարման հարցերը: ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար ճշմասկվեց գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը, իսկ շտաբի պետ՝ գնդապետ Ֆելիքս Գզոդյանը: Այս քայլերի շնորհիվ ինքնապաշտպանական ուժերն սկսեցին գործել առավել համակարգված:

Ապրիլին թշնամին ակտիվացրեց հարձակումները մի քանի ուղղություններով: Ապրիլի 29-ին Շուշիից ու Ջանհասանից հակառակորդի ձեռնարկած հարձակումը ձախողվեց: Մայիսի սկզբներին (մայիսի 4-6) նա փորձեց գրավել Թալիշ և Տոլ գյուղերը, բայց ապաստամարտիկները հետ մղեցին բոլոր գրոհները⁵⁶:

Այսպիսով, 1992 թ. գարնանը ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը կարողացան դուրս գալ անելանելի դրությունից, ստեղծել էլ ավելի պաշտպանունակ ու մարտունակ կառույց: Համակարգված ռազմական կառույցի համար, սակայն նոր մարտահրավեր էր բացվում: Պատերազմն էլ ավելի էր ահագնանում, հակառակորդը փորձում էր նոր բախով հարձակման անցնել, կիրառման մեջ էր դնում ավելի հզոր զինատեսակներ: Ստեղծված պայմաններում Արցախի համար առանձնահատուկ վտանգ էին ներկայացնում Շուշիի, Քոսալարի, Ջանհասանի, Կարազյաֆի հենակետերը, որոնցից անդադար տեղացող կրակը մահաբեր էր շրջակա հայության համար: Ըստ ԼՂՀ մամուլի կենտրոնի 1992 թ. մայիսի 1-ի հայտարարության՝ միայն 1992 թ. սկզբներին Ստեփանակերտ քաղաքը հրետակոծվել է 170 անգամ և 11 անգամ ենթարկվել է ցամաքային հարձակման: ԼՂՀ մայրաքաղաքի վրա բաց են բողոմել շուրջ 4253 տարբեր տեսակի արկ ու հրթիռ, այդ թվում՝ 2437 հատ «ԵՄ-21 Գրառ», 527 «Ալյազան» հրթիռներ, «Դ-12» իրամոթի 593 արկեր: Ավերվել էր 188 և վնասվել 223 բնակելի շենք, ամբողջովին փլվել էր 54 և վնասվել 147 պետական օբյեկտ: Սպանվել էր 90 և վիրավորվել 268 խաղաղ բնակիչ: Դեղորայքի խիստ պակասի հետևանքով վիրավորները մահանում էին⁵⁷:

⁵⁶ Հասարայան Ս., Ղարաբաղյան պատերազմ, էջ 34:

⁵⁷ Տվյալները ստացվել են քաղաքի ոմբակոծության մասին ԻՊՈւ-երի շտաբ կատարված գեկուցագրերի ու հաշվետվությունների, ինչպես նաև հատոր դամ տվյալների ընդհանրացումից, ինչը համապատասխանում է նաև պատերազմը ուսումնասիրած փորձագետների գնահատականների հետ:

⁵⁵ Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 51:

Ըստ Շուշիի կորստյան կապակցությամբ Բաքվում անցկացված դատավարության վերաբերյալ աղբյուրներից լրագրող Է. Փատուլյանի պատմածի՝ մայիսի 7-ից 8-ի դրությամբ միայն Շուշի քաղաքում «հակառակորդն ունեցել է տարածքային մեկ գումարտակ (մոտ 200 մարդ), «Կարաբաղ» գումարտակը (մոտ 500 մարդ), ժողովրդական ճակատի մեկ գումարտակ (մոտ 120 մարդ), եվախի գումարտակը, հատուկ նշանակության ջոկատ, հրետամային դիվիզիոն, ավտոմաշտ, ապահովման ու սպասարկման ստորաբաժանումներ, 3 միավոր «Т-72» և 1 միավոր «Т-55» տանկ, 9 միավոր «БМП-1» և «БМП-2», 2 միավոր «БТР», 2 միավոր «БРДМ», 2 միավոր «БМ-21 Град» կայանք, 6 միավոր 100 մմ հրանոթ, 2 միավոր 100 մմ S-12 հրանոթ, 20 միավոր 82 մմ ակամանետ, 6 միավոր «АГС-17», 6 միավոր զենիթային զնդացիք, 1 միավոր զենիթային հրանոթ, 5 միավոր ԶՀՀ «Срела-10»⁵⁸ և այլն: Ուսումնական նշված բոլոր միջոցների համար եղել է պահանջվածից ավելի քանակությամբ զինամթերք: Այսպիսի ահռելի ուժերով ու միջոցներով աղբյուրացիները Շուշիից անդադար հարձակումներ էին գործում շրջակա հայկական բնակավայրերի վրա: Հասկանալի է, որ Շուշին ազատագրելը դարձել էր հրատապ խնդիր:

Շուշիի ազատագրման ռազմական գործողության իրականացման ընթացքը կարելի է բաժանել երեք խումբ խնդիրների.

ա) Շուշի քաղաքի մեկուսացումը հակառակորդի զորքերի արևմտյան խմբավորումից,

բ) Կելթալի-Քոսալար-Կարազյաֆ ճակատում գտնվող հակառակորդի զորքերի ներքաշումը մարտական գործողությունների մեջ, նրանց ուշադրության շեղումը և տարանջատումը Շուշվա ճակատից,

գ) Շուշի քաղաքի գրոհը, պաշարումն ու ազատագրումը:

Շուշիի ազատագրման ռազմական գործողության մախապատրաստական աշխատանքներն սկսվել էին դեռևս 1992 թ. մար-

տից: Մինչ քաղաքի գրավումը, սակայն, անհրաժեշտ էր ազատագրել Ստեփանակերտի մերձակա աղբյուրանական բնակավայրերը, որոնք կրակակետերի էին վերածվել և օր ու գիշեր կրակի տակ էին պահում Ստեփանակերտը: Բացի այդ, Շուշին գրոհելուց ստացվելու էր ապահովել քիկումը: Առաջին ենթագործողությունը Մալիքիյում էր, հետո՝ Խոջալույում, Կիչան-Սրիխավենդում: Միայն դրանից հետո սկսվեցին Շուշիի գրոհի մախապատրաստական աշխատանքները՝ զինամթերքի կուտակում, պարենային ապահովում և ամենակարևորը՝ հետախուզություն: Մայիսի 2-ին ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ) հրամանատար, գեղապետ Ա. Տեր-Թադևոսյանը զեկուցել է պաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Մարգարյանին, որ զինուժը պատրաստ է ռազմական գործողություն սկսելուն:

Մարտական գործողության անցկացման համար մախատեսված չորս ուղղություններում ընդգրկվել էին տարբեր վաշտեր, ջոկատներ, խմբեր ու դասակներ: Ըստ գործողության մարտական իրամանի՝ այդ կազմերը հետևյալն էին.

26-րդ կամ հյուսիսային ուղղության կազմում՝ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ վաշտերը, հետախուզական վաշտը, Սևանի (Սուրիկ Սարգսյան), Հրազդանի (Մասուն Միքայելյան), Ստեփանավանի (Հրաչի) ջոկատները:

Շուշի կամ արևելյան ուղղության կազմում՝ 1-ին վաշտը, Շուշի, Դաշուշենի, Քրասնո, Ազոյի, Ռուսլանի, Դաշնակների, Մուտ ջոկատները:

Լաչինի կամ հարավային ուղղության կազմում՝ 2-րդ և 3-րդ վաշտերը, Բերդաձորի, Չանսիչու, Սղմախի, Կարաբուլաղի, Քարինտակի, դաշնակների (Ժիրայր Սեֆիրյանի) ջոկատները, Քիրսի խումբը:

Քոսալարի ուղղության կազմում՝ Բաղարայի, Կունայրիի, Բալուջայի, Հրանտի, Վաղոյի ջոկատները, դիվերսիոն հետախուզական (ԴՀ) մեկ խումբ:

⁵⁸ «Карабахский дневник» азербайджанского журналиста. <http://www.nv.am/archive-2012/17231-2012-01-19-09-00-08>

Ռազմական գործողության ուսումնասիրությունից նաև պարզ է դառնում, որ դրա ցուցանիշները հնարավոր ամենաօպտիմալներն են՝

- հարձակվող ուժերը և միջոցները՝ 17 վաշտ, 20 զրահատեխնիկա, 12 հրետամային միջոց,
- հարձակման ճակատի լայնքը՝ 40 կմ,
- հարձակման միջին տեմպը՝ 20 կմ/օր,
- գործողության տևողությունը՝ 1 օր:

Մարտական գործողության նախօրյակին, ըստ ուղղությունների և ընդհանուր առմամբ ուժերի ու միջոցների փոխհարաբերակցության մոտավոր հաշվարկը ցույց է տալիս, որ հայկական ուժերը հակառակորդին զիջում էին մոտ 2.5-3 անգամ: Մեր գործերի տրամադրության տակ էր հրետամու և զրահատեխնիկայի համար պահանջվող զինամթերքի ընդամենը 10 տոկոսը: ԻՊՈՒ հրամանատարությունը, գիտակցելով թշնամու քանակական գերակշռությունը, ջանք էր խնայում որակական առավելություն ապահովելու համար:

Մարտական գործողություններում ռիսկի գործոնի գերազանցումը դուրս չէր ռազմական արվեստի տեսության օրենքների սահմաններից: Այն բնորոշ էր ազգային-ազատագրական պայքարին, համապատասխանում էր հերոսամարտի բովանդակությանը: Չնայած ամփոփությունը՝ ռազմական գործողության կազմակերպիչները սեղծ ժամկետներում կարողացել են առանձին և անկախ գործել յաճկի ստվոր ցուկատներին ու ստորաբաժանումներին նպատակաճիղով միասնական խնդրի կատարմանը, հասել են գործերի կենտրոնացված կառավարման, հաստատել են զինվորական բարձր կարգապահություն: Մա էր ազատագրական պատերազմի ամենամեծ ֆենոմենը: Մա ռազմական տաղանդ էր ու արդեն բացառիկ բամակի հատկանիշ:

1992 թ. ամռանը հակառակորդի կազմակերպած հարձակումը ապացուցեց, որ նա նոր մակարդակի պատերազմ էր վերսկսում, և որ հարկավոր էր արագ վերափոխվել: Յավալորեն մենք մի քանի ամսում կորցրեցինք Շահումյանը, Մարտակերտի շրջանի զգալի մասը, հակառակորդը հաջողությունների հասավ տարբեր ուղղություններ

յում, վիճակը ճակատում օրհասական էր: Մարտական խնդիրներ կարելի էր կատարել միայն կանոնավոր բանակով, ռազմական հստակ մեքենայով: Բանակաշինության գործը այլ մակարդակի պետք էր բարձրացներ: Բանակի կազմավորմանն ուղղված հետագա քայլերն ամմիջակամորեն կապված էին հայկական գործի այս պարտությունների հետ:

Մա զուտ տեխնիկական քայլ էր, այլ ուղեկցվում էր հայեցակարգային մոտեցումների մշակմամբ: Բանակի ղեկավարությունը էր ռազմաքաղաքական քայլերի պլանավորումն իրականացնում էր՝ տարածաշրջանային և աշխարհաքաղաքական զարգացումների առանձնահատկությունները ուսումնասիրելով ու հաշվի առնելով: ԽՍՀՄ-ը փլուզվել էր և հայ ժողովրդի անվտանգության ապահովման գործընթացը իր հրատապությամբ հանդերձ հարկավոր էր կազմակերպել բարձր մակարդակով, հստակ պլանավորմամբ, քաղաքական հեռատես ու հստակ քայլերով: Դրա համար հարկավոր էին համապատասխան մասնագետներ ու աշխատանք: 1992 թ. ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի և զենքերալեյտենանտ Ն. Տեր-Գրիգորյանցի հանձնարարականով ՌԳ-նախագահին կից ռուսաստանյան կառավարման ակադեմիայի ստացիոնար դոկտորանտուրայից հրավիրված ավագ գիտաշխատող Հայկ Քոթանջյանը, Վարշավյան պայմանագրի ու ԽՍՀՄ-ի փլուզման անմիջապես հաջորդած անվտանգային անորոշություններով ու սպառնալիքներով բնորոշվող ժամանակահատվածում, ընդգրկվում ուսումնասիրությունների հիման վրա մշակեց ՀՀ ռազմական քաղաքականության հիմնքները: Վերջինս հանդիսանալով ՀՀ պաշտպանության առաքելության, նպատակների ու աշխարհառազմավարական կողմնորոշումների առաջին պաշտոնական դոկտրինալ փաստաթուղթ, ծառայեց ՀՀ-ում ու ԼՂՀ-ում քանակաշինության ծավալման ուղեկիշերի համակարգային իմաստավորմանն ու Արցախյան պատերազմի ընթացքում դեռ նոր մեկնարկած ԱՊՀ շրջանակներում կոլեկտիվ անվտանգության համակարգում ՀՀ ԶՈՒ շինարարության գործընթացի մեջ ՀՀ ԶՈՒ-ի կառուցման իմտեզմանն ու ՌԳ նորաստեղծ զինված ուժերի հետ ՀՀ ԶՈՒ-ի երկ-

կողմ դաշնակցային համագործակցությանը: Արցախյան պատերազմը նոր իրավիճակ էր ստեղծել ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանի անվտանգության համար: Ուտոի անվտանգության ապահովման և պաշտպանական հստակ քայլեր անելուց առաջ անհրաժեշտ էր նախ գնահատել ու սահմանել անվտանգություն հասկացությունը՝ հաշվի առնելով Հայաստանի շահերը, դրան ուղղված հնարավոր սպառնալիքները, պետական քաղաքականության նպատակները և մատնանշելով այն քայլերը, որոնք անհրաժեշտ են անվտանգություն ապահովելու համար: Այս դեպքում «Անվտանգությունը արտաքին ու ներքին սպառնալիքներից անհատի, հասարակության և կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությունն է: Երկրի անվտանգության հասնելու գործընթացը ենթադրում է այդ ուղղությամբ պետական միասնական քաղաքականության իրականացում, տնտեսական, քաղաքական կազմակերպական և այլ բնույթի միջոցների համակարգ, որոնք համարժեք են մարդու հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի սպառնալիքներին»⁵⁹: Ըստ այդմ՝ Հ. Քոթանջյանը ընդգծել էր, որ անվտանգության ապահովման անհրաժեշտ քաղաքականությունը պետք է իրականացվեր անվտանգության համար հատուկ մշակված ռազմավարությամբ՝ հաշվի առնելով քաղաքական, տնտեսական, ռազմական ու այլ հնարավորությունները: Այդ ռազմավարության քայլերից մեկը հենց էլ ՀՋՈՒ-ի ստեղծումն էր: Նշված հայեցակարգային աշխատության մեջ հեղինակը ներկայացրել է նաև ՀՀ անվտանգության համակարգի՝ ինչպես հետխորհրդային տարածքի կառույցների, այնպես էլ աշխարհի ուժային կենտրոնների հետ համապատասխան ինտեգրացման ուղիները⁶⁰: Հեղինակը ընդգծել է նաև այն խնդիրները, որոնք պետք է արտահայտված լինեին ՀՀ ապագա ռազմական ղոկորինում:

⁵⁹ Котанджян Г. Основы военной политики Республики Армения, Отдел военной политики, МО РА, Ереван, 1992 стр. 8.

⁶⁰ Նշված աշխ. էջ 19-39:

Բանակի ստեղծման գործնական քայլերը ևս չէին ուշանում: ԼՂՀ պաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանի հրամանով ԼՂՀ տարածքը բաժանվեց պաշտպանական վեց գոտիների՝ Եուջիի, Ստեփանակերտի, Հարդուի, Մարտունու, Ասկերանի և Մարտակերտի: Կազմավորվեցին նաև զինվորական շտաբներ: Դրանով զինված ուժերը կենտրոնացված կառավարման հնարավորություն ստացան: Կամավորական ու ինքնապաշտպանական բոլոր ջոկատները, ենթարկվեցին իրենց գտնվելու վայրի մարտական գործողությունների գոտու հրամանատարությանը, ինչը ամկա ուժերի ու սպառնազինության առավել արյունավետ օգտագործման լավագույն տարբերակն էր: Ինքնապաշտպանական ուժերը կամաց-կամաց վերափոխվեցին կանոնավոր զինված ուժերի, արագորեն կանոնավոր բանակի տեսք ստացան⁶¹:

Խորհրդային 7-րդ զվարդիական բանակի գոյքն ու սպառազինությունը 1992 թ. ամռանը՝ Արդբեջանին հատկացվածից մոտ վեց ամիս ուշ, համձնվեց Հայաստանի Հանրապետությանը: «1992 թ. հանրապետության ղեկավարությունը՝ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, ընդունեց Հայաստանի՝ առաջին հերթին նրա զինված ուժերի համար չափազանց կարևոր և հետադեմ որոշում: Մենք բռնեցինք ոչ թե խորհրդային զորքերի սպառազինության բոնի գրավման, այլ այդ սպառազինության Հայաստանի չափաբաժնի կանոնավոր, պայմանագրային հիմունքներով ստացման ուղին: Դրա շնորհիվ էր, որ թեև ռազմական տեխնիկան քանակապես քիչ էր՝ համեմատ նրան, ինչը կարող էր ստացվել բռնագրավման պայագայում, սակայն այն սարքին վիճակում էր, և անցավ ոչ թե անհատներին կամ առանձին ջոկատներին, այլ՝ պետությանը: Դրա շնորհիվ էր, որ ռուսական զորքի մի մասը մնաց Հայաստանում՝ հետագայում վերանցելով ռազմական քաղաքի և դառնալով Հայաստանի անվտանգության կարևոր քաղկացուցիչ մասը»⁶²:

⁶¹ Օհանյան Ա., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 148:

⁶² Սարգսյան Ա., Հայկական բանակ-10, էջ 15:

1992 թ. առաջին գորակոչի ժամանակ երևան եկան երեք տարի գորակոչ չիրականացնելու և դրա պատճառով 7-րդ բանակը Վազգեն Մարգարյանի արտահայտությամբ՝ «չհայկականացնելու» բոլոր վատ հետևանքները: 7-րդ բանակում հայ զինծառայողները քիչ էին: 1992 թ. ապրիլի 22-ին տեղի ունեցավ զինվորական երջման առաջին հանդիսավոր արարողությունը: Այդ օրը հայրենիքին ու ժողովրդին հավատարմորեն ծառայելու երդում տվեցին նորաստեղծ բանակի դեռ փոխգնդապետներ Յուրի Խաչատուրովի, Ալեքսանդր Թրագալույանի և Աշոտ Պետրոսյանի հրամանատարությանը գործող գոյամասերի ու ՀՀ պաշտպանության նախարարության պարետային վաշտի պարտադիր ժամկետային ծառայության երեք զինվորները: Այդ վաշտի հրամանատարը ներկայիս գեներալ-մայոր Մելս Չիլինգարյանն էր: Նրանք և Վլադիմիր Կարապետյանի ղեկավարած սահմանապահ զորի (նախկին Հատուկ զնդի) մյուս զինվորները մեկ ամիս անց՝ մայիսի 28-ին, հանդիսավոր պայմաններում, Հայաստանի Հանրապետության իշխանությունների ներկայությամբ, զինվորական երդում ընդունեցին Երևանում՝ Հանրապետության հրապարակում:

1992 թ. օգոստոսի 8-ին Հայաստան ժամանեց խորհրդային բանակի 56-ամյա գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցն ու միանգամից նշանակվեց ՀՀ ՊՆ տեղակալի և ՋՈւ-ի գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար: Նա ԽՍՀՄ զինված ուժերի կազմում եղել էր Աֆղանստանում տեղաբաշխված խորհրդային 40-րդ բանակի շտաբի պետը ու ԽՍՀՄ զինված ուժերի ցամաքային զորքերի հրամանատարի տեղակալը⁶³: Հայազգի այս զորավորը լավ էր պատկերացնում ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը և մեր ազգի առաջ ծառայած մարտահրավերները: Նրան հանձնարարվեց ռազմական հայեցակարգի մշակումն ու դրա փոխային իրականացումը: «Յամաքային զորքերը, որպես հանրապետության զին-

⁶³ Գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցը Աֆղանստանում իրականացրել էր ԽՍՀՄ-ի պատմության մեջ ամենամասսայական օդային-տային ռազմական գործողությունը Էլեմային պայմաններում:

ված ուժերի հիմնական տեսակ, պլանավորվում էր ծավալել 7-րդ գվարդիական բանակի զորամասերի հիմքի վրա՝ հետագայում նրանց կազմակերպահաստիքային կառուցվածքի և տեղաբաշխման կետերի փոփոխմամբ: Պետք էր ելնել այդ զորքերի պահպանման, ռազմավարչական քաժամանակ հաշվառմամբ, հանրապետության ռազմավարական առումով առավել կարևոր շրջաններում գործասերի տեղաբաշխման համար հանրապետության սոցիալ-կենցաղային պայմանների ստեղծման՝ պետության հնարավորությունները»⁶⁴:

Նկատի առնելով Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքը, մարտական գործողությունների ուղղությունների կարևորությունը, զորամասերի համալրման, տեխնիկայով ու սպանագինությամբ դրանց զինման և նյութատեխնիկական միջոցներով ապահովման անկա հնարավորությունները՝ պետք էր մշակել բանակային բոլոր ստորաբաժանումների, զորամասերի և զորամիավորումների համար սովորականից, դասական խորհրդայինից տարբերվող կառուցվածք: Դա էր դառնալու ազգային բանակի կառուցվածքային և կիրառական հիմքը: Այն, լինելով խորհրդայինի հիման վրա, ամեն դեպքում ազգային էր, և ազգայինի համար առաջին նախադրյալները դասականի պահանջներից համապատասխան միջոցների բացակայությունը և իրավիճակային պահանջներն էին:

Գեներալ-լեյտենանտ Ն. Տեր Գրիգորյանցը արդեն երկու օր անց պատրաստեց զեկույց-հայեցակարգի նախագիծը համապատասխան մշակված ուրվագծով⁶⁵:

Հայեցակարգում մանրամասն նշված էին աշխարհաքաղաքական և տարածաշրջանային վտանգները, հարևան պետությունների

⁶⁴ Հայրությունյան Մ., ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի դերը ռազմական շինարարության գործում, Հայկական բանակ, 2002, հմ. 1-2, էջ 34:

⁶⁵ Նշված հայեցակարգը և ստորև ներկայացվածքի սխեման պատմական գիտությունների դոկտոր Կարապետյանի Մ. ամձնական արխիվից:

սպասագիմուքյունները և այլն: Չնայած դրան՝ զեկույցը ամբարձրում էր ՁՈՒ-ի գուտ պաշտպանողական դոկտրինը, որևէ մեկին որպես հակառակորդ չվերաբերելու հանգամանքը: Մանրամասն ներկայացված էին ազգային ՁՈՒ-ի ստեղծման անհրաժեշտությունը, տարբերակը, սպասագիմուքյունը և այլն: Հայեցակարգը ներառում էր սպասագիմուքյան համապատասխան քանակը, որը համընկնում էր Եվրոպայում սովորական զինված ուժերի (ԵՄՁՈՒ) պահանջների հետ: Գրանում ներառված էին նաև հայկական ՁՈՒ-ի միջազգային համագործակցության խնդիրները և, մասնավորապես, ՌԳ-ի հետ միասնական հրամանատարության հարցերը:

Խնդրո առարկա հայեցակարգը նախատեսում էր ՀՀ ՊՆ ստեղծումը հետևյալ կառուցվածքով. ՊՆ՝ իր ապարատով, ՀՀ ՁՈՒ-ի ԳԸ, որի հիման վրա պետք էր կազմակերպել գլխավոր հրամանատարությունը: ՁՈՒ-ի ստեղծման առաջին փուլում նախատեսվում էր ունենալ նաև ՁՈՒ-ի հրամանատարի պաշտոնը՝ որպես առաջին փոխնախարար, ինչպես նաև նախատեսվում էր ժամանակավոր ունենալ նախարարի օգնական՝ ֆիրայական ջոկատների գծով: Այս գործում զեներալ-լեյտենանտ Ն. Տեր-Գրիգորյանը մեծ դեր խաղաց: Հիմնական ցամաքային զորքերը անհրաժեշտ էր բաժանել հինգ ուղղությունների.

1. Հյուսիսային՝ Մեանի օպերացիոն ուղղություն,
2. Հարավային՝ Արարատյան օպերացիոն ուղղություն,
3. Արևելյան՝ Չանգեզուրյան օպերացիոն ուղղություն,
4. Արևմտյան՝ Շիրակի օպերացիոն ուղղություն,
5. Առանձնահատուկ շրջան՝ Արցախ:


Նշված ուղղություններում նախատեսվում էր ունենալ ինքնապաշտպանության, սահմանապահ զորքեր, մշտական պատրաստության շարժունակ ուժեր՝ բրիգադային կազմով, և գլխավոր հրամանատարության պահեստային ուժեր: Այդ ժամանակ սահմանապահ զորքերը և նախատեսվում էր մտցնել պաշտպանության նախարարության կազմի մեջ նախարարության և զորքերի մանրամասն կառուցվածքը տե՛ս սխեման 1:

Գեներալ-լեյտենանտ Ն. Տեր-Գրիգորյանի կողմից արդեն 1992 թ. օգոստոսի 10-ին ներկայացված այդ նախագիծը սեպտեմբերի 4-ին համաձայնեցվեց վարչապետ Խոսրով Հարությունյանի հետ և ներկայացվեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հաստատմանը⁶⁶:

Նախագիծը հստակորեն բաժանված էր փուլերի: Բանակալինությունը առաջին փուլը, որը ներառում էր միայն 1992 թ., պետք է ավարտվեր ՁՈՒ-ի հստակ կառուցվածքի, հրամանատարությունների և որոշ զորամասերի ու զորատեսակների կազմավորմամբ: Այն նախատեսում էր բանակի հետ կապված բոլոր գործառնությունների և խնդիրների հստակեցում, առավել կարևորների լիարժեք ավարտում: Նախագիծը, բացի մարտահրավերների և դրանց լուծումների չափազանց զրգազետ կազմումից, մեծ տեղ էր հատկացնում զերծշգրիտ զենքերի, շարժունակ զրահայնքների, հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) և դեկավարման ճկուն համակարգերին և այլն: Երկրորդ փուլում, որ վերջնաժամկետը 1995-ին էր, պետք է ավարտվեր զորամիավորումների կազմավորման գործընթացը, կադրերի պատրաստման գործընթացը հստակեցնելը, համալրումն իրականացնել խառը սկզբունքով՝ ավարտին մոտեցնել բանակի ենթակառուցվածքների կառուցումը, բանակի թվաքանակը հասցնել մինչև 30 000-ի, ավարտին հասցնել բանակի օրենսդրական համակարգը: Երրորդ փուլում, որը ներառելու էր 1995-1999 թթ., պետք է լիարժեք ավարտվեր բանակի բացազատումը, զորամասերի ու զորամիավորումների հստակեցումը, կադրերի պատրաստման գործընթացը, մատակարարման, ապահովման, համալրման, ենթակառուցվածքների համակարգերի կազմավորումը: Անհրաժեշտության դեպքում որոշ զորամասերի վերակազմավորում կապված իրավիճակի և պահանջների հետ:

⁶⁶ Նույն տեղում:

Սխեմա 1.



Ռազմաճակատում՝ հակառակորդի ճնշման տակ, դյուրյունը ծանր էր: Ստեղծված իրավիճակը ստիպեց ստեղծել ինքնապաշտպանության ուժերի կենտրոնացված կառավարման միասնական համակարգ: 1992 թ. օգոստոսի 13-ին ԼՂՀ ԳԻՆ նախագահությունը այդ հարցով դիմեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին: Հաջորդ օրը ԼՂՀ ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանն հրամանագիր ստորագրեց Կենտրոնական, Ասկերանի, Հադրութի, Մարտունու, Մարտակերտի ու Շուշիի պաշտպանական շրջաններ (ՊՇ) ստեղծելու մասին⁶⁷: Սա իր ժամանակի համար լավագույն լուծումն էր, որը հետագայում կյանքով ապացուցեց: Մենք դրան դեռ կանդիդատանք: ՊՇ-ների հրամանատարներ ճշմանկվեցին արդեն փորձառու մարտիկներ Սամվել Կարապետյանը, Վիտալի Բալասանյանը, Արթուր Աղաբեկյանը, Մոնթե Մելքոնյանը, Նորայր Դանիելյանը և Վաչագան Իշխանյանը: ՊՇ-ներն ունեին կանոնավոր ՁՈՒ-երին հատուկ կառուցվածք⁶⁸: ՊՇ կոչված այդ ստորաբաժանումները կամ ավելի ճիշտ գործառնախորումները նորարարական էին՝ իրենց ընդհանուր կառուցվածքով, բնույթով ու գործողությունների տրամաբանությամբ և ոչ մի կապ չունեին դասական ռազմական որևէ ստորաբաժանման կամ միավորման հետ: Կազմավորվեցին գումարտակներ, դիվիզիոններ, վաշտեր, մարտկոցներ, յասակներ ու ջոկեր: Այդպես ավարտում տեսքի էր բերվում հայկական կանոնավոր ՁՈՒ-ի ստեղծումը: «Կանոնավոր ու մարտունակ բանակի կազմավորումը թելադրված էր ճյուղական ու մարդկային ռեսուրսներով գերակշռող Ադրբեջանի ագրեսիային արդյունավետորեն դիմակայելու և իր բնօրրանում արցախահայության ապրելու իրավունքը պաշտպանելու անհրաժեշտությամբ»⁶⁹:

⁶⁷ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց. 1, պ. ն. 4, կ. 1, ք. 33-45:
⁶⁸ Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին, 1991-1994, քեկնաժողովական ատենախոսություն, եր., 2001, էջ 86:
⁶⁹ Սարգսյան Ս., Հայկական բանակ-10, էջ 8:

Օգոստոսի 14-ին Արցախում ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեն (ՊՊԿ), որի նախագահ նշանակվեց Ռուբևոտ Քոչարյանը: ՊՊԿ-ին հանձնվեցին ԼՂՀ նախարարների խորհրդի բոլոր զվարձար գործառնությունները և լիազորությունները: «Հանրապետությունում ստեղծված ծայրաստիճան ծանր ռազմաքաղաքական իրադրության ու սոցիալ-տնտեսական կացության բարելավման, պետական իշխանության ու կառավարման բոլոր կառույցների միասնականության ապահովման, հանրապետության պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ստեղծման ճանապարհին պատերազմական իրավիճակում կառավարման նոր մարմնի ստեղծումը կարևոր քայլ էր, որը հնարավորություն տվեց օպերատիվորեն, մասնագիտորեն ու ժողովրդի ճակատագրի նկատմամբ պատասխանատվության զգացումով լուծելու ծառայած հինգ նահապեղները»⁷⁰:

1992 թ. այդ օրերին զինված ուժերում ամեն ինչ արագ էր ընթանում. ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հյամանագիր ստորագրեց գորակույի իրականացման միջոցառումների խտացման մասին: Կառուցվածքային լուրջ փոփոխություններ կատարվեցին ՀՀ պաշտպանության նախարարությունում: Մկսվեց զվարձար շտաբի ձևավորումը: Բազմաթիվ բաժիններ վերակազմավորվեցին վարչությունների:

1992 թ. սեպտեմբերին ՀՀ պաշտպանության նոր նախարար Վազգեն Մանուկյանը ստորագրեց «ՀՀ պաշտպանության նախարարության գործառնությունների և ստորաբաժանումների ծավալմանը նախապատրաստվելու մասին» հրամանը: ՋՌ-ի ԳԸ-ն սկսեց զինված ուժերի տեսակների և խառուկ զորքերի, գործառնությունների և ստորաբաժանումների հաստիքների որոշումը, կազմեց ՋՌ-ի ծավալման ընդհանուր պլան: Կազմավորվեցին ՊՆ և ՋՌ-ի զվարձար շտաբի և գո-

⁷⁰ Սարգսյան Ս., Հայկական քանակ-10, էջ 15-16:

լիանների կապի հանգույցները⁷¹: Ստեղծվեց նաև ԳԸ-ի կապի այլընտրանքային հանգույցը, որն ապահովում էր գաղտնի և ոչ գաղտնի քրթակցության ու զինվորական փոստի շրջօրյա աշխատանքը: Թիրախները դեռ չկազմավորված՝ դրանց անձնակազմները արդեն ներքախոլով մասնակցում էին մարտական գործողություններին՝ իրականացնելով կապի ապահովումը⁷²: ՀՀ պաշտպանության նախարարի՝ 1992 թ. սեպտեմբերի 7-ի հրամանով ստեղծվեց ՊՆ սպառազինության վարչությունը: Բանակի տեխնիկական ապահովման, սպառազինության և ռազմական տեխնիկայի, զինամթերքի ու ռազմատեխնիկական ունեցվածքի ամբողջական հաշվառման, տեխնիկական սպասարկման, վերականգնման, արդիականացման, քարտեզագրման, պաշարների կուտակման և պահպանման գործընթացները իրականացնում էր այդ վարչությունը⁷³: Արագորեն կազմավորվում

⁷¹ Անգամ ՀՀ պաշտպանության նախարարն ու Գլխավոր Շտաբի պետը գործառնությունների հրամանատարների հետ խոսում էին սովորական միջադարձային կապով:

⁷² Պատերազմի տարիներին կապի զորքերի կայացման գործում մեծ ներդրում ունեցան զնդապետներ Վաղիմիր Սկրտչյանը, Անատոլի Բալասարյանը, Լևոն Դոխտյանը, Գարեգին Մահակյանը, Ֆերդինանդ Մորոնոկյանը, Վազգեն Աղաջանյանը, կյանքից անժամանակ հետագած գեներալ-մայոր Արթուր Փափազյանը, պահեստի փոխզնդապետ Արմեն Ազարյանը և այլք: ԼՂՀ ԻՊՌ-ի նախագահի՝ 1992 թ. սեպտեմբերի 9-ի հրամանով, կապի ծառայության պետ նշանակվեց Արթուր Փափազյանը, նորակազմ կապի ստանձին վաշտի հրամանատար՝ այժմ զնդապետ Դավիթ Հակոբյանը:

⁷³ Վարչության առաջին պետը գեղապետ Ռուբեն Մայրանցն էր: 1993-1994 թթ. վարչությունը ղեկավարեցին զնդապետ Ա. Ջախարեկյանը և ներկայիս պահեստի գեներալ-լեյտենանտ, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ալիկ Միրզաբեկյանը: 1992 թ. հոկտեմբերին կազմավորվեց ավտոնորոգման գումարտակը՝ Նիկոլայ Հակոբյանի ղեկավարությամբ, նրան փոխարինեցին Մերոթա Ասատրյանն ու ներկայիս գեներալ-մայոր, ՀՀ ՋՌ-ի սպառազինության վարչության պետ Մելիկ Չիլինգարյանը: Դեկտեմբերին կազմավորվեց հրթիռահրետամային սպանազինության պահպանման ու նորոգման բազան, որի առաջին հրամանատարն Աշոտ Միրսայելյանն էր:

էին հրետանային զորամասերը, որոնց կարիքը ճակատում շատ էր զգացվում: Ներկայիս գեներալ-լեյտենանտներ Միքայել Գրիգորյանը, Էներիկ Ապրիանովը, գնդապետներ Վլադիմիր Մխիթարյանը և Ալբերտ Դավթրյանը, մայր Գևորգ Ջիլավյանը նշանակվեցին այդ

1991 թ. Արցախի և ՀՀ ազգային հերոս Յուրա Պողոսյանի դեկավորությամբ Ստեփանակերտի կոնգենատորների զորամասում հիմնադրվեց հրաձգային զենքերի նորոգման ստորաբաժանումը:

Տրաստենինիկայի նորոգման ստորաբաժանումը ստեղծվեց 1992 թ. փետրվարին, Ստեփանակերտի տրանսպորտի և մեքենայացման մասնագիտացված վարչության հիմքի վրա: Անտոնոփիլային տեխնիկայի նորոգման վաշտը դեկավորում էր Վալերի Պողոսյանը: 1992 թ. գյուղ-մեքենաների նորոգման գործարանի հիմքի վրա վերստին ստեղծված ծանր զրահատեխնիկայի նորոգման ստորաբաժանումը դեկավորում էր Խանգար Գրիգորյանը:

Մարտական դիրքերին մոտ առաջին կետը բացագատվեց 1992 թ. մարտին Զարվաճառի շրջանի ազատագրման նախօրեին: Բոլոր պատերազմներում մնամ վերանորոգման հնարավորությունները որչա՜ն են: Շատ բանակներ, ունենալով մեծաքանակ տեխնիկա, տանուլ են տվել մարտերում միայն այն պատճառով, որ վերանորոգում սխալ են կազմակերպել: Մա նաև ազգային հոգեբանության դրսևորում է, երբ միջոցները սակավ են ու ամեն մի տեխնիկան մեծ նշանակություն ունի, ապա պարտավոր ես նորոգման աշխատանքներին մեծ տեղ հատկացնել անգամ մարտական պայմաններում: Հայկական բանակը տանկերը հիմնականում վերցնում էր հալածակորոշից: Այդ պատճառով էլ ստիպված էր մեծ ուշադրություն դարձնել արագ և արդյունավետ նորոգման գործընթացին: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական բանակը ես, ունենալով ավելի սակավ միջոցներ, ավելի շատ էր տեղ հատկացնում դաշտային պայմաններում արագ և արդյունավետ նորոգմանը (Голышко И., Танки оживали вновь, М., 1977, стр. 152-167): Աշնան սկզբին հիմնադրվեց Ինքնապաշտպանության ուժերի սպառազինության ծառայությունը, որը երկար տարիներ դեկավարեց գնդապետ Վաչեղավ Հյուսումյանը:

1988 թ. մինչև 1992 թ. Հայաստանի արտադրական ձեռնարկությունների և անհատ, երբեմն նվիրյալ անձանց ուժերով լայնածավալ աշխատանքներ իրականացվեցին զենքի ու զինամթերքի մշակման և գործարանային եղանակով արտադրության ասպարեզներում: Պաշտպանության նախարարության սպառազինության վարչության կազմում ստեղծված ռազմասարդյունաբերության բաժինն իրականացնում էր մեծ աշխատանք: Այն 1993 թ. հուլիսին վերակազմավորվեց վարչության:

գործառնների հրամանատարներ: Հրետանավորները շուտով մարտական փաշում ուղի անցան Գորիսում, Կապանում, Լաչինում և այլուր: Պահեստագործի սպաների զորակոչը որոշակիորեն լրացրեց հրետանավորների պակասը: Հրետանային առաջին մարտկոցները, կիրառվելով մարտական գործողություններում, կարևոր դեր խաղացին:

1992 թ. ամռանը Քրիստափոր Իվանյանը Ստեփանակերտում սկսեց հակատանկային դիվիզիոնի կազմավորումը⁷⁴:

ՊՇ-ներում նշանակվեցին հրետանային ծառայության պետեր: Երեսը էին՝ արդեն բավականին փորձառու հրետանավորներ Սլավիկ Բաշիշյանը, Մարտունիում՝ Ֆելիքս Պողոսյանը, Ասկերանում՝ Էմիրջան Ասլանյանը, Մարտակերտում՝ Գառնիկ Խարայեյանը, Կենտրոնական պաշտպանական շրջանում՝ ներկայիս ՀՀ ՊՆ շտաբի պետի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանը, իսկ ավելի ուշ ձևավորված Մարտունու և Շուշիի պաշտպանական շրջաններում՝ Աբսեմ Հովսեփյանն ու Արտակ Զարգարյանը:

Հրթրատիտանային զորքերի կայացման գործում բացառիկ ավանդ ունեցան Հայաստան վերադարձած գնդապետ Վլադիմիր Հայրապետյանը (այժմ՝ պահեստի գեներալ-մայոր), գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը, Պաշտպանության բանակի հրետանու նախկին պետեր, պահեստի գեներալ-մայորներ Գեորգի Գապարյանը, Վլադիկ Խաչատրյանը, ներկայիս ՊՇ շտաբի պետ, գեներալ-մայոր Լևոն Մնացականյանը, փորձառու հրետանավոր սպա, ներկայիս գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովը, գեներալ-լեյտենանտներ Էներիկ Ապրիանովը, Միքայել Գրիգորյանը, Մարտին Կարապետյանը, Լեոնիդ Մարտիրոսովը, գնդապետներ Առոն Տատինյանը, Կամո Սիմոնյանը, Կարապետ Հովհաննիսյանը, Վլադիմիր Մխիթարյանը, Ռայմոնդ Մազուրյանը, Հայկ Մամուկյանը, Ռազմիկ Գարեգինյանը, Երվանդ Հարաբյանը, Կամո Մամուկյանը,

⁷⁴ Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 85-93:

Վազգեն Դավադյանը, Ներսես Մուրադյանը, Լևոն Միքայելյանը, Մարատ Դարիբյանը, Բաբկեն Աբրահամյանը, ներկայիս ՀՀ ՋՌԻ հրքիտային գորքերի և հրետանու պետ, զեներալ-մայոր Ալբերտ Մարդոյանը, Արտակ Գալստյանը և երիտասարդ ուրիշ սպաներ: Նրանց հետ էին կամավորականներ, ներկայիս զինապետներ Գաբուն Արցախյանը, Վալերի Կարապետյանը, Ալբերտ Յաղմուրյանը, Ֆելիքս Պողոսյանը, Էմիլ Ասլանյանը, Սամվել Սաֆարյանը և Սուրեն Անտոնյանը:

Այդ նորաստեղծ բանակին կամավորագրված կադրային սպաների զգալի մասը հրետանավորներ էին. խորհրդային բանակում հրետանավոր հայ սպաները միշտ շատ են եղել: Նրանցից շատերը սկսեցին իրականացնել համագորային խնդիրներ:

1992 թ. հոկտեմբերին արդեն ռազմաճակատում գործում էր հզոր հրետանի: Մարտում վիրավորվեց գորքերի հրամանատար Վ. Հայրապետյանը: Հոկտեմբերի 19-ին առաջին անգամ իրականացվեց դասական հրետանային նախապատրաստություն: Լաչինի միջանցքի լայնությունը հասավ 25-26 կմ, որն առանձին տեղերում նեղացել էր մինչև 3-4 կմ⁷⁵: Հրետանու օրը մեր բանակում մշվում է հենց հոկտեմբերի 19-ին:

1992 թ. աշմանը Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի զինվորական ամբիոնում հրետանավոր սպաների համար կազմակերպվեցին դասընթացներ: Արցախում հրետանու ստեղծման և կիրառման գործում մեծ դեր ունեցան Ռազմիկ Մեքումյանը և Մամվել Սաֆարյանը: Վերջինս նախ Արցախի հրետանու շտաբի պետն էր, հետո դարձավ զնդի հրամանատար և ցավալիորեն զոհվեց Քարվաճառում:

Սեպտեմբերին ստեղծվեց այդ պահին ՀՀ ՊՆ համակարգում գտնվող սահմանապահ գորքերի վարչությունը: Մահմանապահ գոր-

քերի հրամանատարը ներկայիս ՀՀ ՋՌԻ ԳԸ-ի պետ, զեներալ-զնդապետ Յուրի Խաչատուրովն էր:

1992 թ. սեպտեմբերի 3-ին ստեղծվեց ՀՀ ՋՌԻ ԳԸ-ի տեղագրական ծառայությունը, որը հետո վերակազմավորվեց ռազմատեղագրական բաժնի: Միաժամանակ իրմնադրվեց նաև համապատասխան գորամասը: Բաժինը ղեկավարում էր պահեստի զնդապետ Ալեքսեյ Ազիզյանը: Նոյեմբերին ձեռքով զնդարվեցին ու տպագրվեցին 1:50.000 մասշտաբի տեղագրական առաջին քարտեզները, որոնք սկսյալի ամերածեշտ էին ռազմաճակատի համար: Պատրաստվեց տեղասքի տառչին մանրակերտը, որն օգտագործվեց մարդասիրական միջանցքի սահմանների ընդարձակման գործողության ժամանակ:

1992 թ. հունիս-հուլիս ամիսներին գորակոչվեցին ու դասընթացներ անցան ավելի քան 2.000 զինվորական մասնագետներ՝ տանկիստներ, հետևակի մարտական մեքենայի մեխանիկ-վարորդներ ու իրամանատարներ, հրետանավորներ, կապավորներ, զնդագործներ, նռնակաձիգներ, հակաօդային պաշտպանության գորքերի և այլ մասնագետներ: Սեպտեմբերի 19-ին ՀՀ պաշտպանության մախարրի հրամանով ստեղծվեց ՀՀ ՋՌԻ մարտական պատրաստության վարչությունը, որը մեծ աշխատանք կատարեց⁷⁶: Երկար ժամանակ վարչությունը ղեկավարում էր ներկայումս պահեստի զեներալ-լեյտենանտ Մուրազ Մարգսյանը:

Ձրաժամայերի կազմավորման հետ մեկտեղ սկսվեցին դրանց բոլոր օղակների հրամանատարների հավաքները: Բանակին հարկավոր էին հրամանատարական կադրեր: 1992 թ. օգոստոսի 22-ին ստեղծվեց ուսումնական գորամասը: Վերջինս մինչև օրս պատրաստել է 25.000 կրտսեր հրամանատարներ ու մասնագետներ⁷⁷:

Նույն ժամանակ ստեղծվեց ՋՌԻ ԳԸ-ի 8-րդ բաժինը, որն ապահովեց ՋՌԻ վարչությունների գործունեության գաղտնիությունը:

⁷⁵ Օհանյան Ա., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 106:

⁷⁶ զեներալ-լեյտենանտ Մուրազ Մարգսյանի անձնական արխիվ:

⁷⁷ Նույն տեղում:

Նոյեմբերի 30-ին ստորագրվեց 5-րդ առանձին մտտերածագ-
յին կամավորական բրիգադի կազմավորման մասին որոշում, որը
մարտական փառապանոն ուղի անցավ Արցախի հյուսիսից հարավ և
դրեց մարտական գործողությունների վերջակետը⁷⁶:

Արցախում ժիրայր Մեֆիլյանի ու Կարեն Բաբայանի հրամա-
նատարությանը ձևավորվեցին մաս գործող առանձին մտտերածագ-
յին գումարտակները, որոնց վիճակված էր ծանր, դժվարին ու հերո-
սական ուղի անցնել: Մինչև ՊՇ-ների կազմավորումը Արցախում
հիմնականում գործում էին առանձին վաշտերը:

ՊՇ-ների կազմում արդեն կային տանկային ստորաբաժա-
նումներ, որոնք զինված էին հիմնականում հակատակորդից խված
բազմաթիվ տանկերով: Արցախում դրանք ղեկավարում էին Կամո
Պողոսյանը, հետո՝ Գագիկ Հակոբյանը, ով զոհվեց 1994 թ. մարտի 3-
ին, ինչպես նաև՝ այժմ գեներալ-մայոր Վարդան Բալայանը, Սյուս-
թար Ավարյանը և Վոլոդյա Սարգսյանը⁷⁹:

Գեներալ-գնդապետ Մ. Հարությունյանի բնորոշմամբ՝ բանա-
կաշիռության ասպարեզում «1992 թ. տրամաբանական ավարտը
դարձավ ՀՀ պաշտպանության մախարադի «ՀՀ զինված ուժերի 1993
թ. պատրաստության մասին» հրամանը: Դա ընդհանրական առա-
ջին հրամանն էր, որում որպես գլխավոր խնդիր՝ սահմանվում էր
միավորումների և զորամասերի պահպանումը պատրաստության
այնպիսի վիճակում, որով կապահովվեր ՀՀ սահմանների հուսալի
պաշտպանությունն արևաքին ուսնձգություններից: Այս գլխավոր
խնդրից ելնելով՝ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբը սկսեց հիմնա-
կան պլանավորող փաստաթղթերի մշակումը ինչպես ընթացիկ տար-
վա, այնպես էլ մոտակա ապագայի համար՝ հիմնվելով տարա-
ձաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրադրության և շարունակ-

⁷⁶ Հենց այս գործառնավորման ուժերն էին հաղթահարում ճանապարհը
ղեպի Գյուլիստան, երբ Ալիկի խնդրանքով կնքվեց զինադադարը:

⁷⁹ Գեներալներ Օհանյանի Ս., Հակոբյանի Մ., Բալայանի Վ. հետ ունեցած
զրույցների տպագրություն:

վող մարտական գործողությունների վերլուծության վրա»⁸⁰: Միաժա-
մանակ սկսվեց նաև ԶՈՒ-ի հրամանատարական կազմի պլանային
ուսուցումը⁸¹:

ՀՀ նախագահը 1993 թ. հոկտեմբերի 4-ին ստորագրեց 18 տա-
րին լրացած անձանց և 1-ին խմբի պահեստագործի սպաների գորա-
կոչի մասին հրամանագիրը⁸²: Դա հեթքական օրինասական քայլն էր,
1993 թ. աշնանային զորակոչը կատարվեց 116 տոկոսով, ինչը զար-
մանալի էր այդ ժամանակ: 1993 թ. 1.000-ից ավելի դասալիքներ ի-
րենց կամքով վերադարձան ծառայության⁸³: Նույն ժամանակ ստո-
րագրվեց նաև «Ջինապարտության մասին» ՀՀ օրենքում փոփո-
խություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Գլխավոր շտաբի նոր պետ նշանակվեց գեներալ-եյտեմանտ
Հրաչ Անդրեասյանը: Խորհրդային բանակում նա եղել էր բանակի
հրամանատար և Հյուսիսկովկասյան զինվորական օկրուգի շտաբի

⁸⁰ Հարությունյան Մ., ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի դերը ռազմական
շինարարության գործում, էջ 38:

⁸¹ Բանակն այդ տարիներին ապրում էր երկու կյանքով: Մի կողմից
ընթանում էր բանակային կառուցվածքի ձևավորումը, նրա իրավական
անդազրոնը, իսկ մյուս կողմից նրաստեղծ բանակային կազմավորում-
ները պատերազմի մեջ էին Արցախյան հետ:

Լ.Ղ. Հինգնապաշտպանության ուժերի բանակային կառույցների վերակազ-
մակերպման գործընթացը, որը սկսվել էր 1992 թ. օգոստոսի 14-ին, 1993 թ.
ուշ աշնանը մոտեցավ ավարտին: Ելնելով այդ ամենից՝ Լ.Ղ. Պ.Պ.Կ
նախագահը 1993 թ. նոյեմբերի 10-ին հրաման ստորագրեց Լ.Ղ. Ի.Պ.ՈՒ-ն
Լ.Ղ. Պաշտպանության բանակի (ՊԲ) վերակազմավորելու մասին:

1993 թ. նոյեմբերին ուսումնական գումարտակը վերակազմավորվեց գնդի:
Մտեղծվեց այժմյան Բաղրամյան ուսումնական զորավարժարանը: Այնտեղ
մարտական պատրաստության վարչության սպաների անմիջական ղեկա-
վարությամբ կազմակերպվել և անց են կացվել հայ-ռուսական համատեղ,
ինչպես նաև ցուցադրական մարտական հրաձգությամբ գնդային ու
գումարտակային ավելի քան 75 մարտավարական զորավարժություն: Տես՝
Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 175:

⁸² ՀՀ ԳԽՏ 1993/19, ՆՀ-259, <http://www.arlis.am/>

⁸³ Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 110-128:

պետ: Նա, անընդհատ գտնվելով մարտական գործողությունների գոտում, հաճախ անձամբ էր ղեկավարում դրանք³⁴:

Նույն ժամանակ ներկայիս գեներալ-լեյտենանտներ Վալերի Գրիգորյանի, Միքայել Գրիգորյանի, գնդապետներ Վազգեն Ղափալյանի ու Հովսեփ Հովսեփյանի հրամանատարությամբ կազմավորվել էին նոր զորամասեր, որոնք պաշտպանում էին Սյունիքը, Տավուշն ու Վարդենիսը:

1993-1994 թթ. մարտական ծանր իրավիճակում բանակաշինության գործը շարունակվում էր: 1994 թ. փետրվարի 1-ին կազմավորվեց ՊԲ ուսումնական զորամասը: Այդ գործում անուրանալի է գեներալ-լեյտենանտ Է. Իվանյանի դերը: Այսպիսով՝ կազմակերպչակառուցվածքային նմանատիպ միջոցառումները հանգեցրին նրան, որ դեռ պատերազմի ընթացքի մեջ հայոց բանակը ժամ առ ժամ աճում ու զորեղանում էր, ինստիտուցիոնալ կերպով կայանում: Միաժամանակ պատերազմ ու բանակաշինություն: Բանակաշինության գործը և մարտական գործողությունները լրացնում էին մյուսյանց, և եթե որևէ մի գործընթաց թերանում էր, ապա փոխլրացվում էր մյուսով: Մարտը բանակաշինության ճիշտ քայլերի լավագույն ստուգայցն էր:

1. 3. Զորատեսակների և բաժինների կազմավորումը

Մարտական գործողություններին զուգահեռ՝ շարունակվում էր ինչպես զորատեսակների, այնպես էլ կենտրոնական ենթակայության վարչությունների ու բաժինների կազմավորման գործընթացը:

Կազմզորահավաքային վարչություն: Բանակի կազմավորման կարևորագույն գործընթացներից է բանակի հստակ հաստիքացուցակի և կազմի հաստատումը, ինչը իրականացնում է կազմզորահավաքային վարչությունը: Նման պայմաններում, երբ մի կողմից պատերազմ է, մյուս կողմից կարողելի խնդիր կա, ավելի քան դժվար է հստակեցնել այդ ցուցակները և ապահովել դրանց համալրումը: Բանակի կազմզորահավաքային վարչությունը այդ դժվարին գործը փայլուն կատարեց բանակի հիմնադրման առաջին իսկ օրվանից: Նորաստեղծ վարչությունը ղեկավարում էր խորհրդային բանակի փորձառու սպա, գեներալ-մայոր Լևոն Կարապետյանը, ով հանրապետության զինույնի հետ այդ աշխատանքները հասցրեց փայլուն ավարտի: Հատուկ ուզում ենք նշել, որ հստակեցման գործը ևս ժամանակ առ ժամանակ փոխվում էր, քանի որ պատերազմական իրավիճակում նորաստեղծ բանակը չի կարող ունենալ քիչ թե շատ ստանդարտ ու անփոփոխ հաստիքացուցակ:

ՀՀ պաշտպանության մախարարության առաջին ստորաբաժանումներից էր կարգերի վարչությունը, որը ղեկավարում էր գնդապետ Արսեն Մազառզյանը: Սկզբնական շրջանում վարչության անձնակազմն անիրաժեշտ կարգային աշխատանքները կատարում էր զորամասերի շարային մասերի միջոցով: Կազմվեցին ԶԼՌ-ում կարգային աշխատանքների կանոնակարգը սահմանող հիմնական նորմատիվ փաստաթղթերը: 1992 թ. մարտի 30-ին հաստատվեցին «ՀՀ զինված ուժերի սպայական կազմի ծառայության անցման մասին կանոնադրությունը», «զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայության անցման կանոնադրությունը», ՀՀ կառավարության 1993 թ. մայիսի 26-ի՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների նշանակման կարգի, նրանց

³⁴ Նոյեմբերի 4-ին, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի հրամանով, խստիվ արգելվեց մինչզորակոչային տարիքի պատանիների ընդգրկումը զինված ուժերում: Բոլոր նորակոչիկները սկզբում պետք է նախնական զինվորական պատրաստություն ստանան ուսումնական զորամասերում: Նոյեմբերի 10-ին, պետական պաշտպանության կոմիտեի (ՊԿԿ) նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրամանագրով, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը վերակազմավորվեցին Պաշտպանության բանակի: ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՊԿԿ-ի նախագահի 1993 թ., նոյեմբերի 10-ի որոշում N323:

ստեղծված աստիճանային և արտոնությունների մասին» որոշումը և հիմնարար այլ փաստաթղթեր⁸⁵:

Օրդուծի ստեղծումը և քաղաքացիայի ներգրավումը պատերազմին: 1989 թ. օգոստոսին աղբյուրացիները հասկանալով, որ օղային ճանապարհը չափազանց կարևոր է հայերի համար, քանդեցին իրենց հսկողության տակ գտնվող Մտեփանակերտի օդանավակայանի թռիչքուղին: Մարզն արտաքին աշխարհին կապող միակ միջոցը Հայաստանի Հանրապետությունից իրականացվող ուղղաթիռային թռիչքները դարձան: Օրդուծի ստեղծման գործընթացը աչքի ընկավ երկու շատ կարևոր առանձնահատկությամբ.

1. Հաղորդակցություն ապահովելու, օգնելու, բեռներ տեղափոխելու, նույնիսկ մարտական առաջադրանքներ կատարելու համար գլխավոր ծանրաբեռնվածությունը սկսեց կրել քաղաքացիային:

2. Կարևոր խնդիր դարձավ ավիացիոն մասնագետների հավաքագրումը:

Հայքաղաքացիան՝ 4-5 ուղղաթիռներով, հսկայական աշխատանք էր կատարում: Հակառակորդի կրակի գոտում թռչելով՝ գերբեռնված ուղղաթիռներով Արցախ էին տեղափոխում կամավորների, զինամթերք, սնունդ, վատելիք ու դեղորայք, իսկ այնտեղից բերում էին վիրավոր ազատամարտիկներին, հիվանդ բնակիչներին և զոհված ազատամարտիկների աճյունները:

1992 թ. մայիսի 12-ին նորաստեղծ ավիացիայի վարչությունը հայտարարեց հավաք: Ներկայացավ շուրջ 25 երիտասարդ մասնագետ⁸⁶: Զուգահեռաբար, Գանիել Բալայանի ղեկավարությամբ Արզնիում ԴՕՍԱԱՖԻ հիմքի վրա հիմնվեց ավիացիայի ուսումնական կենտրոնը:

⁸⁵ Սեդրակյան Ա. Ա., Ազգային անվտանգության իրավական ապահովման հեռանկարները Հայաստանի երրորդ Հանրապետությունում, Հայկական քանակ, 2011, 1-2 (67-68), էջ 152-161:

⁸⁶ Գեներալ-մայոր Մուրադյանի Ա., փոխգնդապետներ Սարգսյանի Ա. և Մերկույանի Ա. հետ ունեցած առանձնախոյցների սղագրությունից:

Հայաստանում քաղաքացիայի լավ զարգացվածության շնորհիվ՝ ուղրտի կադրերի խնդիր գրեթե չկար: Գործը բարդ էր ուսգնաօղային ոլորտում: Քաղաքացիական ավիացիայի՝ «Էրեբունի» օդանավակայանի օդաչուների մի մասը Արցախ էր թռչում անվտանգության աշխատակիցների հսկողության, Մոսկվայի արգելքների պայմաններում և հակառակորդի դարանակալ գնդակների տակ: Մինչ 1988 թ. դեկտեմբեր թռիչքներն իրականացնում էին հիմնականում «Էրեբունի»-ի չորս-հինգ «Մե-8Թ» ուղղաթիռները, տասը-տասներկու փոքրիկ «Ան-2» և մի քանի «ԿԻ-40» ինքնաթիռները: 1988 թ. մայիսից «Ան-2» ինքնաթիռները հաճախ թռչում էին նաև Գորիսից ու Սիսիանից: «Մե-8Թ» ուղղաթիռները և «ԿԻ-40» ինքնաթիռները յուրաքանչյուրը հասցնում էին օրական մի քանի թռիչք կատարել (ընդհանուրը՝ օրական մի քանի տասնյակ թռիչք՝ «Էրեբունի» կամ այլ օդանավակայաններից): Այդ լարված աշխատանքը կազմակերպելը հեշտ գործ չէր: Եղել է դեպք, երբ 25-30 տեղանոց «ԿԻ-40» ինքնաթիռը Մտեփանակերտի օդանավակայանից վերադարձել է 86 ուղևորով: Հայկական կողմի առաջին ուղղաթիռի կորուստը եղել է հենց այդ պատճառով: 1988 թ. նոյեմբերին իրավիճակը լարված էր նաև Կիրովաբադում, հայկական թաղամասի բնակչությանը սպառնում էր կոտորածը: Արցին տեղի էին ունեցել ընդհարումներ: Հարկավոր էր դեղորայք հասցնել և իրավիճակը ճշտել: Հայ օդաչուները, ուղղաթիռով գազամուղի ստուգման պատրվակով, մի քանի րոպեով վայրէջք են կատարում քաղաքի հայկական թաղամասի հայկական եկեղեցու բակում: Օդանավակայանի կարգավարը թույլ չի տալիս հայ օդաչուներին թռիչք կատարել, սակայն օդաչուները, վերցնելով մի քանի հայ վիրավորի, օդ են բարձրանում: Նրանց թռիչքը փորձում են կանխել մարտական ուղղաթիռներով: Սակայն հայ փորձառու օդաչուները, շնորհիվ բարձր մասնագիտական որակավորման, դժվարությամբ, բայց խուսափում են մարտական ուղղաթիռներից⁸⁷: 1989 թ.

⁸⁷ Չիրովսկյան Ա., Հերոսամարտի պողպատե թևերը, եր., 2008, էջ 35-36:

նոյեմբերի 5-ին տեխնիկական անսարքության պատճառով երևակից նոր օդ բարձրացած «ԱՌ-2» ինքնաթիռը վթարային վայրէջք կատարեց Արտաշատի Մխչյան գյուղի մոտակայքում: Ինչպես միշտ, ինքնաթիռը բեռնված էր այլուրի պարկերով, որի մեջ գեներ կար: 1990 թ. ապրիլին Մարտակերտի բնակիչները դաշտում էին սարքավորել թռիչքադաշտ «ԱՌ-2»-ի համար: Նման քան Արցախում երբեմն-երբեմն փորձում էին անել, որպեսզի ինքնաթիռները ОМОН (ռուսերեն՝ отряд милиции особого назначения)-ի հսկողությունից դուրս լինեին: Սակայն մայիսին աղբրեջանցիները քանդեցին այդ թռիչքադաշտը: 1990 թ. հոկտեմբերի 17-ից Արցախի միակ օդանավակայանը գտնվում էր աղբրեջանական ОМОН-ի հսկողության տակ⁸⁸, որի պատճառով հայկական կողմը հրաժարվում է «ԿԿ-40» ինքնաթիռների կիրառումից: Անգամ ուղղաթիռների թռիչքները շատ դժվար էր իրականացնել, քանի որ օդանավակայանում հսկողությունը ոչ թե խիստ էր, այլ՝ ստորացուցիչ: 1991 թ. դեկտեմբերի վերջին ОМОН-ականները, ծեծի ենթարկելով հայ օդաչուներին, առգրավել էին մի ուղղաթիռ: Այդ պատճառով հայ օդաչուները վայրէջք էին կատարում վաղորոք պայմանավորված և անվտանգ տեղերում: 1991 թ. վերջերին նաև հակառակորդի ՀՕՊ միջոցների ազդեցության աճի պատճառով հայերը «ԱՌ-2»-ից լիովին հրաժարվեցին: Նման ինքնաթիռը հեշտությամբ կիտցվեր շատ միջոցներով: «ԱՌ-8» ուղղաթիռները և «ԿԿ-40» ինքնաթիռները ևս օրական մի քանի թռիչք էին կատարում (մինչև 20-25 թռիչք/օր): 1987 թ. ուղղաթիռները կատարել են 2500 ժամ գրանցված թռիչք: Գրանցվածը շեշտում ենք, քանի որ լինում էին նաև ապօրինի՝ չգրանցված, թռիչքներ, որոնք առավել վտանգավոր էին: Իրավիճակի սրճանը գուգահեռ՝ ավելանում էր նաև թռիչքների քանակը: 1989 թ. Արցախից կրակի ու ուժեղացող թմրամիջոցների քանակը: 1989 թ. Արցախից կրակի ու ուժեղացող թմրամիջոցների քանակը:

⁸⁸ Հարսբյան Ա., Ղարաբաղյան պատերազմ, էջ 30:

մաններում դուրս է բերվել ավելի քան 5000 ծեռ, երկխա, կին ու վիլավոր, իսկ 1990 թ. արդեն կատարվել է 5200 ժամ մնան թռիչք⁸⁹:

Տասից էլ քիչ «ՄՌ-8Т» ուղղաթիռները քանակապես և որակապես ի վիճակի չէին դիմանալու 1988-1990 թթ. թռիչքների ինտենսիվությանը: Օդանավակայանի ղեկավարությունը դիմում է կատարարությանը, և մեծ դժվարություններով Ռուսաստանի Գաշնությունից գնվում է հինգ նոր «ՄՌ-8 МТВ-1» ուղղաթիռ: Նոր մեքենաները 3-4 տոննայի փոխարեն՝ կարող էին 5-5.5 տոննա բեռ կրել: Օդաչուները շատ արագ յուրացրին նոր ուղղաթիռները: Նախկին խորհրդային ավիաբազայում ծառայող հայերի օգնությամբ հատուկ վարժանքներ էին անցնում ուղղաթիռներից գեների կիրառման և հակառակորդի գեներալի միջոցներից պաշտպանվելու համար⁹⁰: Խոջալուի կրակակետի լեցնան համար հարկավոր էին գեների, զինամթերքի, վառելանյութի և այլ պիտույքների անհրաժեշտ պաշարներ: Ուղղաթիռների անձնակազմերը գիտակցում էին Արցախի միակ օդանավակայանի ազատագրման կարևորությունը: 1992 թ. փետրվարին՝ Խոջալուի կրակակետի լեցումից հետո, օդանավակայանն անցավ ինքնապաշտպանական ուժերի հսկողության տակ, և վերսկսվեցին «ԿԿ-40» ինքնաթիռների թռիչքները: Գրանք կապված էին բավական մեծ դժվարությունների և վտանգների հետ: Մասնավորապես, հակառակորդի զենիթային սպառազինության հակազդեցությունից խուսափելու համար ինքնաթիռները Ստեփանակերտին մոտենում էին 5000 մ բարձրության վրա, իսկ հետո սկսում փոքր շառավիղ ունեցող զսպանակավոր պատյուններով իջնել: Նույն ձևով վեր էին բարձրանում և ուղղվում Երևան: Հնարքը դյուրին չէր, իսկ այս հատուկ մարտավարությանը տիրապետում էին ոչ բոլոր օդաչուները: Եռչին ազատագրելու գործողության մախապատրաստման ընթացքում կատարվում էր օրական մինչև 15 թռիչք: Մարտի 12-ից մինչև մայիսի 5-ը

⁸⁹ Գեղամյան Գ., Սահակյան Ռ., Դրվագներ հայ օդաչուների Արցախում մղած հերոսական պայքարից, Եր., 2006, էջ 7:

⁹⁰ Նույն տեղում, էջ 30-31:

ինքնաբերական կատարել են 690-ից ավելի թռիչք: Արցախ է տեղափոխվել ավելի քան 2700 տոննա բեռ⁹¹: Ուղղաթիռների գործը, սակայն, չէր սահմանափակվում միայն բեռներ ու վերավորներ տեղափոխելով: Շուշիի ազատագրման գործողությունը մշակելիս ուղղաթիռների միջոցով նաև հետախուզություն կատարվեց: 1992 թ. հուլիսին՝ Շահումյանի անկումից հետո, այնտեղ մնացած ինքնապաշտպանական որոշ ուժերին⁹² դուրս բերելու գործում ևս ներգրավվել են ուղղաթիռներ: Պատերազմի ակտիվ փուլերից էր 1992 թ., երբ սպառազինությանը գերազանցող աղբյուրները, իսկական պատռուհաս դարձած ռեակտիվ համազարկի «ԵՄ-21 Գրա» կայանքներով, հրթիռակոծում էին հայկական բնակավայրերը: Անհրաժեշտ էր գոնե մնան մեկ համակարգ Արցախ տեղափոխել: Երկրի ղեկավարությունը ժամանակավոր Մոսկվայից խնդրեց ՀՀ գործուղել 20 տոննա բեռնատարություն ունեցող երեք «Մի-26» բեռնատար ուղղաթիռ: Հենց առաջին թռիչքի ժամանակ, երբ Ստեփանակերտ էին տեղափոխում այլուր, հետդարձին աղբյուրները փորձում են խփել ուղղաթիռը, սակայն միայն կարողանում են վնասել այն: Գործիս օդանավակայանում տեխնիկները վերանորոգում են ուղղաթիռը: Ուղղաթիռների հաջորդ թռիչքով Վարդենիսից նշված կայանքը հասցվում է Քոլտատակ: Երկրորդ կայանքն ասարիլի 3-ին Շահումյան է հասցվում, սակայն հետդարձին «Մի-26»-ը խփվում է «Արա» կրովի զենիթափոթիչային համալիրով (ԿՀՀՀ) և վայր ընկնում Օժար վեռան մոտակայքում, ավելի քան 2800 մ բարձրության վրա⁹³: Մոտակայքում աղբյուրանական դիրքերն էին, իսկ եղանակը շատ ցուրտ էր: Ուղղաթիռի մեջ կային ծեբեր, երեխաներ ու վիրավորներ: Հայկական ուղղաթիռները, իրենց ուղևորներին խցեցնելով Վարդենիսում, վերադառնում են փրկարարական աշխատանքի: Մեկ մետրամոց ձյան մեջ հայկական ուղղաթիռներն իրականացնում են փրկարար-

⁹¹ Լույս տեղում, էջ 437:

⁹² Պարտիզանական պայքար իրականացնողները:

⁹³ Գեղամյան Գ., Սահակյան Ռ., Լւլվ. աշխ., էջ 59:

յական գործողություն: Գուրս է բերվում 39 մարդ, սակայն դեպի վայրում մնում է վեց վիրավոր: Փրկարարական ամբողջ գործողության ընթացքում օդից հակառակորդի դիրքերին հարվածելով՝ աջակցում էր ռուսական երկու «Մի-24»: Հաջորդ առավոտյան «Սպիտակ» փրկարարական ջոկատի օգնությամբ դուրս են բերվում մյուսները, ուրոնցից երկուսը սառել էին, քանի որ գտնվել էին ուղղաթիռից հեռու: Իսկ վերջինիս մոտ ընկածները ողջ էին մնացել՝ շարժիչների տարության շնորհիվ: Մյուս երկու «Մի-26»-երը, բնակմանաբար, այլևս թռիչք չէին կատարելու, դրանց անձնակազմները վերադարձան ՌԳ: Նման մեկ ուղղաթիռը կարող էր միանգամից չորս «Մի-8»-ի բեռ տեղափոխել: Մարտի 27-ին «ԿԿ-40» ինքնաթիռի հրամանատար օդայու Միքայել Անդրեասյանը Արցախից վերադառնում էր՝ խափանված, անառք և գետնից ԿՀՀՀ-ով խոցված, մեկ շարժիչով օդանավով: Հրաշքով վայրէջք է կատարում «Էրեբունի» օդանավակայանում: Սա արդեն երկրորդ դեպքն էր, երբ աղբյուրները խոցում էին քաղաքացիական ինքնաթիռը: Մայիսին ունեցանք միանգամից երկու կորուստ, բարեխախտաբար, առանց մարդկային զոհերի: Դրանցից առաջինը տեղի ունեցավ մայիսի 9-ին՝ Շուշիի ազատագրման օրը: Հարություն Գավթյանի հրամանատարությամբ ինքնաթիռը հասել էր Արցախ և վերցնելով իմանականում վիրավորներին՝ նորից օդ բարձրացել: Երկրորդ օդայուի փոխարեն օդանավում էր փորձառու հրամանատար Միքայել Անդրեասյանը: Զարվանառի մոտակայքում աղբյուրանական միակ «ՇԿ-25»-ի ապագա երեսու օդայուն հրանոթներով կամ հրթիռով խոցում է վերադարձող «ԿԿ-40»-ը: Շարքից դուրս են գալիս շարժիչները, խափանվում է հիդրոհամակարգը և նույնիսկ անվիվները չեն բացվում: Մեծ ջանքերի գնով օդայուն օդանավն ուղղում է դեպի Սիսիանի օդանավակայան և առանց անվիվների վայրէջք կատարում: Օդանավի ֆյուզելաժը վերևից իմնովիվն ավերվել էր երդեհից, սակայն փորձառու օդայուն այնպես է վայրէջք կատարում, որ ներքևի մասը սահմակի դեր է կատարում: Ինքնաթիռի պաշտ արկվում է, «ԿԿ-40»-ը գրեթե լիովին կործանվում է, սակայն անձնակազմը և ուղևորները փրկվում են: Սա, թերևս, օդային միակ

մարտն է Արցախյան գոյամարտի ընթացքում⁹⁴։ Կա նաև ՋՀՀ-ով խոցվելու վարկած։ Ջարմանալին այն է, որ Արցախյան գոյամարտի օդային միակ մարտը տեղի է ունեցել գրոհիչ և մարդատար ինքնաթիռների միջև։

Ընդհանուր առմամբ, քաղաքացիական ավիացիայի ուղղաթիռների օդաչուները միայն տրանսպորտային նպատակներով կատարել են ավելի քան 3700 թռիչք՝ ընդհանուր 11000 թռիչքաժամով, որից միայն 1500-ը՝ գիշերային ժամերին, իսկ մնացածը՝ հիմնականում օդերևութաբանական բարդ պայմաններում։ Այս տվյալները վերցված են «Էրեբունի» օդանավակայանի գրանցման մատյաններից։ Մատյաններում հաշվված չեն Գորիսի կամ Կամոյի գրանցումով դեպի Արցախ կատարված թռիչքների տարբերությունը կազմող ժամերը։

Ռազմաօդային ուժերի առաջին քայլերը

ՀՀ ռազմական ավիացիայի պատմությունը ևս պետք է սկսենք քաղաքացիական ավիացիայից, քանի որ նույն օդաչուներն ամեն ինչ անում էին, որպեսզի կատարեին նաև մարտական թռիչքներ⁹⁵։ 1991 թ. հայ օդաչուների համառ ջանքերի շնորհիվ ռուսները ռազմատրանսպորտային մեկ հին «Մու-8» ուղղաթիռ են տրամադրում, որով քաղաքացիական օդաչուները կատարում են մարտական թռիչքներ։ Գեպի Նախիջևան տարվող խորհրդային «Մու-24»-ները ժամանակավոր վայրէջք են կատարում Երևանում, և քաղաքացիական ավիացիայի աշխատակիցները, երկրպագիի մարտիկների օգնությամբ, առգրավում են դրանք։ Պատրաստվեցին մի քանի անձնակազմեր, որոնք Վարդենիսի Ջողի կողմում աղբբեջանական մի ճշա-

⁹⁴ Դավթյանի Հ.-ի հետ ունեցած անձնական գրույցի տղագրություն, Հեղինակի անձնական արխիվ։

⁹⁵ Հայկական օդուժի գործողությունները մամրամասն տես Ղուխանիսյան Ա., Ավիացիան Արցախյան գոյամարտում, Եր., Ավիամեհնա, 2006։

նակետի էին հարվածում, որը դառնում է նորուսույց բոլոր օդաչուների հիմնական ճշանակետը⁹⁶։

1992 թ. հունվարին ՀՀ պաշտպանության նորաստեղծ նախարարության կազմում ստեղծվում է ավիացիայի և ՀՕՊ գործերի համատեղ վարչությունը⁹⁷։ Երկիրը գտնվում էր շրջափակման մեջ։ Արտերկրից գրեթե հնարավոր չէր հայրենիք տեղափոխել ավիացիոն տեխնիկայի պահեստամասեր։ Չկային և՛ դրակավորված բավարար քանակով անհրաժեշտ մասնագետներ ու համապատասխան տեխնիկա, և՛ սպառազինություն, սարքավորումներ, օդանավակայաններ։ Այդ ընթացքում արտերկրից եկան տասնյակ հայրենասերներ։

Երևանում արդեն տեղակայված ռուսական ուղղաթիռային առանձին էսկադրիլիան՝ միջպետական համապատասխան համաձայնագրերով հանդերձ, հունիսից արդեն հանձնվում է հայկական կողմին⁹⁸։ Այդ գործընթացը տեղի ունեցավ ազատամարտիկների համառ ջանքերի շնորհիվ։ Ռուսական կողմը ցանկանում էր գորսման աննկատ տեղափոխել Հայաստանից։ 1992 թ. ապրիլին տեղեկանալով, որ այդ գորսման արդեն հանում են ՀՀ-ից, քաղաքացիական օդաչուները սկզբից փորձում են ուղղաթիռների վրայից մասեր հանել խափամելով այդ գործընթացը, հետո օգնության են գալիս ազատամարտիկները, որոնցից մի փոքր ջոկատ մշտապես գտնվում էր օդանավակայանում և ուղեկցում էր թռիչքները։

Մոսկվայից ժամանած զենքային պատանդ վերցնելու միջոցով կանխվում է Երևանից 7-րդ գվարդիական բանակի 382-րդ առանձին ուղղաթիռային ավիասկադրիլայի (Տ/Մ 32923) դուրս բերումը, և նույնիսկ որոշ ուղղաթիռներ հետ են վերադարձվում թռիչ-

⁹⁶ Չեռք բերված բոլոր ուղղաթիռներն օրինականացնելու համար անհրաժեշտ էր Մոսկվայում բույտվություն ստանալ։ Հայկական ավիացիայի ներկայացուցիչներին հաջողվեց ինչ-որ կերպ օրինականացնել որոշ սարքեր։

⁹⁷ Փորձը ցույց է տվել, որ սա ավելի ճիշտ քայլ էր։ Հետագայում մենք բախվելու ենք այս հարցի հետ։ Հարցին մենք կվերադառնանք ստորև։

⁹⁸ Жирухов М., Журнал АвиаМастер № 6/2000, Воздушная война в Нагорном Карабахе, стр. 3.

քից: Մի քանիսն արդեն տեղ էին հասել և հետ չվերադարձան: Գործողությունը դեկավարելու պատասխանատվությունը ստանձնել էր Վազգեն Մարգարյանը:

Հայկական նորաստեղծ ռազմաօդային ուժերը (ՌՕՌ) արդեն ունեին ուղղաթիռներ: Հավաքագրված օդաչուների երկու խմբերը հունիսի 17-ին Արզնիում կատարում են ուսումնական առաջին թռիչքը: Հայկական նորաստեղծ օդուժի առաջին օդաչուներն էին Ալեքսանդր Արրահամյանը, Բորիս Բաբայանը, Սերգո Խանադյանը, Գրիգոր Բաղինյանը, Բորիս Խաչատուրովը, Գագիկ Նահապետյանը, Մելիք Մելիքյանը, Գրիգոր Քիլոֆյանը և ուրիշներ: Մեծ էր օգնությունը նաև ռուսական ուղղաթիռային զորամասում ծառայող ռուս հրահանգիչների՝ Վադիմիր Կոչյանովի և Լեոնիդ Դիլենկոյի կողմից, որոնք ունեին աֆղանական պատերազմի փորձ: 1992 թ. հունիսի 23-ին հայկական անձնակազմերը երեք ուղղաթիռով կատարում են հայկական օդուժի մարտական առաջին խնդիրը:

1992 թ. ամռանը, երբ դաժան մարտեր էին ընթանում Մարտակերտի և շրջակա գյուղերի համար, կատարվում են մարտական մի քանի թռիչքներ: Հուլիսի 6-ից 8-ը մարտական թռիչքներ են կատարվել այդ ուղղությամբ⁹⁹: Հակառակորդը չափազանց ակտիվ էր նաև Ասկերաճի և Մարտունիի ուղղություններում: 1992 թ. սեպտեմբերի 5-ին հայկական ՌՕՌ-ն կատարեց մարտական մեր առաջադրանք՝ հարվածներ հասցվեցին Քաջարի ուղղությամբ: Խնդիրը կատարվեց մարտական երկու «ՄԻ-24» և երկու միավոր «ՄԻ-8» ուղղաթիռների միջոցով: Սեպտեմբերին ռազմական ավիացիան գործում էր նաև Լաչինի ուղղությամբ՝ այդ ուղղաթիռների ստանալուց ընդամենը 2-3 օր անց: Հարվածներն ուղղվում էին մարդասիրական միջանցքին սպառնացող հակառակորդի Քարիլշաղ (Կարիկիշակ), Կոչազ և Մաֆյան գյուղերին, Մարտունի-Վարանդա բնագծի վրա գտնվող և հատկապես Մարտունու սպառնացող Փրջամաթ, Կաջար բնակա-

վայրերի կրակակետերին ու դիրքերին: Դրանք հիմնականում լավ ամրացված ու ռազմական տեխնիկայով հագեցած հենակետեր էին, որոնց հարվածելն արդեն իսկ վտանգավոր էր, և պահանջում էր մեծ հնուություն և համարձակություն:

1992 թ. ամռանը Հայաստանը ստացավ նաև իր բաժին մարտական երկու ինքնաթիռները՝ «Cy-25» գրոհիչները: Տեխնիկայի քանակը սանձանափակ էր, և եղած օդաչուները՝ թվաքանակով քիչ: Տվյալ պահին կար ինքնաթիռի միայն երեք օդաչու՝ գնդապետ Ա. Արրահամյանը, փոխգնդապետ Բ. Բաբայանը և կապիտան Մ. Մելիքյանը: 1992 թ. սեպտեմբերի 14-ին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ավիացիայի վարչությունն առանձնանում է ՀՕՊ-ի վարչությունից և դառնում առանձին կառույց, ստեղծվում են զորամասեր և ստորաբաժանումներ: 1992-ի կեսերին զորատեսակն իր կայացման ակտիվ փուլում էր: Բայց զորատեսակի կայացումը երկու առանձնահատկությամբ էր աչքի ընկնում.

1. նախկին ԽՍՀՄ-ից մնացած նյութական բազան մվազազույց էր, իսկ մասնագետները սակավ էին ու ոչ արհեստավարձ,
2. խնդիրներ կային նաև տեղանքի հետ. Հայկական լեռնաշխարհի բարդ տեղանքը ավիացիայի կիրառության համար բարդ միջավայր է:

Հիմնականում գործել են «ՄԻ-24» մարտական ուղղաթիռների օդակներ և զույգեր¹⁰⁰: Սակայն, որպես կանոն, ամենատարբեր իրադրությունների համար նրանց հետ թռել են նաև «ՄԻ-8» ռազմատրանսպորտային ուղղաթիռները: Վերջիններս ևս հարվածներ են հասցրել հակառակորդի կրակակետերին և մարտական դիրքերին:

Մարտական ինքնաթիռներով թռիչքներ կատարելը գրեթե անհնար էր բազում պատճառներով, սակայն այդ ուղղությամբ որոշակի քայլեր էին ձեռնարկվում: Արցախի հանրային հեռուստատեսության հաղորդած տեղեկությունների համաձայն՝ հայկական «Cy-

⁹⁹ Մնացականյան Բ., ՀՀ ՊՆ ավիացիայի վարչությունը՝ 10 տարեկան, Հայկական Բանակ, 3.2003, էջ 23:

¹⁰⁰ Մարտական միավորներ են, որոնք բաղկացած են երկու կամ չորսից վեց ուղղաթիռներից:

25» գրոհիչը Մտեխանակերտի երկնքում խոցվում է մեր ՀՕՊ-ի կողմից (1992 թ. սեպտեմբերի 4, օդաչու՝ կապիտան Մ. Մելիքյան)¹⁰¹: Նույն ամսի 16-ին Մ. Մելիքյանը «Cy-25»-ով հարված է հասցնում Կարմիր Շուկա և Զաջար բնակավայրերի մտակայքում տեղակայված աղբբեջանական մարտական դիրքերին: Սա հայկական ՌՕՌ-ի ինքնաթիռների մարտական վերջին թռիչքն էր:

Հարկ է նկատել, որ հայկական ուղղաթիռները տասնյակ ու հարյուրավոր մարտական թռիչքներ չէին կատարում, հայ օդաչուները մինչ այդ մեծ փորձ ու հաղթանակներ չունեին, քայց պատերազմի տարիներին պարզապես սխրամբ էին գործում:

Այս հաջողություններից հետո հակառակորդը մարտական ակտիվ գործողություններ սկսեց Լաչինի միջանցքի հյուսիսային կողմից՝ Առչազ լեռան ուղղությամբ: Հայ ազատամարտիկները, ստանալով ուղղաթիռների աջակցությունը, հաջողությամբ հետ մղեցին թշնամու բոլոր գրոհները: Հայ օդաչուները հոկտեմբերի 17-19-ը մի քանի մարտական թռիչք են իրականացրել Առչազ լեռան ուղղությամբ: Մինչ այդ թռիչքներ էին կատարվել Մոլլալար բնակավայրի, Կարիկիշլակ և այլ կրակակետերի ուղղությամբ: Ուղղաթիռները նպատեն են ինքնապաշտպանական ուժերի առաջխաղաղամբը. ազատագրվել է Խրճանլար գյուղը, ապա վնասագործվել Մազմազակ գյուղում տեղակայված ռազմական հենակետերը:

1993 թ. հունվարին ուղղաթիռներով հարվածներ են հասցվում նաև հակառակորդի Մաֆյան բնակավայրի և շրջակա տեղանքի ուղղությամբ տեղակայված դիրքերին, իսկ 1993 թ. մարտին՝ Չարեկ-տար բնակավայրի և շրջակա տեղամասերի ուղղությամբ տեղակայված դիրքերին: Ուղղաթիռներով հարվածներ են հասցվել նաև Նաբեշտար, Նախիջևանիկ, Մեծ-Շեն, Դրմոն և այլ տեղամասերում:

¹⁰¹ Նշված տեղեկությունը առաջինը հայտնել է նշված աղբյուրը, սակայն մենք իրողության հաստատումը ստացել ենք անձամբ Մ. Մելիքյանից, ով ներկայումս գնդապետ է և դասավանդում է ՀՀ ՊՆ ավիացիոն ինստիտուտում:

1993 թ. ապրիլի 1-ին ստեղծվում է «Cy-25» գրոհիչ ինքնաթիռների սառնձին եկադրոլիան, որը մարտական գործողություններին չէր մասնակցում, քանի որ կազմավորման և ուսուցման փուլում էր գտնվում: Նախնական երկու ինքնաթիռներին, որոնցից մեկը խոցվել էր, սկսվածներին ավելացավ ևս մեկը, նույններին ՀՀ-ն ստացավ ևս չորս գրոհիչ:

Ռազմական ավիացիայի պատասխանատվության շրջանակում էր նաև տրանսպորտային ապահովման թռիչքներ իրականացնելը: Դրանց միջոցով պատերազմի դաշտից դուրս է բերվել ավելի քան 980 վիրավոր ու հարյուր սպանված: Ռազմաճակատ է տեղափոխվել ավելի քան 24.000 կգ սպառազինություն, պարեն և այլ կարևոր բեռներ¹⁰²: Շատ էին լինում դեպքեր, երբ ուղղաթիռները մարտական թռիչքներից վերադառնում էին վնասվածքներով, քայց, բարեխաղաղաբար, մարտական գործողությունների ժամանակ հայկական կողմը թշնամու կրակից որևէ թույլ սարք չի կորցրել: Մարտական այս ուղին հայ օդաչուները փառքով անցան: Հարկ է ասել, որ դա եղավ նաև կազմակերպչական որոշ գործողությունների շնորհիվ: Մասնավորապես, ԽՍՀՄ-ից մնացած սակավ գույքն ու տեխնիկան շատ խելամիտ օգտագործվեց: Շրջանային օդանավակայանների հիմքի վրա ստեղծվեցին պարետատներ, որպեսզի մարտական առաջադրանքներից ուղղաթիռները ոչ թե անձն անգամ երևան վերադառնային, այլ այնտեղ լրացնեին անհրաժեշտ պաշարները: Դա նաև թույլ էր տալիս տեխնիկան ցրել և ոչ թե մի վայրում կենտրոնացված պահել, քանի որ թշնամին մի հարվածով դրանք կոչնչացնել: Ըստ այդմ՝ 1993 թ. հունվարին կազմավորվեց կապիտան Կամո Ռսկանյանի ղեկավարած Սիսիանի ավիացիոն պարետատունը, որտեղ 1992-ից մարտական հեթոսպահույթուն էին կատարում արևելյան ուղղությունում մարտական խնդիրներ իրականացնող ուղղաթիռային օդակների անձնակազմերը: Ձևավորվեցին նաև Գավառի ու

¹⁰² ՌՕՌ-երի ՇՊ գնդապետ Դադարյանի Ա., անձնական արխիվ:

Ստեփանավանի ավիացիոն պարետատները՝ լեյտենանտները Նժիր Կոնստյանի և Ալբերտ Մարգարյանի հրամանատարությամբ: Ասենք նաև, որ 1993-1994 թթ. կազմավորվեցին տեխնիկական ու նյութական սպասարկման առանձին զորամասերը՝ ամբողջացնելով ՀՀ ռազմաօդային ուժերի համակարգը:

1992 թ. դեկտեմբերին պաշտպանության նախարարությանը փոխանցված Երևանի աերոակումբի և «Արզնի» օդանավակայանի վերակազմավորման միջոցով 1993 թ. ապրիլին հիմնվեց ՀՀ ռազմատուսմանական առաջին հաստատությունը՝ ավիացիոն ուսումնական կենտրոնը (այժմ՝ ՀՀ ՊՆ մարշալ Արմենակ Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտ), որի հրամանատար նշանակվեց կապիտան Դանիել Բալայանը:

Կապ. Հայաստանի երրորդ հանրապետության ռազմական կապը ձևավորվեց խորհրդային տարիներին՝ 1989 թ. աշնանը, երբ Արբրեջանը սկսեց նաև հեռահաղորդակցության (կապի կոմունիկացիաների) շրջափակումը:

ՀՀ զինվորական կապի համակարգի ձևավորումն ունեցավ երեք փուլ.

1. Հայաստանի կապի նախարարության և այլ զերատեսչությունների քաղաքացիական ռադիոկապի միջոցներով ինքնապաշտպանական ջոկատների միացյալ ղեկավարման կազմակերպում,

2. ՀՀ նախարարների խորհրդին կից պաշտպանության կոմիտեի ղեկավարությամբ կապի կազմակերպում, որը հիմնականում ներառում էր մարտական ջոկատների հետ կապը,

3. ՀՀ ԶՈՒ ԳՇ կապի վարչության ու կապի գործերի ստեղծում՝ արդեն բանակի կայացման պայմաններում:

Ռադիոկապի մասնագետները խիստ գաղտնի Արցախ տեղափոխեցին և մի շարք վայրերում տեղադրեցին քաղաքացիական նշանակության ռադիոկայաններ, որոնք թեպետ հզոր չէին, սակայն տվյալ պայմաններում խնդիրը լուծում էին: Ստեղծվեց կապի երեք ցանց: Շարժական առաջին կապը ղեկավարում էին կամավորները:

ՀևԱՀ կապի նախարարության ցանցը ղեկավարում էր ներկայիս պատեստի փոխգնդապետ Արմեն Ազարյանը: Երրորդ՝ ռադիոսիբոլների ցանցն էր, որը համակարգում էր Կարեն Կարապետյանը:

Իսկ Ստեփանակերտում, աղբրեջանական վերահսկողության պայմաններում, Մաքսիմ Բաղմանյանի ղեկավարությամբ՝ ձևավորվեց դեռևս ընդհատակում գործող Ինքնապաշտպանության ուժերի՝ նշանավոր «61» ազդականչով կապի հանգույցը: Այս ամենը բերեց նրան, որ Արցախում հատուկ դրությամբ սահմանվեց, և պետական կառույցների բոլոր ռադիոկապերը խլացվեցին: Գործում էր միայն ռադիոսիբոլների գաղտնի կապը: Այդ կապը փորձում էին լսել, հսկագրել և ոչնչացնել աղբրեջանական կառույցները, խորհրդային ներքին գործերի և 4-րդ բանակի ստորաբաժանումները, պետական անվտանգության մարմինները: 1991 թ. հոկտեմբերին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը ստացան առաջին «Ալինկո» դյուրակիր ռադիոկայանները, որոնք ազատամարտիկների համար դարձան կապի հիմնական միջոցը: Ստեփանակերտից մայիսին խորհրդային բանակի 366-րդ զնդի ու ռադիոէլեկտրոնային պայթարի գումարտակի հեռանալով՝ զինվորական կապի փոքրաքանակ որոշ միջոցներ հասան ջոկատներին: Մինչ այդ, Ստեփանակերտում քաղաքացիական կապավորները նորոգել էին շահագործումից վաղուց դուրս եկած հրամանատարաշտաբային մի կիսավեր մեքենա: Մասնագետները չէին հավատում դրան¹⁰³:

Նման պայմաններում անչափ դժվար էր ղեկավարել: Միայն կապավորների հնարամտությամբ էր գործը զուլի բերվում: Նրանք օգտագործում էին քաղաքացիական նշանակության կապի միջոցները՝ սովորական հեռախոսագծերը, տաքսիների, «Շտապ օգնության» ու ոստիկանական մեքենաների ռադիոկայանները:

Պատերազմի տարիներին հիմնադրվեց ՀՀ ԶՈՒ կապի և ավտոմատ կառավարման համակարգերի վարչությունը: Հայ կապա-

¹⁰³ Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 72:

վորները մշակեցին խոսակցական աղյուսակներ ու զարտնագրված կապի բանալիներ, սկսվեց կանոնավոր զինվորական կապի համակարգի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքների համակարգումը:

Հետախուզական: Նապոլեոնն ասում էր, որ եթե գիտես հակառակորդի մտադրությունները, ապա մարտի կետը հաղթել ես այդին:

Մեծ է այս գորատեսակի դերը տարբեր ուղղություններում, գործողությունների մշակման ու պլանավորման, հակառակորդի ուժերի, միջոցների և մտադրությունների ուսումնասիրման ու գնահատման, հետախուզական աշխատանքների իրականացման և բուն մարտական գործողությունների վարման ընթացքում: Թշնամու քիկունքում հետախուզիչների գործողությունները մեծ նշանակություն ունենին բոլոր ուղղություններում հակառակորդին պարտություն մատնելու համար:

«Արցախյան ազատամարտի ընթացքում հայկական հետախուզական ստորաբաժանումներն առաջինն աշխարհում կիրառեցին փոքր ու դյուրաշարժ խմբերով կոնկրետ ուղղությունում հանկարծակի գործողությունների միջոցով առաջադրանքների կատարման մարտավարություն: Այն հետախուզում լուրջ ուսումնասիրության նյութ դարձավ բազմաթիվ պետությունների ռազմական փորձագետների համար և վերջին տասնամյակի ընթացքում լայն կիրառում ստացավ»¹⁰⁴:

Հրետանի: ՀՀ ՉՈՒ հրթիռահրետանային զորքերի կազմավորումը սկսվել է 1992 թ. առանը: Նախկին խորհրդային 7-րդ բանակի հրթիռահրետանային սպառազինությունը Հայաստանին էր փոխանցվում բավականին դանդաղ: Հարկավոր էր ավելի արագ գործել: Հայաստանում եղած հակակարկտային ամբողջ տեխնիկան՝ 450 հրանոթ, ընդունվեց վարչության պետ, ներկայիս պահեստի գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանի ու վարչության շտաբի

պետ, գնդապետ Անտո Տատինցյանի կողմից: Դրանց նորոգման արդյունքում հնարավոր եղավ մարտական վիճակի բերել մոտ 240 հրանոթ: Կամավորական ջոկատներն ու մոտորիստձգային նորաստեղծ առաջին զորամասերը ձեռք բերեցին բջճամու կրակային խոցման միջոցներ: Հայկական բանակի հրետանային ստորաբաժանումների ձևավորումը սկսվեց սահմանամերձ շրջաններում՝ 100 մմ-ոց «ՔС-19» հակակարկտային հրամոթների մարտական կիրառումով, որոնք բոլորովին այլ բանի համար էին ստեղծված:

Հրետանային զորքերի կազմավորումը ընթացել է բանակաշինության զուգընթաց, և իրետանավորները միշտ մեծ դեր են ունեցել: Նախ՝ գորատեսակների առումով իրենց քանակով երկրորդն են, և հետո՝ դերով ու նշանակությամբ միշտ կարևորվել են:

Քիմիական զորքեր: Մեզանում քիմիական զորքերի ստեղծումը կարևոր էր մաև այն առումով, որ դեռևս խորհրդային տարիներին Ադրբեջանն ուներ քիմիական զարգացած արդյունաբերություն, որը կարող էր հիմք հանդիսանալ քիմիական զենքի արտադրության համար: Ըստ այդմ անհրաժեշտ էր անձնակազմին սովորեցնել ճիշտ օգտվել անհատական պաշտպանական լրակազմերից և հակազուգից: 1992 թ. հունվարի 28-ին կազմավորվեց քիմիական ծառայությունը, որը 1997 թ. վերակազմավորվեց ՀՀ ՉՈՒ ԳՇ ռադիացիոն քիմիական կենսաբանական պաշտպանություն (Ռ-ԲԿՊ) զորքերի վարչության (վարչության պետ՝ գեղապետ Սարգիս Արզումանյան):

Ռադիոտեխնիկային պայքար (Ռ-Դ): Ռ-Դի ձևավորումը հիմնված էր մախկին խորհրդային 7-րդ բանակի ռադիոտեխնիկային միջոցների վրա: Հայ զինվորականների շնորհիվ՝ երկու առանձին գումարտակների տեխնիկական պահպանվեց ու փոխանցվեց հայկական բանակին: 1992 թ. հուլիսին ժամանակում հետախուզության վարչության ենթակայության ներքո կազմավորվեց ռադիոտեխնիկային պայքարի բաժինը, որը ղեկավարում էր ներկայիս գեներալ-մայոր Արշակ Կարապետյանը: Ռադիոտեխնիկային պայքարի առաջին գորամասի առաջին հրամանատարն էր կապիտան Ռ. Սարգսյանը: 1993 թ. հունվարի 4-ին գորամասի անձնակազմն իրակա-

¹⁰⁴ Օհանյան Մ., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 75:

նացրեց մարտական հերթապահություն, որի արդյունքը հակառակորդը շատ արագ գզգզ: Նման զորատեսակների գործունեությունը մամրամասն ներկայացնել հնարավոր չէ:

Թիկունք: Մինչ բանակի կազմավորումը, մարտական գործողությունների թիկունքային, բժշկական, կապի, ինչպես նաև Արցախից դեպի ՀՀ կապի ապահովման, տվյալ դեպքում՝ հիմնականում ուղղաթիռային թռիչքների իրականացման աշխատանքները մասամբ էին կատարվում քաղաքացիական կառույցների կողմից, մասամբ՝ մի քանի նվիրյալների ու նախաձեռնողների:

Թիկունքային ապահովման աշխատանքները համակարգում էր Վազգեն Սարգսյանը: Թիկունքի անմիջական ղեկավարումն իրականացվում էր սկզբից տարբեր նվիրյալ անձանց կողմից, երբեմն հախտոն ու անկանոն, երբեմն՝ կանոնակարգված: Բանակի կազմավորումից առաջ և անմիջապես հետո դա կատարում էր ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, Ջնու թիկունքի պետ, զեներալ-մայոր Սերգեյ Մարտիրոսյանը: Բանակի կազմավորմանը զուգընթաց ստեղծվեցին թիկունքի ղեկավարման մարմիններն ու ծառայությունները: Դա ղժվարին գործընթաց էր, քանի որ չկային անհրաժեշտ նախապայմաններ, պահեստներ ու բազաներ, նյութական միջոցների նորոգման և այլ համակարգեր: Մեր երկրի ռազմական շրջապատման ու տնտեսական շրջափակման պայմաններում թիկունքի ծառայությունների կազմավորման աշխատանքն ավելի քան ղժվար էր ընթանում:

1992 թ. թիկունքի ծառայությունների կազմավորման ու ղեկավարման դերը ստանձնեցին թիկունքի պետ, վարչության պետ, ներկայիս պահեստի գեներալ-մայոր Տիգրան Գասպարյանը և գնդապետ Ա. Նաչարտյը:

Այդ ժամանակ թիկունքային բազան իրենից ներկայացնում էր ընդամենը նյութական ապահովման մեկ առանձին գումարտակ, երկու կենտրոնական բազա, կենտրոնական պարենային բազա և երկու անասնաբուժախամաճարակային ջուկատ:

1992 թ. հունիսի 23-ին, երբ նյութական միջոցներով բեռնված ավտոշարասյունը՝ կապիտան Մեսրոպ Հակոբյանի ղեկավարությամբ, Լաչինով մտավ Ստեփանակերտ¹⁰⁵: Դա մեծ ցնծություն էր, 10 տարի անց, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով այդ օրը սահմանվեց որպես ՀՀ զինված ուժերի թիկունքի օր:

Արցախում թիկունքային բանակային կառույցի ձևավորումը սկսվեց 1992 թ. գարնանը, իսկ օգոստոսի 14-ին Արմեն Աբգարյանը նշանակվեց ԻՊԿ նախագահի թիկունքի գծով տեղակալ: ԼՂՀ ներկայիս նախագահ Բակո Սահակյանը այդ ժամանակ թիկունքի շտաբի պետն էր:

Բուժնախաշարժություն: Մինչ կանոնավոր Ջնու-ի ստեղծումը, ռազմարժկական գործի կազմակերպումը ստանձնեց քաղաքացիական առողջապահության համակարգը, որը թեկուզ և սովոր չէր ռազմական իրավիճակին, սակայն փայլուն կատարեց իր խնդիրները: Թժիկները հերթապահություն էին անում, շրջանային բուժմիավորումներում ու Երևանի կլինիկական հիվանդանոցներում դիմափորում և վիրահատում էին վիրավորներին: Այդպես ձևավորվեց զինվորական բժիշկների կորպուսը:

Ընթացող մարտական գործողությունները ստիպեցին առողջապահության համակարգը ևս դնել ռազմական ռեժիմի վրա: Խորհրդային Հայաստանում կար կադրային քարծրակարգ պտտեցիալ և մահնակալներով ու սարքավորումներով ապահովված բուժ-կինմաբուժների հզոր ցանց: 1991 թ. ՀՀ առողջապահության նախարարությունում Արմեն Աթաբեկյանի (հետագայում՝ ՊՆ ռազմարժկական վարչության պետ) ղեկավարությամբ՝ ստեղծվեց հատուկ ծրագրերի վարչությունը: Նրա և 1993-1995 թթ. ՊՆ ռազմարժկական վարչության պետ Բենիկ Հարությունյանի գլխավորած բուժկանխարգելիչ գլխավոր վարչության մասնագետները ՀՀ սահմանամերձ

¹⁰⁵ Օհանյան Ա., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 89:

շրջաններում, Արցախում ապահովեցին բնակչության և կամավորական ջոկատների բուժապասարկումը:

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության՝ Արցախում վիճակը բոլորովին այլ էր: Այնտեղ երիտասարդ բժիշկների մուտքը արգելված էր, ու, հետևաբար, ծանր դրություն էր: Պատերազմի ընթացքում բուժաշխատողների ավելի քան 1.000 գործողում եղավ¹⁰⁶: Զինվորական հոսպիտալը, անկախ իր կարգավիճակից, գործում էր, երբ դեռ նույնիսկ կազմավորված ՁՈՒ չկար:

«Բժիշկներն ինչպե՞ս զինվորական բժիշկ չդառնան: Հիվանդանոցներն ինչպե՞ս զինվորական հոսպիտալներ չկոչվեն, եթե մարդիկ մեռնում են ո՛չ թե գրիպից կամ մալարիայից, այլ՝ հրետանային ուժերակոծությունից: Մենք սովորական բժիշկներ չենք: Մեր վիրաբուժությունը ո՛չ թե ընդհանուր է, կամ կրծքավանդակային, կամ ինչ-որ մեղ մասնագիտական, այլ, ինչպես Նիկոլայ Իվանովիչ Պիրոգովն է ասել, ռազմադաշտային»¹⁰⁷: Սա նշանակում էր, որ քաղաքացիական բժիշկների վերապրոֆիլավորումը զինվորականների՝ կայանում էր ինքնաբերաբար:

Հիվանդանոցները վերածվել էին հոսպիտալների. հրետակոծությունից հետո վիրահատարանները տեղափոխվեցին նկուղներ: Արցախից վիրավորները Հայաստան էին տեղափոխվում ինքնաթիռներով, ապա՝ ուղաթիռներով: «Էլեբումբի» օդանավակայանում հիմնվեց վիրավորների կենտրոնացված տեսակավորման բժշկական կետ, որտեղ նրանց առաջին բուժօգնություն էր ցուցաբերվում¹⁰⁸:

¹⁰⁶ Այս տվյալները ընդհանրացված են, դրանք վերցված են տարբեր բժիշկների հիշողություններից և հիմնականում շրջանառության մեջ են դրվել Ջ. Բալայանի կողմից, ով խորապես ուսումնասիրել է բժիշկների գործունեությունը Արցախյան պատերազմում:

¹⁰⁷ Բալայան Ջ., Բժիշկ Մարությանը և նրա պատերազմի հետքեր երկար է մնում, Եր., 1999, էջ 167:

¹⁰⁸ 1992 թ. հունվարի 28-ին ՀՀ ՁՈՒ րիկուրի կազմում ստեղծվեց ռազմաբժշկական ծառայությունը, որի առաջին պետն էր Երևանի

Մարտական գործողություններին զուգընթաց՝ զարգանում էր նաև պաշտպանության բանակի բժշկական ծառայությունը: «Տարիցդուրսը սկսեց գրանցել առաջին սպանվածներին ու առաջին վիրավորներին: Եվ Վալերին երեկոյան հեռախոսային երկխոսությունների ժամանակ արդեն քիչ էր խոսում «օրվա նորություններից», փոխարենը շատ՝ այն մասին, որ հարկավոր է ռազմադաշտային վիրաբուժություն տեղծել»¹⁰⁹:

Ռազմադաշտային հոսպիտալները և բուժկետերը շատ ժամանակ բացազատվում էին առաջնագծում, չնայած դա արգելված էր: Հայկական բանակի կորուստներն ավելի քիչ էին այն պատճառով, որ թույլատրվեցին կազմավորվել «հայ բժիշկները մասնագիտական ավելի բարձր մակարդակ ունեին և ավելի բավ էին կազմակերպում բուժօգնությունը: Վիրավորների գրեթե 80 տոկոսը, վերադառնալով շաբաթ, շարունակում էր պայքարը»¹¹⁰:

«Փաստաթղթերով գրանցված է մոտ տասնմեկ հազար վիրահատություն, որ կատարել են Վալերին (Վալերի Մարությանը) և իր թիմը: Եթե մտածենք, որ ամեն մի վիրահատություն տևել է միջին հաշվով մեկ ժամ, ապա ստացվում է, որ Վալերին ու իր թիմը վիրահատել են հինգ հարյուր օր շարունակ. չորս տարվա հինգ հարյուր օրը: Եվ դա դեռ այն դեպքում, եթե ժամանակը հավասարապես բա-

բժշկական ինստիտուտի զինվորական ամբիոնի պետ, բուժծառայության գլխավոր Մնացական Աղաբաբյանը:

Նախկին խորհրդային 7-րդ գվարդիական բանակի երկու զինվորական բուժհաստատությունները մնացին Հայաստանում՝ տեղաբաշխված ռուսական զորավանդի կազմում: Մեր բանակը ռազմաբժշկական կազմակերպված ոչ մի միավոր չառաջավոր: Ամեն ինչ ստեղծվեց գրոյից՝ հիմնականում Վ. Ասրադյանի ջանքերով:

Նոյեմբերին հիմնադրվեց Վանաձորի կայազորային հոսպիտալը, որի առաջին պետն Արկադի Հարությունյանն էր: Ստեղծվեց Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը, որի առաջին պետը բուժծառայության գլխավոր Սամսոն Գրիգորյանն էր:

¹⁰⁹ Բալայան Ջ., Բժիշկ Մարությանը և նրա պատերազմի հետքեր երկար է մնում, Եր., 1999, էջ 167:

¹¹⁰ Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 68:

ժանե 1486 օրվա վրա: Բայց չէ՞ որ վիրահատությունների առյուծի բաժինը կատարվել է 1992 թ. մինչև 1994 թ. մայիսը: Ահա, թե ինչպիսի բեռնվածություն է եղել: «Վիրահատություններ են եղել, որ տևել են վեց, երբեմն էլ՝ տասը ժամ: Եվ դրանք կատարվել են նկուղում»¹¹¹:

Երևանի պետական բժշկական ինստիտուտի 34 ուսանողներ կամավոր զինվորագրվեցին պատերազմին: Այբերտ Բազեյանի հրամանատարությամբ գործող «Նիկոլ Դուման» կամավորական ջոկատում միավորված բժշկական ինստիտուտի ուսանողները: Մովսես Պողոսյանի ղեկավարած՝ «Մպիտակ» (Երևան) և Ալան Գրիգորյանի ղեկավարած՝ «Արցախ» (Ստեփանակերտ) փրկարարական ջոկատները ևս հիմնականում բաղկացած էին բժիշկներից:

1992 թ. հոկտեմբերին ինքնապաշտպանության ուժերի ռազմաբժշկական ծառայության պետ նշանակվեց լեգենդար Վալերի Մարությանը:

Չինվորական կոմիսարիատ: ՀՀ զինվորական կոմիսարիատը, որը 1986 թ. ղեկավարում էր լուսսահոգի գեներալ-մայոր Արայուշա Հարությունյանը, ռազմական միակ կառույցն էր, որը խորհրդային բանակի փլուզումից հետո լիարժեք պահպանվել ու շարունակում էր իր գործունեությունը: 1991թ. դեկտեմբերի 9-ին, «Ջինապարտության մասին» ՀՀ օրենքի ընդունումով, 3 տարվա դադարից հետո՝ 1992 թ. գարնանը, կազմակերպվեց առաջին զորակոչը: Նույն թվականի օգոստոսին սկսվեց տարածքային պաշտպանության գումարտակների կազմավորումը՝ բանակի, այսպես կոչված, առաջին ստորաբաժանումները: Նորաստեղծ զորամասերում հրամանատարական պաշտոնների նշանակվեցին զինվորական կոմիսարիատներում ծառայող, գրագետ ու բանիմաց ավելի քան 200 սպաներ, որոնցից շատերն այսօր պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում ՀՀ զինված ուժերում:

Հակաօդային պաշտպանություն (ՀՕՊ): Արցախյան ազատամարտի սկզբից մինչև վերջ Արրբեջանը կիրառում էր վարձկան օդայուններ: Հայկական կողմը դատապարտված էր առաջին աշխարհամարտի նման ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով ՀՕՊ կազմակերպել: Այդ ընթացքում Լ.Դ.Հ ԻՊՈՒ ՀՕՊ բաժինը ղեկավարում էր Գարիկ Վարդանյանը¹¹²:

1992 թ. սկզբին Արրբեջանը տիրացավ իր տարածքի «Մի-24» և «Մի-8» ուղղաթիռների մեկական եսկադրիլիաների, ապա՝ ավիացիոն չորս զնդերի: Հունվարի 28-ին, ՀՀ պաշտպանության նախարարության ավիացիայի և ՀՕՊ վարչության կազմում ստեղծվեց հակաօդային պաշտպանության բաժինը, որը ղեկավարում էր գնդպետ Սերգեյ Գուրոյանը: Հետագայում, երբ ՀՕՊ-ը առանձնացավ այս բարդ գործը իր ձեռքը վերցրեց փորձառու զինվորական, ներկայումս պահեստի գեներալ-մայոր Ալիկ Սարգսյանը, որի անմիջական ցանկերի շնորհիվ ՀՕՊ-ը ստացավ կազմակերպված կառույցի տեսք:

ԻՍՀՄ-ը փլուզման պահին Անդրկովկասում ուներ ռազմական մի քանի օդանավակայան, որոնք մտնում էին ՀՕՊ-ի 19-րդ առանձին բանակի և 34-րդ օդային բանակի կազմի մեջ: Վրաստանի տարածքում կար 9-ը, իսկ Արրբեջանի տարածքում՝ 5 ռազմական օդանավակայան¹¹³: Դրանցից էին Սիտալ-Չայում տեղակայված 80-րդ «Շյ-25» գրոհիչների առաջին ավիագումը, Նաստսիլում՝ ՀՕՊ-ի 82-րդ կործանիչային ավիագումը՝ զինված «ՄիԳ-25» կործանիչներով, Բյուրդամիլիում՝ 976-րդ ուժրակոծիչային ավիագումը՝ «Շյ-24» ինքնաթիռներով, և Դալայում՝ 882-րդ հետախուզական ավիագումը՝ «ՄիԳ-25ԲԵ» և «Շյ-24ՄԲ» ինքնաթիռներով: Բաքվի վերանորոգման

¹¹¹ Հասրաթյան Ա., ՊԲ զորատեսակները, ծառայությունները և առանձին ստորաբաժանումները դարաբաշխական պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, 2010, էջ 117-125:

¹¹² Пядушкин М., Вооружая Кавказ: Нечаянное наследство Москва/Кавказ: вооружен и разобшел/ Под редакцией Матвеевой А., Хизькока Д. Saferworld, ЦАСТ: Лондон-М., Февраль 2004, стр. 164-167.

¹¹¹ Բալայան Ջ., Բժիշկ Մարությանը և ..., էջ 168:

գործարանում էին գտնվում նաև Իրաքյան ՌՕՌ-ին պատկանող տասնյակ «ՄիՂ-25» կործանիչներ: Դրանք ևս նվեր մնացին նորանկախ պետությանը:

Ադրբեջանը ցանկացած գնով ձեռք էր բերում այդ ինքնաթիռներից, չնայած Ռուսաստանը աշխատում էր դուրս հանել դրանք¹¹⁴: Նույնիսկ դեպք է եղել, երբ բռիչքից առաջ ինքնաթիռի անիվները ծակել են, այլ համակարգեր խափանել, միայն թե ինքնաթիռը բռիչք չկատարեր: Ադրբեջանի տարածքից հանվող մարտավարական միջուկային սպառազինությունն անգամ քիչ էր մնում ընկնել ծայրահեղականների ձեռքը¹¹⁵:

Թալանի գործում մեծ դեր էին խաղում նաև ադրբեջանմետ ռուս օդաչուներն ու հրամանատարները: Նրանցից էին Վլ. Կրավցովը, որն օգնել լուծարելու 82-րդ ավիագունդը (*մտա 30 կործանիչ բաժին հասավ Ադրբեջանին, իսկ հետո նա ստացավ զենքերայի կոչում և դարձավ ադրբեջանական ՌՕՌ-ի հրամանատար*)¹¹⁶, Ա. Պլեշը, որը բուրբերին տեղեկացնում էր ավիացիայի դուրս բերման մասին, հետագայում ադրբեջանական ՌՕՌ-ի տեղադրիչայի հրամանատարն էր, Յու. Պախտովը, ով մի քանի միլիոն դոլարի դիմաց վաճառում է 23-րդ մտոտիրազգային դիվիզիայի ողջ սպառազինությունն ու տեխնիկան, զենքերալիցետենանտ Ս. Ռ. Բեպպաևը, ով Թիֆլիսից գեներ էր փոխադրում Ադրբեջան¹¹⁷:

Ա. Պլեշը տասնյակ բռիչքներ էր կատարել՝ ուռները նետելով հայկական գյուղերի և քաղաքների վրա, իսկ վերջում խոցվել ու գերի էր ընկել: Նման վարձկաններ շատ կային: Իհարկե, կային և հակառակ հայացքներ ունեցող սպաներ, որոնք ամեն կերպ շարքից հա-

նում էին ինքնաթիռները: Ընդհանուր առմամբ, ադրբեջանական ՌՕՌ-ն խորհրդային «մեծ եղորդից օժիտ» ստացավ ավելի քան 150 մարտական և ռազմատուժնական ԹՄ-ներ հայկական կողմը ստացել էր մոտ 25 ԹՄ: Ադրբեջանը, իհարկե, ուներ նաև քաղաքացիական ավիացիա, ուղղաթիռներից ձեռքի նոնակներով կատարվում էին ոմբահարումներ:

1992 թ. փետրվարի 19-ին Վարազալի գյուղի մոտ հայտնվեցին ադրբեջանական օդուժի ուղղաթիռները¹¹⁸: Դրանք վարում էին նախկին ԽՍՀՄ-ի այլազգի օդաչուները, որոնք պայմանագրով ծառայության էին անցել Ադրբեջանի ՁՌ-ում: Նրանք օդային գործիքներով զգալի վնաս էին հասցնում և՛ ինքնապաշտպանական ուժերին, և՛ խաղաղ բնակչությանը: Ադրբեջանական բանակի ագրեսիան ուղեկցվում էր ուղղաթիռների՝ օրեցօր աճող հարվածներով: 1992 թ. ապրիլի 8-ին ադրբեջանական ՌՕՌ-ն «ստանում է» առաջին ինքնաթիռը՝ «Су-25»-ը, որը գրոհիչը օդաչու, լեյտենանտ Վադիֆ Բախտիար-օղլի Կուրբանովը¹¹⁹ գողացել էր Սիտալ-Չայ քաղաքում տեղակայված ռուսական օդանավակայանից¹²⁰: Ռուսական կողմը սկզբից ցույց է տալիս, որ անհանգստացած է կատարվածից: Հրաման էր տրված Վազիախի (Վրաստան) օդանավակայանից կործանիչներ պատրաստ պահել՝ փախստական գրոհիչին խփելու համար, սակայն ամեն ինչ ձևական բնույթ էր կրում: Իսկ «Су-25»-ն անցնում է ակտիվ գործունեության և մարտի 8-ից մշտապես ոմբակոծում Ստեփանակերտը: Այդ մարտում Կուրբանովը միայնակ չէր. ամենափոխը չորս մարտական ուղղաթիռ էր գրոհել հայկական գյուղերի վրա:

¹¹⁸ Նույն տեղում:

¹¹⁹ Հեղինակը սկզբնորոշում էր, որ ադրբեջանցի, առավել ևս ազերի քաղաքացիական ռազմական գործառնությունները արհեստականորեն սկսել են կիրառվել միայն 20-րդ դարի սկզբից: Ըստ բավականին բազմաթիվ հեղինակավոր աղբյուրների՝ նրանք անվանվել են կոլկասյան քաղաքներ:

¹²⁰ Ավերդը չենք համարում նշել, որ այս օդաչուն իր նախնին գնի հրամանատարը բնութագրում էր, որպես միջակից ցածր սպա:

¹¹⁴ Y. Aliyev. Arms Control Process in Transcaucasia // NATO School, Polaris Quarterly, Vol. 1, Issue 2, Summer 2004, p. 47.

¹¹⁵ Ядерное нераспространение / Под ред. Орлова В. А. Т. I. ПИР-Центр: М., 2002, т. 1, стр. 211.

¹¹⁶ Жирохов М.. Авиация в армяно-азербайджанском конфликте // www.airwar.ru

¹¹⁷ Նույն տեղում:

Այլ տվյալներով Ստեփանակերտ քաղաքի վրա առաջին ռոմբը նետվել է մայիսի 8-ին¹²¹։ Հավանական է, որ հենց Կուրբանովն է մայիսի 9-ին խփել հայկական «ԿԻ-40» ինքնաթիռը, որը Ստեփանակերտից դուրս էր բերում ձերերին և վիրավորներին։ Եթե սա ճիշտ է, ուրեմն սա Արցախյան գոյամարտի միակ օդային մարտն է։ Նկատենք, որ Կուրբանովի զոհն էին դառնում Արցախի խաղաղ բնակիչները։ Միայն մայիսի 8-ին և 9-ին նրա հարձակումից զոհվեց 30 և վիրավորվեց 120 մարդ¹²²։ Կուրբանովը Շուշիի ազատագրման հաջող օրը խնդիր է ստանում ղեկավարվող «օդ-երկիր» ղյասի հրթիռներով խոցել սուրբ Դավանչեցոց եկեղեցին, որտեղ մեծ քանակությամբ հրետանային արկեր էին գտնվում։ Նպատակն էր դեռնումացիայի միջոցով պայքարում առաջացնել։ Սակայն Ադրբեջանի ասպազա հերոսը չի կարողանում արդարացնել «փր ժողովրդի վստահությունը»։ 1992թ. մայիսի 7-ին ադրբեջանական հետևակն ու գրահատեխնիկան՝ երեք «Մի-24» մարտական ուղղաթիռների աջակցությամբ, հարձակվում են Ստեփանակերտի հարավարևմտյան հատվածի պաշտպանական դիրքերի վրա¹²³։ Հաջող օրը՝ ցերեկով, ադրբեջանական ուղղաթիռները, ներխուժելով Արցախի օդային տարածք, հարձակման են անցնում՝ ոմբակոծելով Մարտունու Ավդուռ, Մյուրիչեն, Նորչեն, Ասկերանի Շոշ և այլ գյուղերը¹²⁴։

1992 թ. մայիսյան հաջողություններից հետո բշնամին ավելի անգուսպ դարձավ։ Չկարողանալով մարտադաշտում հաղթել՝ նրանք փորձում էին վրեժ լուծել խաղաղ բնակիչներից։ Մայիսին ոմբակոծվել են Վերինշեն, Մյալարիս, Դագրազ, Ալբուլաղ և հայկական այլ գյուղերը, Ստեփանակերտ քաղաքը, Ասկերան և Մարտունի շրջկենտրոնները։ Կուրբանովի «Су-25»-ն այդ օրերին իրեն զգում էր

այնպես, ինչպես ամերիկյան «Թուշոդ ամրոցները»՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական ռազմաարդյունաբերական համալիրը ոչնչացնելիս։ Կուրբանովի անպատիժ քոչչոր, սակայն, երկար չի տևում։ Հունիսի 13-ին Ասկերանի բերդի մոտ հայ հրաձիգներից մեկն իր «Срела-2М» դյուրակիր ՋՀՀ-ով խոցում է նրա ինքնաթիռը։ «Су-25»-ի վրա «աշխատում» էր մահ Ա. Գանիելյանի «ЗСУ-23-4 Шалка» զենիթային ինքնագնաց կայանըը (ՋԻԿ)։ Կուրբանովի «վատակն» արժանի հակահարված է ստանում։ Հայկական ՀՕՊ առաջին միջոցները ձեռք էին բերվել Ստեփանակերտի 366-րդ մոտոհրաձգային գնդի ունեցած միջոցներից՝ դրանք էին չորսսական «ЗСУ-23-4 Шалка» կայանըներ, մուլցնան «Срела-10» կայանըներ և մի քանի հաստ «Срела-2М» դյուրակիր ՋՀՀ-ներ¹²⁵։ Մոտ մեկ ամիսից արդեն այդ միջոցները ունեին համապատասխան մարտական հաշվարկներ և կարող էին մարտական խնդիրներ կատարել։

1992 թ. մայիսի 13-ին Թրիխից Նախիջևան էր թռչում ռուսական բեռատար «Մի-26» ուղղաթիռը։ Ուղղաթիռը Դագվախի մոտակայանում վթարի է ենթարկվում, անձնակազմը՝ մայրո Մ. Վտեվոդինի հրամանատարությամբ, գտնվում է։ Զենոթյունն այդպես էլ չի կարողանում ստույգ պարզել վթարի իսկական պատճառները։ 1992 թ. մայիսի 26-ին բշնամին Ադրաբի կողմից Մարտակերտի վրա է արձակում «երկիր-երկիր» տիպի հրթիռներ¹²⁶։ Հուլիսին Մարտակերտի հա-

¹²¹ Պր ՀՕՊ-ի պետի գեկույցը՝ նվիրված Պր ՀՕՊ գործերի ստեղծման 10-րդ տարեդարձին, Ստեփանակերտ, 2002 թ., էջ 1։

¹²² Հարաբայան Ս., Դարարաղյան պատերազմ, էջ 44։ Հավանաբար խոսքը ՀՕՊ-ի «С-200» հրթիռների մասին է։ Բազմիցս նշվել է, որ Արցախում կիրառվել են նման հրթիռներ, սակայն ստույգ տեղեկություններ չունենք տեսակների և արդյունքների մասին։ Դրանց կիրառման արդյունավետությունը չստ կասկածելի է, քանի որ զենիթային հրթիռը, առանց լուրջ տեխնիկական կատարելագործումների, ղժվար է կիրառել ցամաքային նշանակետերին հարվածելու համար։ Նման հրթիռների կիրառության դիպքեր եղել են, սակայն դրանք հիմնականում կիրառվում են առանց լուրջ նշանակության (http://raspletin.ru/php/press-center/news/almaz_061221_02.php)։

¹²¹ Историческая справка о создании, становлении и развитии Войск ПВО ВС РА. Ер., 2007., стр. 2; Саркисян М. Нагорный Карабах: Война и политика (1990-1993 гг.). Ереван. 2010, стр. 172.

¹²² Жирохов. Авиация в арм М.яно...

¹²³ Հարաբայան Ս., Դարարաղյան պատերազմ։ Եր., 2001թ, էջ 34։

¹²⁴ Հարաբայան Ս., Դարարաղյան պատերազմ, էջ 36։

մար մղված մարտերում աղյուսեցանական ավիացիան գործում էր կազմակերպված և գրագետ: Բարձրագույնի վրա տեղակայված հայկական ուժերը ծանր կորուստներ են կրում ուղղաթիռների հարվածներից: Դրանց օդաչուներն այլազգիներ էին և զգացվում էր նրանց աֆրանական փորձը: Ինքնապաշտպանական ուժերը կորցնում են զենիթային միջոցները: Մարտերի ամբողջ ընթացքում աղյուսեցանական օդուժը ուղղաթիռներից բացի կիրառում էր նաև «Cy-25» գրոհիչներ և ձևափոխված ուսումնասիրտական «Մ-29» ինքնաթիռներ¹²⁷: Այդ ժամանակ հայկական կողմը ևս ունեցել էր հաղթանակներ: Հակառակորդը կորցրել էր որոշակի տեխնիկա, սակայն խիստ զգացվում էր զենիթային միջոցների պակաս: Հուլիսի 22-ին հայկական զորքերը ստացան առաջին ռադիոտեղորոշման կայանը և ձևավորեցին նոր գործառնա: Հուլիսի 31-ին հակառակորդի ինքնաթիռները մեծ բարձրությունից ուժեղացան են Ստեփանակերտ քաղաքը: Նույնը կրկնվում է օգոստոսի 5-ին¹²⁸:

Այնուհետև այդ ուժեղացումները դառնում են ավելի հաճախակի: Մեծ վնասներ էին հասցնում հատկապես «ԲԵԿ-250» և «ԲԵԿ-500» ուժային կասետները: Օգոստոսի 23-ին Ստեփանակերտ քաղաքի վրա զգված «ԲԵԿ-500» ուժային կասետից զոհվում է 14 խաղող բնակիչ: Նույն ամսի 31-ին նետվում է 12 *(այլ տվյալներով՝ 20)* նմանատիպ ռուսեր զոհվում է 16 և վիրավորվում՝ 121 մարդ¹²⁹: Մեկ շաբաթվա ընթացքում քաղաքի վրա նետվում է ավելի քան 20 տոննա ռուսեր¹³⁰: Օգոստոսի 20-ին աղյուսեցանական զինուժի կողմից Մարտակերտի Մահմանա, Գյուլաբաղ և Հարությունագոմեր գյուղերի վրա հարձակման ժամանակ կիրառում է նաև օդուժ: Նույն ամսի

¹²⁷ Հարարքյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, էջ 48-50:

¹²⁸ Հարարքյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, էջ 56:

¹²⁹ Աղաջանյան Մ., Միմսայան Ս., Ասատրյան Է.: Աղբյուրներ Ղարաբաղի ժողովրդի դեմ. ազրեխայի քաղաքա-իրավական հետևանքները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա, էր., «Նաիրի», 2006, էջ 98-108:

¹³⁰ Հարարքյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, էջ 61-62:

25-ին ՀՀ-ից Արցախ տեղափոխվեցին երեք «Օճա» ԶՀՀ-ներ և ՀՕՊ-ի այլ տեխնիկա, մասնավորապես նոր տեղորոշման կայաններ և այլն, որոնք կարող էին իրադրությունը կարող փոխել: Սեպտեմբերի 4-ին բուրբ-բարձրները Աղղամի կողմից մեծաքանակ ուժերով ու միջոցներով հարձակվում են Մարտունու Ավղուռ, Հացի և Նորշեն գյուղերի վրա: Հիմնական ուժերին աջակցում էր նաև օդուժը:

«1992-ի աշնանը, մախկին խորհրդային ՀՕՊ սպառազինության ու տեխնիկայի ընդունմանը զուգընթաց, Հայաստանում միայն սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կազմավորվեցին հակաօդային պաշտպանության հինգ զորամասեր, որոնք դարձան ՀՀ զինված ուժերի հակաօդային պաշտպանության համակարգի հիմքը: Նրանց մարտկոցները շուտով տեղակայվեցին հանրապետության սահմաններում:

Հայաստանի բուժերի զինվորական ամբիոններում այս զորատեսակի սպաներ չէին պատրաստվում, և սպայական ծառայության գորակոչվեցին ֆիզիկայի, մաթեմատիկայի, ռադիոֆիզիկայի ու էլեկտրոնիկայի մասնագետներ, ովքեր արձակման կայանքներ առաջին անգամ հայկական բանակում տեսան: Սակայն նրանք հիմնաբար գիտելիքներ ու նվիրում ունեին, արագորեն յուրազորին ՀՕՊ կազմակերպման մայրաավարությունը, և նրանց շնորհիվ հայկական օդային սահմանները դարձան անբափանց, ու Հայաստանում ռուս-հարվեցիյի միայն Կապանն ու Վարդենիսը:

Հայաստանում հակաօդային պաշտպանության զորքեր ու համակարգ կազմավորելու համար հարկ էր ՀՕՊ կազմակերպման տասնամյակներով մշակված մարտավարությունում համակարգային փոփոխություններ կատարել: Սարքին տեխնիկայի ու սպասարկության քանակը բավարար չէր օդային սահմանները պահպանելու համար, և հակաօդային պաշտպանության զորքերի հրամանատարությունն ստիպված էր մեկտեղել ՀՕՊ օբյեկտային ու գորային միջոցները, ինչը կազմակերպական, մասնագիտական և ուսումնական առավել քան բարդ գործընթաց էր, որն իրականացվեց վարչության պետ, այսօր պահեստի գեներալ-մայոր Ալիկ Սարգսյանի հիմունքներով:

ղեկավարմամբ: Նաև՝ մինչ անկախացումը, Հայաստանում տեղաբաշխված հակաօղային պաշտպանության ամբողջ համակարգը, բնականաբար, ուղղված էր դեպի արևմուտք՝ Թուրքիա, իսկ այժմ պետք էր թեթև արևելք՝ Ադրբեջան»¹³¹:

Ավանառեսների վկայությամբ՝ 1992 թ. հոկտեմբերի 28-ի երեկոյան անհայտ մակնիշի ռազմական ինքնաթիռը ուժեղացրել է Գանձասարի վանքը՝ մի քանի տասնյակ չղեկավարվող հրթիռներ արձակելով վանքի վրա: Նույն օրը և նախորդ օրը երեկոյան հակառակորդի օդուժը մի քանի անգամ ուժեղացրել է նաև Ստեփանակերտը¹³²: Մինչև 5 կմ բարձրությամբ գործող մեր զենիթային միջոցների ակտիվությունը հակառակորդին ստիպեց փոխել մարտավարությունը և գործել մեծ բարձրություններից: Այդ պատճառով անհրաժեշտ էր Արցախում ունենալ նաև մեծ բարձրության և հեռահար միջոցներ: Նոյեմբերի 17-ին Արցախի երկկնքն արդեն պաշտպանված էր նոր ու հեռահար համալիրով: Այդ օրը «Крыг» ՁՀՀ-ը դրվելով մարտական հերթապահության մարտական հաղթանակ ունեցավ:

1993-ի հունվարին կազմավորվեց ՀՀ ՁՌՌ ռազմաօդային ուժերի և հակաօդային պաշտպանության միացյալ հրամանատարական կետը, իսկ սեպտեմբերին՝ Պաշտպանության բանակի զենիթային հրթիռահրետամային զորամասը, ինչն էսպես հեշտացրեց ՀՕՊ ստորաբաժանումների ղեկավարումն ու համակարգի գործողությունների արդյունավետության բարձրացումը:

Հայաստանը հետխորհրդային առաջին երկիրն էր, ուր ՀՕՊ օբյեկտային միջոցների ուղիղության հարցում կայանքները համատեղվեցին և կապվեցին ռադիոլոկացիոն միասնական համակարգին: Դա կազմակերպական, մեթոդաբանական, ուսուցման ու կապի կազմակերպման անչափ բարդ գործընթաց էր, որի նախադեպը ԽՍՀՄ-ում չկար: Փաստորեն, հայկական ՁՌ-երում միացյալ

ՀՕՊ և օդուժ զորատեսակի հիմքերը դեռ վաղուց են դրվել: 1992-ից սկսվեց նաև Հայաստանի օդային տարածքի հետախուզությունը:

1993 թ. հունվարի 19-ին հակառակորդի միանգամից 9 ինքնաթիռ ուժեղացրել է Ասկերանի շրջանը: Որոշ տվյալներով՝ դրանից երեքին ինքնապաշտպանական ուժերը խոցում են¹³³: 1993 թ. սեպտեմբերից արդեն Արցախում եղած ՀՕՊ միջոցների քանակն ու տեսակներն ինչպես էին նախկին կազմակերպված ռազմաճեղատ և էլեկտրոնային պաշտպանություն: Մարտի վերջին Արցախում հայտնվեց նաև «С-125» ՁՀՀ-ը, որը ավելի հզորացրեց երկրի պաշտպանությունը: Գրան հակառակորդը փորձում էր հակադրել ավելի կազմակերպված և հազվեցած հարվածներ: Ապրիլի 7-ին ադրբեջանական ինքնաթիռը 500 կիլոգրամանոց ռադար է նետում Մարտունու շրջանում գտնվող վրա¹³⁴: 1993 թ. օգոստոսի 19-ին երեք ադրբեջանական ինքնաթիռներ հարվածներ են հասցնում Ղափան քաղաքին: Իսկ օդաչուների ուժեղացրած սխալների պատճառով 1994 թ. մարտի 25-ին երկու ինքնաթիռ Հորադիզում հարվածում են նաև ադրբեջանական դիրքերին: 1994 թ. ապրիլի 13-ին ադրբեջանական մի քանի ինքնաթիռներ, քաղաքից խախտելով օդային սահմանը, ուժեղացրել են Ստեփանակերտը և այլ բնակավայրեր¹³⁵: Այդ օրն այն ոչ եզակի օրերից էր, երբ կատարվում էին անգամ մի քանի տասնյակ մարտական թռիչքներ: Նման ուժեղացումները դարձել էին սովորական:

1994 թ. «Мил-25Р» ուժեղացրել են ուժեղացրել են Հաղորդ ու Ստեփանակերտ քաղաքները և, չնայած մեծ ավերածություններին, այնուամենայնիվ, սպասված արդյունավետությունը չեն ստացել: Մի անգամ մույնիսկ այլազգի օդաչուները հետևյալ մարտավարություն են փորձարկել, վերևից բավականին բարձր և արագ թռչող երկու «Мил» են մտնում Ստեփանակերտին, մինևույն ժամանակ,

¹³¹ Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Եր., 2012, էջ 79:

¹³² Հարաբյան Ա., Ղարաբաղյան պատերազմ, էջ 80:

¹³³ Саркисян М., Нагорный Карабах: Война и политика (1990-93гг.). Ереван, 2010, стр. 189.

¹³⁴ Հարաբյան Ա., Ղարաբաղյան պատերազմ, էջ 103:

¹³⁵ Հարաբյան Ա., Ղարաբաղյան պատերազմ, էջ 174:

թոչելով բավականին ցածր, քաղաքին են մոտենում մակ երկու, հավանաբար «Су-24» (*կամ*՝ «Су-25») ինքնաթիռներ: Դա ծուղակ էր ՀՕՊ-ի համար, սակայն «ներքևի» ինքնաթիռները հայտնաբերվում են, իսկ «վերևի» ինքնաթիռները չեն կարողանում դիպուկ ոմբանետում կատարել:

Մինչև հրադադարի հաստատումը ադրբեջանական ինքնաթիռները մշտապես հարվածում էին Ստեփանակերտ քաղաքին: Եթե անգամ ճակատներում տիրում էր հարաբերական անդորր, միևնույն է, մայրաքաղաքը պիտի ենթարկվեր հարվածների: Քաղաքը ենթարկվել է ոչ միայն ինքնաթիռների, այլ հրետամու մասսայական ոմբահարմանը: 1991 թ. վերջից մինչև 1994 թ. գարունը Ստեփանակերտ քաղաքի վրա նետվել է «Դքաձ» համազարկային կայանքի ավելի քան 20 000, «Алазан»-ի մոտ՝ 2700 հրթիռներ, ավելի քան 1900 հրետանային այլ արկեր, 180 ոմբային կասետ և 500 կիլոգրամանոց ումբ, այդ բոլորն վակուումային ումբեր¹³⁶: Ադրբեջանական օդուժի կատարած թռիչքները մոտենում են 10 000-ի¹³⁷, ինչն անմախալեպ է տարածաշրջանի համար:

Հարկ է ասել, որ հակառակորդն անպատիժ չէր գործում. նրա որոշ ինքնաթիռներ խոցվել էին, իսկ որոշ հարվածներ էլ խափանվել: Ինքնապաշտպանական ուժերը ոչ միայն սովորել էին դրանց ժամանակին հայտնաբերել, այլ մակ զինվում էին համապատասխան միջոցներով: 1992 թ. աշնան Արցախում արդեն հայտնվել էր «Կրչր» ՁՀՀ-ն, որը զգալիորեն ավելի հեռահար և բարձրահար էր, քան «Օսա»-ն, որի պատճառով ադրբեջանական օդայունները թռիչքների

¹³⁶ Агаджанян М., Асатрян Э., Минасян С.. Азербайджан против Нагорного Карабаха. Ер., 2006, стр.103.

¹³⁷ Թվերը ստացել ենք հաշվարկային մեթոդով: Երբեմն ադրբեջանական ավիացիան կատարում էր օրական 10 և ավելի թռիչք: Նման ակտիվությամբ թռիչքներ են կատարվել 1992-1994 թթ., դրանից առաջ կատարված թռիչքները եղել են քիչ պակաս: Միջինը ընդունելով 5-6 թռիչք օրական, պատերազմի ավելի քան 1800 օրերի դեպքում ստացվում է 9000-10800 թռիչք: Դրանց մոտ կեսը կարելի է համարել մարտական թռիչքներ:

մարտավարությունը փոխել էին: Նկատենք, որ «Կրչր»-ի մասնագետներ մենք չունեինք, սակայն հայ հակաօդայինները, որոնցից շատերը բարձրագույն տեխնիկական կրթություն ունեին, համալիր մի քանի շաբաթում յուրացրեցին և արդեն ինքնաթիռներ էին խոցում:

Դեռ 1992 թ., երբ առաջին անգամ ոմբակոծվեց Կապանը, այդ ուղղությամբ կազմակերպվեցին ՀՕՊ-ի միջոցների տեղադրությունը: Մասնավորապես, մի քանի 57 մմ-ոց «С-60» հրանոթներով սարքավորվում էր համալիր:

Ադրբեջանական ինքնաթիռների խոցման դեպքերի վերաբերյալ տարբեր աղբյուրներ տալիս են տարբեր տվյալներ: Ադրբեջանական կողմը խոստովանել է 10 կորցրած ինքնաթիռի և ուղղաթիռի մասին: Հեղինակավոր ռուս փորձագետ, քաղաքական և ռազմական վերլուծությունների ինստիտուտի տնօրենի տեղակալ Ա. Խրամչիխին¹³⁸ նշում է 14-16 ինքնաթիռի և 5-6 ուղղաթիռի խոցման մասին¹³⁹: Մեր ուսումնասիրությունները, սակայն, ցույց են տալիս, որ դրանք մոտ են 30-40-ին:

| Հ/Հ | Տեղը, ամսաթիվը | Խոցման միջոցը | Օդանավի մակնիշը/տեսակը |
|-----|-----------------------|--------------------------|-------------------------|
| 1 | -1989 թ.-ի հունիսի 14 | դյուրակիր ՁՀՀ- | «Ми-8» |
| 2 | Շուշի, հունվարի 28 | դյուրակիր ՁՀՀ | «Ми-8» |
| 3 | 1991 թ. մարտ | «Стрела2» ¹⁴⁰ | «Ми-8» |
| 4 | Դաջար-Կարմիր | «Шилка» ¹⁴¹ | ուղղաթիռ ¹⁴² |

¹³⁸ Александр Анатольевич Храмухи́н - заместитель директора Института политического и военного анализа

¹³⁹ Храмухи́н А.. На кавказских фронтах – ситуация патовая. Пока...НВО. 2010-01-15.

¹⁴⁰ ՊԲ արխիվ, «ՊԲ ՀՕՊ-ի օպերատիվ հեռազանի գրանցամատյան», քիվ 151, էջ 56:

¹⁴¹ «Шилка» ՁԻԿ-երը քավականին արդյունավետ են կիրառվել Արցախյան գոյամարտում, դրանց քանակը մեծ չի եղել, որոնցից մեկը գրավվել էր Ադրբեջանցիներից (<http://3v-soft.clan.su/>):

| | | | |
|----|--------------------------------------|--------------------------------------|---|
| | Շուկա միջտարածքում, 1992 թ. ապրիլի 4 | | |
| 5 | -ապրիլի 8 | «Шилка» և «Стрела-2М» ¹⁴³ | «Ми-24» |
| 6 | -1992 թ. ապրիլ | ՀԽՄ-ի, «Шилка» | երկու ուղղաթիռներ |
| 7 | Մարտունի, մայիսի 15 | «Стрела2М» | «Ми-8» ¹⁴⁴ |
| 8 | հուլիսի 25 | «Оса-АК» կամ «Стрела2У» | ինքնաթիռ ¹⁴⁵ |
| 9 | Չղրան, Օգոստոսի 20 կամ 31 | - | «МиГ-25ПД» ¹⁴⁶ |
| 10 | -օգոստոսի 25-ին և 27-ին | «Оса-АК» | երկու ինքնաթիռներ, մեկը՝ Су-24 ¹⁴⁷ |
| 11 | -սեպտեմբերի 4 | «Оса-АК» | «МиГ-21» և «Су-25» |
| 12 | -սեպտեմբերի 17 | «Оса-АК» | «Ми-24» |
| 13 | Ստեփանակերտ, սեպտեմբերի 20 | «Оса-АК» | ինքնաթիռ |
| 14 | Լիսազոր, հոկտեմբերի 5 | «Оса-АК» | ինքնաթիռ |
| 15 | Լաչին, հոկտեմբերի 8 | «Стрела-2М» | «Ми-24» |

¹⁴² Դեվրիկյան Տ., Երկրի պահապաններն ու տիրակալները (1-ին գիրք), Եր., 2008 թ, էջ 3:

¹⁴³ Դեվրիկյան Տ., Նշվ. աշխ., էջ 2:

¹⁴⁴ Տես՝ նույն տեղում:

¹⁴⁵ Ըստ աղբյուրների տվյալների Մարտակերտի տարածքում խոցված «МиГ» կործանիչի օդաչուն եղել է Կոնստանտին Վիցելը, ում փրկության համար իրականացվել է բացառիկ փրկարարական գործողություն: Այդ օդաչուն շատ փորձառու է եղել և մահացել հետագայում 1993 թ.: <http://vesti.az/news/133389/>

¹⁴⁶ Օդաչուն կ-ն Յու. Բելիչենկոն էր (15-րդ մարտական քոչվոր):

¹⁴⁷ Դեվրիկյան Տ., Նշվ. աշխ., էջ 10:

| | | | |
|-----|---|-----------------------|--------------------------------------|
| 16 | Ստեփանակերտ, հոկտեմբերի 10 | «Оса-АК» | «Су-24» ¹⁴⁸ |
| 17 | Մարտակերտ, հոկտեմբերի 28 | «Оса-АК» | «Ми-24» և «Л-39» |
| 18 | -հոկտեմբերի 31 | «Оса-АК» | «Су-25» կամ «Су-24» |
| 19 | Մարտակերտ, հոկտեմբերի 31 | «Стрела-2М» | ինքնաթիռ |
| 20 | Ստեփանակերտ | «Круг» | «Су-17» |
| 21 | Մարտունի, դեկտեմբերի 6 | «Стрела-10» և «Шилка» | «Су-25» |
| 22 | Առաջաձոր, դեկտեմբերի 6 | «Оса-АК» | «Ми-24» ¹⁴⁹ |
| 23* | Վարդենիս, դեկտեմբերի 11 | - | «МиГ-21» կամ «МиГ-25» ¹⁵⁰ |
| 24 | Առաջաձոր, 1993թ. հունվարի 14 | «Оса-АК» | ինքնաթիռ |
| 25 | Մարտակերտի ճակատ, հունվարի 15, Խաչենի ձորակ | «Оса-АК» | «МиГ» կործանիչ ¹⁵¹ |
| 26 | Մարտակերտի ճակատ, հունվարի 15, Սրխավենդ | դյուրակիր ՋՀՀ | ինքնաթիռ ¹⁵² |

¹⁴⁸ Այլ տվյալներով ինքնաթիռը «Су-25» է եղել: Օդաչուն մահացել էր, վառված փաստաթղթերից երևում էր միայն ամունը՝ Ալեքսանդր: Նույն ինքնաթիռի վրա, կամ նույն օրը այլ ինքնաթիռի վրա հրթիռներ է արձակել նաև «Круг» ՋՀՀ-ը:

¹⁴⁹ ՊԻ արխիվ, «ՊԻ ՀՕՊ-ի օպերատիվ հերթապահի գրանցամատյան», թիվ 148, էջ 3:

¹⁵⁰ ՊԻ արխիվ, «ՊԻ ՀՕՊ-ի օպերատիվ հերթապահի գրանցամատյան», թիվ 148, էջ 8:

¹⁵¹ Դեվրիկյան Տ.: Նշվ. աշխ., էջ. 10: Նշենք, որ համախ «МиГ-25»-ի տարբեր աղբյուրներում սխալմամբ անվանվում է «МиГ-21»:

¹⁵² Կա այդ իրողությունը հաստատող տեսաձայան, որը թագմիցս անգամ ցուցադրվել է հետոստատեսությանը:

| | | | |
|-----------|---|-------------------|-------------------------|
| 27 | Մարտակերտի ճակատ, հունվարի 15, Խաչենի ձորակ | «Օսա-ԱԿ» | ինքնաթիռ ¹⁵³ |
| 28 | - հունվարի 20 | «Կրքր» | «ԿԿ-25» ¹⁵⁴ |
| 29** | Կուսապատ, մարտի 23 | «Օսա-ԱԿ» | ուղղաթիռ |
| 30 | հարավարևելյան ճակատ, 1994 թ. հունվարի 12 | «Կրքր» | ինքնաթիռ |
| 31 | - հունվարի 23 | - | «ԿԿ-25» |
| 32 | հարավարևելյան ճակատ, հունվարի 31 | «С-60» | «МиГ-21» |
| 33 | - փետրվարի 2 | «С-60» | «ԿԿ-25» |
| 34 *** | - փետրվարի 17 ¹⁵⁵ | «Игла» և «Օսա-ԱԿ» | «МиГ-21» ¹⁵⁶ |
| 35 | Մարտակերտ Չայլու, | «Игла» | ինքնաթիռ ¹⁵⁷ |

¹⁵³ Հայկական կողմից կան տեղեկություններ, որ ինքնաթիռից կատապուլտ է եղել երկու օդաչու: Եթե դա հավաստի է, ապա կարելի է ենթադրել, որ ինքնաթիռը հավանաբար եղել է «ԿԿ-24»: Չնայած, որ շատ դժվար է ստույգ նշել վարձկան օդաչուների ամունները, սակայն ըստ որոշ տվյալների հավանական «ԿԿ-24»-ի օդաչուներից մեկն եղել է Ա. Չխաչյանի, որին հետագայում գերել են ինքնապաշտպանական ուժերը: Այլ տվյալներով այդ օդաչուն եղել է «МиГ-21»-ի օդաչուն: Սի բան ակնհայտ է, որ բոլոր աղբյուրներով այդ օրը նշվում է երեք ոչնչացված ինքնաթիռ:

¹⁵⁴ ՊԲ արխիվ, «ՊԲ ՀՕՊ-ի օպերատիվ հերթապահի գրանցամատյան», քիվ 149, էջ 1,2,6:

¹⁵⁵ Այլ տվյալներով դեպքը տեղի է ունեցել մեկ տարի անց՝ նույն օրը:

¹⁵⁶ Օդաչուն՝ քարար վարձկան Մ. Իշկևիչը, զարմացել էր, որ իրեն խոցել են: Լինելով հրահանգիչ և սովորեցնելով այլ վարձկանների՝ նա իր բռնիքով փորձել էր ցույց տալ, որ հայերը չեն կարող խոցել իրենց: Ապշած էր, որ այդ ստոմանախիթին լեռան վրա նստած շարքայինը ժամերով հերթապահություն է կատարել: Հետո պարզվեց, որ այս վարձկանը ԽՍՀՄ-ի ժամանակ եղել էր հայկական ՌՕՈՒ վարչության պետի տեղակալ գեղապետ Բ. Բարսյանի աշակերտ:

¹⁵⁷ Հասրաբյան Ս., ՊԲ զորատեսակները, ծառայությունները և առանձին ստորաբաժանումները դարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում: Ստեփանակերտ. 2010, էջ 122:

| | | | |
|----|--|--------|---------------------------|
| | ապրիլի 13 | | |
| 36 | Գորիս-Լաչին-Ֆիզուլի հատված, ապրիլի 23 ¹⁵⁸ | «Կրքր» | «МиГ-25РБ» ¹⁵⁹ |

* Աղբյուրազանցական ՌՕՈՒ-ները 1992 թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին կորցրել են 14 բոլոր սարք¹⁶⁰, որից 11-ը միայն՝ հունիսի 13-ից օգոստոսի վերջը¹⁶¹:

** 1993 թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին Արցախի տարածքում ինժեներական «Օսա-ԱԿ» համալիրով ոչնչացվել է չորսական ինքնաթիռ և ուղղաթիռ: Գրանցից մեկը ոչնչացվել է հունիսի 23-ին կան 26-ին՝ Մարտակերտի համար մղված մարտերի ժամանակ¹⁶², երկու ինքնաթիռ ոչնչացվել է հուլիսի 22-ին Աղյաձի մատույցներում¹⁶³, մեկը եղել է «Ми-24» ուղղաթիռ և ոչնչացվել է սեպտեմբերի 3-

¹⁵⁸ ՊԲ արխիվ, «ՊԲ ՀՕՊ-ի օպերատիվ հերթապահի գրանցամատյան», քիվ 153, էջ 33:

¹⁵⁹ Ստեփանակերտի օդային տարածք ստան միանգամից չոր ինքնաթիռներ: «МиГ»-երը շատ մեծ արագությամբ էին անցնում (650-700 մ/վ), և միշտ չէ, որ հաջողվում էր նրանց խոցել, սակայն նրանք էլ չէին կարողանում իրենց խնդիրը կատարել: Օդաչուն կարողացավ անկարգելով իջնել և ապա-ովել հայկական կողմի հետապնդումից: Սա փառահեղ հաղթանակ էր, և առանձնահատուկ պետք է նշել, որ «Կրքր» ՋՀՀ-ն առաջին անգամ կիրառվել է հենց Արցախյան գոյամարտում և, շնորհիվ այդ մասնագետների, փայլեց՝ խոցելով աշխարհի ամենահզոր ինքնաթիռներից մեկին: Դեպքն ավիացիայի պատմության համար համաշխարհային նշանակություն ունի:

¹⁶⁰ «Հարաբաղյան ազատագրական պատերազմ» հանրագիտարան, եր., 2004, էջ 21:

¹⁶¹ Հասրաբյան Ս., Հարաբաղյան պատերազմ, էջ 63:

¹⁶² Հասրաբյան Ս., Հարաբաղյան պատերազմ, էջ 109: Ս. Հասրաբյան ՊԲ զորատեսակները, ծառայությունները և առանձին ստորաբաժանումները դարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում: Ստեփանակերտ. 2010, էջ 122:

¹⁶³ ՊԲ արխիվ, «ՊԲ ՀՕՊ-ի օպերատիվ հերթապահի գրանցամատյան», քիվ 150, էջ 18:

ին: Մեկ այլ ուղղաթիռ ոչնչացվել է հոկտեմբերի 29-ին Միջնավանի մերձակայքում:

*** Այստեղ նշված չէ 1994 թ. մարտի 17-ին «Կրք» համալիրով Մեհտիչեն գյուղի մերձակայքում սխալմամբ խցցված իրանական «С-130» ռազմատրանսպորտային ինքնաթիռի մասին: Այս դեպքը ևս քաջառիկ էր զուտ ռազմական առումով: Առաջին խցցումից հետո պոկվում է ինքնաթիռի թևը, որը ընդունվում է որպես առանձին նշանակետ, քանի որ թուրքերն այդ ժամանակ կիրառում էին մման մարտավարություն: Առանձնացված թևին արդեն խցցում է «С-125» համալիրը:

Նշված ինքնաթիռների և ուղղաթիռների տեսակների ու դրանց խցցման ամսաթվերի մեջ կարող են լինել որոշակի անճշտություններ, որոնք հիմնականում կապված են պատերազմող և ռուսական կողմերի տեղեկատվության իրարամերժության հետ: Քանի որ հաճախ խցցված օդանավերը մեծ մասամբ հասցնում էին անցնել ռազմաճակատի գիծը, ապա հնարավոր չէր լինում ստույգ ճշտել դրանց տեսակը: Հայկական կողմից որպես զենիթային միջոցներ՝ հիմնականում սահմանափակ քանակով¹⁶⁴, օգտագործվել են խորհրդային արտադրության «Срела-2М», «Срела-3» և «Ирпа» կրողի ՉՀՀ-ներ, «Шилка» ՋԻԿ-ներ, ինչպես նաև՝ «Оса», «Срела-10» և «Կրք» ՉՀՀ-ներ:

Արդրեջանական կորուստները թռիչքների առումով կազմում են 0.3 տոկոս, ինչը քաջառիկ է իրավիճակի համար, իսկ եթե վերցնենք միայն մարտական թռիչքները, ապա այդ կորուստները կկազմեն ավելի մեծ ցուցանիշ: Մեր ունեցած ինքնաթիռների կորուստները քանակի առումով կազմում են արդրեջանական ինքնաթիռների 20-25 տոկոսը:

Հայկական կողմի հաջողությունները, ինչպես տեսանք փայլուն էին, դրանք լրացնում են *հայոց փառավոր հաղթանակների շար-*

քը: Հարց է առաջանում, ինչով է պայմանավորված այս քաջատուրյունն ՕՀՄ-ՀՕՊ հակամարտության երկարամյա պատմության մեջ:

Ինչպես տեսանք, չնայած արդրեջանական ՌՕՌ-ի ակտիվությանը, դրանք երբեք չեն կիրառվել մասսայական¹⁶⁵: Գրեթե չեն կիրառվել գերճզդիտ հարձակման միջոցներ, ՌէՊ-ի ակտիվ միջոցներ, դեկավարման ու նշանառման ավտոմատացված համակարգեր և այլն: Արդրեջանական օդուժը երբեք չի կարողացել խցցել հայկական ՀՕՊ միջոցներ, չնայած որ դա ցանկացած օդուժի առաջնային խնդիրներից է: Հակառադիոլոկացիոն հրթիռներ կիրառելու փորձեր եղել են: Այսինքն՝ արդրեջանական ՌՕՌ-ները կիրառվում էին ավանդական խորհրդային մեթոդներով և տեխնոլոգիաներով: Գրան հակառակ՝ հայկական սահմանափակ միջոցները կիրառվում էին թավկվանքի գրագետ, ակտիվորեն խուսափում էին՝ օգտագործելով տեղանքի ընձեռած լայն հնարավորությունները: Տեղային պատերազմներում, անգամ երբ մարտի մեջ էին մտնում խորհրդային հզոր ՀՕՊ ստորաբաժանումները մեկ խցցված ինքնաթիռի վրա, արձակվում էր մինչև 8-10 հրթիռ: Որոշ եզակի դեպքերում՝ միայն 5-6 հրթիռ մեկ ինքնաթիռի համար: Հայ մասնագետները հակառակորդին խցցում էին առնվազն 4-րդ հրթիռով, մի քանի համալիրներ, ուրոնք, ի դեպ, վաղուց արդեն հանված էին սպառազինությունից, արձանագայում էին խցցումներ 5-6-րդ հրթիռներով: Մրանք ևս չտեսնված ցուցանիշներ են համաշխարհային պրակտիկայում: Հայ հակաօդայինների հաջողության հիմնական գրավակաճը եղած միջոցների գրագետ օգտագործումն էր, շարժունակությունը, դրանցով առաջ խուսափումը և նորարարությունները: Իհարկե, կա նաև այն հանգամանքը, որ Արդրեջանի դեպքում ավիացիան կիրառվել է լեռնային տեղանքում, ինչը դժվարացնում է արդյունավետությունը,

¹⁶⁵ Վերը բերված օրինակներից կարող եք համեմատել, որ օրական մինչև 30-40 մարտական թռիչքները մեծ արդյունք չեն կարող տալ: Հարվածներն անարդյունավետ են, երբ հատկապես հարվածում են բնակավայրերին կամ սովորական սպառազինությանը:

¹⁶⁴ Որոշ ՉՀՀ-ներ եղել են մեկ-երկու միավոր:

գուտ խորհրդային մոդելով՝ հիմնականում առանց ղեկավարվող սպառազինության: Սակայն, մինևույն է, դրանից հայկական կողմի վայրում գործողությունները չեն խամբում:

Այս ամենով հանդերձ՝ Արցախյան գոյամարտի օրինակը հասկանալի պատճառներով հիմք չի կարող դառնալ ՀՕՊ-ի հետագա զարգացման մոդելի համար: Մասնավորապես, խնդիրն այն է, որ մենք այսուհետ զարգացնելու ենք շեշտակի հարձակումներ, որոնց ժամանակ մոթիլ գրահախմբերին և ղեկավարող օտից աջակցություն է հարկավոր, իսկ ցամաքային ՀՕՊ միջոցները չեն կարող ապահովել մնալ պաշտպանություն:

Սակրավոր-ինժեներներ: Ազգային-ազատագրական պայքարի առաջին օրերից երկրապահ կամավորական տարբեր ջոկատների կազմում սկսեցին գործել նաև սակրավորները: Նրանք բուհերի ռազմական ամբիոններ ավարտած պահեստի սպաներ էին, մի քանի հոգի էլ՝ ԽՍՀՄ զինված ուժերում ծառայած նախկին սակրավորներ: Կային նաև պահեստի սպաներ¹⁶⁶:

Խորհրդային 7-րդ բանակի Երևանի դիվիզիայի ինժեներական ծառայության նախկին պետ, ՀՀ կառավարությանն առընթեր պաշտպանության կոմիտեի անդամ, գեղապետ Աշոտ Մարդանյանի ղեկավարությամբ 1992 թ. ապրիլի 26-ին ստեղծվեց ՀՀ ՊՆ ինժեներական ծառայության բաժինը, որը սեպտեմբերին վերակազմավորվեց ինժեներական գործերի վարչության:

ԼՂՀ-ում այդ ծառայությունը 1992 թ. գլխավորեց Ռոդնա Աղաջանյանը: Գեղապետ Ա. Մարդանյանը սկզբնական շրջանում ջոկատների հետ լինում էր սահմանի ամենատարբեր հատվածներում: Շուտով զինծառայության եկան խորհրդային բանակից վաղուց գործարկված գեղապետներ Բենիկ Նազիդյանն ու Բարսեղ Մայիլյանը: Տարիներ շարունակ նրանք պատվով ծառայեցին ազգային բանակում:

Միայն 1993 թ. սեպտեմբերի 5-8-ը արևելյան ռազմաճակատում սակրավորների գրագետ կազմակերպած պաշտպանության շնորհիվ հակառակորդը մարտի դաշտում կորցրեց ավելի քան 14 միավոր զրահատեխնիկա: 2000 թ. սեպտեմբերի 7-ը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում սահմանվեց ինժեներական գործերի օր:

Ռազմական ոստիկանություն: 1992 թ. մայիսի 5-ի ՀՀ ՊՆ հրամանով ստեղծվեց ռազմական ոստիկանությունը: Դ-րա խնդիրը կազմակերպելու, զորամասերում, սահմանամերձ շրջաններում օրինականության պահպանումն էր: Ոստիկանությունը նաև պետք է արդյունավետ պայքարեր իրավախախտումների դեմ: Ռազմական ոստիկանության առաջին պետը ներկայիս պահեստի գեղապետ Հովհաննես Հարությունյանն էր: Նրա, գեղապետներ Մերգել Աբարբեկյանի, Վահրամ Խոշոտումուն և Ներկայիս ՀՀ ոստիկանապետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարյանի ղեկավարման տարիներին ռազմական ոստիկանությունը դարձավ կայացած կառույց:

1.3.1. Մարտական գործողությունների ընթացքը և ավարտը

Շուշիի ու Լաչինի ազատագրումից հետո ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության աշարջությունը սկսեց թուլանալ: Միայն գնահատվեցին ձեռք բերված հաղթանակների ռազմավարական և օպերատիվ նշանակությունները: Ինչքան էլ ամուրանալի լիներ Շուշիի կրակակետի վերացման բարոյա-հոգեբանական նշանակությունը, միևնույն է, հակառակորդի հիմնական խնդրվորումները չէին կրել պարտություն, առավել ևս ջախջախված ու ոչնչացված չէին:

1992 թ. հունիսի 12-ին ժամը 17⁰⁰-ին ռազմաճակատի հյուսիսային, արևելյան և հարավարևելյան (120 կմ) ճակատում ավելի քան 150 միավոր զրահատեխնիկայի աջակցությամբ ադրբեջանցիները լայնածավալ հարձակում սկսեցին: Գլխավոր հարվածների թիրախն

¹⁶⁶ Գեներալ-մայոր Ադրյան Ռ. իշխողությունները:

ի ին ընտրվել Աստվերանի, Կիչան-Քուլատակի և Շահումյանի շրջանի հյուսիսարևելյան հատվածները:

Հատկապես ուսանելի է հյուսիսում աղբրեջանցիների ձեռնարկած հարձակումը, որը Արցախյան գոյամարտում զրահատեխնիկայի զանգվածային օգտագործումը ընթացքից հարձակման առաջին խոշոր օրինակն էր:

Հունիսի 12-ին աղբրեջանցիները Խանլարի ու Նավթալանի շրջաններից հարված հասցրին Շահումյանի շրջկենտրոնի ուղղությամբ: Հարձակման անսպասելիության պատճառով աղբրեջանցիները կարողացան ճեղքման տեղամասերում զրահատեխնիկայի ու կենդանի ուժի մինչև 15-ապատիկ առավելություն ստանալ՝ վատ սպառազինված և զինամթերքի զգալի կարիք ունեցող ինքնապաշտպանական ուժերի նկատմամբ:

Հունիսի 15-ի ինքնապաշտպանական ուժերը հակահարվածով փորձեցին վերականգնել իրադրությունը: Աստվերանի ուղղության վրա համառ մարտերից հետո հաջողվեց արգելափակել ճեղքումը, սակայն հյուսիսում նույնն անել չհաջողվեց: Հունիսի 17-ից հունիսի 9-ը աղբրեջանցիները ռազմական գործողությունները տեղափոխեցին Մարտակերտի շրջանի տարածք: Նրանք սպառնում էին փակել Մարտակերտ-Մտեփանակերտ օպերատիվ-ռազմավարական նշանակության մայրուղին, որով Շահումյանի չգրավված հատվածն ու Մարտակերտի շրջանը կմեկուսացվեր ինքնապաշտպանության հիմնական ուժերից: Հունիսի երկրորդ կեսին աղբրեջանցիները իրենց ուշադրությունը կենտրոնացրին ճակատի հյուսիս-արևելյան հատվածում, որտեղ կարողացան զրավել Մարտակերտի շրջանի դաշտային մասն իր խոշոր բնակավայրերով և սպառնում էին շրջկենտրոնին:

Հունիսի 18-ին ԼՂՀ տարածքում արտակարգ իրադրություն հայտարարվեց, իսկ հունիսի 20-ին անցկացվեց մասնակի զորահավաք: Զորակոչի ենթակա էին 18-40 տարեկան զինապարտ սերժանտները, զինվորներն ու զորակոչիկները, մինչև 50 տարեկան սպաները, 19-30

տարեկան կանայք, նաև մասնագիտական հատուկ պատրաստություն ունեցող բուժքույրեր և ռազմական նեղ մասնագետները:

Հուլիսի 4-ին աղբրեջանցիները սկսեցին Մարտակերտ քաղաքի գրավման ռազմագործողությունը: Հարձակումն ընթանում էր երեք հիմնական ուղղություններով Լեմինգալանից, Կարբոնավանից ու Փափոավենդից՝ ավելի քան 2000 հետևակայինների և 70 միավոր զրահատեխնիկայի աջակցությամբ: Մարտական գործողությունների ամբողջ ընթացքում քաղաքը ոմբակոծում էին «Сy-25» ինքնաթիռները, աջակցում էին նաև ուղղաթիռները, որոնք վարում էին խորհրդային փորձառու օդայուները:

Հուլիսի 9-ին բշնամին հարձակումը դադարեցրեց և մեծ մասշտաբի վերախմբավորումներ կատարելով պատրաստվում էր նոր հարձակման: Հունիսի 10-ի դրությամբ ռազմաճակատի գիծն անցնում էր Դիմրոն-Գյուլաբաղ հատվածով:

Բացի այդ, աղբրեջանցիների ժամանակավոր հաջողությունները պայմանավորված էին նրանով, որ 1992 թ. մարտից ռազմական գերատեսչությունը վերահսկող Ազգային ժողովրդական ճակատի (ԱԺԾ) կողմից արագացվել էին Անդրկովկասյան զինվորական օկուպանտի (ՁՕ) շրջա մոտոհրաձգային դիվիզիաներից փոխանցվող տեխնիկայի ու սպառազինության քազալի վրա գորամասերի կազմավորման ու ծավալման տեմպերը: Հետ կանչվեցին խորհրդային բանակում ծառայող աղբրեջանցիները: Թեև որոշ ուշացումով, սակայն սկսվեց անվերահսկելի կազմավորումների զինաթափումը:

Աղբրեջանի նախագահ Ա. Էլչիբեյը հասկանում էր, որ իշխանությունը կարող է պահպանել միայն ռազմական հաղթանակներով ու սկսել էր բանակ զորակոչել նույնիսկ 16-ամյա պատանիների: Զուլակոչելի պլանները չէին կատարվում, ուստի դրանց անցկացման ժամկետները երկարաձգվում էին: Արդյունքում, փաստորեն, վերացան աշնանային և գարնանային զորահավաքները, փոխարենը գործում էր ամենօրյա զորահավաք: Այս պայմաններում ահավոր չափերի հասավ Աղբրեջանին համակողջ երկրներից վարձկանների ներմուծումը: Հակամարտության մեջ օգտագործվելու նպատակով բան-

տերից ազատ արձակվեցին նույնիսկ ամենածանր հանցագործությունների համար դատապարտվածները: Աղբյուրները հսկայական նյութական օգուտը ստացավ իրեն համակրող երկրներից:

Նման բարդ պայմաններում ԼԻՂ-ում ծագում էր պետական կառավարման համակարգը վերակառուցելու և կատարելագործելու անհրաժեշտություն: Այդ առումով ձեռնարկված ամենագլխավոր քայլը, ինչպես վերը նշվեց, օգոստոսի 15-ին Պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ) ստեղծումն էր: ՊՊԿ-ին հանձնվեցին նաև ԼԻՂ Նախարարների խորհրդի բոլոր գործառնությունները: Այսինքն՝ երկարամատն ռազմական լիարժեք կառավարում ստեղծվեց:

Կարճ ժամանակում կատարվեց ՁՈՒ-ի կառուցվածքային վերակազմավորում: Հանրապետության տարածքում ստեղծվեց վեց պաշտպանական շրջան, որոնք պետք է ունենային ժամանակակից կամուսավոր զինված ուժերին հատուկ սխեմատիկ կառուցվածք: Հրամանի պահանջներին համապատասխան՝ ձևավորվում են գունաբանական (դիվիզիոններ), վաշտեր (մարտկոցներ), դասակներ և ջոկեր: Մարտական ստորաբաժանումների առկայության պայմաններում ռազմական գործողությունների մշակված ծրագրերը իրագործվում էին միասնական հրամանատարության ներքո, որը տվյալ փուլում հաջողության հասնելու, թերևս, գլխավոր երաշխիքն էր դիտվում: Սակայն դրանց արդյունքները անմիջապես չէ, որ պետք է շոշափելի դառնային: Աղբյուրացիները իրենց ձեռքում էին պահում ռազմավարական մախաձեռնությունը և շարունակում էին հարձակումը՝ հատկապես հյուսիսում:

Օգոստոսի սկզբին բշնամու հարձակումը վերսկսվեց: Օգոստոսի երկրորդ կեսին աղբյուրացիները շոշափելի հաջողության հասան հյուսիս-արևմուտքում՝ Վաղուհասի ուղղությամբ, որը նրանց ակտիվ գործերը հնարավորություն տվեց Դոնրոն-Գյուլաթաղ գծում:

Այս փուլում աղբյուրացիական օդուժի առջև դրված խնդիրը փոխվեց: Օգոստոսի կեսերից աղբյուրացիները ձեռնամուխ եղան Ստեփանակերտի ու այլ բնակավայրերի սխտեմատիկ մղբակոծություններին: Օդային զանգվածային հարվածներն իրականացնում էին

«ՇԿ-25» գրոհիչները, «ՄիԳ-21», «ՄիԳ-25» կործանիչները, ռազմաուսումնական «Ս-29» ինքնաթիռները: Այս ընթացքում բշնամին գրավեց Արծվաչենը:

Մեծաթիվ զոհերի գնով՝ օգոստոսի 26-ին աղբյուրացիները գրավեցին Մարտակերտ-Քելբաջար ռազմավարական նշանակություն ավտոմայրուղին, իսկ սեպտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերային ուժով հրթիռ-հրետամային պատրաստությունըց հետո գրավեցին Կոնդուտ և Պողոսազոմեր գյուղերը: Սակայն այստեղ զգացնելով աղբյուրացիական իշխանությունների մոտ պատերազմի ռազմավարության հարցերում միասնական մտեղցումների բացակայությունը: Օգոստոսի սկզբին գլխավոր շտաբի պետ գեներալ-լեյտենանտ Վ. Բարչալյուի հրաժարականից հետո՝ հակառակորդը հրամարկի զարգացնել հաջողությունը հյուսիսում՝ հիմնական ջանքերը տեղափոխելով Լաչինի մարդասիրական միջանցքի գոտի¹⁶⁷:

Մահապարտների գումարտակը կանգնեցրեց Չղրան-Հարությունագոմեր-Վաղուհաս գծի սարալանջի երկայնքով դեպի Վանք գյուղը և Գոմածոր գոտեղ աղբյուրացիական զորամասի առաջխալցումը: Տեղանքը հուշում էր, որ տարածքի պաշտպանության հաջողությունը պետք է վճռեր գործողությունները Ասկերանի ու Ստեփանակերտի ուղղություններում: Մահապարտների համար իրադրությունը ծավալվեց բարեհաջող: Վատահելով ճախորդ օրը (սեպտեմբերի 2-ին) երեկոյան իրենց հետախուզության քերած տեղեկություններին (որոնք հեռացել էին մահապարտների առաջին գիծ հասնելու 2-3 ժամ առաջ և տեղակ չէին համարյա մասին)՝ աղբյուրացիները մեծաթիվ ուժերով, ինքնավստահ և անփութորեն հարձակում սկսեցին: Մի քանի անգամ ձեռքից ձեռք անցնելուց հետո սեպ-

¹⁶⁷ ԼԻՂ պաշտպանական բանակի հրամանատարությունը կատարեց մի շարք օպերատիվ միջոցառումներ: Ռազմաճակատի հյուսիսային հատված տեղափոխվեցին ԿՊԸ-ի 2-րդ և 3-րդ գումարտակները: Ուժերի վերախմբավորում կատարվեց Լաչինի միջանցքի ուղղությամբ, որտեղ հակառակորդի գերակշիռ ուժերի հարվածների տակ ինքնապաշտպանական ուժերը նահանջում էին դեպի «Կյանքի ճանապարհը»:

տները 26-ին ընկավ Չղրանը: Աղբբջանցիները, իրենց քանակական ու նյութական առավելություններն օգտագործելով, գրավեցին Մոխվենը, Կիչան, Վաղուհաս, Հարությունագոմեր գյուղերը: Ռազմաճակատի գիծը հասել էր Վանք-Առաջածոր-Ղազանչի բնագծին:

1992 թ. սեպտեմբերի երկրորդ կեսը դարձավ հակամարտության քարձակեսը: Հյուսիսում ծավալված մարտերին զուգընթաց՝ սեպտեմբերի 18-ին աղբբջանցիները միանգամից հարձակում սկսեցին ռազմավարականրեք ուղղություններով: Այս հարձակման հետ աղբբջանական բանակի հրամանատարությունը և քաղաքական ղեկավարությունը մեծ հույսեր էր կապում. Նրանց կարծիքով հաջողությունը պետք է վճռեր պատերազմի ելքը:

Առաջին հարվածն ուղղվեց Լաչինի մարդասիրական միջանցքի հյուսիսային կողմին:

Երկրորդ հարվածը հասցվեց Ղարաբաղի լեռնաշղթայի վրայով (ծովի մակարդակից 2500 մ բարձրության վրա) դեպի Շուշի ուղղությամբ:

Երրորդը՝ հասցվում էր հարավ-արևելքից՝ Մարտունի շրջակներուն ուղղությամբ:

Մարդասիրական միջանցքը փակվեց, քանի որ այդ ճանապարհով երթևեկությունը դարձավ վտանգավոր: Ծանր վիճակ ստեղծվեց Մարտունիում, որտեղից սկսեցին դուրս բերել կամանց, ծերերին ու երեխաներին: Գիությունը սպառնում էր վերածվել աղետի, սակայն անձնագոծ պաշտպանության հանդիպած հակառակորդը, իր վերջին ուժերը մարտի մեջ նետելով, սպառեց ռեզերվները և սեպտեմբերի 21-ին ստիպված էր պաշտպանության անցնել: Հարձակման դաշարեցումը կապված էր աղբբջանցիների հսկայական կորուստների հետ (միայն տանկային կորուստները կազմեցին ավելի քան 70 մեքենա): Թշնամու կորուստները մեծ էին նաև այն պատճառով, որ երկրի քաղաքական ղեկավարության կողմից հրահանգ էր իջեցվել ռազմագործողությունը «ցանկացած գնով» հաջող ավարտի հասցնել: Դասական խորհրդային մոդել, ուղղակի առանց որևէ հստակ գաղափարական պատրաստության:

Հուլիտները-դեկտեմբեր ամիսներին մարդասիրական միջանցքը դարձավ ռազմական գործողությունների հիմնական բառերաբեմը: Այստեղ աղբբջանցիները կարողացան գրավել Թոփաղուն լեռը, իսկ ինքնապաշտպանական ուժերը նրանց դուրս մղեցին այդ բարձունքից: Մարտեր սկսվեցին մարդասիրական միջանցքի հյուսիսում՝ Կոչազ լեռան ուղղությամբ:

Մի քանի օր Մարտունու շրջանի պաշտպանական դիրքերը կրթիտակոծելուց հետո աղբբջանցիները գրոհեցին Ավդալ-Գյուլափիլի ուղղությամբ և Ասկերանի Խրամորք գյուղի վրա, սակայն ոչինչի հասնել չկարողացան:

Սեպտեմբերի 26-ին Մարտակերտի ուղղությամբ «Արծիվ» գումարտակին փոխարինելու եկան «Արծիվ-2»-ի մարտիկները: Այստեղ բավարար ուժեր կենտրոնացրած ինքնապաշտպանական ուժերը նոյեմբերի 10-13-ին հարձակում սկսեցին դեպի հյուսիս-արևմուտք և ազատագրեցին Վաղուհաս, Հարությունագոմեր, Կոճողուտ գյուղերը և Չղրանի մատույցներում պաշտպանության անցան՝ հսկողության տակ առնելով Մարտակերտ-Քելբաջար մայրուղին:

Կիչան-Վաղուհաս բնագծում պաշտպանական բանակի անձնուրաց գործողությունների շնորհիվ հակամարտությունը թևակոխեց շրջադարձային փուլ: Համառ և հակառակորդին հյուծած պաշտպանության շնորհիվ պայմաններ ստեղծվեցին հակահարձակման անցնելու և ԼՂՀ-ի շուրջը անվտանգության գոտի ստեղծելու դժվարին, սակայն ռազմավարական առումով անհրաժեշտ գործընթացի համար:

1992 թ. վերջին 1993 թ. սկզբին ճակատի ամբողջ երկարությամբ նկատվեց ռազմական գործողությունների ակտիվության անկում: Բայցում շարունակում էր անտեսել խաղաղ գոյակցության հնարավորությունը:

Նկատենք, որ 1992 թ. աշնանը աղբբջանցիները սկսեցին հրետակոծել Հայաստանի Հանրապետության քաղաքները (Կապան, Գորիս, Վարդենիս, Կրասնոսելսկ և Իջևան):

1993 թ. հունվարին վերախմբավորումներ կատարելով՝ աղբբջանական բանակը լայնածավալ նոր հարձակում սկսեց: Հայկական բնակավայրերի հիետակոծումն ակտիվացավ: Հունվարի 13-14-ին Աղբբջանը գործի դրեց իր ռազմական տեխնիկայի գրեթե ողջ զինամոզը՝ գրոհային ինքնաթիռներ, ծանր հրետանի, տանկեր ու ՀՄՄ-ներ: Հունվարի 13-ին քեժ մարտեր ծավալվեցին Մարտունու ճարտար գյուղի ուղղությամբ՝ ՌՒրյան լեռան մերձակայքում, որտեղ աղբբջանցիների գրոհը ետ մղվեց: Հարավային ուղղությամբ դեպի Ստեփանակերտ հետագա առաջխաղացման համար հենարանի ստեղծումն ապահովելու նպատակով՝ հունվարի 15-ին աղբբջանցիները հարձակում սկսեցին հյուսիսում՝ Չլդրան-Սրիսավենդ շրջան: Հարձակման մեջ ներգրավվեցին 703-րդ ՄՀ քրիզայի, ծովային հետևակի, Ներքին զորքերի և Թարթուսի աշխարհագրային գումարտակի զորամասերը: Նույն օրն աղբբջանցիները հարձակում ձեռնարկեցին Լաչինի մարդասիրական միջանցքի հարավում: ՌԻ քեժ հայկական կողմը բավական կորուստներ ունեցավ, աղբբջանցիները չկարողացան շատ, քեժ քիչ էական արդյունքի հասնել: Փաստորեն, ոչ մի տեղամասում քշմամին չկարողացավ շոշափելիորեն բարելավել դիրքերը: Իսկ քանի որ հարձակումներն ընթանում էին առանց սեփական կորուստների հետ հաշվի մտալու, աղբբջանցիները սպառեցին վերջին ռեզերվները և ուղղակի հարկադրված էին պաշտպանության անցնել:

Հունվարի վերջին ԼՂՀ պաշտպանական բանակի երամանատարության մշակած օպերատիվ պլանի համաձայն՝ հաջողությամբ իրականացվեցին մի քանի անսպասելի հակագրոհներ և կարճատև, բայց ուժգին հարվածներ: Գրանով կասեցվեց մի քանի անգամ գերագանգող ուժերի ճնշումը, ամրապնդվեցին զբաղված դիրքերն ու նախադրյալներ ստեղծվեցին հետագայում հարձակողական գործողությունների համար:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ռազմաճակատում 1992 թ. նոյեմբերին սկսված արմատական բեկումն ավարտվեց 1993 թ. փետրվարի սկզբին: Աղբբջանական կողմը վերջնականապես կորց-

րեց ռազմավարական նախաձեռնությունը և մի քանի անհամարձակ գործողություններից քացի, մինչև տարեվերջ այլևս ոչինչ չձեռնարկեց:

1993 թ. փետրվարի սկզբին ԼՂՀ ՊՁ-ն սկսեց իրականացնել Մարտակերտի շրջանի ազատագրման օպերատիվ պլանը: Ըստ այդ պլանի՝ նախատեսվեց հարձակումներ գործել երեք հիմնական ուղղություններով.

1. Վաղուհաս-Ջազվիկ-Թալիշ,
2. Չլդրան-Գրմբուն-Կուսապատ-Մարտակերտ,
3. Սրիսավենդ-Բաշ-Գյունեփայա-Ջանյաթաղ-Գյուլաթաղ-Մարտակերտ:

Բացի հյուսիսային ուղղության ինքնապաշտպանական ուժերից, հարձակման մեջ ներգրավվելու էին նաև ԿԳՇ-ի և Հայաստանի Հանրապետությունից ժամանած կամավորական ուժերը:

Փետրվարի 5-ին հարձակման անցնելով՝ արցախյան ուժերը մի քանի օրում կոտրեցին աղբբջանցիների դիմադրությունը և դուրս եկան Մարտակերտ-Քեջրաջար մայրուղու Գրմբուն հատված:

Սրիսավենդ-Ջանյաթաղ ուղղությամբ գործող հայկական ուժերը (3-րդ և 4-րդ ՊՇ-ների ուժերի մի մասը, 54-րդ առանձին ՄՀ գումարտակը, վերջինից ձախ՝ ԿԳՇ-ի զորամասերի հետ համագործակցելու) փետրվարի 6-ին ազատագրեցին Սրիսավենդը և, հետապնդելով նահանջող աղբբջանցիներին, ընթացքից մտան Բաշ-Գյունեփայա: Ջարգացնելով հաջողությունը՝ փետրվարի երկրորդ կեսին ՊՁ-ի ուժերն ազատագրեցին Գրմբունը, հունվարյան հակահարձակման ժամանակ աղբբջանցիների կրկին զբաղված Վաղուհասը, Չափարը, Ջարդախաչը, Հաթեբը և լիակատար հսկողության տակ առան մայրուղին:

Դաժան մարտեր սկսվեցին Մարսանգի հիլդոհանգույցին տիրանում համար: Աղբբջանցիները կենտրոնացրել էին զգալի թվով տեխնիկա: Բացի այդ, քշմամին նահանջելիս պայթեցնում էր ճանապարհները, որը որոշակիորեն խոչընդոտում էր հայկական կողմին առաջին զժի մատակարարման հարցում: Հիլդոհանգույցը զբաղվելու

համար կազմակերպվեցին միաժամանակյա հարձակումներ՝ ճակատից ու քիկումքից: Հայկական ուժերի կողմից երկու ուղղություններով սկսված հարձակումը աղբրեջանցիների շարքերում խուճապ առաջացրեց, որի պատճառով ՊԲ-ի ուժերը մի քանի օրում գրավեցին նաև մարտավարական առումով նպաստավոր դիրքեր ռազմաճակատի հյուսիսային հատվածի մի շարք տեղամասերում: Այս բոլոր հարձակումների ժամանակ ճակատների ընդհանուր ուժերը երբեք չեն գերազանցել 3000-3500-ը, ընդ որում՝ ռեզերվները կազմում էին ոչ ավելի, քան 400-500 հոգի:

Շարունակելով հարձակողական ակտիվ գործողությունները՝ մինչև մարտի վերջերը ազատագրվեցին նաև Մեծշեն, Մաղախուզ, Մեխրաթաղ, Հակոբ-Կամարի և այլ բնակավայրերը: Մարտի երկրորդ կեսին դրությունը կտրուկ սրվեց Քելբաջարի ճակատում: Ստեղծվող իրավիճակը վերլուծելով՝ աղբրեջանական բանակի իրամասնատարությունը սկսեց գիտակցել, որ Մարտակերտի ուղղությամբ հարձակում տանող ՊԲ-ի զորամասերի առաջխաղացումը կանգնեցնելու փորձերը կատարյալ անհաջողության են մատնվում: Մարտակերտի ուժերի քիկումքին հարվածելու և ուշադրությունը հյուսիսարևելքից շեղելու համար էլ աղբրեջանցիներն ակտիվացրին քելբաջարյան խմբավորման գործողությունները: Ընդ որում, դրությունը լարվեց ինչպես հյուսիս-արևմտյան ճակատում, այնպես էլ մարդասիրական միջանցքի շրջանում: Այդ պատճառով էլ ինքնապաշտպանական ուժերը 1993 թ. մարտի 27 ապրիլի 5-ին իրականացրին Քելբաջարի ռազմական հենակետի ոչնչացման մարտական քաջատիկ գործողությունը:

Հարձակումը բաղկացած էր երեք հիմնական փուլերից.

Առաջին փուլում (մարտի 27-30-ի ընթացքում) հանկարծակի և հատուկ կազմակերպված հարվածով աղբրեջանցիները դուրս մղվեցին Աղդաբան, Չարեքտար, Նարեշուար, Թրազաբենդ, Քելիլյուրա, Չորման գյուղերի հենակետերից: Այս բնակավայրերի մի մասը՝ հատկապես Աղդաբանը, որը գտնվում էր մայրուղու երկայնքով հարված հասցնող Մ. Մելքոնյանի իրամասնատարության տակ գործող ու-

ժերի գործողության կենտրոնում, հենակետ դարձավ հարձակման հասցրող փուլի համար:

Երկրորդ փուլը սկսվեց մայիսի վերջում՝ հրետանային գրագետ, բայց կարճ պատրաստություններով (Քելբաջարից հյուսիս և հարավ) հակառակորդին ապակողմնորոշելուց հետո: Այնպես որ, կիր մարտի 31-ի առավոտյան սկսվեց գրոհը, հիմնական հարվածի հարցում մոլորեցված հակառակորդը կազմակերպված դիմադրություն չկարողացավ ցույց տալ, քեև մոտ 10 անգամ ավելի շատ ուժեր: Հարձակումը ծավալվեց վեց հիմնական ուղղություններով.

1. Խճուղու երկայնքով դեպի Քելբաջար հարձակվող ուժերը հիմնական ջանքերը կենտրոնացնելու էին ճանապարհից հարավ ու նրա երկայնքով,
2. Աղդաբանից շարժվելու էին դեպի Յանջակ ու հարձակումը շարունակելու էին Մոավի լեռների ուղղությամբ,
3. Խաչիկ թեփեց գրոհող ուժերը պետք է դուրս գային Աղջաբենդ-Կոնգուր լեռ բնագիծը և ամրամասին այնտեղ,
4. Վարդենիսից հարավ-արևելքից դեպի Քելբաջար գրոհող ուժերի առջև խնդիր էր դրվել հաջողությունը զարգացնել Իստիստի ուղղությամբ,
5. Չարքենդ և Ազիզու գյուղերից ևս մեկ հարված էր ուղղվում դեպի Քելբաջար՝ ճանապարհը պաշտպանող աղբրեջանցիների դիրքերը երկու կողմից շրջանցելով,
6. Նախատեսվեց ևս մեկ աջակցող հարված Ջուլ-Մեխլար-Մոավի լեռներ ուղղությամբ:

Օպերացիան ընթացավ մեծ արագությամբ, իրականացվեցին խոր հարվածներ, լայնորեն կիրառվեցին թևանցման ու շրջանցման գորաշարժերը: Եվ քանի որ ինչպես պատերազմի աբողջ ընթացքում, այնպես էլ այս ռազմագործողության ժամանակ ինքնապաշտպանական ուժերին չէր հաջողվել հասնել ճնշող գերազանցության, ուստի փուլը աչքի ընկավ հակառակորդի դիմադրության բազմաթիվ մեծ ու փոքր օջախների ստեղծումով: Թաղմելով Քելբաջարը և նահանջի ճանապարհ չունենալով (ապրիլի 2-ին գրավվել էր Քելբաջար-Գյան-

ջա ճանապարհի խաչմերուկը՝ քջամին դիմադրության օջախներ ստեղծելուց բացի, ուրիշ ոչինչ չկարողացավ անել:

Այսինքն՝ հայկական ուժերը, հանդիպելով հակառակորդի կազմակերպված դիմադրությանը, շրջանցում և արագ առաջանում էին մինչև նպատակոր նոր բնագիծ, իսկ այս օջախները վերացվում էին հաջողության հստակ ամրապնդումից հետո: Այս օջախների վերացումն էլ կազմեց օպերացիայի երրորդ փուլը, որի ընթացքում կարևոր էր ապրիլի 5-ին Օմարի լեռնանցքի բնագիծ դուրս գալը: Օմարի գրավումով ռազմական հիմնական գործողությունները դադարեցին ու միայն մի քանի օր դեռ շարունակվում էր դիմադրության փոքր օջախների սիստեմատիկ վերացումը: Սա այն մարտավարությունն էր կամ մարտավարության այն տարրը, որը կոչվում է բլիզկոյիզ և հիսա-կիկ կիրառվում էր գերմանական ու իսրայելական բանակների կողմից:

Ռազմական այս գործողության հաղթական ավարտը: Այս հարձակումը մեկ անգամ ևս ցույց տվեց մարտնչող հայի իրական դեմքը: Բացի այն, որ հատուկ ուշադրություն դարձվեց շինությունների և նյութական արժեքների պահպանմանը, ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, մեծ մարդասիրություն դրսևորելով, քաղաքացիական բնակչությանը հնարավորություն տվեց դուրս գալ հենակետերի վերածված իրենց բնակավայրերից:

1993-1994 թթ. մարտական գործողությունները, շեշտակիորեն տարբերվում էին նախորդ տարիների ռազմական գործողություններից: Ավանդարար ընդունված է համարել, որ լեռներում մենք միշտ լավ ենք կռվում, հարթավայրերում՝ ոչ այնքան հաջող: Անշուշտ, լեռներում իրականում հեշտ է ինքնապաշտպանական գործողություններ իրականացնելը, սակայն կրկնակի դժվար է նաև հարձակումներ զարգացնելը: Իսկ մենք լեռներում իրականացրել ենք նաև հարձակողական քաջադիկ գործողություն՝ Շուշիի ազատագրումը: Ահա, հենց այս տեսանկյունից է կարևոր 1993 թ. պատերազմաշրջանը, քանի որ այն հիմնականում ընդգրկում է մեծապես հարձակողական հարթավայրային մարտեր, հակառակորդի հզոր բազաների նկատմամբ, ո-

որոնք համարվում էին անառիկ, քանի որ ունեին ավելի մեծ զինուժ, քան հարձակվողները: Մարտակերտի ու Քարվաճառի մարտական փայլուն գործողություններից հետո եկավ ավելի մեծ գործերի ժամանակը:

Բազմիցս գրվել է այն մասին, որ պատերազմում, հիմնականում իր դիրքի շնորհիվ, ինչ կարևոր նշանակություն ուներ Ակն (Ադրան) քաղաքը: Ռազմավարական այդ դիրքում հակառակորդը կուտակել էր իսկայական զինուժ: Թշնամին, շնորհիվ ռազմավարական կարևորագույն դիրքի (ըստ էության, այս հարթակը գտնվում է Արցախի սրտում¹⁶⁶), սպառնում էին կենտրոնին ու քեներին՝ ցանկացած պահի ի վիճակի լինելով կարճ ճանապարհով դուրս գալ Մտեփանակերտի մատույցները: Բավական է ասել, որ Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևն այս քաղաքն անվանում էր «Կարարադի սիրտն ու հոգին», ադրբեջանական բանակի հույսը¹⁶⁷: Ռազմավարական այս հարթակի ունյացումը օրախնդիր հարց էր: Դրա իրականացման համար, սակայն, համապատասխան ուժեր, միջոցներ և նախապատրաստություններ էին հարկավոր, քանի որ դա ողջ պատերազմում հայկական ուժերի համար հարթավայրային առաջին մեծածավալ հարձակողական գործողությունը պիտի լիներ հակառակորդի անառիկ քաղաք-ամրոցի նկատմամբ: Այդ տեղից էին իրականացվել բոլոր տեսակի հարձակումները հայկական գյուղերի ու քաղաքների, Արցախի հայության վրա, 1918 թվականից ի վեր¹⁶⁸: Շուշիի ազատագրումից հետո հիմնականում այստեղից էր քջամին հրետանակվում Մտեփանակերտը:

1993 թ. հունիսի սկզբին սկսվեց ամառային պատերազմաշրջանը, որը, հիբրակի, համաշխարհային ռազմաբլետի պատմության մեջ կարող է մտնել որպես ամնախաղեպ օրինակ: Ակն քաղաքի ա-

¹⁶⁶ Խոսքը Արցախի իրական տարածքի մասին է և ոչ ԼՂԻՄ-ի:

¹⁶⁷ Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս., Հաղթանակներն ինչպես եղել են, Ազդակն 44, եր., 2008, էջ 110:

¹⁶⁸ Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), եր., 1999, էջ 228-240:

գաւազրման գործողությունը, որի նախապատրաստությունը սկսվել էր հունիսի 12-ին, ավարտվեց 40 օր անց՝ փայլուն հաղթանակով: Այս գործողությունն աննախադեպ է համարվում՝ նկատի առնելով մի քանի քաղաքապետներ: Անդրադառնանք դրանց:

Անեմից առաջ հարկ է նշել, որ այս խնդիրն ուսումնասիրողների զգալի մասը թույլ է տվել մի շատ կարևոր սխալ, երբ Ակն քաղաքի ազատագրումը հաջողված է համարել միայն չորրորդ “փորձից”։ Ջուտ ռազմագիտության տեսանկյունից քննելով՝ դա ոչ մի քննադատության չի դիմանում: Մասնավորապես, այստեղ բաց է թողնված մի շատ կարևոր հանգամանք. Ակնի ազատագրման գործողության հետ մեկտեղ իրականացվել է նաև Մարտակերտի ազատագրումը, որը չափազանց բարդ էր և ռազմավարական մտահոլացման առումով փացնում էր Ակնի գործողություններին: Այսինքն՝ ազատագրելով Մարտակերտը՝ հայկական ուժերը Ակնը լրիվ աքցանի մեջ էին առնում. սակ է՝ Ակնը հայերը կվերցնեին միայն այն ժամանակ, երբ լիարժեք տիրապետեին քաղաք տանող հիմնական ճանապարհներին և շրջակա գերիշխող դիրքերին, այդ թվում՝ Մարտակերտ քաղաքին: Առաջին հայացքից պարզ այս արժեքը հասկանալու համար հարկավոր է նախ իմանալ հայի ռազմական տաղանդի, քաջության և միաժամանակ անիրմառ զոհեր չտալու համարեղ սահմանումը: Անդրադառնանք նախ այն ամսաթվերին, որոնք որոշ ուսումնասիրողներ համարում են փորձեր:

Առաջին համարվում է ցփորձ հենց հունիսի 12-ը, ընդ որում՝ այն որակվում է անհաջող. այսպես, այդքեջանցի պատմաբանները նշում են, որ հայերը ամսի 15-ին կրկնեցին քաղաքը գրավելու իրենց փորձը և ետոյա մարտեր վարելով՝ դարձյալ հաջողության չհասան¹⁷²: Այստեղ մի տարրական հարց է առաջանում. ինչպե՞ս կարող էին արցախյան ինքնապաշտպանական ուժերն այդքան սակավ ու-

ժերով արդեն մեկ անգամ տապալված հարձակումը վերսկսել ընդամենը երեք օրից, երբ միաժամանակ Մարտակերտի ուղղությամբ ևս հարձակում էր իրականացվում: Նման գործողության համար հարկավոր էին նյութական և մարդկային հսկայական ռեսուրսներ, որոնք, բնականաբար, հայկական կողմը չուներ: Գա ղեռ քիչ է, արդյրեջանի պատմաբանները, երկրորդ փորձը ևս տապալված համարելով, գրում են, որ հայերը քաղաքը գրավելու երրորդ փորձը կատարեցին միայն հուլիսի 3-ին: Ժամանակը, ըստ էության, համընկնում է Մարտակերտի ազատագրման ամսաթվի՝ հունիսի 27-ի հետ: Սա նշանակում է, որ հայկական ուժերը իրականում լիարժեք հնարավորություն չունեին հարձակում իրականացնել միաժամանակ երկու ուղղությամբ: Ավելին՝ մնան խոշոր տապալումից հետո այդքան կարճ ժամանակահատվածում ուշքի չէին կարող գալ: Այսպիսով՝ կարելի է պնդել, որ իրականում այդ, այսպես կոչված, փորձերը, ըստ էության, իրենցից ներկայացրել են ընդամենը մեկ մեծ գործողության փուլեր ու խուսաճանքներ, որոնք նպատակ են հետապնդել մոտորեցնել հակառակորդին: Ահա այսպես են վարվում սակավ ուժերով հաղթողները, որոնք պարտության իրավումը չունեն:

ՀՀ ՊՆ Սեյրան Օհանյանը այս ամենի պատասխանը տալիս է մի դիպուկ դիտարկմամբ՝ մարտական նմանատիպ գործողությունները կոչելով դիրքային բարելավման մարտեր: Կռնկրեռ դեպքում մնան գործողությունների էությունն այն էր, որ մեկ տպավորություն էր ստեղծվում, թե հիմնական հարվածը Ակնի վրա է, և թուլացվում էր Մարտակերտի հատվածի հակառակորդի զգոնությունը, մեկ՝ հակառակը: Հայկական ուժերը, որոնք միասին վերցրած կազմում էին ոչ ավելի, քան 3000 հոգի, առավելագույնը 50 միավոր զրահատեխնիկայով¹⁷³ և մոտ 100-150 միավոր հրետանային միջոցներով¹⁷³ շեշտա-

¹⁷² Велимамедов М.: Оборона Агдама. 21.07.2011 http://samella.ru/publ/avtory/mamed_velimamedov/mamed_velimamedov_oborona_agdama/61-0-724

¹⁷³ Տվյալները վերցված են ՀՀ ՊՆ Սեյրան Օհանյանի, գեներալներ Ս.Կարապետյանի, Մ.Հակոբյանի և այլոց հետ իրականացրած հարցազրույցներից, ինչպես նաև ՊՆ և ՊԲ արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության ընդհանուր համադրությունների արդյունքներից:

կի հարվածներ էին հասցնում ու խուսանավում՝ հակառակորդին չբողոքելով ուշքի գալ: Հակառակորդն այդ արագըմբաց հարվածներին և ուժերի դիրքային փոփոխության մեջ չէր կարող կողմնորոշվել և խելամիտ պաշտպանություն իրականացնել: Միևնույն ժամանակ այս ամենը ենթադրում էր հետախուզություն մարտով, հակառակորդի պաշտպանության թույլ տեղերի որոնում և մոլորեցում: Հունիսի 27-ին ազատագրելով Մարտակերտը և նոր միայն հիմնական ուժերով կատարելով վերախմբավորում՝ իրականացվեց Ալկին խորտակման գործողությունը, որն էլ տևեց մոտ մեկ ամիս ու աչքի ընկավ նուրբ ու հաշվարկված հարվածներով, որոնց առանձին կանդրադատներ:

Անա ռազմարվեստի պատմության մեջ փայլում այս օրինակի ապացույցները, երբ կանխավ ավելի փոքր ուժերով իրականացվում է համաժամանակյա հարձակում երկու հաստվածների վրա և խուսանավման շնորհիվ հակառակորդը չի կարող կողմնորոշվել, թե դրանցից որն է գլխավորը: Համաշխարհային ռազմարվեստին հայտնի է Բրուսիլովյան ճեղքում հասկացությունը, որը ենթադրում է համաժամանակյա ճեղքում մի քանի հաստվածներում: Սակայն դա ենթադրում է հսկայական միջոցների կուտակում մի քանի ուղղություններում, և դա, ըստ էության, իրեն կարող է թույլ տալ միայն հսկայական միջոցներ ունեցող կողմը: 1993 թ. հայկական կողմի որդեգրած գործողությունները ավելի գրագետ և նրբանկատ իրականացում պահանջող մարտավարություն է, որի ղեկավարում (սա հատկապես կարևոր է ընդգծել) պարտությունները անթույլատրելի էին: Այս դեպքում միաժամանակ հարվածի հիմնական ուղղությունը մեկն է, ուղղակի այն շատ արագ կարող է փոփոխվել, և հակառակորդը կարող է չհասցնել դա հասկանալ: Սակավաթիվ մտան ուժերի խուսանավումները և վե-

¹⁷³ Պետք է հատուկ նշել, որ այդ ժամանակ հրետանային միջոցների նման քանակը ապահովվել էր նաև կենտրոնական ենթակայության հիմնական միջոցների՝ առաջնագծին մոտեցնմամբ, ինչը թավականին համարժեք քայլ էր:

բախմբավորումները ամենաբարդ գործերն են պատերազմների ժամանակ, որոնք իրականացվում են՝ հաշվի առնելով գործերի բարդ-նախոգեքանակն վիճակը, ունեցած միջոցների ընդհանուր քանակը, եղանակային պայմանները, ճանապարհների հնարավորությունները և այլն: Դու կարող ես շատ արագ վերախմբավորում անել, սակայն կունենաս բազում այլ խնդիրներ՝ կապված իրավիճակի փոփոխության, սեփական գործի տոկոսության, մերձաշենակ գործելու և այլ հարցերի հետ: Սակայն եթե վերախմբավորումները ճիշտ ու գրագետ անես, սպա հակառակորդը ուղղակի կարող է չհասցնել դրանց դեմն առնել:

Պատմությանը հայտնի են բազում դեպքեր, երբ մեկ ճիշտ վերախմբավորումն ու գորաշարժը հաղթանակ են ապահովել անգամ գերազանցող ուժերի նկատմամբ. հիշենք Գավգամելլայի, Կաննի, Մուստերլիցի օրինակները: Կան նաև հակառակ օրինակները. այսպես, Հայրենական մեծ պատերազմի սկզբին՝ 1941թ. հունիս-սեպտեմբեր ամիսների շեշտակի հաջողություններից հետո Հիտլերի սխալ վերախմբավորումների և գորաշարժերի հետևանքով գերմանական տանկային խմբավորումները հայտնվեցին ոչ ճիշտ տեղերում, որի հետևանքը եղավ Մոսկվայի տանուլ տված ճակատամարտը: Ավաձը գիտականորեն հիմնավորելու համար անդրադառնանք համաշխարհային պատմության այլ օրինակների:

Ալկին ազատագրումից մեկ ու կես տարի անց՝ 1994 թ. դեկտեմբերի 31-ին, ՌԿՎ ավելի քան 38 000-ոց զորախումբը՝ զրահատանկային հզոր խմբավորմամբ՝ 250 միավոր, հրետանու և օդուժի հզոր աջակցությամբ փորձեց շեշտակի գրոհով գրավել Գրոզնի քաղաքը: Հիմնական գրոհող ուժերի քանակը գործողության սկզբում կազմում էր ավելի քան 12 000 զինվոր ու սպա¹⁷⁴: Քաղաքը պահող ուժերը գնահատվում էին մինչև 8 000 ռուսակիցեր: Մինչև մարտի սկիզբը տևած գրոհը հիմնական մասով արտական կողմի համար խայտա-

¹⁷⁴ Трошев Г. Моя война. М.: 2001. стр. 44; Россия и СССР в войнах XX века. — М.: 2001. стр. 584.

ուակ հետևանքներ ունեցավ: Չնայած հզոր հրետանային ավերա-
ծույթյուններին, գործը շատ մեծ դժվարությամբ էր առաջանում: Չնա-
յած քաղաքը, ըստ էության, գրավվեց, սակայն մինչև օրս զրեքե ոչ մի
մասնագետ դա հաղթանակ չի համարել: Ռուսական ուժերի կո-
րուստները կազմում էին 1500-2000 զինծառայող:

Իրաբուն գտնվող ամերիկյան ուժերը ապրիլի 2004 թ. 4-ին
հանդիպեցին Ֆարուզա քաղաքի բնակիչների դիմադրությանը, որը
կոտրելու համար ձեռնարկված մեկամսյա ռազմական սահմանա-
փակ գործողությունները ոչ մի հաջողություն չբերեցին: Քաղաքը
պաշտպանող շուրջ 20 000 մարտիկները կարողացան հետ մղել ամե-
րիկյան մոտ 7000 հոգաճոց զորախմբի հարձակումները: Նույն թվա-
կանի նոյեմբերի 8-ին սկսվեց 12-օրյա ավելի հզոր հարձակում, որին
արդեն մասնակցում էր անգլոամերիկյան և իրաքյան ավելի քան 12
000 հոգաճոց զորախումբը, հսկայական ծանր տեխնիկա և օդուժ¹⁷⁵:
Երկրորդ փորձը պսակվեց հաջողությամբ, սակայն շատ դաժան
ոմբակոծությունների գնով: Մարտական գործողությունները իրակա-
նում ավելի երկար տևեցին. քաղաքի լիարժեք վերահսկողության հա-
ջողվեց հասնել միայն դեկտեմբերի կեսերին¹⁷⁶: Դաշնակիցները
կորցրին մոտ 100 զինծառայող:

Իրաքյան այս գործողությունը, իհարկե, որոշակիորեն ավելի
հաջողված էր, քան ռուսական ուժերի գործողությունները՝ Գոլզեին
գրավելիս, սակայն, ճշմարիտ, թե ինչու և ինչպես են դրանք համեմատե-
լի մեր գործողությունների հետ:

Վերը բերված համեմատությունը պատահական չկատարե-
ցինք: Թվական տվյալներով ռազմական տեսանկյունից համեմատե-

¹⁷⁵ Ricks, Thomas E. (2007). *Fiasco: The American Military Adventure in Iraq*.
United States: Penguin Books. p. 399; "Black Watch ordered to join US cordon
for assault on Fallujah". *The Independent* (London). 22 October 2004. Retrieved
23 May 2010.

¹⁷⁶ Ricks, Thomas E. (2007). *Fiasco: The American Military Adventure in Iraq*.
United States: Penguin Books. p. 400; "U.S. Won't Let Men Flee Fallujah". *Fox
News Channel*. 13 November 2004. Retrieved 19 May 2011.

լի գործոնները ստորև ներկայացնենք աղյուսակով ու համեմատա-
կան առանձին տվյալներով:

| Ա | Հարակիցների աժեք և միջոցներ | | | | Պաշտպանության միջոցներ | | | | աժեք և | | Պարտակերպ | |
|-----------|--------------------------------|-------------|----------------------------------|------------------------------------|---------------------------|-------------|---------|-------|---------------|---------------|-----------|--|
| | ձեռքի քանակը | զրահառիկներ | Հրետանի | Օդում | ձեռքի քանակը | զրահառիկներ | հրետանի | օդում | հարակիցների | պաշտպանների | | |
| Ռուս | 9000 | 70 | Մեղ- հա- կոթ 00- 100 | - | 6000- 8000 | 100 | 130 | 130 | 100- 150 | 5000 | | |
| Ամերիկացի | 10000 | 250 | 1000 | Մոյհա- կոթ 100 թողող սարք | 12000 | - | 50 | - | 1500- 2000 | 6000- 8000 | | |
| Ամերիկացի | 1000 | 50 | 300 | Մոյհա- կոթ 100 թողող սարք | 20000 | - | 50 | - | 100- 200 | 1500- 2000 | | |
| | 10 000- 12 000 | 80 | 1000 | Մոյհա- կոթ 200 թողող սարք | 4000 | - | 50 | - | 100- 500 | 1500- 2000 | | |

Ինչպես տեսնում ենք, ռազմարվեստի կանոնների համաձայն
հայկական բանակի ուժերն ու միջոցները բավարար չէին կարող լի-
նկ ամրացված քաղաք գրավելու համար: Եթե անգամ կենդանի ուժը
մասսայական չի մասնակցում քաղաքների գրավմանը, ինչը գրա-
զետ գործողությունների նախապայանն է, ապա գոնե կրակային ու
հարվածային միջոցների մասով հարկավոր է որոշակի խտություն
սպահովել, ինչը ռազմարվեստում պարտադիր պայման է: Օրինակ՝
1942-1943 թթ. Ստալինգրադի քաղաքային մարտերի ժամանակ 50-
60 զինվորին բաժին էր ընկնում մեկ հրանոթ, իսկ 400 զինվորին՝ մեկ

գրահամերթնա¹⁷⁷: Ահա, մարդկային գոեթի գնով հաղթելու բանաձևը՝ մատղացը, սա ռազմարվեստի վատագույն օրինակներից մեկը: 1967 թ. Իսրայելի կողմից Երուսաղեմի գրավման ժամանակ 2-3 զինվորին բաժին էր ընկնում մեկ հրետանային միջոց և մեկ գրահամերթնա¹⁷⁸: Ռազմական միջոցների նման խուռլուխներն ու հազցվածուրյունը բավարար է համարվում քաղաքների գրավման ժամանակ: Սա ռազմարվեստի դասական լավագույն օրինակներից մեկն է: Վերջը քերված օրինակներից կարող ենք հաշվել, որ Գրոզնիի գրավման ժամանակ 45-50 զինվորին բաժին է ընկել մեկական գրահամերթնա և 8-10 զինվորին մեկական հրետանային միջոց: Ամերիկացիներն ունեին ավելի հազցեցած միջոցներ՝ 7-8 հոգուս բաժին էր ընկնում մեկական հրետանային միջոց: Հայկական բանակը յուրաքանչյուր 15-20 զինվորի համար ուներ մեկական հրետանային միջոց: Եթե հաշվենք, որ գերտերությունները հիմնական ստորաբաժանումներին գինում են նաև այլ օժանդակ, հզոր կրակային միջոցներով, որոնցից հայկական բանակում չկար, իսկ իրենց հրետանային միջոցները ավելի հզոր էին ու ճկուն, ապա պատկերը կամբողջանա: Ռազմարվեստի կանոնների համաձայն՝ հայկական ուժերը չպետք է դիմեին քաղաքի գրավմանը: Օրինակ՝ 2008 թ. Յիսինվալ քաղաքի ուղղությամբ հարձակվող վրացական ուժերի յուրաքանչյուր 10 զինվորին բաժին էր ընկնում մեկական հրետանային միջոց¹⁷⁹:

Ընդհանուր գնահատականի համար նշենք մի քանի հետաքրքիր փաստ:

• Շուտ քաղաքների բնակչության և տարածքի չափերի առումով Ալկըն ավելի փոքր է, քան Գրոզնին ու Ֆալուջան, որոնք բավա-

կանին մոտ են իրենց չափերով: Սակայն քանի որ քաղաքից զատ նախնական փուլում մարտերը ընթանում էին նաև շրջակա գյուղերի համար և, ըստ էության, ազատագրվել է ոչ միայն քաղաքը, այլև շրջանը ընդհանրապես, ապա տարածքների չափերը լրիվ այլ են. Ալկնի շրջանի ազատագրված մասը (մոտ 850 կմ²) տարածքով 2 անգամ ավելի մեծ էր Գրոզնիից (մոտ 450 կմ²) և գրեթե նույնքան էլ Ֆալուջայից (մոտ 550 կմ²):

• Գործողությունների տևողությամբ ևս Ալկնի ազատագրումը ավելի կարճ է տևել՝ ընդհանուր դիրքային բարելավման մարտերով՝ մոտ 40 օր, իսկ երկու մյուս ղեպերում՝ 60-70 օր և ավելի: Այսինքն՝ մարտական գործողությունների պլանը ավելի լավ է նախապատաստվել ու իրականացվել:

• Ռուսական կողմը, ըստ էության, գործողություններ էր ծավալում իր երկրի ներսում, լավ պատրաստված որոշակի զինյալների, սակայն ոչ կանոնավոր բանակի դեմ:

• Երկու գերտերությունների զինուժը շրջապատել էր հակառակորդին և լիարժեք տիրապետում էր թատերաբեմին, ռազմական լեզվով սասած՝ թիկունքից կամ թևերից հարձակման վտանգ չկար: Իսկ հայկական բանակը ամեն պահի կարող էր ենթարկվել ապաշրջափակող հարվածի:

• Երկու գերտերություններն էլ հարձակման պահին ընդհանուր ուժերով (հաշվի առնելով նաև օժանդակ տեխնիկան) գերազանցում էին պաշտպանվողների ներուժը, ունեին պահեստային ամսպատ միջոցներ և ուժեր: Հայկական ուժերը խիստ սակավ էին:

• Երկու պաշտպանվողներն էլ ավելի քիչ ներուժ և հնարավորություններ ունեին, քան արդերջանցիները Ալկնում 1993 թ.:

• Ալկնի մարտերում և առհասարակ 1993 թ. Արցախում հայ զինվորի կողմից պարտություն կրած ահաբեկիչներն էին նաև, որ հետո հաջողությամբ հակադարձում էին ռուսական և ամերիկյան բանակին:

Հայկական ուժերը և միջոցները, ինչպես վերը նշեցինք, մոտ 2-2.5 անգամ սակավ ուժերով էին հարձակում նախաձեռնում մի հա-

¹⁷⁷ Исаяев А., Сталинград. Трудное начало. Журнал «Родина» номер 1/2013, стр. 6

¹⁷⁸ Michael B. Oren. Six days of war: June 1967 and the making of the modern Middle East. — Oxford University Press, 2002. — pp. 220-223.

¹⁷⁹ Минасян С., «Пятидневная война» августа 2008 г. Военно-политический анализ. Кавказ-2008, Ежегодник института Кавказа. Ереван, 2010, стр. 119-120.

կառավարողի վրա, որի թևերից ու թիկունքից ցանկացած պահի կարող էր օգնություն գալ և հարված հասցնել հայկական ուժերին: Հարձակումն իրականացվում էր հակառակորդի ամրացված քաղաքի վրա, որի գրավումը ենթադրում էր նաև մեծաքանակ ուժերի կորուստ: Հարձակման ընթացքում միաժամանակ հարվածներ էին հասցվում այլ հատվածներում, որոնք է՛լ շեղող էին, և՛ հիմնական այլ հատվածների համար: Սա չափազանց նրբանկատ ու ռիսկային մարտավարություն է և ենթադրում է գործողությունների արագություն, անսխալություն և այլն: Այս գործողությունների մեջ չափազանց մեծ է ռիսկայնությունը:

Հայկական կողմի գործողությունները, հաշվի առնելով վերը բերված համեմատությունները, ուղղակի անմախաղեպ էին, դրանք անգամ անհամեմատելի են աշխարհի հզորագույնների հետ: Հայկական ուժերի հաջողության հիմնական գրավակաճը գուտ մարտական գործողությունների ավելի զրագետ կազմակերպումն էր, որին դեռ կանդրադառնանք: Անգամ աղբյուրացիի հեղինակներն են խոստովանում, որ հայկական ուժերը, ըստ էության, հունիսի 12-ին խնդիր ունեին ընդամենը աղբյուրացական ուժերի կիսումը, քաղաքի շրջապատումը և փոքր այլ խնդիրներ, ինչը ենթադրում էր նաև հետախուզություն մարտով: Պատերազմների ժամանակ հակառակորդի ուժերի կիսումը քաղաքագույն խնդիրներից է, այն քչերին է հաջողվել, այն էլ հիմնականում դա անում են մեծ ուժեր ունեցող և արդեն հստակորեն նախանշեռնությունը տիրապետող բանակները: Խոսելով քաղաքը գրավելու հաջորդ «փորձերի» մասին, աղբյուրացիի հեղինակները ակամայից կրկին խոստովանում են, որ հայկական, ըստ էության, արագ գործողություններով վերադասավորվում էին և փոքր ուժերով մեծ ու արագ հարվածներ իրականացնում¹⁸⁰: Նույն Մարտակերտի ազատագրումը, ըստ այս հեղինակների, ստացվեց խոր թևանցման և

¹⁸⁰ Араслы Д., Армяно-азербайджанский конфликт. Военный аспект. Баку-1995, стр. 26.

միտրում իրականացնելու շնորհիվ¹⁸¹: Հայկական ուժերի զորաշարժային փայլուն մարտավարության մասին և խոսում նաև այն իրությունը, որ լայնածավալ հարձակումների սկսելուն պես հայկական հրետանին Կիչանում այնպես էր տեղակայվել, որ կարողանա միաժամանակ կրակ քայցել և՛ Մարտակերտի, և՛ Ալնի ուղղությամբ¹⁸²: Այսինքն՝ վարում էր կրակի ճկուն խոստանվում: Այստեղ մեր հակառակորդը ակամայից կրկին խոստովանում է, որ հայկական ուժերը, չունենալով զրահատանկային մեծաքանակ միջոցներ, դաշտավայրում, ստիպված լինելով հիմնականում օգտվել մտան միջոցներից, զնացել էին փայլուն լուծման՝ ստեղծել էին, այսպես կոչված, խառը զրահախմբեր, և խոսափելով ճակատային գրոհներից, գործել էին շատ զրագետ:

Ինչպես գիտենք, Ալնի քաղաքի ազատագրման ժամանակ հայկական ուժերը անգամ քաղաքի շրջակա կարևորագույն բարձունքները վերցնելուց հետո էլ չտասպեցին քաղաք ստնել և միայն հուլիսի 21-ին, երբ արդեն քաղաքին հասցվել էր համապատասխան ճշգրտությամբ հրետանային հզոր հարված, զգուշորեն քաղաք մտան՝ չտարվելով փողոցային ծանր մարտերով¹⁸³: Նույնիսկ պաշտպանական շրջանների, որոնք մասնակցում էին գործողություններին, 800-1000 հոգուց քաղաք մտնելու համար ինտրվել էին լավագույն պատրաստված 100-200 հոգի¹⁸⁴: Սա այն ինժեների օրինակն էր, երբ քաղաք չէին մտցվում տանկեր ու այլ տեխնիկա, մարդկային մեծաքանակ ներքոժ, այլ ընտրվում էին լավագույններից լավագույնները, հատկապես այն պայմաններում, երբ քաղաքի պաշտպանների ոգին

¹⁸¹ Велимамедов М.: Оборона Агдама. 21.07.2011 http://samella.ru/publ/avtory/mamed_velimamedov/mamed_velimamedov_oborona_agdama/6-1-1-0-724;

¹⁸² Հարությունյան Գ., Մեր հաղթանակները: Եր., 2012, էջ 321:

¹⁸³ ՊԲ արխիվ, «Дело с боевыми приказами и боевыми распоряжениями», գ. 38, րուրը 19-22:

¹⁸⁴ Գեներալ-լեյտենանտ Հակոբյանի Մ., զենքերալ-մայոր Կարապետյանի Ա. հետ ունեցած զրույցների տպագրությունից:

վերջնականապես կոտրված չէ: Այսպիսով՝ հայկական ուժերը չկրկնեցին ավանդական այն պատեր, որը արել են շատ բանակներ և արեց ռուսական բանակը մեկ տարի անց Գրոզնիում, վրացական բանակը՝ 15 տարի անց Չչնիվալում և այլն: Ամերիկյան բանակը 2003 թ. տանկերը մտցրեց Ֆալուջա, սակայն մարտավարական առումով կարողացավ դա գրագետ իրականացնել:

Այստեղ ամրագրենք, որ հայկական բանակը մարտական և ոչ մի գործողության ժամանակ մնա միայն թույլ չի տվել, գրահախմբերը քաղաքներ չէին մտնում, մարտավարական լեզվով ասած՝ ճակատային գրոհների գրեթե չէին դիմում, այլ բևանցում կամ շրջանցում էին կատարում՝ հակառակորդին գրեթե շրջապատելով՝ թողնում էին միայն ցանցի ճանապարհ: Հաջողությունների զգալի մասն էլ, բացի խառը գրահախմբերի հետ արդյունավետ համագործակցությունից, պատկանում է հրետանավորներիին, որոնք գործողությունից գործողություն ավելի գրագետ ու կազմակերպված, ավելի հուժկու հարվածներ էին հասցնում քննամուտ:

Այսպիսով՝ որոնք էին Ալցնի ազատագրման և բերված օրինակների մարտավարական առանձնահատկությունները: Ալցնի դեպքում հայկական ուժերը, ձեռնպահ մնալով գրահատելիական քաղաք մտցնելուց, դիմեցին շրջապատման, գրոհող փորձառու փոքր խմբերի հարձակողական մարտավարությանը, որոնց աջակցում էին հրետանային դիպուկ կրակով: 1967 թ. Երուսաղեմի գրավման ժամանակ իսրայելական բանակը ևս դիմել էր այս մարտավարությանը՝ տանկային բրիգադները քաղաքը վերցրել էին արցանի մեջ ու կրակով աջակցում էին քաղաք մտած մարտիկներին: Սակայն հատուկ պետք է ասել, որ իսրայելական բանակը Երուսաղեմ մտցրեց հատուկ պատրաստված դեսանտային 28-րդ, 66-րդ և 71-րդ զնդերի զինվորներին¹⁸⁵, որոնք փայլուն կատարեցին իրենց գործը: Իսկ հայոց բանակի դեպքում մարտիկները սովորական ջուկատների զինվորներն էին,

առանց հատուկ պատրաստության, ուղղակի նրանցից ընտրվել էին բացառիկները՝ կազմելով մարտական առանձին խմբեր: Սրանք հենց այն մարտական խմբերն էին, որոնք՝ ջուկ, դասակ, վաշտ համակարգից այն կողմ էին: Մարտավարության մեջ մարտական առանձին խմբերի գործողությունները ուսումնասիրության առանձին ու խորային թեմա է: Դրանք առաջինը կիրառել էին գերմանացիները Առաջին աշխարհամարտի ժամանակ, դրանց հեղինակը Օսկար ֆոն Գուտլիերն էր¹⁸⁶: 1990-ականներից մարտական խմբերը աշխարհի բոլոր առաջավոր բանակներում դարձան կիրառվող: Այսօր ռազմավարների տեսարանները լրջորեն քննարկում են, թե ինչպես պետք է ճիշտ օգտագործել դեռ Առաջին աշխարհամարտից կիրառվող¹⁸⁷ և հատկապես աֆղանական պատերազմում լավ տարածում գտած մարտական խմբերի մարտավարությունը: Դրանք հատկապես ավելի կիրառելի են տնդային պատերազմներում¹⁸⁸: Հետագայում այդ մարտավարությունը լայնորեն կիրառեցին նաև արևմտյան բանակները 1990-2000-ականների պատերազմներում: 2003 թ. ապրիլի 5-12-ը ամերիկյան բանակի խառը մարտական խմբերը, որոնք ունեին նաև տանկեր, հանդուգն գրոհով մտան Բաղդադ և գրավեցին քաղաքի կենտրոնը: Մարտական խմբերը, ճիշտ է, տանկերով էին մտնում քաղաք, ինչը վտանգավոր էր (այդ մասին արդեն գրել ենք), սակայն քանի որ մարտական խմբերի անձնակազմը բարձրակարգ վարպետացած էր և լավ զինված, ինչպես նաև մինչ քաղաք մտնելը ոչնչացրել էին հակառակորդի հիմնական ուժերը, ապա գործը հաջողոր-

¹⁸⁵ Michael B. Oren. Six days of war: June 1967 and the making of the modern Middle East. — Oxford University Press, 2002. — pp. 220-223.

¹⁸⁶ Кларк У. Как победить в современной войне. М., 2004, стр. 91.

¹⁸⁷ «Штурмовые бригады Красной Армии в бою», Москва, 2008; Чуйков В. Тактика штурмовых групп в городском бою. <http://www.vrazvedka.ru/main/learning/vopros-ob/chuykov.shv.html>

¹⁸⁸ Պետրոսյան Զ. Տ., Տեղային պատերազմների առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը մարտավարության զարգացման վրա. Եր., 2002. էջ 2-3.

յամբ ավարտվեց ¹⁸⁹։ Ահա նման ճիշտ ու զրագետ մարտավարական մոտեցումներ էր կիրառում հայկական ՋՆՈ-ն և դրանով հարտագնում համաշխարհային ռազմարվեստի պատմությունը։

1993 թ. դեռ Քարվաճառի ազատագրման ժամանակ հայկական հրետանին իրականացրեց պատերազմի ընթացքում ամենամեծ հրետանային հարվածը։ Իսկ Մարտակերտի ազատագրության ժամանակ հայկական ուժերի գործողությունների մեջ աչքի ընկավ գունդարտակային հրետանին, մասնավորապես ակամանետները, որոնք հարձակվող ուժերին իրենց կրակի տակ ուղղակի առաջ էին տանում։ Հայկական հրետանային միջոցների քանակը չէր անցնում 70-80-ը, որից 100 մմ-ից մեծ միջոցները կազմում էին ոչ ավելի, քան 40 միավոր։ Հրետանային նախապատրաստական կրակը տևեց մոտ 40 րոպե ¹⁹⁰, ինչն աննախադեպ էր Արցախյան պատերազմի համար։ Արդյունքում արդեն հուլիսի 21-ի որջը ստացավ հրետանու ամենամեծ հարվածը ¹⁹¹։ Հայկական հրետանին իր նշանակությամբ և հիմնական ուժերի հետ համագործակցությամբ օրեցօր ավելի կազմակերպված ու նշանակալի էր դառնում։ Հրետանու այդքան զրագետ և արդյունավետ կիրառությունը հատկապես զարմանալի է այն պատճառով, որ նույնիսկ 1994 թ. գարնանը ՊՆԿ կենտրոնական ենթակայության տակ զնդային հրետանու հետ միասին կար ընդամենը շուրջ 200 միավոր հրետանային միջոց, որից հակատանկային՝ մոտ 30, իսկ 122 մմ և ավելի տրամաչափի միջոց՝ ուղիղ 83 միավոր ¹⁹²։ Այս իրավիճակը էր հիմնական բնորոշիչը, հիմնական հրետանային միջոցները։

¹⁸⁹ Богданов К. Гром над Багдадом: как американцы взяли свой Грозный. <http://ria.ru/analytics/20130404/930954853>.

¹⁹⁰ Հասարակայնության Ա., ՊՆԿ զորատեսակները, ծառայությունները և առանձին ստորաբաժանումները՝ Արարադայան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում։ Մտեփանակերտ, 2010. էջ 72

¹⁹¹ Օհանյան Ա., Հայկական քանակի 20-ամյա տարեգրությունը, համառոտ ուրվագիծ։ Եր., 2012, էջ 138-141։

¹⁹² ՊՆԿ արխիվ, «Дело с боевыми приказами и боевыми распоряжениями», գ. 4, ք. 12, քուրթ 31-32։

Միևնույն ժամանակ հակառակորդն ուներ մի քանի հարյուր միավոր ծանր հրետանային միջոց։ Մովորաբար նման հաջող գործողությունների ժամանակ, ինչքան էլ այս կամ այն զորատեսակն ավելի լավ ու արյույնավետ գործի, այն չի կարող փակել բոլոր բացերը, եթե այդպիսիք կան մյուս զորատեսակներում։ Հիմնականում ամեն ինչ լավ է ստացվում, երբ համագործակցությունը քարձր մակարդակի է։ Ակնհայտ ազատագրման ժամանակ զորատեսակների (հրետանի և ընդհանուր այլ ուժեր, ՊՇ-ների միջև, հարվածային այս կամ այն զրահայններ և ընդհանուր) միջև այդ ընդհանուր համագործակցությունը դրվեց մոտ մակարդակի վրա։ Մենք վերը արդեն նշել ենք, որ Շուշիի ազատագրման ժամանակ այդ համագործակցությունը առաջին անգամ քարձր մակարդակի վրա դրվեց տարանջատ ջոկատների միջև։

Այժմ խոսենք 1993 թ. ամառային հարձակումների գործողությունների ընդհանուր տրամաբանության շարունակության մասին, գյործողություններ, որոնք նորանոր հարթամակներ պարզեցին ոչ միայն հայոց զենքին, այլև համաշխարհային ռազմարվեստի պատմությանը։

Դեռ Ակնի ազատագրության ժամանակ հայկական ուժերը ռազմաճակատի հարավում իրականացրել էին հետախուզական մարտեր՝ հակառակորդի դիմադրությունը որոշելու և ուշադրությունը շեղելու համար։

Թշնամին Վարանդայի (Ֆիզուլի) հատվածում մեծ ուժեր էր կուտակել, քանի որ այդ պահին միակ ուղղությունն էր, որտեղից կարող էին լայնածավալ հարձակում իրականացնել։ Դա էլ հնարավոր էր դարձել իրականացնել հուլիսի վերջից հաստատված իրադարձարի չնդրիվով։ Արրեջանական հարձակումն սկսվում է օգոստոսի 4-ին Վարանդայից Հաղուրի շրջանի ուղղությամբ։ Հաջորդ օրը՝ օգոստոսի 5-ին, արրեջանցիներն անցնում են լայնածավալ հարձակման Ջրակնի ուղղությունից, ապա նաև Մարտունու ուղղությամբ՝ Վարանդայից։ Նույն օրվա երեկոյան Արրեջանի քանակը փորձում է

ռազմաճակատի գիճը ճեղքել մաս Ասկերան-Աղդամ հատվածում: Հրետակոծվում են Գորիսի ու Կապանի շրջանները¹⁹³:

Օգոստոսի 7-ին և 8-ին աղբրեջանցիները շարունակում են ռազմաճակատի գիճը տարբեր հատվածներում ճեղքելու փորձերը: օգտագործելով ռազմական տեխնիկայի մեծ տեսականի, գործողության մեջ դնելով մաս միջին հեռահարության երկիր-երկիր դասի հրթիռներ¹⁹⁴: Ծանր մարտեր են ծավալվում ռազմաճակատի հարավային մասում՝ Մարտունու և Հաղորթի շրջանների ուղղությամբ: Հակառակորդի կողմից հրթիռակոծվում են մաս Հաղորթի շրջանի է-դիլու, Հին Թաղար, Խժարեղ և այլ գյուղերը¹⁹⁵:

Օգոստոսի 9-ին թե՛ մարտ է սկսվում Մարտունու շրջանի Ուրյանա լեռան համար: Չորս ժամ տևած մարտում հայ մարտիկները կարողանում են ետ մղել թշնամու հարձակումը: Նույն օրը Վարանդայի կողմից հարձակվող աղբրեջանական խմբավորումը կարողանում է գրավել մի քանի գյուղ և ռազմավարական նշանակություն ունեցող բարձունք: Իրավիճակը շտկելու նպատակով ՊԲ հրամանատարությունը կենտրոնական ՊՇ-ից ռազմաճակատի այդ հատված է տեղափոխում լրացուցիչ ստորաբաժանումներ, որոնք տեղակայվում են Հաղորթի շրջանի Մափնշեն գյուղում: Այդ ժամանակահատվածում թշնամին կարողացել էր գրավել Յոր, Առաքյալ, Բանաձոր գյուղերը և դրանք վեր ածել ռազմական հենակետերի¹⁹⁶:

Օգոստոսի 15-ին աղբրեջանական բանակը Վարանդայից սկսում է Մարտունու հարավային և Հաղորթի արևելյան ուղղությամբ հերթական հարձակումը: Նրանց աջակցում էր մաս օդուժը, որը ոմբակոծում է Հաղորթ քաղաքը: Նույն օրը, սակայն, թշնամու

հարձակումը կասեցվում է, և պաշտպանության բանակն անցնում է հակահարձակման: Արյումնում Մարտունու պաշտպանական շրջանի ստորաբաժանումները շրջապատում և ոչնչացնում են շրջան ներխուժած թշնամուն: Նույն օրը պաշտպանության բանակի 11-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակը հետախուժական գումարտակի հետ ազատագրում է Հաղորթի շրջանի Քարագլուխ գյուղը: Ի-յինց հերթին ռազմաճակատի հարավային ուղղությամբ հարձակման են անցնում կենտրոնական, առաջին և վեցերորդ ՊՇ-ների ստորաբաժանումները և ազատագրում Յոր, Առաքյալ ու Բանաձոր գյուղերը: Մարտունու ՊՇ-ի 21-րդ և 22-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակներն էլ հակահարձակման են անցնում Վերին Յաղալենդ բնակավայրի ուղղությամբ, որտեղ տեղակայված էր աղբրեջանական բանակի 831-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակը: Օրվա ընթացքում Մարտունու ՊՇ-ի 21-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակները զարգացնում են հարձակողական գործողությունները Վերին Յաղալենդ, Կարամամեղի, Կարու Դիլիդարդու, Ներքին Վեյսալու, Քարավենդ բնակավայրերի և «Նամազալա» բարձունքի ուղղությամբ, որտեղ հակառակորդը կենտրոնացրել էր Վարանդայի, Կովակաղի, Ջրակնի (Ջեբրայիլը) և Սամառաբի (Կուբաբլու) գորային խմբավորումները¹⁹⁷:

Ռազմական անհաջողությունները ստիպում են Աղբրեջանի ղեկավարությանը կրկին բանակցություններ սկսել: Սակայն հերթական իրադարձություն և Աղբրեջանի օգտագործում է շունջ քաշելու և մոր հարձակում նախապատրաստելու համար: Արդեն օգոստոսի 19-ի գիշերը Վարանդայում տեղակայված աղբրեջանական ստորաբաժանումները, խախտելով իրադարձություն, սկսում են հրթիռակոծել Հաղորթը, Էլիլու գյուղը ու Մարտունու շրջանի հարավային հատվածը: Ռազմական գործողությունները վերսկսվում են Վարանդա-Ջրակն-Սամասար մարտազօի ողջ երկայնքով, սակայն

¹⁹⁷ Մասնակից հրամանատարների հետ ունեցած առանձնագրույցների տվյալներով:

¹⁹³ Ղարաբաղյան Ազատագրական պատերազմ 1988-1994: հանրագիտարան, Սարգսյան Ֆ. Ս. և այլք., Եր., 2004, էջ 24-25:

¹⁹⁴ Որպես այդպիսին մրանք հիմնականում օգտագործում էին ՀՕՊ-ի հին հրթիռներ, մասնավորապես վտանգավոր էին «С-200» զենիթահրթիռային համակրի հրթիռները:

¹⁹⁵ Հասարայան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Եր., 2001, էջ 119-120:

¹⁹⁶ Հասարայան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Եր., 2001, էջ 121-123:

քշնամին կրկին անհաջողություն է կրում. կարճ ժամանակահատվածում ՊԲ 13-րդ, 14-րդ, 15-րդ, 21-րդ, 22-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակները, 83-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադը, մեկ ակամանետային մարտկոցի կրակի աջակցությամբ ազատագրում են ԼՂՀ հարավային սահմանը, ապա մարտերը տեղափոխում Վարանդայի և Ջրակնի շրջանների տարածք¹⁹⁸:

ՊԲ ստորաբաժանումները, մշակված օպերատիվ պլանի համաձայն, անցնում են հակահարձակման: Ջրակնը աքցանի մեջ առնելուց հետո հայկական ուժերը հարձակումը զարգացնում են երկու հիմնական ուղղությամբ, ինչը նոր մակարդակի քացառիկ մարտավարական մոտեցում էր մեր իրականության մեջ: Մարտունու ՊԸ-ի գումարտակները, գործելով երկու ուղղությամբ (համապատասխանաբար Մոլսես Հակոբյանի և Նելսոն Սողոմոնյանի հրամանատարությամբ), հրետանային գրագետ կրակի աջակցությամբ ճեղքում են հակառակորդի դիրքերը և ծախ թևից դուրս գալիս մայրուղի¹⁹⁹: Վարանդայի ուղղությամբ հարձակման է անցնում նաև Հաղուրթի պաշտպանական շրջանի Տոլի գումարտակը: Աջ թևից լայնածավալ հարձակման է անցնում Մանվել Գրիգորյանի հրամանատարությամբ գործող 5-րդ բրիգադը, որը, ճնշելով քշնամու կրակակետերը և առաջանայով մի քանի ուղղություններով, դուրս է գալիս Վարանդա-Ջրակն մայրուղի ու վերասկզբություն հաստատում Հորադիզ գյուղ և Արաքսի ափ տանող խճուղին: Այդ պահին 5-րդ բրիգադը Արաքսից հեռու էր մոտ 15 կմ: Վարանդան պաշտպանող աղբյուրանակալը 160-րդ գնդի և Ֆիզուլիի 702-րդ բրիգադի զորամասերը (ըստ տարբեր տվյալների՝ 4000-7000 զինծառայող) շրջապատման մեջ չընկնելու

¹⁹⁸ Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, համառոտ ուղվագիծ: Եր., 2012, էջ 142-147:

¹⁹⁹ Նելսոններ մարտավարական հստակ ձեռնադիր՝ թևերից հարձակումներ, հիմնականում գումարտակների միավորներով:

համար օգոստոսի 22-ին թողնում են քաղաքն ու շրջանը²⁰⁰: Պաշտպանության բանակի վերասկզբության տակ է անցնում մոտ 1380 կմ² տարածք ունեցող պատմական Վարանդան (Ֆիզուլին):

Օգոստոսի 23-ին Հաղուրթի ՊԸ-ի ստորաբաժանումները Արթուր Աղաբեկյանի հրամանատարությամբ նախ ազատագրում են շրջանի մի շարք բռնազավթված բնակավայրեր, ապա դուրս գալիս Վարանդա-Ջրակն մայրուղի: Կենտրոնական պաշտպանական շրջանի ստորաբաժանումները՝ Սամվել Կարապետյանի հրամանատարությամբ, սկսելով իրենց հարձակումը Սարինշենի բարձունքներից՝ ճնշում են քշնամու պաշտպանությունը, ազատագրում Հաղուրթի շրջանի մի շարք գյուղեր, ապա մտնում Ջրակնի շրջան:

Նույն օրը Կենտրոնական և Հաղուրթի ՊԸ-ների ստորաբաժանումները համատեղ ջանքերով ազատագրում են Լեյզորյանի գումարտակի և տեղի աշխարհագրայինների կողմից պաշտպանվող Ջրակն քաղաքը, իսկ երկու օր հետո նաև համանուն շրջանի մեծ մասը: Պաշտպանության բանակի հսկողության տակ է անցնում մոտ 1050 կմ² տարածք ունեցող պատմական Ջրակնի այդ հատվածը (Ջերբայիլը)²⁰¹: Ողջ շրջանը ազատագրվեց օգոստոսի 25-ին: Հաջորդ օրը քշնամուց լիովին մաքրվում է նաև Հաղուրթի շրջանի ամբողջ տարածքը, որի մի մասը նրանք գրավել էին սկսված լայնածափ կարճ հարձակման ժամանակ: Հայկական ստորաբաժանումները վաղ քն առնում Արաքսից մոտ 15 կմ հեռավորության վրա: Սա արդեն պատմական և հոգեբանական մեծ նշանակություն ունեցող հայ ռազմիկի համար: Գրանով արդեն մեծ շրջափակման մեջ էին հայտնվում Սանասար ավանը և Կովսականը (Ջանգելան)²⁰²: Վերջիններս, սակայն, իրենց հերթին սպառնալիք էին հայկական կողմի

²⁰⁰ Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ա., Հարթանակներն՝ ինչպես եղել են, Լեզրական: 44, Եր., 2008, էջ 127:

²⁰¹ ՊԲ արխիվ, «Дело с приказом ПКСО», գ. 4, թուղթ 75:

²⁰² Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, համառոտ ուղվագիծ: Եր., 2012, էջ 143:

համար: Փաստորեն, Վարանդայի և Ջրակնի ազատագրումից հետո Սանասարի շրջանը մնացել էր սեպի պես խրված պաշտպանության բանակի հարավային ռազմաճակատում: Այդպիսով, եթե աղբյուրա-նական բանակը ռազմաճակատի արևելյան հատվածում կարողա-նար պարտություններից հետո ուշքի գալ, ապա, կարող էր լուրջ վտանգ ստեղծել պաշտպանության բանակի համար՝ հարվածելով քիկունքից, քանի որ այնտեղ տեղակայված էր բշմամու բավական ուժեղ խմբավորում: Իդի հերթին Սանասարը ինքը բավական խոցելի իրավիճակում էր, քանի որ Աղբյուրաճանի վերահսկողության տակ գտնվող մնացած տարածքների հետ կապված էր 15 կմ-ոց մերձա-բարձրաց մեղ շերտով: Հաշվի առնելով այս համգամանքները՝ ՊԲ կենտրոնական շտաբը որոշում է ոչնչացնել Սանասարի ռազմական հենակետերը:

ՊԲ կենտրոնական շտաբի ցուցումով՝ Սանասարի ռազմավա-րական նշանակության հենակետերը ոչնչացնելու նպատակով այն-տեղ են կենտրոնացվել 1-ին, 2-րդ, 4-րդ և Կենտրոնական ՊԸ-ների ստորաբաժանումները: Սանասարի ուղղությամբ հարձակումը են-թադրում էր, որ սկզբում Շուշիի ՊԸ-ի ստորաբաժանումները՝ Վաչա-զան Իշխանյանի հրամանատարությամբ, Քիրս լեռան շրջանից պի-տի մտնեին Սանասարի շրջան: Սա արդեն բավական բարդ գորա-շարժ էր, քստ էության խոր թևանցում: Իրենց հերթին շրջան պիտի մտնեին նաև Հաղուրի ՊԸ-ի Խժաբերդի ու Տունիի վաշտերը: Այս առաջին հարձակումը, սակայն, անհաջողություն է կրում, և հայկա-կան ուժերը, կորստներ տալով, վերադառնում են եման դիրքեր: Ա-րագ վերահամարվողվելով՝ կրկին սկսում են հարձակումը: Այդ ըն-թացքում Մարտակերտի ՊԸ-ից մեկ գումարտակ է տեղափոխվում Լաչինի շրջան՝ հարձակմանը մասնակցելու նպատակով, իսկ Մար-տունու, Հաղուրի և Կենտրոնական պաշտպանական շրջանները ձևավորում են հարձակողական 3 խմբավորումներ: Նման խմբավո-րումներում լինում էին տարբեր հատվածներից եկած տարբեր ստո-րաբաժանումներ, որոնք ներդաշնակման խնդիրներ կարող էին ունե-նալ, սակայն այդպիսի խնդիրները, քստ էության, հայկական բանա-

կում բացակայում էին²⁰¹: Նման արագ և գրագետ վերախմբավորում-ները հայկական ուժերի հիմնական գործելաոճն էին: Հայկական ու-ժերը սակավ ուժերով շարունակում էին գրագետ հարվածներ հասցը-նել: Ինչպես տեսնում ենք, հիմնական ստորաբաժանումները գու-մարտակներն էին, սակավությամբ բրիգադները, որոնք, քստ էու-թյան, 5-6 գումարտակներ էին, սակայն, միևնույն է, գումարտակների հրամանատարներին ռազմագործողության ընդհանուր մտահուպ-ման շրջանակներում տրված էր մեծ ազատություն: Բոլոր հարված-ները հասցվում էին շեշտակի գրոհներով, արագ գործողություննե-րով՝ հիմնականում թևային հարվածներ, խոր գորաշարժեր: Ընդամե-նը 50-60 տանկերը և այլ զրահամիջոցները՝ մոտ 3000 հոգանոց գո-րախմբով, մշտապես արագ խուսանվում էին և առանց պահեստա-յին մեծ ուժերի՝ հակառակորդին հասցնում էին անապահելի հար-վածներ: Գումարտակները հիմնական ստորաբաժանումներ դարձը-րած և արագ խուսակարման մարտավարությամբ՝ հիմնականում գործում են արևմտյան երկրների առաջավոր բանակները: Սա խորիրոգային մտղե չէր: Մեր դեպքում դա, իհարկե, իրավիճակային հինը ուներ, սակայն մնա մարտավարությունը հրամայազմի ճիշտ ո-րոշումն էր, որը ռազմարվեստում առաջատարները հետագայում պի-տի փաստեն:

Սանասարի ուղղությամբ նոր հարձակումը սկսվում է օգոստո-սի 29-ին այն քանից հետո, երբ Լաչինի ուղղությամբ աղբյուրաճանի-ները ձեռնարկում են հայկական պաշտպանական դիրքերը ճեղքելու անհաջող փորձ: Հարձակողական երեք խմբավորումները անմիջա-պես պաշտպանությունից անցնում են հարձակման, ճեղքելով հակա-ռակորդի պաշտպանությունը՝ դուրս են գալիս գլխավոր մայրուղի, գրավում Խանդիլի կամուրջը, Լաչին-Մամեդբեյի ճանապարհի խաչմերուկներն ու ճանապարհահատվածները: Չնայած Սանասա-

²⁰¹ Բոլոր ՊԸ-ների հրամանատարների հետ ունեցած առանճնագրույցները հավատարմ են, որ մնա խնդիր ընդհանրապես չի եղել, շատ քիչ տակտներ կային, որոնք ներդաշնակման խնդիրներ էին ունենում:

րի բավական ուժեղ խմբավորման համառ դիմադրությանը՝ հայկական ուժերը օգոստոսի 31-ին մարտերով մտնում են Մանասար քաղաք, ապա վերահսկողություն հաստատում համառոտ շրջանի մեծ մասի վրա²⁰⁴:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, ընդամենը 50 միավոր զրահատեխնիկա ունեցող հայկական զորախումբը մինչև իսկ 70-100 կմ-ոց գորաշարժեր էր իրականացնում: Չունենալով հանգստամայտ ոչ մի հնարավորություն՝ այն ամիսներ շարունակ հարվածներ էր հասցնում հակառակորդին. ահա այն արդյունքը, որը չտեսնված էր անգամ ռազմարվեստի ուսուցիչների համար: Վարանդայի, Ջրակնի և Մանասարի հաղթանակները կարևոր նշանակություն ունեին Հայաստանի անվտանգության համար: Այդ հաղթանակների շնորհիվ վերացավ Լաչինի միջանցքի վրա կախված վտանգը, նվազեց Հաղարուքի, Մարտունու, Կապանի, Գորիսի շրջանների հրետակոծման ենթարկվելու վտանգը, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Կովսականի և Արաքսի ափի ազատագրման ու ռազմաճակատի գիծը կրճատելու համար: Բացի այդ, հայկական վերահսկողության տակ անցան մեծ դեր ունեցող ռազմավարական նշանակության մի շարք ճանապարհներ²⁰⁵:

Մեպտեմբերին սկսված հայ-ադրբեջանական բանակցությունները որոշակի ժամանակով դադարեցրին մարտական գործողությունները: Ռազմական գործողությունները վերսկսվում են Ադրբեջանում նախագահական ընտրությունների ավարտից անմիջապես հետո: Հոկտեմբերի 10-ին Ջրակնի՝ իր հսկողության տակ գտնվող հատվածից ադրբեջանական բանակը լայնածավալ հարձակում է սկսում Հաղարուքի շրջանի ուղղությամբ: Հոկտեմբերի 17-ին ադրբեջանցիները հարձակում են սկսում նաև ԼՂՀ հյուսիսարևելյան հաստ-

²⁰⁴ Հասրաթյան Ս., Կարաբաղյան պատերազմ, եր., 2001, էջ 125-126:

²⁰⁵ Հայոց բանակի հարթանակները իրենց նշանակությամբ վերաճել էին տարածաշրջանային ռազմավարական նշանակության, որն արդեն ատաշացնում էր լուրջ քաղաքական ռեզոնանս:

վածում և Ալնի ու Վարանդայի սահմանամերձ դիրքերի ուղղությամբ: Մեկ շաբաթ անց՝ հոկտեմբերի 24-ին, ՊԲ ստորաբաժանումները հաջողությամբ կասեցնում են հակառակորդի ատաջխաղացումը, ընթացքից անցնում հակահարձակման և ազատագրում Կովսականի շրջանի մնացած մասը, Ջրակնի ու Մանասարի շրջանների՝ մինչ այդ չգրավված տարածքները, Վարանդայի շրջանի Հորադիզի ենթաշրջանը: Ռազմական գործողությունների մնան արագ փոփոխության պայմաններում հայկական ուժերը սրընթաց անցնում էին գործի՝ պաշտպանությունից հարձակման կամ հակառակը: Սա բարձրագույն մասնագիտական կարողությունների և ոգու դրսևորում էր:

Հորադիզ կայարանի գոտիը հոկտեմբերի 23-ին իրականացվել է ընդամենը միավոր տանկերով, ինչը ուղղակի ապշեցուցիչ է՝ հաշվի առնելով հակառակորդի ունեցած միջոցները: Այս հատվածում, չհաշված բազում օժանդակ միջոցները, գործում էր հակառակորդի մեկ գունդ, տանկային մեկ վաշտ և օժանդակ այլ ուժեր: Շատ է խոսվում այն մասին, որ հոկտեմբերի 30-ին Միջմալականի երկաթուղային հանգույցը գրավել են տանկային զուսարտակին հավասար ուժեր²⁰⁶: Ադրբեջանական կողմը պնդում է, որ այդ ուժերը եղել են ավելի քան 50 միավոր զրահատանկային միջոցներ, սակայն իրականում հայկական կողմը մնան ուժեր չունեն, որպեսզի միայն մեկ ուղղությամբ և միայն մեկ կետում այդպես հարվածեր: Չրահատանկային միջոցների հավանական քանակը կազմում է մոտ 20-25 միավոր²⁰⁷:

1993 թ. աշնանը ազատագրվեցին Կովսականը, Խոդափերիինի կամրջի հարակից հենակետերը: Այդ գործողություններն իրենց բնույթով կրկին հարձակողական էին, որոնց ժամանակ նորից ՊԸ-

²⁰⁶ Հակոբյան Մ., Հայ ժողովրդի ռազմական տարեգիրք, 1991-2009: եր., 2009, էջ 27; Араслы Д., Армяно-азербайджанский конфликт. Военный аспект. Баку-1995, стр. 26.

²⁰⁷ Լճմատախյալ գնահատականի կարելի է հանդիպել նաև այլ հեղինակների մոտ: Տես մասնավորապես Степанян К. «Хроника карабахской войны» <http://expert.openarmenia.com/archives/268>

ների հարվածային խմբերը դարձյալ գործում էին հիմնականում ինքնուրույն, ազատ, շեշտակի ու վճռական: Նրանք արագ խուսափալուծ էին և հակառակորդին հնարավորություն չէին տալիս ուշքի գալ: Այսպես էլ ավարտվեց 1993 թ. փառահեղ պատերազմաշրջանը:

Եթե 1993 թ. ընդհանուր պատերազմաշրջանը վերլուծենք ռազմարվեստի բոլոր բաղադրիչներով, ապա այն նախորդ տարիների մարտական գործողություններից տարբերվում էր նախ և առաջ արդեն նշված գրահախմբերի մարտավարական ճիշտ կիրառմամբ: Ինչպես նկատել են Մուլլերիսկ աղբյուրների մասնագետները, հայկական ուժերը, միջոցների սակավության պատճառով ստեղծելով խառը գրահախմբեր, լուծել էին գործերի խոստանալման խնդիրը: Սակայն իրավիճակը փոքրեք պատկերացնելու համար նշենք, որ այդ գրահախմբերը գրահատելանիկայի տարբեր միավորների միացություն էին՝ տանկեր, հետևակի մարտական տարբեր մեքենաներ, գրահափոխադրիչներ ու հրետանային ինքնագնաց տարբեր միջոցներ: Նման խմբերի կիրառման բարդությունը այն է, որ միջոցները, ունենալով տեխնիկական տարբեր հնարավորություններ, հրամանատարների համար ստեղծում էին բազում խնդիրներ: Նրանք չէին կարող կոնկրետ միանման խնդիրներ դնել բոլորի առջև, քանի որ ամեն մեկը չէր կարող մյուսի առջև դրված խնդիրը լուծել: Ահա այստեղ է, որ հրամանատարի տաղանդին և փորձին լրացնելու են գալիս անձնակազմի հնարամտությունը, փորձը, ոգին և մարտական կարևորագույն այլ հատկանիշներ, առանց որոնց այդ ինքնադրստումն ավելի շուտ գործի հաջողությունը կկործաներ, քան կարող էր որևէ դրական ներգործություն ունենալ այդուրեքի վրա: Սակայն հայկական ուժերը, փաստորեն, ոչ միայն ոչ ավանդական մարտավարական լուծում էին տվել, այլև այդ լուծումը շատ լավ օգտագործում էին՝ հակառակորդի համար ավելի դժվար դարձնելով իրենց դեմ պատերազմելը: Խառը գրահախմբերն արագաշարժ էին, բշմամուս հասցնում էին խորտակիչ հարվածներ և արագ խոստանալու: Նրանք հիմնականում ճակատային հարվածներ չէին հասցնում, գերադասում էին քանցումները. հակառակորդի թույլ տեղերի շոշափումով նրան

չրջապատում էին, ինչը թույլ էր տալիս խուսափել նաև մեծ զոհերից: Մասնավորապես, հայկական զորքերի մարտավարության մշտական լուծումներից էր վճռական գոհներից առաջ ոչ մեծ խմբերով գերիշխող բարձունքների գրավումը. հակառակորդին արագ և շեշտակի հարվածներով ճնշելով՝ թողնում էին միայն մահանջի ճանապարհ, որից հետո նոր դիմում օգակի սեղմմանը: Սակայն միշտ եղել է լուծումների անսպասելի տարբերակը, անակնկալը³⁰⁰: Դեպքերը զարգանում էին շատ արագ, հայկական կողմը իրավիճակին լիովին տիրապետում էր լավ հետախուզության շնորհիվ և հասցնում էր ճիշտ արձագանքել դրան: Այդպիսի պայմաններում լավ տեղեկությունները թույլ են տալիս գործել ավելի ճիշտ, սակայն նման դեպքերում նաև կա հրամանատարի ճիշտ կառնելու գործոնը, տաղանդը, որով նա հասկանում է հակառակորդի գործողությունների տրամաբանությունը: Նա կարող է ճիշտ որոշել բշմամուս հիմնական հարվածի ուղղությունը, հիմնական գործողությունների տրամաբանությունը և այլն: Սա նշանակում է հակառակորդից մեկ-երկու քայլ առաջ լինել և, ըստ էության, կառավարել նրա գործողությունները, որն էլ ռազմարվեստում կոչվում է էֆֆեկտների մետություն³⁰¹: Արևմուտքում այս ամենը քննարկվում էր տեսական մակարդակում շատ վաղուց, սակայն կիրառելի հնարավոր են համարում միայն տեղեկատ-

³⁰⁰ Անակնկալ և ոչ ստանդարտ լուծումները, որոնք առանձնազույգների ժամանակ ներկայացնում են ՊՇ-ների հրամանատարները և առանձին յուկսանքի հրամանատարները զարմանալի են: Դեպքերից մեկի ժամանակ հակառակորդը տեղակայվել էր գյուղը շրջապատող երկու բարձունքներում և ոչ մի կերպ գյուղին մտնելու չէր լինում, գոհները հիմնականում ուղղված էին բարձունքների ուղղությամբ, որը իրենք լավ պահում էին: Սրբ գործերը հասկանալով, որ հակառակորդը կրկին սպասում է բարձունքների գրոհը, դիմել էր խրատմանկության՝ շեշտակի մտել գյուղ ու միանգամից շրջանցելով քիկունքից խփել բարձունքի պաշտպաններին: Այսինքն՝ կենտրոնից գրոհել, սակայն գյուղից արագ անցնել քիկունքային հարվածի:

³⁰¹ Deptula. David A. Effects-Based Operations: Change in the Nature of Warfare. Arlington VA: Aerospace Education Foundation, Defense and Airpower Series. 2001, pp. 8-9.

վական դարաշրջանի և ցանցակենտրոն պատերազմների իրագործման ղեկավարում: Վերջինիս համաձայն՝ արդեն հնարավոր է կառավարել հակառակորդի մտադրությունները՝ ստիպելով նրան նախապես կայացնել իր համար կործանարար որոշումները²¹⁰: Հայկական ռազմական միաքն այս ամենի որոշ տարրեր կատարում էր ստանց հասնապատասխան միջոցների տիրապետման:

Չրահախմբների և այլ ստորաբաժանումների ընդհանուր գործողությունների հաջողությունն ապահովվում էր արդեն օպերատիվ մակարդակում կայացված ճիշտ լուծումներով: Մասնավորապես, խոսքը, այսպես կոչված, պաշտպանական շրջանների ստեղծման մասին է:

Ռազմարվեստի ուսուցիչներին հիմնականում անհայտ գործառնախորման այս անունը մի քանակի բան էր: ՊՇ-ներն իրենց ուժերով ու միջոցներով գտնվում էին դաստակ վճիռների և բրիգադների մեջտեղում: Դրանք ավելի մեծ էին, քան զնդերը և ավելի փոքր, քան խորհրդային դիվիզիաները, ու ավելի մոտ էին բրիգադներին: Իրենց կազմում ունենալով մոտավորապես 5-6 գումարտակ և օժանդակ ստորաբաժանումներ, մասնավորապես՝ սեփական հրետանի ու զրահախումբ, ՊՇ-ները առավելագույնս ինքնուրույն և կենսունակ էին, քանի որ նաև վարչատարածքային հարցերում էին ինքնուրույն ու ինքնաբավ: Դրանք, լինելով ինքնուրույն բռունցք, ուղիղ ենթարկվում էին գլխավոր հրամանատարությանը (քատերաբեմի հրամանատարության՝ իմա արցախյան ինքնապաշտպանական ուժերի հրամանատար), միջանկյալ այլ օղակի չէին ենթարկվում: Պարզ ասած՝ լինելով գունդ-բրիգադ օղակի գործառնախորմում, դրանք իրենց գլխի չունեին մեկ այլ, օրինակ՝ դիվիզիա կամ կորպուս, հետո նոր՝ գլխավոր հրամանատարություն: Այս համճարել օպերատիվ-մարտավարական լուծումը, որը գտել էին հայ զինվորականները մարտի պայմաններում, հետագայում պիտի ամրագրվեր աշխարհի ուժեղագույնների կողմից՝ որպես օրինաչափություն: 1990-ականների վեր-

ջին և 2000-ականների սկզբներին ամերիկյան ու արևմտյան այլ բանակներում լայնորեն սկսվեց մեքենայացված/մորիլիզացված-արագաշար բրիգադների ներդրումը²¹¹: Իհարկե, ղեկավար է ասել, թե ամերիկյան բանակում ուսումնասիրել են Արցախյան պատերազմի փորձը, սակայն ենթադրել, որ նրանք ևս իրենց փորձով եկան այդ եզրակացությանը, կարելի է: Դրանք, ըստ էության, արդեն իրենց բազմակի արդարացրած ՊՇ-ների մոդելներն էին, որոնք ուղղակի շարժունակության և ծանր զինատեսակների ավելի մեծ հնարավորություններ ունեին: Դրանց գումարած օդուժի հնարավորությունները և այլն: Դրանք արցախյան ՊՇ-ների մեծ ուժեղացված բրիգադներ էին, որոնց վերադասությունից հանվել էին դիվիզիան ու կորպուսը: Դա նրանց հաջողվել էր նախ կրակային և շարժունակության հզորացման հաշվին, սակայն ամենամեծ հարցը կառավարելիության աստիճանի բարձրացումն էր, որը լուծվել էր ցանցակենտրոնության շնորհիվ՝ տիեզերական կառավարում, ԱՄՍ-ներ և այլն, իսկ մեզանում՝ փորձի ու հմտության շնորհիվ: Նույն փորձի ուսական բանակն ամփոփ 2008 թ. ռուս-վրացական պատերազմի ժամանակ և այդ դեպքում ևս խնդիր դրվեց դասական զնդերից անցնել բրիգադների ու վերացնել միջանկյալ դիվիզիա-կորպուս օղակը: Այսինքն՝ ռուսական բանակն այդ ամենը իր կաշվի վրա զգաց միայն 15 տարի հետո:

Մենք կյանքի փորձով աշխարհում առաջին դասական գլխավոր հրամանատարություն-բանակ-դիվիզիա-բրիգադ-գումդ մոդելից անցում ենք կատարել գլխավոր հրամանատարություն-կիրառող ուժեր մոդելին, որը ռազմագիտական լեզվով կարելի է անվանել՝ Կառավարվող ապակենտրոնացում: Սա, ըստ էության, հիմնվորող սերնդի պատերազմների հիմնական տարրերից մեկն է, որը հետո

²¹¹ Written by Victor O'Reilly for Congressman Jim Saxton, D21 Aug 22, 2003, p. 103-108. cochraneinst@adelphia.net; Формирование механизированных бригад «Страйкер» в сухопутных войсках США. 20.08.2010. <http://www.military-intformant.com/index.php/army/523-striker.html#UcIYxfmeMZk>

²¹⁰ Печуров С. Л. Англо-саксонская модель управления в военной сфере. М., 2005, стр. 200-232.

կանրագրեն արևմտյան ռազմական տեսաբանները: Նման մոդելը առաջին հերթին շեշտակի բարձրացնում է գործերի կառավարելիությունը, ինքնուրույնությունը և այլ բաղադրիչներ, որոնք բերում են գործերի կիրառման ընդհանուր արդյունավետությանը:

Աշխարհի հզորագույն բոլոր բանակները, որոնք մեծ ու փայլուն հաղթանակներ են տարել, օժտված են եղել հատկապես հրամանատարների տաղանդով, խիզախությամբ, նվիրվածությամբ, պատրաստությամբ և, մասնավորապես, անձնակազմի՝ ավանդական հատկանիշներից գատ, նաև՝ գործողությունների ազատության հնարավորությամբ: Հայկական քանակը, ըստ էության, իր ենթակառուցված տվել էր ազատ գործելու ու անկաշկանդ հնարավորություն, ինչը, ի հարկե, փորձի և վստահության պաշար է պահանջում, սակայն մախ և առաջ ընդգծում էր հայ տեսակի անհատակամություն լինելու լավագույն հատկանիշները: Եվ դա զարմանալի էր, մասնավորապես, այն առումով, որ ՊՇ-ներում, զրահախմբերում ու մարտական ստորաբաժանումներում ներգրավված էին նվազագույն քանակի մարտիկներ, որոնք, առանց համապատասխան կապի և կառավարման միջոցների, գործում էին հաջող և նրանց համագործակցությունը բարձր մակարդակի էր: Այսինքն՝ այն, ինչ աշխարհի հզորները հետո պիտի անեին՝ շնորհիվ նոր մակարդակի կառավարման համակարգերի, հայկական ուժերը դա արեցին ավելի շուտ և առանց այդ կապի համակարգերի:

Բացի ՊՇ-ների հաջող գործողությունների, զրահախմբերի և հրետանու կիրառման առանձնահատկություններից, կարող ենք նշել նաև այլ գործոններ: Ինչպես տեսնում ենք, հայ հրամանատարները գտել էին մարտավարական, օպերատիվ, ռազմավարական, կամուկերպա-կառուցվածքային այնպիսի լուծումներ, որոնք ռազմարվեստի ամենաառաջավոր լուծումներն էին և դա ապացուցեց համաշխարհային հետազոտությունը, առանց որի էր իրականացվում մարտական և ոչ մի գործողություն: Հայ հետախույզները անմախաղեպ գործողություններ են իրականացրել: Մարտական գործողություններ

րի ապահովման մեջ առաջնային նշանակություն տրվեցին ռադիոհետախույզությանը, ռադիոալայաքային, քուարկինանը և մոլորեցմանը: ՌԷՊ միջոցները արդեն Մարտակերտի ազատագրության ժամանակ կարողացան լուրջ վնասներ պատճառել թշնամուն, իսկ ռադիոսահելի միջոցով հակառակորդի հրետանին կրակ բացեց յուրայինների վրա²¹²: 1993 թ. օգոստոսի 22-ից կայանների անձնակազմերը Գորիսին ու Կապանին սպառնացող թշնամական հենակետերի ոչնչացման գործողության ընթացքում հաջողությամբ իրականացրին հակառակորդի ռադիոկապերի ռադիոէլեկտրոնային ճնշումը և բազմիցս արժանացան այս ուղղության գործերի հրամանատարության խրախուսանքներին:

Հակառակորդի ավիացիայի կայուն ղեկավարումը խախտելու և կողային ՌԷԿ-ների հուսալի ճնշումն ապահովելու նպատակով՝ 1994 թ. մի ստորաբաժանում տեղափոխվեց արևելյան ռազմաճակատ և անձնակազմի հմուտ ու զբաղետ ղեկավարման շնորհիվ զգալի ավանդ ունեցավ հայրենիքի օդային սահմանների պաշտպանության գործում:

Ընդհանուր առմամբ, հայոց բանակը մարտական այդ գործողությունների մեջ շարունակում էր կազմավորման իր հստակ գործընթացը: Բանակաշինության գործը ընթանում էր իր փուլերով: Ստեղծվում էին նորանոր ստորաբաժանումներ, և զորատեսակների աշխատանքը դառնում էր ավելի կազմակերպված ու արդյունավետ: 1993 թ. ռազմական գործողությունների վարման մարտավարական մոտեցումների տրամաբանությունը և 1918 թ. Մարտաբալաս-Ապալան-Ղարաբաղի ճակատամարտի վարման մարտավարության մեջ հստակ կա մի ընդհանրություն. երկու դեպքում էլ հայկական ուժերը, լինելով սակավաթիվ, իրենց հիմնական գործողությունների արդյունավետությունը կառուցում էին մոբիլ խմբերի զորաշարժերի վրա, արագ գրոհում ու ճնդրեր բացում, արագ թևանցում ու չրջան-

²¹² Հարությունյան Գ., Մեր հաղթանակները: Եր., 2012, էջ 318-322:

ցում, խոստովում ճակատային արյունայի մարտերից՝ հակառակորդին կանգնեցնելով փաստի առաջ: Իսկ նման մարտական գործողությունների վարումը պահանջում է զորքերի հստակ ու անխալ կառավարում, անթերի իրագործում և խիզախություն: Այդ ժամանակ չունեցած կապի միջոցներին փոխարինում էր հրամանատարի տաղանդն ու հմտությունը, զորքերի ընկալումը և փորձը, չունեցած պահեստային ուժերին փոխարինում էին մահապարտները, որոնք երբեք չէին նահանջում, երբեք տեղի չէին տալիս ու հակառակորդին ստիպում էին փախչել: Ահա, այսպիսի հատկանիշներն ու այլ գործոններ են օգնում հաղթանակներ տանել այն տեղերում, որտեղ հաղթանակները հաշվարկների դեպքում անհնար են լինում: Արցախյան պատերազմը իր տեսակով դասական տեղային պատերազմ դարձավ հատկապես 1993-1994 թթ.: Հայկական բանակի ստորաբաժանումները միջոցների սակավության պատճառով մարտական գործողությունների ժամանակ զուտ մարտավարական խորության վրա էկմ ճակատով կարողանում էին ապահովել հետևյալ խտությունը՝

- 0.2-0.4 գումարտակ,
 - 1-5 տանկ, բացառիկ պահերին մինչև 7,
 - 2-5 հրանոթ, բացառիկ պահերին մինչև 10 ,
 - 1-2 հակատանկային միջոց, կարճ ժամանակով մինչև 5,
 - 200-300 հակատանկային և հակահետևակային ակամ:
- Նույն ժամանակ հակառակորդը կարողացել է ապահովել՝
- 0.5-1 գումարտակ
 - 7-10 տանկ
 - 7-15 հրանոթ
 - 5-10 հակատանկային միջոց
 - 300-500 հակատանկային և հակահետևակային ակամ
 - 10-15 մարտական թռիչք օդուժի համար
- Աշխարհում քիչ երկրների բանակների է հաջողվել հարթավայրում հարձակողական գործողություններ վարել՝ ի սկզբանե ունենալով հակառակորդից 2-3 անգամ ավելի քիչ ուժեր, երբեմն դասական

պահանջներից էլ սակավ միջոցներ: Սակայն դրանցից էլ ոչ մեկին չի հաջողվել ընդամենը 100-150 միավոր և զրահատեխնիկայով, ընդհանուր ուժերով զիջելով հակառակորդին, մոտ 3000-ոց զորքով, ընդամենը 4-4,5 անգամ ազատագրել մոտ 6000 կմ² տարածք: Ջորաչար-ժելը իրականացվում էին մեծ արագությանը, որը մարտի համար հնարավոր չէր համարվում, զրահատեխնիկան միշտ զինված էր նախատեսվածից սակավ մարտապաշարով, սակայն խնդիրները կատարվում էին փայլուն: Գործողությունների ժամանակ պլանային ժամանակացույցները քիչ էին խախտվում, սակայն եթե անգամ այդպիսի լինում էին, եթե առաջանում էին շեղումներ, ապա հրամանատարների ճիշտ կողմնորոշման, իրավիճակի ճիշտ գնահատման շնորհիվ ամեն ինչ արագ շտկվում էր այնպես, որ հարձակման ընդհանուր մտահղացմանը հավասարյուն լինի:

1993 թ. ազատագրական գործողությունների ավարտից հետո, օգտագործելով հրադադարի ռեժիմը և քաղաքական իրավիճակը՝ Այրբեջանի նոր ղեկավարությունը կատարում էր ուժերի և միջոցների վերախմբավորում և կուտակում: 1993 թ. նոյեմբերի սկզբներից մինչև դեկտեմբերի երկրորդ կեսը հարաբերական անդորր էր տիրում:

Դեկտեմբերի երկրորդ կեսին այդբեջանցիները լայնածավալ հարձակումով կարողացան հասնել մասնակի հաջողությունների: ԼՂՀ ՊԲ-ի ուժերը անհավասար մարտերում ղեկտեմբերի 26-ին ստիպված էին թողնել 13 պահակակետ Փափռավենդի մերձակայքում, մեկ դիրք Մարտունու Աղրուռուն գյուղի մոտ, իսկ դեկտեմբերի 28-ին Թալիչ և Մատուղիս գյուղերը: Դրությունը հատկապես ծանրացավ Փափռավենդ-Քենգեղի տեղամասում: Հակառակորդի ահագնացող ճնշմանը դիմակայելու համար Մահադուլու-Փափռավենդ-Պուշլի յալ բնագծում պաշտպանական մարտերի մեջ մտցվեցին 4-րդ, 5-րդ և Կենտրոնական ՊԸ-ների ու 71-րդ առանձին ՄՀ գումարտակի ուժերը, որոնք հաջողությամբ ետ մղեցին հակառակորդի մեծաթիվ գրոհները, իսկ դեկտեմբերի 29-ին կեսօրին հակահարձակումով ոչ միայն վերականգնեցին մարտական կորցրած դիրքերը, այլև

Բոյահմեղլիի ուղղությանը հաջողությունը զարգացնելով, վերականգնեցին Սաֆուլուի և հարակից բնակավայրերի աղբբջանական կրակակետերը:

Մինչև տարվա վերջին օրը տևած մարտական գործողությունները բերեցին նրան, որ հակառակորդ չնչին հաջողությունների հասավ, սակայն կորցրեց մոտ 700 զինվոր և հայկական հակադարձման ուժերը հասան Թարթառի ջրանցքի աջ ափը: Հայկական զորքերը ապացուցեցին, որ իրենց հարձակմանը դիմանալ անհնար է, իսկ պաշտպանվելուց հետո ամենափոքր հնարավորությունն անգամ օգտագործում են կրկին հարձակման նետվելու համար:

Նոր տարվա առաջին իսկ օրերին հակառակորդը, կրկին մեծ ուժեր կուտակելով, փորձեց ճնդել ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը և, ոչ ավելի, ոչ պակաս, շրջապատել հայկական ընդհանուր ուժերը: Մարտի էին նետվել, այսպես կոչված, Բաքվի հատուկ նշանակության ջոկատները, աֆղան մոջահեդներ և այլ վարձկաններ: Վերախմբավորումներ կատարելով՝ աղբբջանցիները Հոբաղիզի ուղղությամբ 5 կմ ճակատում խորացան մինչև 15 կմ: Այս տեղամասում ՊՐ-ի համար ստեղծվել էր անբարենպաստ իրադրություն, և առաջխաղացումն ամեն գնով շարունակող հակառակորդի դեմ մարտերում հայկական կողմը ևս անդառնալի կորուստներ էր ունենում:

1994 թ. հունվարի 11-ին առավոտյան հուժկու կրակով (ներգրավվեց իրետանի, օդուժ և գրահատելխիկա) հարավում նոր հարձակում սկսվեց: Երկկողմանի ժամը մարտերում աղբբջանցիների առաջխաղացումը կասեցվեց:

Այդ օրը հայկական բանակը Հակոբ-Կամարի մոտ գլխովին ջարդեց Բաքվի հատուկ նշանակության 77 հոգանոց խմբին, իսկ մի քանի օր անց արդեն ամեն ինչ փոխվեց՝ ամենուր ջախջախված, թշնամու գերված ուժեր էին, որ ոչնչացվում էին ամբողջ վաշտերով ու գումարտակներով:

Աղբբջանցիներին չօգնեց նույնիսկ գրահամբռնաների կորսուսը: Դրա շնորհիվ արդեն հունվարի 12-ին հակահարձակումով ոչըն-

չացվեցին հակառակորդի ռազմական հենակետերը Կորգան, Աչաղի, Արդուտահմանու և Յուխարի Մեյլդահմեղլու բնակավայրում: Իսկ հունվարի 26-28-ին թշնամին հարթավայրային հարավարևելյան հատվածում գրահատանկային մեծ կորուստներ կրեց: Աղբբջանական հարձակումը լայնածավալ էր, և հակառակորդը ուղղակիորեն գրոհում էր նաև ՀՀ-ի վրա, ինչը նույնիսկ չէին քաջցնում: Մի շարք հարձակումներ ձեռնարկվեցին Մարտակերտի հեռուստաաշտարակի ուղղությամբ, որոնք, սակայն առավելապես ուշադրությունն Օմարից շեղելու նպատակ էին հետապնդում: ԼՂՀ ՊՐ-ի հրամանատարությունը Օմարի շրջանում կենտրոնացրեց 3-րդ, 4-րդ, 5-րդ և ԿՊ շրջանների 71-րդ ու 51-րդ առանձին ՄՀ գումարտակների ուժերը և հունվարի 24-ին կանգնեցրեց հարձակումը: Հաջող էր պաշտպանությունը նաև մյուս տեղամասերում, որտեղ ևս կասեցվեց աղբբջանցիների առաջխաղացումը:

Փետրվարի սկզբներին ՊՐ-ի ուժերը հաջողական հարվածներով իրականացրեցին Օմարի վերագրավման ռազմագործողությունը, որն ավարտվեց փետրվարի 18-ի առավոտյան՝ լեռնանցքի վրա վերահսկողության հաստատումով:

Մակայն շուտով Քարվաճառում հակառակորդի խմբավորումը ստեղծ ու լյուվին ջախջախվեց:

Թևև աղբբջանցիները հյուսիսում կատարյալ պարտություն էին կրել, քայց չէին հրաժարվում հարձակողական գործողություններից: Փետրվարի վերջին հիմնական հարվածի ուղղությունն ընտրվեց հարավարևելյանը՝ Աշաղի Մեյլդահմեղլու բնակավայրից մինչև Հորաղիզ քնագիծը՝ դեպի Ֆիզուլի ընդհանուր ուղղությամբ: Թշնամին չկարողացավ արդյունքի հասնել, ավելին՝ հակահարձակումով ինքնապաշտպանական ուժերը մարտի սկզբին ոչնչացրին Հորաղիզ գյուղի և 271.8 բարձունքի կրակակետերը:

Ավելի քան մեկ ժամ տևած մարտում աղբբջանցիները ևս չպրտվեցին նաև Աղզամի ուղղությունից, իսկ Օմարում այդպես էլ ոչնչի հասնել չկարողացան և ստիպված վերադարձան ելման դիրքերը:

Ապրիլի սկզբին աղբրեջանցիները նոր հարձակում ձեռնարկեցին Լևոնայի ու Մատաղիս գյուղերի շրջանում: Ապրիլի 10-ին հակահարձակումով ՊԲ-ի ուժերը Գյուլիստան ու Թալիշ ուղղությամբ մի շարք բարձունքներ գրավեցին, իսկ երկու օր անց ստան Վերին Չայլու և Լևոնայի:

Ապրիլի 16-ին ճնշվեց Գյուլիջայի կրակակետը (Մարտակերտից հարավ-արևելք), որը լայն հնարավորություններ էր ստեղծում քեներում գործող մեր ուժերին՝ առաջխաղացումը զարգացնելու համար: Ապրիլի 18-ին 5-րդ ՄՀ բրիգադի ստորաբաժանումները, մի շարք բարձունքներ գրավելով, ընդհուպ ստեղծեցան Թուփկարակոյունլու գյուղին:

Այս ընթացքում համառ պաշտպանությամբ աչքի ընկան Աշաղը Սեյրիսիանդղուից հարավ բնագծում դեպի Ֆիզուլի ձգտող աղբրեջանցիների դեմ գործող ուժերը:

Ապրիլի վերջին և մայիսի սկզբին անեղ մարտեր էին մղվում Կարմիրավանի ազատագրման համար: Գյուղը մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ: Այստեղ աղբրեջանցիները մեծաթիվ ուժեր էին կենտրոնացրել, քանի որ Կարմիրավանի կորստի դեպքում ՊԲ-ի ուժերի առջև մեծ հնարավորություններ էր բացում Յարմջայի ու հարակից պաշտպանական բնագծերը գրավելու համար: Թշնամու դրությունը բարդացնում էր նրանով, որ այս ընթացքում ՊԲ-ի ուժերն իրենց հսկողության տակ էին առել Աղդամ-Բարդա մայրուղին, որը զգալի դժվարություններ էր ստեղծում հակառակորդի առաջին զծի մատակարարման և վերախմբավորումներ իրականացնելու գործում:

Մարտակերտում գրեթե միայն 5-րդ կամավորական բրիգադի կողմից իրականացված հակահարձակմանը չէին դիմանում աղբրեջանական երկու՝ 702 ու 707-րդ բրիգադները, ՆԳՆ գումղը և այլ օժանդակ ուժեր, որոնց թիկունքում կանգնած էին արգելափակիչ ստորաբաժանումները:

Կարճ հրադադարից և հերթական բանակցություններից հետո Բաքում մարտի 3-ին կրկին վերսկսեց հարձակումները: Չմտալինգարձանային ավանտյուրան Աղբրեջանի վրա թանկ մտեց՝ ունե-

ցյալ յուրթական մեծ կորուստներ, մոտ 8000 ոչնչացված զորախումբ, 100 միավոր զրահատեխնիկա և այլն: Հայկական կողմը չգլխոք, որտեղ բաղի այդքան դիպ: Ապրիլի կեսերին հայկական ուժերը շատ արդյունավետ հարձակումներ իրականացրին Մարտակերտի ուղղությամբ՝ մեկը մեկի հետևից ազատագրելով մի քանի բնակավայրեր՝ ընդհուպ մոտենալով Գյուլիստանին:

5-րդ բրիգադի, Տիգրան Մեծ ջոկատի և Մարտակերտի հատվածի ինքնապաշտպանական ուժերի այս գործողությունները նոր տեսակի գլուխգործոց էին այն իմաստով, որ հարձակում էին զարգացնում դժվարաստեղծելի, լեռնաանտառային տեղանքում, խոշոր ձորերի ու բնական այլ արգելքների պայմաններում, որտեղ հակառակորդի ուժերն առնվազն երեք անգամ զերազանցում էին: Այստեղ հայկական ուժերը փայլուն կիրառում էին պարտիզանական մարտավարությանը բնորոշ փոքր խմբերով շրջանցումները, թիկունքային հարվածները, շեղող և այլ գործողություններ: Եվ այս ամենն այն դեպքում, երբ Թարթառի պաշտպանական ընդհանուր բնագիծն աղբրեջանցիները փորձել էին վերածել անառիկ բնագծի (հաճախ այստեղ էր ժամանում Հեյդար Ալիևը), ձեռնարկվել էին բացառիկ միջոցառումներ: Դեռ 1993 թ. աղբրեջանական բանակը, չսահմանավակվելով դաշտային դատարաններով, ըստ էության, Հայրենական մեծ պատերազմից հետո երկրորդ անգամ ստեղծել էր պատժիչ, արգելափակիչ խմբեր: Այսինքն՝ աղբրեջանական պատժիչ խմբերը, թիկունքում կանգնած, գնդակահարում էին մարտից փախչող սեփական զորքին²¹³: Եվ մտան պայմաններում հայկական սակավաթիվ ուժերը, համառ դիմադրությունը կոտրելով, հաղթահարել էին Թարթառի պաշտպանական աննախադեպ բնագիծը և սպառնում էին ազա-

²¹³ Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, համառոտ ուրվագիծ: Եր., 2012, էջ 143:

տագրել Թարթառն ու Բարդան: Ահա, թե ինչ պայմաններում էր Ալիևը Մոսկվայից հրադադար խնդրում²¹⁴:

Հայոց փառավոր հաղթանակների հիմնական հաջողությունը որոշ հեղինակներ կապում են առաջին հերթին աղբրեջանում տիրող քաղաքական անկայունության հետ: Սակայն նրանց հիշեցնենք, որ 1993 թ. ավարտին սկսված աղբրեջանական ամենալայնածավալ հարձակման ժամանակ այդ երկրում անկայունություն չկար: Այդպիսին չէր իրավիճակը մահ 1994 թ. գարնանը, երբ աղբրեջանական հարձակումները շատ ավելի մեծամասշտաբ էին ու կազմակերպված: Ահա այսպես ավարտվեցին մարտական գործողությունները, ահա այսպիսի զարգացումների աղբյուրներում էր թշնամին խնդրագրերը ուզարկում հրադադարի համար:

1993 թ. շարունակվում էր բանակաշինության բարդ գործընթացը, և կառուցվածքակազմակերպչական գործառույթները ամնիջպես ազդում էին ռազմաճակատում հայտղ մարտական գործողությունների վարման որակի, արագության և բնույթի վրա: Այդ բովակամի մարտական գործողությունները ապացուցեցին, որ հայկական բանակը ավելի արագ է զարգանում ու մարտական գործողություններ վարում, քան պետությունը հնարավորություն ունի: Թիկունքային, սպառազինության, մատակարարման և ապահովման ստորաբաժանումները գնում էին գործի հետևից, ինչը բացառիկ երևույթ էր:

Այսպիսով՝ հայկական բանակը կազմավորում էր զորատեսակներ ու զորամասեր՝ հիմնականում չունենալով անհրաժեշտ միջոցներ և հնարավորություններ: Դրա հետ զուգահեռ մարտական գործողություններում հայկական բանակը տանում էր փայլուն հաղթանակներ²¹⁵:

ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի, պաշտպանության բանակի ձևավորումն ու Արցախի սահմանների պաշտպանությունը ղեկավարեցին Արցախի հերոս Սամվել Բաբայանը, Վիտալի Բալասանյանը, ՊԸ հրամանատարի սպառազինության ու տեխնիկայի գծով տեղակալ Վյաչեսլավ Հյուսուցը, Արշավիր Դարամյանը, Արցախի հերոսներ, զեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը, զեներալ-մայոր Սամվել Կարապետյանը, զեներալ-մայորներ Արմեն Դևիրամյանը, Վարդան Բալայանը, Կամո Վարդանյանը, Միքայիլ Արզումանյանը, գնդապետ Գարիկ Մախարյանը, Արցախյան ազատամարտի տարիներին ՊԸ-ների հրամանատարներ Նկոլան Սողոմոնյանը, Նորայր Դանիելյանը, Վաչագան Իշխանյանը, Շահեն Մեղրյանն ու զեներալ-մայոր Սերգեյ Չալյանը:

1.4. Բանակի կառուցվածքը և սպառազինությունը

Ինչպես վերև ասվեց դեռ 1992 թ. զեներալ Ն. Տեր-Գրիգորյանցի ներկայացրեց բանակի կառուցվածքին վերաբերվող մի հիմնավոր փաստաթուղթ: Ստեղծման պահից հայկական ՁՈՒ-ն՝ ըստ կառուցվածքի, բաժանվեց կենտրոնական ապարատի, ղեկավար կազմի, գլխավոր շտաբի, զորատեսակների և զորամիավորումների:

ՁՈՒ-ն ստեղծման պահին ընդհանուր առմամբ որպես նախատիպ ուներ խորհրդային բանակը, սակայն շատ առանձնահատկություններ կային, որոնք կարելի է անվանել ազգային առանձնահատկությունից կամ իրավիճակից բխող: Պաշտպանության նախարարները գրեթե միշտ եղել են քաղաքացիական անձինք: Նախարարը սովյալ ղեկավար իրականացնում էր զինված ուժերի հիմնական կառավարումը, ռեժիմային, տնտեսական և այլ գործառույթների վերահսկողությունը: Հայաստանի Հանրապետության պաշտպանության առաջին նախարար է նշանակվել Վազգեն Մարգարյանը 1991 թ.

²¹⁴ Աղբրեջանն ինքն է խնդրել 94-ի հրադադարի մասին. Կազմիրով, 15 նոյեմբերի 2010. <http://www.haynews.am/hy/archive-16197>

²¹⁵ 1993-1994 թթ. մարտական գործողությունների մանրամասն վերլուծությունը, ինչպես մահ բանակաշինության առանձնահատկությունները, տես՝

Հովհաննիսյան Ա., Տարածաշրջանի ռազմականացումը և Հայոց բանակը, էջ 210-234:

և պաշտոնավարել է մինչև 1992 թ.: Այնուհետև պաշտոնավարել է «Վազգեն Մանուկյանը՝ 1992-1993 թթ.: 1993 թ. ՀՀ պաշտպանության նախարար է նշանակվել Սերժ Սարգսյանը և պաշտոնավարել է մինչև 1995 թ.: 1995 թ. պաշտպանության նախարար կրկին նշանակվել է Վազգեն Սարգսյանը և պաշտոնավարել մինչև 1999 թ.: Նույն թվականին նախարար է նշանակվել Վաղարշակ Հարությունյանը, իսկ 2000 թ.՝ կրկին Սերժ Սարգսյանը և պաշտոնավարել մինչև 2007 թ., այնուհետև Միրայել Հարությունյանը՝ 2007-2008 թթ.: 2008 թ. մինչ օրս պաշտպանության նախարարը Սեյրան Օհանյանն է²¹⁶:

Ջորջերի անմիջական ղեկավարումն իրականացնում էր զինված ուժերի գլխավոր շտաբի պետը, որը զինվորական պաշտոն էր: Նա միաժամանակ նախարարի տեղակալ էր համարվում: 1991 թ. ՋՈՒ ԳԸ պետ է նշանակվել Գուրգեն Դալիբաբյանը և այդ պաշտոնում մնացել մինչև 1992 թվականը: Նույն թվականին նշանակվել է կրկին խորհրդային զենքավոր Նորստ Տեր-Գրիգորյանը և պաշտոնը զբաղեցրեց մինչև 1993 թ.: 1993 թ. նշանակված Հրաչ Անդրեսայանը շարունակել է պաշտոնավարել մինչև 1994 թ.: Նույն թվականին նշանակվել է Միքայել Հարությունյանը և այդ պաշտոնում եղել մինչև 2007 թ.: Այնուհետև 2007 թ. նշանակվել է Սեյրան Օհանյանը՝ մեկ տարով: 2008 թ. պաշտոնավարում է Յուրի Խաչատուրովը:

Պաշտպանության նախարարի այլ տեղակալները ևս կարող էին լինել ինչպես քաղաքացիական անձինք, այնպես էլ զինվորականներ: Առաջին տեղակալը զորքերի մարտունակության հիմնական պատասխանատուն էր, սակայն ներկայումս առաջին տեղակալը հիմնականում պատասխանատու է կայքերի և կրթության համար: Մյուս տեղակալները համակարգում էին տարբեր ոլորտները՝ սպառազինություն, ֆիլմեր, իրավական աշխատանք, դաստիարակություն և այլն: Պաշտպանության նախարարի տեղակալներից բանակաշինության գործում մեծ ներդրում ունեն գեներալ-լեյտենանտներ՝

Անատոլի Ջինկիչը, Միխայիլ Գրիգորյանը, Գուրգեն Մելքոնյանը, Արթուր Աղաբեկյանը, Ալիկ Միրզաբեկյանը, Սլրտիչ Աբրահամյանը, Մանվել Գրիգորյանը, գեներալ-մայորներ Սերգեյ Մարտիրոսյանը, Ալուտ Պետրոսյանը, Աստվածատուր Պետրոսյանը, Գրիգոր Հարությունյանը, գեդապետներ Վահրամ Խորխոտունին և Հմայակ Հարությունը: Ժողովրդական տեղակալներից են եղել Անդրանիկ Քոչարյանը, Գևորգ Վարդանյանը, Վահրամ Շիրխանյանը, այժմ՝ Դավիթ Տոնրյանը և Արա Նազարյանը:

Ջինված ուժերը, ըստ կառուցվածքի, ունեին ցամաքային զուստեսակներ և օդուժ: Ցամաքային զորատեսակներն են՝ հետևակ, կրետանի, զրահատանկային զորքեր, հետախուզություն, ՀՕՊ զորքեր, ինժեներական զորքեր, կապի զորքեր ու Ռ-Գ: Օդուժը կառուցված չէր խորհրդային դասական տարբերակով, քանի որ միջոցների սակավության պատճառով քանակային ավիացիան և օդուժի այլ տեսակները միավորված էին:

ՋՈՒ-ն, ընդհանուր առմամբ, կառուցվածքային մեծ փոփոխություններ չէր կրում մինչև 2007-2008 թթ.: Պաշտպանական բարեփոխումները լայն թափ ստացան այն ժամանակ, երբ օրենքով ամրագրվեց, որ նախարարի ու տեղակալների պաշտոնները քաղաքական են, և զորքերի վերահսկողության հիմնական պատասխանատուն ԳԸ-ն է, որ քանակի մատակարարման հարցերը լուծվում են ԳԸ-ի պատվերով և նախարարի տեղակալ-ղեկավարտանեստի պետի ապարատի կողմից իրականացվող տեղեկրային թափանցիկ գնումներով: Արդեն առանձնացված կառույցներ համայնվող ՊՆ-ի և ՋՈՒ ԳԸ-ի ներկայիս կառուցվածքը տես՝ գծանկար-2-ում:

ՀՀ ՋՈՒ-ի թվակազմը ներկայումս կազմում է մոտ 45.000²¹⁷, որի զգալի մասը սպաներ, ենթասպաներ և պայմանագրային զինծառայողներ են: Ժամկետային զինծառայողները գնալով ավելի շատ են փոխարինվում պայմանագրայիններով: Հայկական բանակը քա-

²¹⁶ ՀՀ ՊՆ պաշտոնական կայք:

²¹⁷ The Military Balance 2010, p. 174; 2013թ. ՀՀՊՆ-ի կողմից The Military Balance-ին փոխանցվող տեղեկագրերի տվյալներ:

ժամկած է պաշտպանության բանակի, բանակային հինգ կորպուսների և օպերատիվ ենթակայության բրիգադների ու զննչի, որոնք հիմնականում հարվածային հեռահար միջոցների և հատուկ նշանակության զորամասերն են ու զորատեսակները: Դրանք են մասնավորապես օդուժը, ՀՕՊ-ը (որոնք, ի դեպ, միավորված չլինելով՝ որոշակի խնդիրներ ունեն, որին կամորդարաբանը), հրթիռահրետամային բրիգադներն ու զննչը, հակատանկային զուեղը, հատուկ նշանակության բրիգադը, ռադիոհետախուզությունը, ռադիոէլեկտրոնային պայքարի և այլ զորամասերը: Պաշտպանության բանակը, որը ամենամեծ զորամիավորումն է, իր հերթին բաժանվում է երկու դիվիզիայի և օժանդակ այլ զորամասերի ու ստորաբաժանումների, որոնցից իր հիմնական ռեզերվում ունի հարվածային մեկական բրիգադ՝ գրահատանկային, մոտոհրաձգային և փոքր այլ ստորաբաժանումներ²¹⁸: Պաշտպանության բանակը, լինելով բանակային օդակի զորամիավորման խնդիրներ լուծող զորախումբ և գտնվելով թշնամու հիմնական հարվածի ուղղության վրա, ունի խորհրդային կորպուսների հաստիքներ ու քանակություն: Բանակային կորպուսները, լուծելով խորհրդային կորպուսների և բանակների խնդիրներ, ունեն դիվիզիաների հաստիքներ ու քանակություն: Մակայն, քանի որ դրանցից յուրաքանչյուրը պետք է լուծի իր կոչմանը համապատասխան խնդիրներ, ունի պահպանության համապատասխան տարածքներ,

²¹⁸ Ավելի հասկանալի լինելու համար ներկայացնենք, որ խորհրդային բանակը ուներ այսպիսի կառուցվածք՝ գնդերից հետո իր չափերով հաջորդ զորամիավորումը բրիգադն էր, որը կազմում էր երեք գում ու այդպես ամեն մի նախորդ երեք զորամիավորումը կազմում էր ավելի մեծ մեկը: Երեք բրիգադը կազմում էր մեկ դիվիզիա, որոնք իրենց հերթին մեկ կորպուս և դրանք էլ մեկ բանակ: Միջին հաշվով մեկ բրիգադը ուներ մինչև 5000 իռզի անձնակազմ, մեկ դիվիզիան՝ մինչև 15-18 հազար, մեկ կորպուսը՝ 60-80 հազար, իսկ մեկ բանակը կարող էր ունենալ մինչև 500 հազար անձնակազմ: Ինչպես կարող ենք տեսնել, հայկական բանակի համեմուն զորամիավորումները չափերով բավականին փոքր են խորհրդայիններից, սակայն իրականացվելիք խնդիրներով ոչ միայն չեն զիջում, այլ նաև գերազանցում են:

ուստի դրանց ենթակայության տակ եղած և մարտերի ժամանակ տրված ստորաբաժանումների բանակն ու հզորությունը կարող է փոփոխվել: 2008-2012 թթ. դրանք շեշտակիորեն փոխվել են: Մասնավորապես, բոլոր օդակների ենթակայության տակ եղած տանկային գումարտակները և հրետամային դիվիզիոններն այսօր ակտիվորեն վերակազմավորվում են զննչի: Դրանք, ըստ էության, տվյալ ուղղությամբների (պատերազմի ժամանակ ուղղությունները ենթադրում են մեկ կամ երկու զորամիավորում՝ դիվիզիա կամ կորպուս, ընդհանուր՝ մինչև 100-150 կմ ճակատ) հարվածային հիմնական միջոցներն են: Նման միջոցները հիմնականում տեղակայված են հավանական և նախատեսվող հարվածների հասցման ուղղություններում այն հաշվարկով, որ ելնելով տեղանքի պայմաններից ու այլ իրավիճակներից՝ հակառակորդին առավելագույն վնաս պատճառեն: Հայկական բանակի զորամասերը և ստորաբաժանումները սկզբից ևս ունեին խորհրդային դասական ստորաբաժանման տարբերակը: Յուրաքանչյուր երեք ջոկ կազմում էր մեկական դասակ և այդ սկզբունքով երեք դասակը՝ վաշտ, երեք վաշտը՝ գումարտակ, երեք գումարտակը՝ մեկ գում: Իհարկե, սկզբից հիմնականում անձնակազմի և տեխնիկայի սակավության պատճառով կարող էր, օրինակ, գումարտակում լինել ոչ թե երեք վաշտ, այլ՝ երկու: Մասնավորապես՝ խնդիր ծանր էր հրետամու զորամասերում, որտեղ մարտկոցները կազմված էին ոչ թե հրետամային վեց միջոցներից, այլ՝ երեք յոթ, նույնը դիվիզիոններում. կարող էին լինել հաստիքով նախատեսվածից պակաս: Մակայն այդտեղ 1990-ականների վերջին և 2000-ականների սկզբներին այդ իրավիճակը շտկվեց: Գրեթե բոլոր ստորաբաժանումները համալրվեցին այդ բացակա միջոցներով, և ավելին՝ որոշ ստորաբաժանումներ սկսեցին վերակազմավորվել մեկ աստիճան բարձր ստորաբաժանումներ²¹⁹: 2000-ական թվականների կեսերից բանակում տեղի են ունենում այնպիսի բարեփոխումներ, ո-

²¹⁹ 2004, Պաշտպանության նախարարի զեկույցը ամփոփիչ կոլեկիայի նիստին, նախարարի գործավարություն:

րոնց ընթացքում շատ ստորաբաժանումներ օպտիմալացվում են, ստանում այլ կառուցվածք և տեսք, համալրվում նոր զենքերով ու զինտեխնիկայով և լուծում այնպիսի խնդիրներ, որոնք նախատեսված չէին խորհրդային բանակի տարբերակով: Այդպիսի բարեփոխումների են ենթարկվում հատկապես տեխնիկական շատ գործասեր և ստորաբաժանումներ: Հայաստանի տարածքային պաշտպանության տարբերակը և բազմիցս քննարկվել է: Չնայած որ պատերազմի ժամանակ բանակային կորպուսները և ՊՇ-ները հենց նման ֆունկցիաներով են օժտված լինելու, սակայն բանակի հրամանատարությունը ուսումնասիրում է նաև համաշխարհային փորձը²²⁰: Առաջնագծի գործասերը ևս այս առումով ստանում են նոր տեսք, մասնավորապես այդ գործասերում ծանր զենքերի, զրահատեխնիկայի և այլ միջոցների քանակների ներդրումը զգալիորեն փոխել է իրավիճակը: Վերջին 5-6 տարիների ձեռքբերումներից է այն, որ հայկական բանակի ջոկերը ստացել են նոր կառուցվածք և դրան համապատասխան՝ սպառազինություն: Հարցը կոնկրետ վերաբերում է արդեն բոլոր ջոկերին հատկացվող երկուական տարբեր զնդացիրներին, բոլոր դասակներում առկա հակատանկային լրացուցիչ միջոցներին, այդ թվում՝ հրթիռներ, բոլոր վաշտերում ծանր զենքերի քանակի շեշտակի ավելացմանը և այլն: Համագործային բոլոր ստորաբաժանումներն ու գործասերը մեծացնում են իրենց հակաօդային, հրետանային, հակատանկային, տանկային և ինժեներական կառույթությունները, ինչպես նաև մարտական ասպիտովման այլ հարցերը²²¹: Բոլոր զնդերում ստեղծվում կան հզորացվում են տանկային գումարտակներ, եղած տանկային ստորաբաժանումները շատ ժամանակ դարձվում են զրահատանկային, որոնց մեջ է մտցվում այլ

²²⁰ Զորանցյալն Հ. Ա., Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով, Հայկական բանակ, 3(6), 2009, էջ 25-33:

²²¹ Մարտական ասպիտովման կայան է, հետախուզությունը, քողարկումը և այլն:

զրահատեխնիկա՝ դարձնելով խառը զրահախմբեր: Գնդերում կզույսացվում են ՀՕՊ միջոցները, հրետանին, գումարտակները հրետանային առանձին միջոցներ են ստանում, որպեսզի ինքնուրույնությամբ խնդիր ընդհանրապես չունենան:

ՀՀ ՁՈւ-ի ստորաբաժանումները ստեղծվել են խորհրդայինների փրա, սակայն դրանց ուղղակի պատճենումը չեն: Մեզանում էլ խորհրդային բանակի նման կան՝

- ջոկեր
- դասակներ
- վաշտեր
- գումարտակներ
- զնդեր
- բրիգադաներ, դիվիզիաներ
- կորպուսներ ու բաժակ:

Սակայն, ինչպես արդեն նշեցինք, կան իրավիճակից բխող շեղումներ. օրինակ՝ մեզ մոտ պարտադիր չէ, որ այս սանդղակի ամեն մի հաջորդ ստորաբաժանումը կամ միավորումը իր մեջ ունենա նախորդի հստակ երեք միավորը:

Մինչ օրս ՀՀ ՁՈւ-ում կազմավորվել է 323 առանձին կարգավիճակ ունեցող ստորաբաժանում, գործասա և գորամիավորում, որոնք ժամանակի ընթացքում նաև փոփոխությունների են ենթարկվել: Դրանցից մոտ 200-ը գումարտակ, գունդ և բրիգադ օղակի ստորաբաժանումներ ու գորամիավորումներ են, որոնք ամմիջապես մարտական նշանակություն ունեն: Դրանց մասին մանրամասն տեղեկությունները մեծամասամբ գաղտնի են:

Ընդհանուր բարեփոխումների տրամաբանությունը բխում է նաև ռազմավարական հարցերի վերանայումից, բանակի կիրառման դոկտրինալ փոփոխություններից: Եթե հայկական բանակը մինչև 2000-ականների վերջերը հիմնականում պատրաստվում էր պաշտպանության, և խոսք էր գնում միայն հակահարձակման մասին, ապա այսօր, դոկտրինալ առումով՝ խոսքը կանխարգելիչ հարվածի և

հարձակողական գործողությունների մասին է: Այդ մասին են վկայում բանակի կողմից վերջին ժամանակներում անցկացվող լայնամասշտաբ բազում զորավարժությունները:

Սպառազինությունը.

Հայկական բանակի կազմավորման ժամանակ սպառազինությունը՝ չհաշված որոշ ինքնաշեն և փոքր մոդելներ, հիմնականում խորհրդային նմուշներ էին՝ ատրճանակներից սկսած մինչև ուղղաթիռներ ու հակաօդային պաշտպանության զենիթահրթիռային միջոցներ: Շատ ժամանակ դրանք խորհրդային բանակի սպառազինությունից վաղուց հանված նմուշներ էին, որոնք, սակայն, հայ ազատամարտիկների և զինվորականների կողմից կիրառվում էին մեծ հաջողությամբ: Նման միջոցներից էին հակակարկտային «КС-19», «Ալազան» կայանները, նաև «Կրուգ» զենիթահրթիռային համակարգը: Վերջինս, երկար տարիներ լինելով խորհրդային զինամուտոմ, չէր օգտագործվել մարտական որևէ գործողության մեջ, չէր ունեցել նշանակալի որևէ հաջողություն և դուրս էր գրվել սպառազինությունից հնացած լինելու պատճառով: Հայ հակաօդայինները, սակայն, ոչ միայն այն առաջին անգամ կիրառեցին մարտում, այլև գործարեցին աշխարհի բարդագույն նշանակետերից մեկի՝ «МиГ-25» արագաթիվ կործանիչի նկատմամբ:

Խորհրդային բանակից հայկական նորաստեղծ բանակին մնացած սպառազինությունը կազմում էր մոտ 180 միավոր տանկ, ընդ որում, երկու տեսակի՝ «Т-55» հին տանկեր և «Т-72» համեմատաբար նոր տարատեսակ, մոտ 450 միավոր տարատեսակ զրահանքերենա, այդ թվում՝ շուրջ 200 միավոր հետևակի մարտական մեքենա՝ երկու տեսակի՝ «БМП-1» և «БМП-2», 250 միավոր հրետանային միջոց և այլ մանր սպառազինություն²²²: Խորհրդային տարիներին Հայաստանի տարածքում մեծ ռազմարագաներ, ինչպիսիք Աղդամի պահեստներն էին կամ Աղբրեջանի ու Վրաստանի տարածքների օ-

դամավակայանները, չկային: Եղածն ընդամենը խորհրդային 7-րդ բանակի միջոցներն էին, որոնք էլ չհաջողվեց ամբողջովին վերցնել, և շատ բան Հայաստանի տարածքից ուղղակի հանվեց:

Պատերազմի առաջին իսկ օրվանից հայկական բանակը զինված էր «Կալաշնիկովի» մի քանի տեսակի ինքնաձիգներով, գնդազիներով, տարատեսակ ատրճանակներով: Շատ փոքր քանակությամբ կային նաև «Мосин» հրացաններ, «Мосин» և «КСК» կարաբիններ, որոնք մեծ հաշվով փամփուշտների կիրառման տեսանկյունից ոչ մի խոչընդոտ չէին ստեղծում, քանի որ կիրառում էին նույն կալաշնիկովի տեսակների զենքերի փամփուշտները: Դրանք հիմնականում 5.45 մմ-ոց, 7.62 մմ-ոց և նույն տրամաչափի մեծ փամփուշտներ էին²²³: Չնոքի հրաձգային զենքերից ավելի մեծ զենքերի դեպքում խնդիրներն ավելի էին խորանում. եթե 1990-1992 թթ. հինգ ազատամարտիկներից երկուսն ուներ վերը նշված հրաձգային զենքերից ինքնաձիգներ կամ հրացաններ, նոճակներ, սովորական զնդազիններ՝ 12.7 մմ-ոց և ավելի մեծ տրամաչափի, նոճականետեր, ակամանետներ և սպառազինության այլ նմուշներ, ապա 100-ից ավելի ազատամարտիկներից յուրաքանչյուրին հասանելիք 10-ի փոխարեն կար մեկ-երկուսը: Սա էլ նաև պատճառը, որ հակառակորդի թիվն ինքնապաշտպանական արդյունավետ մարտեր:

Էլ ավելի մեծ զինատեսակների և տեխնիկայի մասին խոսելիս՝ ավելի մեծ խնդիրներ պիտի արձանագրենք: ԽՍՀՄ փլուզումից հետո իրավիճակը հետզհետե շտկվում էր: Տարբեր ճանապարհներով հայկական զինուժը ստանում էր նոր միջոցներ և տեխնիկա: Հրետանույան միջոցներից հիմնականում շատ էին կիրառվում 82 և 120 մմ-

²²² Устинов А. И., Патроны ручного огнестрельного оружия и их криминалистическое исследование, Москва, 1982, стр. 18-42; Чумак Р. Н., Русский 7,62 мм винтовочный патрон, История и эволюция // СПб Атлант, 2007; Благовестов А. И., То, из чего стреляют в СНГ, Справочник стрелкового оружия / под общ. Ред. Тараса А. Е., Минск, 2000, стр. 541-542.

²²³ Հարսրայան Ս., Դարարադյան պատերազմ, էջ 22-24:

ոց ականանետները: 76, 85 և 100 մմ-ոց հրետամային միջոցները ևս գնալով շատանում էին, մասնավորապես՝ հակակարկապային «КС-19» կայանները, մոտավորապես 450 միավոր էին, որոնցից հնարավոր եղավ օգտագործել միայն 250-ը²²⁴: Սակայն, մեծ արդյունավետություն չունեին: Բացի այդ, դրանց համար արկերը շատ սակավ էին²²⁵: Նշված միջոցների մեջ կային հրանոթներ, որոնք երկրորդ աշխարհամարտի ժամանակ էին կիրառվել: 122 մմ-ոց հրետամային միջոցները, մասնավորապես՝ «Д-30» հատիցները, որոնք բազմամպատակայիններն էին, պատերազմի ընթացքում շատ սակավ էին՝ ոչ ավելի, քան մեկ-երկու տասնյակ: Իսկ 152 մմ-ոց հիմնական տրամաչափի հրանոթներ գրեթե չկային մինչև պատերազմի ավարտը: Միայն 1993-1994 թթ. պաշտպանողական, հետո նաև ազատագրական մարտերին են մասնակցել նման միջոցները. մասնավորապես՝ 152 մմ-ոց «Сеоаиот» հեռահար հրանոթ-հատիցները մասնակցել են Քարվաճառի, Աղյամի ազատագրմանը և բավականին արդյունավետ ու հեռահար կրակ են վարել²²⁶: Նման ինքնագնաց միջոցները՝ խոսքը դեռ ԽՍՀՄ-ի ժամանակներից չէ տարածքում մնացած «2С3» հրետամային ինքնագնաց կայանների մասին է, մասնակցել են նաև ազատագրական արագընթաց մարտերին՝ հարթավայրերում: Մեզանում հրետամային միջոցները առանցքային նշանակություն ունեն նաև այն առումով, որ փոխարինում են օդային հարձակման միջոցներին, լեռնային տեղանքում անփոխարինելի են՝ որպես կրակային հզոր միջոցներ²²⁷:

²²⁴ Դերիկյան Տ., Կրակն պատռե՛լ, չէ ՋՈՒ զորատեսակներ, Հրթիռային զորքեր և հրետանի, Եր., 2008, էջ 15:

²²⁵ չէ ՋՈՒ-երի հրետանու առաջին պետ՝ գեներալ-մայոր Հայրապետյան Վ. հետ ունեցած զրույցի տղազրույթումից:

²²⁶ Դերիկյան Տ., Կրակն պատռե՛լ, չէ ՋՈՒ զորատեսակներ, Հրթիռային զորքեր և հրետանի, էջ 16-20:

²²⁷ Խաչատուրով Յու. Գ., չէ ՋՈՒ-ի հրթիռային զորքերի և հրետանու զարգացման հիմնական ուղղությունները պաշտպանական բարեփոխումների

Ջրահատակային միջոցները՝ հին «Т-55» և համեմատաբար նոր «Т-72» տանկերն էին: Առաջինը, ճիշտ է, հնացած էր, սակայն քանի որ ուներ 100 մմ-ոց ակոսավոր հրանոթ, ապա երբեմն կարող էր կիրառվել որպես հրետամային միջոց և թթև լինելու շնորհիվ՝ լեռնային որոշ տեղանքներում հաջողությամբ էր կիրառվում՝ որպես կրակային առանձին աջակցության միջոց: Ընդհանրապես հայկական կողմը, մինչև 1993 թ. ամառային մարտերը, սակավությամբ և այլ պատճառներով տանկերն ու այլ միջոցները հիմնականում կիրառում էր որպես կրակային աջակցության մեծ ու հեռահար միջոցներ: Ջրահատելիսկային կիրառվում էին նաև «БМП-1» և «БМП-2» հետևակի մարտական մեքենաները, մասնավորապես, երկրորդը մեծ հարգանք էր վայելում անճանակազմի մոտ՝ շնորհիվ իր հեռահար 30 մմ-ոց ավտոմատ հրանոթի: Մեծ տարածում ունեին «МТЛБ» կոչված բազմամպատակ զրահամեքենա-քարշաղը և տարբեր զրահափոխադրիչներ, մասնավորապես՝ «БРДМ», «БТР-60», «БТР-70» և այլն:

Ահա, նման սպառազինությամբ մենք հարթեցինք քյնամուն: Պատերազմի վերջին փուլում և հատկապես դրանից անմիջապես հետո հայոց բանակը ՌԴ-ից ստացավ մեծ քանակությամբ զենք ու զինամթերք:

1994-1996 թթ. Հայաստանը ՌԴ-ից ստացել է մեծ քանակությամբ նոր սպառազինություն և ռազմական տեխնիկա, որը, անշուշտ, նորաստեղծ քանակի համար շատ կարևոր էր: Դրանք, սակայն, հիմնականում արդեն մեծ ազդեցություն չէին կարող թողնել մարտական գործողությունների վրա²²⁸: Խոսքը վերաբերում է, այսպես կոչված, մեկ միլիարդ դոլար արժողությամբ զենքին, որի մասին շատ էին խոսում Ադրբեջանում՝ որպես զրաչուկան մատակարարում: Հենց այդ ժամանակ մեզ փոխանցված սպառազինության մեջ հատկապես

հաստեղծություն՝ հանաչխարհային միտումների հաշվառմամբ, Հայկական բանակ, 4(74), 2012, էջ 9-18:

²²⁸ Кенжетаяв М., Оборонная промышленность Республики Армения, "Жспорт вооружений, № 6, октябрь-декабрь, 1997.

կարևոր նշանակություն ունեին ծանր զենքերն ու զնդացիները, նոնականտներն ու ականանտները, տանկերը, հրետանային մեծ միջոցները և այլն: Այդ ժամանակ չէ տարածքում՝ 102-րդ ռուսական ռազմաբազայում, տեղակայվեց նաև «С-300 В» զենիթահրթիռային առաջին համալիրը²²⁹:

Հետագա տարիներին հայոց բանակի սպառազինությունը և ռազմական տեխնիկան օրեցօր հզորանում է թե՛ քանակապես, թե՛ որակապես: 1999 թ. Հայաստանը Չինաստանից գնեց մեծ քանակությամբ հրաձգային զենքեր, մասնավորապես, «Կալաշնիկովի» ինքնաձիգի՝ շինական արտադրության «Топ-59» ինքնաձիգներ և մեծ հետախույզային հրթիռային համազարկային կայանքներ՝ «WM-80 Топфун»: Վերջիններս ունեն 273 մմ տրամաչափի ուր հրթիռ և կարողանում են թիրախներ խոցել՝ մինչև 80-90 կմ հեռավորության վրա²³⁰: Նման միջոցներ տարածաշրջանում ընդհանրապես չկային մինչև 2004-2005 թթ., երբ Ադրբեյջանը Ռուսիայից գնեց նմանատիպ ռուսական «Смерч» կայանքներ: 2003-2005 թթ. Հայաստանը Սլովակիայից գնեց մոտ 10 միավոր «Су-25» գրոհիչ ինքնաթիռ՝ դրանց քանակը հասցնելով 20-ի: Նույն ժամանակում գնեց նաև ռազմատրանսպորտային երկու «Ил-76» ինքնաթիռ²³¹, իսկ 2008-2010 թթ. Ռուսիայից ձեռք բերեց «Ил-39» ռուսմամարտական 10 միավոր ինքնաթիռ: Սովորական սպառազինությունների ձեռքբերումները մշտական բնույթ են կրում, և դրանք տարեցտարի ավելի մեծ ծավալներ են ստանում: Օրինակ՝ 2000-ականների կեսերից հայոց բանակում գնումների շնորհիվ հայտնվեցին նոր սերնդի և տարբեր հեռահարության հակատանկային միջոցներ՝ 60 մմ-ոց փոքր և այլ ականանետներ, մեծ քանակությամբ սովորական զնդացիներ և այլն, ո-

րոնցից շատերը առաջին անգամ տրվեցին նաև դասակներին: Այդ ամենի շնորհիվ հայոց բանակի փոքր ստորաբաժանումները՝ ջոկ, դասակ, վաշտ, ներկայումս ավելի են զինված, քան աշխարհի շատ բանակներում: Մեր բանակի ստորաբաժանումները հազեցել են 12.7 մմ-ոց հեռահար դիպուկահարներով, անզիական, ֆիննական ու այլ արտադրության 8.59 մմ-ոց հատուկ նշանակության դիպուկահարներով, իսկ հատուկ նշանակության ջոկատները՝ նաև այլ տեսակների քսցատիկ զինատեսակներով ու սարքավորումներով: 2008 թ. սպառազինման նոր ծրագրերն անմիապղծ են իրենց ծավալներով: Երկիր են բերվել և դեռ բերվում են մի քանի հարյուր միավոր գրահատեսնիկա, տանկ, հրետանային մեծ՝ 152 մմ միջոցներ: Այդ տարիներին գրեթե լիովին վերանվաճվել է ՀՕՊ-ի հեռահար բաղադրիչը: Հին համալիրների փոխարեն այսօր հիմնական հեռահար միջոցներ են համարվում «С-300 ПС» զենիթահրթիռային համալիրները²³²: ՀՀ-ն հրթիռային ուղրտում մեծ ձեռքբերումներ է իրականացրել: Ներկայումս բանակի սպառազինության մեջ կան 220, 273, 300 մմ-ոց համազարկային կրակի կայանքներ, 40-ից մինչև 90 կմ հեռահարության, 70-120 կմ հեռահարությամբ «Точка У» մարտավարական հրթիռներ, 300 կմ հեռահարությամբ «Р-17 Эльбрус» օպերատիվ մարտավարական հրթիռներ և այլն²³³: Նման միջոցների քանակը տարեցտարի շատանում է:

Այսօր հայոց բանակը սպառազինության մեջ մեծացնում է սեփական ռազմաարդյունաբերության տեսակարար կշիռը: Հայաստանը գրեթե զրոյից սկսեց ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծումն ու կայացումը: Կարճ ժամանակում հայկական ընկերություններում մշակվել են զենքերի զգալի մոտիվներ, որոնցից մի քանիսն արդեն գտնվում է մեր բանակի սպառազինության մեջ: Դրանցից հատկապես հետաքրքիր են «Կտուճկ» և անօդաչու թռչող այլ սարքե-

²²⁹ ՀՀ ՊՆ Հարությունյան Վ. հետ ունեցած առանձնագրույցի սղագրությունից, Հեղինակի անձնական արխիվ:

²³⁰ Шуйков В. Н., Ракетное оружие, М., 2001, стр. 485-52; Гуров С. В., Реактивные системы залпового огня, Тула, 2006, стр. 260-262.

²³¹ Московский Комсомолец, 22 мая, 2004, № 110, стр. 4.

²³² ՀՀ ՊՆ Օհանյան Ս. Եղույթը նվիրված Հայոց բանակի 21-ամյակին: 2011, Երևանի գորահանդես:

²³³ 2011, Երևանի գորահանդես:

րը, համազարկային ականանետերը և որոշ զինատեսակներ²³⁴: Հայկական արտադրության մուրշներից են մաս հրետամու կրակի կառավարման տարբեր համակարգերը: Օրինակ՝ «2 ԿԱ-Ա-02» համակարգերը, համալրված լինելով ժամանակակից համակարգչային սարքավորումներով, կարող են մինչև 20 կմ հեռավորության վրա հայտնաբերել ու գրանցել հակառակորդի նշանակետերը, որոշել տեխնիկայի և սպառազինության տեսակը, ցերեկային և գիշերային պայմաններում ճշգրիտ որոշել հրաձգության տվյալները և արդյունավետ սպասարկել հրետամու կրակը:

Հայ մասնագետները ստեղծեցին բազմափող նոնականետային շարժական կայանքներ: Դրանք նախատեսված են, որ ոչնչացնեն հակառակորդի շողարկված կրակակետերը, բաց տեղանքում և տարբեր տեսակի բաքստոցներում՝ կենդանի ուժը, մաս շարքից դուրս հանեն զրահապատ և ավտոմոբիլային թեթև տեխնիկան: Կայանքները կարող են 6 վայրկյանում կատարել 12 համազարկ և միջին հեռավորությունների վրա միաժամանակ հրետակոծել 1.500 քառակուսի մետր մակերես²³⁵:

Այժմ հայկական ռազմաարյունաբերությունը թողարկում է ավելի քան 2.000 ամուն արտադրատեսակ: Մեր ձեռնարկություններում նորոգվում է սպառազինության ու ռազմական տեխնիկայի ամբողջ տեսականին: Հայկական արտադրության զենքերից շատերը ոչ միայն բազմիցս ներկայացվել են տարբեր ցուցահանդեսների ժամանակ, այլ մաս կիրառվել զորավարություններում և մարտական իրավիճակներում: Հայկական ամօդաչու թռչող սարքերը իրականացրել են մարտական խնդիրներ, կիրառվել են հատկապես հրետամու կրակի կառավարման համակարգում, ինչն արդեն մոր սերնդի պատերազմների տարրերից է և տվյալ դեպքում՝ գուտ ազգային հենքի վրա:

²³⁴ Հայկական բանակ, թիվ 3, 2011, էջ 60-123:

²³⁵ Նույն տեղում, մարտավարատեխնիկական բնութագիր:

Այսօր հայոց բանակը սպառազինված է աշխարհի առաջավոր քանակների ցամաքային սպառազինության մեջ գտնվող հիմնական զինատեսակներով ու զենքերով:

Ցամաքային զորքերի սպառազինության մեջ է գտնվում հրաձգային զենքերի մեծ տեսականի: Այսպես՝

1. Ատրճամակներ՝ հիմնականում «ՓՄ» և «ՏՏ» տեսակի:

2. Ինքնաձիգներ՝ հիմնականում «Կալաշնիկովի» «ԱԿՄ», «ԱԿ-74» և դրանց բազում տարատեսակները: Հատուկ ուժերի սպառազինության մեջ վերջերս հայտնվել է մաս ռուսական «ԱՇ Յառ» ինքնաձիգը:

3. Գնդացիքներ՝ հիմնականում «Կալաշնիկովի» համակարգի «ՔՄԿ», «ՄԿ», մեծ գնդացիքներ՝ «ՃՍԿ», «ԿՄԵ» և «ԿՇԵ», որոնց շանակը բավականին շատ է: Եթե 1990-ականների սկզբներին 15 զինվորին բաժին էր հասնում մեկ սովորական գնդացիք, իսկ մեծերը՝ ամեն 50-րդ զինվորին, այսօր իրավիճակը մոտ 5 անգամ բարելավվել է:

4. Դիպուկահարներ. բացի խորիդային «ՇԵԿ»-ից, այսօր համազորային ստորաբաժանումներում մեծ տարածում ունեն «Սև մետ» կոչվող 12.7 մմ-ոց մեծ դիպուկահարները, իսկ հատուկ ստորաբաժանումներում՝ աշխարհառչակ «Accuracy SWA», «Sako TRG-42», «ՔԳՄ», «ՅՇՇ» և այլ դիպուկահար հրացանները:

5. Նոնականետեր՝ հիմնականում խորիդային արտադրության «ՔՄԳ-7»՝ իր տարատեսակներով, մաս նոր համակարգեր՝ մեկանգամյա օգտագործման «ՔՄԳ-18», «ՔՄԳ-27» և այլն: Հայկական բանակում վերջին ժամանակներում «ԱԳ-17» ավտոմատ նոնականետերի մեծ քանակություն է ավելացվել: Մեծացել են մաս ինքնաձիգների վրա ամբացվող «ՄԻ-25» և այլ նոնականետերը, որոնք զգալիորեն բարձրացնում են մարտիկի կրակային հզորությունը:

6. Հրանետեր՝ հիմնականում ազգային արտադրության մոտոշերտեր: Որոշ քանակությամբ ուսական «РПО» հրանետեր գտնվում են նաև առաջապահ ստորաբաժանումների սպառազինության մեջ:

7. Հակատանկային այլ միջոցներ: Հայոց բանակում բացի խորհրդային «СПГ» հակատանկային մեծաքանակ նոմակա-նետերից, օրեցօր մեծանում է նաև այլ միջոցների թիվը: Մասնավորապես՝ այսօր դասակներն ու վաշտերը զինված են «Метис», «Корнет», «Фагот» և հակատանկային այլ միջոցներով: Իսկ ավելի խոշոր ստորաբաժանումներն ունեն մեծ քանակությամբ «Конкурс», «Штурм-С» և հակատանկային կառավարվող հրթիռային այլ համալիրներ:

8. Ալկանետեր. հիմնականում գումարտակներին տրված և առանձին հրետանային ստորաբաժանումների 82 և 120 մմ-ոց ականանետերից բացի, ներկայումս հայկական համագոր-չին փոքր ստորաբաժանումները զինված են 60 մմ-ոց աջակցության միջոցներով, որոնք բավական արդյունավետ են մոտակա մարտե-րում:

9. Չբահատեխնիկա. բացի բավական հայտնի խորհրդ-դային «БТР-60» և հետագա տարատեսակներից, «БРДМ», «МТЛБ», «БМП-1» ու այլ միջոցներից, հայոց բանակում օր օրի ավելանում է «БМП-2»-ների, նաև նոր սերնդի զրահամեքենա ավտոների քանակ-ը: Ներկայումս հայկական ռազմարդյունաբերական ձեռնարկու-թուններում «БМП-1»-երը կատարելագործում են «БМП-2»-ների:

10. Տանկերի ամենամեծ քանակությունը՝ մի քանի հար-յուր միավոր, կազմում են արդեն հայտնի «Т-72»-ները, նաև քիչ քա-նակությամբ՝ «Т-55» տանկերը: Նշված բոլոր միջոցներն էլ այսօր կատարելագործվում են, նախապատրաստվում է մեծ համագործակ-ցություն արտասահմանյան որոշ ընկերությունների հետ:

11. Հրետանին հիմնականում ներկայացված է խորհրդա-յին միջոցներով: Արդեն նշված ականանետերից գատ հայկական բանակի հրետանին իր սպառազինության մեջ ունի մի քանի հարյուր

միավոր 85 մմ-ոց, 100 մմ-ոց, 122 մմ-ոց, 152 մմ-ոց քարշարկվող հրա-նոր, հարից և հատից-հրանոր, որոնցից առավել հեռահարներն ունեն մինչև 28 կմ կրակի հեռահարություն, իսկ հիմնական տրամա-չակի հանդիսացող 152 մմ-ոց «Д-20»-ները՝ մինչև 17 կմ հեռահարու-թյուն: Հիմնական քարշարկվող հրանոթերն են՝ «Д-1», «М-30», «Д-44», «Д-20», «Д-30» և «Геоиният». բացի դրանցից, կան մեծ քանա-կությամբ ինքնագնաց 122 մմ-ոց «2С1» և 152 մմ-ոց «2С3» հրանոթ-ներ, որոնք ավելի արդյունավետ միջոցներ են: Ռեակտիվ հրետանին ունի 122 մմ-ոց «БМ-21 Град», 220, 273 և 300 մմ-ոց համազարկային կայանքներ, որոնց հեռահարությունը հասնում է մինչև 80-90 կմ: Հրթիռային ավելի հեռահար միջոցները երկուսն են:

12. ՀՕՊ ուժերն ունեն փոքր գործողության ավտոմատ 23 մմ-ոց քարշարկվող և ինքնագնաց միջոցներ՝ «ЗУ-23-2», «ЗСУ-23-4 Шилка» կայաններ, «Игла» կողի գեմիթափրիթային համալիրներ, ինչպես նաև «Оса АК», «С-125», «Крыг», «Куб», «С-300 ПС» զենի-թափրիթային համալիրներ, որոնք ունեն 10 կմ մինչև 75 կմ խոցման հեռահարություն և 0-25 կմ խոցման քարձրություն²³⁶:

13. Օդուժը զինված է «Як-18», «Л-39» ուսումնամարտա-կան ինքնաթիռներով, «Ми-2» ուսումնամարտական ուղաթիռներով, «Ми-8» ռազմատրանսպորտային և «Ми-24» մարտական հարվա-ծային ուղաթիռներով, «Су-25» զրոհիչ ինքնաթիռներով: Օդուժի հիմնական խնդիրը կործանիչի բացակայությունն է: Մանրամասն տե՛ս համապատասխան եզրակացությունը:

Վերը ներկայացված գեներերի և սպառազինության միջոցով այսօր ապահովվում է ՀՀ և ԼՂՀ անվտանգությունը: Սպառազինման գործընթացը մշտական է. ինքնազս ձեռք են բերվում նորանոր զեն-քեր ու սպառազինություն, հիմնականում՝ միանման գեներեր, իսկ նո-րերը՝ այնպիսի հաշվարկով, որ շատ բազմատեսակ չլինի և արտա-

²³⁶ Вестник ГИВО. <http://pvo.guns.ru/index.htm>


հայտի ընդհանուր խնդիրների լուծման տրամաբանությունը՝ հեռանկարային լինելու հետ միաժամանակ²³⁷։

Գծանկար 2²³⁸

ՀՀ Պաշտպանության նախարարություն



ՀՀ ՁՈՒ-ի կառուցվածքը



²³⁷ Հայկական բանակի սպառազինության կատարելագործման և արդիականացման միտումների մասին տե՛ս Հովհաննիսյան Ա., Տարածաշրջանի ռազմականագրությունը և Հայոց բանակը, էջ 106-172։

²³⁸ ՀՀ ՊՆ պաշտոնական կայքում հասկանալի քաղաքական պատճառներով պաշտպանության բանակը չկա։ Այս հարցը մեր միջավայրում մշտապես տարաբնույթ քննարկումների առարկա է դառնում։ ՊՆ-ը դա ընդամենը մեր գինված ուժերի, ՀՀ ՁՈՒ-երի, հայոց բանակի մեկ զորամիավորումն է, այս պահին ամենաուժեղ զորամիավորումը, սակայն միասնական հայկական բանակի մասն է կազմում և առանձին լինել չի կարող և չի եղել երբեք, սկսած իր ստեղծման պահից։ Հասկանալի է, որ մենք որոշակի քաղաքական նկատառումներից ելնելով, որոնք մեզ համար այս պահին ինչ որ հարցեր են լուծում, մենք այլ քան ենք նշում, սակայն պետք է հասկանալ, որ ՀՀ ՁՈՒ-երը միասնական են ու մեկ մարմին։

ՊՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԲԱԺԻՆՆԵՐ

Պաշտպանական քաղաքականության վարչություն

Քարտուղարություն

Ֆինանսարյուջետային և պլանավորման վարչություն

Վերահսկիչ վարչություն

Ռազմական ոստիկանություն

Քննչական ծառայություն

Կապիտալ շինարարության և գործերի բնակավորման վարչություն

Ֆինանսական տեսչական վարչություն

Վարչատնտեսական վարչություն

Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով

Տեղեկատու վերլուծական բաժին

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն

Կոլեգիայի աշխատանքների կազմակերպման բաժին

Կադրերի և ռազմական կրթության վարչություն

Իրավաբանական վարչություն

Ձինանշանագրային բաժին

Ձինառայողների սոցիալական պաշտպանության վարչություն

Ռազմարդյունաբերական վարչություն

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի տնտեսագիտական վերլուծության և գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչություն

ՁՈՒ ԳՇ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԲԱԺԻՆՆԵՐ

Հետախուզության վարչություն

Հրթիռային գործերի և հրետանու վարչություն

Ավիացիայի վարչություն

Չորքերի ծառայության և զինվորական ծառայության անվը-
տանգության ապահովման վարչություն

Հակաօդային պաշտպանության զորքերի վարչություն
Ռազմավարական պլանավորման վարչություն

Մարտական պատրաստության վարչություն

Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատ
Թիկունքի վարչություն

Կապի և ավտոմատ կառավարման համակարգերի վարչու-
թյուն

Ինժեներական զորքերի վարչություն

Սպառազինության վարչություն

Ռադիոացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության
վարչություն

Կազմգորահավաքային վարչություն

Ռազմաբժշկական վարչություն

Օպերատիվ վարչություն

Անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչություն

Ֆինանսական վարչություն

Կադրերի վարչություն

Ռադիոէլեկտրոնային պայքարի բաժին

Ռազմական հաղորդակցությունների բաժին

Ռազմատեղեկագրական բաժին

Ռսերտոր բաժին

Ստանդարտացման և չափազիտական բաժին

Ռազմանվագախմբային բաժին

1.5. Բանակաշինության շարունակականությունը, գորատեսակները և բաժինները

Միսիանում և Նոյեմբերյանում 1994 թ. նոր զորամասեր կազ-
մավորվեցին, որոնց առաջին հրամանատարներն էին Հովհաննես Ա-
զոյանն ու Վալերի Չիթչյանը: Այդ զորամասերն այսօր էլ իրենց հիմ-
նական խնդիրը՝ սահմանների պաշտպանությունը, կատարում են

փայլուն: Մոտոհրաձգային զորամաս հիմնադրվեց նաև Կանթարա-
կում: Զինադադարի հաստատումը, որը հայոց բանակի փայլուն
հաղթանակի արդյունքն էր, հնարավորություն տվեց, որ մեր բանա-
կաշինությունը մտնի նոր, ավելի հաստատուն փուլ:

«Աշխարհում ասկավաթիվ են այն դեպքերը, երբ «ոչ խաղա-
ղություն, ոչ պատերազմ» անբողոքյան պայմաններում բազմաիս-
գար մեծ ու մվազ հիմնախնդիրներով ծանրաբեռնված՝ (մանավանդ
մեր պարագայում՝ փոքր ու ճորանկախ) ի գորտ գտնվեր ոչ միայն
կերտելու կառավարման հստակ համակարգ՝ իշխանության բոլոր
թևերով հանդերձ, վերականգնել ավերված տնտեսությունը, այլ նաև,
այդ ամենին զուգահեռ, ռազմական շինարարության միջազգային
չափանիշներին համապատասխան՝ կայացնել և կանոնակարգել
սեփական զինված ուժերի գործունեությունը: Մի պահ սրբավենը և
ինքներս մեզ հարցնենք՝ որն էր այս հաջողության գաղտնիքը... Ի-
հարձե, սեփականը ճանաչելու, զմեհատելու և այն պահելու ներքին
զանկությունը: Այո՛, մեզնից յուրաքանչյուրի մեջ նստած է արյամբ
ձեռք բերածը պահելու և ավելացնելու վճռական բնագոյը: Հայոց բա-
նակի հրամանատարների ծանրակշիռ մասը, չունենալով համապա-
տասխան զինվորական կրթություն կամ ռազմական գործի հանդեպ
առանձնահատուկ սեր, կարողացավ համուռ երկրի ազատության
վեր կանգնել իր ներքին, անձնական ազատությունից և զինվորական
կանոնադրության պահանջներն ընդունելով որպես առաջնահեր-
թություն՝ հրադադարի հաստատումից հետո շարունակեց իր անբա-
սիր ծառայությամբ կայացնել սեփական զինուժը»²³⁹:

Պաշտպանության նախարարության ղեկավարության ատջև
նոր խնդիրներ դրվեցին: Բացի առաջին գծում մարտական հերթա-
պահությունում ընդգրկված անձնակազմից, բանակը մարտադաշ-
տից պիտի վերադառնար զորանոցներ ու զբաղվեր ամենօրյա մար-
տական ուսուցմամբ: «Անհրաժեշտ էր իմաստավորել մարտական

²³⁹ Օհանյան Ս., 2007, տարեմտուի ուղերձ, Ստեփանակերտ:

գործողությունների փորձը, մարտական գործողությունների շրջանից դուրս բերել մեծ քանակությամբ անճանակազմ, տեխնիկա և սպառազինություն, նախատեսել գործառնների տեղաբաշխման նոր վայրեր, վերանայել գործառնների և գորամիավորումների կազմակերպահաստիքային կառուցվածքը, գորքերի խմբավորումների կազմը, պետական սահմանի վրա կազմակերպել մարտական հերթապահություն, ճշգրտումներ մտցնել ռազմական շինարարության 1995-2000 թթ. համար մշակված հայեցակարգում:

1995-1998 թթ. ընթացքում գլխավոր շտաբի գործունեության հիմնական ուղղությունը զինված ուժերի կառուցվածքի համապատասխանեցումն է հանրապետության սահմանների պաշտպանության ուղղությամբ լուծվող նոր խնդիրներին՝ տարածաշրջանում տիրող ռեալ իրադրության՝ մեր հարևանների ռազմական պատրաստությունների, երկրի տնտեսության հնարավորությունների հաշվառմամբ:

Այդ տարիներին նաև շարունակվում էր նոր գորամիավորումների և գորամասերի կազմավորումը: Վերակազմավորվեցին եղած գորամիավորումներն ու գորամասերը, կազմավորվեցին օպերատիվ ուղղությունների վարչությունները, որոնց հիմքի վրա հետագայում ստեղծվում էին հիմնական օպերատիվ ուղղություններով բանակային կորպուսներ:

... Ավելի մեծ ուշադրություն էր դարձվում ռազմական գործողությունների վարմանը լեռնային և լեռնասանտառային քատերանի բարդ կլիմայական պայմաններում, տարանջատ օպերատիվ ուղղություններում: Կարևորություն էր տրվում հրամանատարական կազմի ուսուցմանը, նրա օպերատիվ մտածողության զարգացմանը, իրադրությունը վերլուծելու ու գնահատելու, նպատակահարմար դրուշում ընդունելու, քարտեզում այն արտացոլելու, ենթակա հրամանատարների ամօք խնդիրներ դնելու, տեղանքում աշխատանք կազմակերպելու, ռազմագործողությունում, մարտում ենթակա գորքերը կա-

նավարկելու կարողությունների ձևավորմանը», - գրում է Մ. Հարությունյանը²⁴⁰:

1994-2007 թթ. ժամանակահատվածն աչքի ընկավ բանակի համար կարևոր մի առանձնահատկությամբ՝ դաշտային բանակը այլ բնույթ էր ստանում՝ դառնալով գորանցային, սակայն միաժամանակ մշտական մարտական խնդիր կատարող: Հսկայական աշխատանք կատարվեց մարտական պատրաստության ասպարեզում: Մարտունակության բարձրացման, հրամանատարական բոլոր օղակների պատրաստության, նյութատեխնիկական հզոր բազայի ստեղծման, գորամասերի կազմավորման ու կարգապահության ամրապնդման ուղղությամբ կատարված աշխատանքներն ուղղակի հսկայական են:

Ջրամասերում կառուցվում էին հրածգարաններ, տանկային ուղեգծեր, հրազենահրետամային կամ լազերային հրածգարաններ, մարտավարական ուսուցման դաշտեր: Զինված ուժերի զարգացումը ընթանում էր բնականոն փուլերով. ամեն մի նոր տարում բանակը ստանում էր նոր զենք ու տեխնիկական հնարավորություններ, և 2000-ական թվականների սկզբներից այն անցավ ավտոմատ կառավարման համակարգի²⁴¹: Դա հնարավորություն է տալիս ՊՆ կենտրոնական ապարատի հրամաններն ու որոշումները գորքերին հասցնել էլեկտրոնային եղանակով և արագ:

Ջրատեսակները և բաժինները բանակաշինության այլ փուլում

Իրավաբանական վարչություն: Բանակաշինության նոր փուլը ենթադրում էր նաև իրավական նոր դաշտ: Մեղրակ Մեղրակյանի ղեկավարած իրավաբանական վարչությունը մեծ աշխատանք կատա-

²⁴⁰ Հարությունյան Մ., ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի դերը ռազմական շինարարության գործում, Հայկական բանակ, 2002, հմ. 1-2, էջ 40-42:

²⁴¹ Բանակն ամեն մասնագետի կարիք էլ ունի*, Փետրվար, 2004 <http://www.sravot.am/2004/02/21/317011/>

րեց օրենսդրական գործունեության ասպարեզում: ՀՀ ազգային ժողովում շուտով ընդունվեցին՝ «Պաշտպանության մասին», «Ձերա-հավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին», «Զին-հապարտության մասին», «Զինվորական ծառայություն անցնելու մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Պաշտպանության նպատակով տրանսպորտային միջոցների ներգրավման մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Մահնամված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին», «Զինծառայողների նյութական պատասխանատվության մասին», «Այլընտրանքային ծառայության մասին», «ՀՀ զինված ուժերի կայացրոյային ու պահակային ծառայությունների կանոնագիրք» և «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք» ՀՀ օրենքների, «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրության» մասին: Դրանց հիման վրա ընդունվել են ՀՀ Նախագահի բազմաթիվ հրամանագրեր, ՀՀ վարչապետի և կառավարության որոշումներ²⁴²: Բանակի զարգացմանը զուգահեռ առաջանում էին բազում խնդիրներ թե՛ ներքին, թե՛ արտաքին շրջապատում: Օրենսդրական շատ փոփոխություններ՝ խստացումներ և գործընթացներ, առաջացնում էին որոշակի դժգոհություն ու խնդիրներ: Օրինակ՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով «Զինավարտության մասին» օրենքում փոփոխություններ մտցնելու ու զորակոչից խտասպիտողների թիվը նվազեցնելու բազմակի փորձեր եղան, որոնք մշտապես հանդիպում էին հասարակական տարբեր շերտերի դի-

մադրությանը: Հիմնավորումները մեծամասամբ այն էին, որ գիտությունը կրկնվի երիտասարդ կադրերից²⁴³:

Զինկոմ և պահեստագոր: Պատերազմի ավարտից հետո մեծ թվով ազատամարտիկներ զորացվեցին և դարձան պահեստագորայիններ: Կամավորականները մնում են զինված ուժերի ռեզերվում: Արդեն մի քանի տարի է, ինչ ՋՌ-ի զարգացման և մարտական պլաններում պարտադիր ներառվում են լայնածավալ զորավարժություններ՝ պահեստագորայինների ներգրավմամբ: Ազատամարտիկներ ևս մի քանի օրով զորակոչվում են և հաղորդակցվում նոր սերընդի հետ, իրենց փորձը փոխանակում ու նաև ոգևորում ժամկետային զինվորներին: Զինկոմի սարքիատները մեծ աշխատանք են կատարում ամենամյա զորակոչի ժամանակ: Սա բավական բարդ ոլորտ է: Խուսքը վերաբերում է կոռուպցիոն վտանգներին: Այս ոլորտում մշտական ու հետևողական աշխատանքներն իրենց պտուղները տվել են: Հատկապես 2008-2013 թթ. հետևողական պայքարը՝ կարգապահության և անօրինականությունների դեմ, բերել է նրան, որ այս տարիներին քանակ է զորակոչվել մոտ 5000 զինծառայող, որոնք ունեին կեղծ փաստաթղթեր և պատրաստվել էին ազատվել ծառայությունից: Այդ տարիներին զորակոչը կատարվել է ավելի քան 105-109 տոկոսով: 2013 թ. առաջին զորակոչը իրականացվել է 111 տոկոսով, որի ժամանակ մախանական պլանավորածից զգալի թվով ավելի նորակոչիկ է զորակոչվել²⁴⁴: 2014 թ. առաջին զորակոչը ևս կատարվել է ավելի քան 100 տոկոսով՝ կրկին ի հայտ բերելով բազում օրինախախտների: Սրանք ձեռքբերումներ են, որ իրականացվել են զինկոմի սարքիատների և ՌՌ-ի հետևողական պայքարի արդյունքում: Սա ռազմավարական նշանակության խնդիր է պետության համար, որի

²⁴² Իրավաբանական վարչության պետ, գնդապետ Ս. Սեդրակյան, անձնական հուշեր, ՀՀ ՋՌ կարգապահական կանոնագիրք, Եր., 2012, ՀՕ-91-Ն, 10 ապրիլի 2012; ՀՀ ՋՌ-ի Ներքին ծառայության կանոնագիրք, Եր., 2007, ՀՕ-99, 7 հունվարի, 1997:

²⁴³ Բանակը չի չափի, գիտությունը կտուժի, Փետրվար 20, 2004. <http://www.aravot.am/2004/02/20/316993/>

²⁴⁴ ՊՆ Օհանյան Ս., գեկույց 08.08.2013 զորակոչի արդյունքներին նվիրված խորհրդակցության ժամանակ: Հաշվի առնելով գաղտնիության հսկողմանը՝ թվեր չենք նշում:

վերջնական լուծումը շատ մոտ է: 2014 թ. գորակոչը անցկացվեց վիճակահանության մեթոդով: Մրանք ՀՀ ազգային անվտանգության ամրապնդման համար կարևորագույն ձեռքբերումներ են:

Օպերատիվ վարչություն: Օպերատիվ վարչությունը այդ տարիներին ՀՀ ՁՈՒ կիրառման, ծավալման ու տարբեր ռազմագործողությունների մշակման առումով հսկայական գործ է կատարել: Իրականացվել են օպերատիվ օղակի բազմաթիվ զորավարժություններ²⁴⁵: Այդ ամենը տարեցտարի լայնածավալ և խորքային բնույթ է կրում, քանի որ բանակի կարողությունները ևս օր օրի մեծանում են բոլոր ասպեկտներով: Մարտական հենակետերի կահավորման, հագեցման, մարտական ծառայության կազմակերպման բոլոր հարցերում օպերատիվ վարչության աշխատանքը տարեցտարի ավելի բարդ և հագեցած է դառնում, չնայած բանակային բարեփոխումների շրջանակներում որոշ աշխատանքներ թեթևացան՝ դրանք փոխանցվելով ռազմավարական պլանավորման վարչությանը, ինչն ավելի ճիշտ է ու հեռնակարային: Ամեն դեպքում օպերատիվ վարչության գործունեությունը բանակային բարեփոխումների փուլում ծանր է, քանի որ փոփոխություններն ու վերանայումները չափազանց շատ են: Բանակը վերափոխումների մեծ փուլում է իրականացվում է ռազմավարական պլանավորման վերանայման նոր փուլը: Մա հայկական բանակի պատմության մեջ բացառիկ երևույթ է: Կերակայունս մինչև 2016 թ. իրականացվելու է վերանայման գործընթացը, որպեսզի հաստատվի զարգացման հնգամյա նոր պլանը:

Հետախուզություն: Ձիմվորական հետախուզությունը շարունակում է մնալ երկրի ռազմական անվտանգության ապահովման կարևորագույն բաղադրիչներից մեկը: Հավաստի և համաժամանակյա տեղեկատվությունը՝ չփման գծում տեղի ունեցող մարտավարական իրավիճակի և տարածաշրջանի ռազմաքաղաքական իրադ-

րության փոփոխությունների վերաբերյալ, չափազանց կարևոր է: Հստակ հետախուզության և ռադիոհետախուզության զորամասերը՝ չնդիվի ՀՀ ՁՈւ գլխավոր շտաբի հետախուզության վարչության անձնակազմի ամենօրյա հետևողական ջանքերի, ամեն օր մեծ արդյունքներ են արձանագրում: Այսօր ռազմական հետախուզությունը հետևողականորեն ընթանում է բարեփոխումների ուղիով: Չորատեսակում ավելանում են ժամանակակից մարտի վարման համար անհրաժեշտ ունակություններով օժտված ստորաբաժանումները: Մեծ ուշադրություն է դարձվում հետախույզների միջոցառումների ու գործերի պատրաստությանը: Չգալի մասը գաղտնի է և հրապարակման ենթակա չէ:

ՀՀ ՁՈւ-ի հատուկ նշանակության, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր բրիգադն անցել է մարտական փառապանծ ուղի: Այսօր էլ այդ զորամասը մշտապես մարտական բնագրում և դրանից այն կողմ մարտական բազում խնդիրներ է իրականացնում, և տարվա մեջ չկա մի օր, որ բրիգադի մարտիկները չգտնվեն այս կամ այն հատվածում՝ գործադրման մեջ:

Ռազմական հետախուզությունն այսօր տիրապետում է բավալար միջոցների և տեղեկատվության, որպեսզի բացահայտի հակառակորդի բոլոր պլանները:

Հայ հետախույզներ են հակառակորդի խոր թիկունքում՝ տարվա յանկացած եղանակին և օրվա բոլոր ժամերին, պատրաստ կատարելու զանազան խնդիրներ: Հատուկ նշանակության ստորաբաժանումները համալրված են արդիականացված գնդացիներով, բարձր ճշգրտության հակատանկային կառավարվող հրթիռային համալիրներով, նշանառու հեռահար մարտ վարելու գերճշգրիտ սպատագինությամբ, գրոհային դիպուկահարների լեռնային պատրաստություն և կրակով ապահովված գիշերային տեսանելիություն ունեցող այլ խմբերով: Այս զորամասը հրադադարից և ի վեր մշտապես մարտական խնդիրներ է կատարում թե՛ սահմանագծում, թե՛ հակառակորդի թիկունքում, սակայն մարտական ոչ մի կորուստ չի ունեցել:

²⁴⁵ Դավթյան Ա. Մ., Չորքերի օպերատիվ պատրաստման որոշ հարցեր գորային կառույցի բարեփոխումների տեսանկյունից, Հայկական բանակ, 1-2(67-68), 2011, էջ 26-34:

Հետախուզության ամենօրյա հետևողական քանցքերի շնորհիվ է, որ ժամանակին բացահայտվում ու կանխվում են հակառակորդի ուսնձգությունները: Ամեն անգամ ծախողվում են «դիպուկահարների պատերազմ» սկսելու հակառակորդի փորձերը՝ շնորհիվ հայկական ՁՈՒ-երի վճռական գործողությունների: Այդօրինակ սարսափները մեզ պարտավորեցնում են լինել ավելի զգույն ու մարտունակ:

Հակաօդային պաշտպանություն (ՀՕՊ): Ջինսդադարից հետո մեծ աշխատանքներ կատարվեցին հակաօդային պաշտպանության համակարգի կատարելագործման համար: 2001 թ. 102-րդ ռուսական ռազմաբազայի ՀՕՊ միջոցների հետ իրականացվեց մարտական հերթապահություն: Հայ մասնագետները ՀԱՊԿ շրջանակներում մշտապես անցկացվող զորավարժություններում ցուցաբերում են գերազանց արդյունքներ, որոնցից վերջինը 2011 թ.: «Մարտական ընկերակցություն 2011» համատեղ զորավարժություններում ՀՕՊ-ի ստորաբաժանումները կրկին խոցեցին բոլոր թիրախները: Սա արդեն մարտական ավանդույթ է, որի ժամանակ հայ հակաօդայինները պարտադիր գերազանց զննահատական են ստանում²⁴⁶:

Հայրենական ռազմաարյունաբերական համալիրն այս ոլորտում արդեն առարկայական պտուղ է տվել: Մեր կողմից արդիականացվել են պատերազմի տարիներին իրենց գերազանց դրսևորած «OCA-AK» զենիթափոխային համալիրները, որոնք մեզ համար չափազանց մեծ մշանակություն ունեն: Նման փառք հեռահարության և միասնական շարժական բազայով համալիրները շատ կարևոր են մեր տեղանքում և երբեմն միակ գործածելի միջոցներն են մարտական գործողությունների ժամանակ, հատկապես երբ արագ գորշարժեր կամ շեշտակի հարձակումներ են իրականացվում: Այսօր, սակայն, ՀՕՊ զորքերի կազմակերպչակառուցվածքային հարցում կա մեկ բացթողում, որը հարկավոր է լրացնել հնարավորին շուտ, դա ՀՕՊ զորքերի և օդուժի՝ միասնական զորատեսակ դառնալու խնդիրն է, որը դեռ մեզանում լուծված չէ:

²⁴⁶ Հակոբյան Ա., Երբ բշմամին չի հասկանում, նրան ոչնչացնում են. <http://www.armworld.am/detail.php?pageid=4184&pageid=129056&lang=>

ՀՕՊ-ի և ՌՕՈՒ-ի համատեղումը մեկ զորատեսակի մեջ կենսական անհրաժեշտություն է: Հայտնի է, որ ցանկացած մարտում ցամաքային զորքերի (ՋՁ), օդուժի և ՀՕՊ ստորաբաժանումների ու զորամասերի համագործակցության կարելի է հասնել համատեղ և միաժամանակյա գործողություններով: Ապակենտրոնացված դեկալարման համակարգը բարդացնում է զորքերի ընդհանուր դեկալարումը: Միասնական հրամանատարության բացակայության պայմաններում առանձին դեպքերում անխափան կապը պահպանելը բարդ խնդիր է դառնում. էլ չենք խոսում հրամանատարներից մեկի սուբյեկտիվ որոշման հետևանքով մյուս զորատեսակների բնականոն գործունեությանը խափանելու հավանականության մեծացման մասին: Ռազմավերտի պատմության ընթացքում անհաջող ելքով գործողությունների մեջ մեծ տեղ են զբաղեցնում վատ կամ խստիանված կապի պատճառները: Այսուհանդերձ, մշվածք չի կարող միանշանակ պնդումների և անցյալի ժառանգությունը մեխանիկորեն մերժելու հիմք դառնալ: Երկար տարիներ երկու զորատեսակները գործել են առանձին: Այս ընթացքում ձևավորվել են ավանդույթներ, գործողությունների հիմունքներ և տեսություններ: Միավորելով այդ երկու զորատեսակները՝ հարկավոր է այդ ամենը վերանայել և մանրամասնորեն նոր նորմեր ու կանոններ մշակել: Ռժերի համատեղումը և միակենտրոն դեկալարումը գրեթե միշտ տվել է դրական արդյունք, սակայն այդ ամենը հարկավոր է անել խելամուղտ: Հանճված ենք, որ դրանով պետության պաշտպանունակությունն էլ ավելի կամրակողմի: ՀՕՊ զորքերի և օդուժի միավորման ռազմավարական թայլը, որը պետական կարևոր մշանակություն ունի, պետք է ունենա իր ռազմատեխնիկական և տնտեսական հիմքերը: Ներկայումս ՀՕՊ-ը բաղկացած է ավտոմատացված բազում միջոցներից և համակարգերից, որոնք աշխատում են բարդ համագործակցությամբ²⁴⁷:

²⁴⁷ ՀՕՊ-ի ֆունկցիաների մեջ է մտնում յուրային բոլոր ԹՄ-ների վերահսկողությունը, որով այն ինչ-որ կերպ վերահսկում է նաև ՌՕՈՒ-ին: Սակայն կատարելով օդուժի գործողությունների ռադիոտեխնիկական ապահովումը՝ ՀՕՊ-ը չի ենթարկվում այդ վարչությանը: ՀՕՊ-ի կիրառու-

ՀՕՊ-ի առաջնակարգ խնդիրներն են՝

- ✓ պետական օդային սահմանի պահպանում և վերահսկողություն,
- ✓ օդային սահմանների անընդհատ հետախուզում,
- ✓ օդային անցանկալի օբյեկտների հայտնաբերման դեպքում դրանց բնութագրերի և չափամիջների որոշում, համապատասխան ռազմական ու ղեկավար մարտիներին ճիշտ ու ժամանակին զեկուցում,
- ✓ պետական և ռազմական կարևոր օբյեկտների (վարչական, արդյունաբերական-տնտեսական շրջաններ), զորախմբերի հավաքատեղիների (այդ թվում՝ զորքերի շարժի ժամանակ), հրամանատարական կետերի և այլ շինությունների պահպանումը հակառակորդի օդային հարվածներից:

Այդը նշված բոլոր խնդիրների բարեհաջող կատարման համար ՀՕՊ-ը պետք է լինի ակտիվ, բազմապատակային, շարժունակ, օպերատիվ, խանգարումների և դիվերսիաների նկատմամբ կայուն, համաեզանակային, գործողությունների և ֆունկցիաների մեծ սպեկտրում ավտոմատացված:

Անրոզյալ խնդիրների լուծման և հնարավորությունների ձեռքբերման համար պետք է ապահովել ՀՕՊ-ի տեսադաշտի լիարժեքությունը: Լիարժեք տեսադաշտ ասելով՝ հասկանում ենք ՀՀ-ի, ԼՂՀ-ի լրիվ տարածքները, նաև հարևան պետությունների տարածք-

բյան ամենամեծ հավանականությունն առաջանում է այն ժամանակ, երբ հավանական է նաև սեփական ՌՕՌ-ի ակտիվ կիրառումը: Հետևաբար, ՀՕՊ-ի ստորաբաժանումները պետք է ապահովեն սեփական օդուժի տեղաշարժը և նույն օդային տարածքում կանխեն հակառակորդի թռիչքները: Թե՛ մեր, թե՛ հակառակորդի կողմից թռիչքները կարող են լինել բավականին ինտենսիվ՝ յուրաքանչյուրի կողմից օրական մի քանի տասնյակ, անգամ՝ հարյուր: Նշվածին հարկավոր է ավելացնել նաև քաղաքացիական ինքնաթիռների չվերթները, որոնք եւս հարկավոր է վերահսկել ոչ պակաս խստորյանք: Սեփական և հարևան պետությունների տարատեսակ ԹՄ-ների բանակը տարեցտարի ավելանում է, ինչը հարցադրումը ավելի է բարդացնում և պահանջում անհավաղ լուծում:

ների զգալի մասը: Ներկայումս այդ տեսադաշտն ապահովվում է վերգետնյա ՌՏԿ-ներով: Այդտեղ կան որոշակի խնդիրներ՝ կապված ՀՀ-ի ու ԼՂՀ-ի լեռնաանտառային կտրտված տեղանքի հետ: Նույնիսկ հարթավայրային տեղանքում թռչող սարքեր հայտնաբերվում են բավական դժվարությամբ: Լեռնայինում խնդիրն ավելի է բարդանում: Հետևաբար, հարկավոր է կիրառել ռադիոլոկացիոն և հայտնաբերման տարատեսակ այլ միջոցներ՝ օդային լիարժեք տեղեկատվություն և խոցման ավելի մեծ հնարավորություն ստանալու համար²⁴⁸:

Անհրաժեշտ է մեկտեղել օդային հետախուզության և վերահսկողության բոլոր միջոցները: Օդային վերահսկողության և հետախուզության ողջ տեղեկատվությունը մեկ կենտրոնում կուտակելով, համատեղ գործողություններով ու մեկ կենտրոնից ղեկավարելով՝ զգալիորեն նվազում է տարատեսակ խանգարումների և հակազդեցությունների կիրառումը: Զգալիորեն բարձրանում է նաև ցամաքած ԹՄ-ի հայտնաբերման ճշտությունը: Օրինակ՝ ինքնաթիռն միաժա-

²⁴⁸ Այստեղ տեղին է հիշել ամերիկացիներին՝ իրենց AWACS-ներով և տարատեսակ այլ օդային հետախուզության միջոցներով: Նման համալիրների բանկարժեքության պատճառով ՀՀ ՁՌ-ում կարելի է կիրառել օդապարիկների, դիրժմարմերի և այլ ԱԹՄ-ների հիման վրա ստեղծված հետախուզության, կապի ապահովման և օդային ղեկավարման կետեր: Այսօր, հատկապես լեռնային տեղանքում, ոչ մի ՀՕՊ չի կարող միայն վերգետնյա համակարգերով ու սպառազինությամբ նման ամենատես ու օպերատիվ ցանց ապահովել: Խնդիրը հետաձգել չի կարելի:

Իացառված չէ, որ հակառակորդը, օգտագործելով քաղաքացիական ինքնաթիռների թռիչքները, մտախի գտնվելով դրանց, չեզոք պետության տարածքից նարտական ինքնաթիռով փորձի հարվածներ հասցնել: Հարևան պետություններից մեկի հետավոր սահմանների վրա հակառակորդի մարտական ինքնաթիռները կարող են աննկատ մտռնել մեր օդային տարածք ստնող քաղաքացիական ինքնաթիռին և շատ մտո թռչելով՝ հասնել մինչև Երևան, քանի որ մտռնալու պահին մեր ՌՏԿ-ները չեն կարող վերահսկել քաղաքացիական ինքնաթիռի թռիչքը: Մեր սահմանը մտռնելու պահին ՌՏԿ-ների հետևող սարքերի վրա դրանք կարող են երևալ որպես մեկ ինքնաթիռ: Նման պայմաններում շատ դժվար է կանխել դիվերսիան:

մանակ հետևող վերերկրյա և օդային հետախուզական մի քանի համակարգերից աստղված տեղեկությունները հմարավոր է լինում ի մի բերել և մշակել հրամանատարական մեկ կետում:

Համատեղ գորատեսակի կենտրոնացված ղեկավարումը թույլ կտա ավելի արագ ու ստույգ տեղեկություն ստանալ ՀՕՊ-ի յուրաքանչյուր համալիրից, հետախուզման և հսկողության յուրաքանչյուր կենտրոնից ու ռադիոտեղորոշման կայանից (ՌՏԿ): Միջոցները կարող են տեղակայված լինել հանրապետության ողջ տարածքում: Իրական ժամանակում աստղվող այդ տեղեկատվությունը մշակվելով՝ հրամանատարական կետից կարող է հաղորդվել տվյալ շրջանում գործող ՀՕՊ-ի համակարգերին, ռազմական և քաղաքացիական ավիացիային՝ թույլ տալով խոսափել հակառակորդի հետ անցանկալի հանդիպումից, կրկնակի հարվածներից, օդային բախումներից:

Օդուժ: Հայկական ռազմաօդային ուժերը ևս առանց կործանիչի ապագա շունեն: Հայկական ՌՕՌ-ի համար կործանիչ ընտրելու հարցը բավականին հետաքրքիր է, հարմար «թեկնածուներ» շատ կան, պետք է ճիշտ ընտրություն կատարել: Մենք ընտելացել ենք, որ մեզ համար լավագույն «թեկնածու» են համարում հիմնականում խորհրդային տարատեսակները և տվյալ դեպքում ավելի փոքր «ՄիԳ-29»-ը: Սակայն փորձենք ամեն ինչ վերլուծելով՝ հասկանալ, քե իրականում որ տարբերակն է ամենահարմարը:

Ցանկացած զենքի լավագույն ստուգատեսը պատերազմն է: Խորհրդային կործանիչներից առաջին հերթին մարտական գործողությունների ստանկցենք իր քաշային կարգով ավելի թեթև «ՄիԳ-29»-ը: Այս կործանիչը ոչ մի հատկանիշով չի համապատասխանում ՀՀ ՋՌ-ի ՌՕՌ-ի հիմնական ինքնաթիռի պահանջներին: «ՄիԳ-29»-ը միայն նշված փաստերի հիման վրա չէ, որ մեզ համար համարում ենք անարդյունավետ³⁴⁹:

³⁴⁹ «ՄիԳ-29»-ը կործանիչն ունի 330 մ/վ արագացում, առավելագույնը 2000 կգ բեռնատարողություն (ոմբատարողություն) և 700-1500 կմ թռիչքի հեռահարություն, 700-ը՝ գեոմանևրձ, 1500-ը՝ մեծ քարձրության վրա: Ընդ

Կործանիչը ցանկացած ՌՕՌ-ի հիմնական գործիքն է, իսկ մեզ նման փոքր երկրում՝ նաև ամենաերկար ձեռքը անգամ ոմբակոծության համար: Այսինքն՝ կործանիչները պետք է կատարեն մարտական խնդիրներ: Սա նշանակում է, որ ամենասովորական խնդիրը, որ կարող է առաջանալ մարտական գործողությունների ժամանակ, ասենք աղբբեջանական Գալար, Քյուրդասիր և Գյանջա ռազմարգաներին, ինչու չէ նաև Մինգեչաուրի ջրամբարին անգամ սովորական ռումբերով հարվածելն է: Նման խնդիր կատարելու համար 250 և 500 կգ-ոց ռումբերը կարող են բավարար լինել: Ցանկալի է, որ ինքնաթիռը կրի 1000 և անգամ 1500 կգ-ոց ռումբեր: Կործանիչները կարող են գործել նաև Արցախի տարածքից, սակայն ռազմական հասկանալի պատճառներով՝ ցանկալի է, որ դրանք գործեն ՀՀ-ի տարածքից³⁵⁰:

«ՄիԳ-29»-ն իր թևերի կախցոցներից 1000 և 1500 կգ-ոց ռումբ չի կարող տանել: Եթե անգամ մեկ 1000-1500 կգ-ոց ռումբ կրի երկու

որում, այս տվյալները ոչ միաժամանակ, այսինքն՝ նման հեռահարություն այն ունի առանց ռումբերի և միազեծ թռչչի դեպքում՝ բարերում ունենալով մինչև 4500 կգ վառելիք: 4500 է վառելիքով ստացվում է 1430 կմ: Հասնատության համար նշենք, որ «Մ-27»-ը՝ 9400 է վառելիքով, բարձրության վրա կարող է թռչել մինչև 3900 կմ: Ստացվում է, որ «Մ-27»-ը յուրաքանչյուր կմ-ի համար ծախսում է մոտ մեկ լիտր պակաս վառելիք: Օգտակործելով 2,08 անգամ ավելի վառելիք՝ թռչում է 2,72 անգամ մեծ հեռավորություն: Ժամանակի ճնքացքում, փաստորեն, «Մ-27»-ի շահագործումը նույնիսկ ավելի քիչ ծախսատար է: «ՄիԳ-29»-ին չափերով և բնութագրերով մոտիկ ֆրանսիական «Mirage 2000» կործանիչը, իր բարերում կրելով 4000 է վառելիք, ունի թռչչի 1850 կմ հեռավորություն: Դժվար չէ հաշվել, որ ֆրանսիական կործանիչը ևս յուրաքանչյուր կմ-ի համար ծախսում է մոտ մեկ լիտր պակաս վառելիք: Համապատասխան ռումբերի դեպքում, կամ բարձրության փոփոխության պայմաններում հեռահարությունը պակասում է 2-4 անգամ: Фомиа А., Гордон Е., Мяхсес А., Ильян В., Российская современная авиация, М., 2001, стр. 78-79.

³⁵⁰ Հակառակորդի հրթիռահրետամային կրակի տակ շրջկենտ, սեփական ԹՄ-Ներն ուղեկցելու, ՀՀ-ն տարածքի ռազմավարական օրյեկտները ևս պաշտպանելու համար է այն:

շարժիչների արանքում, ապա նման ուժառարտությամբ այն մարտական թռիչքով կունենա առավելագույնը 150-300 կմ հեռահարություն²⁵¹:

Այս պայմանները ոչ թե բավարար չեն, այլ մեզ համար անթույլատրելի են: Այս ամենից բաց, «Миг-29» կործանիչն անգամ հարմարեցված չէ գերճշգրիտ ումթերի կիրառության համար: Օրինակ՝ իր մրցակից արևմտյան կործանիչներն անգամ կարողանում են կրել օպերատիվ-մարտավարական իրքիներ:

Հայկական ՌՕՌ-ի համար լավագույն տարրերակը, եթե քաղաքական և գումարային խնդիրներ չլինեն, ամերիկյան նորագույն «F-35»-ն է: Այս կործանիչն աշխարհում միակն է, որն ունի մեկ շարժիչ, միաժամանակ ուղղահայաց թռիչք-վայրէջքի հնարավորություն: Այն գրեթե ոչ մի սովյալով չի զիջում նույնիսկ երկշարժիչանի կործանիչներին: Հենց նման հատկանիշներով է, որ այն մեզ համար դառնում է անփոխարինելի: ՀՀ-ում օդանավակայանային ցանցի սակավության պատճառով «F-35»-ի ՌՕՎ-ի հնարավորությունը մեզ համար ուղղակի անփոխարինելի է: Սա, փաստորեն, ուղղաթիռների նման հնարավորություն ունեցող կործանիչ ինքնաթիռ է:

Հարմար տարրերակներ են նաև ամերիկյան «F-16C», «F-15E», ֆրանսիական «Mirage 2000-5», «Rafale C-1», «JAS-39 Gripen», եվրոպական «EF2000»²⁵² և ռուսական «Су-30» կործանիչները:

Հաշվի առնելով մերօրյա քաղաքական իրադրությունը, հայ օդաչուների մասնագիտական պատրաստության հիմնախնդիրները և

ինքնաթիռների մայնակակն գինը, հավանաբար, մեզ համար ներկայումս լավագույն տարրերակը հենց ռուսական «Су-30» կործանիչն է: Աերջինս ունի մինչև 8 տոննա ուժառարտություն և թռիչքի բավականին մեծ հեռահարություն: Կործանիչը հաջողությամբ կարող է խոցել և՛ օդային, և՛ վերգետնյա նշանակետեր: Կատարելով օդային գերազանցության ապահովման խնդիր՝ կարող է ինտեգրված լինել ՀՕՊ-ի հետ և միաժամանակ հեռահար՝ մինչև օպերատիվ-մարտավարական խոցողական հարվածներ հասցնել վերգետնյա կարևոր նշանակետերին²⁵³: Կործանիչը ղեկավարում է երկու օդաչու, ինչը շատ կարևոր է նմանատիպ խնդիրների համալիր լուծման համար: «Су-30»-ը լեռնային տեղանքում վերգետնյա նշանակետերին հարվածելու ժամանակ մի քանի տվյալով զիջում է «Су-24»-ին և «Су-25»-ին (ցածր թռչելու հնարավորություն, զրահապատ բաղադրամասեր և այլն)²⁵⁴, սակայն դրանց գերազանցում է այլ՝ ոչ պակաս կարևոր տվյալներով (թռիչքի հեռահարություն, տարատեսակ սպասափոխություններ կրելու հնարավորություն և այլն): Այն միաժամանակ օդային մարտի բոլոր ձևերում գերազանցում է դրանց ու «Миг-

²⁵¹ Երկու խնդիրների կատարման համար այն կարող է գինվել մինչև 100 կմ և ավելի հեռահարության ճշգրիտ երրոններով (X-28, X-31, X-35, X-58, X-59, P-27, P-77 և այլն): Այսինքն՝ կործանիչը, գտնվելով ՀՀ օդային տարածքում համապատասխան բարձրության վրա, կարող է խնդիրներ կատարել և՛ ՀՀ-ի և նույնիսկ Ադրբեջանի տարածքում: Օդային մարտերի վարման, ինչպես նաև այլ թՄ-ների ղեկավարման տեսանկյունից սա հատկապես կարևոր է: Վերգետնյա նշանակետերին հարվածելու համար «Су-30»-ը կրում է նաև գերճշգրիտ ումթեր: «Су-30»-ը, բոլոր խնդիրների լուծման հետ մեկտեղ այլ միջոցների համար հանդիսանում է օդային հրամանատարական կետ: Օդային հարվածներ հասցնելու ժամանակ այն կարող է կազմակերպել ամբողջ մարտը՝ և՛ հարվածել, և՛ օգնել այլ թՄ-ներին՝ կատարելու ճշգրիտ հարվածներ, և՛ միաժամանակ պատրասնել այլ ասրերը օդային հակառակորդի Մարковский В., Перов К., Советские, стр. 47; Беляев В., Ильин В., Российская, стр.156-157; Sukhoi T-50/21/Article 701 PAK-FA Sukhoi T-10/Su-27/30/33/35/35S/37 Flanker, Aug 14 2011, <http://www.ausairpower.net/flanker.html>

²⁵² Архипова М., Реактивные самолеты вооруженных сил СССР и России, М., Минск, 2002, стр. 32-33.

²⁵¹ Մարտական թռիչքը ենթադրում է բարձրությունների արագ փոփոխում, ինչպես նաև արագությունների արագ տատանում, ինչի ժամանակ կտրուկ մեծանում է վառելիքի ծախսը: Թռիչքը գերազանցապես ընթանում է փոքր բարձրություններում, որի ժամանակ հեռահարությունը կտրուկ փոքրանում է:

²⁵² Ամերիկյան «F-35», ինչպես նաև նշված ֆրանսիական և եվրոպական կործանիչները համարվում են ոչ ծանր կործանիչներ, այսինքն՝ իրենց դասակարգմամբ «Миг-29»-ի մրցակիցներ են: Դրանք մի շարք հատկանիշներով գերազանցում են վերջինիս:

29»-ին²⁵⁵: «Cy-30»-ն աղբրեցանական «Миг»-երին գերազանցում է քոչիքի հեռավորությամբ, ինչը հատկապես շատ կարևոր է մարտերը հակառակորդի տարածք տեղափոխելու տեսանկյունից:

Նկատենք, որ եթե մույնիսկ այսօր հայկական ՋՈւ-ն ձեռք բերի «Миг-29» կործանիչներ, և վերջապես ստեղծվի կործանիչ ավիացիա, միևնույն է, դա լինելու է կարճաժամկետ լուծում՝ ի պատասխան աղբրեցանական նախաձեռնությամբ, որն ամբույլատրելի է Հայաստանի համար: Դա կլինի հենց այն, ինչին ձգտում է Աղբրեցանը՝ սիմետրիկ պատասխան, սպառազինությունների սրցավազք: Աղբրեցանի կողմից «Cy-27»-երի, «F-16C»-երի կամ համարժեք այլ ինքնաթիռների ձեռքբերման դեպքում հայկական ՌՕՌ-ն մտքից կհայտնվի դժվար կացություն մեջ: Ավելին՝ ամեն ինչ կստացվի մույն՝ աֆրիկյան սցենարով:

Հայկական կողմը աղբրեցանական նախաձեռնությունը ոչ քի պիտի պատասխանի, այլ նախաձեռնությունը վերցնի իր ձեռքը:

²⁵⁵ Բացի ակնհայտ մարտավարատեխնիկական տվյալներից, սավածի լավագույն ապացույցը հանդիսացան օդային մարտերը երովպիական «Cy-27»-երի, որոնք հանդիսանում են «Cy-30»-ի նախատիպը և Էրիթրեյական «Миг-29»-երի միջև: Մարտերը գրեթե քաջարժակապես ավարտվեցին առաջինի հաղթանակներով: Жирохов М., Война в воздухе на Африканском Роге, <http://www.airwar.ru/history/locwar/africa/eritrea/eritrea.html>

²⁵⁶ Տեղեկանք. «Cy-30» կործանիչը առաջիկա 20 տարում կարող է դառնալ աշխարհի ամենամասայական կործանիչներից մեկը: Բանն այն է, որ լինելով 4-րդ սերնդի լավագույն կործանիչներից մեկը և ներկայումս լավագույն ռուսականը այն թավական էժան է, ինչի համար էլ ձեռք է բերվում մի շարք երկրների կողմից: Այս կործանիչի հիմնական թերությունները՝ վատ ռադիոսարքավորումներ, սպառազինություն և այլն, կարելի է որոշակիորեն շտկել: Հենց այս ճանապարհով կարող են գնալ Չինաստանը և Հնդկաստանը, որոնք պլանավորում են մեծ քանակությամբ նման կործանիչներ ունենալ: 10-20 տարի հետո Արևելքում այս կործանիչները կարող են լուրջ բախումների մեջ լինել ամերիկյան կործանիչների հետ: Չինաստանը, Հնդկաստանը և Ինդոնեզիան կունենան մեծ քանակությամբ նման կործանիչներ, որոնց հետ շահերի բախում կարող են ունենալ ամերիկյան կործանիչներով զինված Ծաարիխան և Ավստրալիան: Այս տեսանկյունից էլ շահախնդ է նման կործանիչների ձեռքբերումը:

«Cy-25»-երի որոշ քանակությամբ ՀՀ-ն ունի, սակայն «Cy-30»-ը ՀՀ-ի համար կարող է լուծել ռազմավարական խնդիրներ: Նման ինքնաթիռների անգամ փոքր քանակը՝ 10-12 միավոր, կարող է ուժերի հարաբերակցության հարցում մեծ բան փոխել: Դրանք իրենց զուպիչ դերը կատարած կլինեն անգամ հակառակորդի կողմից համանման ինքնաթիռների մեծ քանակի առկայության պայմաններում: Կիրառության արդյունավետությունը և ընդհանուր հաջողությունն արդեն կախված կլինի կիրառության հնտությունից ու պատրաստությունից:

Գալիք պատերազմը դասապարտված է ընթանալ արցախյան լեռներից այն կողմ: Հատկապես կարևոր է պատմական հայոց հողերի՝ Քուռ-արարսյան ջրային սահմանը, որի կամուրջների համար առանձնակի մարտեր կարող են ընթանալ: Մա հայոց պատմական սահմաններն են, որոնք քաջի պատմական արժեքից, նաև բնական հզոր սահմաններ են: Այդ մարտերում հայկական ՌՕՌ-ն ստիպված է ունենալ գերճզրիտ հարվածային միջոցներ ու կործանիչներ, որոնք պիտի պահպանեն գրոհիչ և ուղարթիտային ավիացիան²⁵⁷: Կործանիչների ձեռքբերումն անմիջապես պետք է համատեղել ՀՕԳ կորթերի և ՌՕՌ-ի միավորումներ՝ առավելագույն արդյունավետության ու ճիշտ կառավարման նպատակով: Հայկական ՌՕՌ-երը պետք է զինվեն առաջնակարգ կործանիչներով, որոնք թե՛ օդային մարտում, թե՛ վերգետնյա նշանակետերին հարվածելիս մեծ հնարավորություններ ունեն:

Հընտանի: Հըրթիտաբետանային սպառազինությունը մեզ համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում՝ նախ իր հզորության, ապա նաև գիտատեխնիկական մակարդակի բարձրացման արդյունքում օրեցօր ամենահզոր ՕՀՄ-ներից ավելի մտտեմալու պատճառով: ՀՀ ՋՌ-ի ունեցած և ՀՀ անկախության 20 - ամյակի զորահանդեսի ժամանակ ցուցադրված «P-17 (8K14, SS-1c Scud-B, 9K72 P-

²⁵⁷ Այս մասին հանգամանալից տես՝ Арутюнян А. Оборона или наступление? О плане ведения войны с Азербайджаном, <http://blog.arart-center.org/?p=332>

300 *Յոնքրջ համալիր*», օպերատիվ-մարտավարական հրթիռները, իհարկե, հարձակողական հզոր միջոցներ են, սակայն դրանք արդեն հնացած են և փոխարինում են պահանջում: Գրանք ՀՀ Ջու-երի ունեցած ամենաերկար ձեռքն են մարտական գործողությունների ժամանակ: Ներկայումս հայկական քանակը միջոցներ է ձեռնարկում նմանատիպ նոր հրթիռային համակարգեր ձեռք բերելու համար, մասնավորապես խոսքը ոռոսական օպերատիվ-մարտավարական «Искандер (9К720)» նոր համակարգերի մասին է, որոնք զգալիորեն կփոխեն ուժերի հարաբերակցությունը ողջ տարածաշրջանում: Նկատենք, որ վերջին 10 տարում աշխարհում նման զինատեսակներ գրեթե չեն վաճառվում, դրանք ստեղծել են 4-5 պետություններ:

Իհարկե, ՀՀ-ն չի կարող մեծ քանակությամբ սպառազինություն գնել, և չկա նաև դրա անհրաժեշտությունը: Հայկական քանակը հիմնական շեշտը պետք է դնի որակի և ոչ անորակ քանակի վրա: Առաջնորդվելով նվազագույն քանակի, նպատակային ծախսերի և արդյունավետության հիմունքներով՝ մեզ հարկավոր է ձեռք բերել հարձակողական որոշակի միջոցներ. միջոցներ, որոնք հիմնականում իրենց զսպողական դերը կկատարեն Ադրբեյջանի ռազմավարական օբյեկտներին հասցվող վտանգի առումով: Արժեք-արդյունավետություն-բազմաֆունկցիոնալության տեսանկյունից ելնելով՝ ներկայումս հայկական քանակին անհրաժեշտ են այնպիսի ՕՆՄ-ներ, որոնք ունենան օպերատիվ մարտավարական հեռահարություն՝ հակառակորդի կարևորագույն նպատակակետերին հասնելու համար: Գրանք պետք է լինեն հուսալի և սպասարկման համար քիչ ծախսեր պահանջող, իսկ հզորությունը պետք է լինի բավարար է՝ վախեցնելու, և՛ իրականում խոցելու համար²⁵⁸:

²⁵⁸ Լավ տարբերակ է ոռոսական արտադրության «Искандер (9К720)» օպերատիվ մարտավարական հրթիռային համալիրը: Վերջինս արձակման մեքենայի վրա ունի երկու հրթիռ, ինչը շատ կարևոր հանգամանք է: Համալիրի հրթիռներն ինքնակառավարվող են, ունեն 280 կմ հեռահարություն և 480 կգ մարտական մաս: Հրթիռներն օժտված են բարձր դիպուկությամբ,

Ընդհանրապես մեզ համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում համագարկային մեծ կրակի ռեակտիվ համակարգի (ՀԿՌ-Հ) նոր զարգացումները: Հայաստանի համար անարդյունավետ և անիմաստ է հեռանկարում ունենալ իհն «Смерч» կամ նրան համարժեք այլ համալիր, որոնք օգտագործում են սովորական շղեկավարվող հրթիռներ: ԱՄՆ-ն անգամ չունի փոքր և միջին տրամաչափի ՀԿՌ-Հ²⁵⁹: Այդ զենքերը չունեն մեծ ճշգրտություն, իսկ դրանց զինամթերքի ծախսն անտելի է, որպեսզի լրացնի ճշտությունը²⁶⁰: Նման զենքերի կիրառությունը պահանջում է մեծ ծախսեր՝ ապահովելով շատ ցածր արդյունավետություն²⁶¹: Գովազդային տվյալների մեջ գրվում է, որ, օրինակ, «Смерч» ՀԿՌ-Հ-ն իր 12 հրթիռներով խոցում է 67 հա տարածություն: Վերջերս ստեղծված այս համակարգի ավելի քեթև տարբերակը, որն ունի ընդամենը 6 հրթիռ, ըստ նույն գովազդային տվյալների՝ դարձյալ ունի 67 հա խոցելու հնարավորություն: Սա առնվազն տարօրինակ է: Սակայն եթե հարցին մասնագիտորեն մտնենք, ապա ամեն ինչ պարզ է դառնում: Համակարգը ոչ թե խոցում է այդքան տարածք, այլ ընդամենը իր հրթիռները ցրում է այդ տարածության վրա: Բնականաբար, արդեն կապ չունի քանի հրթիռ ենք արձակում: Եթե անգամ արձակենք 3 հրթիռ, միևնույն է, դրանք ցրվելու են 67 հա-ի վրա: Սա արդեն դիպուկության խնդիր է, իսկ դա նման զենքերի դեպքում լավագույնս կազմում է հեռավորության 1-1,5

ուղղորդվում են օպտիկական սկզբունքով, ինչը դրանց մեզ համար շահեկանորեն տարբերում է ամերիկյան հրթիռներից: Ամերիկյան հրթիռները, միգուց, ավելի դիպուկ են, սակայն խիստ կախված են արբանյակային ուղղորդումից: Համալիրը սպասարկման մեծ ծախսեր չի պահանջում և ըստ եղանակի տվյալների՝ հուսալի է: Տարբերակներ շատ կան, սա եզակի հնարավորություն չէ: Широкорад А., Указ. Соч., стр. 255-256.

²⁵⁹ ЗВО, 10.2000, стр. 26.

²⁶⁰ Նման համակարգերով կրակելու դեպքում սեփական զորքերի անվտանգ հեռավորությունը կազմում է մոտ 1 կմ կամ արգելվում է այն դեպքում, երբ հրամարային հրետամու համար այդ հեռավորությունը կազմում է մինչև 250-300 մետր:

²⁶¹ Латухин А. Н., Современная артиллерия, М., 1970, стр. 212.

տուկոսը: Այս ցուցանիշը նույնն է գրեթե բոլոր մեծ տրամաչափի ՀԿՌՀ-ների դեպքում, որոնք արձակում են չղեկավարվող հրթիռներ: Այսինքն՝ 70 կմ հեռահարության դեպքում ռուսական վերը նշված ՀԿՌՀ-ի հրթիռները շեղվում են մինչև 700-800 մ, ինչը նորմալ է ու կազմում է արդեն մոտ 70 հա:

Հայտնի է, որ Ադրբեջանը 1991 թ. վերջից մինչև 1994 թ. գարուն Ստեփանակերտ քաղաքի վրա արձակել է «Մրաք» ՀԿՌՀ-ի ավելի քան 20.000, «Առաշտ»-ի՝ մոտ 2.700 հրթիռ, ավելի քան 1900 հրետանային արկեր և այլն²⁶²: Ինչպես կարելի է նկատել, այստեղ հիմնական դերակատարը խորհրդային 122 մմ-ոց արկերն են, որոնք ամենաշատն էին կիրառվում, չնայած բոլորն էլ չղեկավարվող և ոչ ճշգրիտ զենքեր են: Հայտնի է, որ արգելադրված գոյամարտի ընթացքում հայկական կողմի կորուստները խաղաղ բնակչության շրջանում կազմել են մինչև 2200-2500 մարդ: Եթե մյուս բոլոր զենքերը համենք և մարդկային բոլոր կորուստներն էլ պայմանականորեն հաշվենք, կտասցվի Ստեփանակերտում ամեն մի խաղաղ բնակչի սպանելու համար այդքեջանական կողմը ծախսել է մոտ 10 միավոր 122 մմ-ոց հրթիռ: Բնականաբար, մեր հաշվարկներն ավելի համեստ են, ավելորդ ծախսերն ավելի մեծ են, իսկ այդ քանակության մեջ կան նաև ազատամարտիկներ: Կան նաև համաշխարհային այլ օրինակներ²⁶³:

²⁶² Агаджанян М., Асатрян Э., Минисян С., Азербайджан против Нагорного Карабаха, Ер., 2006, стр. 103.

²⁶³ 2008թ. օգոստոսին տեղի ունեցած մարտական գործողությունների ժամանակ փրացված քանակն ամառից երկու-երեք օրերին, բացի հրետանային այլ միջոցներից, Յլսինվալի քաղաքը և մնացած բնակավայրերն ինտենսիվորեն հրետակոծում էր մինչև 40 միավոր 122 մմ-ոց և մի քանի այլ ավելի մեծ տրամաչափի ՀԿՌՀ-ով: Պատերազմից հետո հայտնի դարձած տվյալներով հարավօսական ընդհանուր կորուստները կազմում են մոտ 1500-2000 մարդ: Հաշվարկները ցույց են տալիս, որ նման զենքերով յուրաքանչյուր մարդու վրա արձակվել է մոտ 10-11 հրթիռ: (Потери Южной Осетии в войне с Грузией составили 1492 человек, <http://www.regnum.ru/news/1044120.html#ixzz1WKrFJJIB>; Жертвы грузинской агрессии, 17 сентября, 2008, <http://www.interfax.ru /society/text.asp?id=332529>); (Минисян

Նույն եզրակացությանն են եկել միջազգային անկախ փորձագիտական գրեթե բոլոր խմբերը, որոնք ՀԿՌՀ-ները համարում են ոչ ճշգրիտ զենք²⁶⁴: Իհարկե, ոմանք կարող են պնդել, որ արկերի քանակը չի կարելի հաշվել մարդկային կորուստների համեմատությամբ, դրանք նախատեսված են բոլորովին այլ խնդիրների համար: Այս զենքերը մեծ դիպավորություն չունենալով՝ զանգվածային ավերածություններից գատ, այլ խնդիրներ գրեթե չեն լուծում:

Նույն անարդյունավետությունը և մեծ ծախսերն են նաև ավիացիոն չղեկավարվող սպառազինության դեպքում: Եթե 122 մմ-ոց և նման հրթիռների դեպքում դեռ որոշակի կիրառության անհրաժեշտություն կա՝ ելնելով դրանց ցածր արժեքից և արձակման միջոցների առկայությունից, ապա մեծ տրամաչափի դեպքում, ինչպես ասեցինք, մեծ ծախսեր կառաջանան: Սովորական չղեկավարվող 300 մմ-ոց հրթիռները ևս էժան չեն: Տարբեր գնահատականներով «Смерч» ՀԿՌՀ-ի մեկ համազարկի արժեք մոտ 1.5 մլն դոլար: Նույնքան արժեքն ավիացիոն այն հրթիռները, որոնք զերճշգրիտ են և ունեն մինչև 150-200 կմ հեռահարություն: Բնականաբար, դրանց արդյունավետությունն անհամեմատելի է: Ցավոք, չղեկավարվող հրթիռներով ՀԿՌՀ-ները ուղիղ համեմատելի են ու անգամ փոխարինում են չղեկավարվող հրթիռներով քանակային ավիացիային՝ հարվածային ուղղաթիռներ և գրոհիչներ: Ավելին՝ եթե ընտրության խնդիր կա, շատ ավելի էժան ու համեմատաբար արդյունավետ է ունենալ հեռահար ՀԿՌՀ, քան գրոհիչ ինքնաթիռ: Սակայն հարցն այն է, որ եր-

С., «Пятидневная война», августа, 2008; Военно-политический анализ, Кавказ, 2008, Ереван, 2010, стр. 149.); (Мирные жители на линии огня, Грузино-российский конфликт, 2008 (Amnesty International Secretariat Peter Benenson House 1 Easton Street London WC1X 0DW United Kingdom www.amnesty.org) стр. 2.): Նույն վիճակն է նաև Իսրայելի դեպքում, որի ուղղորդմամբ արաբական օդակազմերը մշտապես նման հրթիռներ են արձակում: <http://www.iaf.org.il/4388-39969-en/IAF.aspx>; <http://www.idf.il/1283-15558-en/Dover.aspx>.

²⁶⁴ Минисян С., «Пятидневная война», августа, 2008, Военно-политический анализ, Кавказ, 2008, Ереван, 2010, стр. 143-150.

կուսն էլ սխալ ու անարդյունավետ ճանապարհներ են: Ահա, այս պատճառով է, որ արևմտյան մասնագետները դեռ 1980-ականներից մտածում էին դրանց կատարելագործման և փոխարինման մասին: Հրթիռային տեխնոլոգիաների և միկրոէլեկտրոնիկայի զարգացումը թույլ տվեց մեծ համալիրները կատարելագործել այն աստիճան, որ մի փոքր մեծացվելով՝ վերածվում են դրանք գրեթե մարտավարական հրթիռների: Նշված «MLRS»-ն, «Смерч», «WM-80»-ն, նաև չինական «WS-1B»-ն, «WS-2D»-ն, իսրայելական «LAR-160»-ն, «MAR-290»-ն և այլ համալիրները կատարելագործվելով՝ վերածվել են «միմի» մարտավարական ու անգամ օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիրների և արձակում են ոչ թե մեկ, այլ 2-4 հրթիռ: Հրթիռների չափերը մեծացել են, դիպուկությունը՝ հիմնականում արբանյակային նշանառմամբ, աճել է մի քանի տասնյակ անգամ: Իհարկե, հրթիռների մեծացմամբ արձակման կայանների վրա նախկին 8-12-ի փոխարեն՝ այսօր տեղադրվում է 2-4 հրթիռ, սակայն դա դառնում է անգամ առավելություն: Նամատիպ հրթիռների կիրառության գործում մեծ հետադարձություն են ներկայացնում հատկապես ԱԹՄ-ները, որոնք բազում մարտավարական խնդիրներից զատ, կարող են նաև համդիսանալ մարտավարական հրթիռային համալիրների նշանառման համակարգեր: ԱԹՄ-ների ճշշտ կիրառությամբ կարելի է հասնել տեղեկատվական զգալի առավելության, որն էլ ներկայումս որոշիչ է մամադարային մարտում: ՀՀԿՆ-ն, մարտավարական և օպերատիվ-մարտավարական սովորական հրթիռներից զիջելով իրենց մարտական մասի հզորությամբ, ունեն նաև որոշակի առավելություն: Հակահրթիռային զենիթահրթիռային համալիրը (ՋՀՀ), մարտավարական և օպերատիվ-մարտավարական տվյալական հրթիռներից զիջելով, իր չափերից ելնելով, ավելի շուտ է հայտնաբերում և որպես արդյունք՝ ավելի հեշտությամբ կարող է խոցել: ՀՀԿՆ-ի հրթիռները չափերով փոքր են, և համազարկով այժմ կուսները լուրջեն փոքրացնում են դրանց հայտնաբերումը, ուղեկցումը և խոցումը: Մեզ համար սա շատ կարևոր է, քանի որ Ադրբեջանը

տիրապետում է «С-300 ПМУ-2» ՋՀՀ-ի և փորձում է ձեռք բերել ավելի կատարյալները²⁶⁵:

Լավ հնարավորություն կա նաև արդեն ձեռք բերված չինական 273 մմ-ոց «WM-80» և ռուսական «Смерч (9К58)» ՀՀԿՆ-ը կատարելագործել՝ ավելացնելով նաև քանակը: Չինացի մասնագետները կատարել են այդ համալիրի հրթիռների կատարելագործում: Նույն տրամաչափի նոր հրթիռները կարող են արձակվել մինչև 120 կմ: Իսկ ավելի կատարելագործված «Գուարդիան-2» հրթիռները, որոնք մեծացվել են մինչև 406 մմ-ի, կարող են նպատակակետեր խոցել մինչև 280 կմ հեռավորության վրա և ղեկավարվում են արբանյակային նշանառությամբ²⁶⁶: Վերջին հրթիռներով, իհարկե, արձակման կայանի վրա արդեն տեղադրվում է ոչ թե ութ, այլ երեք հրթիռ, սակայն

²⁶⁵ Նման ՀՀԿՆ-ից թվագույն տարրերակն ամերիկյան 240 մմ-ոց «MLRS» թագմաֆունկցիոնալ ՀՀԿՆ-ն է, որն ունի մի քանի տեսակի՝ 30-ից մինչև 90 կմ հեռահարություն ապահովող, ղեկավարվող և ղեկավարվող մարտական մեծ մասերով՝ մինչև 12 հրթիռների (M-26, M-27, M-28, M-29 և այլն) արձակման հնարավորություն: Բացի դրանից, այս համալիրի արձակման կայանից կարելի է արձակել «ATACMS» երկու հրթիռ (MGM-140 և MGM-164) իրենց մարտավարական և օպերատիվ մարտավարական տարբերակներով: Այս հրթիռների տարատեսակները հարմարեցված են ամենատարբեր պայմաններում կիրառելու համար, ունեն նաև կասետային մասեր: «MLRS»-ն ունի արձակման քրթուրավոր կայան: Փաստորեն, «MLRS» թագմաֆունկցիոնալ ՀՀԿՆ-ն փոխարինում է ռուսական «Смерч (9К58)» ՀՀԿՆ-ին, «Точка (9К79-1)» մարտավարական և «Искандер-Э (9К723)» օպերատիվ-մարտավարական հրթիռների միաժամանակ: Մեկ ԱԿ-ով երեք տեսակի ՕՀՄ ունենալը լավ հնարավորություն է, որն ավելի նպատակահարմար է նաև մեզ համար: Այստեղ հիմնական խնդիրն այն է, որ ամերիկյան հրթիռների գերճշգրտությունն ապահովում է արբանյակային ուղղորդմամբ: Իսկ դա, ինչպես գիտենք, օգտագործողի կամրից անկախ կործող համակարգ է և կարող է ամենամահարող պահին անջատվել: Lockheed Martin (Vought) MLRS Rockets (M26/M30/M31), <http://www.designation-systems.net/dusrm/app4/mlrs.html>: Гуров С.В., Реактивные системы залпового огня, Тула, 2006, стр. 432; <http://www.sinodefence.com/army/artillery/mlrs/273.asp>.
²⁶⁶ Гуров С. В., Реактивные системы залпового огня, Тула, 2006, стр. 432; <http://www.sinodefence.com/army/artillery/mlrs/273.asp>

տվյալների փոփոխությունն ուղղակի զարմացնում է: Այն «MLRS»-ի նման ևս բազմապատակ է: Մարտական տարբեր պայմաններում կարելի է արձակել ցանկացած տեսակի հրթիռ՝ ըստ անհրաժեշտության: Նման հզոր հրթիռներ ունի նաև ռուսական կատարելագործված համալիրը, որը կարելի է առանձին կամ ռուսական կողմի հետ համատեղ իրականացնել նաև «Смерч (9К58)»-ի հիման վրա:

Նման մոտ երկու տասնյակ համալիր կարող է փոխել ուժերի հավասարակշռությունը՝ ապահովելով երկարաժամկետ անվտանգություն: Եթե անգամ հայկական ուժերը նույնանման համալիրների քանակով զիջեն հակառակորդին, ապա դրանց առկայությունը բշնամուն բավական կզգաստացնի: Ռազմավարական օբյեկտների նկատմամբ հարվածի մտավախությունն²⁶⁷ ինքնաբերաբար այս զենքերը կվերածի զսպողական միջոցների:

Հրանոթային հրետանու (փողային հրետանի) սպառազինության տեսակների մեջ ևս անհրաժեշտ է ստեղծել նախաձեռնող, որակական գերազանցության իսկակալի: Ներկայումս աղբյուրազանգված քանակի սպառազինության մեջ գտնվող 152,4-203,2 մմ հրետանային համալիրները լեռնային պայմաններում մարտական արագընթաց գործողությունների համար քիչ կիրառելի են²⁶⁸:

Այսպես, 203,2 մմ-ոց «2С7 Пион» համալիրի փոխարեն կարող է նույնպես կիրառվել խորհրդային արտադրության 240 մմ «2С4 Тюльпан» ինքնագնաց ակամանետը: Վերջինս նախորդին զիջում է միայն կրակի հեռահարությանը, սակայն դա բնական է, քանի որ ակամանետը երբեք հրանոթին հեռահարությամբ մրցակից չի եղել: Ընդհանուր համալիրը «2С7 Пион»-ից թեթև է մոտ երկու անգամ, արկերը ծանր են, հետևաբար, հզոր 1.1-2.2 անգամ, իսկ կրակի դիպու-

կությունը բարձր է 10-30 տոկոսով²⁶⁹: «2С4 Тюльпан» ակամանետը հաջողությամբ պայքարում է երկաթբետոնե ամրաշինական կառույցների դեմ, կարող է կրակ բացել մինչև 80 աստիճան բարձրացված հրանոթով, ինչը շատ կարևոր է լեռնային պայմաններում: Ակամանետ ունի հատուկ ուղղորդվող արկեր՝ «Смерчак», որոնց կիրառությունն Աֆղանստանում և Չեչենիայում ապացուցեց դրանց արդյունավետությունը: Ընդամենը 2-4 արկերով թիրախները ոչնչացվում էին 80 տոկոս արդյունավետությամբ, իսկ սովորական արկերով խնդիրը կատարվում էր 4-6 արկերով²⁷⁰: Այս ամենը լեռնային տեղանքում «2С4 Тюльпан» ակամանետը դարձնում է հզոր միջոց: Նման ակամանետները կարող են լուրջ հնարավորություն տալ համազորային մարտում:

Հայկական զինուժի համար առաջնային նշանակություն ունեն լեռնային, ոչ ծանր, սակայն ինքնագնաց հրետանային միջոցները, որոնք մեծապես ինտեգրված են հարձակման և հետախուզական ընդհանուր միջոցների հետ: Հիմնականում դրանք են՝ 152,4-155 մմ-ոց ինքնագնաց հրետանային կայանները, ակամանետները: Մասնավորապես, մեզ համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում ռուսական «2С19 Мста-С» կայանը, որը հնարավոր է անգամ կատարելագործելով հասցնել համաշխարհային լավագույն մակարդակի: Այստեղ էական է այն հանգամանքը, որ դրանք կարողանան կիրառել ղեկավարվող արկերի ռուսական և արևմտյան տեսակներ, կրակ են արագ, տարբեր հեռավորությամբ, ինչպես ժամանակակից ճմուշկները: «2С19 Мста-С»-ը հարմար է նաև նրանով, որ կարող է կիրառել խորհրդային նախկին մույն տրամաչափի զրեթե բոլոր արկերը: Կա-

²⁶⁷ Նավթահանման և մշակման ոլորտի ներակառուցվածքներ, մեծ ռազմարագներ և այլն:

²⁶⁸ Բազատությանը վերջերս Ռ-7-ից ձեռք բերված համակարգերը:

²⁶⁹ Ломаченко С. В., Булатов О. Г., Гаврилович С. В., Артиллерия большой мощности, история и перспективы развития, Военная мысль, Март-апрель, 2001, стр. 4-6.

²⁷⁰ Трошев Г. Н., Чеченский излом, Дневники и воспоминания, 2-е изд., М., 2009, стр. 325; Ломаченко С. В., Булатов О. Г., Гаврилович С. В., Артиллерия большой мощности, история и перспективы развития, Военная мысль, Март-апрель, 2001, стр. 5.

րելի է անգամ ավելացնել արդեն գոյություն ունեցող «283 Ալացիա»-ների քանակը և կատարելագործել դրանք: Նման կայաններն ու դրանց կրակը ճկուն են, շատ արագ են խոսանալով, ինչը ժամանակակից մարտում, հատկապես լեռնային տեղանքում, մեծ նշանակություն ունի: Ապագան պատկանում է ինքնագնաց և արագաշարժ հրետանուն, քանի որ լեռնային տեղանքում բարչակվող հրանոթները մեծ խնդիրներ են ստեղծում: Աշխարհի առաջատար բանակներում բարչակվող և ինքնագնաց հրետանու հարաբերակցությունը կազմում է գոնե 50/50:

Կապ: Ներկայումս կապի զորքերի զարգացման ընթացքում իրականացվում են աննախադեպ վերափոխումներ և կատարելագործումներ: Կապի համակարգի թվայնացման գործընթացն ակտիվ փուլում է: Ձիճված ուժերի էլեկտրոնային փոստի զարգացման և ավտոմատ կառավարման համակարգերի ներդրման մեծածավալ աշխատանքներ են ընթանում: Հենակետային կապի հանգույցներում ներդրվում են հայրենական արտադրության դաշտային թվային ռադիոկայաններ, լոկալ մի շարք ցանցեր են: Գլխաց շնորհիվ՝ ՀՀ զինված ուժերի տարբեր վարչություններում և զորամասերում ավտոմատացվում են բազմաթիվ գործառնություններ՝ էապես բարձրացնելով հաշվառման և հատուկ բնույթի տարրեր խնդիրների կատարման որակը:

Ինժեներական ծառայություն: Մարտական գործողությունների ավարտից հետո ինքնուս սակարկությունն ու մասնագետ առաջին սպաների գործը կանց չառավ, քանի որ հետախույզների և սակրավորների համար դրանք երբեք չեն ավարտվում: Կառուցվեցին և սարքավորվեցին պաշտպանական նշանակության հարյուրավոր կիլոմետրեր ձգվող ճանապարհներ ու արգելափակոցներ: Մեծ աշխատանքներ կատարվեցին մարտական հերթապահություն իրականացնող ստորաբաժանումների անձնակազմի անվտանգությունն ապահովելու և կենցաղային պայմանները բարելավելու համար: Կառուցվել են լեռնային այնպիսի ճանապարհներ, որոնք ապահովում են զորքերի հաղորդակցությունը անհնարին թվացող շատ տեղանք-

ներում²⁷¹: Առանձին, ինժեներասակրավորային խաղաղապահ գոմարտակի ուժերով Տավուշի և Մյունիքի մարզերում ակնհայտորձվել են հսկայական տարածքներ: Մեր սակրավորները ընդգրկվել են միջազգային խաղաղապահ առաքելություններում՝ 2003-2007 թթ. գործկով Իրաքում, 2010 թ.՝ Աֆղանստանում:

ԱԷՊ: Հակատակորդի ղեկավարման ռադիոկապերի ռադիոէլեկտրոնային ճնշումը կարևորագույն խնդիրներից է: Նոր դարաշրջանի պատերազմներում դրանց դերը էլ ավելի կկարևորվի: Ընդդիվ ռադիոէլեկտրոնային պայքարի ստորաբաժանումների անձնակազմի հմուտ աշխատանքի՝ նույնիսկ մարտեր են հաղթում: Ռադիոէլեկտրոնային պայքարի գորքերն այսօր ՀՀ ՁՈՒ-ի այն գաղտնի ու հզոր խաղաքարտերից մեկն են, որոնց մասին սովորաբար քիչ բան է հայտնի լինում, սակայն մեծ գործ են կատարում՝ հետախուզության գաղտնի ստորաբաժանումների նման:

Թիկունք: Ձիճված ուժերի թիկունքն այսօր ժամանակին ու որակով լուծում է զորամիավորումների, միավորումների և զորամասերի առօրյա գործունեության թիկունքային ապահովման խնդիրները: Հարտացվում են անձնակազմի սնունդն ու հանդերձանքը, բարելավվում են զինծառայողների կենցաղային պայմանները: Ներկայումս հայ զինվորը մայրական դիրքերում տաանյակ տեսակի պահածո է ստանում, բնական հյութ, խտացրած կաթ և այլն:

Բուժառայություն: Ներկայումս զինված ուժերում գործում են բազում հոսպիտալներ և բուժհաստատություններ: Շատ քիչ հիվանդություններ կան, որոնք չեն բուժվում ռազմաթշկական հաստատություններում: Այսօր բանակում ծառայում է բժշկական գիտությունների 5 դոկտոր և 35 թեկնածու: Բժշկական ապահովումը բարձր մակարդակի վրա է, ներկրվում են ժամանակակից բազմատեսակ

²⁷¹ Ինժեներական ծառայության նախկին պետ գեներալ-մայոր Ադրյանի Ռ. զեկույցները և անձնական արխիվները: ՀՀ ՊՆ Օհանյան Ս., գնահատականները բանակային կորպուսների մարտական հենակետերի այցելությունների ժամանակ:

սարքավորումներ և համակարգեր, ռազմական բժիշկները մշտապես կատարելագործման դասընթացներ են անցնում արտերկրում²⁷²:

Նյութատեխնիկական ապահովում և կապիտալ շինարարություն: Փորձագետների գնահատմամբ զինված ուժերի մարտունակությունն ապահովող նյութատեխնիկական միջոցների կենտրոնացված մատակարարումն ու գործընթացի թափանցիկությունն ապահովելու գործում մեծ աշխատանք է կատարվել: Բանակի գնման և մատակարարման համակարգը համարվում է օրինակելի պետության համար: Բանակում կառուցվել են 15 նոր զինավան և շուրջ 300 տարբեր կառույց, նորոգվել է մեծ ու փոքր 400 շինություն²⁷³: Ամեն տարի տասնյակ սպաներ նոր բնակարաններ են ստանում, իսկ հայրերավոր զինվորներ բնում են նոր կացարաններում: Կառուցվող նոր զորակոմբերում ու կացարաններում արդեն նախատեսված են ամենօրյա բաղնիքներ և հանդերձարաններ՝ անմիջապես ննջարաններում²⁷⁴:

Լուրջ առաջընթաց է արձանագրվել զորքերի ծառայության ու զինվորական ծառայության անվտանգության ապահովման ապավինիներում: Կարգապահության և մարտունակության բարելավման քրեադիշները երևում են բոլորով: Այսպես, 2007-2012 թթ. ընթացքում մոտ կրկնակի պակասել են ինքնախեղումների, ինքնասպանությունների, դիտավորյալ սպանությունների և այլ դեպքերը²⁷⁵: Մահվան

²⁷² Փարսադանյան Ա. Մ., ՀՀ ՁՈՒ-ի ռազմաբժշկական ծառայության զարգացման որոշ հայեցակարգային հարցեր, Հայկական բանակ, 4(70), 2011, էջ 9-18; Մերոբյան Ա. Յ., ՀՀ ՊՆ կենտրոնական պոլիկլինիկայի գործունեությունը ՀՀ պաշտպանական բարեփոխումների համատեքստում, Հայկական բանակ, 4(70), 2011, էջ 34-40:

²⁷³ Ձորքերի բնակավորման և կապիտալ շինարարության վարչության տարվա ամփոփիչ հաշվետվություն-զեկույց, 2013:

²⁷⁴ ՀՀ ՊՆ Օհանյան Ս., հատուկ հրահանգ, որը ձևակերպվել է կապիտալ շինարարության ղեկավար փաստաթղթերում:

²⁷⁵ ԱՀՏԱ վարչության պետ զեներալ-մայոր Ալեքսանյանի Ա. գաղտնի զեկույց ՊՆ Օհանյան Ս.:

դեպքերը նշված ժամանակահատվածում մոտ 70-ից իջել են 50-ի, ուրուցից կարգապահության հետ առնչություն ունեցողները կազմում են մոտ 35, իսկ 2013 թ. ընթացքում՝ նախորդ տարվա հետ համեմատած, նվազել են 30 տոկոսով՝ կազմելով 33 ղեկաբ: Առաջնագծում, չնորիսլվ ձեռնարկված բացառիկ միջոցառումների, հակառակորդի կրակից տարեկան կորուստները նվազել են շուրջ երեք անգամ՝ հասնելով մինչև 5-6-ի: Բանակի ղեկավարության համար դեռ մտահոգիչ են մնում միջանձնային հարաբերությունները, որոնք հիմնականում զալիս են հասարակական կյանքից, և դրանց դեմ լուրջ պայքարել է հարկավոր: 2014 թ. պաշտպանության նախարարը հայտարարել է բանակում փողոցային բարքերի և արատավոր արժեքների դեմ պայքարի տարի՝ միաժամանակ ահագնեցնելով, որ հատկապես վտանգավոր է, այսպես կոչված, հեռուստադաստիարակությունը:

Սոցիալական ապահովում: Մեծ ծրագրեր են իրականացվում զինծառայողների, զոհված, մահացած ու անհայտ կորած ազատամարտիկների և զինծառայողների սոցիալական պաշտպանության ուղղությամբ: Միայն վերջին 5 տարիներին ՀՀ պաշտպանության նախարարությունը զինծառայողներին հատկացրել է 1.495 ծառայողական բնակարան: Բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն է հատկացվել զոհված, հաշմանդամ դարձած և կարիքավոր զինծառայողների գրեթե 2.000 ընտանիքների²⁷⁶:

Հասարակական վերահսկողություն: Բանակի գործունեության արդյունավետ միջոցներից մեկը մտև բանակի նկատմամբ հասարակական վերահսկողության կարևորությունն է: Քայլեր են իրականացվում բանակի նկատմամբ հասարակական վերահսկողության մեխանիզմների կատարելագործման և զինված ուժերի կենսագործունեությունն առավել թափանցիկ դարձնելու ուղղությամբ: Սա 21-րդ դարի բանակի ձևավորման կարևորագույն քայլերից մեկն է: Բա-

²⁷⁶ Ձորքերի բնակավորման և կապիտալ շինարարության վարչության և ՀՀ ՊՆ աշխատակազմի համատեղ տեղեկագր:

նակ-հասարակություն կապի ամրապնդումը իրականացվում էր ոչ միայն լսարաններում ու դահլիճներում տեղի ունեցող հանդիպումների, այլև զորամասեր ու մարտական փառքի վայրեր գնացած պատանիների և երիտասարդության հայրենաճանաչողական արշավների, զորամասային առօրյային ծանոթանալու միջոցով: Հասարակական տասնյակ կազմակերպություններ տարեկան մոտ 80 այցելություն են կազմակերպում զորամասեր, որոնց ժամանակ ստուգում և իրենց այցով են տեսնում բանակային առօրյան: ՊՆ ղեկավար կազմը մասնակցում է ամենատարբեր միջոցառումների՝ համապատասխան հրավերներով²⁷⁷: Պաշտպանության նախարարությունն աջակցում է նախագորակույթային տարիքի պատանիների և ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակությանը, նախնական զինվորական պատրաստության որվածքի բարելավմանը: Այդ պատճառով լուրջ օգնություն է ցուցաբերվում հանրապետության դպրոցներին: Հատկացվել են տասնյակ վարժասարքեր, նախատեսվում է ևս մի քանի տասնյակը²⁷⁸: Ունանք երբեմն առարկում են, թե սրանով բանակը շեղվում է իր գործառույթների իրականացումից, սակայն, մեր կարծիքով, այդ մոտեցումը սխալ է: Բանակը հնարավորության դեպքում պատրաստ է էլ ավելի աջակցել դպրոցականներին:

Հասարակական սեկտորում բանակն այսօր ամենաքննադատվող կառույցներից մեկն է, որը նաև օգտակար է: Բանակը որդեգրել է թափանցիկ աշխատանքը, որը միանշանակ բերելու է ոլորտի առողջացմանը: Օրինակները բազում են²⁷⁹:

Նվազախումբ և պատվով պահակախումբ: 1992 թ. ստեղծվեց զինված ուժերի զինվորական միացյալ փողային նվազախումբը, որը

ղեկավարում էր ՀՀ վաստակավոր արտիստ. «Մարտական ծառայության» մեդալի ասպետ, գեղապետ Արմեն Պողոսյանը: Նույն թվականին ստեղծվեց նաև պատվոպահակային վաշտը: Վերջինիս կախցման գործում մեծ են 2-րդ աստիճանի «Մարտական խաչ» շքանշանի ասպետ, գեղապետ Կարեն Մարգարյանի, փոխգնդապետներ Աշուտ Հակոբյանի և Վարդան ԽանՖերյանի ներդրումները:

Հեղուր ծառայություն: Մտաքելական եկեղեցին և նրա սպասավորները մշտապես ծառայություն են իրականացնում հայոց բանակում: Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի հոգևոր գործունեությունը՝ արցախյան պատերազմի ժամանակ, չափազանց բարձր է գնահատվում: Այսօր բանակում իրենց ծառայությունն են իրականացնում նաև հոգևորականները: Մոտ 10 պազայում զինված ուժերի բոլոր զորամասերը կունենան իրենց մատուցները, և յուրաքանչյուր զինվոր հնարավորություն կունենա բարձրացնելու իր սրտի աղոթքն առ աստված:

Ըննչական ծառայություն և դատախազություն: Բանակաշինության նոր փուլի և կատարելագործման արդյունքներից մեկն էլ ՊՆ քննչական մարմնի ստեղծումն էր: Հանրապետության զինվորական դատախազության հետ միասին՝ քննչական ծառայությունը հսկայական աշխատանք է կատարում զինված ուժերում օրինակաչության ու կարգուկանոնի պահպանման, հանցագործությունների բացահայտման, հանցագործություն կատարած անձանց հայտնաբերման և նրանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Չորսմիավորումներ: Հայոց բանակը շարունակում է հիմնականում բաղկացած մնալ պաշտպանության բանակից և հինգ բանակային կորպուսներից: Հիմնական հատվածի պաշտպանությունը իրականացնում է պաշտպանության բանակը: Հայաստանի Հանրապետության հարավարևելյան սահմանների պաշտպանությունը պատվով են իրականացնում բանակային առաջին կորպուսի զորամասերը, որոնք ստեղծվել են 1996 թ.:

Փառապանծ ավանդույթներ ունեն բանակային 2-րդ կորպուսի ստորաբաժանումները: Կորպուսը կազմավորվել է 1996 թ.: Այդ կոր-

²⁷⁷ Տ և ՀԿ վարչության պետի տարեկան հաշվետվություն, 2013:

²⁷⁸ Գեներալ-լեյտենանտ Սարգսյան Մ., զեկույցը ՀՀ ՊՆ կրթության և գիտության նախարարության հետ անցկացված համատեղ ֆորումին, 2013:

²⁷⁹ Հարությունյան Հ., Հունվարի 28. Բանակի տոն ու մարդկային ողբերգություն, ԱԶԳ, #6, 29-01-2013, էջ 1-3:

պուսի ստորաբաժանումները, որոնք հմտացել էին լեռնային տեղանքում մարտական գործողություններ իրականացնելու ժամանակ, փառքով են պսակել իրենց մարտական ուղին և այժմ ներգրավված են մարտական հերթապահությունում՝ Քարվաճառի ու Վարդենիսի հատվածում:

Բանակային 3-րդ կորպուսը ևս ձևավորվել է 1996 թ.: Չորսմիավորման մարտիկները պաշտպանում են Հայաստանի հյուսիսարևելյան սահմանները՝ Տավուշի, Նոյեմբերյանի ու Իջևանի շենքերը: Այդ կորպուսի՝ նոր ձևավորվող 3-րդ հատուկ բրիգադի մարտիկները, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի մասն են կազմում: Նրանք պատրաստ են արագ արձագանքել ցանկացած ճգնաժամի: Բանակային այս կորպուսն իր պաշտպանության տեղամասում ունի հայկական մի քանի գյուղեր, որոնք հակառակորդի կրակի տակ են²⁰⁰: Ահա նաև այս առումով են բարդ այս կորպուսի խնդիրները: 2013 թ. բանակային 3-րդ կորպուսի տեղամասում հակառակորդը ավելի շատ է խախտել հրադադարը, քան արցախյան հատվածում:

Հանրապետության հարավարևմտյան սահմաններում տեղաբաշխված են բանակային 4-րդ կորպուսի զորամասերը, որոնք հիմնականում կազմավորվել են 1997-2000 թթ: Բանակային այդ կորպուսը պահպանում է նախիջևանյան սահմանը և, այսպես կոչված, երևանյան դարպասները: Բանակային 4-րդ կորպուսի կազմում է սպարապետ Վ. Սարգսյանի անվան գումղը, բանակային 5-րդ կորպուսի կազմում՝ Թամանյան 89-րդ դիվիզիայի անվան հատուկ գունդը:

Վերջին տասնամյակների ընթացքում, գիտության և տեխնիկայի թռիչքածև զարգացման արդյունքում, ռազմական գործում աննախադեպ չափերի է հասել գիտելիքների և նորագույն տեխնոլո-

²⁰⁰ ՀՀ տարածքում կա շուրջ 27 հայկական գյուղ, որոնք գտնվում են հակառակորդի կրակի տակ, դրանցից 90 տոկոսը Տավուշում է:

գիաների իմացության տեսակարար կշիռը: Ռազմական գործը վերածվել է գլոբալիզացիայի ասպարեզի²⁰¹:

Ընդհանուր առմամբ հայոց բանակի հետպատերազմյան զարգացումը կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի.

1. Մարտերից հետո բանակը զորանոցներ վերադարձնելն էր: Սա ենթադրում էր՝ եղած զորքերի համապատասխան ստորաբաժանումների և զորամասերի կազմում, ռեժիմային համապատասխան ծառայությունների կազմակերպում, հանդերձավորում, նորմատիվային բոլոր պահանջներով նյութական և այլ ապահովումների հստակեցում: Ամեն օր կազմավորվում էին նորանոր զորամասեր, հստակեցվում էին հաստիքները, ստացվում էր նոր սպասազինություն և ռազմական տեխնիկա: Կատարվում էր զորակոչ, համալրումը բավականին դժվար էր. ազատամարտիկները փոխարինվում էին ժամկետայիններով և դրանով առաջանում էին բազում նոր խնդիրներ: Չորքերն իրենց մարտունակության պահպանման համար ստիպված էին անցկացնել մշտական զորավարություններ, ոչ ոքնց համար մեծ ռեսուրսներ էին հարկավոր: Այդ փուլը, իհարկե, այքի էր ընկնում մեծ բարդություններով, նախաբարը հիմնականում Վ. Սարգսյանն էր, որի համար «տղայական», հերոսական բանակը ամենամեծ ձեռքբերումն էր²⁰², սակայն այդ բանակը հարկավոր էր կերպարանավորել: Հիմնականում 1995-1997 թթ. այդ գործընթացը սկսվեց, որը տևական ու դժվարին ընթացք ունեցավ:

2. Երկրորդ փուլը հենց ազատամարտիկների բանակը կանոնավոր, դասական բանակ դարձնելու փուլն էր: Այդ փուլի ժամանակային սահմանները պայմանակամորեն կարելի է համարել 1996 թ. մինչև 2006-2007 թթ.: Այս փուլում ավելի հստակեցվեցին ՊՆ

²⁰¹ Քորանջյան Հ. Ա., Չիլինգարյան Դ. Ս., Ալեխոյան Վ. Պ., Մինասյան Ա. Ա., Պաշտպանական քաղաքականություն հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք, Հայկական քառակ. 1-2(59-60), 2009, էջ 8-19:

²⁰² Վազգենը բանակի հավերժ Սպարապետն է, Հունվար 29 2004, <http://www.aravot.am/2004/01/29/316800/>

և ԳԾ վարչությունների հստակ աշխատանքները, զորամիավորումների և զորամասերի կառուցվածքն ու հաստիքները, մեծապես լուծվեցին զորակոչի, զորքերի հանդերձավորման, սննդի ու մատակարարման բոլոր հարցերը: Հայոց բանակը համալրվում էր նորահոր սպառազինությանը և ռազմական տեխնիկայով: Ամեն տարի անցկացվում էին մեծածավալ ու ավելի հզոր զորավարություններ: Պաշտպանական բնագծերը հազեցան ու համալրվեցին: ՁՈւ-ն ապահովեց խոր էշեղմանցում, որի ժամանակ տեղադրվեցին հազարավոր ականներ, փորվեցին հակառակակային հարյուրավոր փոսեր, քաշվեցին փշալարեր: Հազեցած այդ բնագիծը հակառակորդը պայմանականորեն անվանում էր «Օհանյանի գիծ»²⁸³: Այդ ամենը եթե չի էլ չեզոքացնում հակառակորդի առաջխաղացումը, ապա զգալիորեն բարդացնում է նրա մարտական ակտիվ գործողությունները: Լուծվում էին կադրային հարցերը, ավելանում էր մասնագիտական և ակադեմիական կրթությամբ սպաների քանակը: Շատ ստորաբաժանումներ, համալրվելով նոր զենքերով, վերաճեցին ավելի մեծ ստորաբաժանումների: Ազատամարտիկների բանակը դարձավ արհեստավարժ ու դասական բանակ՝ ազգային որոշակի տարրերով: Այսպիսով՝ բանակը դասական ձև ու կառուցվածք ստացավ, սակայն դեռ կային որոշ թերություններ, որոնք հիմնականում պայմանավորված էին սոցիալ-տնտեսական և օրենսդրական հիմքերով:

3. Բանակի զարգացման երրորդ փուլը ընդգրկում է 2007-2008 թթ.: Խնդիրը, այսպես ասած, 20-րդ դարի բանակը 21-րդ դարի բանակ դարձնելն էր, այն էլ՝ ոչ մի որևէ երկրի բանակի պատճենով: Բանակը մեծապես կերպարամալոխվեց՝ խորհրդային դասական բանակային ընկալում ունեցողների համար անգամ անճանաչելի աստիճանի: ՀՀ ՊՆ-ն ստեղծման առաջին իսկ օրվանից սերտ համագործակցություն էր հաստատել զարգացած պետությունների զինված ուժերի հետ՝ ՀՀ անվտանգությունն ապահովող միջա-

վայրն ամրապնդելու և ընդլայնելու նպատակով: Ինտեգրվում էր ռազմաքաղաքական հեղինակավոր դաշինքներին ու ակտիվորեն մասնակցում դրանց ծրագրերին: Միջազգային լայնաֆորմատ համագործակցության տրամաբանական շարունակությունը դարձան Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները: Դրանց իրականացման գործընթացը սկսվեց դեռ 2005-2006 թթ.: ՀՀ ՊՆ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ և զեներալ-մայոր, քաղաքական գիտությունների դոկտոր Հայկ Քոթանջյանի գիտական ղեկավարությամբ Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ մշակվեցին ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը և վերջինիս հիման վրա ՀՀ ռազմական դոկտրինը²⁸⁴, որոնց ընդունումը հնարավորություն ընձեռեց սահմանել պաշտպանական բարեփոխումների նպատակները, զերակայությունները և, հիմնական ուղղություններն ու խնդիրները և մշակել պաշտպանական բարեփոխումների՝ մինչև 2015 թ. ընդգրկող ծրագիրը: Այն, վերջին երեք տարում իրականացված պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացի հետ, հիմք դարձավ ՁՈւ-ի զարգացման հնգամյա ծրագրի մշակմանը, որի կատարումով կապահովվի պաշտպանության ոլորտի երկարաժամկետ ու կայուն զարգացումը: Ներկայումս ընթանում է վերանայման գործընթացը: Բանակի կառուցվածքը ենթարկվեց լուրջ փոփոխությունների. ավելի հստակ տարանջատվեցին ՀՀ ՊՆ և ԳԾ գործառնությունները, դրանց համապատասխան կրճատվեցին որոշ հաստիքներ և ստեղծվեցին նորերը: Ձորքերի ղեկավարման հարցում հստակեցվեց ԳԾ դերը: Հ. Քոթանջյանի կողմից ղեկավարվող Դ. Կոմայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (ԱՌՀԻ) իր տեսակի մեջ բացառիկ կառույց է, որը լինելով ՀՀ ՊՆ-ն կազմում՝ իրականացնում է ազգային և ոչ միայն ազգային ռազմավարական

²⁸³ Якубян В., Армяно-азербайджанская война, на чьей стороне Кремль?. <http://old.express.am/karabakh/karabakh3.html>. 8 декабря 2009 года.

²⁸⁴ Managing Strategic Changes Through DEEP Reforms: A View from the Perspective of U.S.-Armenia "Smart Power" Cooperation. Kotanjian, Hayk // Connections (18121098); Fall 2012, Vol. 11 Issue 4, p83.

լայնածավալ ուսումնասիրություններ ռազմաքաղաքական ղեկավարությամբ տալով երկարամակեռտ պլանավորման ուղեցույցներ: Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի կարգադրությամբ և ՊՆ 2008 թ. մայիսի 30-ի կոլեգիայի որոշմամբ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն իր 2008-2012 թթ. մասնագիտացված համարներում կազմակերպել է պաշտպանական համաժողովի բոլոր ոլորտների հեռաժամկետ ու քարեփոխման ուղեմիջոցների համակարգային մշակումը՝ ՊՆ և ԳԸ, ՀՀ նախարարությունների ու զերատեսչությունների, նաև Հայաստանի ազգային ակադեմիայի ու գիտական այլ կազմակերպությունների առաջատար մասնագետների ներգրավմամբ: Բանակաշինության արդի փուլի, ՀՀ ԶՈՒ քարեփոխումների ուղեմիջոցների մասնագիտական համալիրը ՊՆ ԱՌՀԻ-ի կողմից 2013 թ. ի մի է բերվել «Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի քարեփոխման ուղեմիջոցները» փորձագիտական երկհատորյակում²⁸⁵:

Հայաստանի Հանրապետության բանակաշինության արդի խնդիրների համակարգային իմաստավորմանն ու լուծմանն է նպատակատուղված 2012 թ. ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ում գործող «Քաղաքական գիտություններ և միջազգային հարաբերություններ» գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի հաստիք նիստում ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի թեկնածուականատենախոսության պաշտպանությունը²⁸⁶:

²⁸⁵ Օհանյան Ս., «Մտքի խոսք». «Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի քարեփոխման ուղեմիջոցները». Մաս 1, էջ 3, 4:

²⁸⁶ «Սեյրան Օհանյանը՝ քաղաքական գիտությունների թեկնածու». Ներկայացում ենք Քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), Պաշտպանական ազգային համալսարանի իրավիրված առաջատար պրոֆեսոր (ԱՄՆ), Քաղաքական գիտությունների գծով ԱՌՀԻ-ում գործող «Քաղաքական գիտություններ և միջազգային հարաբերություններ» գիտական աստիճաններ շնորհող ԲՈՒՀ-ի մասնագիտական խորհրդի նախագահ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ, գեներալ-մայոր Հայկ Քոթանջյանի հարողագրությունը. ՀՀ ՊՆ Ազ-

Հայաստանում բանակաշինության գործընթացի անընդհատ արդիականացմանն է ծառայում ՌԴ-ի, ԱՄՆ-ի ուղեղային աշխարհառչակ կենտրոնների գործակցությամբ (Հարվարդի համալսարան, ԱՄՆ պաշտպանական ազգային համալսարան, ՌԴ նախագահին կից պետական ծառայության ռուսաստանյան ակադեմիայի «Ազգային անվտանգության ամբիոն») ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կողմից մշակված պաշտպանական-անվտանգային հասկացությունների և տերմինների հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարանի մշակումը, ինչը ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի գնահատմամբ ծառայելու է Հայաստանյան բանակաշինության համապատասխանությանը՝ արևմտյան և ռուսաստանյան պաշտպանական-անվտանգային համակարգերին²⁸⁷:

ՀՀ պաշտպանական քարեփոխումների համատեքստում՝ 2009 թ. կազմավորվեց ՀՀ ԶՈՒ ԳԸ ռազմավարական պլանավորման

պային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում գործող Քաղաքական գիտություններ և միջազգային հարաբերություններ գիտական աստիճաններ շնորհող խորհրդի՝ բանակաշինության արդի խնդիրներին միջավայր հաստիք նիստում տեղի է ունեցել պարոն Սեյրան Օհանյանի թեկնածուականատենախոսության պաշտպանությունը, որի արդյունքներով հայցորդին շնորհվել է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Report.am. 3:45 21/12/2012, <http://report.am/news/society/seyran-ohanyan-qaxgityunperi-teknacu.html>

²⁸⁷ Սարգսյան Ս., «Հայաստանի Հանրապետության եռալեզու պաշտպանական-անվտանգային բառարանը՝ որպես ազգային անվտանգության համակարգի զարգացման և միջազգային անվտանգության ճարտարապետության ինտեգրման գործիքաբան», «Պաշտպանական անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն բառարան». Կազմողներ՝ Չիլինգարյան Գ., Սարգսյան Ա., Խմբագրական խորհրդի նախագահ Քոթանջյան Հ., ՀՀ ՊՆ ԱՌՀԻ, եր., 2012, էջ. VII, 800 էջ. Նույն տեղում. Օհանյան Ս. «Պաշտպանական-անվտանգային տերմինների եռալեզու բացատրական բառարանի դերը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանական քարեփոխումների յուլյակ», էջ X:

վարչությունը: Հենց այդ վարչության ուժերով է իրականացվում ՁՌ-ի կայուն զարգացման և պաշտպանության ռազմավարական վերանայման ծրագիրը: Վերլուծությունների արդյունքում որոշվում են հավանական պատերազմի ռազմավարական բովանդակությունը, ռազմագործողությունների և դրա վարման օպտիմալ միջոցները և այլն: Մշակվեցին ՀՀ պաշտպանական բարեփոխումների 2010-2015 թթ., ՀՀ սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրերը, ՀՀ ՁՌ-ի զարգացման պլանը: Իրականացվում են կարևոր մի շարք այլ աշխատանքներ²⁸⁸: Ներկայումս ՊՆ Ս. Օհանյանի ղեկավարությամբ վերանայվում է ՀՀ պաշտպանական բարեփոխումների հնգամյա հաջորդ ծրագիրը, որը կհաստատվի մինչև 2016 թ. և կներառի 2016-2020 թթ.: Այն ևս բխում է ՀՀ ռազմական դոկտրինից և ազգային անվտանգության հայեցակարգից:

Կարգերի հարցում արժանազրկեցին զգալի արդյունքներ, գումարտակի և դիվիզիոնի իրամանատարներից բարձր բոլոր պաշտոններում ներկայումս նշանակվում են միայն ակադեմիական կրթությամբ սպաներ, այսինքն՝ ռազմական մագիստրոսների աստիճանով, իսկ ավելի ցածր պաշտոնների նշանակում են հիմնականում լրացուցիչ կրթություն ստացած սպաների, որոնք այդ պաշտոններում նշանակվելու համար անցել են հատուկ դասընթացներ: Հաստատվեցին հիմնարար մի շարք փաստաթղթեր՝ զինված ուժերի տեխնիկական հագեցվածությունը, սպառազինության և ռազմական տեխնիկայի տեսակաձևի պահպանելու ու զարգացնելու նպատակով: Դրանց հիման վրա իրականացվեց բանակը նորագույն ռազմական տեխնիկայով համալրելու գործընթացը: Ամեն մի զորամիավորման համար ստեղծվում են համապատասխան պաշարներ ու պահեստներ, նու-

բազայն ու ժամանակակից հնարավորություններով զորավարժարաններ: Ամեն մի զորամիավորում սպահովման և մարտական պատրաստության առումով դառնում է առավելագույն ինքնուրույն և ինքնաբավ:

Բանակաշինության այս փուլերում, երբ գործն անցավ նաև առօրյա ծառայության, ի հայտ եկան մի շարք թերություններ, որոնք կապված էին ինչպես կառուցվածքակազմակերպչական նրբությունների, այնպես էլ երկրի սոցիալ-տնտեսական և այլ իրավիճակների ու պատճառների հետ: Մասնավորապես՝ բանակի որոշ ստորաբաժանումներում հայտնվեցին այնպիսի կադրեր, որոնք մարտական գործողությունների օրհասական պահին իրենց դերը կատարել էին, սակայն բանակաշինության այս փուլում անելիք չունեին, քանի որ չէին տիրապետում համապատասխան գիտելիքների, փորձի և հմտության: Նրանցից միանգամից ձեռքագատվել հնարավոր չէր, քանի որ համապատասխան բանակի կադրեր պարզապես չկային:

Բանակաշինության այս փուլում ի հայտ եկան նաև այլ թերություններ՝ մատակարարման հետ կապված: Բանակի համար անիրաժեշտ նյութական միջոցները հիմնականում ձեռք էին բերվում ուղղակի զեմումների միջոցով, ինչը կոռուպցիոն մեծ ռիսկեր էր պարունակում: Դրա առաջն առնելու համար որոշվեց իրաժարվել մատակարարումների այլ մոտեցումից՝ անցնելով տեներային գնումների տարրերակին:

Ներկայումս բանակի կարևորագույն խնդիրներից է նաև երկուստարդ սերնդի՝ նորակոչիկ զինվորի գաղափարական դաստիարակության խնդիրը: Բանակի ղեկավարությունը դրա համար փորձում է շեշտը դնել զինվորների գաղափարական դաստիարակության վրա: Այդ գործում բանակը միշտ պատրաստ է եղել ցանկացած ա-

²⁸⁸ Այս փուլի բարեփոխումների մասին ընդհանուր տես՝ Օհանյան Ս., Հայաստանի Հանրապետության ՁՌ-ի անցած ուղին, ներկան և ապագան, Հայկական բանակ, 2012, թիվ 1-2, էջ 15-25; Օհանյան Ս., ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը, որպես պաշտպանական բարեփոխումների առաջնային խնդիր, Հայկական բանակ, 2011, թիվ 3, էջ 9-17:

ջակցության հասարակական բոլոր շերտերի կողմից, այդ թվում՝ նաև մամուլի²⁸⁹:

Այսպիսով՝ Հայաստանի Երրորդ հանրապետության հայոց ազգային բանակն անցել է զարգացման երեք հիմնական փուլ. առաջինը՝ 1988 թ. փետրվարի շարժումից մինչև 1992 թ. մայիսը, երբ մարտական գործողություններն այլ բնույթ ստացան, երկրորդը՝ 1992 թ. հունիսից մինչև հրադադարի հաստատումը, երրորդը՝ 1994 թ. մայիսից մինչ օրս²⁹⁰:

Իհարկե, սրանք ընդհանուր փուլերն են, ավելի մանրամասն կենրկայացնենք վերջաբանում:

²⁸⁹ Տես Հարությունյան Հ., Խոսքը կարող է կյանք արժեճալ, կամ զենքի մեջ դրված փամփուշը նախատեսված է միայն թշնամու համար, ԱԶԳ, #96, 11-06-2013, էջ 2-3:

²⁹⁰ Սիմայան Է. Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, եր., 2013, էջ 118:

2. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀԱՍՏԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

2.1. Դաշտային հրամանատարների դերը սպայական կադրերի պատրաստման գործում

Ազատամարտի հրամանատարներից շատերը ոչ միայն աբ-հետավարժ զինվորականներ չէին, այլև բարձրագույն կրթություն չունեին: Մարտերը հիմնականում կրում էին պարտիզանական, տեղային բնույթ, մասշտաբային չէին, այդ պատճառով նման կրթության խնդիր չկար, նրանց շարքերում եղած հատուկներտ մասնագետներն էլ բավարար էին: Պատերազմի այդ փուլում չափազանց մեծ դեր կատարեցին Արկադի Կարապետյանը, Վալերի Բալայանը, Վիտալի Բալասանյանը, Լեոնիդ Ազգալոյանը, Մոնթե Մելքոնյանը, Մամվել Բաբայանը, Մանվել Գրիգորյանը, Արթուր Աղաբեկյանը, Նելսոն Մողոմոնյանց և շատ ու շատ այլ նվիրյալներ, որոնք, չունենալով ռազմական կրթություն, մեծ գործ կատարեցին իրենց անձնուրած ծառայությամբ:

1992 թ., երբ պատերազմը սաստկացավ, այդ նույն հրամանատարներն արդեն արհեստավարժ էին դարձել և զինվորական կրթության պակասի խնդիրը մորից շեշտակի չէր զգացվում: Այդ ժամանակ, սակայն, արդեն դրա պակասը լրացվում էր այլ գործոններով.

• Բանն այն է, որ նրանցից շատերը բարձրագույն քաղաքագիական կրթությամբ անձինք էին, որոնք եթե հրամանատար էլ չէին, ապա տեղակալ էին, և, ըստ էության, արհեստավարժ զինվորականներ դարձան ժամանակի ընթացքում: Այսօր էլ նրանցից շատերը բանակում են և փայլուն հրամանատարներ են, օրինակ, զեներալն Լ. Մնացականյանը, Վ. Ավետիսյանը և այլք:

• ԽՍՀՄ բանակից եկան մեծ թվով բարձրակարգ արհեստավարժ կադրեր, որոնք արագ լրացրին եղած բացը, և, ըստ էության, գլխավոր հրամանատարության մեջ երբեք մասնագետների պակաս չի եղել: ՀՀ ԳՇ պետերը, վարչությունների պետերը և զորամիավորումների հրամանատարները կամ բարձրակարգ զինվորական մասնագետներ էին, կամ ունեին մասնագետներ իրենց որպես ենթակամեր ու օգնականներ:

• Վերջին տեղում չէր մասնա կան հանգամանքը, որ հայ ռազմիկը մարտական պայմաններում շատ արագ էր արհեստավարժ դառնում, եթե անգամ այդ մասնագետը չէր: Օրինակ՝ ՀՕՊ, ինժեներական և այլ զորքերում մասն մասնագետները մինչ օրս մեծ քանակ են կազմում՝ մինչև 60 տոկոս:

Շատ ժամանակ խորհրդային բանակից եկած սպաները, որոնք մարտական գործողությունների փորձ չունեին, սովորում էին շատ քան հենց ազատամարտիկներից, որոնք արդեն կոփվել էին մարտի դաշտում: Նրանք միտյանց փոխլրացնում էին: Այսպիսին էր դաշտային հրամանատարների ներգրավվածությունը մարտական գործողություններին բանակաշինության մախնական փուլում: Սպայակազմի պակասը լրացնելու նպատակով 1992-ի հոկտեմբերի 26-ին ՀՀ կառավարությունը որոշեց նույններ-դեկտեմբեր ամիսներին անցկացնել պահեստագործի սպաների գորակեր²⁹¹: Երկու տարվա ծառայությանը սպաները պատվով կատարեցին իրենց խնդիրը: Նրանք մեծ դեր ունեցան ինչպես զորամասերի ձևավորման, այնպես էլ 1994-ի մայիսյան հաղթական զինադաշարը նվաճելու գործում: Սպաներից շատերը ծառայության ժամկետի ավարտից հետո մնացին բանակում և այժմ էլ զբաղեցնում են բարձր ու պատասխանատու պաշտոններ:

1994 թ. սեպտեմբերին հիմնվեցին սպայական էտանյա դասընթացները: Ունկնդիրները, որոնք մեծ մասն արդեն պատերազմա-

²⁹¹ Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 113, ցուցակ 167, գործ 517, քերթ 1-2:

կան փորձ ուներ, ստանում էին մոտոհրաձգային դասակի ու վաշտի հրամանատարների, հրետանավորների, տանկիստների և ՀՕՊ մասնագիտության հասնապատասխան որակավորում: Այդ դասընթացները մեծ դեր խաղացին սպայակազմի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների մակարդակի բարձրացման գործում: Դասընթացներում դասավանդում էին ինչպես արհեստավարժ զինվորականներ, այնպես էլ փորձառու ազատամարտիկներ, որոնք իրենց գիտելիքներն ու փորձը փոխանցում էին նոր սերնդին: Այսինքն՝ այս բոլոր քայլերով դաշտային հրամանատարների մասնագիտական կրթությունը հասցվեց անհրաժեշտ նվազագույնի, որպեսզի ընդհանուր կառավարման գործում դա խոչընդոտ չհանդիսանա և չկրկնվի առաջին հանրապետության օրինակը: Ներկայումս բանակում ոչ մասնագիտական կրթություն ունեցող հրամանատարների տեսակարար կշիռը կազմում է մոտ 10 տոկոս, բայց նրանք էլ փորձառու կադրեր են, մասնակից բազում կարճ դասընթացների:

2.2. Խորհրդային զինվորականների ներգրավումը բանակաշինության գործում

1992 թ., երբ ստեղծվեց հայոց բանակը, ազատամարտում արդեն լայնորեն ընդգրկված էին խորհրդային բանակի կադրերը: Դիշտ է, ԽՍՀՄ-ի օրոք հայ ժողովրդի զավակների համոզեալ շատ դեպքերում վարվում էր այնպիսի քաղաքականություն²⁹², որ քիչ թույլ տային նրանց մասնակցել զինվորական գործին, քիչ ընդունվեին ռազ-

²⁹² Օրինակ՝ հայերից նվազագույնի էր հասցված օդաչուների, նավաստիների և բարձրակարգ այլ մասնագետների պատրաստումը: Տարեկան քնդուկվում էին ոչ ավելի քան մեկ տասնյակ՝ բոլորը միասին: Կրեմլյան զինվորական ուսումնարանի համար Խորհրդային Հայաստանին կամ տեղ չէին հատկացնում, կամ ընդամենը մեկ հոգու: Հայերին, չնայած իրենց հսկայական ներդրմանը, այդպես էլ թույլ չտվեց տիեզերագնաց դառնալ: Տվյալները վերցված են հեղինակի երկարամյա ուսումնասիրություններից, սպաների և ոլորտի մասնագետների հետ իրականացված հարցազրույցներից և համադրություններից:

մական բուհեր և այլն, սակայն դրանով հանդերձ՝ խորհրդային բանակում բարձրակարգ հայ մասնագետները բավական մեծ թիվ էին կազմում: Գա հիմնականում պայմանավորված էր այն իրողությամբ, որ ԽՍՀՄ-ի տարբեր հանրապետություններում ծնված և այնտեղ ապրող հայերը ևս զինվորականներ էին դառնում: Հայաստան եկած խորհրդային բարձրակարգ շատ զինվորականներ ծնվել ու ապրել էին հայրենիքից հեռու, ոմանք էլ, թեպետ, ծնվել էին Հայաստանում, սակայն երկար տարիներ զինվորական ծառայության մեջ էին եղել դրանում: Նրանք էին՝ գեներալ-գեդապետներ Գուրգեն Դալիբաբյանը, Միրբայել Հարությունյանը, Յուրի Խաչատուրովը, Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը, գեներալ-լեյտենանտներ Նորատ Տեր-Գրիգորյանցը, Հրաչ Անդրեսյանը, Անատոլի Զինկիչը, Մկրտիչ Աբրահամյանը, Էնրիկո Ալբրիանովը, Միքայել Գրիգորյանը, Մուրազ Սարգսյանը, Ստեփան Միրզոյանը, Վալերի Գրիգորյանը, Հայկազ Բաղմանյանը, Ստեփան Գալստյանը, Արցախի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը, գեներալ-մայորներ Արտյուշ Հարությունյանը, Ֆելիքս Գգոյանը, Լևոն Կարապետյանը և այլք: Տարբեր հաշվարկներով՝ Հայաստան վերադարձած զինվորականների քանակն անցնում է մոտ 4000-ը²⁹³: Մեծ թվով փորձառու սպաներ՝ հիմնականում զոհապետներ ու փոխզոհապետներ, ՀՀ-ում հիմնադրված ռազմական բուհերում անցան դասախոսական աշխատանքի և օգնեցին դաշտային հրամանատարների ինտեգրմանը:

²⁹³ ՀՀ ՊՆ կազմակերպություն, պահոցներ, որոնք ընդգրկում են 1992 -1998 թթ. և իր մեջ ներառում է պատերազմին մասնակցած սպաների և ներասպանների գործեր: Շչգրիտ թիվը ներկայացնել հնարավոր չէ, քանի որ ժամանակին այդ հաշվառումը չի իրականացվել շատերը եկել են մինչև քանակի ստեղծումը, շատերը պահեստազորից են անցել քանակ, կամ նոր էին զորացրվել խորհրդային քանակից, ոմանք էլ Հայաստանում տեղակայված ռուսական զորամասերից են ստանում անցել, ոմանք մնացել և մասնակցել են մարտական որոշ գործողությունների, իսկ հետո՝ կրկին հեռացել երկրից և չեն հաշվառվել:

2.3. Սպայական կազմերի պատրաստումը բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատություններում

1994 թ. զորակոչին իրականացվեց Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ մշակված բժշկական չափանիշներով:

1994 թ. մարտի 27-ին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց տարվա երկրորդ եռամսյակում պահեստազորի սպաների ու զինավաթուների վարժական հավաքներ կազմակերպելու մասին²⁹⁴: Ինչպես արդեն նշեցինք, Արցախում ևս եռամսյա դասընթացներ կազմակերպվեցին: 1994 թ. ապրիլի 20-ին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը ստորագրեց գարնանային զորակոչի մասին հրամանագիրը: Ապրիլի 9-ին վարչապետ Հ. Բազրաթյանն ու պետմախարար Վ. Սարգսյանը սպայական վկայականներ հանձնեցին գնդապետ Սիբայել Տիտանյանի ղեկավարած դասընթացների առաջին շրջանավարտներին:

Սեպտեմբերի 1-ին առաջին կուրսանդներին ընդունած բարձրագույն զինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարանում և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կազմում սկսվեցին ռազմաբժշկական ֆակուլտետների հիմնադրման աշխատանքները²⁹⁵: Ներկայումս հայկական բանակի համար սպաների կրթման հիմնական կառույցը Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտն է:

Հայաստանի Հանրապետությունում սպայական կազմեր պատրաստելու հրամայականով 1994 թ. հունիսի 24-ին ՀՀ կառավարության թիվ 279 որոշմամբ²⁹⁶, սպա պաշտպանության մախարար Ս. Սարգսյանի հունիսի 25-ի հրամանով հիմնադրվեց «բարձրագույն զինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարան»՝

²⁹⁴ Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 113, ցուցակ 171, գործ 124, թերթ 1-2:

²⁹⁵ Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 113, ցուցակ 171, գործ 428, թերթ 1-2:

²⁹⁶ Նույն տեղում, գործ 264, թերթ 1-2:

ներկայիս Վազգեն Մարգարյանի անվան ռազմական ինստիտուտը: Ռազմական ուսումնարան հիմնադրելը բավական համարձակ քայլ էր նորաստեղծ բանակի համար, քանզի անզան տասնամյակների պատմություն ունեցող բանակների համար նման կառույց ստեղծելիս լուրջ դժվարություններ են ծագում: Ուսումնարանի առաջին պետ նշանակվեց գեներալ-մայոր Սերգեյ Մարտիրոսյանը: ՀՀ կառավարության և պաշտպանության նախարարության համապատասխան վարչությունների գործադրած քանքերի շնորհիվ՝ սեպտեմբերի 1-ին ուսումնարանն իր դռները բացեց առաջին կուրսանտների առաջ: Նոյեմբերի 1-ին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով էրևանի պետական համալսարանի զինվորական ամբիոնը հանձնվեց բարձրագույն զինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարանին (ԲԶԲՀՈՒ)-ին: Հաստատությունն արագորեն համալրվեց պրոֆեսորադասախոսական որակյալ կազմով, ստեղծվեցին կենսականորեն անհրաժեշտ բոլոր օղակները, դրվեցին բարձրորակ սպայական կադրերի պատրաստման համար ուսումնանյութատեխնիկական անհրաժեշտ բազայի հիմքերը: Սկսվեցին զորանոցների շինարարությունը, ուսումնական ծրագրերի, հրամանատարական կազմի համալրումը, կուրսանտների քնդուներկությունը:

Ռազմական ինստիտուտի բացումը ճշանակալիցե պաշտպանության նախարարի կողմից ռազմական ինստիտուտի պետին մարտական դրոշի հանձնումով՝ որպես զինվորական պատվի, փառքի, արվեստի խորհրդանիշ, որպես հիշեցում յուրաքանչյուր կուրսանտի՝ իր սրբազան պարտքի՝ հայրենիքին անձնվիրաբար ծառայելու մասին:

ՀՀ ՊՆ համապատասխան վարչությունների աջակցությամբ ուսումնարանի նյութատեխնիկական բազան հետզհետե համալրվեց առաջին անհրաժեշտության գրականությամբ, սպառազինությամբ ու մարտական տեխնիկայով, և արդեն 1995 թ. սկզբին ուսումնական գործընթացը մտավ իր բնականոն հունի մեջ: 1996 թ. սեպտեմբերի 21-ին ինստիտուտի տարածքում բացվեցին 3-րդ, 4-րդ գորանոցները:

Բարձրագույն զինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարանն իր գոյության սկզբնական շրջանում զինվորական մասնագետներ էր պատրաստում 8 մասնագիտությունների գծով: Մա պարտադրված քայլ էր, որովհետև նոր-նոր կազմավորվող հայկական բանակը, որի կորիզն առավելապես երկրապահ կամավորականներից էր կազմված, կարիք ուներ արհեստավարժ, բազմափորձ սպաների:

Միաժամանակ ՀՀ զինված ուժերը շուտափույթ սպաներով համարելու նպատակով՝ ուսումնարանի բազայի վրա անցկացվում էին մեկամյա դասընթացներ, որտեղ ընդունվում էին Հայաստանի բուհերն ավարտած երիտասարդներ: Եջտն առավելապես դնելով գործնական, ռազմադաշտային պարապմունքների վրա՝ վերջիններս պատրաստում էին որպես դասակի հրամանատարներ: Այդ նախաձեռնության շնորհիվ ՀՀ ԶՈՒ-ն մինչև 1998 թ. համալրվեց 200-ից ավելի սպաներով: Այդ գործընթացը վերսկսվեց մոտ 10 տարի անց:

ՀՀ կառավարության՝ 1998 թ. հունվարի 16-ի թիվ 24 որոշմամբ ՀՀ ՊՆ բարձրագույն զինվորական ուսումնարանը վերակազմավորվեց ռազմական ինստիտուտի (ՌԻ)՝ շարունակելով ուսուցումը 8 մասնագիտությունների գծով²⁹⁷:

1998 թ. ռազմական ինստիտուտը տվեց իր առաջին շրջանավարտները՝ շուրջ 157 սպա, որոնք ընդունվել էին 1994 թ.: Այդ շրջանավարտներից ներկայումս բանակում կան գնդի մի քանի հրամանատարներ ու զորամիավորման հրամանատարի տեղակալներ, վարչությունների բաժնի պետեր:

Սպարապետ Վ. Մարգարյանի ողբերգական վախճանից հետո՝ ՀՀ նախագահի հրամանագրով, ապա պաշտպանության նախարարի հրամանով ռազմական ինստիտուտն անվանվեց նրա անունով:

ՀՀ պաշտպանության նախարարի 2001 թ. մայիսի 29-ի հրամանով ինստիտուտն անցավ երկու՝ մոտոհրաձգային և հրետանա-

²⁹⁷ Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 113, ցուցակ 188, գործ 24, քերթ 1: 209

յին մասնագիտություններով սպայական կադրերի պատրաստմանը, ինչը պայմանավորված էր ինստիտուտի ուսումնառության տեխնիկական բազայի հնարավորություններով և դասախոսական կազմի մասնագիտական պատրաստվածությունից և աստիճանով:

Համագործակցության շրջանակներում 2007-2008 թթ. ուսումնական տարվանից 4-րդ կուրսում պատրաստվում են նաև տանկիստներ, իսկ 2008-2009 թթ. ուսումնական տարվանից՝ հետախույզներ և ռազմական ինժեներներ-սակրավորներ:

2001 թ. մայրտին շահագործման հանձնվեց «Չառ» ուսումնական կենտրոնն ու «Բյալսիովիտի» հրաձգարանը, որոնք մտնում էին ինստիտուտի կառուցվածքի մեջ:

2002 թ. մայիսի 18-ին ՌԻ-ի բակում բացվեց ՀՀ Ազգային հերոս Վ. Սարգսյանի կիսանդրին, իսկ նույն թվականի դեկտեմբերի 1-ին՝ ռազմապատմական թանգարանը:

Հատկապես 2003 թ. սկսած՝ ինտեգրվելով պետական բուհերի համակարգում՝ ռազմական ինստիտուտը դարձավ հանրապետության պետական բուհերի լիիրավ անդամ և ստացավ փոխադարձ համագործակցություն ու անշահախնդիր օգնություն ակնկալելու լայն հնարավորություններ²⁹⁸: Միջազգային համագործակցությունը, հատկապես 2003-ին և 2008-ի աշնանը ՆԱՏՕ-ի կողմից «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Համատեղ բավազույն քանոց» և «Համատեղ աղեղ և համատեղ նիզակակիր» գործարժույթումներին հայկական ստորաբաժանումների մասնակցությունը, լավ հնարավորություն ստեղծեց յուրացնելու միջազգային բանակաշինության առաջավոր փորձը:

²⁹⁸ Կարապետյան Մ. Ն., Մելքոնյան Ա. Ս., ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում իրականացվող բարեփոխումների ընթացքը ռազմակրթական զարգացումների համատեքստում: Հայկական բանակ, թիվ 3 (73), 2012, էջ 34-40:

Մասնավորապես հետաքրքիր է Խորալեյի փորձը, որը մեզ համար օրինակելի է²⁹⁹:

Փորձի փոխանակման լավագույն աղբյուր են հանդիսանում նաև տարբեր ժամանակներում ՌԻ այցելած արտասահմանյան պատվիրակությունները: Այսպես՝ տարիների ընթացքում ինստիտուտն հյուրընկալում է Հունաստանի, Չինաստանի, Իրանի, Լիտվայի, Բելառուսի, Գերմանիայի, Ուկրաինայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ռումինիայի և ՆԱՏՕ-ի ռազմական պատվիրակություններին, որոնց հետ համագործակցությունն օգնել է կատարելագործելու ռազմական կրթական համակարգը:

2004 թ. հունվարի 27-ին ՌԻ-ում գործում է նաև սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոն, որտեղ իրենց մասնագիտական գիտելիքներն են կատարելագործում սպաները: Ինստիտուտում մշտապես աշխատանքներ են տարվում ոչ միայն ուսումնատեխնիկական բազայի կատարելագործման, արդիականացման, այլև պրոֆեսորադասախոսական անձնակազմն արհեստավարժ, բանիմաց կադրերով համարելու ուղղությամբ³⁰⁰:

Այժմ ինստիտուտում գործում է երկու ֆակուլտետ՝ համագործակցության 4 ամբիոնով և հրետանային՝ 3 ամբիոնով, ինչպես նաև 3 առանձին ամբիոն: Ուսումնառյալստիարակական գործընթացում ընդգրկված են տասնյակից ավելի գիտությունների թեկնածուներ, դոցենտներ, ռազմական գործի գիտակ բարձրակարգ դասախոսներ: Յուրաքանչյուր ուսումնական դասակ ունի իր լսարանը, իսկ մասնագիտացված ամբիոններում գործում են նաև հատուկ լսարան-լսրո-

²⁹⁹ Քորալեյան Հ. Ս., Խորալեյի պաշտպանության բանակում զինվորի մարտական ոգու ձևավորման փորձի մասին: ՀՀ պաշտպանական բարեփոխումների լույսի ներքո, Հայկական բանակ, 2009, թիվ 1-2 (59-60), էջ 37-86:
³⁰⁰ Կարապետյան Մ. Ն., Մելքոնյան Ա. Ս., ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում իրականացվող բարեփոխումների ընթացքը ռազմակրթական զարգացումների համատեքստում: Հայկական բանակ, 3 (73), 2012, էջ 34-40:

բատորիաներ: Ինստիտուտի կուրսանտներն ուսանում են անգլերեն, ֆրանսերեն, պարսկերեն, հունարեն և այլ լեզուներ:

Ռազմական կրթություն և լեյտենանտի սկզբնական սպայական կոչում ստանալուց զատ՝ ՌԻ շրջանավարտները նաև միջազգային բարձրագույն եռաստիճան համակարգի առաջին աստիճանի՝ բակալավրի որակավորում են ստանում՝ հնարավորություն ունենալով պահեստազոր անցնելուց հետո աշխատել ինժեների մասնագիտությամբ: Ներկայումս ընթանում են լայնամասշտաբ աշխատանքներ ՌԻ-ի հիման վրա ռազմական համագորային ակադեմիա ստեղծելու ուղղությամբ: 2013 թ. արդեն քաղվեցին այդ աշխատանքի նախնական փուլ հանդիսացող հրամանատարաշտաբային դասընթացները, որտեղ ընդունվեցին գումարտակի և զննի հրամանատարական օդակի սպաներ: 2014-2015 թթ. գործելու է արդեն ռազմական ակադեմիա, որտեղ ընդունվելու են ավելի շատ ունկնդիրներ³⁰¹:

Իր ստեղծման օրվանից ինստիտուտը պատրաստել է ավելի քան 4000 սպա: ՌԻ-ի տարբեր տարիների շրջանավարտներից 6-ը արդեն դարձել են զննի հրամանատարներ, ավելի քան 30-ը՝ զննի հրամանատարի տեղակալներ, շուրջ 100-ը՝ գումարտակների և դիվիզիոնների հրամանատարներ, 10-ը՝ զորատեսակների պետեր, 10-ը՝ բանակային կորպուսների և վարչությունների քաժամմուրների և ծառայությունների պետեր, 12-ը՝ ռազմական ինստիտուտի ամբիոնների պետեր և ավագ դասախոսներ:

Խանութային անվան ռազմավիագիտոն ինստիտուտ

Ելնելով ժամանակի պահանջներից՝ 1992 թ. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումով հանրապետական աներակուսմբը և «Արզնի» օդանավակայանը փոխանցվեցին ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայությանը: Հայաստանի զինված ուժերի համար անհրաժեշտ ավիացիոն մասնագետների պատրաստման նպատակով, պաշտպանության նախարարի հրա-

մանով՝ 1993 թ. ապրիլի 1-ին վերակազմավորվեց որպես ՊՆ ռազմավիագիտոն կենտրոնի և դարձավ ՀՀ ռազմամասնագիտական առաջին հաստատությունը:

ՀՀ ՊՆ միջնորդությամբ 1994 թ. սեպտեմբերի 20-ին կառավարության թիվ 447 որոշմամբ ռազմավիագիտոն կենտրոնին տրվեց միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատության կարգավիճակ՝ Ռազմավիագիտոն թռիչքատեխնիկական ուսումնարան անվանումով (ուսման տևողությունը 3 տարի)³⁰²:

Հաշվի առնելով ուսումնարանի պատրաստության աստիճանը և ելնելով ժամանակի պահանջներից՝ ՀՀ պաշտպանության նախարարի 2001 թ. մայիսի 25-ի հրամանով ուսումնարանը վերակազմավորվեց ՊՆ բարձրագույն ուսումնական հաստատության՝ ՊՆ ռազմավիագիտոն ինստիտուտի, ուսուցումը ստացինոթ համակարգում՝ 4 տարի³⁰³: Նախկինում ուսումնարանն ավարտած շրջանավարտներին բարձրագույն ինժեներական կրթություն ստանալու հնարավորություն ընձեռելու նպատակով՝ կազմակերպվեց եռամսյա հեռակա ուսուցում:

2002 թ. ինստիտուտը սկսեց կազմակերպել նաև ՋՌԻ սպա-կապավորների, իսկ 2005 թ.՝ հակաօդային պաշտպանության մասնագիտություններով սպաների պատրաստումը: Սյանք այն մասնագիտություններն էին, որոնք ժամանակին գործում էին Վ. Սարգսյանի անվան ՌԻ-ում³⁰⁴:

Ի նշանավորումն ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 60-ամյակի՝ ՀՀ պաշտպանության նախարարի 2005 թ. ապրիլի 1-ի հրամանով ինստիտուտը սկսեց կրել մարշալ Արմենակ Խամփերյանցի

³⁰² Բալայան Գ. Կ., Ալեքսանյան Գ. Մ., ՀՀ ՊՆ մարշալ Արմենակ Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում ռազմական կրթության գարգացման հարցի շուրջ, Հայկական բանակ, թիվ 3 (73), 2012, էջ 42-46:

³⁰³ ՀՀ ՊՆ հրաման 0167, Եր., Բալայան Գ. Կ., Ալեքսանյան Գ. Մ., էջ 42-46:

³⁰⁴ Բալայան Գ. Կ., Ալեքսանյան Գ. Մ., էջ 42-46:

³⁰¹ ՀՀ ՊՆ Օհանյան Ս., Ելույթ Վ. Սարգսյանի անվան ՌԻ-ում կալացած կոլեգիայի ժամանակ, 2013:

անուրը և նույն հրամանով ռազմական ավիացիոն ինստիտուտին հանձնվեց մարտական դրոշը:

2004 թ. ինստիտուտն անցավ ուսումնական գործընթացի կազմակերպման՝ ֆակուլտետային սկզբունքով: Համրակրթական ատարակների ֆակուլտետը ապահովում է կուրսանտների գիտելիքների ճարտարագիտական բազան և ընդհանուր ռազմական պատրաստությունը: Մյուս երեք՝ ավիացիոն, կապի և հակաօդային պաշտպանության ֆակուլտետները մասնագիտացված են: Ինստիտուտը անցած տարիների ընթացքում պատրաստել է շուրջ 500 օդայու, շտուրման, ինքնաթիռային, ուղղաթիռային և ավիացիոն սպառազինությունների տեխնիկներ ու ճարտարագետներ, հակաօդային պաշտպանության մասնագետներ, համագորային կապավորներ, որոնցից 206-ն արժանացել են շքանշանների ու մեդալների, զերատեսչական պարգևների³⁰⁵: Նրանցից մի քանիսն այսօր զբաղեցնում են զնդի հրամանատարի, տեղակալների, էսկադրիլիայի հրամանատարների պաշտոններ, իսկ մեկը՝ գնդապետ Գագիկ Ալյանյանը, զբաղեցնում է ավիացիայի վարչության շտաբի պետի պաշտոնը³⁰⁶:

Ձինված ուժերի սպայակազմը նաև համալրվում է Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետի դեկանար՝ քուծառայության գնդապետ Մամվել Գալստյանի շրջանավարտներով:

Ձինված ուժերի շարքերը ամեն տարի համալրում են ռազմաճարակային վարժարանների բազմաթիվ շրջանավարտները: Անցած տարիների ընթացքում Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը տվել է շուրջ 1.000 շրջանավարտ, որոնցից շատերն այսօր ծառայում են ՀՀ զինված ուժերում³⁰⁷:

³⁰⁵ ՀՀ ՊՆ կադրերի և ԱՀՏԱ վարչության տրամադրած տվյալների ընդհանուր ամփոփում:

³⁰⁶ ՀՀ ՊՆ կադրերի տրամադրած քաղվածք:

³⁰⁷ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի կողմից ներկայացված գեկույցի տվյալներ:

1998 թ. ՊՆ համակարգում ստեղծվեց ենթասպաների դպրոցը: Այն ներկայումս ինտեգրված է կրտսեր հրամակազմի պատրաստման լայնածավալ նախագծի մեջ և պատրաստում է նման մասնագետներ համագորային մասնագիտությունների գծով: Դպրոցը լրացնում է ուսումնական այն կենտրոններին, որտեղ ևս պատրաստվում են նման մասնագետներ³⁰⁸:

Ձինված ուժերում ներդրվել են պայմանագրային զինվորական ծառայության ու պայմանագրային սերժանտների ինստիտուտները՝ աստիճանաբար արհեստավարժ բանակ ստեղծելու, նաև սահմանափակ շրջաններից բնակչության արտահոսքը կանխելու նպատակով: Այսօր առաջնագծի վտանգավոր բազմաթիվ հատվածների պաշտպանությունը վստահված է պայմանագրային զինժառանգողների:

Ռիսկային էին կադրերի նշանակման գործընթացները, որտեղ կոռուպցիան վտանգավոր էր: 2007-2008 թթ. սկսվեց կիրառվել սպաների նշանակման վիճակահանության մեթոդը, որպեսզի կոռուպցիոն ռիսկերը նվազեցվեն, և ձեռնարկված քայլերը համապատասխան արդյունք տվեցին:

2.4. Կադրերի պատրաստումը և որակավորումը արտերկրում

Արտերկրում սպայական կադրեր պատրաստվում են՝ 1993 թ. սկսած, երբ ՀՀ-ի և մի շարք երկրների միջև ստորագրվեցին համագործակցության համապատասխան պայմանագրեր: Համագորային հիմնական մասնագիտություններով սպաներ պատրաստվում են ՌԴ-ում: 1993 թվականից ՌԴ-ում սովորել է ավելի քան 800³⁰⁹ հայ ուսանող, ներկայումս էլ սովորում է շուրջ 200-ը: ՌԴ-ի համագորային,

³⁰⁸ Ներկայումս բարեփոխումների շրջանակներում կրտսեր հրամակազմում միավորված են սերժանտական և ենթասպայական աստիճանների կրող հրամանատարները: Սա խորհրդային համակարգից անցում է դեպի արևմտյան ռազմական համակարգի, ՀՀ ՊՆ նախարարի հրաման համար 0176, 2011, մայիսի 14, անճանակազմի վերաբերյալ:

³⁰⁹ Գաղտնիության պատճառով ստույգ թիվը չեն նշում:

մասնագիտական և ԳՇ ակադեմիաներում ուսանել է ավելի քան 700-800 սպա՝ հիմնականում գունարտակ, գունդ օղակի, նաև զենե-րալական հաստիքների, այսօր էլ սովորում է ևս մի քանի տասնյակը: Կարճաժամկետ տարատեսակ դասընթացների և մասնագիտական կուրսերի մասնակցել է ավելի քան 1000 սպա՝ հիմնականում զնդի օղակի, դասախոսական և վարչական կազմից:

Ռ-Գ-ից հետո մյուս երկիրը, որտեղ մեծ քանակությամբ հայ սպաներ են սովորում, Հունաստանն է: 1993 թ. Հունաստանի համազորային ակադեմիայում և քժշկական մասնագիտություններով սովորել է շուրջ 100 սպա, ներկայումս էլ սովորում է մի քանի տասնյակը: Սովորել և սովորում են նաև Գերմանիայում՝ մինչ օրս 15 ուսանող և սպա, նաև Իտալիայում՝ 10 ուսանող և սպա:

Արևմտյան շատ երկրներում հայ սպաներն անցել են հատուկ և որակավորման բարձրացման տարատեսակ դասընթացներ: Ռ-Գ-ից հետո նման դասընթացներ ամենամեծ քանակով անցել են ԱՄՆ-ում՝ շուրջ երկու հարյուր սպա, որոնցից, սակայն մի քանիսն են ավարտել արտասահմանցիների համար նախատեսված բարձր աստիճանի «Պատերազմի քոլեջ» դասընթացը, որը հավասար է Ռ-Գ-ԳՇ ակադեմիային: Մի քանի տասնյակ սպաներ նման դասընթացների են մասնակցել Չինաստանում, մոտ 100 սպա էլ նման դասընթացների է մասնակցել Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և այլուր¹⁰⁰:

Ընդհանուր առմամբ, հայոց բանակի համար սպաների պատճառման գործընթացը մի քանի հետաքրքիր առանձնահատկություն ի հայտ բերեց: Դիչտ է, արտերկրում՝ հատկապես առաջավոր երկրներում, մասնագետներ պատրաստելն ունի իր դրական կողմերը, սակայն դրանում կան նաև բազում խնդիրներ ու բացթողումներ: Մասնավորապես, այդ սպաները, քանի որ ուսման են գնում բավական փոքր տարիքում՝ 17-18 տարեկան հասակում, ապա ուսումնա-

¹⁰⁰ ՀՀ ՊՆ կադրերի վարչության թագավորական բաժնի գործավարություն, Արտաքին կապերի գաղտնի բյուրոյանակներ:

ուրյունից հետո այդքան ձևավորված լինելով որպես հասուն մարդ՝ մեծապես կրում են այդ երկրների արժեհամակարգն ու դատադրյունը: Այսպես, Ռ-Գ-ում սովորած մոտ երեք տասնյակ ուղղաթիռային օդաչուներից ներկայումս մեր բանակում ծառայում է շուրջ 10 տուկոսը: Մնացածը կամ հեռացել են բանակից, կամ բանակից կամավոր դուրս եկել՝ անգամ մուծելով որոշակի տուգանքներ¹⁰¹: Արևմուտքում սովորած սպաները ևս ազգային մտածելակերպի խնդիր ունեն, երբեմն ավելի դժվար են համակերպվում հայկական բանակի իրականությանը, սակայն քանի որ գնալու հնարավորությունները մեծ չեն, սպա մնում են և ինտեգրվում: Նկատենք, որ արտերկրում սովորած սպաների մակարդակը մասնագիտական հարցերում բավական բարձր է, մասնավորապես Արևմուտքի ակադեմիաներում վերապատրաստում անցած սպաները, որոնք բազային կրթությունը հայկական ռազմական բուհերում է անցել:

Մրանով հանդերձ՝ կա նաև ՀՀ-ում սովորած սպաների մակարդակի և որակի ապահովման որոշակի խնդիր, որը հիմնականում ամենչվում է չափազանց ցածր կրթական մակարդակի, գիտակցականության, դաստիարակության և պատասխանատվության հետ: Սա ուղղակի կրթական և դաստիարակության (հիմնականում հեռուստադաստիարակման) ոլորտում 15-20-տարիների բացթողումների հետևանքն է, որոնց մասին վաղուց ահազանգում էին որոշ մասնագետներ¹⁰²: Կրթական ծրագրերում ազգային տարրի ներգործության շեշտակի ավելացման կարիք կա: Մեր կողմից առաջարկվել է՝ անգամ արտադասապրոցեսային օրակարգում կարելի է հաստատել ազգային մթնոլորտ՝ ստորաբաժանումների անունները և զինվորա-

¹⁰¹ Ուսումնասիրությունը կատարված է 32822 զորամասի օրինակի վրա, հեղինակի կողմից նույն գործնաստում ծառայելու ընթացքում և օդաչուների հետ ամենակամ հարցումների շնորհիվ:

¹⁰² Այս մասին մանրամասն տես՝ Միլիարյան Վ., Ազդեհիվ հեռուստատեսության հետևանքները, Եր., 2012:

կան կոչումները ազգայնացնելով, դասակները և վաշտերը ազգային գործիչների անուններով կոչելով:

Ուսումնառության առաջին երկու տարում ապագա սպան սովորում է հիմնականում ռազմական առարկաներ՝ արդեն հնացած մարտավարություն, կրակային, շարային, ֆիզիկական, երկրորդ մասնագիտության համար որոշակի ճշգրիտ առարկաներ: Այս փուլում հումանիտար առարկաներին հատկացված է նվազագույն դերակատարություն: Արևմտյան երկրների բանակներում լայնորեն կիրառվում է սպայի քաղաքացիական կրթություն և գիտական կոչումներ ստանալը³¹³: Նրանք կամ բանակ են զորակոչվում քաղաքացիական բուհից, կամ ծառայության ընթացքում ստանում են գիտական կոչումներ: Մեզանում սա կրում է ձևական ու մասնակի բնույթ:

Այդուստահմանում լայնորեն կիրառվում է պայմանագրային հիմունքներով մի քանի տարի ծառայած շարքային անձնակազմից սպայական դպրոցներ (ինստիտուտներ) ուղարկելու փորձը, ինչը, մեր կարծիքով, ընտրություն կատարելու ճիշտ մոտեցում է: Ժամկետային ծառայության ընթացքում սպա դառնալ ցանկացողների զգալի մասը ևս այդ քայլին գնում է այլ մղումներով: Ավելի լավ ընտրություն կլինի ժամկետային ծառայությունից հետո պայմանագրային ծառայության անցած զինծառայողներից կատարած ընտրությունը: Նման կատեգորիան ամենափորձվածն է բանակային կյանքի բոլոր հարցերում:

Նաև օգտակար կլինի բանակում որոշ պաշտոնների նշանակել հիմնականում կանանց: Վերջիններիս պատասխանատվությունն ավելի մեծ է, իսկ օգտակարությունը երբեմն գերազանցում է տղաներին: Վերջերս աղջիկների կողմից զինծառայության, բանակի և հայրենասիրության հարցերում նկատվում է քավական մեծ ակտիվություն: Նրանք կարող են սակրավորներ, կապավորներ ու դիպուկա-

հարներ լինել: Այս ոլորտում ՋՌ-ն արդեն որոշակի քայլեր կատարում է: 2013 թ. առաջին անգամ ՀՀ ռազմական բուհեր ընդունվեցին նաև աղջիկներ:

ՀՀ ՋՌ-ի խաղաղապահ բրիգադը լավ հիմք է արևմտյան ռազմական համակարգն ուսումնասիրելու համար: Բրիգադի զինծառայողները, հատկապես սպաները, ուսումնագործնական մեծ փորձատուրբուն են անցնում արևմտյան երկրներում, ժամանակի հետ որակական մեծ փոփոխություն են կրում և շատ են տարբերվում այլ գորատեսակներում ծառայած սպաներից: Արևմտյան ռազմակրթական համակարգն իր դրական ազդեցությունն ու հետքն է թողնում այս զինծառայողների վրա: Սակայն բրիգադի սպաների զգալի մասը դրանով արդեն կտրվում է հայկական իրականությունից և չի կանենում վերադառնալ այլ զորատեսակ: Այստեղ մեծ անջրպետ է առաջանում, որը բացասաբար է անդրադառնում ընդհանուր գործի վրա: Հարկավոր է բրիգադի սպաներին 3-5 տարի ծառայելուց հետո, երբ նա լավ դպրոց է անցնում, փոխարինել՝ հնարավորություն տալով ավելի շատ սպաների վերապատրաստելի Արևմուտքում: Սակայն, մյուս կողմից, այս բրիգադով անցած սպաները, տեղափոխվելով այլ զորամասեր, նորից տարալուծվում են իրավիճակի մեջ: Այս հարցը հանգամանալից ուսումնասիրություն է պահանջում, քանի որ մեզ համար շատ կարևոր է նման բրիգադի առկայությունը: Կաղրային նման հարցերը մանրակրկիտ ուսումնասիրություն են պահանջում և ՋՌ-ի բարեփոխումների ընդհանուր գործընթացում կարևորագույն տեղ են զբաղեցնում:

Կաղրային հարցերը մշտապես պարունակում են կոռուպցիոն ռիսկեր: Այդ պատճառով վերջին տարիներին ներդրվեց կաղերի որակավորման թեստավորման համակարգ, ինչը թույլ է տվել զգալիորեն նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, հետևաբար, նաև համապատասխան բողոքները: Դրանք վերաբերում էին ինչպես ակադեմիական ընդունելություններին, այնպես էլ նշանակումներին և այլ հարցերի:

³¹³ Печуров С., Военные профессионалы в англо-саксонской модели управления вооруженными силами история и современность, ВВО, 11.2011, стр. 30-33.

2.5 Սպայական կազմի նշանակման և կոչումների շնորհման համակարգը

ԶՌ ԳԳ-ի վարչության նախաձեռնությամբ ներդրվել է թեստավորման կարգով առաջխաղացմամբ պաշտոնների նշանակելու սկզբունքը:

Ռազմական կրթության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով 2011 թ.³¹⁴ Հայաստանի Հանրապետության կառավարության «Ռազմական կրթության հայեցակարգը» ներկայացնում է ռազմական կրթության նոր քաղաքականությունը³¹⁴: Այն համահունչ է պետական կրթական համակարգի ծրագրերին: Ռազմական կրթության արդիականացված քաղաքականությունը կրթություն է նախատեսում ոչ միայն սպայական, այլև արիեստավարժ սերժանտական կազմի համար, որոնք նորացվող բանակում հսկայական դեր կունենան: Արիեստավարժ բանակներում սերժանտական անձնակազմի դերը զգալիորեն բարձր է և լրացնում է խորհրդային բանակի կրտսեր սպայական կազմին:

ՀՀ ԶՌ-ի ստեղծման առաջին իսկ օրվանից սպաների պաշտոնների նշանակման և կոչումների շնորհման համակարգը վերցվեց խորհրդային համակարգից, որն էլ իր հերթին ժամանակին վերցվել ու մի փոքր փոփոխվել էր ցարական համակարգից³¹⁵: Սպայական համագեետը ևս վերցված էր խորհրդայինից որոշակի փոփոխություններով: Զինվորական կոչումներն էին.

- կրտսեր լեյտենանտ

³¹⁴ Օհանյան Ս. Մ., Ռազմական կրթության համակարգի զարգացումը՝ որպես ՀՀ պաշտպանական համակարգի արդյունավետության մեծացման գործոն, Հայկական բանակ, քիվ 3 (73), 2012, էջ 9-19:

³¹⁵ Ընդհանուր առմամբ գծավոր ուսալիքների և դրանց հետ հնգաբև աստղերի կիրառությունը ռազմարվեստում ունի պուրական ծագում և կապ ունի ցամաքային զորքերի խրամատային մարտակարգի հետ: Որ սպան քանի խրամատի համար է պատասխանատու, այսինքն իր ստորաբաժանումը ինչպիսի մարտակարգով կարող է դասավորել և ինքը մարտի ժամանակ որ դիրքում է կանգնում. սա է հիմնական տրամաբանությունը: Սակայն ներկայում դա արդեն այնքան էլ պահպանված չէ, այն տեղայնացված է:

- լեյտենանտ
- ավագ լեյտենանտ
- կապիտան
- մայոր
- փոխգնդապետ
- գնդապետ
- գեներալ-մայոր
- գեներալ-լեյտենանտ
- գեներալ-գնդապետ

Զինվորներ

- Շարքային
- Եֆրեյտոր

Սերժանտներ

- Կրտսեր սերժանտ
- Սերժանտ
- Ավագ սերժանտ
- Ավագ

Ենթասպաներ

- Ենթասպա
- Ավագ ենթասպա

Կրտսեր սպաներ

- Կրտսեր լեյտենանտ
- Լեյտենանտ
- Ավագ լեյտենանտ
- Կապիտան

Ավագ սպաներ

- Մայոր
- Փոխգնդապետ
- Գնդապետ

Գեներալներ

- Գեներալ-մայոր
- Գեներալ-լեյտենանտ
- Գեներալ-գնդապետ
- Բանակի գեներալ

ՁՈՒ սկզբնական շրջանում բանակի գեներալ կոչում չէր նախատեսվում, այն կիրառվեց հետո: Կոչումների շնորհման ժամանակահատվածները խորհրդայինից մի փոքր տարբերվում էին: Կրտսեր լեյտենանտից մինչև կապիտան միջանկյալ ժամանակահատվածները երկուական տարի էր, մայոր և փոխգնդապետ կարելի էր ստանալ երեքական տարի հետո, գնդապետ՝ նվազագույնը չորս տարի: Գրանից հետո ժամանակահատվածը հաշվվում է այսպես. գնդապետը նախ պետք է գեներալ-մայորի պաշտոն ստանա և անկախ նրանից, րե քսանի տարի ատաջ է գնդապետի կոչում ստացել, այդ պաշտոնում ծառայի նվազագույնը երեք տարի, որից հետո դառնա գեներալ-մայոր: «Լերջինից հետո ֆիքսված ժամանակահատված չկա:

Պաշտոններին համապատասխանող կոչումները հետևյալ կերպ էին դասակարգվում.

- դասակի հրամանատար՝ ավագ լեյտենանտի կոչում. կարող է լինել երկու աստիճան ցածր և բացառիկ դեպքերում մեկ աստիճան բարձր,
- վաշտի հրամանատար՝ կապիտանի կոչում. կարող է լինել երկու աստիճան ցածր և բացառիկ դեպքում մեկ աստիճան բարձր,
- գումարտակի հրամանատարի տեղակալ՝ մայորի կոչում. կարող է լինել մեկ աստիճան ցածր,

• գումարտակի հրամանատար՝ փոխգնդապետի կոչում. կարող է լինել մեկ աստիճան ցածր և բացառիկ դեպքերում գնդապետ,

• գնդի հրամանատարի տեղակալ՝ փոխգնդապետի կոչում. բացառիկ դեպքերում գնդապետ,

• գնդի հրամանատար՝ գնդապետի կոչում. կարող է լինել փոխգնդապետ և բացառիկ դեպքերում՝ մայոր,

• բրիգադի կամ դիվիզիայի հրամանատարի տեղակալ՝ գնդապետի կոչում,

• բրիգադի կամ դիվիզիայի հրամանատար՝ գեներալ-մայորի կոչում. բացառիկ դեպքերում՝ գնդապետ,

• կորպուսի հրամանատար՝ գեներալ-մայորի կոչում. կարող է լինել մեկ աստիճան ցածր,

• բանակի հրամանատար՝ գեներալ-լեյտենանտի կոչում. կարող է լինել մեկ աստիճան ցածր,

• գլխավոր շտաբի պետի տեղակալ՝ գեներալ-լեյտենանտի կոչում. կարող է լինել մեկ աստիճան ցածր,

• գլխավոր շտաբի պետ՝ գեներալ-գնդապետի կոչում:

Շարքային և կրտսեր հրամանատարական կազմի կոչումները ևս վերցվել են խորհրդայինից: Դրանցում էլ կատարվել են նվազագույն փոփոխություններ, իսկ ենթասպա կոչումը մտցվեց միասնական կրտսեր հրամանատարական կազմի մեջ՝ հանվելով միջանկյալ օղակից: Դրանք հետևյալն են.

- եֆրեյտոբ
- կրտսեր-սերժանտ
- սերժանտ
- ավագ-սերժանտ
- ավագ
- ենթասպա
- տվագ-ենթասպա

Ժամանակի հետ բազմիցս քննարկվել են սպայական կոչումների անունները և տարբերանշանները փոխարինել ազգայինով:

Նույնը վերաբերում է նաև համազգեստին: Եղել են հետաքրքիր ատաջարկներ, սակայն այդ հարցերը դեռ մնում են քննարկումների փուլում:

Որպես այս գլխի ամփոփում հարկ ենք համարում անդրադառնալ նաև մի կարևոր հարցի, այն է՝ պատերազմում դաշտային հրամանատարների ու կառնային զինվորականների դերին: Մեզանում այդ հարցը շատ է քննարկվում և որպես օրինակ բերվում է Առաջին համրապետության բանակը: Մասնագետներից ոմանք առավելություն են տալիս դաշտային հրամանատարներին, ոմանք էլ ընդհակառակը նվազեցնում են նրանց դերը և բարձրացնում կառային զինվորականների դերը: Մենք կարծում ենք, որ մնա քննարկումները թե՛ զիտական տեսանկյունից, թե՛ ազգային անվտանգության տեսանկյունից, թե՛ բազում այլ առումներով հիմքից սխալ են: Նման քննարկումները, առհասարակ, վնասակար են: Մեր խորին համոզմամբ՝ հրամանատարական այդ երկու թևերը միմյանց լրացրել են և միայն դա է ապահովել հաղթանակը: Ըստ էության, զինվորական գործի մեջ այդ երկու տեսակները կարևորագույն երկու գործոնների՝ ոգու և մասնագիտացման դրսևորումն են, մեկն առանց մյուսի չէր կարող հաղթել:

2.6. Համագործակցությունը ԱՊՀ, ՀԱՊԿ և ՆԱՏՕ-ի հետ

Այսօր աշխարհը գլոբալ է, և պետությունները լայն կապերով փոխախախաղված են: Մեկուսի ապրելու բոլոր ճանապարհները փակուղի են տանում, իսկ ռազմական գործում սա ալելի հստակ է դրսևորվում, քանի որ այդ ոլորտի նորարարությունները, գիտությունը, տեխնիկական զարգանումն են ոչ շատ մեծ ճակատով: Դրանց հիմնական կրողները և զարգացնողները ուժային մի քանի կենտրոններն են, որոնց հետ փոխհամագործակցությունը շահավետ է ու կարևոր: Դեռ պատերազմի ժամանակ ՀՀ ՋՈՒ-ի ղեկավարությունը սերտ կապեր էր պահպանում ԱՊՀ պետությունների և, մասնավորապես,

պես, ՌԳ-ի հետ, իսկ արևմտյան երկրները նման շփումների հետաքրքրություն էին ներկայացնում:

1992 թ. մայիսին ՀՀ զինված ուժերի ներկայացուցիչները մասնակցեցին ՀԱՊԿ միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատարության և պաշտպանության նախարարությունների օպերատիվ խմբի հրամանատարաշտաբային ռազմախաղերին: Այդպես սկիզբ դրվեց ՀՀ զինված ուժերի ակտիվ ու լիիրավ մասնակցությանը այդ ուժերի շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին: Միջազգային ռազմական համագործակցության առաջարկում 1992-1993 թթ. եղան առաջին շփումները ՆԱՏՕ-ի անդամ պետությունների հետ:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվող միջազգային ռազմական համագործակցությունը նպատակատրված է մեր երկրի պաշտպանական կարողությունների զարգացմանը, միջազգային ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդմանը և զինված ուժերի միջազգային ինտեգրմանը, ինչպես նաև ձեռք բերված դաշնակցային հարաբերությունների ներկա մակարդակի պահպանմանն ու դինամիկ զարգացմանը: Համագործակցության շրջանակներում ՀՀ ՁՈՒ առանձին մասնագիտություններով արտերկրում իրականացվում է կարճաժամկետ կադրերի վերապատրաստում: Նույն համագործակցությամբ ՀՀ տարածքում միջազգային փորձագետների ու խորհրդատուների ներգրավմամբ՝ ուսումնական և խորհրդատվական միջոցառումներ են կազմակերպվում: Գործընկեր պետությունների հետ համագործակցության փոխշահավետ ոլորտներում համագործակցությունը գնալով խորացվում է, դրանց արդյունավետությունը բխում է ՀՀ պաշտպանական քաղաքականությունից³¹⁶:

³¹⁶ Խաչատուրով Յու. Գ., Պաշտպանությանը պետության և նրա զինված ուժերի պատրաստման որոշ հարցեր, Հայկական քանակ, թիվ 1-2 (71-72), 2012, էջ 83-94:

ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական արտաքին համագործակցության միջոցառումները պլանավորվում և իրականացվում են միջազգային 7 կազմակերպությունների (ՄԱԿ, ԱՊՀ, ՀԱՊԿ, ՆԱՏՕ, ԵՄ, ԵԱՀԿ, ԿԽՄԿ) և 21 պետությունների (ՌԳ, ԱՄՆ, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Հունաստան, Կիպրոս, Ֆրանսիա, Չինաստան, Վրաստան, Բելառուս, Ուկրաինա, ԻԻՀ, Գաբալիստան, Բուլղարիա, Լիտվա, Ռումինիա, Լեհաստան, Եվեյջաբիա, Իտալիա, Ավստրիա, Չեխիա) հետ ստորագրված երկկողմ և բազմակողմ միջազգային միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերի, համագործակցության ծրագրերի ու պլանների, նաև ստանձնած միջազգային պարտավորությունների հիման վրա: Ընդհանուր առմամբ, գործում է ոլորտը կարգավորող միջազգային շուրջ 160 պայմանագիր և 25 ծրագիր կամ երկկողմ համագործակցության պլան³¹⁷:

ԱՊՀ շրջանակում ռազմական ոլորտում ընթացող գործընթացները սկիզբ են առել դեռևս 1992 թ.՝ կազմակերպության ստեղծման պահից: ԱՊՀ-ի շրջանակներում ռազմական համագործակցությունն առավել գործնական հիմքերի վրա դրվեց 1995 թ.՝ կազմակերպության մասնակից պետությունների ՀՕՊ միավորված համակարգի ստեղծումով, որի միջոցով ՀՀ ՁՈւ ՀՕՊ գործերի ստորաբաժանումները, համատեղ հերթապահություն իրականացնելուն զուգահեռ՝ մշտապես իրենց մասնագիտական վարպետությունն են կատարելագործում մարտական հրաձգությամբ ամենամյա համատեղ զորավարությունների ժամանակ³¹⁸: Ներկայումս ՀՀ ՊՆ և ՁՈւ ԳԵ տար-

³¹⁷ Ավետիսյան Վ. Պ., Միմայան Ա. Ա., Չիլիցեզարյան Հ. Ս., Հորանջյան Հ. Ս., Պաշտպանական քաղաքականություն հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական քարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք, Հայկական քանակ, թիվ 1-2 (71-72), 2012, էջ 134-145:

³¹⁸ Տոնոյան Դ. Է., Պաշտպանական քարեփոխումների իրականացումը ռազմական համագործակցության շրջանակներում, Հայկական քանակ, թիվ 1-2(71-72), 2012, էջ 147-155:

բեր կառույցներն ակտիվորեն ներգրավված են ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդին կից տարատեսակ կոմիտեների գործունեության մեջ, որոնց միջոցով բազմակողմ ռազմական համագործակցություն է իրականացվում ՀՕՊ-ի, կապի, չափազրման, ռազմատեղագրական, ինժեներական ակախովման և այլ բնագավառներում:

ՀՀ-ն ՀԱՊԿ հիմնադրի անդամ է և իր պաշտպանական քաղաքականության մեջ կարևոր տեղ է հատկացնում այդ կազմակերպությանը՝ որպես արտաքին ռազմաքաղաքական հարթությունում ՀՀ անվտանգության ապահովման կարևորագույն քաղաքատարրերից մեկի: Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը ստորագրվել է 1992 թ. մայիսի 15-ին, որի մեխանիզմներն ու կառույցները 2002 թ. մայիսին վերակազմավորվեցին միջազգային տարածաշրջանային կազմակերպության՝ ՀԱՊԿ-ի³¹⁹: Հավաքական անվտանգության համակարգի ձևավորման գործընթաց ենթադրում է միջազգային հիմնական խնդիրներին անդամ պետությունների համաձայնեցված դիրքորոշումների մշակում և համադրում: ՀԱՊԿ-ի ռազմական քաղաքիչի զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցավ 2009 թ. փետրվարի 4-ին ՀԱՊԿ-ի օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի ստեղծումը, որոնց մասնակցությամբ 2012 թ. Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվեց «Փոխգործակցություն 2012» համատեղ համալիր գորավարժությունը: Այս ուժերի ստեղծման նախաձեռնողներից մեկը ՀՀ-ն է եղել: ՀԱՊԿ-ի հետ հարաբերությունները շատ ավելի խոր բնույթ ունեն: Այդ շրջանակներում իրականացվում են ամենաձավալուն նախագծերը՝ կապված կադրերի պատրաստման, ռազմաարդյունաբերության զարգացման և բանակաշինության այլ ոլորտների հետ: Առաջիկայում

ՀՀ-ում կբացվի ՀԱՊԿ ակադեմիան, որը կլինի ռազմագիտական բացառիկ կառույց³²⁰:

Մեր պաշտպանության նախարարության համար առաջնային նշանակություն ունեն հարաբերությունները ՀՀ ռազմավարական դաշնակցի՝ Ռուսաստանի Դաշնության հետ, որոնք սկզբնավորվել են դեռևս 1992 թ.՝ ՀՀ և ՌԴ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր: 1995 թ. մայրիսի 16-ին կնքված «Հայաստանի տարածքում ռուսական ռազմակայանի մասին» պայմանագիրը և 1997 թ. օգոստոսի 29-ին կնքված «Բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին» պայմանագիրը այդ հարաբերություններին հաղորդեցին ռազմավարական գործընկերության բնույթ: Անցած 20 տարիների ընթացքում ստեղծված պաշտպանության տարբեր բնագավառներին վերաբերող իրավապայմանագրային բազան հնարավորություն է տալիս երկու երկրների միջև զարգացնել փոխշահախելու դիմամիկ համագործակցություն: Հարաբերությունների ամուր զարգացման վկայություններից մեկը 2000 թ. սեպտեմբերի 27-ին ՌԴ-ն ՀՀ պաշտպանության նախարարին մարշալ Իգոր Սերգեևի և Սերժ Մարգյանի ստորագրած համաձայնագիրն էր, որը վերաբերում էր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորման ստեղծմանը: Ստեղծման պահից ի վեր՝ խմբավորման հրամանատարը գեներալ-լեյտենանտ Միքայել Գրիգորյանն էր:

2000 թ. ի վեր յուրաքանչյուր տարի միացյալ խմբավորման հրամանատարությունը մշակում է մարտական գործողությունների պլանավորման փաստաթղթերը, անցկացնում մարտական հրաձգությամբ համատեղ մարտավարական գորավարժություններ, հրամանատարաշտաբային գորավարժություններ և մարզումներ, դաշտային երբեր:

³²⁰ Բորդյուսև Ն., կուրս Երևանում կայացած 2-րդ ռազմական ռազմավարական քաղաքական ֆորումին, 2013, հունիսի 26-27:

³¹⁹ Նույն տեղում:

2009 թ. ՀՀ զինված ուժերում կազմավորվեց միացյալ գործառնական հրամանատարության շտաբը՝ ՌՎ- 102-րդ ռազմաբազայի կառավարման մարմինների հետ համագործակցելու նպատակով:

Ռազմական համագործակցության զարգացման գործում կարևորագույն ուղենիշ էր ՌՎ- նախագահի 2010 թ. օգոստոսյան այցը Հայաստան, որի ընթացքում ստորագրվեցին այնպիսի նշանակալի փաստաթղթեր, ինչպիսիք են «Հայաստանի տարածքում ռուսական ռազմակայանի մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը և «Ռազմատեխնիկական համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը»³²¹, որոնք վկայում են հայ-ռուսական դաշնակցային գործընկերության ռազմավարական բնույթի և երկարաժամկետ հիմունքներով համագործակցությունը շարունակելու կողմերի վճռական մտադրությունների մասին: Օգոստոսի 20-ին Երևանում ՀՀ և ՌՎ- նախագահների միջև ստորագրվեց համաձայնագիր, որով ռուսական ռազմաբազաների ներկայությունը ՀՀ-ում երկարաժամկեց ևս 49 տարով: Երկու երկրների պաշտպանության նախարարությունների միջև երկկողմ ռազմական համագործակցության ամենամյա պլանների համաձայն ակտիվ համագործակցություն է իրականացվում պաշտպանության ոլորտի գրեթե բոլոր բնագավառներում:

Պաշտպանության ոլորտում հայ-ռուսական երկկողմ համագործակցության հանգուցային բնագավառներից մեկը ռազմատեխնիկական համագործակցությունն է: Այս առումով զգալի գործընթաց է կատարվել այս 22 տարիների ընթացքում: Ամեն տարի ՌՎ-ից հսկայական ծավալի զենք ու զինամթերք է ձեռք բերվում և ներկրվում: Միայն 2011-2013 թթ. ներկրված զենք զինամթերքի ծավալները գերազանցում են նախորդ 20 տարիների ձեռքբերածը՝ դրանց կազմում են մի քանի հարյուր միավոր զրահատեխնիկա, տանկեր, նույն-

քան հրետամային, ՀՕՊ միջոցներ, հսկայական քանակությամբ փոքր զենքեր և զինամթերք:

ԱՊՀ շրջանակներում, իհարկե, կան նաև առանձին հարաբերություններ պետությունների հետ: Համագործակցություն Բելառուսի, Ռւկրաինայի և Ղազախստանի հետ: Վերջին տարիները հագեցած էին հայ-բելառուսական բարձրաստիճան պատվիրակությունների փոխայցելություններով: Երկու երկրների միջև երկկողմ պաշտպանական համագործակցության հիմնական ոլորտներն են ռազմաարդյունաբերությունը և ռազմական կրթությունը: Վերջին տարիներին նաև Բելառուսից են ներկրվել որոշակի քանակությամբ ռազմական տեխնիկա և սպառազինություն:

Եվրոպական զարգացման ուղեգծի համատեքստում Հայաստանի անվտանգության ապահովման համակարգում կարևոր դերակատարություն ունեն ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները: 1992 թ. Հայաստանը դարձավ նորաստեղծ Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդի անդամ, իսկ 1994 թ. արդեն միացավ «Կործնակերություն հանուն խաղաղության» նախագծին, որի շրջանակներում կարող է Հյուսիսատլանտյան դաշինքի հետ իրականացնել զորավարություններ, մասնակցել խաղաղարար, փրկարարական և հումանիտար առաքելությունների:

1999 թ. Հայաստանի նախագահը Վաշինգտոնում մասնակցեց ՆԱՏՕ-ի 50-ամյակին նվիրված մի շարք միջոցառումների: Ելույթով հանդես եկավ Եվրոատլանտյան գործընկերության խորհրդի նիստում: ՆԱՏՕ-ն հերքեց նախկին Հարավսլավիայի օրինակով Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավվելու մասին ենթադրությունները: Ապրիլի 25-ին Վաշինգտոնում կայացավ ՆԱՏՕ-ի 50-ամյակին նվիրված հոբելյանական զագաթաժողովը և Հյուսիսատլանտյան գործընկերության խորհրդի նիստը:

2000 թ. վերջին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը կտրականապես բացատրեց ՆԱՏՕ-ին անդամակցելու հեռանկարը՝ բացասաբար արտահայտվելով դեպի Հարավային Կովկաս ՆԱՏՕ-ի ընդլայնման առնչությամբ՝ պատճառաբանելով, որ դա չի կարող նպաստել տա-

³²¹ ՀՀ ՊՆ, Պաշտպանական քաղաքականության վարչության քաղվածք:

րածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը: Գրանով հանդերձ ՆԱՏՕ-ի հետ որոշակի հարաբերությունները շարունակում էին զարգանալ:

2001 թ. Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները կրկին ակտիվացան: Հունվարի 15-ին պաշտոնական այցով Հայաստան ժամանեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերտսոնը: Նա հատուկ ընդգծեց, որ իր այցի նպատակը կովկասյան տարածաշրջանի երկրներին ՆԱՏՕ-ին անդամակցելու գաղափարը չէ, քանի որ Հարավային Կովկասից և ոչ մի երկիր ՆԱՏՕ-ին անդամակցելու հայտ չի ներկայացրել ու նմանատիպ քննարկումները գոտ տեսական բնույթ են կրում: Ջ. Ռոբերտսոն գոհունակություն հայտնեց Հայաստան կատարած իր այցի արդյունքներից, նշեց, որ Հայաստանի նախագահի հետ քննարկել են նաև Կարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ընթացքը³²²: Հունվարի վերջին Ս. Սարգսյանը հայտարարեց, որ Հայաստանի զինված ուժերում խաղաղապահ ստորաբաժանման ստեղծմանն ուղղված աշխատանքները քննարկել են ակտիվ փուլ:

2001 թ. մարտի 10-ին Հայաստանի նախագահ Ռ. Քոչարյանը հայտարարեց, որ Հայաստանը պատրաստ է ՆԱՏՕ-ի հետ համագործակցության ընդլայնմանը: Խոսելով հայ-ռուսական ռազմական համագործակցության մասին՝ նա նշեց, որ Ռուսաստանի ռազմական ներկայությունը Հայաստանում պայմանավորված է տարածաշրջանային խնդիրների առկայությամբ և դրանով հավասարակշռ ռոժ է առաջանում, որն անհրաժեշտ է տարածաշրջանում կայունության պահպանման համար:

Հուլիսին Ռ. Քոչարյանն այցելեց ՆԱՏՕ-ի կենտրոնակայան, հանդիպեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջ. Ռոբերտսոնին, ով իր խոսքում Հայաստանը որակեց որպես «արժեքավոր գործընկեր» և

³²² Հայաստան-ՆԱՏՕ, Առաջընթացի 10 տարիներ (1999-2008), կազմեց Թադևոսյան Ա., 2008, էջ 5:

«Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի ենթադրյալ անդամ³²³:

Հոկտեմբերին Հայաստանի պաշտպանության փոխնախարար Արթուր Աղաբեկյանը հայտարարեց, որ Թուրքիայի դիրքորոշման պատճառով Հայաստանի հասարակությունը բացասաբար է վերաբերվում ՆԱՏՕ-ին: Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանն էլ նշեց, որ մի շարք գործոններ բարդացնում են իրավիճակը և խանգարում Թուրքիային հանդես գալ որպես տարածաշրջանային զարգացումները կայունացնող երկիր, և, որ տարածաշրջանային համագործակցության զարգացումը Կարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը համընթաց բարենպաստ նախադրյալներ կստեղծի սովյալ խնդրում փոխզիջումային լուծում գտնելու համար:

2002 թ. հայկական կողմը ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների ակտիվացման ուղղությամբ մի շարք քայլեր ձեռնարկեց: Այսպես, փետրվարին Երևանում անցավ մույթ տարվա ամռանը Վրաստանում կայացած 2002 թ. գորավարժությունների պլանավորման գլխավոր կանֆերանսը: Կա առաջին խոշոր միջոցառում էլ՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում, որն անց էր կացվում Հայաստանի տարածքում:

Մայիսի վերջին Հայաստանի արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանը Ֆլորենցիայում նասնակցեց Եվրասատլանտյան գործընկերության խորհրդի ամբողջ երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպմանը, որի ժամանակ հայտարարեց, որ Կովկասում անհրաժեշտ է մտածված ու հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարել՝ ամուր և երկարամասն կետ խաղաղություն ու անվտանգություն հաստատելու նպատակով: Այնուհետև նա հատուկ նշեց Հայաստանի գաղափարը՝ Հարավային Կովկասի կայունության համաձայնագիր մշակելու վերաբերյալ, որը պետք է

³²³ Նույն տեղում, էջ 8:

ստորագրեն Հարավային Կովկասի 3 երկրները, տարածաշրջանի հարևան երկրներն ու այն պետությունները, որոնք շահագրգռված են դրանով¹²⁴:

2003 թ. ապրիլի վերջին Հայաստան այցելեց Եվրոպայում ՆԱՏՕ-ի Միացյալ ուժերի հրամանատարի տեղակալ Ռայնե Զաստը: Նույն տարվա կարևորագույն իրադարձություններից դարձան հունիսի 16-27-ին Հայաստանում տեղի ունեցած «Cooperative Best Effort-2003» զորավարժությունները: Գրան մասնակցեցին 19 երկրի շուրջ 400 զինծառայող՝ ՆԱՏՕ-ի անդամ երկրներից՝ Կանադա, Հունաստան, Հունգարիա, Իտալիա, Լեհաստան, Թուրքիա, Բուլղարիա, Մակեդոնիա, Վրաստան, Լիտվա, Մոլդովա, Ռումինիա, Ռուսաստան, Սլովակիա և Ռուսաստան: Ռուսաստանն առաջին անգամ էր մասնակցում նմանատիպ զորավարժությունների: Քուս հետևակայինների ցույց ինտեգրվել էր տարբեր ուժերի համակարգում:

Հոկտեմբերի 19-21-ը Հայաստանը և ՆԱՏՕ-ն Բրյուսելում անցկացրին անվտանգության հարցերով խորհրդակցությունների հերթական փուլը: Գրա ընթացքում հայկական կողմը ներկայացրեց միջազգային ու տարածաշրջանային անվտանգության ապահովման հարցում իր մտեցումները և վերջին զարգացումները՝ դաշաբալյան հակամարտության ու հարևան երկրների հետ հարաբերությունների գործընթացում:

Փորրիկ սենացիա դարձավ նոյեմբերի 14-15-ին Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Միքայել Հարությունյանի այցը Մտամբուլ: Նա Մտամբուլ էր մեկնել Եվրոպայում ՆԱՏՕ-ի Հյուսիսային հրամանատարության գլխավոր հրամանատարի հրավերով՝ մասնակցելու ՆԱՏՕ-ի «Alliad Action 2003», այսպես կոչված, VIP-օրվա վարժանքներին: Սա ՀՀ ՋՈւ-ի բարձրատիժան ներկայացուցչի առաջին այցն էր Թուրքիա, որի հետ, ինչպես գիտենք, Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ չունի:

2003 թ. դեկտեմբերին կայացավ Հայաստանի նախագահ Ռ. Գոչարյանի հերթական այցը ՆԱՏՕ-ի կենտրոնակայան: 2003 թ. հունիսին՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» նախագծի շրջանակներում, Հայաստանը հյուրընկալեց Cooperative Best Effort 2003 բազմազգ զորավարժությունները, 2008 թվականին, «Cooperative Longbow/Lancer 2008»-ը և այլն:

2004 թվականը չափազանց հարուստ էր տարբեր իրադարձություններով: Այն նշանավորվեց Ադրբեջանի մի շարք դեմարշներով, որոնց արդյունքում չեղյալ հայտարարվեցին այդ երկրի տարածքում կայանալիք զորավարժությունները: 2003 թ. մարտին ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում: Չինված ուժերի կարգավիճակի մասին է բազմակողմանի համաձայնագիրը, որը 2003 թ. հոկտեմբերին Վաշինգտոնում ստորագրել էր ԱՄՆ-ում Հայաստանի դեսպան Արման Կիրակոսյանը: 2004 թ. հոկտեմբերին ՆԱՏՕ-ում ԱՄՆ դեսպան Նիկոլաս Բրլոնսը նշեց, որ. «ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի զինված ուժերի և պաշտպանական կառույցների կազմակերպման միջև զգալի տարբերություններ կան: Եթե Հայաստանը ցանկանում է զգալիորեն բարելավել ՆԱՏՕ-ի հետ իր փոխհամատեղելիությունը, հարկավոր է ձևափոխել ռազմական որոշ կառույցներ: Գործնական հարցեր կան, որոնք կարող են համոզել Հայաստանի կառավարությանն ավելի ուշադիր հայացք գցել իր զինված ուժերի ապագա կառուցվածքի վրա»¹²⁵:

2005 թ. դեկտեմբերի 9-ին Հայաստանի անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը (ԱԳ-ԳԾ) քննարկվեց Բրյուսելում կայացած ՆԱՏՕ-ի քաղաքական կոմիտեի և 26+1 ձևաչափով ՆԱՏՕ-ի ռազմաքաղաքական կոմիտեի ընդհանուր նիստում, դեկտեմբերի 16-ին էլ հաստատվեց Հյուսիսատլանտյան խորհրդի կողմից և ուժի մեջ մտավ:

¹²⁴ Նույն տեղում, էջ 15:

¹²⁵ Նույն տեղում, էջ 22:

2005 թ. մարտին Հայաստան այցելեցին ՆԱՏՕ-ի մի քանի պատվիրակություններ: Հայաստանի և ՆԱՏՕ-ի հարաբերությունները արագորեն զարգանում են, և դա մեծ օգուտ է բերում ՀՀ-ին:

2005 թ. ապրիլի 12-ին Հայաստանի պաշտպանության փոխ-նախարար Ա. Արարելյանն առաջին անգամ հրապարակայնորեն հիշատակեց ԱԳԳԾ-ի առանցքային դրույթներից մեկի՝ ռազմական բարեփոխումների նպատակները: Նա նշեց 4 հիմնական սկզբունք, որով Պաշտպանության նախարարությունը ղեկավարվելու է բարեփոխումների ընթացքում.

- բարեփոխումների իրագործելիությունը,
- բարեփոխումների աստիճանական բնույթը,
- ճկունություն և խորը վերլուծություն,
- ժողովրդավարություն:

2004 թ. ՆԱՏՕ-ի խաղաղարար առաքելության շրջանակում Հայաստանը մի դասակ ուղարկեց Կոստո, որտեղ հայ զինվորներն ու սպաները ընդգրկվեցին հունական զորամիավորման կազմում: 2006 թ. Հյուսիսատլանտյան այլևսի օժանդակությամբ Երևանում բացվեց ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնը: 2006 թ. Հյուսիսատլանտյան խորհուրդն առաջին գնահատականը տվեց ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի ԱԳԳԾ-ի իրականացմանը: Երևանում անցկացվեցին «Rescuer 2006» վարժանքները:

2006 թ. հուլիսի 14-ին ՀՀ ՊՆ ռազմական ավիացիոն ինստիտուտում վարժանքներ սկսվեցին: Դրան մասնակցեցին 11 երկրներից ժամանած ավելի քան 300 սպաներ, այդ թվում՝ Հայաստանից, ԱՄՆ-ից, Ալբանիայից, Ավստրիայից, Վրաստանից, Ղազախստանից, Ղրղզստանից, Մակեդոնիայից, Ռումինիայից, Տաջիկստանից և Ռուսաստանից: Վարժանքներում ներգրավված էին նաև ՄԱԿ-ի, Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի, ամերիկյան Կանգաս նախագահի Ազգային Գվարդիայի ներկայացուցիչները:

2007 թ. սկզբին ու վերջին ընդունվեցին Հայաստանի ԱԳԳԾ-ի պարտավորությունների շրջանակներում մշակված երկու կարևորագույն փաստաթղթեր՝ «Ազգային անվտանգության ռազմավարությունը» և «Ռազմական դոկտրինը»: Հայոց պետականության պատմության մեջ առաջին «Ազգային անվտանգության ռազմավարության» ուժի մեջ մտնելը ազգային և տարածաշրջանային նշանակություն ունեցող քաղաքական իրադարձություն էր³²⁶: 2007 թ. ընթացքում Հայաստանում ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների զգալի ընդլայնման մասին վկայող մի շարք միջոցառումներ անցկացվեցին: Հայաստանում առաջին անգամ անցկացվեց ՆԱՏՕ-ի շաբաթ:

Ապրիլի 27-ին Հայաստանի պաշտպանության նախարարության ավիացիոն ինստիտուտում սկսվեցին ԱՄՆ-ի Եվրոպական հրամանատարության կողմից կազմակերպված՝ 15-օրյա «Համատեղ ցանց-2007 թ.» հրամանատարաշտաբային զորավարությունները: Դրանց մասնակցեց Հայաստանի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Խորվաթիայի և Վրաստանի զինված ուժերի ավելի քան 130 սպա:

Մայիսի 3-ին Երևանում սկսվեց ՆԱՏՕ-ի «Միջուկային և ուղիացիոն սպառնալիքների կանխումը, քացահայտումը և դիմակայումը» թեմայով համաժողովը, որին 15 երկրից մասնակցեց մոտ 60 առաջատար մասնագետ:

Հուլիսին Երևանում Կայացավ ԱԳԳԾ-ի շրջանակներում «Ահաբեկչության դեմ պայքարի պատրաստակամության ապահովումը» համաժողովը:

Դեկտեմբերին Հայաստանը և ՆԱՏՕ-ն պայմանավորվեցին 2008 թ. ամռանը Երևանում կիրեքհանցագործությունների դեմ պայքարին նվիրված համատեղ գիտաժողով կանցկացնեն:

Նոյեմբերի 12-14-ին Երևանում տեղի ունեցավ ՆԱՏՕ-ի՝ «Հայաստանի հետազոտական և գիտական ցանցերը. նվազումները, խնդիրները ու լուծումները» գիտական համաժողովը, որին ներկայացվել էին հայ գիտնականների «ՋեԱՆՏ» համակարգին միանալու հետևանքներն ու այդ ցանցի հնարավորությունները: ՆԱՏՕ-ի խորհրդատուն Հայաստանի գիտնականներին կոչ արեց հա-

³²⁶ Նույն տեղում, էջ 8:

մախմբվել՝ միացյալ ուժերով ծրագիրն արդյունավետ դարձնելու համար:

2008 թ. Հայաստանի պաշտպանության նախարար Մ. Հարությունյանը հայտարարեց, որ Կոտլոյում ծառայող հայաստանցի խաղաղապահների թիվը կկրկնապատկվի:

Նկատենք, որ տվյալ նախաձեռնության շրջանակներում 2006 թ. ի վեր ԱՄՆ-ն հայկական խաղաղապահ գումարտակին է տրամադրել ավելի քան 6 մլն. դոլար¹²⁷: ԱՄՆ-ի կողմից լրացուցիչ ֆինանսավորում է հատկացվել՝ աջակցելու հայկական խաղաղապահ գումարտակի ընդարձակմանը՝ այն հասցնելով բրիգադի ծավալի, ինչպես դա պլանավորված է ԱԳ-ԳԾ-ում: 2008 թ. ընթացքում ամերիկյան կողմը հայկական խաղաղապահ գումարտակին կտրամադրի բեռնատար ավտոմեքենաներ, համազգեստ, դաշտային սարքավորումներ և լրացուցիչ այլ սարքեր:

2008 թ. փետրվարի 4-ից 8-ը Երևանում էր գտնվում ՆԱՏՕ-ի գնահատման առաքելությունը: Փետրվարի 7-ին Հայաստանի պաշտպանության նախարար Մ. Հարությունյանը հանդիպեց ՆԱՏՕ-ի առաքելության անդամների հետ, որոնք գնահատում էին Իսախանի հետ Հայաստանի ԱԳ-ԳԾ-ի և «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում պլանավորման ու վերանայման գործընթացի (PARP) իրականացումը:

Սակայն, թվում է՝ անհնար է համատեղել, օրինակ, հրամանատարահսկողական կապի բարեփոխման երկայնատև ծրագրի ամբողջ ծավալով իրականացումը, որով նախատեսվում է ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանեցնել մեր կապի, նավարկման (նավիգացիա) և նույնականացման համակարգերը: Թեև IPAP-ի կատարման թվաքանակի և վերջնաժամկետի վերաբերյալ որոշակի սահմանափակումներ չկան, բայց ՆԱՏՕ-ի հետ համագործակցության այս փուլն առանց կոուպերացման ավելի բարձր մակարդակի

անցման, անվերջ շարունակվել չի կարող: 2011 թ. նոյեմբերին համաձայնեցվել է Հայաստանի IPAP-ի արդեն 3-րդ շրջափուլի փաստաթուղթը¹²⁸: 2004 թ. ի վեր ՀՀ ՋՌ-ն մասնակցում է ստորաբաժանումների մարտական պատրաստակամության «Օպերատիվ կարողությունների հայեցակարգ» ծրագրին, որի նպատակն է գնահատումների և հավաստագրումների միջոցով ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանեցնել հայտարարված ստորաբաժանումները: Ծրագրի շրջանակներում 2007-2012 թթ. ժամանակահատվածում հաջողությամբ անց են կացվել ՀՀ ՊՆ խաղաղապահ բրիգադի հրաձգային վաշտի ինքնագնահատումը և ՆԱՏՕ-ի կողմից գնահատումը, հրաձգային գումարտակի ինքնագնահատումը: 2013 թ. սեպտեմբերին անց է կացվելու ՆԱՏՕ-ի կողմից գումարտակի գնահատումը: ՆԱՏՕ-ի հետ համագործակցության առումով մեն արդյունավետությամբ կա, մասնավորապես՝ բարձրակարգ կտրերի պատրաստման գործում:

Ինչպես սա՛վեց, 2004 թ. այդ համագործակցության շրջանակներում հայ խաղաղապահների 35 հոգանոց դասակը հունական գումարտակի կազմում մասնակցում է ՆԱՏՕ-ի ղեկավարած Կոտլոյի ուժերի գործողություններին: Թեև 2011 թ. ղեկներեբերին ՀՀ զորախումբը դուրս բերվեց թատերաբեմից (հունական կողմի ունեցած ֆինանսական խնդիրների պատճառով), սակայն նույն կազմով վերադարձավ 2012 թ. ամռանը՝ այժմ արդեն ամերիկյան հրամանատարության ներքո, և ներկայումս իր ծառայությունն է իրականացնում Կոտլոյի Ուտոշվեպ քաղաքի մերձակայքում տեղակայված «Ինդ սբիլ» զինավանդակում (բազմազգ բրիգադ՝ «Արևելք»):

2005-2008 թթ. հայ խաղաղապահների 45 հոգանոց զորախումբը մասնակցեց Իրաքում կայունության հաստատման նպատակով ԱՄՆ-ի ղեկավարած միջազգային կոալիցիոն գործողություններին՝ լեհական ստորաբաժանման կազմում:

¹²⁷ Խաղաղապահ բրիգադի զարգացման նվիրված փակ լսումների զեկույցներ, 2013:

¹²⁸ Տոնոյան Դ. Է., նշվ. աշխ., էջ 147-155: 239

2010 թ. ի վեր՝ հայ խաղաղապահների 40 հոգանոց զորախումբը մասնակցում է ՆԱՏՕ-ի ղեկավարած Աֆղանստանում անվտանգության աջակցության միջազգային ուժերի (ԱՅԱԱՖ) առաքելությանը՝ գերմանական հրամանատարության ներքո («Հյուսիս» տարածաշրջանային հրամանատարություն): 2011 թ. ամռանը Հայաստանը եռապատկեց իր զորակազմի թվաքանակն Աֆղանստանում՝ երկրի հյուսիսի Կունդուզ քաղաքից բացի երկրորդ զորախումբը տեղակայելով նաև Մազարի Շարիֆում: Ներկայումս ԱՅԱԱՖ-ում ՀՀ ՋՈւ ընդհանուր զորակազմը (126 զինծառայող) բաղկացած է Կունդուզի (65 զինծառայող) և Մազարի Շարիֆի «Մայր Սվան» (56 զինծառայող) զինավաններում ծառայող զորախմբերից, նաև Կունդուզում ծառայող 5 հրազանգվիչ սպաներից:

2012 թ. ՀՀ ՋՈւ սպան հերթափոխային սկզբունքով մասնակցում է Լիբանանում ԱՄԿ-ի առաքելությանը (ՅՈՒՆԻՖԻԼ)՝ որպես ռազմական դիտորդ: Դիտորդական առաքելությունը ենթադրում է Լիբանանի արևերթից արևմուտք ձգվող «Կապույտ գծի» երկայնքով, ինչպես նաև Խորանյի տարածքներում մոնիտորինգների իրականացում: Նախատեսվում է, որ ՀՀ ՋՈւ ստորաբաժանումը դասակի կազմով կտեղակայվի Լիբանանում 2014 թ.³²⁹ խաղաղական հրամանատարության ներքո:

Հարկ է ասել, որ շուրջ 1000 հայ խաղաղապահներ պատվով են ծառայել տարբեր առաքելությունների շրջանակներում: Մեր խաղաղապահները 930 անգամ պարգևատրվել են օտարերկրյա պետությունների մեդալներով և արժանացել են տարբեր խրախուսանքների³³⁰: Խաղաղապահները ցանկացած խնդրի կատարման և զորավարժությունների ժամանակ մշտապես արժանանում են բարձր գնահատականների³³¹:

³²⁹ ՀՀ ՊՆ Օհանյան Ա., ասուլիս, 2013, հունիսի 7, Տավուշ:

³³⁰ ՀՀ ՊՆ Կադրերի և ԱՀՏԱ բաղվածք:

³³¹ Галушак И., Высокая оценка миротворцев, Красная звезда, 7 августа, 2013, стр. 5.

ՀՀ ՊՆ-ի համար կարևորագույն մյուս ուղղությունը հարաբերություններն են ԱՄՆ-ի հետ: Սկզբնավորվելով դեռևս 1994 թ.³³² քվակառուցի ի վեր ամենամյա երկկողմ համագործակցության պլանների իրականացման միջոցով ձեռք բերեցին համակարգված և նպատակային բնույթ:

2002-ից սկսած ամերիկյան կողմը «Արտաքին ռազմական ֆինանսավորում» (ՖՄՖ) ծրագրով ՀՀ զինված ուժերին ցուցաբերում է զգալի նյութատեխնիկական օժանդակություն, որի շնորհիվ 2002 թ. հիմնարկվեց ՀՀ ՊՆ մայրաքաղաքական ակադեմիան կենտրոնը, 2007 թ. ՀՀ ՊՆ-ին տրամադրվեց «ԵՄԵԳ-Ս» շարժական դաշտային հուսպիտալը: Նյութատեխնիկական նշանակալի օժանդակություն է հատկացրել նաև ՀՀ ՊՆ խաղաղապահ բրիգադին՝ անձնական կազմերձանքի, սարքավորումների, «Հարիս» տիպի ռադիոկայանների տեսքով: ԱՄՆ «Միջազգային ռազմական կրթություն և վարժանք» (ԱՅՄՆՏ) ծրագրով յուրաքանչյուր տարի ՀՀ ՊՆ և ՋՈւ տասնյակ ներկայացուցիչներ անգլերենի ու մասնագիտական վերապատրաստում են անցնում ԱՄՆ-ի ուսումնակրթական հաստատություններում: ԱՄՆ հետ համագործակցության շնորհիվ ՀՀ պաշտպանության մախարաբությունը խորհրդատվական և փորձագիտական օժանդակություն է ստանում պաշտպանական բարեփոխումների այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են փոխգործունակ կարողությունների զարգացումը, ռազմական կրթության, անձնակազմի կառավարման, պաշտպանական պլանավորման, բյուջետավորման և ծրագրավորման համակարգերի կատարելագործումը, արհեստավարժ սերմանտական կազմի զարգացումը: Այս ամենը կազմում են ժամանակակից բանակներին հատուկ կառուցվածքային և կրթական հիմքը, որի շնորհիվ էլ իրականացվում է բանակային բարեփոխումների հիմնական փուլը:

Հյուսիսատլանտյան դաշինքի հետ համագործակցությունն ունի նաև առանձին պետությունների հետ բաղադրիչ: Սկզբնավորվելով դեռևս 1994 թ.³³³ ՀՀ պաշտպանության մախարաբության երկկողմ համագործակցության այս ճյուղը տարեցտարի աճեց և ներկայումս իր մեջ ներառում է ՆԱՏՕ-ի ու Եվրամիության անդամ երկրների մե-

ծանասնության, այդ թվում՝ Գերմանիայի, Հունաստանի, Մեծ Բրիտանիայի, Լեհաստանի, Լիտվայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Կիպրոսի, Ֆրանսիայի, Չեխիայի, Սլովակիայի, Իտալիայի, Ավստրիայի, Եվեյցարիայի, Նիդեռլանդների և այլ երկրների հետ հարաբերությունները: Այս երկրների հետ համագործակցությունը հիմնականում միտված է ՀՀ պաշտպանական բարեփոխումների և պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքների իրականացմանը, այդ պետությունների զինված ուժերի հետ փոխգործունակության մակարդակի բարձրացմանը և ՀՀ խաղաղապահ կարողությունների զարգացմանը:

ՀՀ ՊՆ-ն բավական հազգեցած համագործակցություն է իրականացնում ԵԱՀԿ-ի հետ, որը նշանակալի դեր է խաղում սպառազինությունների վերահսկման, պաշտպանության ոլորտի թափանցիկության, տարածաշրջանային անվտանգության երաշխիքների ասպանովման, մարդու իրավունքների, նաև ՀՀ ԶՈՒ շարքերում անձնակազմի իրավագիտակցության մակարդակի բարձրացման հարցերում: Լեռնային Ղարաբաղի հակամարտության շփման գծում ԵԱՀԿ կողմից պարբերաբար իրականացվող մոնիտորինգները զգալի դեր են կատարում հրադադարի ռեժիմի պահպանումը վերահսկելու գործում: ԵՍՁՈՒ պայմանագրի և 2011 թ. Վիեննայի փաստաթղթի շրջանակներում դեռևս 1993 թ. ի վեր Հայաստանի Հանրապետությունը կատարում է սպառազինությունների վերահսկողության ոլորտում իր ստանձնած միջազգային պարտավորությունները՝ ընդունելով տարեկան 8 տեսչություններ վերոնշյալ պայմանագրերի շրջանակներում: Վերջին տարիներին ՀՀ ԶՈՒ տեսչական խմբերը տեսչություններ են անց կացնում նաև Թուրքիայի տարածքում³³²:

Միջազգային մարդասիրական, զինված հակամարտության և մարդու իրավունքների շրջանակներում իր ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև ՊՆ-ի՝ դեռևս 1992 թ. ի վեր սկզբնավորված համագործակցությունը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ)

հետ: ՀՀ ՊՆ և ԶՈՒ ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են հունամիտար թեմատիկայով դասընթացների, վարժանքների, սեմինարների և մի շարք այլ միջոցառումների, որոնք զգալիորեն բարձրացնում են մեր սպաների ընդհանուր գիտելիքները ու մասնագիտական պատրաստությունն այս ոլորտում: Այս կառույցի հետ ՊՆ-ն ակտիվորեն համագործակցում է նաև ռազմագերիների հարցում, նրանց հետ վարվելու, փոխանակման, երբեք երկիր փոխանցելու և այլ հարցերում: Տարեկան մի քանի անգամ էլ կազմակերպում են ասանամագոտու մշտապիտարկումներ, ինչը որոշակիորեն նպաստում է նաև ասանամային միջադեպերի նվազմանը: Այս հարցում հայկական կողմն իր պարտականությունները հստակորեն պահպանում է և երբեք ոչ մի դիտողություն չի ստացել անօրինական կամ սխալ գործողությունների համար: Բոլոր այս միջոցառումները և քայլերը նպաստակ ունեն հայկական բանակի արդիականացումը և միջազգային չափանիշների ներդրում: Արդիականացման այս փուլը կարևոր է նրանով, որ բանակը դառնում է ավելի փոքր, մոբիլ և արագաշարժ: Մենք այդ հարցին դեռ կանդիդատանք:

2.7. Համագործակցությունը Չինաստանի ու հարևան պետությունների հետ

ՀՀ պաշտպանության նախարարությունն ակտիվ համագործակցում է Չինաստանի ռազմական գերատեսչության հետ՝ հատկապես կրթության բնագավառում, որի շրջանակներում ՀՀ ԶՈՒ զինծառայողները վերապատրաստվում են ՉՉԺ ռազմատուսմնական հաստատություններում: Նշանակալի դեր է խաղում նաև նյութատեխնիկական համագործակցությունը, որի միջոցով ՀՀ պաշտպանության նախարարությունը համալրվում է ժամանակակից փոխարյամիջոցներով, համակարգչային տեխնիկայով և բժշկական սարքավորումներով:

Հայաստանը ռազմական ոլորտում երկկողմ հարաբերություններ է զարգացնում նաև հարևան ու ավանդական բարեկամ երկրների՝ Իրանի և Վրաստանի հետ: Պաշտպանության և անվտանգության ոլորտում տարածաշրջանային բնույթի փոխադարձ կարևորվող

³³² ՀՀ ՊՆ Պաշտպանական քաղաքականության վարչության քաղվածք:

հարցերի շուրջ ակտիվ շփումներն Իրանի հետ իրականացվում են 1990-թվականներից սկսած: Տեղի են ունենում տարբեր մակարդակի փոխայցելություններ և քննարկումներ: Ստորագրվել են համազոր-ծակցության մասին փոխըմբռնման հուշագրեր: Երկու երկրները հետամուտ են համագործակցություն զարգացնել պարսկերենի ուսումնասիրման, քիլոմետրային ապահովման, հումանիտար ակամագերծման, զինված ուժերի սցիալական ու ռազմական բժշկության բնագավառներում: Վերջին շրջանում պաշտպանության ոլորտում ակտիվացել են նաև հարաբերությունները Վրաստանի հետ, հարաբերություններ, որոնք աշխարհագրական տեսանկյունից փոխշահավետ են և բխում են երկու երկրների ռազմավարական շահերից: Հայ-վրացական հարաբերությունները կարևոր են ոչ միայն մեր երկու երկրների համար, այլև ակնառու են հայրավկովկասյան տարածաշրջանային անվտանգության արդյունավետ ճարտարապետության ձևավորման տեսանկյունից: 2011 թ. սկիզբ դրվեց երկու երկրների պաշտպանական գերատեսչությունների միջև ամենամյա երկկողմ համագործակցության պլանների իրականացմանը, որոնք սեվեղված են ռազմական կրթության և ուսման, խաղաղապահ կարողությունների զարգացման և պաշտպանական բարեփոխումների՝ այլ ոլորտներում գործնական լավագույն փորձի փոխանակմանը: Չինաստանը ևս օրեցօր ավելի կատարելագործելով իր բանակը մեզ համար չափազանց կարևոր նշանակություն է ձեռք բերում: Բազմաբևեռ ռազմական համագործակցությունը մեր բանակի բարեփոխումների համար չափազանց կարևոր է:

3.ԱԳՐԲԵՋԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՆԱԶԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Արդեջանը հայաստացության դրսևորման հարցում հիմնական շեշտը դրել է տոտալ պատերազմ վարելու ռազմավարության վրա: Այսինքն՝ պատերազմ, որը միաժամանակ մղվում է տեղեկատվական, դիվանագիտական, ռազմական և այլ ոլորտներում: Պատերազմի հաջողության գրավականը, ըստ արդեջանական ռազմաքաղաքական դեկլարության, ամխաջրամնային պաշարներից ստացվող շահույթներն են: Մարտական լայնածավալ գործողությունների վերսկսումը, ամենայն հավանականությամբ, կարճատև կլինի, սակայն պատերազմը դիտարկում ենք ընդհանուր համատեքստում՝ բոլոր գործողությունների ընդհանրացումով:

Հայ-արդեջանական հարաբերություններում ամեն ինչ, կարծես, շատ նման է խորհրդաամերիկյան սաղը պատերազմին: Եվ այս համատեքստում Արդեջանը մեծ տեմպերով ավելացնում է սպառազինությունը և ռազմական բյուջեն: Տարբեր երկրներից ակտիվորեն ներկրվում են տարատեսակ զինատեսակներ: 2004-2007 թթ. Արդեջանը միայն Ուկրաինայից ներկրել է 80.000 միավոր զենք³³³: 2007 թ. մինչ օրս այդ մատակարարումները տարբեր գնահատականներով լազմակի մեծացել են: 2003-2008 թթ. Արդեջանի հիմնական մատակարարները եղել են Ուկրաինան (364 մլն դոլար), Ռուսաստանը (128 մլն դոլար) և Վրաստանը (108 մլն դոլար)³³⁴: 2010 թ. տվյալներով մատակարար երկրների ցուցակը ևս չի փոխվել. միայն ավելացել են ծավալները և փոխվել են տեղերը: Այս հարցում ՌԴ-ն չի ցանկանում

³³³ Holtom P., Ukrainian Exports of Small Arms and Light Weapons, 2004-2007, SIPRI Background Paper, October 2008, p. 2

³³⁴ SIPRI Trend Indicator Values of arms imports to Armenia, Azerbaijan, Georgia, 1991-2008, Generated: 21 February 2010 - http://www.sipri.org/contents/armstrad/output_types_TIV.html

համակերպվել իր երկրորդ դերի հետ: Միայն վերջին «Մի-35Մ», «Մի-17» ուղղաթիռների և «С-300 ПМУ-2» ՋՀՀ-ի ռուսական մատակարարումների ծավալները կազմում են մոտ 1-1.5 մլրդ դոլար: Իսկ վերջին 5 տարում միայն ՌԴ-ից իրականացված զինատեսակների գնումների գումարային արժեքն ավելի քան 4 մլրդ դոլար է: Քննարկվում են նաև այլ ձեռքբերումներ: 2013 թ. աղբյուրաչափով ռազմական բյուջեն կազմում էր 3.7 մլրդ դոլար, որը պահպանվեց նաև 2014 թ.: Աղբյուրաչափով ղեկավարության հայտարարության համաձայն՝ 2015 թ. այն կազմելու է մոտ 4.8 մլրդ դոլար: Աղբյուրաչափով ռազմական բյուջեի ավելացումն ունի կոնկրետ հասցե. ստեղծվել է ռազմական արդյունաբերության նախարարություն: Այդ գերատեսչությունն արդեն ունի մի քանի տասնյակ ձեռնարկություններ և արտադրում է մոտ 700 անուն ապրանք: Աղբյուրաչափով թուրքական, իսրայելական և այլ երկրների ռազմարդյունաբերական ընկերություններն հետ կնքում է ապառազինությունների գնման, արդիականացման, նաև համատեղ արտադրության պայմանագրեր³⁵⁵: Իհարկե, նման ծավալների ծախսերը չեն կարող որոշակի մտահոգություն չառաջացնել: Դա գերազանակամացում է, որը նույնիսկ ամենավառ որակի դեպքում անգամ վտանգներ ունի:

Աղբյուրաչափով ՋՌ-ն լավ սպառազինված մոտ 120.000-ը քանակ է, որը բաժանված է մեկտեղված ցամաքային զորքերի, օդուժի և հակաօդային զորքերի ու ծովուժի: Ցամաքային զորքերը քանակապես ամենամեծն են՝ ավելի քան 70.000, չնայած պաշտոնապես դրանց բվարամակը կազմում է մոտ 55.000: Այս գորատեսակը իր մեջ ներառում է նաև այլ գորատեսակներ՝ մոտոհրաձգային, հրետանային, ինժեներական, զրահատանկային և այլն:

³⁵⁵ Հովսեփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմարդյունաբերությունը, Եր., 2010, էջ 144-150:


ՄՐՄՄՄՄ ՆԱԿԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՅՆ ԻՆՏԵՐՆԱԿՆԵՐԻ ՆԱԿԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԶԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲԱՐՈՎՈՐՈՒՄԸ




Այն բաժանված է չորս առանձին բանակային կորպուսների, որոնց կազմում կան մոտոհրաձգային 25 բրիգադ, մեկ առանձին դաշտային բանակի, հրետանային չորս առանձին, մեկ առանձին տանկային, մեկ օդադեսանտային բրիգադների, չորս առանձին լեռնահրաձգային զնդերի, երկու հակատանկային հրետանային զնդերի: Ըստ էության, կորպուսներից զատ, այս զնդերն ու բրիգադները պատիտային օպերատիվ և ռազմավարական ուժեր են, քանի որ կորպուսներն իրենց կազմում ունեն համապատասխան միջոցների բավարար քանակ: ՅՁ-ի ընդհանուր կառուցվածքը հետևյալն է.


Բրիգադային հիմնական միավորները կազմված են 5-6 գունարտակներից, տանկային և հրետանային գունարտակ-դիվիզիոններից: Բացի այդ, ըստ արևմտյան չափանիշների՝ դրանց կազմում պետք է գործի նաև մեկական ուղղաթիռային էսկադրիլիա: Բրիգադներն ունեն 700 բվով համարակալումներ՝ 701, 702, 740 և այլն: Սպա-

ռազմության պակասի և տեսականորեն առանձնահատկությունների պատճառով գումարտակները արևմտյան հստակ կառուցվածք և բաժանում չունեն: Կան նաև այլ պատճառներ:



Արդիջամական բանակի ՅՋ-երի մոտոհրաձգային և հրաձգային ջոկերի, դասակների և վաշտերի կառուցվածքը տեսնա ստորև բերվող համապատասխան գծանկարներում:





Ադրբեջանական բանակի օդուժը և ՀՕՊ զորքերը բավական լավ սպառազինված են, աչքի են ընկնում զենքերի մեծ տեսականիով: Դրանք առանձին կանդրադառնանք: Ծովուժը հիմնականում նախատեսված է ափամերձ գործողությունների համար՝ չնայած տարեցտարի դրանք լավ սպառազինվում են և Ադրբեջանի բարձր

մակարդակի ռազմականացման մեջ լուրջ տեղ են զբաղեցնում: Անգամ օդուժի և ՀՕՊ-ի շատ ստորաբաժանումներ իրականում նախատեսված են ծովուժի թատերաբեմում գործելու համար: Ներկայումս Ադրբեջանական ծովուժի կազմում կա մարտական մոտ 40 նավ ու նավակ, որոնք գերազանցապես վերջրյա են:

3.1. Սպառազինման ընդհանուր քայլերը և ծրագրերը

Ադրբեջանական բանակի սպառազինության արդիականացման և դրա ձեռքբերման գործում հետաքրքիր նախագծեր կան, որոնք հանգամանակից վերլուծության կարիք ունեն: Հրադադարի հաստատումից ի վեր՝ Ադրբեջանը տեղագրված զինվում է՝ ավելացնելով ներդրումներ իր տեխնիկայի և՛ քանակը, և՛ տեսականին: Ուշագրավ են հատկապես հարձակողական տարատեսակ միջոցների, ԱթՍ-երի ձեռքբերումը, որոշ զինատեսակների արտադրության հիմնումը:

Նախկինում Իսրայելից ձեռք բերվեցին «Aeronautics Defense Systems Ltd.» ընկերության «Orbiter» և «Aerostar» ԱթՍ-ներ, որոնք բազմիցս կիրառվել են շփման գոտում: Ադրբեջանը իսրայելական ընկերությունների հետ ցանկանում էր նաև արտադրել սովորական ու մարտական ԱթՍ-ներ³³⁶: Գործարանն արդեն գործում է, և կարելի է ասել, որ որոշ ժամանակ անց Ադրբեջանական բանակում ԱթՍ-ների քանակը կհասնի մինչև մի քանի հարյուրի: Այդ ԱթՍ-ները ներկայացվեցին 2011թ. հունիսի 26-ի գորահանդեսին: Չի բացառվում, որ աշխատանքը կատարում են իսրայելցի մասնագետները: Պատահական չէ նաև, որ մի քանի օրից Ադրբեջանական մամուլում հայտնվեցին տեղեկություններ այն մասին, որ իրենց քանակը առաջիկա տարիներին կհամալրվի մարտավարական ԱթՍ-ներով, որոնք

³³⁶ Крупнейшая военная компания Израиля открыла представительство в Азербайджане, 06.10.2009. http://www.aze.az/news_krupnecshaya_vocnnyaya_kompan_26137.html.

կարող են անգամ զենք կիրառել, այսինքն՝ մարտական լինեն³³⁷։ Իհարկե, սա հիմնականում քարոզական ակցիա է, սակայն չեն բացառվում նաև այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները։ Մարտական ԱԹՄ ստեղծելը դուրսից գործ չէ։ Աշխարհում մոտ 100 պետություն զբաղվում է ԱԹՄ-ների ստեղծման աշխատանքով, սակայն լիարժեք մարտական ԱԹՄ-ներ ներկայումս արտադրում են միայն ԱՄՆ-ն ու Իսրայելը։

Բացի այդ, նման սարքերի ձեռքբերման համար պայմանագիր է կնքվել թուրքական «TAI» (Turkish Aerospace Industries, Inc) ընկերության հետ, որը ստեղծում է «Turna» ԱԹՄ-ները։ Ավելին՝ աղբյուրների սպաները Թուրքիայում մասնագիտական պատրաստություն են անցնում «Turna» սարքերը ղեկավարելու համար։ Իհարկե, թուրքական արտադրության ԱԹՄ-ները որակական չափանիշներով չեն կարող համեմատվել իսրայելականների հետ, բայց դրանք հարկ եղած դեպքում ևս կարող են օգտագործվել որպես մարտական-հարվածային միջոցներ։ Իհարկե, աղբյուրական քարոզամեթոդներով թողարկված հեղուկամեթոդների մեծ փորձ ունի, սակայն մի քանի տասնյակ ԱԹՄ-ների գրագետ և ճիշտ օգտագործումը կարող է լավ արդյունքներ ապահովել, հատկապես հետախուզության և կրակի կառավարման գործում³³⁸։ Բայց նաև նկատի ունենանք, որ թուրքական կողմը ևս ԱԹՄ-ների հետ լուրջ խնդիր ունի։ Իսրայելական համանման սարքերը տարբեր՝ այդ թվում՝ թուրքական զինծառայողների «բարձր մասնագիտական պատրաստության» պատճառներով կորցնելուց հետո, փորձ արվեց կիրառել սեփական արտադրության մեքենաներ, սակայն ինչպես պարզվում է՝ զինվորականները մնացել

են առանց համապատասխան հետախուզական միջոցների³³⁹։ Չնայած դրան՝ մատուցում ցուցադրվել են թուրքական նոր, հաջողված «Anka (Փարոս)» ԱԹՄ-ի փորձնական թռիչքները³⁴⁰։ «Anka (Փարոս)»-ն միջին չափի, երկար թռիչքներ կատարող սարք է։

Ի՞նչ ասել է աղբյուրական մարտական ԱԹՄ։ Դա չի լինելու ամերիկյան «RQ-4 Global Hawk», «X-45» կամ «X-47» մարտական օդային հարթակների նման հզոր միջոց։ Այնուամենայնիվ, այս տեղեկությունը պետք է որոշակիորեն զգաստացնի Հայաստանի զինուժին։ Նախ պարզենք՝ ի՞նչ է աղբյուրական սովորական, հետախուզական ԱԹՄ-ն։

Աղբյուրական հետախուզական ԱԹՄ-ները հայկական տարածքներում թռիչքներ կատարել են³⁴¹։ Իհարկե, եղան այս իրողությունը հաստատող և հերքող բազում տեղեկություններ, սակայն մասնագետները լավ են հասկանում, որ դա միանգամայն հնարավոր է։ Մեպտեմբերի 12-ի աղբյուրական ԱԹՄ-ի խցումից հետո հայկական կողմը ևս խոստովանեց այդ փաստը։ Աշխարհում վաղուց են կիրառվում ԱԹՄ-ներ, և բազմիցս պայացուցվել է, որ ավանդական, հին զենիթային միջոցներով դրանց դեմ պայքարելն արդյունավետ չէ։ 1960-ական թվականներից բազում փորձեր են կատարվել այդ ուղղությամբ, և արդյունքները գաղտնիք չեն³⁴²։ Օսեթիայում և Աբխազիայում եղած դեպքերն ապացուցեցին, որ ԱԹՄ-ների դեմ պայքարը պահանջում է հրթիռազենիթային լուրջ պատրաստվածություն։ Չե-

³³⁷ В инвентарь ВС Азербайджана будут включены вооруженные тактические беспилотные летательные аппараты. <http://ru.ara.az/news.php?id=202577>

³³⁸ Այս մասին մանրամասն տես՝ Հովհաննիսյան Ա., Օդային զինակառույցում, Եր., 2010։

³³⁹ В вопросе беспилотников не везет не только Азербайджану, но и Турции. 16/09/2011. <http://www.panorama.am/ru/region/2011/09/16/azerbayjan-turcey/>

³⁴⁰ З. Гельман "Анка" - в воздухе!. Турецкий беспилотник встает на крыло. 2010-08-27. http://nvo.ng.ru/armament/2010-08-27/12_anka.html

³⁴¹ Над Арменией и Карабахом летают азербайджанские беспилотники?, 09.09.2010. <http://www.regnum.ru/news/polit/1323621.html>

³⁴² Այս մասին մանրամասն տես՝ Հովհաննիսյան Ա. Կ., «Մի քանի հարցեր ավիացիայից», Եր., 2009.

միթային որոշ փոքր համալիրներ երբեմն անգոր են, իսկ մեծերը, որոնք կարող են խոցել, բանկարծեք են³⁴³:

Փաստորեն, աղբրեջանական ռազմաքաղաքական ղեկավարությունը, յուրացնելով սովորական ԱԹՄ-ների հնարավորությունները, առանց ժամանակ կորցնելու ցանկանում է ունենալ մաս մարտական ԱԹՄ-ներ, որոնք հնարավորություններն անհամեմատ մեծ են: Իհարկե, հայտնի չէ, թե արդյոք նախկին ԱԹՄ-ներն ունեն այն բոլոր հնարավորությունները, որոնք ունեն պատերազմներում լայնորեն կիրառվող ամերիկյան, իսրայելական համանման սարքերը: Խոսքը, անշուշտ, հետախուզության տարրեր ձևերի, այլ համակարգերի հետ համագործակցության հնարավորությունների, տարատեսակ ինքնաբիծների, հրետանային համակարգերի մասին է: Եթե նույնիսկ աղբրեջանական ԱԹՄ-ները հստակ ինտեգրված չեն այդ համակարգերին, ապա տվյալ դեպքում դա մեծ բան չի փոխում: Այդ ամենը ընդամենը ժամանակի հարց է: Այս գործընթացն աշխարհում ունեցել է ավանդական զարգացում: ԱԹՄ-ները նախ կատարել են սովորական հետախուզություն, հետո հետախուզություն են կատարել որոշակի համակարգի մեջ, այսինքն՝ միաժամանակ օգնել են այլ միջոցների: Դրանք կարող են լինել հարվածային որոշակի համալիրներ՝ կասի, ռադիոպայթարի և այլն: Այնուհետև անցել են հաջորդ փուլ, երբ են հարվածային միջոցների մի մասնիկը կամ հենց միջոցը, այսինքն՝ հետախուզակահարվածային միջոցը: Դրանից ավելի առաջ գնալը Աղբրեջանի համար դեռ շատ վաղ է:

Մարտական ԱԹՄ-ների ունենալու դեպքում Աղբրեջանը կստանա բավական հզոր միջոցներ, որոնք դեմ պայքարելն այլ մակարդակի խնդիր է: Նույնիսկ թուրքական «Tuma» ԱԹՄ-ները բավականին լուրջ միջոցներ են հարվածներ հասցնելու համար: Մի քանի տարի հետո Աղբրեջանը կարող է ունենալ 50-100 միավոր մարտա-

կան ԱԹՄ, որոնք իրականում կլինեն օպերատիվ-մարտավարական խոտորյան վրա գործող ԹՀ-եր: Անգամ թուրքական վերը նշված ԱԹՄ-ները կարող են հարվածներ հասցնել մինչև 50-100 կմ խորության վրա: Թռչող սովորական հարվածային սարքերին խոցելու համար ՉՀՀ-ն ծախսում է 3-5 հրթիռ, այն էլ հարաբերական բարենդր-պատս վիճակում ունենալով հակազդեցության մինչև 10 վայրկյան ժամանակ: Նման հակազդեցություն ունեցող համալիրները բացառիկ են: ՀՀ ՀՕՊ համակարգը բավական զարգացած է տարածաշրջանում, սակայն ապագա մարտահրավերների համար հարկավոր է ձեռք քերել հիմնականում փոքր, մեկ մեքենայի վրա տեղակայված, մակազգային հակազդեցության ժամանակ ունեցող համալիրներ: Այս բոլոր միջոցառումները պահանջում են խնդրի համակողմանի և խոր վերլուծություն:

Հայտնի է, որ աղբրեջանական ռազմաարդյունաբերությունը մտադիր է կոնկրետ ավիաարդյունաբերության զարգացումը սկսել ԱԹՄ-ներից: Երագրվում է այդ նույն ավիագործարանում արտադրել ավստրիական «Diamond DA-42» փոքր ինքնաթիռ, ինչը, քնակամարար, հետաքրքիր միջոց է ավիաարդյունաբերության զարգացման տեսանկյունից:

Այս զարգացումների կողքին աղբրեջանական սպառազինման գործընթացի մեջ կան, այսպես ասած, մաս զավեշտալի դրվագներ, որոնք ռազմական պլանավորման և նախապատրաստման ոչ մի տրամաբանության մեջ չեն տեղավորվում: Աղբրեջանը շարունակում է ակտիվորեն գնել այս կամ այն երկրների արտադրած բազմազան զենքերի տարատեսակ մոտոցներ, սակայն երբեմն այդ ձեռքբերումները անկանոն են և անիմն: Այսպես, աղբրեջանական բանակի ստորաբաժանումներում արդեն կիրառվում են մի քանի տեսակի և զանազան երկրների արտադրության իրաճգային զենքեր: Տարբեր ստորաբաժանումներ կիրառում են խորհրդային, ամերիկյան, գերմանական, իսրայելական և այլ երկրների արտադրության զենքեր

³⁴³ Лунёв А., Ращепкин К., «Красная звезда». 2 Декабря 2008 года, http://www.redstar.ru/2008/12/02_12/1_03.html

(«TAR-21»³⁴⁴, «MP5», «HK G3»³⁴⁵, «Remington 700», «JNG 90 Bora» և այլն): Մամուլում հաղորդում կա այն մասին, որ Բաքում բանակցություններ է վարում չեխական «Česka Zbrojovka» ընկերության հետ «Scorpion EV03 A1» տեսակի ատրճանակ-զնդացիոնրն գնելու համար: Իսկ ամենագավիչտալին այն է, որ ավանդական «Կալաշնիկովի» ինքնաձիգն Ադրբեջանում արտադրելիս այլ անուն է ստանում՝ «Հազրի»: Մամուլում հանդիպում են աղտոտ տեղեկություններ այն մասին, որ Ադրբեջանը արտադրում է «Շիշմեկ» կոչված գրոհային հրացան, «Խազրի» ինքնաձիգ, «Չաֆար» և «Ինամ» ատրճանակներ³⁴⁶: Ի դեպ, գրոհային հրացանն ու ինքնաձիգը նույն գեների արևմտյան և խորհրդային տեսակավորումն են: Նման զանազան բառեր կիրառում են հիմնականում ոչ մասնագետները կամ հատուկ խճճելու նպատակով:

Հայտնի իրողություն է, որ մեր հարևանը տարբեր ժամանակներում ձևեր է բերել գերմանական, թուրքական, իսրայելական, անգլիական, ռուսական զրահամեքենաներ ու տրանսպորտային տարատեսակ միջոցներ: 2010 թ. հաստատվեցին այն տեղեկությունները, որ ադրբեջանական նորաստեղծ ռազմաարյունաբերության նախարարությունը հարավաֆրիկյան «Paramount Group» ընկերության հետ դեռ 2007 թ.-ից աշխատանքներ է կատարում երկու տեսակի զրահամեքենաների՝ «Marauder APC»-ն և «Matador»-ի արտադրության ուղղությամբ: Վերջինը ստեղծվել էր հարավաֆրիկյան ընկերության և իսրայելական «Middle East Defence Systems (MDS)» ընկերության հետ համատեղ: Այս մեքենաների արտադրությունն Ադր-

բեջանում կազմակերպելը բխում էր երկկողմ շահերից: Մեքենաները շատ ընդհանրություններ ունեն. մասի՝ նրանց շարժիչները նույնն են, սպա մակ ընթացային մասում կան նույն հիմքը կազմող բաղկամասեր: Մեքենաների արտադրության և դրանց մատակարարման մասին տարբեր տեղեկություններ են շրջանառվում: Սկզբում մի փոքր խմբաքանակ էր առաքվել Ադրբեջան, որի հիմքի վրա էլ, հավանաբար, կատարվել են ուսումնասիրությունները և կազմակերպվել է արտադրությունը: 2009 թ. «Paramount Group»-ն առաքել էր 10 միավոր «Marauder»: Նույն տարում Հարավաֆրիկյան Հանրապետությունից ընդհանուր ռազմական մատակարարումները անցնում էին 22 մլն դոլարը³⁴⁷: Այժմ մեքենաների քանակի մասին տեղեկությունները սահմանափակ են: Հայտնի է միայն, որ դրանց արտահանման հնարավորություններն այնքան էլ մեծ չեն: Վերջերս էլ պարզ դարձավ, որ այս ծրագիրն ընդհանրապես տեղից չի շարժվել:

Ադրբեջանական բանակում կան մակ թուրքական արտադրության «Otokar Cobra» զրահամեքենաներ, որոնք բավական տարածված են աշխարհում: 1997 թ. արտադրվող այս մեքենան մասնակցել է մակ 2008 թ. օգոստոսյան պատերազմին, արձագանքները հակասական են: Դրանց քանակը ևս ստույգ հայտնի չէ: 2011 թ. Բաքվում կայացած զրահամոնիտին այս մեքենաների սահմանափակ քանակ մասնակցեց, որից հետո նորից տեղեկություններ հայտնվեցին դրանց առաքման մասին³⁴⁸:

Ռուսական «Рособоронэкспорт» ընկերությունն Ադրբեջանին առաջարկել է իր առարձքում «Tigr» զրահամեքենաների արտոնագրված արտադրություն սկսել: Այդ մասին ԱՐՄՄ-ՏԱՄՄ-ին հայտնել է Ադրբեջանի ռազմական արդյունաբերության նախարարի

³⁴⁴ Shahin Abbasov, Azerbaijan Mum about Israeli Spy Plane, Satellite Projects. EurasiaNet.org (2009-08-16). Проверено 26 августа 2010.

³⁴⁵ The Military Balance 2007 / C. Langton. — London: Routledge / The International Institute for Strategic Studies, 2007. - p. 157.

³⁴⁶ Явер Джамалов: «В этом году Азербайджан начал серийный выпуск нескольких образцов оружия», 16 декабря 2009, http://news.life.az/2009/12/16/javer_dzhamalov_v_je_tom_godu_azerbajidzhan_n_achal_serijinyj_vypusk_neskolnikh_obrazcov_oruzhija.html

³⁴⁷ Հարավաֆրիկյան հանրապետությունը 17,5 մլն դոլարի սպառափնություն է տվել Ադրբեջանին, Ապրիլ 27, 2011, <http://news.am/arm/news/57162.html>

³⁴⁸ Թուրքական ընկերությունը Ադրբեջանին զրահափոխադրիչներ է մատակարարել Հուլիս 02, 2011, <http://news.am/arm/news/65452.html>

օգնական Ազադ Մամեդովը՝ սպառազինությունների և ռազմական տեխնիկայի Աբու-Գարիբում տեղի ունեցած «IDEX-2011» 10-րդ ցուցահանդեսի ժամանակ:

«Trend» գործակալության տեղեկություններով՝ Ադրբեջանը և Թուրքիան ռեակտիվ հրթիռներ համատեղ արտադրելու մասին համաձայնագիր են ստորագրել: Աբու Գարիբի նշված ցուցահանդեսի շրջանակներում Ադրբեջանի ռազմական արդյունաբերության նախարար Յավեր Ջանալովը Թուրքիայի պաշտպանության նախարար Վեյսի Գյոնուլի հետ համապատասխան պայմանագիր է կնքել: Դեռ 2009 թ. թուրքական «Roketsan» և ադրբեջանական «Iqlim» ընկերությունների միջև համագործակցության պայմանագիր է կնքվել: Ըստ պայմանագրի՝ նախատեսվում է համատեղ արտադրել համագործակցող կրակի ռեակտիվ համակարգեր (ՀԿՌՀ) 107 և 122 մմ-ոց հրթիռներ:

Այս մասին 2014 թ. դեռ խոսակցություններ կային պլանների և նվազագույն գործի մակարդակում:

Թուրքական վերը նշված ընկերությունը վաղուց մասնագիտացել է արևմտյան և խորհրդային այդ տրամաչափերի շնչեկավարվող հրթիռների արտադրության գործում⁵⁴⁹: Ընկերությունը ստեղծվել է 1988 թ. և հիմնականում հրթիռների արտադրության գործում համագործակցում է արտասահմանյան 140 ընկերությունների հետ: Ըստ վերը նշված պայմանագրի՝ հրթիռների որոշ բաղկամասեր պատրաստի կառավարվեն Թուրքիայից, մնացածը կարտադրվի տեղում՝ համատեղ: Այս ընկերությունը նշված հրթիռների հեռահարությունն ավելացրել է: 107 և 122 մմ-ոց հրթիռների համար կարտադրվեն նաև համապատասխան արձակված կայաններ, այդ մասին պայմանագիրը կնքվել է 2011 թ.: 2014 թ. այս հարցում ևս գործերը շատ դանդաղ են առաջ ընթանում: «TR-107» և «TRB-107» հրթիռների հեռա-

հարությունը հասցվել է 11 կմ-ի, իսկ «TRB-122» հրթիռներն արդեն ունեն 40 կմ հեռահարություն, կան նաև պակաս հեռահարության հրթիռներ:

Վերը հիշատակված թուրքական ընկերությունը վաղուց խորհրդային «ԵՄ-21» մեքենայի բազում կրճատներին մեկի կիսան վրա ստեղծել էր «T-122 Sakarya» ՀԿՌՀ-ն: 107 մմ-ոց մնան առանձին համալիր Թուրքիայում չի ստեղծվել, սա Արևմուտքում 1950-ականներին լավ տարածված տրամաչափ է, որի համար ստեղծվել էին արձակված բազում կայաններ: Այսօր այն, սակայն, մերժված սրամաչափ է:

Ադրբեջանն իր քանակի համար կամենում է ձեռք բերել չինական հրթիռներ: Թե ինչ տեսակի, դեռ պարզ չէ, սակայն չինական կողմի հետ բանակցություններ են ընթանում: Խոսքը մարտավարական հրթիռների մասին է, սակայն այստեղ ևս ինչ-որ անկանոն բան է ստացվում: Հարցն այն է, որ ադրբեջանական բանակում մարտավարական հրթիռներ արդեն կան. դրանք խորհրդային հայտնի «Точка-У» (9К79-1) համալիրներն են: Նույն տեսակի չինական հրթիռների տեսակահին բավական մեծ է, սակայն դրանք չեն վայրում մեծ հուսալիությամբ ու արդյունավետությամբ: Նորից ստացվելու է խիստ կասկածելի տվյալներով և հուսալիությամբ հրթիռների բազմազանություն: Հավանաբար, այս մտեցումը խիստ ադրբեջանական է՝ աշխարհի բոլոր ծայրերից ճարել ինչ պատահի, միայն թե շատ լինի, որ հայերը վախենան:

Ջանազան սպառազինությունների համատեղ արտադրության բանակցություններ էին վարվում տարբեր երկրների հետ: Այդ զինամիջոցների թվում ի՞նչ չեն նաև հրթիռային տեխնոլոգիաները: Նշվում էր ուկրաինական հակատանկային «Скиф» և «Барьер» հրթիռների ձեռքբերման, նաև դրանց տեղայնացման մասին⁵⁵⁰: Այս հրթիռները

⁵⁴⁹ Այս մասին մանրամասն տես Հովսեփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմաարդյունաբերությունը, Եր., 2010, էջ 82-90:

⁵⁵⁰ Азербайджан займется производством комплексов «Скиф» и «Барьер», 17.05.2011, <http://313news.net/news/tags/azerbajjan.html>

նոր չեն ստեղծվել, դրանք խորհրդային հին մոտիվների ուլրախնակա- կան տեղայնացումներն են, և ականատեսների հավաստմամբ՝ բա- վական արդյունավետ են, մասնավորապես, գիշերային մարտերում:

Ջենքերի մման բազմազանությամբ են «փայլում» մաս աղբբե- ջանական բանակի մնացած զորատեսակները և, մասնավորապես, ՌՕՌ-ն: Աղբբեջանի զինված ուժերում արդեն առկա հրաձգային շատ զենքեր սմվում են ՆԱՏՕ-ական չափանիշների զնդակներով, այն դեպքում, երբ զենքերի զերակշիռ մասը դեռ խորհրդային փամ- փուշումեր է կիրառում: Աղբբեջանի մման ոչ մեծ երկրի համար զեն- քերի մման բազմազանությունը ոչ մի դրական ներգործություն չի կարող ունենալ, այլև խնդիրը հատկապես ծանրանում է աղբբեջա- նական ՋՌ-ի զինվորների համար մման բազմազան տեսակների յորացմամբ:

3.2. Ռազմաարդյունաբերության ձեռքբերումները

Ա. Դիպուկահար հրացան

Աերջբն աղբբեջանը շատ է գովազդում իր ռազմաարդյունա- բերակալ ձեռքբերումները, որոնք երբեմն ներկայացվում են որպես ցնցող նորություններ: Տեսներք՝ այդ ոլորտում իրականում ինչ ձեռք- բերումներ ունեն մեր հարևանները, որի վրա հսկայական միջոցներ են ծախսում:

Նախ, անդրադառնանք մեծ աղմուկ հանած «İstiqlal (İST-14,5 Anti-Material Rifle)» դիպուկահար հրացանին: Այն պատկանում է մեծ տրամաչափի դիպուկահարների դասին: Սակայն պարզվում է, որ նույն անունը կրող և ենթատարբերակներ համարվող տարբեր հրացաններ կան: Հայտնի է, որ նշված հրացանի տարատեսակնե- րից մեկը կան հիմնականը կիրառում է խորհրդային/ռուսական 14,5X114 մմ փամփուշումներ: Ըստ աղբբեջանական տվյալների՝ այդ

դիպուկահար հրացանն ունի մարտավարատեսնիկական հետևյալ բնութագիրը³⁵¹.

Ջենքի երկարությունը՝ 2015 մմ,
Փողի երկարությունը՝ 1220 մմ,
Քաշը՝ 20-29 կգ, վերջինը լրակազմով,
Կրակի արդյունավետ հետադորությունը՝ 3000 մ,
Ջենքը կիսաավտոմատ է, ինքնալիցքավորող,
Պահեստատուփը՝ 3 կամ 10 փամփուշտի համար,
Ունի 8 անգամ մոտեցնող օպտիկական նշանոց:

Առաջին հայացքից, իհարկե, վատ տվյալներ չեն, սակայն փորձենք դիտարկել դրանք: Աշխարհում շատ են մեծ տրամաչափի դիպուկահար հրացանները, սակայն տվյալ տրամաչափն անգամ Ռուսաստանում ընդունված չէ որպես դիպուկահար զենք: Աշխար- հում առավել հայտնի մոտ 30 մեծ տրամաչափի դիպուկահար հրա- ցաններից 5-ից էլ քիչ են 14,5 և ավելի մեծ տրամաչափի զենքերը: Դրանք իրենց հեղինակությամբ ցուցակի վերջին տեղերում են: 14,5 մմ-ոց փամփուշումերը, ճիշտ է, շատ հզոր են և այդ առումով զրահա- պատ տեսնիկայի դեմ կիրառելու համար՝ բավականին հարմար, սակայն դրանք չունեն հատուկ դիպուկահարների համար մախա- տեղած զնդակներ կամ արկեր: Այսինքն՝ այս փամփուշումների միակ առավելությունը հզորությունն է: Մոտ 60 զրամանոց արկը, փո- դից դուրս գալով մոտ 1000 մ/վ արագությամբ, ունի մոտ 30.000 Ջոուլ էներգիա³⁵²: Համեմատության համար ասենք, որ 12,7X108 մմ-ոց խորհրդային փամփուշումներն ունեն մոտ 50 զրամանոց արկ և մոտ

³⁵¹ 12 октября 2009 г. Оружие России, В Азербайджане будут производить новую винтовку «Истиглал», <http://www.arms-expo.ru/049057052048124049049052053049.html>

³⁵² Секулич М. Снайперская стрельба. Москва. 2003, стр. 181.

16 000 ֆուտ Լենթզիա³⁵³: Այստեղ բնական հարց է առաջանում, եթե այս փամփուշտներն այդքան հզոր են, ապա ինչու դրանցով դիպուկահար հրացաններ գրեթե չկան կամ շատ քիչ են: Խնդիրը հենց դա է, որ հզոր փամփուշտով կրակելը շատ դժվար է: Հետհարված, ցնցում, դիպուկության կորուստ, այն դեպքում, երբ մեծ տրամաչափը որոշակի սահմանից հետո արդեն անիմաստ է, քանի որ ցրումն այնքան է մեծանում, որ դիպուկ կրակի մասին խոսելն ավելորդ է: Այդ հեռավորությունը կազմում է միջինը 1200-1500 մ:

Տեղեկանք. Մեծ տրամաչափի դիպուկահար հրացաններով միջին արդյունքը կազմում է 1200-1500 մ: Աշխարհում հեռահարության ռեկորդ սահմանած դիպուկահարները (Ա.Պերրի-2310 մ, Ռ. Ֆառլոնգ-2450 մ) օգտագործել են ամերիկյան 12,7 մմ-ոց «McMillan TAC-50» հրացաններ: Վերջին ռեկորդը (2477 մ) սահմանել է անգլիացի դիպուկահար Քրեյգ Հարրիսոնը՝ «L115A3» հրացանով, որն ունի 8,59 մմ-ոց հատուկ տրամաչափ: Այս և ավելի ճշգրիտ կրակ ապահովող «CheyTac» համակարգերը բաղադրված են հաշվարկելիների և ավելի քան 15-25 անգամ մոտեցնող օպտիկական նշանոցների շնորհիվ կարողանում են կրակել լավագույն դեպքում 2500 մ: Ահա, թե ինչու են կասկածելի աղբյուրանական դիպուկահար հրացանի տվյալները և նշանակությունը:

Եթե մարդուն 1500-2000 մ հեռավորության վրա մեծ գնեցով հնարավոր չէ խոցել, ապա դիպուկահարի ստեղծման իմաստը ո՞րն է: Իհարկե, զենքի տվյալների մեջ գրված է, որ այն մախատեսված է մահա զրահապատ տեխնիկայի և այլ նշանակետերի խոցման համար: Բնական է, որ մեծան հեռավորության վրա զրահապատ մեքենան չափերով մեծ է և դիպչելու հավանականությունն էլ մեծանում է, չնայած այդպիսի հեռավորության վրա զրահապատ որոշ մեքենա-

ներ և անհնարին է խոցել: Ինչպես ոճանք էին կատակում, այդ փամփուշտներով այդ հեռավորության վրա կարելի է խոցել միայն փոքրիկ տնակներ: Սակայն մեծ տրամաչափի փամփուշտներով մեծան նշանակետ խոցելու համար բավական են մահ գնդացիները, որոնք անգամ ավելի մեծ հավանականությամբ կարող են խոցել այլ մույն մեքենաները՝ հաշվի առնելով դրանց արագաձգությունը և այլ հատկանիշներ: Այստեղ, իհարկե, հարց կարող է առաջանալ, որ մեծան գնդացիներն ավելի մեծ և ծանր են, սակայն արի ու տես, որ ոչ: КГВ գնդացիքն առանց մեծ մարտապաշարի մեծ քաշ չունի: Բացի այդ մեծան խնդիրների համար շատ երկրներ գնում են սահմանափակ քանակությամբ արդեն իրենց արդարացրած հրացաններ:

Ահա մահ այն պատճառները, թե ինչու մեծան տրամաչափի դիպուկահարները մեծ տարածում չունեն, իսկ գնողներն էլ, քանի որ կիրառելու են սահմանափակ քանակով, չեն զբաղվում դրանց ստեղծմամբ: Կան, իհարկե, մահ այլ պատճառներ: Առաջին մեծ տրամաչափի դիպուկահարների կիրառությունը ցույց տվեց, որ դրանց արդյունավետությունն այնքան մեծ չէ սովորական արկերով: Ճիշտ է, շատ երկրներ Աղբյուրանի մեծան շարունակում են սովորական գնդացիների համար նախատեսված արկերի-փամփուշտների համար դիպուկահարներ ստեղծել, անգամ կան էլկոտիկ 20 մմ-ոց մի քանի մոդելներ: Դրանք բոլորն էլ հզոր են, սակայն հենց այստեղ ավարտվում է դրանց առավելությունը: Մեծամասամբ Արևմուտքում արտադրված հզոր դիպուկահարների համար ստեղծվում են հատուկ փամփուշտներ: Դրանք կարող են ինչե՛ն ավանդական տրամաչափի փամփուշտների հատուկ տեսակներ կամ բացառիկ տրամաչափի փամփուշտներ, որոնք, ճիշտ է, թանկ արժեն, սակայն իրենց գործում անփոխարինելի են: Աշխարհի լավագույն դիպուկահարները «CheyTac» համակարգի փամփուշտներով են սնվում, որոնք տրամաչափը չի հասնում 11 մմ-ի: Դրանք մախատեսված են 2000-2500 մ հեռավորության վրա արդյունավետ կրակ վարելու համար: 1500-1500 մ հեռավորության վրա մույնքան հաջողությամբ կիրառվում են ավելի փոքր և հարմար՝ 12,7 մմ-ոց ռուսական կամ ամերիկյան փամփուշտ-

³⁵³ Секулич М. Снайперская стрельба. Москва, 2003, стр. 180.

ները, հենց այդ պատճառով էլ կարիք չկա ստեղծել ավելի հզոր դիպուկահարներ:

Աղբբջանական զենքն ունի 20-29 կգ քաշ, որը մնան զենքերի համար չափազանց մեծ է: Աշխարհի ամենատարածված «M82», «McMillan TAC-50» և այլ դիպուկահարների քաշը չի հասնում անգամ 15 կգ-ի:

Ինչպես նշեցինք, նույն տրամաչափի այլ դիպուկահար հրացաններ ևս կան, որոնք գրեթե բոլորն էլ տարածված չեն: Դրանցից է նաև մոդուլային կառուցվածք ունեցող հարավաֆրիկյան «Mechem NTW-14,5»-ը, որը կարող է նաև կիրառել 20 մմ-ոց փամփուշտներ:

Կարելի է վստահորեն պնդել, որ աղբբջանական դիպուկահարը կառուցվածքով և աշխատանքի հիմնական սկզբունքով խորհրդային գնդացրի և հարավաֆրիկյան համանման այս զենքի ստրուգատ արտագրությունն է: Մամուլում նաև տեղեկություններ կան, որ հրացանի փողը գնվում է Բելառուսից, վերցվում է սովորական «КПВ»-ն: Դրանում կարելի է համոզվել անգամ նկարներից ու չափերից, փողի և փողն ամրացնող համակարգի տեսքն արդեն բավական խոսում է: «КПВ»-ի երկարությունը կազմում է 2000 մմ, իսկ փողի երկարությունը՝ 1346 մմ³⁵⁴: Այդ գնդացիրների փողերը երբեք չեն կարող ապահովել դիպուկահարների պահանջներին համապատասխան բալիստիկա:

«Mechem NTW-14,5»-ի քաշը, երկարությունը և փողի երկարությունը կազմում են նույնքան, որքան աղբբջանական զենքինն է: Չարմանալի համընկնում է, չէ՞ սրանք բազային այն տվյալներն են, որոնք բնութագրում են զենքը:

Արդեն նշեցինք, որ խնդրո առարկա զենքի մասին աղբբջանական տվյալները կեղծիք են, մնան զենքով 3000 մ հեռավորության վրա դիպուկ կրակ վարել հնարավոր չէ: Համեմատության համար ա-

սննք, որ նույն տրամաչափի առաջին դիպուկահար հունգարական «Gepard»-ն՝ ունենալով անգամ ավելի երկար փող՝ 1630 մմ ունի 1000-1500 մ արդյունավետ կրակի հեռավորություն³⁵⁵: Չենքի հեռահարության առաջին գործոններից է երկար փողը, որն ապահովում է արկի մեծ արագություն, հետևաբար, նաև հեռահարություն և դիպուկություն: Նշանակում է՝ «Gepard»-ի 400 մմ-ով ավելի երկար փողն ապահովում է կրկնակի պակաս հեռահարություն: Սա ուղղակի անհեթեթություն է, իսկ բացատրությունը պարզ է՝ աղբբջանական տվյալները կեղծ են: Անգամ «Mechem NTW-14,5»-ի (որից, ինչպես ասվեց, արտագրված է աղբբջանական հրացանը) տվյալներում նշված չէ 3000 մ:

Աղբբջանական զենքի փայլուն մնուշ շիինելու մասին են վկայում նաև տեխնիկական այլ գործոններ: Սովորաբար նույն տրամաչափի և նույն փողի երկարություն ունեցող զենքերի մեջ առավել հեռահար է լինում այն զենքը, որը չունի ինքնալիցքավորում: Ինչպես գիտենք, վերը նշված աղբբջանական զենքը ինքնալիցքավորվող է, այն էլ վատագույն տարբերակով՝ գազամխոցի շնորհիվ: Աշխատող շատ դետալները խանգարում են դիպուկ կրակին, ծանր են և որոշակիորեն նվազեցնում են գազերի ճնշումը: Բարձրակարգ բոլոր դիպուկահարները հիմնականում ինքնալիցքավորում չունեն: Այս ամենից գատ՝ աղբբջանական դիպուկահարն ունի առավելագույն հեռահարության ևս մեկ ասիմանափակում: Ինչպես կարելի է նկատել այդ զենքը բոլոր նկարներից և տեսագրություններից, այն հանդերձված է բելառուսական կամ ռուսական արտադրության «ПОСН 8Х42» տեսակի օպտիկական նշանոցով, որը տեղադրված է զենքի կողքից՝ խորհրդային տիպի զենքերի մնան: Այս նշանոցով հնարավոր է դիպուկ կրակ վարել առավելագույնը 1200 մ հեռավորության վրա, դա հայտնի է բազմակի փորձերից, ինչը կատարել է նաև անմասն դրա հեղինակը: Նման նշանոցը և հարմարեցման համակարգը նաև չի դի-

³⁵⁴ Федосеев С. Самый мощный серийный пулемёт. Военно-промышленный курьер, № 44 (360) за 10 ноября 2010. <http://vprk-news.ru/articles/6931>

³⁵⁵ Секулич М. Снайперская стрельба. Москва. 2003, стр. 124-127.

մանա կրակի մեծ խնայունքին: Իսկ կողքից տեղադրվող նշանոցները բարձրակարգ դիպուկություն չեն կարող ապահովել անգամ 1000-1200 մ հեռավորության վրա: Ուրպես օրինակ նշենք, որ աշխարհում ոչ մի բարձրակարգ դիպուկահար հրացան չունի օպտիկական նշանոցի կողքից տեղադրում, իսկ մոտեցումը կազմում է 12-25 և ավելի անգամներ մեծ հեռավորությունների վրա կրակելու համար:



Վերը նշված հարավաֆրիկյան, հունգարական, խորվաթական և այլ դիպուկահար հրացանները ևս նույն պատճառներով մեծ տարածում չեն գտնում: Այնպես որ ադրբեջանական դիպուկահարը դեռ շատ հեռու է լավը լինելուց և մեանը դառնալու հնարավորություններ զրեթե չունի: Մասնովից մաև հայտնի է, որ այս զենքը նախատեսվում է արտադրել 12,7 մմ-ոց փամփուշտներով կրակելու համար: Իհարկե, դա բավական կմեծացնի հրացանի պահանջարկը, սակայն լավ հրացան դառնալու համար այն արդեն հնարավորություններ չունի: Աշխարհում մի քանի տասնյակ երկրներ այսօր արտադրում են ամենատարբեր դիպուկահար հրացաններ, սակայն իրականում որակյալ զենքեր ոչ բոլորն են կարողանում ստեղծել: Ադրբեջանական խնդրո առարկա դիպուկահարը լայնորեն կիրառվում է այդ երկրի ՋՈՒ-ի կողմից, և պատահական չէ, որ դրանց կրակի արդյունավետությունը

չառ ցածր է: Այս զենքով տարեկան արձակվում են հազարավոր արկեր, սակայն խոցման դեպքերը մատների վրա կարելի է հաշվել: Այս արյույնքն արդեն դիպուկահարային չէ. մեան կերպ, ինչպես ասվեց, կիրառվում են գնդացիները:

ՀՀ ՋՈՒ-ում կիրառվում են 12,7 մմ-ոց «Zastava M93 (Black Arrow)» սերբական դիպուկահար հրացաններ, որոնք չունեն ինքնալիցքավորում, քաշը կազմում է 14,5-16 կգ և նախատեսված են մինչև 1200 հեռավորության վրա դիպուկ կրակ վարելու համար: Օպտիկական նշանոցը տեղադրված է վերևից: Այսինքն՝ իր հիմնական տվյալներով համապատասխանում է իր դասի հրացանների պահանջներին:



Բոլորովին վերջերս Ադրբեջանի զինագործները հայտարարեցին, որ այս հրացանի իրական քաշը կազմում է ավելի քան 35 կգ և միայն կատարելագործման դեպքում այն կկազմի 26-29 կգ: Ռազմաարդյունաբերության նախարարն էլ հայտարարեց, որ շուտով Ադրբեջանը սկսելու է արտադրել 7,62X51 մմ տրամաչափի ՆԱՏՕ-ական փամփուշտներով դիպուկահարներ: Սա նոր զավեշտ է՝ հաշվի առնելով այդ տրամաչափի զենքերի բազմազանությունը, նույն տրամաչափին համապատասխան խորհրդային դիպուկահարների առկայությունը և մեան փամփուշտի աստիճանական դուրս մղումը այդ գործից: Ադրբեջանական այս դիպուկահարի միջազգային վերջին

ցուցահանդեսը պարզապես ծիծաղի առարկա դարձավ փորձագետների համար:

Բ. Ջրահամեքենաները

Իհարկե, հարավաֆրիկյան «Paramount Group» ընկերությունը բավական հայտնի է սպառազինությունների արտադրության ոլորտում: Աղբրեջանում համատեղ արտադրված գրահամեքենաներն էլ չնայած տարածված չեն, սակայն կրում են գերմանական շարժիչներ և օժտված են հակաականային հատկանիշներով: Սրանք արդեն կարող են խոսել այս մեքենաների որակի մասին: Ներկայում աշխարհում նման գրահամեքենաների արտադրությունը և տեսականին բավական մեծացել է, սակայն առաջին հայացքից դրանց լավ բնութագրերի մեջ դժվար է գտնել ամենաբացառիկներն ու լավագույնը: ԱՄՆ-ի բանակում նման մեքենայի համար մրցույթ էին հայտարարել, որի պահանջները շատ խիստ էին: ՌԳ-ում մինչ օրս չեն կարողանում վերջնական որոշում կայացնել այս հարցի շուրջ՝ զենվ սեփական, քե արտասահմանյան մեքենաներ: Մեծ աղմուկ բարձրացավ սեփական արտադրության «Тигр» գրահամեքենայի և իտալական «Iveco LMV M65»-ի միջև ընթացող մրցավազքի համար³⁵⁶:

Սա հենց այն մեքենան է, որը չի ընդունվում ռուսական բանակում, բայց առաջարկվում է աղբրեջանական բանակին:

Ահա, քե ինչու, չնայած շատ երկրներ, այդ թվում՝ Աղբրեջանը և Թուրքիան նման մեքենաներ են արտադրում, սակայն դա չի նշանակում, որ դրանք որակյալ են: Այսօր աշխարհում ստեղծվում են նոր տեսակի գրահամեքենաներ, որոնք ունեն մոդուլային կառուցվածք, արագ կարող են ձևափոխվել և սպառազինվել տարբեր զենքերով: Այս առումով շատ երկրներ անգամ չեն շտապում ձեռք բերել նոր գրահամեքենաներ, քանի որ դեռ չլուծված շատ հարցեր կան:

³⁵⁶ «Iveco» против «Тигра». Или как нам врут, 4 июля 2011, <http://www.dpni.org/articles/publikacii/24077/>

Նման երկրները հասկանալի պատճառով չեն զննում նաև հին մեքենաները, քանի որ դրանց ժամանակներն անցել են: Վերջերս տեղեկություններ հայտնվեցին այն մասին, որ Ուկրաինան գրահամեքենաների արտադրության առաջատարներից մեկն է: Այդ երկիրը հիմնականում վաճառում է «БТР-3 Гардаган» և «БТР-4 Буцефал» գրահամեքենաներ, որոնք ստեղծվել են խորհրդային հայտնի գրահամեքենաների հիմքի վրա: Դրանք հիմնականում առաքվում են այնպիսի երկրներ, որոնք չեն զինվում գերժամանակակից սպառազինությամբ: Նման հին մեքենաներ է վաճառում նաև ՌԳ-ը, որը ևս գրահամեքենաների առաքման առաջատար երկրների ցանկում է: Ջրահամեքենաների առաջատարը այժմ Ֆինլանդիան է, որը մատակարարում է ժամանակակից մոդուլային «Patria AMV (Rosomak)» գրահամեքենա: Այս մեքենան ժամանակակից է: Այն շատ հատկանիշներով տարբերվում է հատկապես ռուսական և ուկրաինական այն մեքենաներից, որոնց հետ մրցակցում է: Ջարմանալին այն է, որ Հարավաֆրիկյան Հանրապետությունը ևս զենվ է ֆիննական այս մեքենաներից, ընդ որում՝ բավական մեծ քանակությամբ՝ ավելի քան 250 միավոր³⁵⁷: Սա նշանակում է, որ հարավաֆրիկյան այն գրահամեքենաները, որոնք առաջարկվում են Աղբրեջանին, որքան էլ լավը լինեն, միևնույն է, զիջում են աշխարհի ամենաառաջատարներին: Նրե դրանք շատ որակյալ լինեին, արտադրողը և իր սեփական զինուժում կգործածեր:

Աղբրեջանական բանակը մեծ հետաքրքրություն ունի նաև հեռակալի մարտական տարատեսակ մեքենաների նկատմամբ: Աղբրեջանը մտադրություն ունի ձեռք բերել ռուսական «БМП-3» մեքենաներ: Այս մեքենաները ևս հակասական համբավ են ձեռք բերել: Մասնագետները քննադատում են հատկապես այս մեքենայի սպառազինությունը, նշանոցային հարմարանքները, հակաակնային

³⁵⁷ Leon Engelbrecht Friday, 26 June 2009, Denel orders Saab computers for, Hoesfysterhttp://www.defenceweb.co.za/index.php?option=com_content&task=view&id=2663&Itemid=362

պաշտպանությունը: Իհարկե, կան նաև այլ՝ հակառակ կարծիքներ, սակայն շատ տարրական հարցեր անպատասխան են. եթե այս մեքենաներն այդքան լավն են ու որակյալ, ապա ինչու ռուսական քանակը հրաժարվեց դրանց ձեռքբերումից, ինչու հրաժարվեցին նաև այլ գնորդները, իսկ գրեթե միակ մեծարժեք գնորդ Արաբական էմիրությունները 135 մեքենայի համար հատկացնում է լրացուցիչ 75 միլիոն դոլար, որպեսզի դրանք կատարելագործի: Մեքենաները կատարելագործման կարիք ունեն. սա նշանակում է դրանք խնդիրներ ունեն: Կատարելագործման գինն ապշեցնում է՝ ամեն մի մեքենայի համար ավելի քան կես միլիոն դոլար: Դա մեքենայի գրեթե ամբողջ գինն է: Անա, թե ինչ է կամենում ձեռք բերել Ադրբեջանը: Վերջին տվյալներով՝ այնտեղ արդեն կա ավելի քան 2.000 միավոր գրահամերձ, «նրիհանուր» մոտ 10 տեսակի: Ռազմական տեսակետից, սա արտուղ է, որը միշտ դառը ավարտ է ունեցել: Լավագույն օրինակը ԽՍՀՄ-ն էր՝ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ:

4. Հրետանի

Հետաքրքիր իրադրություն է կապված նաև բուրբակյան հրթիռների հետ: Թուրքական «Roketsan» ընկերությունն Ադրբեջանին առաջարկում է հրթիռներ, որոնք արդեն շատ հին են: 1970-1980 թթ. Արևմուտքում 122 և անգամ մինչև 150-200 մմ-ոց մնացյալ տրամաչափերը համարվեցին փոքր ու հնացած: Այժմ եվրոպական բանակներին շատերում 107 և 122 մմ-ոց տրամաչափի հրթիռներ չեն կիրառում: Նման հրթիռներ կիրառող համալիրներ կան չինական քանակում: Լայն տարածում են գտել "63" և "81" համարները կողմ համալիրները: Նման տրամաչափերի հրթիռները հատկապես շատ են կիրառվում արևելյան հետամնաց բանակներում ու նաև ահաբեկչական կազմակերպությունների կողմից:

Գեոևա 1980-ականներին ամբողջ աշխարհում մեծ սրությամբ դրվեց մինչև 150-200 մմ-ոց չոկեպարավող հրթիռների կիրառության արդյունավետության հարցը: Փոքր տրամաչափի հրթիռների ցրումը

չափազանց մեծ է: Դրանց հեռահարության ավելացումը ոչ այնքան դուրևան, որքան բացասական արդյունք է տալիս, քանի որ հեռահարության ավելացման հետ ավելանում է նաև նշանակետից դրանց շեղման աստիճանը: Եթե փորձ արվի էլեկտրոնային սարքերով այդ հրթիռները դարձնել ճշգրիտ, ապա դրանք շատ թանկարժեք կրառնան, իսկ հեռահարությունը և մարտական մասը, միևնույն է, բավարար չեն լինի: Ըստ այդմ շատ երկրներ հրաժարվեցին մինչև 150-200 մմ-ոց հրթիռներից: ԽՍՀՄ-ի վերադառնալից հետո նախկին հանրապետությունների և հատկապես ՌԴ-ի սպառազինության մեջ մնացել էին մեծ քանակությամբ 122 մմ-ոց «ՅՄ-21» կայաններ ու դրանց համար նախատեսված հրթիռներ: Դրանք մեծ քանակով կիրառվեցին 1990-ականների տեղային պատերազմներում: Սակայն ներկայումս հստակորեն նկատվում է դրանցից հրաժարվելու միտում: ՌԴ-ում ևս մեծ քանակությամբ մնան համալիրներ հանվում են սպառազինությունից, իսկ դրանց փոխարինելու են գալիս նոր բազմապատասխան համալիրները, որոնք կարող են կիրառել այլ՝ հատկապես ավելի մեծ տրամաչափի հրթիռներ³⁵⁶: Կա նաև ռազմական տեսակետից նման հրթիռների կիրառության համար ոչ արդյունավետ, սակայն ունենց համար շատ կարևոր զորու: Այդպիսի հրթիռներով զանգվածային կրակ է բացվում մեծ բնակավայրերի վրա, քանի որ շեղումներն այստեղ արդեն էական չեն: Իհարկե, մեր թշնամին երբեք չի մտառեղվել այս հարցով: Նրանք հաճույքով էին նման հրթիռներով Շուշիից հրետակոծում Մտեֆանակետեր և հայկական այլ բնակավայրերը: Մա է պատճառը, որ մրաքն շտապում են արտադրել նման հրթիռների մեծ քանակ: Նման հանգամանքներում բուրբակյան և արդրբջանական ընկերությունների կողմից արդեն հնացած կամ, լավագույն դեպքում, հնացող, սակայն իրենց գործելաոճին շատ հարավատ գինատեսակների արտադրության հիմնումը ներկայացվում է որպես նոր ու ցնցող ձեռքբերում, գիտական նվաճում: Բացի այդ կա

³⁵⁶ PC30 «Торнадо» <http://www.ug.ru/issues/?action=topic&toid=4293&iid=46>

նաև այս խնդրի լուծման մեկ այլ կողմը. եթե նրանք շատ են ուզում ունենալ նման իրքիտներ, որոնք ռազմական կիրառության մեջ է ժամային և այլ առումներով դեռ կիրառելի են, ապա դրանք շատ է-ժամ կարելի է ձեռք բերել նախկին ԽՍՀՄ-ի տարբեր երկրներում: Ինչպես հայտնի է, խորհրդային նախկին պահեստներում դեռ կան հարյուր միլիոնավոր նման իրքիտներ: Այդպես են վարվում շատ երկրներ:

Թուրքական ընկերություններն ադրբեջանական ռազմաարդ-յունաբերական համալիրը հիմնականում ներքաշում են ավելի ու ավելի մեծ նախագծերի մեջ: Գա բնական է. մեծ եղբայրը պետք է փոքր եղբորն օգնի: Թուրքական կողմն Ադրբեջանին առաջարկել է միանալ այնպիսի նախագծերի, ինչպիսիք են «Ahtay» հրասայլի, ուղ-դաթիտների և այլ սարքավորումների արտադրությունը: Դիշտ է, դրանք ևս համաշխարհային վերջին ձեռքբերումները չեն, սակայն արդեն բավական մեծ ու հեռանկարային նախագծեր են:

Աշխարհում օրեցօր ավելանում են արևելյան այն երկրները, որոնք զարգացնում են իրենց ռազմաարդյունաբերական համալիրը, արտադրում են որոշակի զինատեսակներ և դրանք հաջողությամբ վաճառում տարբեր երկրների: Առայժմ համաշխարհային շուկայում իր դիրքերը որոշակիորեն ամրապնդած բուրժական ռազմաարդյու-նաբերական համալիրն իր հետևից տանում է ադրբեջանական նո-րաստեղծ գերատեսչությունը: Թուրքական ռազմաարդյունաբերա-կան համալիրը նախանձելի արդյունքներ է գրանցում՝ արտադրու-թյան տարեկան աճի ծավալներով: Բավական հետաքրքիր է թուրքա-կան այդ ընկերությունների, ինչպես նաև դրանց ադրբեջանական «դուստր ձեռնարկության» ռազմաարդյունաբերական համալիրի ա-ռաքումների աշխարհագրությունը: Այսպես՝ Պարսկական ծոցի երկրներ, աֆրիկյան որոշ երկրներ, Թուրքմենստան, Ռուսաստան, Պակիստան, Ադրբեջան, Վրաստան և այլն: Միայն, բացի Վրաս-տանից, հիմնականում մուսուլմանական այն երկրներն են, որոնցում մեծ ազդեցություն ու կապեր ունեն ահաբեկչական կազմակերպու-թյունները: Այս երկրներում են ստեղծվում ահաբեկչական բջիջները,

դրամական հոսքերը, այստեղ են նրանք ձեռք բերում նորանոր սպա-ռազինություններ և նոր տեխնոլոգիաներ:

Իհարկե, ներկայումս բուրժական և հատկապես ադրբեջանա-կան ընկերությունները հիմնականում զբաղված են մեծ մասամբ հնացած զինատեսակների կրճատմամբ, սակայն այս ոլորտում տևական և հետևողական աշխատանքը կարող է որոշակի հաջո-րդություններ ապահովել փոքր: Այդպիսիք կարող են համարվել կրածոգայլի գեներերի որոշ տեսակներ, որոշ սարքավորումներ և հան-դերձանքի պարագաներ: Այս ամենը որոշակի հետևության տեղիք է տալիս և չի կարող որոշակի մտահոգություն չառաջացնել, ուստի հարկավոր է կանխարգելիչ համապատասխան հակաքայլեր ձեռ-նարկել:

3.3. Ադրբեջանական ՌՕՌՈ-ն

Ադրբեջանական բանակի ամենահզոր զորատեսակը ՌՕՌՈ-ն է: Գլխանք անհամեմատելի առավելություն ունեն հայկականի նկատ-մամբ: Ավելին, որոշ մասնագետների հավաստմամբ՝ դրանք մինչև 2015 թ. պետք է կլիսով չափ վերազինվեն ժամանակակից սարքերով և ավելանալով թանկով՝ դրանով ապահովելով օդային գերակայու-թյուն ողջ տարածաշրջանում: Փորձներ պարզաբանել այդ իրադրու-թյունը:

Տեղեկատվական բազմաթիվ աղբյուրների ու հրապարակում-ների համաձայն՝ ադրբեջանական ՌՕՌՈ-ի սպառազինության մեջ մինչև 2010-2011 թթ. գտնվում էին «ՄուԴ-21», «ՄուԴ-25», «ՄուԴ-29», «Сy-17», «Сy-24», «Сy-25»³⁵⁹ մարտական ինքնաթիռներ: Գրանց քանակի մասին կան տարբեր տեղեկություններ՝ ընդհանուր 100-150

³⁵⁹ The military balance 2009, p. 168; Մինասյան Ս., Դարաբաղյան հակամարտության արդի փուլի ռազմաքաղաքական ասպեկտները. Դարա-բաղյան հակամարտության արտաքին քաղաքական ասպեկտները, Ֆուդաթական հետազոտությունների ինստիտուտ: Վերլուծական նյութեր, րոտարկում 3, Եր., 2009, է էջ 162:

մարտական ինքնաթիռ: Ուղղաթիռները ներկայացված են խորհրդային «Ми-24» և «Ми-8» մեքենաներով, չնայած վերջին ժամանակում ակտիվորեն համալրվում են դրանց նոր տարատեսակներով: Տարբեր գնահատականներով ԹՄ-ների ընդհանուր քանակը հասնում է 300-ի, որոնց մեջ օրեցօր ավելի մեծ տեղ են զբաղեցնում ԱԹՄ-ները: 300 ԹՄ-ներով պլանավորված ռազմական գործողությունները մասնամասն վերլուծություն են պահանջում:

ՌՕՌ-ի ինքնաթիռներից առանձնահատուկ ուշադրության է արժանի «МиГ-25» կործանիչը, որը աղբյուրաբանական օդուժում քանակով ամենաշատն է: Այս ինքնաթիռի համաշխարհային և հատկապես աղբյուրաբանական կիրառության փորձը շատ հետաքրքիր է: Սա քաջառիկ տվյալներ ունեցող ինքնաթիռ է, որը պահանջում է վարման ամանագիտական բարձր որակավորում և տեխսպասարկման հարցում հատուկ վերաբերմունք³⁶⁰: Ունենալով մեծ արագություն, քոչիչի բարձրություն և օդային մարտի յուրահատուկ հնարավորություններ՝ «МиГ-25»-ն իրեն այնքան լավ չի դրսևորում մարտական այլ խնդիրներ լուծելիս: Կործանիչի նվազագույն արագությունը մեծ է, փոքր են ճկունությունը, մարտական բեռնվածքի ջաշը և այլն: Ինչպես ցույց տվեց փորձը, այս ինքնաթիռները շատ ղզվար է կիրառել վերգետնյա նշանակետերին հարվածելու համար:

Աղբյուրանում ԽՍՀՄ-ից մնացել էին «МиГ-25РБ» հետախույզ ուժակործանիչներ և «МиГ-25ПДС» կործանիչներ³⁶¹:

Տեղեկանք. Իրան-իրաքյան պատերազմի ժամանակ խորհրդային մասնագետները հաճախակի ստիպված էին լինում ուղղորդել Իրաքյան կողմի կործանիչի ուժանոթում բարդագույն սարքը:

³⁶⁰ «МиГ-25»-ը օդաչուով բոշող խորհրդային առաջին սարքն էր, որի արագությունը հասավ և անցավ 3.000 կմ/ժ-ը: Այն մինչ օրս աշխարհի ամենաարագ և բարձր քոչող մարտական ինքնաթիռն է:

³⁶¹ Жирохов М., *Авиация в армяно-азербайджанском конфликте* // <http://www.airwar.ru/history/locwar/x/ussr/karabah/karabah.html>

Իրանն այն է, որ անգամ չնչին չափով սխալվելու դեպքում մեծ բարձրությունից և մեծ արագությամբ պայամաններում նետված ռումբը նշանակալից մի քանի կմ հեռու էր ընկնում:

Անհաջողության պատճառներից էր «МиГ-25РБ»-ի նշանոցային բարդ հարմարանքը: Աղբյուրաբան Իրաքի նման չկարողացավ այդ սարքերը մշտապես ճշգրտել: Օգտագործելով ինքնաթիռների վերանորոգման գործարանը՝ նրանք ինքնաթիռները հարմարեցրին կոպիտ ուժանոթմանը, քանի որ բնակավայրերի վրա ուժանոթման ծրագիրն իրագործելու համար առանձնահատուկ նշանոց հարկավոր չէր:

Փաստորեն, այս բարդ և հզոր ինքնաթիռները մեր բժնամուկողմից կիրառվում էին որպես սովորական ուժակործանիչներ՝ 50-ամյա վաղեմության մեթոդներով ռումբ նետելու համար: Կործանիչի ուժեղ կողմերը կիրառելու բնագավառ ուղղակի չկար, իսկ հայկական կողմը չունեցրեց բարձրաթիչ ինքնաթիռներ: Ամեն ինչից զատ, որպես կործանիչ՝ այս ինքնաթիռը վերջնականապես հնացել է: Չնայած նրան, որ աղբյուրաբանական ինքնաթիռները վարում էին փորձառու խորհրդային օդաչուները, նույնիսկ այս քաջառիկ տվյալներ ունեցող կործանիչներն Արցախյան գոյամարտում մարտական կորուստներ ունեցան: Ընդ որում՝ «МиГ-25» ինքնաթիռի խոցման փայլուն դեպքերից մեկը կապված է հենց հայ հակաօդայինների հետ³⁶²:

Մամուլում հայտնված այն հաղորդումը, թե «МиГ-25» կործանիչին «օդ-օդ» դասի ջերմային ինքնուղղորդվող գլխիկ ունեցող իրթիռներով խոցել են հայկական տանկերը, չեն համապատասխանում իրականությանը: Նախ՝ այս ինքնաթիռով, որն ունի մեծ արագություն և օդաչուի վատ տեսադաշտ, լեռներում զրահատեսխնիկա

³⁶² Հովհաննիսյան Ա., Ավիացիան՝ Արցախյան գոյամարտում, Եր., 2006, էջ 31-32; Հովհաննիսյան Ա.: Արցախյան պատերազմում աղբյուրաբանական ավիացիայի գործողությունների և Հայկական ՀՕՊ հակազդեցության վերլուծություն: 21-րդ ԴՊՄ, N 4, 2010:

հայտնաբերելն անգամ դժվար է, իսկ գրոհելը՝ գրեթե անհնար: Բացի դրանից, այդ հրթիռներով ցամաքային տեխնիկա խոցելն անհնար է՝ ելնելով տեխնիկական սահմանափակումներից: Հրթիռները նվազագույն բարձրության սահմանափակում ունեն, նաև բեկորային մարտական մասերը չեն կարող խոցել մնամ զրահ³⁶³: Չնայած ներկայումս հայկական կողմն ունի ռազմական ինքնաթիռներ, միևնույն է, «МиГ-25»-ը լեռնային տեղանքում ցածրաթիչ օդային նշանակետերի դեմ պայքարի համար ընդհանրապես պիտանի չէ, քանի որ շատ ծանր է և բարձր արագությամբ է թռչում, իսկ նշանոցային սարքավորումներն ու սպառազինությունը շատ էին են: Թվարկված խնդիրները ժամանակից դուրս գտնվող այս կործանիչի եզակի թերությունները չեն: Կործանիչն օգտագործում է հաստուկ և քամկաբծեր ռեակտիվ վառելիք: Ընդ որում, «МиГ-25»-ը մեկ թռիչքի ընթացքում օգտագործում է աղբյուրանակամ այլ ինքնաթիռներից նվազագույնը կրկնակի շատ վառելիք, որը, գնի հետ գումարած, ունենում է մեծ ծախսեր:

Այսինքն՝ նման կործանիչն ընդհանրապես որևէ երկրի ՌՕՌ-ի առհասարակ պետք չէ, սակայն, ինչպես երևում է, աղբյուրանցիներն այդպես չեն կարծում: 1998 թ. Աղբյուրանցի Դազախստանից գնել է ութ «МиГ-25» կործանիչ³⁶⁴, որոնց վիճակը, հաշվի առնելով տարիքը, բնականաբար, չի կարող իրենական լինել: Տարբեր տեղեկությունների համաձայն՝ Ռկլախիման վերանորոգում է աղբյուրանակամ այս ինքնաթիռները³⁶⁵: Սա փաստում է, որ Աղբյուրանցի նման ինքնաթիռների հետ դեռ որոշակի հույսեր են կապում, չնայած 2014 թ. հունիսի 26-ի Բաքվի զորահանդեսին այս կործանիչները կրկին քացակայում էին: Իհարկե, դա կարող է նաև նշանակել, որ դրանք

վերանորոգվում էին: Այդ մասին արդեն եղել են որոշակի հաղորդագրություններ:

Աղբյուրանակամ ինքնաթիռներից հայկական ՌՕՌ-ի հիմնական հակառակորդ կարելի է համարել «МиГ-29»-ը: Այն հայկական ԹՄՆ-ների կարող է մեծ վնաս հասցնել՝ հատկապես հարթավայրերում թռիչքներ կատարելիս:

Իրականում ինչի³⁶⁶ է ընդունակ բավական հայտնի և գովազդված այս կործանիչը:

Ցանկացած զենքի լավագույն ստուգատեսը պատերազմն է: Մինչ օրս այս կործանիչը մասնակցել է մարտական մի քանի գործողությունների և ոչ մի տեղ աչքի չի ընկել: Կիրառվելով Իրաքում, Հալաբլավալիայում, Աֆրիկայում և Նախկին ԽՍՀՄ-ի տարածքում՝ «МиГ-29»-ն օդային մարտերում պայքարել է իր սերնդակից կործանիչների դեմ և, չունենալով ապացույցված և ոչ մի հաղթանակ, կրել է մոտավորապես 15 պարտություն³⁶⁶:

Հետաքրքիր է նաև այս կործանիչով վերգետնյա նշանակետերին հարվածներ հասցնելու փորձի ուսումնասիրությունը:

1992 թ. հունիսի 22-ին մոլդովական ՌՕՌ-ի «МиГ-29» երեք կործանիչների անձնակազմներն առաջադրանք ստացան ոմբակոծելու Դենեստր գետի վրայի այն կամուրջը, որը միացնում էր Մերձդնեստրի մայրաքաղաք Տիրասպոլը Բենդերի քաղաքի հետ: Ռմբակոծման ենթակա կամուրջը կործանիչների տեղակայման վայրից՝ Մարկուլեշտի օդանավակայանից, հեռու է մոտավորապես 200 կմ: «МиГ-29»-երն առաջադրանքի կատարման համար զինվեցին յուրաքանչյուրը 250 կգ-ոց վեց ռումբերով:

³⁶³ Марковский В., Перов К., Советские..., стр. 25-27.

³⁶⁴ Коспюхин А., Военно-промышленный комплекс государств Центральной Азии и их военно-техническое сотрудничество с зарубежными странами в 1990-е годы, ЗВО, 5.2009, стр. 19.

³⁶⁵ Глашатов О., Для Еревана приближается время "ч". Голос Армении. Электронная версия N 142 за 26.12.09.

³⁶⁶ Steve Davies, F-15E Strike Eagle Units in Combat 1990—2005. Osprey Publishing/Combat Aircraft, выпуск № 59, 2005, стр. 22—23; Ильин В., Воздушная война на Балканах // Авиамастер, 2001, № 1, стр. 6; Жирохов М., Война в воздухе на Африканском Роге, <http://www.airwar.ru/history/locwar/africa/eritrea/eritrea.html>, <http://www.af.mil/information/index.asp>

Տեղեկանք. Տեխնիկական հնարավորությունը այս կործանիչ-մերիմ բույլ չի տալիս վերցնել ավելի ծանր ռումբեր, իսկ ընդհանուր քաշը կազմում է 1.500 կգ: Սա այն դեպքում, երբ նշված մարտական աստղադրանքի ժամանակ կործանիչների բոխչի 90 տոկոսն անցնում էր ոչ հակառակորդի տարածքով: Այսինքն՝ կործանիչները միազիծ թռիչք էին կատարելու:

Կամրջի ոմբակոծությանը մասնակցեց երկու կործանիչ, սակայն մետված ռումբերից և ոչ մեկը նշանակետին չդիպավ: Ավելին՝ ռումբերից երկուսը ընկան կամրջի կողքի Պարկանի գյուտի վրա՝ խաղաղ բնակչությանը պատճառելով զգալի վնասներ³⁶⁷: Օդաչուները խորհրդային Ռ-ՈՌ-ի ներկայացուցիչներ էին, որոնց պատրաստությունը զգալիորեն բարձր է: Այս դեպքը լավագույն կերպով ապացուցում է, որ նշված ինքնաթիռը հնարավորություն չունի մնան խնդիրներ կատարել: Ռումբերի քաշը և քանակը, ելնելով կործանիչի տեխնիկական հնարավորություններից, մույնիսկ 200 կմ հեռավորության վրա խնդիր կատարելու համար շատ սահմանափակ են:

Ադրբեջանական Ռ-ՈՌ-ի կործանիչները Ռուրախիայում համապատասխան կատարելագործում են անցել, որպեսզի կարողանան կիրառել նաև «ող-երկիր» դասի սպառազինությունը: Սա որոշակի մտահոգություն է առաջացնում:

1999 թ. մայիս-հուլիս ամիսներին Հնդկաստանի ու Պակիստանի միջև տեղի ունեցած Կարգվյալ հակամարտության ժամանակ բարձր լեռնային պայմաններում խորհրդային արտադրության ոչ մի ինքնաթիռ չկարողացավ մարտական խնդիրը կատարել անհրա-

³⁶⁷ Коллектив «Мемориал» Массовые и наиболее серьезные нарушения прав человека и положение в зоне вооруженного конфликта в г. Бендеры. Июнь-июль 1992; <http://vovna-1992.ru/public/24-zhirokhov-m.a.-aviacija-v-konflikte-v.html>

մշտ որակով³⁶⁸: Ի վերջո, հիմնական բեռն ընկավ ֆրանսիական «Mirage-2000» կործանիչի վրա «МиГ-29»-երը ընդամենը 20 թույն էին կարողանում ուղեկցել վերջիններիս³⁶⁹: Նկատենք, որ ոմբահարվածների համար այն ընդհանրապես չլիքառավեց, իսկ որպես կործանիչ՝ իր թռիչքի ծիծաղելի հեռահարության պատճառով կարողանում էր ուղեկցել ընդամենը 20 թույն, այսինքն՝ ոչ մարտական գոտում: Հատուկ նշենք, որ «Mirage-2000» և «МиГ-29» կործանիչները համարվում են նույն սերնդի ու մրցակից մեքենաներ:

Ադրբեջանական «МиГ-29»-երի տարիքը արդեն կազմում է 15-20 տարի: Այս կործանիչների կյանքի ռեսուրսը կազմում է 2000-2500 ժամ, իսկ վերանորոգման արդյունքում լավագույն դեպքում կարող է դառնալ մինչև 4000 ժամ³⁷⁰: Բնականաբար, ռեսուրսի երկարացման պայմաններում ինքնաթիռի որոշ հնարավորություններ սահմանափակվում են: Տարեկան 100 ժամ թռիչքի դեպքում ինքնաթիռի կյանքի տևողությունը դառնում է 40 տարի, որից 20-ն արդեն անցել է: Սակայն տարեկան 100 ժամը խաղաղ պայմանների համար դեռ ընդունելի է, իսկ մարտական գործողությունների ժամանակ 100 ժամ կարելի է թռչել մեկ-երկու ամսում: Գ-ժվար չէ հաշվել, որ ինտենսիվ թռիչքների դեպքում 2000 ժամը կարելի է թռչել առնվազն 5 տարում: Անգամ վերանորոգվելու պայմաններում ինքնաթիռի կյանքը կազմելու է առավելագույնը 5-10 տարի: Ահա սրանք են ադրբեջանական «կատարելագործված կործանիչները»:

³⁶⁸ Institute of Peace and Conflict Studies. New Delhi. Article №546, 17.08.2001; Foreign Affairs, January/February 2002, p.115; Джоунс Родни, Ядерная стратегия Пакистана: в поисках гарантированного сдерживания. // Ядерное распространение. Выпуск 34, январь-март 2000, стр. 37; Шилин А. А., Стратегический баланс в Южной Азии. М., 2004, стр. 108-109.

³⁶⁹ Голдаев Ю., «Мираж-2000» в Каргильском конфликте 1999 г. <http://www.airwar.ru/ocwar.html>; Defence News, 30.10.2000. Philip Camp. The «Mirage-2000» at Kargil, <http://www.bharat-rakshak.com/IAF/History/Kargil/PCamp.html>.

³⁷⁰ Бутовски П., МИГОВ в Польше стало больше. Взлет. 3.2006 (15), стр.32-34.

«МиГ-29»-ը, ունենալով արագացումային և մերձակա օդային մարտի խոսանալվման լավ տվյալներ, միաժամանակ ունի թռիչքի փոքր հեռահարություն, սպառազինության փոքր տեսականի ու քաշ, գրեթե չի կարող կիրառվել վերգետնյա նշանակետերի նկատմամբ³⁷¹։ Լեռնային տեղանքում ցածրաթռիչք գրոհիչներին և ուղղաթիռներին վնասագեղծելու համար ոչ փոքր արագությամբ թռչող կործանիչը մեծ հնարավորություն ունի։ «МиГ-29»-ը բազմաֆունկցիոնալ չէ, իսկ մեր տարածաշրջանում մնալ կործանիչները մեծ հետակար չունեն։ Սակայն հարթավայրերում այն կարող է մեծ վնասներ պատճառել այն գրոհիչներին և ուղղաթիռներին, որոնք հայտնվում են իր խոցման դաշտում, հատկապես, եթե օդային ընդհանուր իրադրությունը դեկավարվի այլ ինքնաթիռների կողմից։ Այս տարրերակը բացառված չէ՝ հաշվի առնելով, որ Ադրբեջանում կարող են «МиГ-25» և այլ ինքնաթիռների հիման վրա ստեղծել օդային դեկավարման կետեր։ Այսինքն՝ մարտերը Քուր-արաբսյան ջրային սահման տեղափոխելիս ադրբեջանական կործանիչները, որոնք ավելի մոտ կլինեն իրենց օդանավակայաններին, բավական վտանգ կներկայացնեն հայկական ԹՄ-երի համար։ Չմայած դրան՝ հավանական թուր օդանավակայաններից գործելու դեպքում այս կործանիչները խնդիրներ կունենան, եթե կիրառվեն ամենամոտ օդանավակայաններից՝ Աղստաֆայի, Գալսարի, Գանձակի, Եվլախի, Քյուրդաձյիլի և այլն, ապա կամ կընկնեն հայկական հրետանու կրակի տակ, կամ հեռահարությունը չի բավարարի մարտական խնդիրը լիարժեք կատարելու համար։

Թուրքիան, ոչ հեռու ապագայում «F-35»-երի իր չափաբաժինն ստանալով, ստիպված է լինելու ազատվել մոտ 100-150 «F-16C»-ե-

րից, որոնցից մի քանիսը, ամենայն հավանականությամբ, կարող է փոխանցվել Ադրբեջանին։ Այս ինքնաթիռները վտանգավոր են նրանով, որ ադրբեջանական ՌՕՌ-ում դրանք կլինեն իրական առաջին բազմաապատակ ինքնաթիռները՝ կործանիչի մեծ հնարավորություններով։ Ի դեպ, «F-16C»-ի պատմությունը շատ հետաքրքիր է նրանով, որ այն ևս, ի սկզբանե, ստեղծվել էր որպես թեթև կործանիչ՝ օդային մոտակա մարտերի համար։ Առաջին իսկ կիրառությամբ այն ապացուցեց իր կոչումը, սակայն լինելով շատ հարմար մեքենա, չուտով կատարելագործվեց և դարձավ բազմապատակ։ 1991 թ. սկսած «F-16C» կործանիչները բազմիցս կիրառվել են վերգետնյա հարվածների համար և մեծ մասամբ իրենց արդարացրել են։ Ամերիկյան այս կործանիչը, իր չափերով լինելով մուլտիսակ ավելի փոքր, քան «МиГ-29»-ը, և ունենալով ընդամենը մեկ շարժիչ, ունի ավելի հզոր տվյալներ։ Մասնավորապես, լրիվ վառելիքի պայմաններում (ներքին բաքերում՝ 3200-3500 կգ) կործանիչը կարող է կրել մինչև 8500 կգ բեռ, որից ավելի քան 5000 կգ ռումբ։ Նման բեռով այն կարող է թռչել մինչև 2000 կմ³⁷²։ «F-16C»-ը կենտրոնական կախոցներից կարող է կրել մինչև 1587 կգ բեռ, կան մալ 1000 կգ կրող կախոցներ։ Ինչպես կարող եք նկատել, սա անհամեմատելի է «МиГ-29»-ի հետ։ Չարժանալի չէ, որ այս կործանիչն աշխարհում ամենատարածվածն է։

Ահա այն ոչ բոլոր պատճառները, որոնց հիման վրա, մեր կարծիքով, ադրբեջանական ՌՕՌ-ի հիմնական կործանիչը «МиГ-29»-ը, մեր տեղանքում չի համապատասխանում առաջադրված պահանջներին։ Ինչ վերաբերում է «МиГ-21» և «Су-17» ինքնաթիռներին, ապա դրանք եթե անգամ կիրառվեն, ելնելով տեխնիկական հարցերից, էական ազդեցություն չեն կարող ունենալ ադրբեջանական ռազմական ավիացիայի որակական հատկանիշների վրա։

Ադրբեջանական ՌՕՌ-ի մնացած ինքնաթիռներից առանձնակի ուշադրության են արժանի «Су-24» և «Су-25» ինքնաթիռները,

³⁷¹ Фомин А., Гордон Е., Михеев А. «МиГ-29» легкий фронтовой истребитель. М., 2003, стр. 84-257; Philip Camp. The Mirage-2000 at Kargil, <http://www.bharat-rakshak.com/IAF/History/Kargil/PCamp.html>; Ильин В. Е., Левин М. А., Истребители, стр. 99-102; Беляев В., Ильин В., Российская современная авиация. М., 2001, стр.78-79.

³⁷² Jane's All The World's Aircraft 2004-2005 / Paul Jackson. — Jane's Information Group, 2004. — pp. 706-712.

որոնք մարտական բավական հզոր միջոցներ են, սակայն սրանց հետ կապված՝ ևս բազում խնդիրներ կան: Նախ՝ դրանք բավական հիմ են, չեն կարող կիրառվել թուլատարելի բոլոր ռեժիմներում, հետո՝ չեն կրում ժամանակակից նշանաժամ սարքավորումներ և գերճշգրտիտ սպառազինություն, որոնց հասցրած վնասները, սովորական սպառազինության հետ համեմատած, զգալիորեն մեծ են: ՕՀՄ-ի կիրառությունն արդյունավետ չէ՝ հատկապես լեռնային տեղանքում³⁷³: Երե խորհրդային փորձառու օդաչուներն այս ինքնաթիռներով ոմբակոծություն կատարելիս երբևէն սխալվում էին³⁷⁴, ապա նույնը կարող են անել նաև արդրբջանական օդաչուները, որոնք նախորդների մնացած բոլոր բաժաներ և մարտական կիրառության փորձ չունեն: Առանձնապես հետաքրքիր է «Су-24» ոմբակոծիչը, որը, սակայն, ևս քանակապես շատ քիչ է: Հատկանշական է, որ 2011 թ. Բարքլի զորահանդեսին այս ոմբակոծիչները չմասնակցեցին:

Ժամանակին որոշակի տրեր պատվեցին, Արդրբջանի կողմից չին-պակիստանյան «JF-17» ինքնաթիռի ձեռքբերման մասին, որը, սակայն, դեռ չի իրականացվել: Այս ինքնաթիռն առայժմ անհասկանալի է՝ կործանի՞չ է, կործանիչ-ոմբակոծի՞չ, թե՞ ուղղակի գոռիչ: Ինչևէ, այն մեզ համար մեծ վտանգ չի ներկայացնում, քանի որ մախ՝ չի կարող կրել մեծ ռումբեր, հետո՝ դեռ լիովին փորձարկված չէ՝ հատկապես մարտական գործողությունների ժամանակ: Այս ինքնաթիռի բարձրակարգությունը կասկածելի է նաև նրանով, որ այն ստեղծված է խորհրդային և այլ հիմն տեխնոլոգիաների չին-պակիստանյան տեղայնացմամբ, որոնք, ինչպես ցույց է տվել փորձը, զի-

յում են իրենց բնօրինակներին: Փաստորեն, արդրբջանական Ռ-ՕՌ-ն որդեգրում է երկինքնաթիռային մոդելը՝ «МиГ-29» և «Су-25», ինչը բնորոշված է շատ երկրներում: Սակայն այս դեպքում Ռ-ՕՌ-ի քանակը դառնում է մոտ 80-100 մարտական ինքնաթիռ:

Արդրբջանի ուղղաթիռները, ինչպես նշեցինք, արդեն բավական հիմ են, և դրանց քանակն էլ այդքան մեծ չէ: Դրանք չունեն գերճշգրտիտ սպառազինություն և արդյակական սարքավորումներ: «Ми-24» և «Ми-8» ուղղաթիռները մարտական բազում գործողություններում կիրառված և փորձված մեքենաներ են, սակայն դրանք արդեն քարոյապես հնացած են:

«Ми-24»-ի հիմնական թեղությունը, որպես հարվածային ուղղաթիռ, չափերն ու շարժիչներն են: Լրացուցիչ դեանտային բաժինն արդեն վաղուց իրեն սպառել է: Իր դասի մեջ ոչ մի ուղղաթիռ այսօր չունի մնացած բաժին, հետևաբար, այսպիսի չափեր ու քաշ: Դեռ աֆղանական պատերազմի ժամանակ մասնագետները եկան այն եզրակացության, որ «Ми-24» ուղղաթիռի քարշազինվածությունը (էներգազինվածությունը) քիչ է հատկապես բարձրեծնային պայմաններում, որտեղ շարժիչների հզորությունը զգալիորեն նվազում է: 1999 թ. մայիս-հուլիս ամիսներին Հնդկաստանի և Պակիստանի միջև տեղի ունեցած Կարգիլյան հակամարտության ժամանակ կրկին սպառցուցվեց, որ «Ми-24»-ը և նույնիսկ ավելի կատարելագործված «Ми-35»-ը տառապում են շարժիչների բազում խնդիրներից, որոնցից է բարձրաթիռի լինելը: 3-4 կմ բարձրության վրա նրանք նորից չեն կարողանում մարտական խնդիրներ կատարել³⁷⁵: Նաև սա էր պատճառը, որ հնդկական բանակը վերջերս հրաժարվեց ձեռք բերել ու-

³⁷³ The United States Strategic Bombing Survey Report (European War). September 30, 1945, reprinted in The United States Strategic Bombing Surveys (European War) (Pacific War). Maxwell Air Force Base, AL: University Press, 1987. 29 may 2009, p. 13.

³⁷⁴ Օդաչուների ոմբահարության սխալների պատճառով 1994 թ. մարտի 25-ին Հորադիլում երկու ինքնաթիռ հարվածեց արդրբջանական դիրքերին (Жирохов М., Авиация в армяно-азербайджанском конфликте // <http://www.airwar.ru/history/loc/war/xussr/karabah/karabah.html>):

³⁷⁵ Institute of Peace and Conflict Studies, New Delhi. Article №546, 17.08.2001; Foreign Affairs, January/February 2002, p. 115; Джоунс Родни, Ядерная стратегия Пакистана: в поисках гарантированного сдерживания. // Ядерное распространение. Выпуск 34, январь-март 2000, с. 37; Шилин А. А. Стратегический баланс в Южной Азии. М., 2004, стр. 108-109.

սական անգամ նոր «Մի-28» ուղղաթիռներ՝ որոշում կայացնելով հօգուտ ամերիկյան ուղղաթիռի:

«Մի-35»-ը այն ուղղաթիռն է, որը Ադրբեջանը ձեռք է բերում այսօր: 2010 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ռուսական «Росавиация» ընկերության հետ կնքվել է մարտական «Մի-35Մ» 24 միավոր ուղղաթիռների մատակարարման պայմանագիր³⁷⁶: Այդ ուղղաթիռներից որոշ քանակություն արդեն ստացվել է և յուրացվում է: Հետո եղան հայտարարություններ, որ դրանց քանակը մեծացվում է: Իհարկե, ինչպես նշեցինք, այս ուղղաթիռները ևս մեծ խնդիրներ ունեն և գերժամանակակից չեն, սակայն դրանք, սովորական «Մի-24»-երի հետ համեմատած, ունեն զգալիորեն բարելավված մարտական հնարավորություններ և գրահատելիմկայի դեմ պայքարում բավականին լուրջ գործոններ են: Ներկայումս ադրբեջանական քանակը հիմնական շեշտը դնում է մարտական այս ուղղաթիռների վրա, որոնք ստացվում են համագորային բրիգադներում արևմտյան չափանիշներով համալրելով համապատասխան հաստիքները:

Ադրբեջանը ինչ «Մի-24» ուղղաթիռներն ուկրաինական և Հարավաֆրիկյան Հանրապետության մասնագետների հետ լրջորեն կատարելագործում է: Ուղղաթիռները, ինչքան էլ կատարելագործվեն, հին են, սակայն նոր սարքավորումները, սպառազինությունը և թեթևացված քաշը բավական բարձրացրել են այս ուղղաթիռների մարտական հնարավորությունները³⁷⁷: Այս մոդելը բավական հետաքրքիր լուծում է, վերացված են հիմնական թեթրությունները: Մասնավորապես, բարելավված է ուղղաթիռի սպառազինության համակարգը, որը շատ կարևոր է: Ամեն դեպքում, սակայն, ժամանակի ընթացքում, սրանք, ամենայն հավանականությամբ, կհանվեն, քանի որ նախորդ ուղղաթիռի քանակն ավելացվում է:

³⁷⁶ [Azərbaycan priobrel u Rossii 24 вертолета «Ми-35М»](http://1news.az/politics/20110224112731122.html)
<http://1news.az/politics/20110224112731122.html>, 24.02.2011
³⁷⁷ http://vpk.name/news/36074_pervyyi_mezhdunarodnyiy_forum_tehnologii_v_mashinostroenii2010.html

Սրանից բացի, մոտ ապագայում Ադրբեջանը կարող է ձեռք բերել Թուրքիայում արտոնագրով արտադրվող խտալական «T-129» մարտական ուղղաթիռներ, որոնք հարվածային բավական հզոր միջոցներ են³⁷⁸:

Ադրբեջանը սահմանապահ զորքերի համար օդանավակայան է կառուցում Բելիզազանի շրջանում: Ի՞նչ է նշանակում սահմանապահ զորքերի համար առանձին օդանավակայան կառուցել: Իրականում այդ նոր օդանավակայանը կառուցվում է Արցախի հարավարևելյան սահմանների ուղղությամբ և մարտական գործողությունների վերականգնում դեպքում այդտեղ կարող են տեղակայվել մարտական ԹՄ-ներ: Հավանաբար, ադրբեջանական զվտավոր շտաբը հաշվել է, որ այդ ուղղությամբ ակտիվորեն գործելու համար օդանավակայանները չէին բավարարում:

Ադրբեջանական Ռ-ՕՌ-ն, ինչպես տեսանք, տեխնիկապես բազմազան է և համարված է հիմնականում ոչ արդիական մեքենաներով: Նման բազմազանությունը և հատկապես ոչ գերճգրիտ սպառազինությունների կիրառությունն ու կատարմանն ինչ մեթոդները չեն կարող դրական ազդեցություն բողմել մարտական հնարավորությունների վրա: Ռազմական տեխնիկայի քանակով ոչ այնքան մեծ ադրբեջանական Ռ-ՕՌ-ն կազմված է մի քանի տեսակի ինքնաթիռներից, որոնք, բնականաբար, պահանջում են առանձին՝ միջանցից անկախ սպասարկումներ, սպառազինություն, մասնագիտացում և այլն: Սակայն սա դեռ խնդիրների ամբողջ փաթեթը չէ: Արցախյան զոյաանարտի ժամանակ նույն ադրբեջանական Ռ-ՕՌ-ն, զինված լի-

³⁷⁸ 2008 թ. իտալական «AgustaWestland» ընկերությունը և Թուրքական կատավորությունը ստորագրեցին 1 մլրդ եվրո արժողությամբ պայմանագիր, որի համաձայն թուրքական «TUSAŞ» և այլ ընկերությունները 50 միավոր «T129» մարտական ուղղաթիռ պիտի արտադրեն երկրի Ռ-ՕՌ-երի համար: Իտալական կողմը թուրքական ընկերություններից պիտի փոխանցի տեխնոլոգիաներ և հիմնի սպասարկման կենտրոն: Hyriyet, 07.05.2008 <http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20080505.aspx>

նելով բազմաքանակ տեխնիկայով և փորձառու օդաչուներով, կատարելով մոտ 10.000 մարտական թռիչք³⁷⁹, նշանակալի ոչ մի հաջողության չհասավ և կորցրեց մոտ 30 թռչող սարք³⁸⁰։ Նկատենք, որ մարտական գործողությունների ժամանակ հայկական հակաօդային հակազդեցությունը, բնականաբար, շատ ավելի թույլ էր, քան հիմա։ Իհարկե, սխալ է թշնամուն թերագնահատելը, սակայն գերագնահատելն էլ է ոչ պակաս մոլորություն։

Հաշվի առնելով մարտական ավիացիայի կիրառության համաշխարհային փորձը՝ մի քանի խոսքով ներկայացնենք, թե ինչպիսին կարող են լինել ադրբեջանական ՌՕՌ-ի հնարավորությունները մարտական ակտիվ և լայնածավալ գործողությունների վերսկսման ժամանակ։

Ադրբեջանական ղեկավարվող ԹՄ-ների ընդհանուր քանակն անցնում է 100-ից, ինչն առաջին հայացքից լուրջ թիվ է, իսկ ընդհանուր ԹՄ-ները կարող են լինել մինչև 300 միավոր։ Անգամ 60-70 տուկոս մարտական պատրաստակամության դեպքում (*ինչը բացառիկ և դժվար ծեռք բերվող ցուցանիշ է*) նշված քանակի ԹՄ-ները կարող են օրական կատարել մինչև 150-200 և ավելի մարտական թռիչք։ Համակարծակի հարձակման դեպքում մնամ քանակի մարտական և խանգարող թռիչքները տեսակաճորեն կարող են զգալի վնաս հասցնել ՀՀ և ԼՂՀ ՁՌ-ին, պաշտպանական կառույցներին և խաղաղ բնակչությանը։ ՀՕՊ-ի՝ միայն վերջոտնյա համախորհրդով կազմակերպված օդային հարվածների դեմ պայքարում, անհնար է հաս-

³⁷⁹ Թվերը ստացել ենք հաշվարկային մեթոդով։ Երբեմն ադրբեջանական ավիացիան կատարում էր օրական 10 և ավելի թռիչք։ Նման ակտիվությանը թռիչքներ են կատարվել 1992-1994 թթ., դրանից առաջ կատարված թռիչքները եղել են քիչ պակաս։ Միջինը ընդունելով 5-6 թռիչք օրական, պատերազմի ավելի քան 1800 օրերի դեպքում ստացվում է 9000-10800 թռիչք։

³⁸⁰ Այս մասին մանրամասն տես՝ Ա. Կ. Հովհաննիսյան, Օդային գերակայություն, Եր., 2010։

նել մեծ արդյունքների։ Նման քանակության սարքերը կարող են ուղղակի փորձել քանակով խեղդել մեր ՀՕՊ-ին։

Ավիացիայի կիրառության և ՀՕՊ համալիրների հակազդեցության համաշխարհային փորձը վկայում է, որ մարտական պայմաններում խոցված յուրաքանչյուր ինքնաթիռի վրա միջինը ծախսվել է «երկիր-երկինք» դասի առնվազն 5 հրթիռ³⁸¹։ Հատկապես խորհրդային ՁՀՀ-ներն արժանագլուստ են մնան և ավելի վատ ցուցանիշներ։ Մինչև օրս գրեթե իդեալական պայմաններում լավագույն ցուցանիշն ապահովված ամերիկյան «Patriot» ՁՀՀ-ն Իրաքում յուրաքանչյուր խոցված ԹՄ-ի համար ծախսել է 1-3,5 հրթիռ³⁸²։

Ադրբեջանական ավիացիայի մարտական գործողությունները դադարեցնելու համար, ասել է թե, որպեսզի նրան զրկենք օդային գերազանցությունից, պետք է գոնե երկու օր անընդմեջ նրանց հասցնել 15-20 տուկոս վնաս։ Եթե երկու օր անընդմեջ օրական խոցվի առնչվազն 20-30 ինքնաթիռ կամ գոնե 10 ինքնաթիռ, ապա դրանք կարող են դադարեցնել թռիչքները։ Մակայն այստեղ ավելի շատ կարող է դեր խաղալ քաղաքական որոշումը և գոհերի հետ հաշվի նստելու բուրբական բնավորությունը, մոդելը։ Անգամ չհաշվելով ՁՀՀ-ի կորուստը՝ դրանց ժամանակավոր շարքից դուրս գալը՝ հրթիռների մեծ քանակ է հարկավոր ծախսել այդ ցուցանիշն ապահովելու համար՝ օրական մինչև 100-150 հրթիռ։ Պարզ է, որ սա անմատչելի խնդիր է։ Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ հրթիռներ կարող են արձակվել ուղղակի շեղող ԹՄ-ների վրա, ինչն անօգուտ ծախս է, ապա ՁՀՀ-ներն ուղղակի չեն կարող դիմանալ մնամ ծանրաբեռնվածությանը։ Սակայն մյուս կողմից՝ մենք այստեղ նկարագրեցինք արդեն իրողություն դարձած օդային մի գերակայություն, որում ամեն

³⁸¹ Василий Н. Я., Гуринович А. Л., Зенитные ракетные комплексы, Минск, 2002, стр. 397, 423-424.; Жирохов М. А., История ВВС Израиля. М.-Минск, 2001, стр. 235.

³⁸² Галкин Д., Боевое применение зенитных пакетных комплексов Пэтриот в вооруженных конфликтах. ЗВО, 10.2006, стр. 26-32.

ինչ բարձր մակարդակի վրա էր, ամեն ինչ հստակ, անբերի աշխատում էր. դա, այսպես կոչված, ամերիկյան օդային հարձակման մի մոդել է: Մարտական մեծաքանակ թռիչքներ կազմակերպելը, իրականացնելը և նպատակին ծառայեցնելը բավական դժվար գործընթաց է, որը պահանջում է ճշգրիտ պլանավորում, նրբագույն իրագործում, մարտական մեծ հմտություններ և այլն: Մի օրում 100 ինքնաթիռ օդ բարձրացնելը, տարբեր խմբիներ ղեկելն ու իրականացնելը դյուրին գործ չէ:

Տեղեկանք. Հայտնի է, որ նման ռազմագործողություն իրականացնելու համար հարկավոր են ավտոմատացված բարդ համակարգեր, օդային ղեկավարման կետեր, գերճշգրիտ հարվածային միջոցներ, մասնագիտական բարձր որակներ և այլն, որոնք այսօր աղբյուրազանական բանակում բացակայում են:

Մենք հաշվեցինք, քե աղբյուրազանական ՉՀՀ-ները տեսականորեն առավելագույնը ինչի կարող են հասնել, սակայն իրականությունը այլ բան է ասում: Խնդիրը ծանրանում է հատկապես սպառազինության կիրառությանը: Առնչյին պայմաններում օդական 200-300 թռիչքն էլ կարող է մեծ արդյունք չապահովել, եթե այդ հարվածները չլինեն գերճշգրիտ, ժամանակակից և հզոր սպառազինությամբ: Աղբյուրազանական ՌՕՌ-ն զինված չէ նման սպառազինության մեծ քանակով, իսկ ԹՄ-ներն էլ դրանք կիրառելու մեծ հնարավորություն չունեն: Այն տեսակետը, որ գումարների և արտասահմանյան մասնագետների շնորհիվ, նրանք վերը նշված ինքնաթիռներից կարող են գերճշգրիտ միջոցներ կիրառել, ոչնչով հիմնավորված չէ: Այսինքն՝ աղբյուրազանական կողմը մեծ գումարներ է ծախսել, ծեղր է բերել տեխնիկա, սակայն տուրք է տվել մոդային և պատրաստվում է անցած պատերազմների: Որպես ցայտուն օրինակ՝ տեղին է նշել Հյուսիսատլանտյան դաշինքի օդուժի գործողությունները Լիբիայում: Ինչպես հայտնի է, դաշնակիցները բոլորը միասին մարտական գոր-

ծողությունների համար սկզբից հատկացրել էին մոտ 350 մարտական ԹՄ³⁶³: Դրանց բվում էին գերծամանակակից եկրոպական և ամերիկյան կործանիչներ ու ուժեղակոծիչներ, որոնք զինված էին գերճշգրիտ խոցման միջոցներով, մինչև իսկ օպերատիվ-մարտավարական ԹՀ-ներով: Վեց ամսում դաշնակիցները բավական արդիական և հզոր սպառազինությամբ (որոնցից, բնականաբար, Ադրբեջանը չունի) կատարեցին մոտ 9000 մարտական թռիչք (ընդհանուր թռիչքները գերազանցում են 23000-ը)³⁶⁴, երբեմն դրանց քանակն օրական հասնում էր մինչև 100-150-ի³⁶⁵: Բացի ավիացիայի մարտական թռիչքներից, դաշնակիցների նավերից արձակվել է նաև ավելի քան 110 միավոր մեծ թևավոր հրթիռ³⁶⁶: Արդյունքները բոլորին են հայտնի, գործողությունները ձգձգվեցին բավական երկար ժամանակ³⁶⁷: Դժվար չէ դաշնակիցների հնարավորությունները համեմատել աղբյուրազանական ՌՕՌ-ի հնարավորությունների հետ: Սակայն խնդիրը միայն քանակական համեմատությունը չէ: Դաշնակիցների

³⁶³ Пентагон назвал число участвующих в налетах на Ливию самолетов, 24 марта 2011. <http://all-wnews.info/in-the-world/192-pentagon-nazval-chislo-uchastvuyuschih-v-naletah-na-liviyu-samoletov.html>

³⁶⁴ Цыганок А. Чему научило НАТО ливийское небо. Анализ боевых действий сил союзников во время воздушной операции в Северной Африке. 1 апреля 2012 года. <http://svpressa.ru/war21/article/54022/>

³⁶⁵ BBC НАТО совершило более 6,66 тысяч вылетов в Ливию, 15.05.2011, <http://www.km.ru/v-mire/2011/05/15/voennaya-operatsiya-v-livii/vvs-nato-sovershilo-bolee-666-tysyach-vyletov-v-liviyu-Liviya-i-Siriya-v-SMI.1-avgusta-2011.01.08.2011>, http://24tv.ua/home/showSingleNews.do?za_voskresene_aviatsiya_nato_v_livii_sovershila_49_boevyih_vyletov&objectid=119892

³⁶⁶ Цыганок А. Чему научило НАТО ливийское небо. Анализ боевых действий сил союзников во время воздушной операции в Северной Африке. 1 апреля 2012 года. <http://svpressa.ru/war21/article/54022/>

³⁶⁷ Справка. Силы международной коалиции, участвующие в операции "Одиссея. Рассвет". 21/03/2011. http://tass-ural.ru/details/spravka_sily_mezhdunarodnoy_koalitsii_uchastvuyushchie_v_operatsii_odisseya_rassvet.html

³⁶⁷ Լիբիական պատերազմի մասին տե՛ս՝ Հովհաննիսյան Ա., Լիբիական փորձը պետք է «սառը ցնցոտ» լինի արևմտյան ռազմագետների համար, Ապրիլ 20, 2011, <http://news.am/arm/news/56107.html>

մի քանի անգամ մեծ ուժերը զինված են նաև աշխարհի ամենաարդիական համակարգերով և սպառազինությամբ, մասնագետները ամենապատրաստված մակարդակ ունեն, բավական հարուստ փորձ, հակառակորդը հիմնականում գտնվում է հարթավայրում, ինչը նշանակում է, որ ցանկացած նշանակետ հեշտությամբ կարելի է հայտնաբերել, իսկ լիբիական ՀՕՊ-ը չափազանց ցածր մակարդակի վրա է: Այննայս է, որ Ադրբեյջանի դեպքում բոլորովին այլ բան կարող է ստացվել, քանի որ ունենք բոլորովին այլ պայմաններ նաև կողմերի պատերազմական ընդհանուր խնդիրների առումով, ինչը միանշանակ խոսում է ադրբեյջանական օդուժի դեմ:

Մովորաբար ՌՕՌ-ի հաջող կիրառության փորձը, որը հիմնականում պատկանում է սահմանափակ թվով երկրներին, իրագործվում է նորագույն և հզորագույն միջոցների գերաբնմամբ ու մեծ ծախսերով: Դրանց համար անհրաժեշտ են բազում բաղադրիչներ, որոնք ներկայումս Ադրբեյջանում չկան: Այստեղ խնդիրը հատկապես գերճշգրիտ սպառազինություններն են: Ծիչու է, դաշնակիցների անգամ այս ցուցանիշները հասանելի չեն Ադրբեյջանին, սակայն իրական հաջողության համար ՆԱՏՕ-ն պիտի կատարեր ոչ թե օրական առավելագույնը 100-150, այլ՝ հազար թռիչք, ինչպես դա իրականացվում էր նախկինում: Որպես համեմատություն՝ իլիշենք կոալիցիոն ուժերի գործողություններն Իրաքում, Հարավսլավիայում և այլն, որտեղ օրական հազարավոր թռիչքներ էին կատարվում³⁸⁸: Իսկ այդ 22.000 թռիչքները կատարվում էին մի քանի օրում, սակայն մի ժամանակ կար ԱՄՆ-ն և ներգրավված էր ավելի քան 1.500-2.000 մարտական ինքնաթիռ: Ամերիկյան այդ մոդելը ևս կայացել է տասնյակ տարիների ընթացքում: Այն, ինչ իրականացրել են, փորձել են կրկնել արաբները, Պակիստանը, Անգոլան, ՌԳ-ն, սակայն այնքան էլ չի

ստացվել: Ինչպես երևում է, Ադրբեյջանի համար դա անգամ 5 մրդ ղոլարանոց բյուջեով հասանելի չէ:

Մարտական ավիացիայի կիրառությունը ոչ գերճշգրիտ սպառազինությամբ մինչև օրս լավագույն դեպքում ապահովել է 30-35 տոկոս հարվածների ճշտություն կամ արդյունավետություն: Այն էլ՝ նշված ցուցանիշն ամերիկացիներն ապահովել են միայն բազում միջոցառումների ապահովման արդյունքում: Այլ ՌՕՌ-ի կողմից նման կիրառությունների արդյունավետությունը չի գերազանցել 20 տոկոսը³⁸⁹: Մարտական պայմաններում հակառակորդի ՀՕՊ-ի կողմից խոցված յուրաքանչյուր ԹՄ-ի փոխարեն կիրառվում է երկուսը, որպեսզի չեզոքացվի զենիթային այդ միջոցը:

Թե ինչպիսի հնարավորություններ ունի հայկական ՀՕՊ-ը պատերազմից հետո, արդեն մի քանի անգամ ապացուցվել է գորավարությունների ժամանակ: Ներկայումս հայկական ՀՕՊ-ը բազմաշերտ, թվային տեխնոլոգիաներով հագեցած համակարգ է, որը ունի միայն վեց դիվիզիոն «Ա-300» համալիրներ:

Ռազմական ամենափայլուն գործողությունների ժամանակ անգամ ամերիկյան ՌՕՌ-ն մարտական թռիչքների մոտ կեսը հատկացնում է ՀՕՊ-ի չեզոքացմանը, իսկ առաջին հարվածի ժամանակ հարվածային երկու ԹՄ-ների ուղեկցում է ՌԷՊ-ի առնվազն մեկ ինքնաթիռ³⁹⁰, այսինքն՝ առաջին հարվածի դեպքում ադրբեյջանական ԹՄ-ներին հասցված հարվածները կարող են տապալել օդային ուղի հարձակումը: Շատ երկրներ են փորձում իրենց ՌՕՌ-ն մեծանցել ամերիկյան օդուժին, սակայն դա ընդամենը ցանկություն է, իսկ ադրբեյջանական տարրերակն առհասարակ նման հնարավորություն չունի, քանի որ հին են մեթոդները, մոտեցումներն ու միջոցները:

³⁸⁸ The United States Strategic Bombing Survey Report (European War). September 30, 1945, reprinted in The United States Strategic Bombing Surveys (European War) (Pacific War). Maxwell Air Force Base, AL: University Press, 1987. 29 may 2009, p. 13.

³⁸⁹ Այս մասին մանրամասն տես՝ Հովհաննիսյան Ա. Կ. «Օդային գերակայություն». Եր., 2010:

³⁸⁸ Барвиненко В. В., Емеленчик Е. Г., О совершенствовании подготовки органов управления войсками (силами) ПВО. Военная Мысль, март-апрель 1997, стр. 50; Зарубежное Военное Обозрение. № 4. 2008, стр. 50.

Այստեղ մի հատկանշական դեպք կա, որի քննությունը որոշակի հետևությունների տեղիք է տալիս: Դեկտեմբերի 26-ին Ադրբեջանի Թագին (նախկին Նաստանի) բնակավայրում տեղակայված զինվորական օդանավակայաններից մեկում դժբախտ պատահար գրանցվեց: Վրաստանի քաղաքացի Յուրի Կուլչակովը, որը ռազմաօդային ուժերի «Су-25» ինքնաթիռը պատրաստում էր ուսումնական թռիչքի, ընկել էր օդանավի ռեակտիվ շարժիչի տուրբինի մեջ և մահացել: Կուլչակովը ինքնաթիռի տեխնիկ էր³⁹¹:

Մասնագիտական տեսանկյունից այս տվյալների մեջ մի քանի հետաքրքիր փաստ կարելի է արձանագրել. նախ և առաջ՝ ի՞նչ գործունի Վրաստանի քաղաքացին՝ այն էլ սլավոնական ազգանունով, ադրբեջանական ՌՕՌ-ում, եթե դա, ասենք, համատեղ գործավարժություն չէ: Ադրբեջանական կայքերից մեկում նշված էր, որ Կուլչակովը եղել է գործուղման մեջ: Սա կարող է մի քանի քան նշանակել.

- Ադրբեջանը չի կարողանում շահագործել տվյալ տեսակի ինքնաթիռները և մարտական գործողությունների ժամանակ օգտվում է վարձկանների ծառայությունից.

- Ադրբեջանը զբաղվում է այս տեսակի ինքնաթիռների կատարելագործմամբ կամ վերանորոգմամբ և օգտվում է վրացական կողմի ծառայություններից: Նման հնարավորությունն առկա է, քանի որ Վրաստանում այս ինքնաթիռների գործարան կա:

Երկրորդ դեպքում րացացիչ հարցեր են առաջանում: Այն է՝ վրացական գործարանի ավիատեխնիկը սովորական ուսումնական թռիչք չի սպասարկել, այլ, հավանաբար, փորձնական: Սակայն մա ինչու է Ադրբեջանում, երբ մնան թռիչքները իրականացվում են հիմնականում վերանորոգող երկրում, իսկ եթե անգամ Ադրբեջանում է դա իրականացվում, ինչու՞ է նման քարձրակարգ տեխնիկը այդքան անփույթ եղել: Նման պատահարների ժամանակ քիչ հավանական է, որ մեղավոր լինի միայն տվյալ անձը. սովորաբար անվտանգության

կանոնները խախտում են մա օդաչուները: Իսկ օդաչուն հավանաբար եղել է ադրբեջանական բանակի սպա: Այս բոլոր տարբերակները, անկախ կոնկրետ մեկի հավանականությունից, բերում են այն եզրակացության, որ ադրբեջանական ՌՕՌ-ն, չնայած անոնյի ծախսերին և ձեռնարկվող միջոցներին, դեռ շատ հեռու է մարտունակ և բարձրակարգ լինելուց, ինչպես մերկայացվում է: Եթե տվյալ դեպքում խոսքը, համեմատաբար, հասարակ ինքնաթիռի մասին է, ապա ինչպիսի՞ն է վիճակը ավելի բարդ մեքենաներ հանդիսացող կործանիչների պարագայում:

Չի բացառվում, որ իրական են այն լուրերը, որ ադրբեջանական կործանիչների շահագործման իրականացնում են ուկրաինացի մասնագետները և իսրայելական օդաչուները:

Մի հետաքրքիր փաստ ևս. վերը նշված բնակավայրում դեռ ԽՍՀՄ-ի օրոք կար մեծ օդանավակայան և ոչ թե օդանավակայաններ, ինչպես հաղորդվում է: Սակայն այնտեղ ոչ թե տվյալ տեսակի գոտիչներ էին տեղակայված, այլ՝ կործանիչներ: Այդ վայրում գոտիչի տեղակայումը նոր հետաքրքրություն է ներկայացնում:

Ադրբեջանական օդուժը, ինչպես արդեն նշեցինք, զարգանում է՝ որոշակիորեն շեշտադրում անելով մարտական ուղղաթիռների վրա, և շատերը սա օրինաչափ ու օգտակար են համարում, քանի որ մարտական հավանական գործողությունները լեռնամատային տեղանքում են լինելու: Մարտական այդ ուղղաթիռներն արևմտյան չափանիշներով հիմնականում տեղակայվում են համագորային բրիգադների կազմում, սակայն այստեղ մի էական խնդիր կա. Ադրբեջանը, այսպես կոչված, գորային օդուժը զարգացնելով արևմտյան չափանիշներով՝ մարտավարական օդուժը թողնում է խորհրդային մակարդակի վրա, որը մեծադույն սխալ է: Օդուժը առանց մարտավարական հզոր բաղադրիչի չի կարող արդյունավետ գործել, քանի որ անկանոն ցրված ու առանձին գործող ՀՕՄ միջոցներն ուղղակի կրկվտեն ուղղաթիռային նման օդուժին: Ահա, այսպիսին է ադրբեջանական ամենամարտունակ և հզոր զորատեսակի մարտական

³⁹¹ В Баку техника засосало в турбину штурмовика «Су-25». 27 декабря 2011 г. <http://news.open.by/world/69633>

հնարավորությունը, գորատեսակ, որը շատ անգամ անհիմն ներկայացվում է որպես անպարտեղի:

3.4. Հրթիռահերետահային միջոցներ

Աղբրեջանական բանակի հրետանին բաղկացած է շուրջ 1000-1500 առանց ականանետերի տարատեսակ իրանոթներից, հարվածային այլ միջոցներից³⁹²: Դրանք ավանդական հրետանային՝ հիմնականում խորհրդային միջոցներ են: Այդ քանակությունից՝ մեծ նշանակություն ունեն մարտավարական հրթիռային «Точка-У» (9К79-1) համալիրները, «Смерч» (9К58), «Ураган» (9К57), «LAR-160», «Т-300» և «Lyox» ՀՎՌՀ-ը: Աղբրեջանը ցամաքային ունի ձեռք բերել մաս իսրայելական օպերատիվ-մարտավարական «LORA (Long Range Attack)» հրթիռներ, որոնք իրենց տեսակով բացառիկ նմուշներ են: Նշված հրթիռներից մի քանիսը համարվում են գերճշգրիտ և հեռահար սպառազինություն: Իսրայելական «Lyox» համակարգի ոչ բոլոր տեսակի հրթիռներն են գերճշգրիտ, և ընդհանրապես այս համակարգը մեծ խնդիրներ ունի, իսկ ռուսական «Смерч» (9К58)-ը, որքան էլ ներկայացվում է որպես հարձակողական հզոր միջոց, այնուամենայնիվ, Աղբրեջանում դեռ գերճշգրիտ չէ: «Точка-У» համալիրն ինքնագնաց մեքենայի վրա ունի մեկ հրթիռ (9М79-1К կամ 9М79-1Ф), որի մարտական մասը ավելի քան 400 կգ է և կարող է նշանակետեր խոցել մինչև 120 կմ հեռավորության վրա: Առավելագույն հեռավորության վրա հրթիռի սխալվելու շահվել կազմում է մոտ 200-300 մ³⁹³, չնայած մարտական պայմաններում եղել են մինչև 50 մ դիպուկության դեպքեր: Համալիրների քանակը ստույգ հայտնի չէ, սակայն եթե այն մոտենում է մեկ տասնյակի, դա արդեն լուրջ խնդիր է: Նման հրթիռներից պաշտպանվելը շատ դժվար է: Կան ընդամենը մեկ-երկու զենիթահրթիռային համալիրներ,

³⁹² Дернглазова Л., Минасян С., Нагорный Карабах: Парадоксы силы и слабости в асимметричном конфликте. Ереван, 2011 г., стр. 123.

³⁹³ Широкопад А., Атомный таран XX века. М., 2005. стр. 225-228.

որոնք ի վիճակի են խոցել մեկ-երկու նման հրթիռ՝ ոչ մեծ հուսալիությամբ:

Մեծ ուշադրության է արժանի գորահանդեսին ցուցադրված իսրայելական ՀՎՌՀ-ն: «Lyox»-ն ունի հրթիռների մի քանի տեսակի արձակման հնարավորություն: Տարբեր տվյալներով՝ այն պետք է արձակի 122 մմ-ոց, 160 մմ-ոց, 300 մմ-ոց և 330 մմ-ոց հրթիռներ կամ ԱՄԹ-ներ³⁹⁴: Առանձնապես հետաքրքիր են մեծ հզորությամբ և հետախորությամբ օժտված 300 մմ-ոց մարտավարական «EXTRA» հրթիռները, ավելի մեծ թևավոր հրթիռները և ԱՄԹ-եր հանդիսացող «DELILAH»-ները: Սակայն, ինչպես պարզվում է, այս ՀՎՌՀ-ի հետ կապված լուրջ խնդիրներ կան³⁹⁵:

Այսպես, 2008 թ. Աղբրեջանը, իբր, Իսրայելից գնել էր «Lyox» տեսակի ՀՎՌՀ 3 արձակման կայաններ, որոնք հապճեպ ցուցադրվեցին գորահանդեսին, մինչդեռ դրանք արտադրվել են Ղազախստանում³⁹⁶: Հետո դրանց քանակն ավելացվել է. տարբեր տվյալներով գնվել է 300 մմ «Extra» տեսակի 50 հրթիռ: Հատկանշական է, որ Ղազախստանում (Ռալպա) անվանումով համանման ՀՎՌՀ-ի հետ կապված մեքենայությունների արդյունքում ձեռքարկվել են այդ երկրի պաշտպանության նախարարության բարձրաստիճան մի շարք աշխատակիցներ: Պարզվել է, որ իսրայելական «Israel Military industries – Soltam Systems LTD» ընկերությունների ար-

³⁹⁴ Гуров С. В., Боеприпасы реактивной артиллерии // Боеприпасы и высокоэнергетические конденсированные системы. Научно-технический журнал. Выпуск №4, – 2008, стр. 6-13.

³⁹⁵ Улибриниан տես Կոնովալով, Կучուկով, «Вызвал огонь на себя, Время», 14.04.2009 (<http://www.time.kz/index.php?newsid=9969>): Сделка с казахами заморожена-израильский производитель военной техники увольняет работников, <http://izrus.co.il/dvuhstoronka/article/2009-03-30/4159.html>, 03.30.2009: Թե ինչպես աղբրեջանցիները գնեցին Ղազախստանում արտադրության իսրայելական գներ. Հունվար 16, 2012. <http://razm.info/1936>

³⁹⁶ Թե ինչպես աղբրեջանցիները գնեցին Ղազախստանում արտադրության իսրայելական գներ. Հունվար 16, 2012. <http://razm.info/1936>

տաղրած հիշյալ ՀԿՌՀ-ն և հրետանային համակարգերը փորձարկման ժամանակ դրսևորել են կառուցվածքային և տեխնոլոգիական էական թերություններ: Իսկ, ինչպես հայտնի է, Ադրբեջանում մնան քանների վրա քթած ունեն, քանի որ նրանց համար առաջին տեղում ձևական կողմն է: Նույնպիսի կիսատ-պաշտություն էր 2011 թ. սեպտեմբերի 12-ին Արցախում խոցված ադրբեջանական ԱԹՄ-ն, որը խորայնական տարբեր մոդելների գուգորյում էր, սուրոգատ: Ադրբեջանը մի անգամ ցուցադրել է այս զենքի մարտական հրթիռների արձակումը, սակայն դա քիչ քան է նշանակում:

«LORA (LORange Attack)» օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիրների բավականին հզոր միջոցներ են: Դրանց հեռահարությունը կազմում է ավելի քան 250 կմ մոտ 400-500 կգ մարտական մասի դեպքում: Իրենց տեսակի մեջ այս հրթիռներն առանձնանում են նրանով, որ գերճշգրիտ են, ինքնուղղորդվում են երեք տարբեր՝ մեկը մյուսից անկախ համակարգերով: Այս թանկարժեք համալիրները տարածաշրջանում զենքի մրցավազքն այլ մակարդակի վրա կարող են բարձրացնել, սակայն նշենք, որ դրանք դեռ հաստատ չկան:

Ադրբեջանը մեծ հեռաբրդություն ունի նաև ռուսական համապատասխան հրթիռների նկատմամբ, ինչը չափազանց մուրք, քաղաքական ու ռազմատեխնիկական հարց է դառնում: Նման հրթիռները, բացի ռազմական նշանակությունից, ունեն նաև քաղաքական մեծ նշանակություն:

Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանը մեծ համակրանք ունի ՀԿՌՀ-ի նկատմամբ՝ որակով թե անորակ, մեծ թե փոքր, հեռահար թե մոտիկ գործողությամբ: Ավաճի լավագույն վկայությունից է նաև, Բոսնիա-Հերցեգովինայից ձեռք բերված «RAK-12» (M63 Plamen) 128 մմ-ոց ՀԿՌՀ-ն են՝ 10 միավորով և դրանց համար նախատեսված

20 հազար հրթիռներով³⁹⁷: Հատուկ նշենք, որ վերջինիս հեռահարությունը կազմում է ընդամենը 8,6-12 կմ, ինչը մեր վերը ասած բոլոր տեսակետների հավաստումն է: Եթե ադրբեջանական բանակում արդեն կարի խորհրդային «Смерч» (9K58) ՀԿՌՀ-ն՝ այն էլ մեծ քանակությամբ, որն այս կամ այն կերպ համարվում է իր տեսակի մեջ լավագույններից մեկը, ապա ի՞նչ իմաստ ունեք գնել դրա նման խորայնական համակարգ, առավել ևս թուրքական «Т-300», որը անգամ մոդուլային չէ, ինչպես խորայնականը: Ընդ որում, թուրքական այս ՀԿՌՀ-ն 4-6 միավորի համար (որոնք իրենցից ներկայացնում են չինական «WS-1B» ոչ այնքան լավ ՀԿՌՀ-ն թուրքական ոչ այնքան իմանալի կրկնօրինակը) Ադրբեջանը վճարել է մոտ 250 մլն դոլար³⁹⁸: Մինչդեռ աշխարհում իրականում իրենց տեսակի մեջ լավագույն ամերիկյան «MLRS» ՀԿՌՀ-ն արժեն 4-7 մլն դոլար:

Մինչև հրադադարի կնքումը Ադրբեջանը հայ խաղաղ բնակչության նկատմամբ կիրառում էր «Град» ՀԿՌՀ, 500 կգ-անոց և ավելի ծանր ռումբեր³⁹⁹: Միտումները նույնն են. այսօր գնվում են հզոր ՕՀՄ-ներ, որոնց դերակատարությունը տեղային վերջին պատերազմներում զգալիորեն աճել է⁴⁰⁰: Եթե ուշադրություն դարձնենք, ապա կտեսնենք, որ ակտիվորեն գնվող սպատազինությունը իր ավելող լուսականիչներով, հեռահարությամբ, դիպուկությամբ և հատկապես քանակով զգալիորեն տարբերվում է մախկինում կիրառվածից: Նախկինում հիմնական ՕՀՄ-ները խորհրդային սովորական սպատազինություն կիրառող ինքնաթիռներն ու ուղղաթիռներն էին, որոնց

³⁹⁷ Стал известен список вооружения и военной техники, закупленной Азербайджаном у некоторых стран в 2010 году. 20 Июл. 2011. <http://ru.az/news.php?id=198593>

³⁹⁸ Баку купил у Турции таинственные ракетные комплексы Т-300. 24.01.2013. <http://warfiles.ru/show-22435-baku-kupil-u-turcii-tainstvennyye-raketnye-kompleksey-t-300.html>

³⁹⁹ АгаджанянМ., Асатрян Э., Минасян С., Азербайджан ...стр.103.

⁴⁰⁰ Այս մասին տես՝ Հովհաննիսյան Ա., Մի քանի հարցեր ավիացիայից, Եր., 2009:

հետ պայքարում հայկական կողմը ցուցաբերեց հիանալի արդյունքներ, իսկ «Դրած»-ի հրթիռների դիպլոմությունը շատ ցածր է, մարտական մասն էլ մոտ է 20 կգ-ին⁴⁰¹։ Ադրբեջանը այդ գործը նորից շարունակում է թուրքական հրթիռներով և բուսնիական համակարգերով։ Մակայն ասպարեզ են մտնում հեռահար ու ճշգրիտ նոր հրթիռներ, մեծ ՀԿՈՂ-Ո՛՛ մի քանի հայրուր կիրառամանոց հրթիռներով, որոնց մարտական մասերն անցնում են 100-150 կգ-ից և որոնք ունեն նաև կասետային մարտական մասեր։ Ի հայտ են գալիս մարտավարական հրթիռներ ևս, որոնց դիպլոմությունը շատ բարձր է, իսկ նրանց հետ պայքարը շատ դժվար է⁴⁰²։ Վերջերս Ադրբեջանի գնած հրանոթային հրետանային համալիրները և հրանոթները ևս աչքի են ընկնում իրենց հեռահարությամբ և հզորությամբ (203,2 մմ տրամաչափի «2С7 Псион», 152 մմ տրամաչափի «2А36 Гвиацинт-Б», 152 մմ «Мста-С» և 130 մմ տրամաչափի «М-46» հրետանային համալիրները)։ Նման միջոցներով անակնկալ հարվածի դեպքում թշնամին կարող է զգալի վնասներ պատճառել մեր կարևորագույն նշանակետերին, ուրոնց տեղը և դիրքը վաղուց ուսումնասիրել են հետախուզության ամենատարբեր միջոցներով։ Հարձակողական այս միջոցները, կարող են ուժեղանոցի հայկական քաղաքներն ու հաղորդակցության կարևորագույն ուղիները։ Համակարգային կիրառությունից բացի, համագործային մարտի ժամանակ դրանք կարող են կիրառվել նաև այլ ձևով։ Խոսքը, իհարկե, մեր բնակավայրերի և տնտեսական ունեցվածքի մասին է, որոնք կարող են տոտալ ուժեղացման ենթարկվել՝ անգամ ադրբեջանական ՋՈՒ-ի անհաջողության դեպքում։ Այս պարագայում երևան է գալիս մի նոր իրողություն, այն է՝ ապագա ռազմական գործողությունների ժամանակ ճակատ և թիկունք չի լինի։ Պատերազմի բնագիծը կարող է անցնել անգամ Երևանով. ասել է, թե՛ դրա առաջն ամենուր համար հարկավոր է պատրաստվել՝ ռազմա-

⁴⁰¹ Князев В., Боевая техника. М., 1986, стр. 99.

⁴⁰² Կան ընդամենը մի քանի դեպքեր, երբ ամերիկյան կամ ռուսական անձնաարդիական համալիրները խոցել են նման հրթիռները։

կանապես, տնտեսապես, քաղաքականապես և այլն։ *Այստեղ նաև առաջ է գալիս ուժեղացման հարցը, որն ավելի քան 20 տարի է՝ անուշադրության է մատնված։*

Վերը շարադրվածի առջևությամբ նկատենք, որ Իրան-իրաքյան պատերազմի ժամանակ (1980-1988 թթ.) տեղի ունեցավ, այսպես կոչված, «քաղաքների պատերազմ», որն ինչ-որ կերպ դարձել է պատերազմի նոր տեսակ։ Պատերազմի նախորդ փուլում Ադրբեջանը այս քայլը կատարում էր մեծ հիացմունքով, սակայն մենք չէինք կարողանում հակառակված տալ։ Այս անգամ նրանք դա կանեն ավելի մեծ հնարավորություններով և կարող են մնալ անպատիժ, եթե համապատասխան միջոցներ ձեռք չառնվեն։

Ներկայումս ադրբեջանական բանակի սպառազինության մեջ գտնվող 203,2 մմ-ոց «2С7 Псион» հրետանային համալիրը հարձակման թավական հզոր միջոց է։ Դրա «2А44» հրանոթը սովորական արկերով կարող է թիրախներ խոցել 37,5 կմ հեռավորության վրա, ակախվ ռեակտիվ արկերով՝ մինչև 55 կմ հեռավորության վրա, իսկ արկերը մոտ երկու անգամ ծանր են 152 մմ-ոց արկերից⁴⁰³։ Նման համալիրները պատերազմի ժամանակ կիրառվում են սահմանափակ դեպքերում և հատուկ թիրախների նկատմամբ։ Դրանք, իրենց հեռահարության հաշվին, հակամարտկոցային մենամարտերից դուրս են։

Նշված առավելություններով հանդերձ՝ նման մեծ հզորության հրանոթաիրետանային համալիրներն ունեն լուրջ բերություններ։ Դրանք ծանր են, կրակի արագաձգությունը մեծ չէ, իսկ տվյալ համալիրի հրանոթի քարձրացման անկյունը չի անցնում 60⁰-ից⁴⁰⁴։ Փաստորեն, համալիրի ծանրությունը և հրանոթի քարձրացման

⁴⁰³ Ломаченко С. В., Булатов О. Г., Гаврилович С. В., Артиллерия большой мощности: история и перспективы развития. Военная мысль. Март-апрель. 2001, стр. 4.

⁴⁰⁴ Широкоград А. Б., Атомный таран XX века, М., 2005, стр. 187-188.

փոքր անկյունը մեր տարածաշրջանի համար այն դարձնում են անարդյունավետ:

3.5. Ջրահատեխնիկայի պոտենցիալը

Աղբրեջանական քանակի սպառազինության մեջ կան մեծ քանակությամբ խորհրդային հին «T-72», կատարելագործված «T-72» և ռուսական նորագույն «T-90» տեսակի հրասայլեր ու տարբեր զրահամեքենաներ: Առաջինների ընդհանուր թվաքանակը կարող է կազմել մինչև 1200-1500 միավոր, իսկ երկրորդներինը՝ ավելի քան 2000, այդ թվում՝ մոտ 100 միավոր նոր հրասայլ: Պլանավորվում է նաև վերջինիս քանակը հասցնել շուրջ 500-ի: Դժվար է ասել դրանց քանի՞ տոկոսն է մարտունակ, քանի՞որ՝ խտտան: Աղբրեջանը կրկին առաջնորդվում է զրահատեխնիկայի մեծ բազմազանությամբ և քանակի ապահովմամբ, մեղմ ասած, առանց որակին ուշադրություն դարձնելու:

Ջրահատեխնիկայի քանակին զուգահեռ՝ երկար ժամանակ չէր մեծացվում ինքնագնաց հրետանային միջոցների քանակը: Ակնհայտորեն, մնան միջոցներն առաջնային չէին համարվում, ինչը մասնագետներին եզրակացնելու տեղիք էր տալիս, որ Աղբրեջանը պարտատվում է ոչ թե ճեղքման, այլ՝ հեռահար ավերման: Մեր թշնամին, հիմնական շեշտը դրել է հայկական պետությունների ենթակառուցվածքները հեռահար կրակով ոչնչացնելու վրա, ինչը անում էին նախորդ անգամ: Սա արդեն պետք է բավարար համարել պնդելու համար, որ նրանք «հակառակողի» հետ անմիջական շփումից մարտական լայնածավալ գործողություններից, գերադասում են խուսափել, չնայած դրան և ամեն կերպ պատրաստվում են:

Երբեմն խոսվում է, որ ապագայում աղբրեջանական քանակը կարող է մեկ կամ երկու ուղղությամբ անցնել հարձակման: Խոսքը, մասնավորապես, հարավային, արևելյան կամ հարավարևելյան ուղղությունների մասին է: Նայելով քարտեզին՝ հասկանալի է դառնում, որ պարզ հաշվարկներով հնարավոր է այդպես ուղղաթիռներով հար-

ծակում զարգացնել: Այս հարցում, սակայն, բազմաթիվ խնդիրներ են առաջանում: Նախ, մնան հարձակումը պետք է լինի արագ կամ կայծակնային, քանի որ հատկապես հարավային ուղղության դեպքում հապաղումը կարող է ավարտվել հիմնական ուժերի շրջապատմամբ և ոչնչացմամբ: Ընդհանրապես, արագ հարձակումներն իրենց մեծ նրբություններն ունեն, դրանց ժամանակ, բացի բավական դժվար մի շարք պահանջներից, հարկավոր է նաև զրահատեխնիկայի մեծ խտացում, ամբողջ ուժերի բարձրակարգ համագործակցություն, գործողությունների արագություն և անսխալակամություն: Այսինքն՝ հարձակվողները մեծ խտությամբ պլտի հարվածներ են հատվածի վրա և փորձեն ճեղքել այն ու զարգացնել այդ ճեղքումը: Ծեղքման համար նախատեսված խտացումը կարող է լինել մինչև իսկ մի քանի տասնյակ զրահատեխնիկա՝ 1 կմ ճակատի վրա: Հայկական ուժերի զրագետ կազմակերպված և հագեցած պաշտպանական բնագծերի ճեղքման համար, ինչպես նաև հաշվի առնելով հատկապես մորիկ և լավ զինված, հակատանկային սպառազինությամբ խմբերի առկայությունը՝ հարձակվողները պետք է հնարավորինս խիտ հարձակվեն նեղ հատվածի վրա, սակայն միևնույն ժամանակ տարվելով այդ հարձակմամբ՝ չպետք է թևերը բացեն հարվածների և շրջապատման համար: Նման հարձակումների ժամանակ առաջանում է մեծ սեպ, որի թևերը մնում են անպաշտպան: Այդ ժամանակ, սակայն թևերը հնարավորինս ապահովագրելու համար հարկավոր են աջակցող, շեղող հարվածներ, որոնք կկաշկանդեն մեր մտացալ ուժերին: Այդպիսի գործողությունների լավ օրինակներ են Երկրորդ համաշխարհային պատերազմի (այտուհետ՝ ԵՀՊ) ճակատամարտերը, նաև արաբախորայելական պատերազմները: Մարտական մնան փայլուն գործողություններ, իհարկե, սահմանափակ ծավալով, իրականացրել է հայկական զինուժը 1993 թ.:

... Ըստ հայտնի տվյալների՝ ներկայումս աղբրեջանական քանակում կա 800-1000 «T-72», ավելի քիչ՝ «T-84», «T-90» հրասայլ և

շուրջ 200 տարատեսակ ինքնագնաց հրետանային միավոր միջոց⁴⁰⁵։ Վերջիններս հատկապես կարևոր են հարձակման ժամանակ գրահատելսնիկային աջակցելու համար։ 2013 թ. Բաքվի գորահանդեսում ցուցադրված ծանր հրանետները, որոնք ներկայացվում են որպես ճեղքման միջոցներ, որպես այդպիսին, կիրառվելու սահմանափակ հնարավորություններ ունեն։

Տեղեկանք. «TOC-1A Сомышенек» կոչվող հրանետները հիմնականում նախատեսված են առանձին նշանակետերի ոչնչացման համար, մեծ մարտակարգերում կիրառվել չեն կարող, քանի որ աշխատում են միայն կանգնած դիրքից, բավականին ծանր են, կիրառումից առաջ նախապատրաստություն են պահանջում, իսկ հետահարությունը մեծ չէ՝ առավելագույնը՝ 5-6 կմ։ Այսինքն՝ դրանք չեն կարող ճեղքում իրականացնող հիմնական միջոցների՝ հրասայլերի հետ կազմել մեկ մարտակարգ, իսկ այլ դեպքերում դրանք կրկնկեն հրետանու հարվածի տակ։

Հայկական կողմի նման խիտ պաշտպանության բնագծերի հաղթահարման համար 5-10 կմ ճակատով հարձակման դեպքում կարող են կիրառվել մինչև 250-300 հրատայլ և մույնքան գրահամեքենա, հատկապես, որ նախօրոք իրականացված օդային հարվածը կարող է լինել ոչ արդյունավետ։ 10 և ավելի կմ հարձակման մեկ հիմնական ուղղության համար արդեն աղբրեզանական գրահատելսնիկան և հատկապես ինքնագնաց հրետանին բավարար չէ այդ հարձակումը զարգացնելու համար։ Բնականաբար, հիմնական երկու ուղղության կամ 20-30 կմ ու ավելի ճակատով հարձակման մասին խոսելն արդեն զավեշտալի է։ Նման փորձեր շատերն են արել, այդ

⁴⁰⁵ Սպառազինությունների նշված և նշվելիք քանակները ըստ՝ The Military Balance 2010. — p. 176. և Дериглазова Л., Минясян С., Нагорный Карабах: Парадоксы силы и слабости в асимметричном конфликте. Ереван, 2011 և այլ ավելի ժամանակակից աղբյուրներից։

թվում՝ աղբրեզանցիները, սակայն դրանք բավական տխուր վախճան են ունեցել։ Մյուս ուղղությունը կարող է լինել միայն աջակցող կամ շեղող։ Աղբրեզանի համար ամենահետադրիչ ուղղությունը կարող է լինել Ալևի ուղղությունը, որը դեպի Ստեփանակերտ ամենակարճ ճանապարհն է։ Սակայն, նկատենք, որ բոլոր հատվածներում էլ կան թաքնված դժվարություններ։

Այս հարցում, իհարկե, հարկավոր է հիշել մարտական գրեթե բոլոր կանոնադրություններում ամրագրված այն կանոնը, որ հարձակվողը պետք է մի քանի անգամ գերազանցի պաշտպանվողներին։ Երբեմն խոսվում է 3-5-ի, երբեմն կախված տեղանքից՝ 6-7 անգամ քանակական առավելության մասին և այլն։ Ամեն դեպքում փաստն այն է, որ քանակական այդպիսի առավելություն Աղբրեզանը չի կարող ապահովել՝ չնայած նախորդ պատերազմի ժամանակ նույնիսկ նման քանակական առավելությամբ նրանց մոտ ոչինչ չստացվեց։ Իհարկե, համաշխարհային պատմության մեջ ամենափայլուն ռազմավարներն անգամ գործի ավելի քիչ թվաքանակով են հարձակվել և հաղթանակներ տարել։ 1993 թ. մեր գործողությունները դրա ամենափայլուն օրինակն են։ Առաջներում նման բան արել են իրենց կարգապահությամբ, պատրաստվածությամբ և տեխնիկական հագեցվածությամբ աշխարհի լավագույն բանակները՝ լավագույն հրամանատարները։

Մենք չնչեցինք մի շատ կարևոր հանգամանք. գուտ հարթավայրային տեղանքը մեզանում շատ քիչ է, հարձակվողների համար էլ թեկուզ մեկ փոքր բարձունքի հաղթահարումը մեծ խնդիր կարող է դառնալ։ Նման սրընթաց հարձակումները հիմնականում իրականացվում են հարթավայրերում, այն էլ օդուժի բացարձակ գերակայության պայմաններում, մոտոհետևակի և, մասնավորապես, գրահախմբերի գրագետ գործողությունների համադրմամբ, հրետանային գրագետ աջակցությամբ և այլն։ Այդ ամենը նաև պահանջում է գորամիավորումների և գորատեսակների փայլուն, անխաղ դեկլավայում, օպերատիվ արվեստի տիրապետում, ինչը երբեք հնարավոր չէ ձեռք բերել մեծ գումարներով։ Հնուտ և բանիմաց գորավարները, բա-

ցի բնատուր սուր դատողությունից, մտքից ու խելքից, պետք է ժամանակի ընթացքում դաստիարակվեն, կոփվեն, հասունանան: ‘Կա պահանջում է ժամանակ, ավանդույթ, դպրոց, իսկ ամենակարևորը՝ հաղթանակներ: Աղբրեջանական բանակի ներկայիս գեներալները 1993-1994 թթ. այն սպաներն են, որոնք հիմնականում մահացել ու պարտություններ են կրել և բանակի գլխավոր շտաբներում գրեթե երբեք իրենց տրամաչափով չեն փայլել: Սա անգամ աշխարհի ամենահզոր ու հարուստ բանակների համար անհասանելի է միանգամից ու մեծ գումարներով: Չի կարելի բացառել, որ զուտ տեխնիկական մեծ ազդեցության տակ նրանք կկարողանան ճեղքել որոշ հատվածներ, սակայն միայն ճեղքել խնդրի լուծում չէ, այն հարկավոր է զարգացնել և օպերատիվ իրավիճակում:

3.6. Հիմնական արդյունքները

1994 թ. ի վեր Աղբրեջանը մեծ տեսնվելով սպառազինվում է: Տարբեր հաշվարկներով մինչև 2004-2005 թթ. այդ երկիրը սպառազինությունների ձեռքբերման համար տարբեր օգտագործում էր կամ ցուցադրում էր մինչև 300 մլն դոլար գումար: Հաշվարկը կատարվել է այդ տարիների ռազմական տարեկան բյուջեի և գեներալ ձեռքբերման ծավալների գույքարժեքով: Այսինքն՝ հրադադարի հաստատումից մինչև նշված ժամանակ ծախսվել էր մոտ 3 մլրդ դոլար: 2005-2006 թթ. այս ոլորտում սկսվեցին կտրուկ ավելացումները: Ամեն տարի դրա համար ծախսվում կամ ցուցադրվում է մոտ 1 մլրդ դոլար. թվերը, ի դեպ, գնալով ավելանում են: Այսինքն՝ մախորդ 3-ին հարկավոր է ավելացնել մոտավորապես 5-7 մլրդ դոլար: Իսկ եթե գումարները բոլորովին վերջերս նշված 3-5 մլրդ դոլարը, ապա ստացվում է շուրջ 12-15 մլրդ դոլար: Իհարկե, որոշ սպառազինություններ, հիմնականում մախկին ԽՍՀՄ-ի երկրներից, բոլորովին այլ արժեքով են ներկայացվում, բայց իրականում ձեռք են բերվում մեկ այլ գնով: Այստեղ շատ դժվար է գտնել իրական ծախսերի չափը, սակայն մենք նկատի ենք առնում միջազգային գները: Մինչև օրս Աղբրեջանը ՌԿ-ից, Ռուկրախայից և Բելառուսից ձեռք է բերել մոտ 220 «T-72»

իրասայլ, որոնց զինը միջազգային շուկայում կազմում է 1-2 մլն դոլար⁴⁰⁶: Փաստորեն, նշված բանակի ձեռքբերման համար ծախսվել է 220-400 մլն դոլար:

Եթե վերը նշված ընդհանուր գումարն իրական թվերից շեղված է, ապա միայն դեպի նվազում, այսինքն՝ աղբրեջանական ծախսերը փաստացի ավելի մեծ կարող են լինել, քան 12-15 մլրդ դոլարը⁴⁰⁷:

Ամեն դեպքում այժմ ի՞նչ սպառազինություն ունի Աղբրեջանը՝ ծախսելով 15 կամ ավելի մլրդ դոլար գումար: Ստորև հիմնականում կներկայացնենք հարձակողական մեծ սպառազինությունները՝ հրետանի, գրահամբռնաներ: Ըստ հայտնի տվյալների՝ ներկայումս աղբրեջանական բանակում կա 1200-1500 հրասայլ, մոտ 2000 մարտական մեքենա⁴⁰⁸, սակայն հատկապես հետաքրքիր է դրանց բազմազանությունը: Աղբրեջանական բանակը ռեկորդակիր է տարատեսակ ՀԿՌ-ների քանակով և ոչ միայն. սպառազինության մեջ կա արդեն 6-8 տեսակի ՀԿՌ-Հ: Նույն բազմազանությունն է նաև հրանոթային հրետանու հետ կապված, հատկապես ինքնագնաց, որը բավական կարևոր դերակատարություն ունի շեշտակի հարձակումների ժամանակ: Ներկայումս աղբրեջանական բանակում կա խորհրդային 5 տեսակի ինքնագնաց հրետանային կայան և փորձ է կատարվում ձեռք բերել ևս երկու-երեքը՝ Իսրայելից, Թուրքիայից, ՀԱՀ-ից ու Հարավային Կորեայից:

⁴⁰⁶ Եթե անգամ հնարավոր է լինում գնել ավելի էժան, միևնույն է, նորմալ վիճակի բերելուն կամ կատարելագործմանն ուղղված ծախսերով, որոնք այսօր գրեթե անխուսափելի են, մոտավորապես կազմում է նշված արժեքը:

⁴⁰⁷ Մյա մեջ չեն մտնում ռազմաարդյունաբերական համալիրի համար ծախսված գումարները:

⁴⁰⁸ Սպառազինությունների նշված և նշվելիք քանակները վերցրել ենք The Military Balance 2010. — p. 176. և Дериглазова Л., Минасян С., Нагорный Карабах: Парадоксы силы и слабости в асимметричном конфликте. Ереван, 2011 և այլ տվյալներից:

Ընդհանուր առմամբ, Աղբյուրների ցանկի սպառազինության գերակշիռ մասը հնացած է կա՛մ տեխնիկայի, կա՛մ բարոյակետ: Ավելի քան 12 մյուս դուրս գումար ծախսելուց հետո նրանք ձեռք են բերել մեծաքանակ սպառազինություն, որի կյանքի տևողությունն առավելագույնը 20-25 տարի է, երբեմն՝ ավելի քիչ: Այսինքն՝ ավելի քան 12 մյուս դուրսով գնվածը հիմնականում անցյալ պատերազմների գնք են և կարճ ժամանակ անց կարող են խոտան դառնալ: Ավելին՝ այս բոլոր գնքերով հանդերձ՝ նրանք առարկայական ոչ մի առավելություն չունեն հայկական ուժերի նկատմամբ: 2011 թ. սեպտեմբերի 21-ին Բաքվում կայացած զորահանդեսից հետո հենց այս մասին են խոսում արտասահմանյան փորձագետները, որոնք գաղմանում են, որ այդքան մակարդուլարները, փաստորեն, առնվազն 15 տարում ոչինչ չեն տվել:

Շրջանառության մեջ են դրվում այն տեսակետները, թե այսուհետև ձեռք են բերվելու քանկարժեք, նորագույն և հիմնականում գերճշգրիտ սպառազինություն: Ավելին՝ գուզահեռաբար արտադրելու են այդպիսիները: Որպես օրինակ բերվում են հենց վերջին մի քանի ձեռքբերումներն Իսրայելից, ՌԴ-ից, պայմանագրեր են կնքվում ուկրաինական հրթիռների արտադրության ոլորտում և այլն: Վերջերս անգամ տեղեկություն հայտնվեց այն մասին, որ իբր գերճշգրիտ հրթիռներ են արտադրվելու: Փորձենք հասկանալ նաև այս իրադրությունը:

Նախ, ի՞նչ է գերճշգրիտ գնքը, և ո՞վ է դրա օգտագործողը? Ո՞րն է կոչվում գերճշգրիտ սպառազինություն և հիմնականում ինչի՞ համար է այն նախատեսված: Պարզ առած՝ գերճշգրիտ գնքերը հիմնականում ավիատուրբերը, տարատեսակ հրթիռները և հրետանային այն միջոցներն են, որոնք ունեն ներքին կամ արտաքին ուղղորդման հնարավորություն և սխալվելու շատ փոքր հավանականություն: Նշանակետից կարող են շեղվել մի քանի սանտիմետրից մինչև 1-2 մետր: Սակայն, բնականաբար, գերճշգրիտ գնքը պետք է ունենա նաև իր կրողը և կիրառողը, այսինքն՝ քարծրակարգ տեխնիկական միջոցը և հմուտ մարտիկը: Օրինակ՝ ավիատուրբերը պետք է

արձակվեն համապատասխան ԹՄ-ներից փորձառու օդաչուների կողմից, հնարավոր է նաև երկրորդ ԹՄ-ի կամ այլ սարքի ուղղորդմամբ: Աղբյուրանական Ռ-ՕՌ-երում չկա մնաց գոնե մեկ սարք, որը կարող է կիրառել քարծրակարգ գերճշգրիտ հարվածային միջոց, ավելին՝ տեխնիկական և այլ պատճառներով դրանցից ոչ մեկը գրեթե հնարավոր չէ կատարելագործել այդ գործը զուլի բերելու համար: Նման ԹՄ ղեկավարող և նման միջոց կիրառող օդաչուն էլ չի անցվում ինչ-որ ինկուբատորում: Պետությունները դրա համար ծախսում են տասնյակ տարիներ և հսկայական միջոցներ: Գլխավոր կործանիչի մասին ամեն ինչ ասվեց, իսկ մնացածն էլ այնքան ինչ է, որ նման ծախսերն այդպարացված չեն: Աղբյուրանական Ռ-ՕՌ-ի ԹՄ-ներից գերճշգրիտ հարձակողական միջոցներ կիրառելու ընդունակ են միայն իսրայելացիները «Mi-24G» և ռուսական նոր «Mi-35M» ուղղաթիռները: Իրանց քանակը մեծ չէ, կիրառած գերճշգրիտ գնքերը հիմնականում հակատանկային հրթիռներն են, որոնք մարտավարական օդակի ամենացածր ներկայացուցիչներն են: Այսինքն՝ աղբյուրանական Ռ-ՕՌ-ն ներկայումս չունի գերճշգրիտ հարձակողական գնք: Ռուսական օդուժը կամ ԹՄ-ներն անցած 30 տարիների ընթացքում նման միջոցներ կիրառել են մի քանի անգամ, խորհրդանշական դեպքերով:

Հրետամին հիմնականում ներկայացված է խորհրդային հին նմուշներով, որոնք ոչ միայն նման արկեր կիրառել չեն կարող, այլ նաև դրա համար կատարելագործելն է դժվար: Այն ձեռքբերումները, որոնց մասին հատկապես շատ խոսվեց 2013 թ. Բաքվի զորահանդեսից հետո, չեն համարվում գերճշգրիտ: Մենք դրանցից ամենագովազդված միջոցին դեռ մանրամասն կանդիդատներ:

Մեք աղբյուրանական բանակն իրականում ունենա գերճշգրիտ հարձակողական միջոցների համապատասխան տեսակների և քանակ, սակայն դրանց կիրառման համար պետք է ձեռք բերի բոլորովին նոր տեսակների ԹՄ-ների և հրետանային միջոցների մեծ քանակություն՝ մոտավորապես 100 միավոր ԹՄ և մի 1000 միավոր հրետանային միջոց, այն 12-15 մյուս դուրսով գնածները և մոտ կրկնակի

ելածներն էլ որպես խոտան դեն մետի: Օրինակ, 50 միավոր հրետանային մնան միջոցի ձեռքբերման համար նվազագույնը հարկավոր է 100-150 մլն դոլար, այն էլ՝ առանց համապատասխան արկերի: Մեկ գերճշգրիտ արկն արժի 50 000-100 000 դոլար: Ինչքան էլ աղբրեջանական հանքերը նավթադոլարներ են բերում, չենք կարծում, որ նրանք պատրաստ են մոր 600-1000 հրանոթներ գնել՝ վճարելով 2-4 մլրդ դոլար, դրանց համար գոնե 1 միլիարդ էլ արկեր գնել՝ չհաշված լրացուցիչ՝ սպասարկման և այլ ծախսերը, որոնք սովորաբար կազմում են ընդհանուր ծախսերի մոտ 30 տոկոսը: Չհաշված այդ ամենը՝ կիրառողների բանակի պատրաստումը, որը գրեթե անհնար է և ոչ միայն ֆինանսական պատճառներով: Մեկ միավոր ժամանակակից հրասայլերը արժեն 2-5 մլն դոլար: 50 միավոր մնան հրասայլերը ոչինչ չեն տա իրավիճակին, իսկ 200-300 միավոր հրասայլերն արդեն կարծես անավելի քան կես միլիարդ դոլար՝ առանց լրացուցիչ ծախսերի: Բնական է, որ այդ ամենը մեկ-երկու տարում հնարավոր չէ իրագործել, իսկ օրեցօր դատարկվող նավթի տակառներն այլևս ամեն ինչ չեն կարող լուծել: Այսինքն՝ հարծակման պատրաստվող բանակը, որը, ըստ իրենց ղեկավարների, ամեն վայրկյան պատրաստ է լայնածավալ հարծակման՝ կամ ստեղծվել է որպես մեծ ու անպիտան մարմին, որն իրականում չի կարող իր խնդիրը լուծել, կամ պատրաստ կլինի միայն մի 5-10 տարուց՝ ծախսելով նաև մոտ 50 մլրդ դոլար: Իհարկե, հակառակորդի ռազմաքաղաքական ղեկավարությանը ձեռնատու չէ այս խոստովանությունը: Նրանք կարող են հայտարարել, որ կամաց-կամաց գնում են դեպի դրան և կհասնեն այդ արդյունքին՝ արդեն 5 կամ 7 տարուց, սակայն այդ դեպքում մրցավազքում հայկական կողմին ճնշելու գաղափարը հողս կցնդի:

Աղբրեջանի նորագույն գեներերի ձեռքբերման մտադրություն չունենալու լավագույն ասպայույցը թուրքական 107 և 122 մմ-ոց հրթիռների արտադրության հիմնումն է, խոտանված իսրայելական հրետանային համակարգերի գնումը և Դազախստանում, սեփական դիպուկահարների արտադրությունը և այլն: Իսկ օդում այդ նմալար-

ողակի բերելու համար չի բավարարի արդեն 30-40 մլրդ դոլարը, ժամանակի մասին խոսելն անգամ ավելորդ է:

Իհարկե, հնարավոր է ժամանակի հետ կատարելագործումը և որոշակի մակարդակի բարձրացումը, սակայն, միևնույն է, դա ճանապարհ է, որը պահանջում է ոչ մեկ տասնամյակ և ոչ մեկ տասնյակ միլիարդ դոլար:

Տեղեկանք. Աղբրեջանական բանակի սպառազինման և պատրաստության մեջ կան ռազմավարական ու մարտավարական բազում խնդիրներ, որոնք մեծապես խանգարում են կատարել իրենց հիմնական խնդիրը: Մասնավորապես, հարցն այն է, որ Աղբրեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը, հաշվի առնելով պատերազմի նախորդ շրջանի փորձը, մեկընդմիջ քաղաքական խնդիրները և բազում այլ հարցեր, միաժամանակ երկու տեսակի պատերազմների է պատրաստվում: Մեկը, այսպես կոչված, կայծակնային ցամաքային հարձակումն է, որով նպատակ ունի գրավել Արցախը (և ոչ միայն), մյուս տարրերակով, ինչպես նախորդ փուլում էր, հետաձար միջոցներով հայկական ռազմավարական նշանակետերի ավերումն է: Դրանով, իհարկե, նրանք հետպահանջում են Արցախի հայաբնակները: Այս ամենը, սակայն, ունի մի մեծ խնդիր, ռազմական գործում սա նշանակում է ոչ միասնական ռազմավարական ծրագիր, որը նաև ազդում է օպերատիվ-մարտավարական պատրաստությունների վրա: Դրանով է նաև պայմանավորված տարբեր տեսակների սպառազինությունների ձեռքբերումը և անկանոն պատրաստությունները: Սա մեծ սխալ է եղել ռազմական գործում և խանգարող խոշոր հանգամանք հարթանակի հասնելու համար⁴⁰⁹:

Իհարկե, սա չի նշանակում, թե հայկական կողմը պետք է կորցնի զգուրությունը և Աղբրեջանի ռազմականացման վրա աչք փա-

⁴⁰⁹ Այս մասին մանրամասն տես՝ Հովհաննիսյան Ա. Կ., Տարածաշրջանի ռազմականացումը և Հայոց բանակը, Եր., 2013:

կի: Աղբբեջանական վերնախավը ստիպված է ընտրություն կատարել՝ կամ շարունակել սպառազինությունների մրցավազքը՝ գնելով, յուրացնելով և արտադրելով հնարավորինս շատ, հետևաբար, արդեն հնացած զենքեր, կամ ծախսելով միանգամից մի քանի տասնյակ միլիարդ՝ հիմնովին փոխել և ձեռք բերել նորը, գերժամանակակիցը: Առաջին դեպքում մարտավարությունը հին է, իսկ նոր քայլերի դեպքում նաև ավելի քան մեկ տասնամյակ իրականացրած ծրագրի դեկավարներին հարկավոր կլինի գնահակաարել՝ պետական միջոցներն անհիմն վատնելու մեղադրանքով: Դեռ թարմ են գեներալ Ռզակի սպանության տպավորությունները: Առայժմ Աղբբեջանի վերնախավի բոլոր քայլերը խոսում են առաջին տարբերակի օգտին, որը քաղաքական և տնտեսական շատ շահարկումների առումով էլ է հարմար: Իսկ երկրորդ տարբերակի իրականացումն ավելի մութ խորտուրդություններ ունի...

Ամեն դեպքում Աղբբեջանը տենդագին զինվում է և դա վտանգավոր է:

3.7 Հայկական բանակի հիմնարար բարեփոխումները, առաջարկներ

2007-մինչ օրս՝ ՀՀ զինված ուժերում կատարված հիմնական բարեփոխումները ունեն մեկ ընդհանուր ուղղություն. հայոց բանակը գնում է դեպի 21-րդ դարի չափանիշեր: Այս փուլն առանձնահատուկ է նաև նրանով, որ բանակը կարգավում է ՀՀ ռազմական դրկտրինում և Ազգային անվտանգության ռազմավարությունում ամրագրված ուղենիշների հիման վրա: Մասնավորապես, խնդիր է դրված զարգացնել ռազմարդյունաբերական սեփական համալիր և ռազմակրթական համակարգ: Այս երկու հիմնարար ուղղությունները կազմում են նոր տեսակի բանակի հիմքը, սակայն դրանք ամբողջը չեն: Կատարելագործման հիմքում ՀՀ ՊՆ Սեյրան Օհանյանը ընդգեց նաև կառավարման համակարգի, սպայական կազմի մտածելակերպի և արժեհամակարգի փոփոխության, ստեղծագործ և ինքնուրույն հրամանատարի կերպարի ձևավորման, ՁՈւ-ի փոքր, արագաշարժ և ինք-

նուրյոյն ստորաբաժանումների ու դրանց հրամանատարների պատրաստման կարևորությունը:

Աշխատանքներն ընթանում են մի քանի ուղղություններով:

1. Հրամանատարների հայեցի մտածելու, հայերեն խոսելու և հայերենով հրամաններ տալու անհրաժեշտությունը,
2. Սպայական հիմնական կազմի կրթությունը հայերենով իրականացնել:
3. Ռազմական բարձրագույն կրթություն միաժամանակ մի քանի երկրներում կրթական տարբեր մոդելների համամասնություն ապահովելու համար:
4. Սկսած 2013 թ. բարձրագույն սպայական կրթությունը ապահովել հիմնականում Հայաստանում, ինչը նպաստում է սպաների հայակենտրոն դարձնելուն և ամրապնդում նրանց դերը ազգային էլիտայում:
5. ՀՀ բանակի սպաների կրթադաստիարակչական գործընթացի հիմքում դնել զինվորականությունը՝ որպես ազգային էլիտայի, ազնվականության կարևոր սեկտոր դարձնելու խնդիրը:
6. Սպաներին գերծ պահել անօրինականություններից, մասնավորապես բացառել կաշառակերությունն և գողությունը: Այդ առումով հատկապես շուշափելի են եղել 2012-2014 թթ.-ի ձեռքբերումները հատկապես բանակի ամենակոռուպցիված համակարգի՝ զինկոմիսարիատների՝ այսպես ասած, մաքրման գործընթացը: Այդ ժամանակահատվածում մախրող հինգ տարիների համեմատությամբ գորակազմ իրականացվել է՝ ապահովելով արդարության ու կաշառակերության բացառման առավելագույն մակարդակը:
7. 2014 թ. սկզբից սպայական կազմի միջոցով պատերազմ հայտարարվեց, այսպես ասած, փողոցային բարքերի դեմ և այդ գործընթացում ներգրավվեցին հասարակական ու պետական տարբեր կառույցներ: 2014 -ի ավարտին արդյունքները ակհայտ էին, քանի որ բանակում ոչ կանոնադրային հարաբերությունների արդյունքում եղած դեպքերը կրկնակի նվազեցին:

8. Ռազմակրթական հայեցակարգի և ռազմական հայկական ակադեմիայի ստեղծման շրջանակներում բանակում ռազմագիտական նոր հանդեսի և ռազմագիտական խորհուրդի հիմքերը դրվեցին: Նպատակ է դրված ուսումնասիրել հայոց ռազմավեժտի առանձնահատկությունները՝ բանավեժելով դրանք: Դրանով, փաստորեն, հայկական ռազմական գիտությունը կարող է վեր բարձրացվել և դրվել այնպիսի հզոր ռազմագիտական դպրոցների կողքին ինչպիսին են գերմանական, ամզլիական, ամերիկյան, չինական և այլ ռազմագիտական դպրոցները: Սա տասնամյակների աշխատանք է, որը դրվում է հազարամյակների վերհանման և հարյուրամյակների առաջընթացի համար:

9. Հիմք դրվեց նոր զորամասերի ու ստորաբաժանումների ձևավորմանը, որոնց առանձնահատկությունը փոքր, արագաշարժ, ինքնուրույն միավոր լինելն է, որի նպատակը հիմնականում հարձակողական բնույթի գործողություններ իրականացնելն է:

10. ՁՌ-ի ռազմավարական պլանավորման և զարգացման ծրագրերը վերանայվում են, ներդրվում «փոքր ուժերով մեծ խնդիրներ», «հրամանատարում առաջադրանքով» հայեցակարգերը, որոնք վերը նշված սկզբունքների և մոդելների ամբողջությունն են և վերաձվելով համապատասխան հրամանների ու փաստաթղթերի՝ հասցվում են գործեր, դառնում մարտական պատրաստության դասընթացների կարևոր բաղադրիչ, մտնում շտաբներ ու փոքր ստորաբաժանումներ:

11. Նոր և գերճշգրիտ զինատեսակների ձեռքբերում, որոնց քանակը թեկուզ մեծ չէ, սակայն դրանք կիրառվելու են ավելի արագ, դիպուկ, նպատակային և հզոր են իրենց հարվածներով: Դրանով բանակի ավելի փոքր, մոբիլ և հզոր լինելու քանաձևը ամբողջացվում է:

Սրանք ՀՀ ՁՌ-ի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի ողջ ամբողջական ցանկն է, որոնց արդյունքները միանգամից չեն երևա: Դրանք իրականացվում են ասոցիա, մշտական քայլերին զուգահեռ, որոնք երբեմն ավելի նկատելի են: Ձորերի մշտական գորավարժությունները, նոր զինատեսակների ձեռքբերումները, պաշտ-

պանական բնագծերի տեխնիկական, ինժեներական հագեցվածությունը, կատարելագործումը, գործերի կենցաղային պայմանների բարելավումը գործընթացներ են, որոնք ևս իրականացվում են մշտապես: Երբեմն դրանք առավել նկատելի և զնահատելի են, սակայն դրանք չեն որոշում բանակի զարգացման հիմնական տեմպերն ու բնույթը: ՀՀ ՁՌ-ի մարտունակության ապահովումը հիմնականում երկարաժամկետ ծրագրերն են որոշում, որոնցով էլ այն գերազանցում է միլիարդներ ծախսող իր հակառակորդին:

Այժմ ռազմատեխնիկական և քաղաքական համաշխարհային զարգացումները նորանոր մարտահրավերներն առաջ են կանգնեցրել ՀՀ ՁՌ-ին, բնդ որում, ակնհայտ է, որ դրանք մեղմանալու միտումներ չունեն: Հակառակորդը սաստիկ զինվում է ու պատրաստվում ռևանձի: Ադրբեջանի սպառազինման տեմպերը զարմացնում են անգամ միջազգային փորձագետներին:

ՀՀ ռազմական ոլորտի զարգացման, մատակարարման և այլ հարցերի հիմնական մասը ներկայումս լուծվում է ՌԴ-ի հետ: Ռազմական համագործակցությունն այլ երկրների հետ հիմնականում կլում է առավել սահմանափակ բնույթ: Այսպիսի արդյունքները գոհացուցիչ չեն: Մասնավորապես՝ անհրաժեշտ է վերանայել տեխնիկական մատակարարման հարցերը, քանի որ կարգերի պատրաստումը քիչ, թե շատ լուծվում է արևմտյան երկրների հետ տարբեր ձևաչափերով համագործակցությամբ:

Միակողմանի ռազմական համագործակցությունն ունի իր և՛ դրական, և՛ բացասական կողմերը: Սակայն, մեր խորին համոզմամբ, ռազմական միակողմանի համագործակցության բացասական կողմերն առավել շատ են: Ցանկալի է, որ փոքր պետություններն իրենց ռազմական կարևորագույն հարցերի լուծումը կապեն ոչ թե մեկ, այլ մի քանի պետությունների հետ: Մեզ համար այս ոլորտում քաջի ավանդական լիդերներից, հատկապես հետաքրքիր է ռազմական համագործակցությունն այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են՝ Մորանիան, Հնդկաստանը, Չինաստանը, Վապոնիան, Հարավային Արիան, Եվելիան, որոնց փորձը շատ արժեքավոր է: Աշխարհում ընդունված ՆԱՏՕ-ՌԴ ռազմական հակադրած համակարգն ուսում-

նասիրելու համար հայկական բանակը վաղուց արդեն գործնական քայլեր է ձեռնարկել: Հայ սպաները ռազմատուժնական դասընթացներ են անցնում Հունաստանում, որի բանակն առաջնորդվում է ՆԱՏՕ-ի չափանիշներով: Հունական ՌՕՌ-ն լավագույններից մեկն է ՆԱՏՕ-ում, մասնավորապես՝ շատ բարձր է օդաչուների մակարդակը. մեկ անգամ չէ, որ ուսումնական մարտերում նրանք բարձր ցուցանիշներ են ապահովել՝ գերազանցելով պայմանական բոլոր հակառակորդներին: Հունական բանակի մարտական ինքնաթիռները բարձրակարգ են և լավ սպառազինված: Այս հնարավորությունը հարկավոր է օգտագործել՝ ի նպաստ ՀՀ օդուժի հզորացման:

Ֆրանսիան ԱՄՆ-ից ու ՌԴ-ից հետո միակ պետությունն է, որը արտադրում է ռազմական, ցամաքային, ծովային և տիեզերական ցանկացած տեխնիկա, սպառազինություն ու սարքավորում: Այսօրին՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի հարցում Ֆրանսիայի հետ համագործակցությունն ամենաշահապետներից է: Մասնավորապես, մեծ հետաքրքրություն են ներկայացնում կապի, հետախուզության, դեկավարման և ֆրանսիական սարքավորումները, որոնք տարբեր երկրներում անխափան կիրառվում են անգամ խորհրդային հրասայերի, ԹՄ-ների և այլ մեքենաների վրա: Ֆրանսիական բանակն ամենատարբեր առաջաձաղթյալներում ունի մարտական գործողությունների վարման հարուստ փորձ, որը զրեք մշտապես շարունակվում է: Ֆրանսիական բանակը հատկապես աչքի է ընկնում խաղաղարար առաքելությունների կազմակերպման լավագույն ավանդույթներով: Այս ամենը շատ կարևոր է ռազմական մտքի գործնական զարգացման և տեսլետների ըննության առումով: Հայկական զինուժի համար որոշակի հետաքրքրություն կարող են ներկայացնել նաև ֆրանսիական «Օտարերկրյա լեզուներ» կազմակերպման ու մարտական կիրառման հետ կապված հարցերում: Բանն այն է, որ մարտական գործողությունների դեպքում հնարավոր է, որ ՀՀ ՁՌ-ի կազմում ընդգրկվելու ցանկություն հայտնեն այդ լեզուներում ծառայող սպիտաբաշյաք կամ այլ ազգերի ներկայացուցիչներ: Միաժամանակ լեզուներ կարող է հիմք դառնալ հեռավոր ապագայում հայկական բանակում օտարազգիներից կազմված վարժկան

ստորաբաժանման ստեղծման համար՝ թեկուզև սահմանափակ կիրառման համար:

Մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել ռազմական համագործակցությունը հատկապես Հնդկաստանի հետ: Այս պետությունը օր օրի ավելի է մոտենում գերտեղությունների վերին սանդղակին: Հնդկական ՁՌ-ի սպառազինման և ռազմաարդյունաբերական մակարդակը նախանձեղի առաջընթաց ունի: Ստեղծվում են հնդկական մուշի ինքնաձիգեր, հրասայեր, տարատեսակ հրթիռներ, նավեր և անգամ կործանիչներ: Մեզ համար առանձնապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ հայկական ՌՕՌ-ի հետագա զարգացման համար Հնդկաստանը կարող է բացել հիանալի հնարավորություններ: Բանն այն է, որ հնդկական ՌՕՌ-ի սպառազինության մեջ է զանվում չորրորդ սերնդի լավագույն կործանիչներից առնվազն երեքը՝ «Cy-30», «Mih-29», «Mirage-2000»: Մոտ ապագայում նրանք ձեռք կրերեն ֆրանսիական նոր կործանիչներ, որոնք իրենց լավ ցուցաբերեցին Լիբիայում: Ընդ որում, Հնդկաստանը արտադրում է հայկական բանակին հետաքրքրող «Cy-30», իսկ ապագայում նաև ֆրանսիական «Rafale-C» կործանիչներ: Ամերիկյան ու եվրոպական երկրների ՌՕՌ-ի հետ անցկացված բարձր մակարդակի զորավարությունները փաստում են, որ հնդկական օդաչուական դպրոցը լիովին կայացած է և լավ ավանդույթներ ունի: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև հնդկական հրթիռաշինությունը, որը զգալի արդյունքների է հասել, մասնավորապես, հայկական գիտութիւն հետաքրքրող մարտավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռների ոլորտում: Հնդկական «Prihvi III (SS-350)», «Aghni 1» և այլ հրթիռները հետաքրքրություն են ներկայացնում: Դրանք բացառիկ նմուշներ են: Իրենց հիմնական տվյալներով գերազանցում են համանման չինական, կորեական, իրանական հրթիռներին և մոտենում են աշխարհի առաջատար ստեղծողների նմուշներին:

Հնդկական բանակը լեռնային պայմաններում մարտական գործողությունների վարման հիանալի փորձ ունի: Արդեն մի քանի տասնամյակ Հիմալայներում չեն ավարտվում մարտական գործո-

դուրյունները, որոնք երբեմն դառնում են պասիվ, երբեմն ստանում մեծ ինտենսիվություն: Մասնավորապես, 1999 թ.՝ Կարգիլյան հիմնախմբի ժամանակ, հնդկական բանակը լավ փորձ ձեռք բերեց օդուժի, հրետանու և հատկապես հատուկ ստորաբաժանումների կիրառության գործում: Հայաստանի դեպքում այդ փորձը հատկապես կարևոր է Տավուշում ու Նախիջևանի օպերատիվ ուղղության վրա հսկանական լայնածավալ մարտական գործողությունների առումով: Դա առանձնակի կարևոր է Նախիջևանում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այսօր Ադրբեջանը ստեղծել է համագորային քանակ:

Ռազմական համագործակցության համար երկրներ և ուղղություններ շատ կան, որոնք մեծ հեռանկարներ են խոստանում: Արդեն կա երկրների մի մեծ ցանկ: Բացի ավանդաբար հզոր համարվող ԱՄՆ-ից, Չինաստանից, Իսրայելից և եվրոպական պետություններից, այդ ցանկում են օրեցօր իրենց փառավոր անցյալը վերարժևորող Րուսաստանի, Հարավային Կորեան, Եվեդիան, ՀՀ-ը: Ռազմականացումը և համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոնների ծանրության առանցքը հետզհետե վերադառնում է Եվրասիա: Դա է պատճառը, որ Հայաստանի համար նպատակահարմար է վստահելի կապեր և ունենալ փոխլրացնող մի քանի գործընկեր:

Հայոց բանակի գորատեսակների զարգացման համար կան մի քանի խնդիրներ, որոնք ծախսատար են՝ միջամտամկետ և երկարաժամկետ լուծվելու հնարավորություններով, և որոնք մեծապես կբարձրացնեն բանակի մարտունակությունն ու հնարավորությունները: Խոսքը ընդհանուր ՕՀՄ-ների ստեղծման մասին է և որպես դրանց առանձին ու հիմնական ուղղություն՝ օդուժի: Հայաստանի համար հատկապես առարկայական նշանակություն ունեն հեռահար հրթիռային միջոցները՝ ՀԿՈՀ-ները, մարտավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիրները: Նշված ոլորտում առավել առարկայական է օդուժի և ՀՕՊ գործերի զարգացումը՝ ընդ որում պետք է ընթանա միասնաբար: Դրանք՝ իրենց բովանդակությամբ, տարողությամբ, կատարման ծավալով, մի քանի տարվա ըն-

բացքում կան մշտապես կատարվելիք աշխատանքներ են, քանի որ բանակի տարին կամ օրը երբեք չի վերջանում: Բանակը կատարելագործվում է ամեն օր, և ամեն օր առաջարկներ ու գաղափարներ են բննարկվում: Հայկական բանակի համար կան ավանդույթներ, օրինաչափություններ, որոնք տիպիկ են հենց հայկական զինուժի համար: Հայկական բանակը ավելի է մոտենում ազգային ավանդույթներին ու դիմագծին, թե՛ կազմակերպչական, թե՛ կրթական, թե՛ մարտունակության բարձրացման հարցերում:

ՎԵՐՋԱԲԱՆ

1994 թ. մայիսյան հրադադարի հաստատումից ի վեր՝ արևելյան հայ-թուրքական պատերազմը այլ բնույթ ստացավ: Միմյանց հետ պատերազմող գործերը տեղ-տեղ շարունակում էին կռվել: Հետո փոքր-ինչ աճեց վստահության մակարդակը, սակայն կարճ ժամանակ անց, սկսեցին խրամատավորվել: Սովորաբար իրար դեմ կանգնած գործերը, որոնք խաղաղության չեն գնում, սկսում են խրամատավորվել ու պատրաստվել այդ փուլին: Խրամատները հետզհետե ավելի խորացան, պատրաստվեցին ակամապատ դաշտերը, հակատանկային փոսերն ու այլ արգելափակոցները, հայտնվեցին դիպուկահարները, որոնք սկսեցին ավելի ու ավելի մեծ դեր խաղալ: Որքան հաստացան խրամատների պատերը, այնքան ավելացավ զենքի քանակը: 1990-ականների վերջերից ու 2000-ականների սկզբից սկսեցին ավելի շատ կիրառվել գրահարանկոմները, որոնք այսօր պարտադիր են արդեն սահմանագծի վրա: Սաստկացան մեծ տրամաչափի գնդացիների կրակոցները: Մեկ-երկու տարուց հայտնեցին նաև մեծ տրամաչափերի դիպուկահարները, որոնք ի վիճակի էին ծակել խրամատների հողը շերտը: Խրամատների խորացման հետ սկսվեցին ավելի շատ կիրառվել դիվերսիոն հետախուզական խմբերը, որոնք փորձում էին դիրքերի գրավումով բարելավել ընդհանուր բնագծերը: Դրանից հետո կողմերը սկսեցին ավելի բարեխալվել դիրքերի կանաճությունը՝ դրանք հասցեցնելով հակադիվերսիոն սարքերով և ազդանշանային հարմարանքներով: Այսինքն՝ ընթանում էր խրամատային դասական պատերազմ՝ իր բնորոշ առանձնահատկություններով: Միաժամանակ փորվեցին երկրորդ խրամատները, ոճրապատարանները և կեղծ դիրքերը: Աղբյուրները, այդ տարիներից սկսած, շեշտակի մեծացրեց ռազմական ծախսերը՝ ձեռք բերելով հարձակողական նոր մակարդակի և քանակի զենքեր: Այդ ամենը հայ-աղբյուրական առճակատումը միանգամից բարձրացրեց նոր մակարդակի, ավելացավ դիվերսիաների քանակը: Խրամատային

պատերազմը ավելի շատ սկսեց դրսևորվել դիվերսիոն և դիպուկահարային գործողություններով: Աղբյուրական բանակը ձեռք բերեց նոր մակարդակի դիպուկահարներ, առանձին դպրոց բացեց, թուրքիայում պատրաստում էին ավելի բարձր մասնագետներ: Նույն ժամանակ դիվերսիոն հարձակումները շատացան: Այս ամենը 2008-2010 թթ. բերեց ավելի հաճախակի հարձակումների, որոնք հանգեցրին նաև նրան, որ հայկական զորքերն սկսեցին հազցելվել լրացուցիչ մեծ զենքերով ու հակատանկային միջոցներով: Հայկական բանակն այդ ժամանակահատվածում փոքր ստորաբաժանումների սպառազինության հազցելվածության մակարդակը բարձրացրեց մի քանի անգամ:

Խրամատային այս պատերազմը սաստկանալով՝ մի քանի անգամ լայնամասշտաբ պատերազմի վերածելու վտանգ ստեղծեց: Աղբյուրական կողմը ձեռնարկում էր հետախուզադիվերսիոն գործողություններ, որոնք հաջողությունների դեպքում առնվազն վտանգ ունեին վերածելու մարտավարական պատերազմի՝ մարտական մի-քանիօրյա գործողություններով ու մի քանի կիլոմետր տեղաշարժերով: 2008 թ. մարտի 3-4-ին աղբյուրական դիվերսիոն խմբերը գրավեցին Արցախի ՊԲ -ի հսկողության տակ գտնվող հյուսիսային՝ Լևոնարիսի դիրքերը: 2012 թ. հունիսի սկզբին աղբյուրական դիվերսանտները ստան «Հ» Տավուշի սահման, որի զոն գնացին քաղաքացիական մարդիկ: Նույն ժամանակում դիվերսիոն խմբերով հայկական բանակի առաջնակին մարտական հենակետեր ներքափանցելու և դրանք գրավելու կամ դիրքապահներից սպանելու բազում փորձեր եղան: 2014 թ. սկզբին հայկական բանակը բարելավեց իր դիրքերը՝ մայիսից հետո հատվածում առանց մեկ կրակոցի մինչև երկու տասնյակ կիլոմետր լայնքով ու խորությամբ առաջանալով: Սա մեծ արձագանք առաջացրեց: Նույն թվականի հուլիսի սկզբին Քարվաճառի տարածքում գործող թշնամու դիվերսիոն խումբ չեզոքացվեց, որի երկու անդամները ձերբակալվեցին: Այդ տարածքում նրանց առկայության մասին տարբեր լուրերը միշտ անհանգստացնում էին հայկական կողմին: Դա անմախաղակ իրադարձություն էր

հակամարտության ընթացքում: Հուլիսի 25-ից սահմանի ողջ երկայնքով աղբրեջանական բանակը սկսեց տարբեր խախտումներ ու դիվերսիաներ անել: Ենչտակի ավելացավ կրակոցների քանակը Տավուշի մարզում: Հուլիսի 31-ից մինչև օգոստոսի 3-ը ձեռնարկվեցին դիվերսիոն մեծամասշտաբ մի քանի գործողություններ կամ հետախուզական մարտեր՝ փորձելով գրավել հայկական մի քանի հեծակետեր՝ նպատակ ունենալով ամրանալ կամ մարտավարական խորությամբ առաջանալ:

Այս բոլոր դեպքերում հայկական ուժերը առանց լուրջ կորուստների հակառակորդին հակահարված տվեցին՝ մեծ կորուստներ պատճառելով նրանց: Հայկական կողմի գործողությունների հիմնական շեշտը դրված է պաշտպանական մարտերի իրականացման, լավ ամրացված դիրքերի պահպանման վրա՝ շատ հաճախ մահ չըջանաձև պաշտպանությամբ, միջոցիբայան լավ համագործակցությամբ: Սակայն երբեմն հայկական ստորաբաժանումները ևս ձեռնարկում են հետախուզողիվերսիոն, կանխարգելիչ հարձակողական գործողություններ, որոնք տվյալ դեպքում մեծապես աչքի են ընկնում իրենց արդյունավետությամբ: Հրաղայարի հաստատումից ի վեր՝ աղբրեջանական կողմը լուրջ կորուստներ է կրել: Մասնավորապես կազմակերպվածությամբ, հակառակորդի գործողություններին հակադարձելու կարողությամբ ու նրան պատճառած վնասների ու կորուստների քանակով առավել աչքի ընկան 2014 թ. ամռանը տեղի ունեցած հնգօրյա ինտենսիվ ռազմական գործողությունները: Այդ իրադարձությունները լիովին կարելի է համարել «հնգօրյա միկրոպատերազմ»: 2014 թ. նոյեմբերի 12-ին ԼՂՀ-ի Ակնի հատվածում, սահմանին մոտ աղբրեջանական ՋՈՒ-ն ԳԿՀՀ-ով խոցեցին հայկական ՌՕՈՒ-ի մարտական ուղղաթիռ, գոհվեցին անձնակազմի բոլոր 3 անդամները: Սա իրադարձարի հաստատումից ի վեր սահմանի վրա իրականացված ամենամեծ սաղոմանքն էր: Փաստորեն, 2014թ. դիվերսիոն գործողությունների զգալի քանակ են եր, որը աղբրեջանական բանակին ոչինչ չտվեց: 2015թ. սկսվեց մարտավարության լուրջ փոփոխությամբ: Աղբրեջանական հատուկ ստորաբաժանումները

այնև խուսափում էին դիվերսիաներ կատարել հայկական դիրքերի ուղղությամբ, նրանք սկսեցին կիրառել «ակամային պատերազմը»: Ակամների մշտական տեղադրումը և ծուղակների պատրաստումը միջոցիբայան տարածքներում լիով նոր մարտավարություն է այս հակամարտությունում:

Աղբրեջանը հատկապես 2003 թ. հետո ինտենսիվորեն զինվում է՝ դրա համար ծախսելով ավելի քան 15 մլրդ դոլար: Սակայն այդ միկրոպատերազմը ցույց տվեց, որ հայկական զինուժը գերազանցում է: Աղբրեջանական կողմը պատրաստ չէ պատերազմի հատկապես այն պատճառով, որ չափազանց մեծ հույս է դրել իր սպառազինության վրա և մեծապես կեղծում է իր հնարավորությունները: Աղբրեջանի ռազմական համակարգում և հասարակական շրջանակներում գերակայում է այն համոզմունքը, որ պատերազմում չեն պարտվել, հայերը վախկոտ են և կովել չգիտեն: Այդ ստի կծիկը նրանց բերել է ավելի վատ վիճակի, երբ մարտական ամեն մի բախումից հետո, ավելի մեծ խուճապի մեջ են հայտնվում: Աղբրեջանը լայունը տարածում է ոչ միայն ԼՂՀ, այլև ՀՀ հատվածում, ինչով, ի սկզբանե, հիմնավորվում է այն տեսակետը, որ Արցախյան հիմնախնդիր չկա, սա թուրք-հայկական արևելյան պատերազմն է, որը վարվում է 1918 թ. սկսած: Այս բոլոր դեպքերում, սակայն, աղբրեջանական կողմի լիարժեք պարտությունը հետո պատճառ է դարձել, որ Աղբրեջան ավելի շատ զինվի, ավելի կատաղի փորձեր անի իրավիճակն իր օգտին շրջելու համար: Սակայն դրանով էլ ավելի վատ իրավիճակում է հայտնվում:

Այս դեպքում, ցավոք, իրավիճակն ավելի է լարվում. կողմերն իրար վրա են կրակում արդեն նռնակամետրով ու ակամանետրով, այսինքն՝ տրանսչափն ու խտությունը հետզհետե սաստկանում են: Իրավիճակի սրումն անկասելի է դառնում, քանի որ կողմերը և հատկապես Աղբրեջանը՝ ակտիվորեն զինվում է ու ակնհայտորեն պատրաստվում պատերազմի: Առայժմ իրավիճակը վերահսկելի է, քանի որ Աղբրեջանն այնքան էլ շահագրգռված չէ պատերազմ վարել: Համաշխարհային քաղաքականության ուժի կենտրոնները ևս մեծամա-

սամբ շահագրգռված են ստատուս բժշկի պահպանմամբ, իսկ բանակները՝ շնորհիվ իրենց մարտունակության ու սպառազինության, հասել են զսպման հստակ մակարդակի: Հայկական ռազմագիտական մտտեցումներում ամրապնդվում է ռազմավարական զսպման հայեցակարգը:

Ի մի բերելով ավաճող՝ կարող ենք փաստել, որ Հայաստանի երրորդ հանրապետության ԶՈՒ-ն անցել է զարգացման տարբեր փուլեր ու բարդ իրավիճակներ:

1. Ազգային ազատագրական պայքարի հաղթական ելքը հնարավոր եղավ գրանցել կանոնավոր քանակի շնորհիվ, թեև դրա հիմքում կամավորական ջոկատներն էին: Ազատամարտիկների թիվը, որոնք ընդգրկված էին շուրջ 80 ջոկատների կազմում, հասնում էր մինչև 4000-ի: Յուրաքանչյուր ջոկատում 20-30 հոգի էր, իսկ ավելի մեծ ջոկատները մատների վրա կարելի էր հաշվել: Մարտիկների փիվը գերազանցում էր 100-ը միայն «Արարո», «Տիգրան Մեծ» և մի քանի այլ ջոկատներում: Դրանք թիվը չէր անցնում 10-ը: Պատմական փորձը թույլ է տալիս հստակ օրինաչափություն ընդգծել. ամենաբարենպաստ պայմաններում անգամ կամավորական շարժումները չեն կարող ապահովել ժողովրդի անվտանգությունը, և կիրառական առումով պետք չէ գերազնահատել այս գործընթացը: Ռազմահայրենասիրական դաստիարակության տեսանկյունից այն մեծ նշանակություն ունի, և պետք է շատ խուսել դրա մասին, սակայն ազգային անվտանգության ապահովման ինստիտուցիոնալության տեսանկյունից ազատամարտիկների դերը գերազնահատված է: 3000-4000 հոգին չի կարող ապահովել 3 մլն-ոց ազգի անվտանգությունը, իսկ մեզանում այդպես էր թե՛ 1900-ականներին, թե՛ ցեղասպանության տարիներին: Եթե ազգը փոքրաթիվ ընտրյալների պայքարը ճիշտ ժամանակին չի դարձնում համազգային և չի ստեղծում կանոնավոր զինված ուժեր, ապա կամավորական շարժումը, ի վերջո, դատապարտվում է պարտության: Տվյալ դեպքում, եթե պայքարին չմիանար Արցախի բնակչությունը և չստեղծվեր կանոնավոր բանակ, ապա այս պատերազմը մեքը կարող էինք տամուլ տալ:

2. Բանակաշինության ակտիվ գործընթացը նպաստեց անկախությունն ամրապնդելուն: Բանն այն է, որ հայոց նորոքյա բանակաշինությունն սկսվել էր շատ ավելի վաղ, քան կեռչակվեր Հայաստանի երրորդ հանրապետությունը: Այդ գործընթացը սկսվել էր ինչպես Հայաստան աշխարհի ամենատարբեր հատվածներում, սահմաններում և վտանգավոր տեղերում, այնպես էլ Երևանում՝ կազմակերպչական բացահայտ և քաբուն ամենատարբեր գործերով:

3. 1991 թ. առաջին իսկ մարտական գործողությունները ցույց տվեցին, որ պատերազմը սաստկանալու միտում ունի, և հարկավոր է կանոնավոր բանակ ունենալ: 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքները դեռ չվերացրած՝ Հայաստանն ուներ մի քանի հայրեր հազար փախստական, երկիրը գտնվում էր շրջափակման ու շրջապատման մեջ: Անհրաժեշտ էր ստեղծել մարտունակ բանակ, ուրը կկամխեր Հայաստանի նորանոր տարածքների կորուստը: Իսկ հակառակորդը իրականում լայնածավալ պատերազմ էր սկսել ՀՀ սահմանների վրա հարձակումով, և ո՛չ Արցախում, ինչպես ընդունված է ասել:

4. Մինչ ռազմական գործողությունների սկիզբը՝ բանակատեղծման կառուցվածքակազմակերպչական հսկայական աշխատանք էր կատարվել: Հայ ժողովուրդն այս անգամ պատրաստ գտնվեց ռիսկին թշնամուն արժանի հսկահարված տալու համար: Հայոց բանակի կազմավորման գործընթացի ամենակարևոր առանձնահատկությունն այն էր, որ կամավորական-աշխարհագրային ջոկատների վերակազմավորումը կանոնավոր զինվորական ստորաբաժանումների տեղի էր ունենում պարտադրված պատերազմի ծանր պայմաններում՝ մարտական գործողություններին զուգընթաց:

5. Հայոց կամավորական բանակը արագ ինտեգրվեց իրավիճակին, իր շարքերում ընդունեց զորակոչված սերունդը և շարունակեց հաղթանակներ տանել: Եվ սա այն պայմաններում, երբ մարտական գործողությունները սաստկանում և առավել լայնամասշտաբ էին դառնում: Ընդիմ, Քարվաճառի, Մարտակերտի և Ալեյի ազատագրում, 1993 թ. ամառային հարձակողական շրջան. սրանք բացառիկ ժամանակներ էին, երբ ուժերով և միջոցներով հակառակոր-

դին զիջելով՝ հայոց բանակը անկասելի արագությամբ հարձակողական գործողություններ էր իրականացնում:

6. Հրադադարից հետո հայոց բանակը հայտնվեց բոլորովին այլ իրավիճակում, երբ սարերից իջավ զորանոց, իսկ մի մասը մնաց մարտական հերթապահության: Հայոց բանակն այն եզակի բանակներից է աշխարհում, որը՝

- հաղթելով պատերազմում՝ մշտապես մնում է մարտական իրավիճակում,

- սահմանի վրա քանակապես ավելի մեծ հակառակորդին մշտապես թելադրում է իր կամքը,

- իր կողմից ազատագրված տարածքներում մարտական պահպանություն է իրականացնում առանց երրորդ ուժի կամ խաղաղարքների, ինչը բացառիկ է, այսպես կոչված, «ստեղծված հակամարտությունների» համար,

- մարտական խնդրին գուզահեռ՝ կազմակերպչակառուցվածքային բարեփոխումներ է անցնում:

Հայոց բանակն այսօր աշխարհի փոքր բանակների մեջ ամենամարտունակներից և փորձառուներից մեկն է, որի սպայական կազմն էլ ամենագրագետներից: Մա փաստում են նաև միջազգային փորձագետները:

10. Հայոց բանակի զարգացման հիմնական փուլերը հետևյալն են.

- 1992-1994 թթ.՝ կազմավորումից մինչև մարտական գործողությունների ավարտը,

- 1994-1998 թթ.՝ հրադադարի հաստատումից մինչև բանակի զորանոցային իրավիճակի բերումը, նոր զորամասերի կազմակերպչական հիմնական գործողությունների ավարտը,

- 1998-2007 թթ.՝ բանակի ինտիտուցիոնալ կայացումը,

- 2007-մինչ օրս՝ բանակի հիմնական բարեփոխումների և կերպարամափոխման փուլը:

Ինչպես արդեն նշեցինք, մեր բանակն ստեղծվեց որպես ազգային պայքարի ոգու արտահայտություն: Հետո այն կայացավ ինս-

տիտուցիոնալ կերպով, հստակ օրենքներով ու կանոններով: 2007-2008 թթ. հայոց բանակը գնում է դեպի 21-րդ դարի չափանիշեր:

11. Հայոց բանակը այժմ ոտք է դրել իր կազմավորման երրորդ տասնամյակ և ունի հետևյալ խնդիրները.

ա. Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ-ի անվտանգության ապահովում արտաքին ագրեսիայից, կամ մասնագիտական լեզվով ասած՝ զսպման համակարգ ունենալ,

բ. Ձորքերի մարտական պատրաստակամության վիճակի պահպանումն ու մարտական հերթապահության կատարելագործումը,

գ. ՀՀ զինված ուժերի զարգացման պլանով նախատեսված միջոցառումների որակյալ և ժամանակին իրականացումը:

Մրանք, ըստ էության, այս պահին մեր երկրի ազգային անվտանգության ապահովման խնդիրներն են, որոնք ընդհատվել չեն կարող, միաժամանակ լուրջ զարգացման ու առաջընթացի համար բանակը պետք է իրականացնի.

դ. Ռազմական կրթության չափանիշների ներդրում: Երևանում գործում է Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա, որն ապահովում է մագիստրոսական ռազմական կրթություն և կան բակալավրի աստիճան ապահովող ռազմակրթական երեք հաստատություններ:

ե. Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագրի իրականացում, որը թույլ կտա երկրում խթանել արդյունաբերական զարգացումը: Այսօր այդպես մի քանի ձեռնարկություններ սերտորեն ինտեգրվում են արտադրության լայն ոլորտին:

զ. Ձիմվորական կարգապահության ամրապնդումը, որի ուղղությամբ իրականացվող աշխատանքները մեծ արդյունք են տվել:

Եթե բանակն ունի կրթական, արժեքային սեփական հզոր համակարգ և ռազմաարդյունաբերական համալիր, ապա այդ բանակը, հետևապես նաև պետությունը, ինքնաբավ են և ունեն մեծ ապագա: Այսօր ՀՀ ՁՄ-ն քայլում է այս ճանապարհով, ինչը երկարաժամկետ հեռանկարի ծանրակշիռ ձեռքբերում է: Այսօր ստեղծվում է 21-րդ դարի հայոց բանակը:

СТРОИТЕЛЬСТВО АРМИИ В ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ АРՇՐԱՆ ՕԳԱՆԵՏՅԱՆ

Данное исследование представляет собой изучение процесса формирования армянских Вооруженных Сил в начале 1990-х годов, который шел параллельно с военными действиями, в тяжелых экономических условиях и в условиях блокады, и, в целом, за время становления новой армянской государственности.

Помимо этого, в книге представлены в том числе описание и военных действий, отдельных боев и операций, особенности армянской военной культуры и мышления. В отдельных главах научного труда подробно представлены этапы развития армии, имевшие место основные процессы после заключения «Соглашения о прекращении огня», то есть от воюющей до организованной армии и этапы перехода к армии новой эпохи. Это самый сложный период для армянского народа, который был одолен нелегко, но дал армянскому народу желанную победу и стал предметом гордости.

Книга включает в себе три главы.

1. Процесс формирования армянской армии
2. Подготовка командных кадров и сотрудничество с международными организациями.
3. Милитаризация Азербайджана и реформирование Армянской армии

В главе «Процесс формирования армянской армии» обсуждается необходимость создания регулярной армии после освободительного движения. Шаги, даже полуофициальные и

незаконные с точки зрения законодательства еще существовавшего СССР, благодаря которым армянская сторона была готова к агрессии Азербайджана и не допустила повторения Геноцида 1915 г. Исследованы не только военные действия, которые так или иначе представляют боевой процесс формирования армии, а также отдельные, очень показательные с точки зрения военной истории и оперативного искусства операции. Представлены основополагающие факты сформирования армии и некоторых милитаризованных структур. Формирование Сил Самообороны было естественным процессом, правовым продолжением которого явился процесс создания Армянской Армии.

В главе «Подготовка командных кадров и сотрудничество с международными организациями» представлены вопросы формирования кадрового состава армии, роль полевых командиров во время военных действий, а также вопросы подготовки профессиональных кадров и задачи, связанные с ними, начиная с первых дней и до сих пор. В 1992 г., на момент активизации и ужесточения военных действий, полевые командиры уже давно стали профессионалами и отсутствие специального образования уже ощущалось не особо остро. Многие из них лица с высшим гражданским образованием, по сути, в течение времени на поле боя стали профессиональными военными. Конечно не последнее место занимает то обстоятельство, что история знает неоднократные случаи, когда гражданское лицо, адаптируясь к обстоятельствам, диктуемым войной, становится профессионалом, не будучи таковым. Также в главе рассмотрено Сотрудничество Армянской Армии с международными организациями. Исследованы

пути сотрудничества и здесь также мы представили некоторые наблюдения и выдвинули предложения.

Сотрудничество в военной сфере – новаторство, наука и техника – развивается с относительно небольшим количеством государств, военное сотрудничество с которыми только укрепляет нашу обороноспособность. Поскольку, основными носителями передового опыта и развития являются несколько силовых центров, сотрудничество с ними важно и целесообразно. Еще со времен войны руководство ВС РА поддерживало тесные отношения с государствами СНГ, в особенности с РФ, а западные страны всего лишь представляли интерес для подобных отношений. И в направлении налаживания сотрудничества с западными странами необходимо вести фундаментальные работы по их развитию.

В главе «Милитаризация Азербайджана и реформирование Армянской армии» рассматривается процесс милитаризации Азербайджана, которая в последние десять лет особенно стала заметной для международных организаций и экспертов. Основной упор Азербайджана делается на стратегию ведения тотальной войны всеми способами и путями – информационными, дипломатическими, военными и т.д. Залог успеха войны, согласно азербайджанскому военно-политическому руководству, должны обеспечить доходы, получаемые от продажи углеводородных ресурсов. Военный бюджет Азербайджана, по его данным, составляет около 4 млрд долларов. Увеличение азербайджанского военного бюджета имеет конкретную адресность. Имеются интересные проекты в деле модернизации и приобретения вооружений для азербайджанской армии, которые нуждаются в обстоятельном анализе.

Особый интерес представляет в том числе и приобретение различного рода наступательных вооружений, производство некоторых видов вооружений, приобретение БПЛА и т.д.

В настоящее время объем вооружений азербайджанской армии превосходит допустимое международными организациями количество, однако, данные показатели скрываются. Речь прежде всего идет о танках, бронемашинах и артиллерийских комплексах, которые, естественно, представляют собой наступательные виды вооружений. Очевидно, Азербайджан делает ставку на те наступательные средства, которые могут нанести разрушительный удар по армянским населенным пунктам, гражданской и военной инфраструктуре.

Однако неблестяще обстоят дела в самих азербайджанских ВС. В качестве яркого примера уместно отметить действия ВС в июле-августе 2014 г., в январе 2015 г. Сегодня необходимо в особенности на экспертном уровне проанализировать наш опыт наступательных боевых действий в горной местности и аналогичный мировой опыт, которые должны стать основой для новых требований к ведению дальнейших боевых действий. Еще раз, касаясь принципов ведения войн новой эпохи, необходимо констатировать, что для армянских ВС, наряду с высоким боевым духом, жизненно важным становится внедрение таких вооружений, которые смогли бы обеспечить максимальную результативность в боевых действиях, не делая ставки на количество вооружений и человеческих ресурсов.

Как видно, именно Азербайджан развязал гонку вооружений, и этот путь может привести только в тупик. Армянская сторона на эту гонку должна не стремиться к симметричному

вооружению, а наоборот, сконцентрироваться на решении собственных задач. В соответствии с задачами, которые стоят перед нами, а также с учетом наших возможностей и условий местности, нам необходимы специфические средства и вооружения.

Необходимы мощные средства воздушного нападения, ущерб от которых для противника будет болезненным. Несколько единиц ракет могут парализовать весь экономический потенциал Азербайджана и деморализовать противника. Параллельно с этим необходимо делать акцент на действия небольших, мобильных и хорошо вооруженных подразделений в горной местности. Необходимы новые подходы, новая тактика, новые средства. Окопная, крепкая, пассивная оборона, которая уже стала стереотипом, уже не может обеспечить надежную оборону. Войска первого эшелона так быстро выходят из строя, что второй эшелон или резерв не успевают подключиться.

Неудачи приводят к огромным потерям, и вызванная паника становится решающей. Наступательное мышление во время конфликта становится доминирующим. Необходимы новейшие системы электронной разведки, противодействия, радиоборьбы и управления. Их роль с каждым днем становится все больше, а результаты видимы для всех.

На развязанную Азербайджаном гонку вооружений нужно отвечать инициативой, а не только эквивалентными ответами. Наши последние ответы на наступательные шаги Азербайджана и его разрушительный подход были неожиданностью для них. Мы должны продолжать развитие в этом направлении, что в данном случае может нанести еще больше

ущерба их стране. Однако основным сдерживающим агрессию Азербайджана фактором должно стать многообразие ответных мер. Варианты ответных мер должны быть гибкими, содержать умение наносить разрушительные и мощные ракетные удары, чтобы, в случае необходимости, должны быть готовы к освобождению остающихся под оккупацией территорий. Все указанные программы требуют мощных сил и ресурсов. Профессиональный, физически, морально и психологически подготовленный воин должен быть в состоянии осуществить поставленную задачу. Необходимо минимизировать, а то и искоренить не только большие потери, но и малые жертвы. А также инициировать исход победных боев.

В заключении даны пути развития и реформирования армии и выдвинуты некоторые предложения. Армянская армия вступила в третий десяток лет со времен своего формирования и перед ней стоят следующие задачи:

- а. Обеспечение безопасности РА и НКР от внешней агрессии;
- б. Сохранение состояния боевой готовности войск и усовершенствование боевой смены;
- в. Качественное и своевременное осуществление мероприятий, предусмотренных по плану развития вооруженных сил РА;
- г. внедрение национальных критерий военного образования,
- д. Осуществление государственной программы по развитию военно-промышленного комплекса и укрепления военной дисциплины.

Министр обороны С. Оганян для дальнейшего развития армянской армии принял несколько интересных и перспективных концепций, основанных на личностных характеристиках бойца, на самостоятельности командиров среднего звена, на маленьких подразделениях и на других качественных сегментах.

**FORMATION OF THE ARMED FORCES IN THE THIRD
REPUBLIC OF ARMENIA
ARTSRUN HOVHANNISYAN**

The research is the first step to discuss the process of the formation of the Armenian armed forces in the early 1990, which ran parallel with military actions, in desperate economic conditions and under the blockade, and in general during the formation of the new Armenian statehood, as well. In addition, whole process of the military actions, the different battle and operations, and also the Armenian military culture and the ways of thinking are presented. In the separate chapters of scientific research the stages of development of the army and main post- Ceasefire processes are studied - in short, the way from a so called fighting groups to an organized armed forces and the process of armed forces transition to an army of new era. This is a difficult period for the Armenian people, which was hardly overcome, but it was an opportunity for the Armenian people to win the war. The research consists of three chapters.

1. The process of the formation of Armenian armed forces.

Preparation of the command staff and cooperation with international organizations.

The militarization of Azerbaijan and Armenian Army reform
In the chapter "The formation of the Armenian Army" the need of

creating a regular army after the liberation movement is discussed. In the period of the USSR, thanks to those steps, even partly formal and illegal, the Armenian side was ready to resist the aggression of Azerbaijan, so the genocide of 1915 was not repeated. By the way, the war can be introduced as a combat process of the armed forces formation. From the point of view of military history and operational arts the separate operations are very important, as the particularity of the war are revealed.

The main facts are presented for the formation of the army and some militarized structures. Creating process of the Self-Defense Force naturally became the legal continuation of the process of formation of the Armenian army.

In the chapter "Preparing the command staff and cooperation with international organizations" we studied the personnel issues of Armed forces from the beginning, the role of field commanders during the war, as well as issues of professional training and tasks of still ongoing case. In 1992 when the war intensified, the same commanders had already become professionals and lack of education is also not particularly acute. Many of them are people with higher civil education, so during some time they became professional soldiers. Certainly, the fact that the Armenian soldier is quickly becoming a professional in combat is an important factor, even if he was not the specialist in the certain field. The issue of the Cooperation between Armenian army and international organizations is also discussed. The ways of cooperation are explored and some observations are also presented and proposals are put forward. In the military sphere, innovation, science and technology are being developed with relatively small states, and thanks to this military cooperation the defence potentialities of the RA is being strengthened.

We also studied the major carrier and several centers of power whose cooperation is beneficial and important for us. Ever since the war started, the authorities of Armenian Armed Forces maintained in a close relationship with CIS member-countries and in particular with Russian Federation. Western countries were interested in such relations. In this regard, we have particularly space for development.

In the chapter "The militarization of the Azerbaijani and Armenian army reform" we examined the militarization of Azerbaijan, which in the last ten years has become particularly more visible for any international organization and expert. Azerbaijan mainly emphasizes on the strategy of total war by all means and ways - informational, diplomatic, military, etc. According to the Azerbaijani military and political leadership the key to success of the war was the income derived from the sale of hydrocarbon resources. Azerbaijan's military budgets about \$ 4 billion. The increase in the military budget of Azerbaijan has a specific targeting. There are interesting projects in the modernization and acquisition of weapons for the Azerbaijani army, which require a detailed analysis. They have keen interest in purchasing variety of means of attack, the base of the production of certain types of weapons, the acquisition of UAVs, etc. Currently, the volume of arms of the Azerbaijani army is superior to the permissible number of international organizations, and these figures are being hidden. First of all it is about tanks, armored vehicles and artillery systems, which, naturally, are offensive weapons. Obviously, Azerbaijan relies on those offensive weapons, which can cause a devastating blow to the Armenian settlements, civil and military infrastructure. However the affairs in Azerbaijan, are not fine. As a vivid example pertinent to note the action in July-

August 2014, in January 2015. Today it is particularly necessary at the expert level to analyze the experience of our offensive military operations in the mountainous terrain and the same international experience, which should be the basis for the new requirements to conduct further hostilities. Once again referring to the principles of warfare of a new era, it should be stated that the Armenian Armed Forces, along with high fighting spirit, becomes a vital introduction of such weapons, which could ensure maximum effectiveness in combat, do not bet on the number of weapons and human resources. As can be seen, namely, Azerbaijan launched a race of arms, and this way can only lead to a dead end. In this race we do not answer with symmetrical arms and should concentrate on solving their own problems. In accordance with the tasks that lie ahead, and taking into account our capabilities and terrain conditions, we need specific tools and weapons, powerful air attack, the damage from which will be painful for the enemy. Several units missiles can paralyze the entire economic potential of Azerbaijan and the desire of the people to resist. Parallel to this, it is necessary to focus on the actions of small, mobile and well-armed units in the highlands. Need new approaches, new tactics, new tools. Trench, strong, passive defense, which has already become a stereotype, cannot provide a reliable defense, as a result first echelons damaged so easily that there is no time to connect to the second echelon or reserve. Failures lead to huge losses, and caused panic becomes crucial. Offensive mind set during the conflict becomes dominant. Need the latest electronic intelligence systems, counter measures so - called radio struggle and management. Their role becomes apparent more and more day by day, and the results are visible to everyone. On the arms race unleashed by Azerbaijan must be answered by an initiative, not only to give equivalent

answers. Our latest answers to offensive moves of Azerbaijanis and their destructive approach was surprising for them. We must continue to develop this direction, in this case, we can cause even more damage to their country. But not only this response can restrain. Variants of our responses must be flexible and include the ability to cause devastating and powerful missile attacks and, if necessary, we should be ready to liberate the rest of the homeland. All of these programs require overvoltage forces. Professionally trained, well-prepared and psychologically warrior must do it all. We can no longer bear losses in great numbers, but few losses should also decide the outcome of our victorious battles. In the conclusion, the development and reform of the army is given and some suggestions are put forward. Armenian army entered the third decade since its formation and points out some problems.

a. security of Armenia and Nagorno Karabakh from external aggression,

b. saving the state of combat training and improvement of combat change in.

c. quality and timely implementation of the activities envisaged under the plan of development of the Armenian Armed Forces,

c. the introduction of the national criterion of military education,

d. implementation of national program for the development of the military industrial complex and the strengthening of the military distspliny.

For the further development of the Armenian army Defense Minister Seyran Ohanyan emphasizes some interesting and promising concepts, which are based on the personal characteristics of the fighter on the independent mid-level commanders, in small units and other high-quality segments.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ա. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1.1. Գաղտնի խորհրդակցության նյութեր՝ նվիրված ՌԷՊ զարգացմանը և նորագույն տեխնիկայի ձեռքբերմանը

1.2. գ. 38, «Дело с боевыми приказами и боевыми распоряжениями»:

1.3. ֆ. 113, գ. 163, գ. 406, գ. 165, գ. 298, գ. 167, գ. 517, գ. 171, գ. 124, 264, 428, գ. 188, գ. 24:

բ. ԼՂՀ պետական արխիվ

1.4. ֆ. 254, գ. 1, պ. մ. 1, կ. 1, պ. մ. 2, կ. 1, պ. մ. 4, կ. 1:

1.5. ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՊՊԿ-ի նախագահի 1993թ. նոյեմբերի 10-ի որոշում N323:

գ. ՀՀ նախագահի հրամաններ

1.6. ՀՀ ԳԽՏ 1993/19, ՆՀ-259:

1.7. Հ.Ն-0549-1, 10 մարտի, 1992թ.:

դ. ՀՀ ՊՆ ընթացիկ արխիվ

1.8. ՀՀ ՊՆ հրաման համար 0137, 04.07.1997թ., Երևան:

1.9. ՀՀ ՊՆ հրաման համար 0154, 21.06.1996թ., Երևան:

1.10. ՀՀ ՊՆ հրաման համար 0167, 25.05.2001թ., Երևան:

1.11. ՀՀ ՊՆ հրաման համար 0171, 01.04.2005թ., Երևան:

1.12. ՀՀ ՊՆ հրաման համար 0189, 29.05.2001թ., Երևան:

1.13. ՀՀ ՊՆ հրաման համար 0176, 14.05.2011թ., Երևան:

ե. ԼՂՀ ՊԲ արխիվ

1.14. գ. 4, Дело с боевыми приказами и боевыми распоряжениями, Дело с приказами ПКСО:

- 1.15. գ. 38, Дело с боевыми приказами и боевыми распоряжениями:
 1.16. ՊԲ ՀՕՊ-ի օպերատիվ հերթապահի գրանցամատյան, քիվ 150:

Է. Հեղինակի անձնական արխիվ

- 1.17. Գեներալ-մայոր Ա. Մուրադյանի, փոխգնդապետներ Ա. Սարգսյանի և Ա. Մելքոնյանի հետ ունեցած առանձնագրույցների սղագրությունից:
 1.18. Գեներալ-լեյտենանտ Մ. Հակոբյանի, գեներալ-մայոր Ս. Կարապետյանի հետ ունեցած գրույցների սղագրությունից:
 1.19. ՀՀ ՋՈՒ-երի հրետամու առաջին պետ գեներալ-մայոր Վ. Հայրապետյանի հետ ունեցած գրույցի սղագրությունից:
 1.20. ՀՀ ՊՆ Վ. Հարությունյանի հետ ունեցած առանձնագրույցի սղագրությունից, Հեղինակի անձնական արխիվ:
 1.21. Գեներալներ Օհանյանի Ս., Հակոբյանի Մ., Բալայանի Վ. հետ ունեցած գրույցների սղագրություն:
 1.22. ՀՀ ՊՆ Ս. Օհանյանի ելույթը Վ. Սարգսյանի անվան ՌԻ-ում կայացած 2013թ. կոլեգիայի ժամանակ:
 1.23. ՀՀ ՊՆ Վ. Հարությունյանի հետ ունեցած գրույցի սղագրություն:
 1.24. Խաղաղապահ բրիգադի զարգացման մվիրված փակ լսամանրի գեկույցներ:
 1.25. ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ն. Բորդյուժայի ելույթը Երևանում կայացած 2-րդ ռազմական ռազմավարական քաղաքական ֆորումում, 2013թ.:
 1.26. Օղաչու Հ. Գավթյանի հետ ունեցած անձնական գրույցի սղագրություն:

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրքեր
ա) հայերեն

- 2.1. Աբրահամյան Հ., Ծակատագրին ընդառաջ, Երևան, Ամարաս, 2001:
 2.2. Աղայանյան Մ., Մինասյան Ս., Ասատրյան Է.: Աղբյուրանը Ղարաբաղի ժողովրդի դեմ. ագրեսիայի քաղաքա-իրավական հետևանքները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա, Երևան, «Նաիրի», 2006:
 2.3. Բալայան Ջ., Բժիշկ Մարությանը և նրա Պատերազմի հետըը երկար է մնում, Երևան, Ամարաս, 1999:
 2.4. Բալայան Ջ., Անդունդ, Երևան, Ամարաս, 2004:
 2.5. Բալայան Ջ., Գժոխք և դրախտ, Մոսկվա, Academia, 1995:
 2.6. Գեղամյան Գ., Սահակյան Ռ., Գրվագներ հայ օդաչուների Արցախում մղած հերոսական պայքարից. Երևան, ՀՀ ԳԱԱ Պատ. ինստ. 2006:
 2.7. Դերիկյան Տ. Կրակե պատմեչ. ՀՀ ՋՈՒ զորատեսակներ, Հրթիռային զորքեր և հրետանի, Երևան, ՀՀ ՊՆ, 2008:
 2.8. Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, Հայաստան, 1999:
 2.9. Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Մ., Հաղթանակները ինչպես եղել են, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2008:
 2.10. Հակոբյան Մ., Հայ ժողովրդի ռազմական տարեգիրք, գիրք 70-րդ, 1991-2009: Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2009:
 2.11. Հակոբյան Տ., ԼԳԸ հռչակումը և պետական շինարարության գործընթացը 1991-1994, Երևան, Ելիտ Պրինտ, 2011:
 2.12. Հասարթյան Ս., ՊԲ ՊՇ-ները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, 2009:
 2.13. Հասարթյան Ս., ՊԲ զորատեսակները, ծառայությունները և առանձին ստորաբաժանումները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, Դիզակ պլուս, 2010:
 2.14. Հասարթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Երևան, Ամարաս, 2001:

- 2.15. Հարությունյան Գ., Մեր հաղթանակները, Հատոր Գ.: Երևան, Նորավանք, 2012:
- 2.16. Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994, Երևան, Ա.հ., 2001:
- 2.17. Հարությունյան Վ., Արցախյան հիմնահարցի ակունքները, Ստեփանակերտ, Սոնա, 1998:
- 2.18. Հասարայան Ս., Գոյամարտ, Ստեփանակերտ, 1998:
- 2.19. ՀՀ ԶՈւ կարգապահական կանոնագիրք, Երևան, 2012, ՀՕ-91-Ն, 10 ապրիլի 2012:
- 2.20. ՀՀ ԶՈւ-երի Ներքին ծառայության կանոնագիրք, Երևան, 2007, ՀՕ-99, 7 հունվարի, 1997:
- 2.21. Հովհաննիսյան Ա., Ավիացիան Արցախյան գոյամարտում, Երևան, ԱվիաՄանիա, 2006:
- 2.22. Հովհաննիսյան Ա. Կ., Մի քանի հարցեր ավիացիայից, Երևան, 2009:
- 2.23. Հովհաննիսյան Ա. Կ., Տարածաշրջանի ռազմականացումը և Հայոց բանակը, Երևան, 2013:
- 2.23. Հովհաննիսյան Ա., Օդային զերակայություն, Երևան, 2010:
- 2.25. Հովսեփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմարդյունաբերությունը, Երևան, 2010:
- 2.26. Դարարաղյան Ազատագրական պատերազմ 1988-1994, Համ-րագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն, 2004:
- 2.27. Մինասյան Է. Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2013:
- 2.28. Միրաբյան Վ., Ազրեսիվ հետախուսության հետևանքները, Երևան, 2012:
- 2.29. Ոգու փորձություն, Վ. Սարգսյանի ելույթները, Երևան, Հայագիտակ, 2000:
- 2.30. Չիրվսյան Ա., Հերոսամարտի պողպատե բևերը, Երևան, Զանգակ-97, 2008:

- 2.31. ՊԲ ՀՕՊ-ի պետի զեկույցը՝ նվիրված ՊԲ ՀՕՊ զորքերի ստեղծան 10-րդ տարեդարձին, Ստեփանակերտ, 2002:
- 2.32. Պետրոսյանց Հ. Տ., Տեղային պատերազմների առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը մարտավարության զարգացման վրա. Երևան, Հեղինակային հրատարակություն, 2002:
- 2.33. Սարգսյան Ս., Հայկական բանակ-10 (բանակը մեր ժողովրդի և պետության անվտանգության գրավականն է), Երևան, Ամարաս, 2002:
- 2.34. Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երևան, ՊՆ, 2012:
- 2.35. Օհանյան Ս., XXI դարի բանակը, Երևան, Տիգրան Մեծ, 2007:
- 2.36. Օհանջանյան Մ., Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները 1991-1998, Ստեփանակերտ, Սոնա, 1998:

բ) ռուսերեն

- 2.37. Агаджанян М., Асатрян Э., Минасян С., Азербайджан против Нагорного Карабаха: Политико-правовые последствия агрессии и их влияние на перспективы региональной безопасности, Наирн, Ереван, 2006.
- 2.38. Араслы Д., Армяно-азербайджанский конфликт, Военный аспект, Баку, Эртюн, 1995.
- 2.39. Архипова М. «Реактивные самолеты вооруженных сил СССР и России, Москва.-Минск., АСТ, Харвест, 2002.
- 2.40. Беляев В., Ильин В. «Российская современная авиация» Москва, АСТ, Астрель 2001.
- 2.41. Благостов А. И. «То, из чего стреляют в СНГ: Справочник стрелкового оружия. / под общ.ред. А. Е. Тараса.» Минск, Харвест, 2000.
- 2.42. Василий Н. Я., Гуринович А. Л., Зенитные ракетные комплексы, Минск, 2002.

- 2.45. Гуров С.В., Реактивные системы залпового огня, Тула, Пересвет, 2006.
- 2.42. Дериглазова Л., Минасян С., Нагорный Карабах: Парадоксы силы и слабости в асимметричном конфликте. Ереван, 2011 г.
- 2.43. Ежегодник института Кавказа. Ереван, 2010.
- 2.44. Жирохов М. А., История ВВС Израиля. М.-Минск, 2001.
- 2.45. Жирохов М. «Карабах: земля раздора» Киев, Румб, 2009.
- 2.46. Историческая справка о создании, становлении и развитии Войск ПВО ВС РА. Ер., 2007.
- 2.47. Кларк У. Как победить в современной войне. М., 2004.
- 2.48. Князев В., Боевая техника. М., 1986.
- 2.49. Котанджян Г. Основы военной политики Республики Армения, Отдел военной политики, МО РА, Ереван, 1992.
- 2.50. Латухин А.Н. «Современная артиллерия» Москва, Воениздат, 1970.
- 2.51. Минасян С., «Пятидневная война» августа, 2008 г., Военно-политический анализ, Кавказ, 2008, Ереван, 2010.
- 2.52. Печуров С. Л., Англо-саксонская модель управления в военной сфере, Москва, КомКнига, 2005.
- 2.53. Пядушкин М., Вооружая Кавказ, Нечаянное наследство Москвы/Кавказ, вооружен и разобшен/ Под редакцией Матвеевой А., Хизкока Д. Saferworld, ЦАСТ, Лондон-М., Февраль, 2004.
- 2.54. Россия и СССР в войнах XX века. — М.: 2001.
- 2.55. Саркисян М., Нагорный Карабах, Война и политика (1990-1993), Ереван, Армянский центр стратегических и национальных исследований, 2010.
- 2.56. Секулич М. Снайперская стрельба. Москва. 2003.
- 2.57. Трошев Г., Моя война, Москва, Вагриус, 2001.
- 2.58. Трошев Г. Н., Чеченский излом, Дневники и воспоминания, 2-е изд., Москва, Время, 2009.

- 2.59. Устинов А. И., Патроны ручного огнестрельного оружия и их криминалистическое исследование, Москва, ВНИИ МВД СССР, 1982.
- 2.60. Фомин А., Гордон Е., Михеев А. МиГ-29 легкий фронтовой истребитель, Москва, Любимая книга, 2003.
- 2.61. Чумак Р.Н., Русский 7,62 мм винтовочный патрон, История и эволюция // СПБ Атлант, 2007.
- 2.62. Шилин А. А., Стратегический баланс в Южной Азии. М., 2004.
- 2.63. Широкоград А., Атомный таран XX века. М., 2005.
- 2.64. Шунков В.Н., Ракетное оружие, Минск, Полурри, 2001.
- 2.65. Ядерное нераспространение / Под ред. Орлова В.А., Т.1, ПИР-Центр, Москва, 2002.

ՀՈՂՎԱԾՆԵՐ

ա) հայերեն

- 2.66. Արրահամյան, Հ. Բ., Կամավորական ջոկատներից մինչև պաշտպանության բանակի ստեղծումը, Լրարեր Հասարակական Գիտությունների, 2006, թիվ 3:
- 2.67. Բալայան Գ. Կ., Ալեքսանյան Գ. Մ., ՀՀ ՊՆ մարշալ Արմենակ Խանիբերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում ռազմական կրթության զարգացման հարցի շուրջ, Հայկական բանակ, թիվ 3 (73), 2012:
- 2.68. Գևալյան Ա. Մ., Չորրերի օպերատիվ պատրաստման որոշ հարցեր զորային կառույցի բարեփոխումների տեսանկյունից, Հայկական բանակ, թիվ 1-2 (67-68), 2011:
- 2.69. Թադևոսյան Ա., Հայաստան-ՆԱՏՕ, Առաջընթացի 10 տարիներ (1999-2008), Երևան, 2008:
- 2.70. Խաչատուրով Յու. Գ., Պաշտպանությանը պետության և նրա զինված ուժերի պատրաստման որոշ հարցեր, Հայկական բանակ, թիվ 3 (61), 2009:

- 2.71. Խաչատուրով Յու. Գ., ՀՀ ՋՌԻ-ի հրքիտային գործերի և հրետանու զարգացման հիմնական ուղղությունները պաշտպանական բարեփոխումների համատեքստում՝ համաշխարհային միտումների հաշվառմամբ, Հայկական բանակ, թիվ 4(74), 2012:
- 2.72. Կարապետյան Մ. Ն., Մելքոնյան Ա. Ս., ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում իրականացվող բարեփոխումների ընթացքը ռազմակրթական զարգացումների համատեքստում: Հայկական բանակ, թիվ 3 (73), 2012:
- 2.73. Հարությունյան Հ., Հունվարի 28 Բանակի տոն ու մարդկային ողբերգություն, ԱԶԳ, #6, 29.01.2013:
- 2.74. Հարությունյան Հ., Խոսքը կարող է կյանք արժենալ, կամ զենքի մեջ դրված փամփուշը նախատեսված է միայն թշնամու համար, ԱԶԳ, #96, 11-06-2013:
- 2.75. Հարությունյան Մ., ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի դերը ռազմական շինարարության գործում, Հայկական բանակ, հմ. 1-2, 2002:
- 2.76. Մնացականյան Բ., ՀՀ ՊՆ ավիացիայի վարչությունը՝ 10 տարեկան, Հայկական բանակ, 3.2003:
- 2.77. ՊԲ ՀՕՊ-ի պետի զեկույցը՝ նվիրված ՊԲ ՀՕՊ գործերի ստեղծման 10-յոջ տարեդարձին, Մտեփանակերտ, 2002:
- 2.78. Մեղրակյան Ա. Ս., Ազգային անվտանգության իրավական ապահովման հեռանկարները Հայաստանի Երրորդ Հանրապետությունում, Հայկական բանակ, թիվ 1-2(67-68), 2011:
- 2.79. Մերոբյան Մ. Յ., ՀՀ ՊՆ կենտրոնական պոլիլիինիկայի գործունեությունը ՀՀ պաշտպանական բարեփոխումների համատեքստում, Հայկական բանակ, 4(70). 2011:
- 2.80. Տոնոյան Դ. Է., Պաշտպանական բարեփոխումների իրականացումը ռազմական համագործակցության շրջանակներում, Հայկական բանակ, թիվ 1-2(71-72), 2012:

- 2.81. Տեր-Մաթևոսյան Վ.Հ., ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության վերանայման հեռանկարները, Հայկական բանակ, 3(65), 2010:
- 2.82. Փարսադանյան Ա. Մ., ՀՀ ՋՌԻ-ի ռազմաթշկական ծառայության զարգացման որոշ հայեցակարգային հարցեր, Հայկական բանակ, թիվ 4(70), 2011:
- 2.83. Քոթանջյան Հ. Ս., Չլիինգարյան Դ. Ս., Ավետիսյան Վ. Պ., Մինասյան Ա. Ա., Պաշտպանական քաղաքականություն հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք: Հայկական բանակ, 1-2(59-60). 2009:
- 2.84. Քոթանջյան Հ. Ս., Իսրայելի պաշտպանության բանակում զինվորի մարտական ոգու ձևավորման փորձի մասին՝ ՀՀ պաշտպանական բարեփոխումների յուսի ներքո, Հայկական բանակ, 1-2(59-60). 2009:
- 2.85. Քոթանջյան Հ. Ս., Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով, Հայկական բանակ, 3(61). 2009:
- 2.86. Օհանյան Ս. Մ., 2007 տարեմտի ուղերձ, Մտեփանակերտ, 2007:
- 2.87. Օհանյան Ս. Մ., Ռազմական կրթության համակարգի զարգացումը՝ որպես ՀՀ պաշտպանական համակարգի արդյունավետության մեծացման գործոն, Հայկական բանակ, թիվ 3 (73). 2012:
- 2.88. Օհանյան Ս. Մ., Հայաստանի Հանրապետության ՋՌ անցած ուղին, ներկան և ապագան, Հայկական բանակ, թիվ 1-2, 2012:
- 2.89. Օհանյան Ս. Մ., ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը որպես պաշտպանական բարեփոխումների առաջնային խնդիր, Հայկական բանակ, 2011/3:

բ) աստիճան

- 2.90. Жирохов М., Воздушная война в Нагорном Карабахе, АвиаМастер, № 6/2000.
- 2.91. Галуцак И., Высокая оценка миротворцев. Красная звезда. 7 августа. 2013.
- 2.92. Исаев А., Сталинград, Трудное начало, Родина, номер 1/2013.
- 2.93. Кенжетаев М., Оборонная промышленность Республики Армения, Экспорт вооружений, № 6, октябрь-декабрь 1997.
- 2.94. Ломаченко С. В., О. Г. Булатов, С. В. Гаврилович. Артиллерия большой мощности, история и перспективы развития, Военная мысль, Март-апрель. 2001.
- 2.95. Печуров С., Военные профессионалы в англо-саксонской модели управления вооруженными силами история и современность, ЗВО, 11.2011.
- 2.96. Храмчихин А., На кавказских фронтах – ситуация патовая. Пока....НВО. 15.01. 2010.
- 2.97. Барвиненко В. В., Евменчик Е. Г., О совершенствовании подготовки органов управления войсками (силами) ПВО, Военная Мысль, март-апрель 1997.
- 2.98. Бутовски П., МИГОВ в Польше стало больше. Взлет. 3.2006 (15).
- 2.99. Галкин Д., Боевое применение зенитных пакетных комплексов Пэтриот в вооруженных конфликтах. ЗВО, 10.2006.
- 2.100. Глашатов О., Для Еревана приближается время "ч". Голос Армении. Электронная версия № 142 за 26.12.09.
- 2.101. Гуров С. В., Боеприпасы реактивной артиллерии // Боеприпасы и высокоэнергетические конденсированные системы. Научно-технический журнал. Выпуск №4, – 2008.
- 2.102. Джоунс Родни, Ядерная стратегия Пакистана: в поисках гарантированного сдерживания. // Ядерное распространение. Выпуск 34, январь-март 2000.
- 2.103. Зарубежное Военное Обозрение. № 4. 2008.

2.104. ЗВО, 10.2000.

- 2.105. Костохин А., Военно-промышленный комплекс государств Центральной Азии и их военно-техническое сотрудничество с зарубежными странами в 1990-е годы, ЗВО, 5.2009.
- 2.106. Московский Комсомолец, 22 мая, 2004, № 110.

Գ) անգլերեն

- 2.107. Aliyev Y., Arms Control Process in Transcaucasia // NATO School, Polaris Quarterly, Vol. 1, Issue 2, Summer 2004, p. 47.
- 2.108. Deptula. David A. Effects-Based Operations: Change in the Nature of Warfare. Arlington VA: Aerospace Education Foundation, Defense and Airpower Series. 2001, p. 8-9.
- 2.109. Kelsey T., British mercenaries for Azeri war: Government turns blind eye to illegal programme to supply men and arms for conflict between two former Soviet republics. The Independent. Monday, 24 January 1994.
- 2.110. Ricks, Thomas E. (2007). Fiasco: The American Military Adventure in Iraq. United States: Penguin Books.
- 2.111. "Black Watch ordered to join US cordon for assault on Fallujah". The Independent (London). 22 October 2004. Retrieved 23 May 2010.
- 2.112. Institute of Peace and Conflict Studies. New Delhi. Article №546, 17.08.2001; Foreign Affairs, January/February 2002.
- 2.113. Holtom P., Ukrainian Exports of Small Arms and Light Weapons, 2004-2007, SIPRI Background Paper, October 2008.
- 2.114. Jane's All The World's Aircraft 2004-2005 / Paul Jackson. — Jane's Information Group, 2004.
- 2.115. Managing Strategic Changes Through DEEP Reforms: A View from the Perspective of U.S.-Armenia "Smart Power" Cooperation. Kotanjian, Hayk // Connections (18121098); Fall 2012, Vol. 11 Issue 4.
- 2.116. Michael B. Oren. Six days of war: June 1967 and the making of the modern Middle East. — Oxford University Press, 2002.

- 2.117. Shahin Abbasov, Azerbaijan Mum about Israeli Spy Plane, Satellite Projects. EurasiaNet.org (2009.08.16). Проверено 26 августа 2010.
- 2.118. The Military Balance 2007 / C. Langton. — London: Routledge / The International Institute for Strategic Studies, 2007.
- 2.119. The Military Balance 2010; 2013Ա. ՀՀՊՆ-ի կողմից The Military Balance-ին փոխանցվող տեղեկագրերի տվյալներ:
- 2.120. The United States Strategic Bombing Survey Report (European War). September 30, 1945, reprinted in The United States Strategic Bombing Surveys (European War) (Pacific War). 2.125. Maxwell Air Force Base, AL: University Press, 1987. 29 may 2009.
- 2.121. "U.S. Won't Let Men Flee Fallujah". Fox News Channel. 13 November 2004. Retrieved 19 May 2011.
- 2.122. Y.Aliyev. Arms Control Process in Transcaucasia // NATO School, Polaris Quarterly, Vol. 1, Issue 2, Summer 2004.
- 2.123. Deptula, David A. Effects-Based Operations: Change in the Nature of Warfare. Arlington VA: Aerospace Education Foundation, Defense and Airpower Series. 2001.
- 2.124. Ricks, Thomas E. (2007). Fiasco: The American Military Adventure in Iraq. United States: Penguin Books.

3. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍԻՆ

ա) հայերեն

- 3.1. Առավոտ, 2004 թ.:
- 3.2. Հայ զինվոր, 2000-2013 թթ.:
- 3.3. Հայաստանի Հանրապետություն, 1992 թ.:
- 3.4. Մարտիկ, 2012-2013 թթ.:

բ) ռուսերեն

- 3.5. Голос Армении, 1991.
- 3.6. Красная звезда, 2013.
- 3.7. Московский Комсомолец, 2004.

- 3.8. Независимое военное обозрение, 2011.

գ) անգլերեն

- 3.9. Defense and Airpower Series, 2001.
- 3.10. The Washington post, 1991.
- 3.11. The Independent, 1994.
- 3.12. The Los-Angeles times, 1991.

4. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆՑՈՒԹԵՐ

- 4.1. ՀՀ ՊՆ պաշտոնական կայք, <http://mil.am>
- 4.2. Կազմիլրով. Ադրբեջանն ինքն է լսնդրել 94-ի հրադադարի մասին, 15 նոյեմբերի 2010թ., <http://www.haynews.am/hy/archive-16197>
- 4.3. Բանակը չի շահի, գիտությունը կտուժի, 20 փետրվար 2004թ., <http://www.aravot.am/2004/02/20/316993/>
- 4.4. Բանակը ամեն մասնագետի կարիք էլ ունի, 21 փետրվար, 2004թ., <http://www.aravot.am/2004/02/21/317011/>
- 4.5. Գրիլիյան Ս., Սկիզբը. Սահմանադրական պայքարից մինչև կամավորական շարժում, <http://www.hayzinvor.am/10111.html>
- 4.6. Վազգենը բանակի հավերժ Սպարապետն է, 29 հունվար 2004թ., <http://www.aravot.am/2004/01/29/316800/>
- 4.7. Հակոբյան Ա., Ելք թշնամին չի հասկանում, նրան ոչնչացնում են, <http://www.armworld.am/detail.php?paperid=4184&pageid=129056&lang=>, <http://www.ausairpower.net/flanker.html>
- 4.8. Հովհաննիսյան Ա., Լիբիական փորձը պետք է «առը ցնցող» լինի արևմտյան ռազմագետների համար, Ապրիլ 20, 2011, <http://news.am/arm/news/56107.html>

- 4.9. Агабабян А. 101 день в аду, Республика Армения № 173 (215), 14.09.1991, <http://www.press.karabakh.info/101>
- 4.10. Богданов К. Гром над Багдадом: как американцы взяли свой Грозный, <http://ria.ru/analytics/20130404/930954853>.
- 4.11. Велимамедов М. Оборона Агдама, 21.07.2011, http://samella.ru/publ/avtory/mamed_velimamedov/mamed_velimamedov_oborona_agdama/61-1-0-724
- 4.12. Вестник ПВО. <http://pvo.guns.ru/index.htm>
- 4.13. Гельман "Анка" – в воздухе!. Турецкий беспилотник встает на крыло. 2010-08-27. http://nvo.ng.ru/armament/2010-08-27/12_anka.html
- Голдаев Ю., «Мираж-2000 в Каргильском конфликте 1999 г. <http://www.airwar.ru/locwar.html>
- 4.14. Гуров С.В. Реактивные системы залпового огня, Тула 2006, <http://www.sinodefence.com/army/artillery/mlrs/273.asp>
- 4.15. Жирохов М. Авиация в армяно-азербайджанском конфликте, www.airwar.ru
- 4.16. Жирохов М. Война в воздухе на Африканском Роге, <http://www.airwar.ru/history/locwar/africa/eritrea/eritrea.html>
- 4.17. "Карабахский дневник" азербайджанского журналиста, <http://www.nv.am/archive-2012/17231-2012-01-19-09-00-08>
- 4.18. Коновалов А., Кучуков Т., §Вызвал огонь на себя, Время, 14.04.2009 (<http://www.time.kz/index.php?newsid=9969>)
- 4.19. Корнелл С. Конфликт в Нагорном Карабахе: динамика и перспективы решения, <http://www.karabah.h18.ru/conflict/karabah/01.html>
- 4.20. Лунёв А., Ращепкин К., «Красная звезда. 2 Декабря 2008 года, http://www.redstar.ru/2008/12/02_12/1_03.html
- 4.21. Явер Джамалов: «В этом году Азербайджан начал серийный выпуск нескольких образцов оружия, 16 декабря 2009, http://news.life.az/2009/12/16/javer_dzhamalov_v_jetom_godu_azerbajidzhan_nachal_serijnyj_vypusk_neskolkih_obrazcov_oruzhija.html

- 4.22. Победать нас научат немцы, http://nvo.ng.ru/news/2011-06-24/2_pobeda.html#.
- 4.23. Самопомощь. *Вести*, 3.01.2001, <http://gazeta.rjews.net/mazin.shtml>
- 4.24. Степанян К. Хроника карабахской войны, <http://expert.openarmenia.com/archives/268>
- 4.25. Федосеев С. Самый мощный серийный пулемёт. Военно-промышленный курьер, № 44 (360) за 10 ноября 2010. <http://vpk-news.ru/articles/6931>
- 4.26. Формирование механизированных бригад Страйкер в сухопутных войсках США, 20.08.2010, <http://www.military-informant.com/index.php/army/523-stryker.html>.
- 4.27. Цыганок А. Чему научило НАТО ливийское небо. Анализ боевых действий сил союзников во время воздушной операции в Северной Африке. 1 апреля 2012 года. <http://svpressa.ru/war21/article/54022/>
- 4.28. Что лучше – покупать оружие за границей или оснащать Российскую армию отечественным вооружением?, <http://topwar.ru/26677-cto-luchshe-pokupat-vooruzhenie-za-granicey-ili-osnaschat-rossijskuyu-armiyu-otechestvennym-vooruzheniem.html>
- 4.29. В. Чуйков. Тактика штурмовых групп в городском бою, <http://www.vrazvedka.ru/main/learning/vopros-ob/chuykov.shtml>
- 4.30. Юзбашян. Можно ли возбудить уголовное дело в отношении генерала Сафонова В. Н.?. Голос Армении (Коммунист) 05.02.1991, <http://www.press.karabakh.info>
- 4.31. Якубан В. Армяно-азербайджанская война: на чьей стороне Кремль?, <http://old.express.am/karabakh/karabakh3.html>.
- 4.32. Arjun, <http://armor.kiev.ua/Tanks/Modern/India/>
- 4.33. Defence News, 30.10.2000. Philip Camp. The Mirage-2000 at Kargil, <http://www.bharat-rakshak.com/IAF/History/Kargil/PCamp.html>.
- 4.34. INSAS (Indian National Small Arms System), <http://weapon.at.ua/load/301-1-0-727>

- 4.35. Report.am. 3:45 21/12/2012, <http://report.am/news/society/seyrano-hanyan-qaxgitutyunneri-teknacu.html>
- 4.36. The Mirage-2000 at Kargil, <http://www.bharat-rakshak.com/IAF/History/Kargil/PCamp.html>.
- 4.77. Written by Victor O'Reilly for Congressman Jim Saxton, D21 Aug 22, 2003. p. 103-108.cochraneinst@adelphia.net
<http://www.regnum.ru/news/1044120.html#ixzz1WKrJJIB>
- 4.39. <http://www.noravank.am/ru/>
- 4.40. <http://www.regnum.ru/news/1044120.html>
- 4.41. <http://www.interfax.ru/society/txt.asp?id=33259>
- 4.42. <http://www.iaf.org.il/4388-39969-en/IAF.aspx>;
- 4.43. <http://www.idf.il/1283-15558-en/Dover.aspx>.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԳԳԵ-Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր
Ադրես-Ադրբեջանի խորհրդային սոցիալիստական հանրապետություն
ԱՊՀ-Անկախ պետությունների համագործակցություն
ԱԺԾ-ազգային ժողովրդական ճակատ
ԲՈՎԲ-Հետախուզական գրահամընթաց, ռուսերեն ՌՎ-Ռուսաստանի Գաշնություն
ԲՈՒԷ-Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳԱԱ-Գիտությունների ազգային ակադեմիա
ԳԽ-Գերագույն խորհուրդ
ԳԸ-Գլխավոր շտաբ
ԴՀ-դիվերսիոն հետախուզական
ԵԱՀԿ-Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵՄ-Եվրոպական միություն
ԶՀՀ -Ձեռնարկային համալիր
ԶՈ-զինված ուժեր

ԹՄ-Թուրք սարք
ԻՊԿ-Ինքնաաշտպանության կոմիտե
ԼԴՀ-Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն
ԼՂԽՄ-Լեոնային Ղարաբաղի Ինքնավար մարզ ԽՍՀՄ-Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների միություն
ԿԶՀՀ-Կրովի զենիթահրթիռային համալիր
ԿԽՄԿ-Կարմիր խաչի միջազգային կոմիտե
ՀԱՊԿ-Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
ՀԽՍՀ-Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետություն
ՀԿՈՀ-Համագրկային կրակի ռեակտիվ համակարգ
ՀՀ-Հայաստանի Հանրապետություն
ՀՄՄ-Հետևակի մարտական մեքենա
ՀՕՊ-Հակաօդային պաշտպանություն
ՆԱՏՕ-Հյուսիս ատլանտյան դաշինք
ՆԳՆ-Ներքին գործերի նախարարություն
ՉԺՀ-Չինաստանի ժողովրդական հանրապետություն
ՊԲ-Պաշտպանության բանակ
ՊՆ-Պաշտպանության նախարարություն
ՊԸ-Պաշտպանական շրջաններ
ՌԷՊ-Ռադիոէլեկտրոնային պայքար
ՌԻ-Ռազմական ինստիտուտ
ՌՏԿ-Ռադիոտեղորդման կայան
ՌԶԿՊ-ռադիոքիմիական կենսաբանական պաշտպանություն
ՌՕՌ-ռազմաօդային ուժեր
ՅՁ-Յամբային գործեր
ՕՀՄ-Օդային հարձակման միջոցներ
ՕՄՌՆ-Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատ, ռուսերեն
IPAP-Individual Partnership Action Plan, Անհատական համագործակցության գործողությունների պլան

ISAF-International Security Assistance Force, Միջազգային անվտանգության աջակցման ուժեր
UNIFIL-United Nations Interim Force in Lebanon, Լիբանանում միացյալ ազգերի ժամանակավոր ուժեր
CFE-Conventional Force Europe- ԵՄՁՈՒ-Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագիր

**ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ-
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Բարթիկյան
Համակարգչային շարվածքը՝ Ա. Մարանգոզյան
Տպագրիչ՝ Լ. Սուրադյան

Ատորագրված է տպագրության 20.04.2015 թ.
Տպաքանակը՝ 200 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
RA, 0019, Yerevan, pr. Marshala Baghramyan 24/4
24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>

333 (47.923)
Ռ-85
Կ2.

ԱՐԾՐՈՒՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՈԱԶԱՍԿԱՆ ՎԵՐՄՈՇՄԱՆ



Ծնվել է 1960թ. հունվարի 30-ին, Հիլակի մարզի Ցուսմար գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցի ավարտելուց հետո՝ 1987թ-ին ընդունվել է Վ.Սարգսյանի անվան ՈՒՎՄՈՒՄ:
2011-12թթ. աշխատել է ՀՀ նախագահի աշխատակազմի Քաղաքական հետազոտությունների ինստիտուտում՝ որպես ռազմական փորձագետ: 2012թ. աշխատել է ՀՀ նախագահին կից հանրային կապերի կենտրոնում՝ որպես ռազմական փորձագետ:
2012թ. նշանակվել է ՀՀ ՊՆ մամուլի ընթացակարգի ղեկավար:
2010-12թթ. սովորել է ՀՀ ՊՆՍՄԿԿ պատմության ֆակուլտետի մագիստրատուրայում:
2014թ. ՀՀ ՊՆՍՄԿԿ պատմության ինստիտուտում պաշտպանելով թեմատիկական ասեմբլայությունը՝ ստացել է պատմական գիտությունների թեմատիկ գիտական առիժան:
Անուսանցան է, ունի երեք երեխա:

